նան կատարվել է իմաստային (թեմատիկ) դասակարգում, որը կարևոր է տարբեր հարցերի և երևույթների լուսաբանման համար և օգնում է հասկանալ, թե ինչ կապ ունի լեզուն ժողովրդի մտածողության, հավատալիքների և արժեքների հետ:

Աճառյալը նշում է, որ **մեղր** բառի համար նախալեզուն ուներ երկու ձև՝ *mel* և *medhu*։ Առաջինը բնորոշ էր արևմտյան լեզուներին (հուն. μέλι, լատ. mel, իռլ. mil, ալբան. mjal' և գոթ. milif), այդ թվում՝ նաև հայերենին, իսկ երկրորդը՝ արևելյան լեզուներին (սանս. madhu, ռուս. мёд, լիթ. medūs): Չնայած արևմտյան լեզուներին ծանոթ էր *medhu* ձևը՝ միայն «*մեղրաջուր*» նշանակությամբ, բայց հայերենը այդ ձևը չունի [2, 97-98]: **Մեղր** բառը հանդիպում է նաև ուգրո-ֆիննական լեզուներում: Երկու վարկած է մեջբերվում. կամ հնդեվրոպացիները և ուգրոֆինները հարևաններ են եղել, կամ այդ երկուսի մեջ ավելի հին ցեղակցական կապ կա [11, 302]:

**Մեղու**-ն նախալեզվում կոչվում էր *bhei*, որ զանազան մասնիկներով պահել են բալթիկ-սլավական, գերմանական և կելտական լեզուները: Ըստ վարենիների մի նախապաշարման՝ այս միջատի անունը տաբուի է ենթարկվել, և մի քանի լեզուների մեջ հնարվել է մի նոր բառ՝ «*մեղր*» բառից. այսպես՝ հուն. μέλισσα, ալբան. mial'tse և սրանց հետ էլ՝ հայերեն **մեղու** [2, 95]:

Կարծիք կա, որ *մեղու*-ն գուցե *մեղր*-ի գրաբարյան սեռական, տրական հոլովածն է. *մեղր*'ի, իբրև *ճանճ մեղու*=*մեղրի ճանճ*, *մեղրաճանճ* [13, 300] կամ *մեղվ-մեղու*, *ու*>*վ-մեղր* (Բաղադրությունների մեջ մտնում է *մեղր* և *մեղ' մեղ'ու*, *մեղ'վ* հիմքերով) [12, 139]:

Մեկ այլ մոտեցմամբ *մեղր* բառի *ր*-ն կարող է աճական լինել: **Եզր**, **ծաղր**, **կողր**, **մանր**, **մեղր**, **ծունր** և նմանատիպ այլ բառեր հատուկ քննության կարիք ունեն՝ պարզելու դրանցում վերջնահանգ **ր**-ի բուն էությունը (աճական, թե՛ նախկին թեթույթ կամ ածանց, կամ արմատի վերջնահնչյուն), մասնավորապես որ այդ բառերի զգալի մասն ունի հոլովման յուրահատկություն [9, 78]:

Մինչև **մեղր** և **մեղու** բաղադրիչներով նոր բառերի քննությանը անդրադառնալը նշենք, որ *նորաբանություն* տերմինի վերաբերյալ շատ հարցեր դեռևս պարզաբանման կարիք ունեն: Լեզվաբանության մեջ մոտեցումները տարբեր են՝ *նորաբանություն*, *նորակազմություն*, *բառարաններում չգրանցված, չվկայված բառ*: Ճշգրտման կարիք ունի նաև այն հանգամանքը, թե քանի «տարեկան» բառն է համարվում *նորակազմություն*, քանի որ յուրաքանչյուր նոր բառ ժամանակավոր բնույթ է կրում և որոշ ժամանակ անց դադարում է նորը համարվելուց: Կամ նորաբանություն կարելի է համարել այն բառը, որն առաջին անգամ է բառարանագրվում. չէ՞ որ բառարանները հաճախ բառերն ուշացումով են արձանագրում: Այս և նման հարցերին անդրադարձել են շատերը [1, 168-172], [5, 180-232], [7, 216-227], [8, 187-191], [3, 44-48], [23]:

Այսինքն՝ մինչև այժմ միասնական կարծիք չկա, թե որ բառը կարելի է նորաբանություն համարել, բայց որ դրանք կան, անհրաժեշտ են լեզվի շարունակական զարգացման համար, անհերքելի փաստ է: Իհարկե, նորաբանության ընկալման չափանիշները տարբեր են, սակայն այն պետք է դիտարկել համաժամանակյա կտրվածքով: Փաստենք նաև, որ բոլոր նոր բառերը չեն, որ լայն տարածում են գտնում կամ ընդունվում են հասարակության կողմից: Առաջարկվող շատ տարբերակներ այդպես էլ մնում են անգործածական:

### **Մեղր և մեղու բաղադրիչներով կազմությունների բառակազմությունը**

«Նոր բառեր» պրակաշարում **մեղր** և **մեղու** բաղադրիչներով կազմությունները ձևավորվում են տարբեր եղանակներով՝ բառաբարդում, ածանցում, թարգմանություն:

Ինչպես գիտենք, բառապաշարի հարստացման կարևորագույն տարբերակներից է բառակազմական եղանակը, իսկ հայերենն այս առումով ճկուն է և մեծ հնարավորություններ ունի: **Մեղր** և **մեղու** իմաստային դաշտում բառաբարդմամբ ձևավորված նորակազմություն-

ները զերագանցում են ածանցամաբ կազմվածներին և առանձնանում են խոսքիմասային ու կառուցվածքային հետևյալ կաղապարներով<sup>2</sup>.

**Աղյուսակ 1**

**Մեղր և մեղու բաղադրիչներով նորակազմ բառերի խոսքիմասային և կառուցվածքային կաղապարները**

<i>Բառաբարդում</i>	<i>Ածանցում</i>
<b>գոյական+գոյական</b> (մեղվաբառ, մեղրաբաժակ, մեղվաչ, մեղվահոտ, մեղվաերգ, մեղվաթույն*, մեղվասուսինձ*, մեղվածրար*) <b>գոյական+ածական</b> (մեղրալազուր, մեղրադեղին). <b>գոյական+բայ</b> (մեղրածորել, մեղրամոմել). <b>գոյական+բայանուն</b> (մեղվագարդ, մեղվապատ, մեղրաքամ*, մեղվակուլ*) <b>գոյական+գոյական+գոյական</b> (մեղրաշաքարախյուս*) <b>գոյական+գոյական+բայանուն</b> (մեղրաբերքահավաք*):	<b>արմատ+ածանց</b> (մեղրավուն) <b>արմատ+հոդականալ+արմատ+ածանց</b> (մեղվավաճառք, մեղվատնակ, մեղրախոսուն, մեղվածանրոց*) <b>արմատ+արմատ+ածանց</b> (մեղրաչք, մեղրորսություն) <b>արմատ+հոդականալ+արմատ+ածանց+ածանց</b> (մեղրաբերքային, մեղրահավաքչություն) <b>արմատ+հոդականալ+արմատ+ածանց+հոդականալ+արմատ</b> (մեղրաբերքահավաք)

Ուշադրություն դարձնենք հատկապես նորակազմ բառերի հիմքերին, քանի որ դրանք առանձնահատուկ դեր ունեն բառերի կառուցվածքի և նշանակության համար: Բառագիտության մեջ առանձնանում են երկու հիմնական տեսակներ՝ սերող և բաղադրող հիմքեր, որոնց վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ բառաստեղծական գործընթացները, արձանագրել բառերի իմաստների ընդլայնումը: *Մեղրող* հիմքին բառակազմական քայլով ավելանում է այլ հիմք կամ ածանց՝ կազմելով նոր բառ, իսկ *բաղադրողը* ավելացող հիմքն է: Իբրև կանոն՝ բարդ բառերի աջակողմյան բաղադրիչը բաղադրող հիմքն է, իսկ ձախակողմյան հիմքը՝ սերող [1, 247-278]: Բաղադրիչների կցման հերթականությունը ցույց տալու համար դիտարկենք մի քանի օրինակների բառակազմական քայլերը՝ ըստ արդի լեզվաբանության մեջ ընդունված սկզբունքի [4, 113], [8, 283-284]: Հանդիպում են մեկ, երկու և երեք քայլերով կազմություններ.

*մեղրավուն* → (մեղր)ավուն

*մեղրաբաժակ* → (մեղր/ա)(բաժակ)

*մեղրահավաքություն* → [(մեղր/ա)(հավաք)]ություն

*մեղրաշաքարախյուս* → [(մեղր/ա)(շաքար/ա)](խյուս)

*մեղրաբերքային* → {[(մեղր/ա) (բեր)]ք}ային:

Կան նաև բազմակի պատճառաբանվածություն ունեցող բառեր: Օրինակ՝ *մեղրաբերքահավաք* բառը կարող ենք բացատրել երկու եղանակով. *մեղրաբերք+հավաք* (մեղրաբերքը հավաքելը) և *մեղր/ա+բերքահավաք* (մեղրի բերքահավաք): Բառակազմական վերլուծության բանաձևը հետևյալն է.

{[(մեղր/ա)(բեր)]ք}(հավաք) կամ (մեղր/ա){[(բեր)ք]}(հավաք):

Եթե առաջին տարբերակում ունենք բաղադրյալ սերող հիմք + պարզ կամ արմատական բաղադրող հիմք, ապա 2-րդ դեպքում հակառակն է՝ պարզ կամ արմատական սերող հիմք + բաղադրյալ բաղադրող հիմք:

<sup>2</sup> \*-ով տրվում են տերմինային արժեք ունեցող բառերը:

Դիտարկենք *մեղրաքամիչ* բառի բառակազմական վերլուծությունը: «Նոր բառեր»-ի Զ պրակտում կա նաև *մեղրաքամ* բառը (*մեղր քամելը* նշանակությամբ) [19, 123]: Այն մեկ ուրիշ իմաստ էլ ունի՝ *մեղր քամելու սարք*, *մեղրաքամ մեքենա*: *Մեղրաքամիչ*-ը նույն մեղր քամելու համար նախատեսված սարքն է՝ մեղրահացից մեղրը քամող մեքենան [22]: Այս բառը կարելի է մեկնաբանել *մեղրաքամ+իչ* կամ *մեղր(ա)+քամիչ*: Ըստ այդմ՝ բառակազմական քայլերի հաջորդականությունը կլինի՝

*[(մեղր/ա)(քամ)]իչ* կամ *(մեղր)ա/(քամ)իչ*:

Կան նաև բառակազմակերպական հիմքերով ձևավորված բարդություններ՝ *մեղվամայր* (մայր մեղու), *մեղրորոտություն* (մեղրի որս), *մեղվափչակ* (մեղունների փչակ), *մեղրամոմել* (մեղրամոմով պատել), *մեղվաթույն* (մեղվի թույն), *մեղրաքամիչ* (մեղրի քամիչ)<sup>3</sup> և այլն:

### **Մեղր և մեղու բաղադրիչներով կազմությունների թարգմանական առանձնահատկությունները գեղարվեստական տեքստերում**

Բառապաշարի համալրման համար կարևոր աղբյուր է նաև թարգմանությունը՝ պատճենման և կիսապատճենման եղանակներով: «Հայերենի բառաշինական արվեստը շատ կողմերով թարգմանական արվեստ է» [6, 111], ուստի օտար բառի հնարավորինս ճիշտ հայերենացումը խոսում է թարգմանչի արհեստավարժության և բառաստեղծական հմտությունների մասին: Թարգմանությունը հաճախ շատ ավելին է, քան բառերի ուղղակի փոխակերպումը մի լեզվից մյուսը: Հասկանալի գեղարվեստական խոսքի թարգմանությունը պահանջում է ոչ միայն լեզվական գիտելիքներ, այլև պատկերավոր և վերլուծական մտածողություն, ինչն էլ էական ազդեցություն է ունենում տեքստի ընկալման և գեղարվեստական արժեքի վրա: Երբեմն տվյալ լեզվական միավորի ճիշտ թարգմանության համար մեծ դեր է խաղում համատեքստը [10, 75]:

Վերջին շրջանում նոր թափ են առել գեղարվեստական գրականության թարգմանությունները, և թարգմանչի կողմից հաճախ բառաստեղծական կամ բառակազմական մեծ հմտություն է պահանջվում բնագրի հեղինակի ասելիքը ընթերցողին ճշգրիտ հասցնելու համար: Նրա աջակցությամբ բարդ խնդիր է դրված. կատարել բառացի թարգմանություն, թե՛ բառային իմաստի համապատասխանություն: Նա պետք է կարողանա պահպանել տեքստի իմաստային ամբողջականությունը՝ հաշվի առնելով հեղինակի խոսքի նպատակը, տեքստի ժանրը, լեզվամտածողության առանձնահատկությունները, ընթերցողների թիրախային խումբը և այլն: Թարգմանիչը միջնորդ է դառնում հեղինակային մտքի և ընթերցողի ընկալունակության, զգացական աշխարհի միջև:

*Մեղր* և *մեղու* իմաստային խմբում ունենք բառերի պատճենման և կիսապատճենման օրինակներ մեր լեզվին բնորոշ բառակազմական կաղապարներով ու միջոցներով (*մեղրահամեմունք*, *մեղվակնձիթ*, *մեղրադեղին*, *մեղրահարուստ*, *մեղրավուն*, *մեղրալազուր*): Առանձնացրել ենք դրանցից մի քանիսը: Դիտարկենք *մեղրադեղին* (մեղրի գույնի դեղին) բառը: Գերմանացի գրող Գյունթեր Գրասի «Թիթեյա թմբուկ» երկի հայերեն թարգմանության մեջ կարդում ենք. «...Գետնի ժամացույցի *մեղրադեղին* թվահարթակը՝ .... կտր ապակին, կտոր-կտոր լինելով, թռավ տարբեր կողմեր ու ընկավ .... » (թարգմ.՝ Կառլեն Մատինյան) [24, 104]: Համեմատենք բնագրի հետ. “Die runde geschliffene Scheibe, die das *honiggelbe* Zifferblatt unserer Standuhr vor Staub und sterbenden Fliegen schützte, zersprang, fiel...” [25, 30]. Ինչպես տեսնում ենք, այստեղ գերմաներեն *honiggelb* բառը հայերենում թարգմանվել է բացառությամբ՝ *մեղրադեղին*: Մա պատճենման դասական օրինակ է:

Մոտեցումը այլ է *մեղրալազուր* (մեղրի գույնին տվող լազուր՝ բաց կապույտ) բառի դեպքում: Ամերիկացի գրող Ֆրենսիս Սքոթ Ֆիցջերալդի «Մեծն Գեթսբի» ստեղծագործու-

<sup>3</sup> Նույն սկզբունքով մեղրով տորթ բառակապակցությունից կազմվել է մեղրատորթ բարդ բառը:

թյան մեջ կարողում ենք հետևյալ նախադասությունը. “The late afternoon sky bloomed in the window for a moment like the *blue honey* of the Mediterranean ...” [26, 38]. Բնագրում հանդիպող *blue honey* բառակապակցությունը հայերեն թարգմանության մեջ ներկայացված է *մեղրալագուր* բարդ բառով. «Մի պահ երեկոյան արևը Միջերկրականի *մեղրալագուրի* պես փայլատակեց պատուհանի մեջ» (թարգմ.՝ Մոնա Մեֆերյան) [27, 123]: Այստեղ ոչ թե բառացի թարգմանություն է կատարվել, այլ ուշադրություն դարձնելով խորհրդանշական իմաստին և զգայական ընկալմանը՝ թարգմանիչը կարողացել է ստեղծել հետաքրքիր գեղարվեստական պատկեր: Հավանաբար նկատի է ունեցել ծովի ջրերի վրա մայր մտնող արևի ճառագայթների արտացոլանքի գույնը: Նա համադրել է դեղին և կապույտ գույները, մեղրի քաղցրության խորհրդանիշը (այս դեպքում նկատի ունի ոչ թե համային, այլ տեսողությանը, այքի համար ախորժեղի լինելու հանգամանքը) և լազուրի հանգիստ գունալին երանգը: Ի դեպ, անգլերեն *blue* բառը ոչ թե պարզապես թարգմանվել է *կապույտ*, այլ վերջինին հոմանշային շարքից ընտրվել է *լազուր*-ը, ցուցաբերվել գեղարվեստական մտեցում՝ ընդգծելով գույնի և քաղցրության համադրությունը: Նկատենք, որ այս բառը հեղինակի երևակայության, աշխարհընկալման և գեղարվեստական մտեցման արդյունք է, որի իմաստը հայ ընթերցողին փոխանցելու համար թարգմանիչը ցուցաբերել է առանձնահատուկ բառակազմական մտեցում՝ բառակապակցական հիմքից ստանալով բարդ բառ: Թարգմանական այսպիսի ընտրությունը ցույց է տալիս ոչ միայն լեզվական ճկունությունը, այլև ստեղծագործական մտեցումը:

Հետաքրքիր է յուրօրինակ է *մեղվակնճիթ* (մեղվի կնճիթ) բառի թարգմանությունը: Ե՛վ բնագրում, և՛ հայերեն տեքստում հեղինակները այն փոխաբերաբար են գործածել: «Ամբողջ ժամանակ իր հոգու *մեղվակնճիթը* հոտոտում էր նրա հոգու զաֆրանն ու մեղրը փնտրում» [28, 112]: Անգլիացի արձակագիր և դրամատուրգ Ջոն Գուլտոտորդին իր «Ֆորսայթների պատմությունը» երկում գրում է. “And all the time, too, the *proboscis* of her spirit was scenting, searching for the *honey* and the saffron of his spirit” [29]. *Proboscis* բառը ծագում է հունարենից և բառացիորեն նշանակում է «կնճիթ», որն այս համատեքստում վերաբերում է մեղվի գլխի առջևի մասում երկարավուն սրածայր ելուստին, որը ծառայում է որպես սնվելու և պաշտպանվելու գործարան: Հայերեն թարգմանության մեջ թարգմանիչը, նկատի ունենալով բնագրում գործածված *honey* (մեղր) բառը, կազմել է *մեղվակնճիթ* ձևը, որը կարելի է դիտարկել որպես *նրբանկատության, հոգու խորքը ներթափանցելու* խորհրդանիշ: Մեղուն իր կնճիթով ունակ է նեկտար հավաքել ծաղկի դժվարամատչելի հատվածներից: Այս հատկությունը գեղարվեստական վերաիմաստավորում է ստացել և նշանակում է՝ *թափանցել մարդու ներաշխարհի ամենամուրթ շերտերը, հասկանալ նրան*:

Իռլանդացի գրող Ջեյմս Զոյար «Ուլիսես» վեպում գործածել է *honeysauces* բառը. “Hot herringpies, green mugs of sack, *honeysauces*, sugar of roses, marchpane, gooseberried pigeons, ringocandies” [30]. Ռուսերեն տարբերակում թարգմանիչները (В. Хинкис, С. Хоружий) վերընշյալ բառի իմաստն արտահայտել են բառակապակցությամբ. “Паштетъ, зеленые кубики с хересом, *соусы на меду*, варенье из розовых лепестков, марципаны, голуби, начиненные крыжовником, засахаренные коренья” [31]. Այլ է պատկերը հայերեն թարգմանության մեջ. «Օ՞վվատառեխի տաք կարկանդակներ, ... *մեղրահամմուսներ*, վարդի մուրաբա, նուշի թխվածք, փշահաղարջով լցնված աղավիններ, շաքարած արմտիք» (թարգմ.՝ Մամվել Մկրտչյան) [32]: Մա խոտում է թարգմանական արվեստի լեզվական առանձնահատկությունների մասին: Երեք տարբեր լեզուներում նույն իմաստն արտահայտվում է կառուցվածքային տարբեր եղանակներով. անգլերենում՝ *honey (մեղր) + sauces (սոուսներ)*, ռուսերենում՝ *соусы на меду* (ունի նախդրային կառուցվածք), հայերենում՝ *մեղրահամմուսներ*: Հայերեն տարբերակն իմաստային առումով բառացիորեն չի համապատասխանում *սոուսի* գաղափարին: Վերջինս նշանակում է *1. մտով կամ որևէ բանջարեղենով պատրաստվող*

կերակուր, 2. աղուլ, քացախուլ, այլուրուլ, ձվով և այլն պատրաստված հեղուկ համեմունք, որ գործածվում է զանազան կերակուրների հետ, մինչդեռ համեմունք բառը գործածվում է հետևյալ իմաստով՝ կերակուրը համեղացնող բուսական նյութեր (պղպեղ, գինձ, սամիթ, դարչին, սոխ և այլն): Թարգմանիչը մեղրահամեմունք բառն է կազմել՝ հավանաբար հաշվի առնելով, որ համեմունքը հայախոս լսարանի համար ավելի ընկալելի է և ընդունելի, ավելի ընդհանրական իմաստ ունի (կարող է լինել ոչ միայն չոր, փոշիանման, այլև հեղուկ): Իսկ ստուշ-ը մեր լեզվի համար անբնական է հնչում: Մեղրահամեմունք նորակազմ բառը հեշտությամբ կարող է գործածվել և՛ խոհարարական գրականության մեջ, և՛ առօրյա խոսքում:

Նոր բառերը կամ նորակազմությունները թարգմանական գեղարվեստական տեքստերում կարևոր նշանակություն ունեն, քանի որ կարող են մեծապես ազդել թարգմանության որակի և ընթերցողի ընկալման վրա: Դրանք ընդգծում են թարգմանչի ինքնատիպ ոճը, ստեղծագործական և վերլուծական մոտեցումը, մշակութային առաջնահերթությունները, հմտությունների ճկունությունը, նրա հումորը, ճաշակը և այլն: Թե որքանով կյուրացվեն այդ բառերը հասարակության կողմից, ցույց կտա ժամանակը:

### Եզրակացություն

Այսպիսով՝ նոր բառերը լեզվական զարգացող համակարգի բնականոն շարունակությունն են, որով հասարակությունն արձագանքում է ժամանակակից աշխարհի պահանջներին: Դրանք արտացոլում են ժամանակաշրջանի ճաշակը, արժեհամակարգը, լեզվի ճկունությունն ու փոփոխվող իրականությունը հարմարվելու կարողությունը: Կադապարային տարբեր կառույցները կարող են խթանել լեզվում նոր բառերի ներմուծմանը ու տարածմանը, սակայն դրանց կիրառելիությունը կախված է հանրության կողմից գործածականության արդյունավետությունից:

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև *մեղր* և *մեղու* բառերը հին ծագում ունեն, սակայն բառաբարդման, ածանցման և թարգմանության (պատճենման և կիսապատճենման) ճանապարհով շարունակում են ակտիվորեն մասնակցել ժամանակակից հայերենում նոր բառերի ձևավորման և բառապաշարի զարգացման գործընթացին:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-20>

### Գրականություն

1. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1984, 372 էջ:
2. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, 366 էջ:
3. Գալստյան Ա., Նորակազմ բառերը արդի հայերենի բառապաշարում // «Լեզու և լեզվաբանություն», Երևան, 2021, 1(24), էջ 44-48:
4. Գալստյան Ս., Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, 196 էջ:
5. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, ՀՆՍՀ ԳԱ հրատ., 1989, 258 էջ:
6. Իշխանյան Ռ., Ակնարկներ հայերենի տերմինաշինության, Երևան, «Լույս» հրատ., 1981, 180 էջ:
7. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, «Լաիրի» հրատ., 2000, 244 էջ:
8. Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Ս., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն), Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 462 էջ:
9. Սուքիասյան Հ., Աճակնը հայերենում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 251 էջ:
10. Усова И. В. Неологизмы в современном английском языке. «Балтийский гуманитарный журнал», 2015, №1(10), с. 75-77.

## **Բառարաններ**

11. Աճառեան Ն., Հայերէն արմատական բառարան, Գ հատոր, Երևան, ԵՊՀ հրատ., 1977, 636 էջ:
12. Գալստյան Ս., Դպրոցական բառակազմական բառարան, Երևան, «Զանգակ» հրատ., 2014, 232 էջ:
13. Մալխասեանց Սո., Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Երևան, ՀՍՍՌ հրատ., 1944, 615 էջ:
14. Նոր բառեր. Ա պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 196 էջ:
15. Նոր բառեր. Բ պրակ, Երևան, «Ատողիկ» հրատ., 2016, 184 էջ:
16. Նոր բառեր. Գ պրակ, Երևան, «Ատողիկ» հրատ., 2017, 243 էջ:
17. Նոր բառեր. Դ պրակ, Երևան, «Ատողիկ» հրատ., 2018, 172 էջ:
18. Նոր բառեր. Ե պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 175 էջ:
19. Նոր բառեր. Զ պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 221 էջ:
20. Նոր բառեր. Է պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 260 էջ:
21. Նոր բառեր. Ը պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023, 140 էջ:

## **Հանացանց**

22. [https://hy.wikipedia.org/wiki/Մեղրաքամիչ\\_մեքենա](https://hy.wikipedia.org/wiki/Մեղրաքամիչ_մեքենա) (հասանելի է 12.04.2025)
23. [http://www.old.yu.am/files/06A\\_Martirosyan.pdf](http://www.old.yu.am/files/06A_Martirosyan.pdf) (հասանելի է 20.09.2025)
24. [http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=143&dt=HY\\_HY&query=մեղրաղեղին, էջ 104](http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=143&dt=HY_HY&query=մեղրաղեղին, էջ 104) (հասանելի է 12.05.2025)
25. <https://ru.scribd.com/doc/135324912/Die-Blechtrommel-Grass, p. 30> (հասանելի է 12.04.2025)
26. <https://www.planetebook.com/free-ebooks/the-great-gatsby.pdf, p. 38> (հասանելի է 17.04.2025)
27. [http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=144&dt=HY\\_HY&query=մեղրալազուր, էջ 123](http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=144&dt=HY_HY&query=մեղրալազուր, էջ 123) (հասանելի է 18.04.2025)
28. [http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=142&dt=HY\\_HY&query=մեղվակնճիթ, էջ 112](http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=142&dt=HY_HY&query=մեղվակնճիթ, էջ 112) (հասանելի է 20.09.2025)
29. [https://gutenberg.net.au/ebooks02/0200751h.html?utm\\_source=chatgpt.com](https://gutenberg.net.au/ebooks02/0200751h.html?utm_source=chatgpt.com) (հասանելի է 11.07.2025)
30. <https://james-joyce.ru/ulysses/ulysses-text-eng.htm> (հասանելի է 11.07.2025)
31. <https://james-joyce.ru/ulysses/ulysses-text.htm#1> (հասանելի է 10.09.2025)
32. [http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=122&dt=HY\\_HY&query=մեղրահամեմունք&forceIndex=yes](http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=122&dt=HY_HY&query=մեղրահամեմունք&forceIndex=yes) (հասանելի է 20.09.2025)

## Словообразования с компонентами *мед* и *пчела* в издании “Новые слова”

*Мкртумян Армине*

### Резюме

**Ключевые слова:** *неологизм, словосложение, аффиксация, словообразовательный шаг, калькирование, частичное калькирование*

Новые слова отражают развитие языка как системы, позволяющей обществу реагировать на современные реалии. Они фиксируют вкусы эпохи, культурные приоритеты, ценностные ориентации, а также демонстрируют гибкость языка и его способность к адаптации. Общественные структуры могут способствовать внедрению и распространению новых слов, однако их успешность определяется в первую очередь применимостью в речи населения.

Исследование показало, что, несмотря на древнее происхождение слов «мегр» (мёд) и «мегу» (пчела), они продолжают активно участвовать в создании новых слов современного армянского языка. Это проявляется через словосложение, аффиксацию, а также переводные стратегии, прямое копирование и частичное калькирование.

Особое значение такие слова имеют в художественных переводах, влияя на качество текста и восприятие читателем. Они отражают стиль переводчика, его творческий и аналитический подход, чувство юмора, вкус и эстетические предпочтения, а также демонстрируют потенциал языка в передаче культурных и эмоциональных нюансов.

## Compounds with the Components *Honey* and *Bee* in “New Words” Publication

*Mkrtumyan Armine*

### Summary

**Key words:** *neologism, compounding, affixation, word-formative step, copying, partial copying*

New words are natural continuation of the developing linguistic system through which society responds to the demands of the contemporary world. They reflect the tastes of the era, value systems, cultural priorities, as well as the flexibility of the language and its ability to adapt to changing realities. Social structures can promote the acceptance and spread of new words; however, their success is ultimately determined by their usability among the public.

The conducted study showed that although the words **meghr** (honey) and **meghu** (bee) have ancient origins, they continue to participate actively in the formation of new words and development of the vocabulary in modern Armenian through word compounding, affixation, and translation (both direct copying and partial copying).

These words have particular significance, especially in literary translation, as they can greatly influence the quality of translation and a reader's perception, emphasizing a translator's style, one's creative and analytical approach, sense of humor, taste, and other aspects.

Ներկայացվել է 27. 09. 2025 թ.

Գրախոսվել է 08. 10. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Մտորումներ երկխոսության հաղորդակցական-գործաբանական  
էության շուրջ**

*Ջադինյան Նինա*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-28>

*Հանգուցային բառեր. միջգիտակարգ, ճանաչողություն, տեղեկատվություն, ճանաչողական գործառույթ, գեղագիտական գործառույթ, խոսույթ, փիլիսոփայություն, իմաստաբանություն*

**Նախաբան**

Նորագույն լեզվաբանական աշխատություններում նկատվում է հետաքրքրությունների շրջադարձ կառուցվածքային համասեռ նկարագրություններից դեպի ուսումնասիրվող լեզվական երևույթների արտաքին հաղորդակցական և գործաբանական նկարագրերը, որոնք ավելի ու ավելի հաճախ միջգիտակարգային մոտեցումներ են պահանջում: Պատմականորեն այս երևույթը կարելի է բացատրել մի շարք գործոններով և օրինաչափություններով: Դրանցից է, նախևառաջ, գլոբալ հաղորդակցության դաշտի ձևավորումը, որով պայմանավորվում է լեզվի նկատմամբ կիրառական մոտեցման ընդգծվածությունը, և որը պահանջում է միջմշակութային ու միջլեզվական իրողությունների համարժեքության կամ, առնվազն, թարգմանելիության խոչընդոտի լուծում: Փոփոխվում են, մի կողմից, հաղորդակցության նպատակները, մյուս կողմից՝ միջոցները և ուղիները: Վերջիններս պահանջում են քննարկել լեզվի գործածական հնարավորությունները և դրսևորումները:

Լեզվաբանական հետաքրքրությունների տեղաշարժի մյուս կարևոր օրինաչափությունն այն է, որ լեզվի և խոսքի ուսումնասիրությունները հասել են զարգացման այն փուլին, երբ կենդանի լեզուները իբրև կառույց հետազոտելու և նկարագրելու աշխատանքները, թերևս որոշ բացառությամբ, ըստ էության, ավարտված են, և լեզուն առարկայանում է իր կայացման ավելի շատ խոսքային, քան կառուցվածքային կերպով: Համապատասխանաբար, քննության են արժանանում խոսքի նմուշները, որոնք առավել ակնառու կերպով են վեր բանում տվյալ լեզվի և ընդհանրապես լեզուների գործաբանական առանձնահատկություններն ու հնարավորությունները: Նշված երկու պայմանները մասամբ են բացատրում լեզվաբանության զարգացման արդի ուղղությունները, սակայն արդեն վստահաբար կարելի է խոսել այն մասին, որ շատ հաճախադեպ են դարձել նաև լեզվաբանական այնպիսի հաղորդակցական-գործաբանական միջգիտակարգեր, որոնց ուսումնասիրության առարկան խոսքն է կամ անգամ խոսողությունը, իսկ խոսքի ամենատարածված գոյածը, անշուշտ, երկխոսությունն է՝ որպես հաղորդակցման հիմնական տեսակ և ճանաչողության միջոց:

**Թեմայի արդիականությունը**

Նորագույն լեզվաբանական ուսումնասիրություններում նկատվում է հետաքրքրությունների տեղաշարժ՝ կառուցվածքային մոտեցումներից դեպի լեզվի հաղորդակցական և գործաբանական կիրառությունները: Երկխոսությունը կարևոր է ոչ միայն տեղեկատվության փոխանցման, այլև ճանաչողական և մշակութային գործընթացների ուսումնասիրության համար:

Չողվածի նպատակն է՝ համապարփակ հետազոտել երկխոսության հաղորդակցական, ճանաչողական և դիսկուրսիվ գործառույթները՝ լեզվաբանական, իմաստաբանական և գեղարվեստական համատեքստում:

Ուսումնասիրության խնդիրներն են՝

- վերլուծել երկխոսության տեսական հիմունքներն ու պատմական օրինակները,

- հետազոտել արտալեզվական գործոնների ազդեցությունը երկխոսության վրա,
- դիտարկել երկխոսության կիրառությունները գեղարվեստական և փիլիսոփայական տեքստերում,
- համեմատել տարբեր դիսկուրսային մոտեցումներ և գնահատել դրանց գործածելիությունը հայերեն լեզվական կոնտեքստում:

Ուսումնասիրության մեջ կիրառել ենք խնդրո առարկայի տեսական հիմնադրությունների վերլուծության և նյութի հասկացական գործիքակազմի ընտրության մեթոդները:

Երկխոսությունը մասն է կազմում ընդհանուր հաղորդակցական համակարգի, որպիսին է լեզուն: Լեզուն, դիտարկվելով որպես մարդկանց միջև հաղորդակցության միջոց, կարող է օգտագործվել տարբեր որակի և տևողության տեղեկատվության հաղորդման համար՝ կախված խոսողի նպատակային կենսասահադրայից, ուղղվածության և դրա փոխանցման պայմաններից:

20-րդ դարի վերջին երկխոսությունն իր արդեն իսկ հայտնի ձևերին ավելացրեց ևս երկուսը՝ երկխոսությունը հանուն հաշտեցման ու խաղաղության և մարդ-մեքենա երկխոսություն: Այդ երկու նոր տեսակները, հետապնդելով փոխըմբռնման ավանդական նպատակը, նախորդներից տարբերվում են նրանով, որ բարձր պահանջկոտություն են հանդես բերում իրենցից սպասվող արդյունքի նկատմամբ: Բնականաբար, երկխոսության այս տեսակների նկատմամբ պիտի աճեր նաև գիտական պահանջկոտությունը, որի կիզակետից էլ արտալեզվական գործոնների դերն ու նշանակությունն են: Այստեղ պետք է հաշվի առնել խոսողի նպատակադրույթը, որով հասկացվում է այն, որ մարդը, օգտվելով լեզվից՝ որպես հաղորդակցության գենիցից, ընտրում է լեզվական միջոցներ և օգտագործում դրանք օբյեկտիվ իրականության փաստերի և դրանց նկատմամբ իր վերաբերմունքի մասին տեղեկատվության հնարավորինս համարժեք և արտահայտիչ փոխանցման նպատակով:

Արտալեզվական երևույթների ազդեցության որոնումները տեքստաբանական ուսումնասիրություններում ակնհայտ են: Դրանք մեկնաբանում են լեզվի կարգավիճակն ու զարգացման ընթացքը: Նման որոնումներն են դառնում անցյալի ամենաազդեցիկ գրական ստեղծագործություններին անդրադարձ կատարելու պատճառը, երբ անհրաժեշտություն է առաջանում վերագնահատելու գնահատվածը, ձևավորված տեսակետները տեղափոխել նոր դարաշրջան ու նոր արժեքային համակարգ ստանալ նոր հասկացություններով և արժեքներով գնահատվող արդյունքներ: Երկխոսության ձևավորման ժամանակ արտալեզվական գործոնների ազդեցությունը կրկնապատկվում է, քանի որ այստեղ արդեն գործ ունենք առնվազն երկու լեզվատաճական աշխարհների հետ, և երկու կենսահամակարգերի ու մտածելակերպերի շփման հարցն է ինքնին բարձրացվում: Նման լեզվական երևույթների ուսումնասիրության համար առավել հարմար են գեղարվեստական երկերը, որոնք մեկ խոսող հեղինակի արտացոլմամբ տալիս են որոշակի իրականության լեզվական և մշակութային, սոցիալ-հոգեբանական և խոսքային պատկերը:

Երկխոսություն եզրույթը հաղորդակցվող երկու կողմերի միջև խոսակցություն է արտահայտում: Այս հասկացությունը իբրև մարդկային հաղորդակցության հիմնական ձև, բարձր զարգացման է հասել իմաստասիրական, տրամաբանական գրույցներից՝ հասնելով մինչև բարձր տեխնոլոգիաների աշխատակարգի մակարդակը: Իսկական ուշադրության պատճառ ենք համարում երկու կարևոր գործառույթ, որ երկխոսությունն իրականանում է մարդու հաղորդակցության և ճանաչողության բնագավառում: Առաջին հաղորդակցական գործառույթը ենթադրում է երկու գիտակցությունների շփում, որի ակնկալված արդյունքը հաղորդակցվող կողմերի փոխըմբռնումն ու համագործակցությունն է՝ հենված տեղեկատվության արդյունավետ բաշխման վրա: Երկրորդ առաջինից ածանցյալ գործառույթը ճանաչողությունն է, որին ուղղված էին անտիկ փիլիսոփայական երկխոսությունները: Երկխոսությամբ հաղորդակցվելը հնարավորություն է տալիս վերակառուցել և լրացնել աշխարհի և մարդկանց մասին ունեցած պատկերացումները, ստանալ ոչ միայն անհրաժեշտ տեղեկատ-

վություն, այլև դրա համապատասխան գնահատականն ու արժևորման հնարավորությունը: Ինքնին հասկանալի է, որ այս երկու գործառնությունները փոխկապակցված և փոխլրացնող են: Ի վերջո, որպես խոսքի տեսակ՝ երկխոսությունն ունի նաև գեղագիտական գործառնությո՞ւյթ, որի իրականացումն առավել նպատակահարմար է դիտարկել գեղարվեստական ստեղծագործությունների մեջ: Գեղարվեստական գրականության մեջ երկխոսությունների առատորեն առկա լինելը ստիպում է ենթադրել, որ դրանք, բացի վերոբերյալը, ունեն առնվազն ևս մեկ գործառնությո՞ւյթ: Մենք փորձում ենք առաջ քաշել այն կանխավարկածը, որ այդ գործառնությո՞ւյթը ծառայում է հեղինակային խոսքի որոշակի ոճական և արտահայտչական որակներ պայտհովելուն, գործառնությո՞ւյթ, որ կարելի է անվանել դիսկուրսիվ կամ խոսությո՞ւյթային գործառնությո՞ւյթ: Դրանք բացահայտումը, թերևս, հնարավոր է բանասիրական համալիր քննության միջոցով, որում մենք մասնավորապես ենթադրում ենք լեզվագործաբանական, հոգեկեզվաբանական, կառուցվածքային և իմաստաբանական, որոշ մասով՝ գրականագիտական ու տումասիրության բաղադրիչների առկայությունը: Թե ինչպիսի որակներ կարող է ապահովել գեղարվեստական երկխոսությունը, հնարավոր է պարզել միայն կոնկրետ ժանրի ստեղծագործությունների համալիր վերլուծության շնորհիվ՝ նկատի ունենալով երկխոսության մասին եղած բոլոր ավանդական պատկերացումները և նորագույն գործաբանական մոտեցումները, ինչպես նաև տվյալ հեղինակի ստեղծագործական ուղու առանձնահատկությունները: Մյուս հարթությունը, որում դիտարկվում է երկխոսությունը, միջմակութային հաղորդակցությունն է, որում թարգմանությունը մշտապես կարելի է դիտարկել իբրև մշակութային երկխոսության հաղորդակցում:

Երկխոսությունն իբրև հաղորդակցության տեսակ և, մասնավորապես, որպես ճանաչողության միջոց՝ մարդկային հասարակությանը զուգընթաց տեսական պատմական զարգացում է անցել: Կարելի է ենթադրել, որ երկխոսության երկու գործառնությունները՝ տեղեկատվության հաղորդումն ու հուզագրացական արժեքների հաղորդումը, միասնաբար նպաստել են դրա իմաստասիրական գործառնությո՞ւյթի ձևավորմանը: Պատմությանը հայտնի են փիլիսոփա Պլատոնի երկխոսությունները, որոնց մեջ առկա է որոշակիորեն պարզ կամ ներքինաստ մի անհամաձայնություն, և երկխոսող մասնակիցների նպատակն է ցրել այդ անհամաձայնությունը: Փիլիսոփա Սոկրատեսի համար հատկանշական է իր գրուցակցին փորձել հետագա համոզումների համար, ընդհուպ մինչև այն պահը, երբ իրենց մեջ եղած հակադրությունը կհասնի բանավիճային համոզմունքի կամ վարկածի:

Գրականագետները սովորաբար ենթադրում են, որ Պլատոնը երկխոսության կանոնավոր գործածումը ներկայացնում էր որպես անկախ գրական ժանր, որը ծագել է անտիկ թատերագիրներից: Պլատոնը հետագայում պարզեցրել է այդ ձևը՝ հասցնելով գուտ տրամաբանական խոսակցության, մինչդեռ կերպարաստեղծման գեղարվեստական տարրը անխաթար է թողել: Պլատոնյան երկխոսությունը, որպես հստակ մի ժանր, որ իբրև հռետոր բնորոշում էր Սոկրատեսին, ինչպես նաև որևէ փիլիսոփայական հարց քննարկող մեկ կամ ավելի գրուցակիցների, 20-րդ դարում յուրօրինակ վերածնունդ ապրեց: Այդ երկխոսությունը վերջերս գործածողների թվում էր Ջ.Սանտայանան իր հայտնի «Երկխոսություններ մոռացման մեջ» աշխատությամբ [9]: Այդ աշխատության մեջ ներկայացված են այնպիսի պատմական դեմքեր, ինչպիսիք են Ալսիբիադեսը, Ալիցեննան, Դեմոկրիտը, ինչպես նաև Ա.Մըրդոքը, ով իր «Ակաստոս» և «Երկու պլատոնյան երկխոսություններ» աշխատությունների մեջ որպես գրուցակից ներգրավել է ոչ միայն Սոկրատեսին և Ալսիբիադեսին, այլև բնորոշել է երիտասարդ Պլատոնին որպես անհատականություն [7]: Հայ արդի փիլիսոփայական գրականության մեջ հայտնի են Գ. Բրուտյանի «Իմաստասիրական երկխոսությունները», որոնք դասական փիլիսոփայության ավանդույթների ուսուցողական արժեքի հարատևության ապացույցն են [1]: Տեսաբան Մ. Բուբերը իր աշխատության մեջ երկխոսությանը առանձնակի տեղ է հատկացնում: Նա այն առավելապես դիտարկում է որպես շարունակա-

կան հաղորդակցության արդյունավետ միջոց, քան թե որոշակի եզրահանգման հասնելու կամ ինչ-որ տեսակետ արտահայտելու նպատակային փորձ [12]:

Հոգեվեճվաբանության մեջ նշվում է, որ խոսքային գործունեությունը, ինչպես մարդու յուրաքանչյուր գործունեություն, որոշվում է նպատակային դիրքորոշմամբ [10, 15]: Հենց դրանից նպատակային կախվածությունն է, որ խոսողը օգտագործում և իրար է համակցում իմաստային և շարահյուսական միավորները՝ ստեղծելով իրական արտահայտում: Արտահայտում ասելով այս դեպքում հասկանում ենք խոսքային արտաբերում, որը բնորոշվում է խոսողի մտադրությամբ, կոնկրետ իրադրության այս կամ այն տարրերի առանձնացման ցանկությամբ, իրադրության մեջ լսողին իր միտքը հասկանալի դարձնելու ձգտմամբ: Հաղորդակցության գործընթացը երկկողմանի է, այսինքն՝ այն կապված է ոչ միայն խոսողի մտադրության, այլև լսողի կողմից խոսքի ընկալման հետ: Հենց այդ պատճառով էլ հաղորդակցական գործընթացի ուսումնասիրությունը պետք է կատարվի՝ հաշվի առնելով խոսողի մտադրությունը և գրուցակցի ռեակցիան: Հաղորդակցային գործընթացի այս երկու կողմերին առավել հստակ կարելի է հետևել՝ ուսումնասիրելով երկխոսությունը, որն անմիջակա-նորեն արտացոլում է հաղորդակցային իրադրությունը:

Երկխոսության քննությանը զուգահեռ հարկ է անդրադառնալ դրա արդի տեսություններին: Երկխոսությունը իբրև դիսկուրսի (խոսույթի) տեսակ, թերևս, ամենացայտունն է, քանի որ այս երկու հասկացությունների բնութագրումներում մեծ ընդհանրություններ ենք գտնում: Դիսկուրսը իմաստաբանության մեջ գործածվող մի եզրույթ է, որն օգտագործում է ոչ միայն կենդանի խոսքի վերլուծության մեջ, այլև վերաբերում է հասարակական հաղորդակցությանը: Վերջին մոտեցումը հաճախ կապվում է Մ. Ֆուկոյի և Յ. Հաբերմասի «Հաղորդակցային ակտի տեսություն» աշխատության հետ., հեղինակներից յուրաքանչյուրը դիսկուրսի սեփական ըմբռնումն ունի [5, 6]: Յ. Հաբերմասը փորձում է գտնել տրանսցենդենտալ օրենքներ, որոնցով խոսողները կարող են համաձայնության գալ առանցքային հարցերի շուրջ, մինչդեռ Մ. Ֆուկոն զարգացնում է դիսկուրսի բուռն վիճաբանության տեսակը: Այս երկու բնութագրումներում ակնհայտ է դիսկուրսի երկխոսական դինամիկայի բնույթը: Տեսաբան Դ. Շիֆրինը թվարկում է «դիսկուրս» հասկացության առնվազն երեք մոտեցում, որոնցից առաջինը «խոսույթ» է համարում «նախադասությունից վեր լեզվական մակարդակը» [9, 11], երկրորդը առաջինին ավելացնում է գործառական շերտը [9], մինչդեռ երրորդ մոտեցումը հակասում է նախորդ երկուսին և տարակուսելի իրավիճակ ստեղծում նաև հայերեն համարժեքության տեսակետից: Այս մոտեցումը ներառում է նաև այնպիսի կոնկրետ պարամետրեր, ինչպիսիք են ժամանակը և տարածությունը: Նման դեպքերում խոսույթային վերացարկումը բացառվում է:

Իմաստաբանության մեջ դիսկուրսը մի քանի նախադասությունից կազմված լեզվական միավոր է, այլ խոսքով՝ գրույց է, վեճ կամ էլույթ: Դիսկուրսի ուսումնասիրությունը կամ վերլուծությունը արվում է և՛ լեզվական, և՛ գործառական ձևով՝ ներառելով բանավոր և գրավոր տեքստերի ուսումնասիրությունը: Դա առարկայական բարդ ոլորտ է, որը ներառում է հանրալեզվաբանությունը, մարդաբանությունը, սոցիոլոգիան և հոգեբանությունը:

Հասարակական գիտություններում դիսկուրսը համարվում է մտածողության առկայացման միջոց կամ, ինչպես Ջ. Բայթերն է նշում, «ընդունելի խոսքի սահման», հնարավոր ճշմարտություն [4]: Այստեղ տեղին է վկայակոչել փիլիսոփայության հիմնահարցերից մեկն ու դրան տրված մի քանի հայտնի պատասխաններ. Ճանաչելի՝ է արդյոք իրականությունը, և ինչպե՞ս է հնարավոր ճանաչողությունը: Ճանաչողությունը, իրավամբ, հնարավոր է դառնում ես և դու երկխոսության պայմաններում: Առկայացած խոսքը նախատեսված է ազդելու շրջապատի վերաբերյալ մեր ունեցած տեսակետների վրա, այլ կերպ ասած՝ անհնար է խույս տալ դրանից, նաև տվյալ դիսկուրսը տրամադրում է հատուկ բառապաշար և հաղորդակցվելու համար կոնկրետ ոճ: Հստ Մ. Ֆուկոյի՝ դիսկուրսը չի կարող նվազել-դառնալ գաղափարական կշռադասում. դա կարելի է ինքնին ընդունել որպես ճակատամարտի դաշտ:

Նա ապացուցում է, որ ճշմարտությունը օբյեկտիվ պարզ է, և որ այն բացարձակ չէ [5]:

Խոսելով երկխոսության հաղորդակցային գործունեության մասին՝ հարկ է նշել նաև, որ այն իրականացվում է՝ կապված դեպքերի կամ այդ դեպքերին առնչվող հարաբերությունների փոխանցման հետ: Ե. Վոլֆը նշում է, որ տեքստային երկխոսությունների բնութագրական գծերից մեկը դեպքերի գնահատման հետ կապված վեճն է [13, 14]: Այստեղ անհրաժեշտ է կրկին խոսել երկխոսության հաղորդակցական-գործաբանական գործառույթների մասին: Ըստ Դ. Բոմի՝ երկխոսությունը իրապես նպատակ ունի մտնելու մարդու մտածողական ողջ գործընթացի մեջ և փոխելու այդ գործընթացի ձևը [3]: Ջ. Օլվուդը տարբերակում է երկխոսական գործողությունների կառավարման երկու տեսակ՝ «սեփական հաղորդակցության կառավարում և ինտերակտիվ հաղորդակցության կառավարում».

առաջինը ծառայում է կառավարելու խոսողի սեփական հաղորդակցությունը՝ կապված դրա ընթացքի, ընտրության և փոփոխության հետ, մինչդեռ փոխազդեցության կառավարումը ծառայում է կառուցելու տեղեկատվության հոսքը՝ նկատի առնելով ունկնդրին, այսինքն՝ երկխոսության մեջ մյուս մասնակցին [2]:

Երկխոսությունը, այսպիսով, իրականացնում է տեղեկատվական, ճանաչողական, ներգործման, արտահայտման գործառույթներ, հնարավորություն է տալիս բացահայտել «բառերով չապավածը» և համատեքստի (սոցիալ-հոգեբանական) ներունակային շերտերը: Կարելի է հաստատել նաև, որ երկխոսությունը մասնավոր հաղորդակցային մի համակարգ է, որը բնորոշվում է արտաբերման այսրոպեականությամբ, արագությամբ և օբյեկտիվ իրականության երևույթների և իրադրությունների արտացոլման գործընթացի անմիջականությամբ. փաստերի նկատմամբ սեփական վերաբերմունքի արտահայտման հարցում մասնակիցների ակտիվությամբ, ինչպես նաև՝ հուզական ռեակցիաների առատությամբ:

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-28>

### Քրականություն

1. Բրուտյան Գ. Ա., Իմաստասիրական երկխոսություններ, հ. 2, Երևան, «Հայաստան», 1986, 527 էջ:
2. Allwood J. Communication as Action and Cooperation. Gothenburg. Monographs in Linguistics 2. Dept. o Linguistics, University of Goteborg, 1976.
3. Bohm D. Dialogue, [http://www.david-bohm.net/dialogue/dialogue\\_exploration.html](http://www.david-bohm.net/dialogue/dialogue_exploration.html)
4. Butler J. Discourse of the Human Sciences, <http://www2.sjsu.edu/faculty/awilliams>
5. Foucault M. Questions of Method: An Interview with Michel Foucault. 1991/1981, <http://www.oise.utoronto.ca/depts/sese/>
6. Habermas J. The Theory of Communicative Action, Boston, 1981.
7. Murdoch I. Acastos: Two Platonic Dialogues, Ldn, 1986.
8. Santayana G. Dialogue in Oblivion, <http://www.brainyquote.com/quotes/keywords>
9. Schiffrin D. Discourse Markers, Cambridge, Cambridge University Press. 1987.
10. Балли Ш. Общая лингвистика и вопросы французского языка, Москва, 2001.
11. Блинов А. Общение. Звуки. Смысл. Об одной проблеме аналитической философии языка, Москва, РФО, 1996.
12. Бубер М. Я и Ты, Москва, 1993.
13. Вольф Е. Ф. Грамматика и семантика прилагательного, Москва, 1978.
14. Исаева Л. А. Виды скрытых смыслов и способы их представления в художественном тексте, Краснодар, 1996.
15. Леонтьев А. А. Предисловие к книге Психолингвистика, Москва, «Смысл», 1976.

## Размышления о коммуникативно-прагматической природе диалога

Джагинян Нина

### Резюме

**Ключевые слова:** междисциплинарный, познание, информация, когнитивная функция, эстетическая функция, дискурс, философия, семантика

В статье представлены наблюдения за развитием диалога, который как вид дискурса занимает важное место благодаря множеству общих характеристик. Диалог, как форма коммуникации и средство познания, развивался параллельно с человеческим обществом. Основными функциями диалога считаются передача информации и эмоциональных ценностей, которые совместно формируют его семантическую функцию. Особое внимание уделено практическому значению коммуникативно-прагматических функций диалога, влияющих на процесс мышления человека и изменяющих его форму. Исследование рассматривает информационные, познавательные, ментальные и выразительные функции диалога, позволяя выявить скрытые слои текста и контекста. Дискурс анализируется параллельно с диалогом как семантическое явление, тесно связанное с социальной коммуникацией, выявляя скрытые смыслы, нормы взаимодействия и культурные особенности участников общения. Он позволяет понять, как языковые формы передают знания, эмоции и ценности, формируя когнитивные и социальные модели поведения. Представлен краткий исторический обзор диалога и дискурса, освещены взгляды ведущих теоретиков, направленные на содержание и операциональные аспекты темы, что позволяет комплексно понять коммуникативно-прагматическую природу диалога.

## Reflections on the Communicative-Pragmatic Nature of Dialogue

Jaghinyan Nina

### Summary

**Key words:** interdisciplinary, cognition, information, cognitive function, aesthetic function, discourse, philosophy, semantics

The article presents observations on the development of dialogue, which, as a type of discourse, occupies a central place due to many shared characteristics. Dialogue, as a form of communication and a means of cognition, has evolved alongside human society. Its main functions – information transmission and the communication of emotional values – have jointly shaped its semantic role. Special attention is given to the practical significance of dialogue's communicative-pragmatic functions, which influence human thinking and modify its form. The study examines informational, cognitive, mental, and expressive aspects of dialogue to reveal underlying layers of text and context. Discourse is analyzed alongside dialogue as a semantic phenomenon closely linked to social communication. The research also provides a brief historical overview of dialogue and discourse and presents the perspectives of leading theorists, addressing both substantive and operational aspects of the topic. This comprehensive approach highlights the centrality of dialogue in human interaction, cognition, and communication, emphasizing its evolving role in understanding language, thought, and social context.

Ներկայացվել է 26. 11. 2025 թ.

Գրախոսվել է 06. 02. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,  
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ФОЛЬКЛОРИСТИКА,  
ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ И  
ЖУРНАЛИСТИКА

FOLKLORISTICS,  
LITERARY STUDIES AND  
JOURNALISTICS

## Լեոն գրականության պատմաբան (կուլտուր-պատմական դպրոց)

*Ալեքսանյան Արամ*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-35>

**Հանգուցային բառեր.** Բոքլ, գիտական պատմագիտություն, Լեոն, Հեգել, աշխարհագրական դետերմինիզմ, Մխիթարյան հայրեր, բնական ազդեցություններ

### Ներածություն

Լեոն թողել է արտակարգ հարուստ պատմագիտական և գրականագիտական ժառանգություն: Մշակույթի, մասնավորապես գրականության պատմությունները նրա քննական ժառանգության ինքնատիպ և հարուստ էջն են կազմում: Նրա պատմագիտական ժառանգության առանձնահատկությունը և հատկապես գիտական արժեքը պայմանավորվում է հայոց պատմությունը, ինչպես նաև մշակույթը, նոր՝ **գիտական** հետազոտական մեթոդով լուսաբանելու հանգամանքով:

19-րդ դարի երկրորդ կեսից հայ մշակութագիտության իմացաբանության ակունքներում տեղի են ունենում որակական տեղաշարժեր: Արմատապես փոխվում է հայ պատմագիտության իմացաբանությունը: Եվրոպական դրապաշտական ուսմունքների (positivizm) համատեքստում ձևավորվում է նոր պատմագիտական դպրոց, ինչպես նաև **գրական** պրոցեսի ընկալման նոր հայեցողություն:

Հաղթահարելով գրականության դերի իմացումի նախորդ տասնամյակների լուսավորական գաղափարների վերացականությունը՝ դրապաշտական գրականագիտությունը և քննադատությունը, ըստ էության, առաջադրում են գրականության զարգացման նոր հայեցակարգ, որի ձևավորմանը նպաստում են հատկապես եվրոպական իմաստասիրական նոր ստեղծված ուսմունքները:

Ի տարբերություն պատմության ընթացքի **նախախնամական** (Արարիչ) և **լուսավորական** (աշխարհը կառավարում են գաղափարները) պատկերացումների վերացականության՝ դրապաշտները պատմության առաջ շարժող գործոնները պատմության ընթացքը կանոնակարգող և որոշող պատճառակիրները (de'terminant) և օրենքները բացահայտում էին պատմության ընդերքում:

Ազգը, ժողովուրդը և պետությունը արդեն դիտվում են որպես հոգեբանական և մշակութային օրգանիզմ, որի քաղաքակրթվածության աստիճանը որոշում են Բոքլի պատմաաշխարհագրական հայտնի նախադրյալները (կլիմա, սնունդ, հող, հարստության բաշխվածություն, բնակչության աճ, գիտելիքների մակարդակ և դրանց տարածվածության աստիճան և այլն):

Հայտնի է, որ **գիտական** պատմագիտությունը ավելի ուշ շրջանի երևույթ է: Վերջինիս որոշարկման համար անհրաժեշտ են գիտական մտքի զարգացման անհրաժեշտ և բավարար **գիտական** նախադրյալներ: Իմացության այդ մակարդակում պատմությունը աղեն ոչ թե **պատմվում է**, այլ նաև **բացատրվում** ու իմաստավորվում: Ավելին, այլ կերպ է ընկալվում նաև մշակույթի, մասնավորապես գրականության գործառույթը: Պատմության **դրապաշտական** պատկերացումներից են սերվում հիմնականում գրականությունը և մշակույթին ուղղված Լեոնի առաջադրումները:

Իրականում Լեոն **կուլտուր-պատմական դպրոցի** հետևորդ է: Նրա պատմագիտական, գեղագիտական, քննադատական հոդվածները, ըստ էության, շարադրված են **կուլտուր-պատմականության սկզբունքով**:

Իմացաբանական այդ համատեքստում է, որ Լեոն հատկապես կարևոր և անհրաժեշտ գործառույթ է վերագրում կրոնին, որպես ազգային հանրության միասնացման արմատական **մշակութային** գործոն: Մինչդեռ, ըստ պատմաբան Մ. Ներսիսյանի, «Լեոնի աշխատություններում խիստ գերազանահատված է «հոգևոր ֆակտորի դերը մարդկային հասարակության զարգացման գործում» [4, X]:

Լեոն, ըստ տեսաբանի, գերազանահատում է կրոնի դերը պատմության մեջ: «Կրոնները քաղաքակրթության ամենահզոր գործոններից մեկն են եղել» Լեոնի դրույթը դիտվում է որպես ծայրահեղություն: Մինչդեռ դրապաշտ պատմագիտության տեսանկյունից պետության բարեկարգությունը ձեռք է բերում կայունություն, եթե հիմքում ունի կրոնականությունը:

Ավելին, մարդու գործունեությունը, ըստ գերմանացի իմաստասեր Հեգելի, միայն կրոնով և հավատքով է ձեռք բերում բացարձակ հիմնավորում և միայն հավատքով է դրականորեն գործարկվում պատմության ընթացքի հյուսվածքում: Այդ պատճառով էլ պետությունը պետք է հիմնվի կրոնի վրա, քանի որ միայն նրանում են մարդկային մտածելակերպը և պետության, հայրենիքի հանդեպ ունեցած պարտքի կատարման պատրաստակամությունը դառնում կատարյալ և բացարձակ: Կրոնից դուրս, ըստ Հեգելի, մարդու սուբյեկտիվ ես-ը մնացած բոլոր դեպքերում պարտքի թերակատարության վերաբերյալ բազմաթիվ պատճառներ և հիմնավորումներ կարող է բերել՝ անձնականորեն՝ սուբյեկտիվորեն, արդարանալով իր վերջավոր գոյության տրամաբանությամբ: «Միայն կրոնն է գորու վերացնել, ի չիք դարձնել այդ բոլոր սուբյեկտիվ դատողությունները և գնահատականները ու հաստատել անսահման, բացարձակ պարտքի զգացումը» [2, 283]:

19-րդ դարի վերջում Կարլ Լամպրեխտի առաջադրած **կուլտուր-պատմական** տեսության հիմնադրույթներով, որոնք այլազան փոփոխակներով յուրացվեցին տարբեր մտածողների կողմից, հիմնավորվում էր, որ պատմությունը կայանում է ոչ թե արտաքին ներգործությամբ, այլ իր ներսում առկա որոշակի օրենքներով ու օրինաչափություններով և ունի ներքին միասնականություն, ամբողջականություն: Բնարկել, կուլտուր-պատմական տեսությունը ձևավորվում և համակարգ է դառնում Թովմաս Բոքլի պատմահայեցողության և հետագա գիտական ճանաչողության և դրական գիտելիքների զարգացման շնորհիվ ազգի պատմությունը գիտակցվում ու ընկալվում է արդեն որպես բնակազմական ամբողջական, միասնական **մշակութային** հիշողություն, ինչպես նաև բարեշրջական զարգացում ունեցող իրողություն:

Եթե նախապես ժողովրդի պատմական, հասարակական և մշակութային կյանքի առանձին կողմերը միացվում էին մշակութային գուտ էկլեկտիկորեն, ապա ըստ կուլտուր-պատմականության տեսության, էթնոսի գոյաբանության տարբեր փուլերը և ոլորտները արդեն կարելի է համարել **մշակույթով** համադրված օրգանական համակարգ, ուր պատմական ողջ իրողությունները որոշարկվում և դրսևորվում են ժողովրդի բնապատմական ինքնաստեղծ կենսաձևի, փորձառության և պատմական գիտակցության համատեքստում:

Այդ ըմբռնման տեսանկյունից է, որ մշակույթը ընկալվում և գործառվում է նաև որպես ապագան նպատակաբանող անհրաժեշտ և առկա գոյաբանական նախադրյալ, միջոց: Դրապաշտները հիմնավորում էին, որ պատմության ընթացքը պատճառաբանվում և անհատականանում է առաջին հերթին էթնոսի հոգեկերտվածքով, որը դրսևորվում, առարկայանում է նաև մշակութային փոխաձևությամբ (transformation):

Էթնոսի հոգեկերտվածքն էլ, ըստ դրապաշտության, իր հերթին ձևավորվում, անհատականանում է **աշխարհագրական հիմնարար գործոնի** ներգործությամբ:

Նա պատմում է անդուլ, որ դարերի սկզբից հայ հայրենիքի **տեղագրական և բնագրական** հանգամանքները դարբնել են հայ ժողովրդի համար մի **ազգային հոգեբանություն**, որի

թանձրացած արտահայտությունն է հայը իբրև **ազգագրական-կուլտուրական տիպ** իր հայրենիքի գանազան մասերում» (ընդգծումները մերն են-Ա. Ա.) [5, 755]:

Բոքըլը, որի գաղափարներն էին որդեգրել հայ դրապաշտ պատմագիրները, այն կարծիքին էր, որ պատմագիրները «հիմնականում զբաղվել են անձերով, մինչդեռ օրենքը գտնելու համար հարկավոր է հետազոտել ոչ թե անձերը, այլ նաև գանգվածները» [3, X]:

Այդ հայեցողության որդեգրման շնորհիվ է, որ, Լեոյի շարադրանքներում **պատմությունը** և **մշակույթը** ներկայանում են արդեն որպես օրգանական, սերտ, փոխկապակցված համակեցություն (symbiosis): Պատահական չէ, որ մշակույթի, գրականության պատմության, գրականության, գրական գործիչների, գրականության տարբեր շրջանների վերաբերյալ Լեոյի աշխատասիրած հետազոտությունները առանձնանում են մի առանձնահատկությամբ: Նրանցում բնության, աշխարհագրական միջավայրի շարադրանքը, պատմագրությունը, պատմագիտությունը, գրականագիտությունը, ինչպես նաև իմաստասիրական խոսույթները սերտորեն միահյուսված են և ներկայանում են որպես **սինկրետիկ** շարադրանք:

Լեոն կրկին դրապաշտ պատմաբան է նաև այն դեպքերում, երբ անդրադառնում է գրական և մշակութային կյանքի բազմապիսի երևույթներին: Իրականում հայ գործիչների մասին դարասկզբին աշխատասիրած նրա գրքերը («Ստեփանոս Նազարյանց», Երկու հատոր (1902 թ.), «Գրիգոր Արծրունի», երեք հատոր (1902-1905), «Մեսրոպ Թաղիադյան», «Ռուսահայոց գրականությունը» (սկզբից մինչև մեր օրերը), որը սպագրվել է նախապես Վենետիկի «Գեղունի» տարեգրքում և «Բազմավեպ» հանդեսի համարներում, իսկ 1904 թ. առանձին գրքով), ծավալուն աշխատությունները, ըստ էության, գրված են պատմական և կենսագրական հարուստ նյութերի համապատկերում և կարելի է ընդունել որպես **գրական մշակույթի պատմություն**:

**Պատմական միջավայր:** Այսպես, «Ստեփանոս Նազարյանց» աշխատության շարադրանքում Լեոն չափազանց մանրակրկիտ կենսագրական և պատմական տեղեկություններով պատկերում է Ստ. Նազարյանցի կյանքը ու գործունեության պատմական, հասարակական, իմացաբանական և մշակութային միջավայրը: Նախ ներկայացվում է գերմանական իրականության իմացական միջավայրը, որում ձևավորվել են Ստեփանոս Նազարյանցի հայացքները<sup>1</sup>: Ի դեպ, Լեոն Ստ. Նազարյանցին ներկայացնում է միայն պատմական **որոշակի** փուլի համատեքստում, նրա պատմական առաքելության սահմաններում, այսինքն՝ **պատմականության** (историзм) գործոնի հաշվառմամբ: Ըստ Լեոյի՝ Ստ. Նազարյանցի կոչվածությունը արդյունք էր **պատմական անհրաժեշտության**, թելադրված էր և կյանքի էր կոչվում զարգացող պատմական պրոցեսների ուժով. «Ուսուցիչ էր մեզ համար Նազարյանցը: ...նա իբրև լուսավորված մարդ, լայն, աշխարհաշեն գաղափարներով, ջերմ հավատացող երկրպագու, **հասկացավ ժամանակի խորհուրդը, դարձավ նրա մարգարեն** (ընդգծումն մերն է-Ա. Ա.) [5, 204]:

Իսկ ինչպիսի՞ն էր մինչ այդ հայ ավատական իրականությունը: Խաչատուր Աբովյանի

---

<sup>1</sup> «Գրական «Երիտասարդ Գերմանիա» ուղղության հիմնադիրներն էին «երկու տաղանդավոր հրեաներ՝ Լյուդվիգ Բյորնեն և Չեռիքիս Չայնե» [5, 36], որոնք քարոզում էին վերածնություն և պայքարում էին ավատական կյանքի անշարժության, պահպանողականության դեմ: «Գրական թարմ հոսանքին միացավ և գերմանական փիլիսոփայությունը, որը կամաց-կամաց սկսեց հրաժարվել վերացական մետաֆիզիկայից ու մոտենալ իրական կյանքին, սկսեց հետաքրքրվել ոչ միայն բարձրաթիղջ դատողություններով, այլև օրվա քաղաքական հարցերով» [5, 38]: Լեոյի շարադրանքի յուրահատկությունը և ճանաչողական արժեքը այդ միջավայրի մանրակրկիտ ներկայացման մեջ է: Գերմանական գրական, քաղաքական, մշակութային միջավայրի տեղեկությունները նա քաղում է օտարալեզու գրքերից, մամուլից, հեղինակի հուշագրությունից և այլ աղբյուրներից: Այդ աշխատասիրության արժանիքներից է նաև **քննական** մոտեցումը:

և Դորպատի համալսարանի պրոֆեսոր Պարրոտի Արարատի գագաթը բարձրանալու առիթով Լեոն գրում է. «Հայոց հինավուրց հսկա սարն ինքը, հայությունն էր. անշարժ ու մշուշապատ, անմատչելի, նախապաշարմունքների և առասպելների մեջ թաղված» [5, 25]:

«Եվ ահա եվրոպական գիտությունը գալիս էր ոտնակոխ անելու այդ դարավոր առասպելներն ու ավանդությունները»,– գրում է Լեոն [5, 24]:

Եվ, իրոք, գիտությունների զարգացումը աստիճանաբար փոխում է ոչ միայն գրականության բովանդակությունը, տիպաբանությունը, այլև մարդկանց գիտակցության, բարոյական ըմբռնումների և հասարակական վարքի կերպը:

Ըստ Լեոնի, եվրոպական քաղաքակրթությամբ մակածված հայկական լուսավորական շարժումը՝ հանձինս Վիեննայում հրատարակվող Մխիթարյան հայրերի «Հանդես ամսօրյա» ամսագրում տպագրած գիտական նյութերի, Խաչատուր Աբովյանի լուսավորական գործունեության, «Հյուսիսափայլ» ամսագրի, կատարվում է դարակազմիկ բարեշրջական հեղաշրջում:

«Ժամանակը պահանջներ էր անում հայ հասարակությունից: Այդ պահանջները հասկացան հասարակության առաջավոր, երիտասարդ ուժերը, որոնք սկսեցին գործել: Առաջ եկավ «Հյուսիսափայլը». նա պետք է առաջ գար, էթե մեր հասարակության մեջ կար կենսունակություն: Ժամանակը ստեղծեց նրան, եվրոպական միտքը նրա միջոցով գալիս էր մեզանից տեղ ու հպատակություն պահանջելու» [5, 171]:

Այդ առումով Ստ. Նազարյանցը ռուսահայ իրականության մեջ այն առաջնեկն է, որը լուսավորական գաղափարախոսության դիրքերից պայքարեց ավատական մտայնության դեմ՝ հանուն նոր գիտական մտածողության (գիտական ճանաչողություն, նորովի դաստիարակություն, ֆեմինիստական հարցադրումների և այլն) մարմնավորման:

Ստեփանոս Նազարյանցի լուսավորական գործունեության գնահատման նման հայեցակետը ենթադրում է, որ Լեոն պատմությունը, ի տարբերություն Մխիթարյան հայրերի նախախնամական պատմահայեցության, դիտարկում է դրապաշտորեն, զարգացման առանցքի վրա:

Հասարակական հոսանքների պայքարում անգամ Ստ. Նազարյանցը իր հնամով հակառակորդին (Առաքել վարժապետ Արարատյանցին) հարվածում էր «Եվրոպական գիտության զենքերով» [5, 76]:

Լեոն մանրամասնորեն գնահատում է նաև Ստ. Նազարյանցի ժառանգությունը, թարգմանական գործունեությունը:

Լեոն հպանցիկ արժևորում ու գնահատում է նաև «Հյուսիսափայլի» էջերում տպագրված գեղարվեստական և թարգմանական գրականությունը:

Ավատական միջնադարը աստիճանաբար զիջում էր դիրքերը, և «...նրա փոխարեն մեր գրականության մեջ էր մտնում տասնիններորդ դարը, բնագիտության, հետազոտության, դրական ուսումնասիրությունների դարը: ...Նազարյանցը առաջինն էր ոչ թե հայոց գրականության մեջ, այլ ռուսահայերի մեջ, որ այդ նոր ուղղության առաջնորդը հանդիսացավ» [5, 74]:

Բարձր գնահատելով սակայն լուսավորական շարժումը՝ Լեոն իրականում այն համարում է պատմական զարգացման հերթական մի փուլը: Այդ իսկ պատճառով, նա ոչ միայն ներկայացնում է երևույթը, այլև, ըստ էության, այն գնահատում է պատմական զարգացման դիրքերից, ինչը պատմական, գրական երևույթները հետազոտող նրա շարադրանքների հաղորդում է **քննական, վերլուծական** բնույթ:

Ժամանակները նախապատրաստում էին **դրապաշտության** դերը: Ընդ որում, այդ նախապատրաստման գործում մեծ դեր խաղացին լուսավորիչները: «Հյուսիսափայլը» ներկայացնում են մեր մշակութային պատմության առաջին փուլը, Նազարյանցի ձևակերպմամբ՝

«առաջաբանը», որով և նախապատրաստվում է այդ պատմության դրապաշտական էտալը, որի առաջատար ներկայացուցիչն էր Գրիգոր Արծրունին: «Նա գալիս էր պատասխան տալու, գալիս էր առաջաբանը շարունակելու»,– գրում է Լեոն: Նազարյանցի **պատմական առաքելությունը** համահամարենք արժևորում է Շիրվանգաղեն. «Դու ասպարեզ եկար այն ժամանակ, երբ նոր միայն հայի խավար հորիզոնի վրա նշմարվում էր լուսո շողքը» [5, 253]:

Գրական գործչի գործունեության և ստեղծագործության հետազոտությունը առավել համարժեք դարձնելու նպատակով Լեոն կարևոր նախադրյալ է համարում նաև նրա **կյանքի և բնավորության** մանրամասների մեկտեղումը:

Ամհատականացնող այդ գործուն նախադրյալը կարևորելով՝ Լեոն հետազոտության շարադրանքին հավելում է, համադրում է նաև գործչի կամ հեղինակի **մանկությունը, կենսագրությունը և բնավորության գծերը:**

Նման կարգի տեղեկությունների մեկտեղումը և կիրարկումը նրա հետազոտության մեթոդաբանությունը, ըստ էության, լրացնում, իրացնում է ֆրանսիացի ակնավոր գրականագետ, գրականության տեսաբան Սենթ-Բյովի (1804-1869) **կենսագրական-հոգեբանական** հետազոտության մեթոդի հնարավորություններով: Այսպես, «Ստեփանոս Նազարյանց» աշխատության էջերում շարադրված է «Գծեր Նազարյանցի բնավորությունից» հատվածում [5, 197-202], ներկայացված է նաև Ստեփանոսի բնավորությունը, ծնողների բնավորությունը, նրանց ընտանեկան կենցաղավարությունը:

Իսկ Գրիգոր Արծրունու կենսագրության շարադրանքում շեշտվում է նրա հոր բնավորության մի կարևոր հատկանիշ: «Դա մի տոկուն մարդ էր, որ հետևում էր իր հաստատ կամքին և անպատճառ հասնում էր իր նպատակին» [5, 224]:

Լեոն ներկայացնում է անգամ եղբոր՝ Երեմիա Արծրունու բնավորության գծերը (կամային, նպատակասլաց, համառ, ազնիվ, ուղղամիտ, անաչառ և այլն): Լեոն պատմում է նաև Գրիգոր Արծրունու **հիվանդությունների** մասին:

Ըստ էության, Լեոնի հետազոտության մեջ գործչի գաղափարներին է զուգակցվում նախնիներից **ժառանգած մտախառնվածքը:** Այս աշխատության առավելություններից է տեղեկությունների առատությունը և երևույթների մանրակրկիտ նկարագրությունը:

Լեոն ներկայացնում է Մոսկվայի և Պետերբուրգի այն միջավայրը, որտեղ ձևավորում են ուսանող Արծրունու հայացքները, այնուհետև Եվրոպայի՝ Չեյդլերգի համալսարանի միջավայրը:

Լեոն շեշտադրում է, որ **կենսագրական** դիպվածները նույնպես էական դեր են խաղացել «Մշակի» խմբագրի գործունեության ճանապարհին, ինչպես նաև «Էվելինա» վեպի հղացման ժամանակ որպես հոգեբանական դրոշիչ: Վեպը առանձնանում է նրանով, որ ունի կենսագրական ենթատեքստ: Իրականում Արծրունին հափշտակված է եղել մի կնոջով, և նրա հետ ունեցած իրական ապրումները և կենսագրական դրվագները լրացրել են վեպի սյուժետային հենքը: Այդ մասին է վկայում նաև Ալ. Շիրվանգաղեն: Ֆրանսուհու սերը փոխադարձ էր, սակայն հետագայում այդ աղջիկը հրապուրվում է մեկ ուրիշով, և մերժված սերը Արծրունուն հասցնում է ծայրահեղ հիասթափության:

Մի ժուս մտերիմ բարեկամ, սակայն, խորհուրդ է տալիս, որ կյանքը դեռևս չի կորցրել իր իմաստը, «որ նա կարող է մոռանալ իրեն հասցրած մահացու հարվածները, եթե լայն տեղ բաց անե իր մեջ մի ուրիշ, ավելի վսեմ, ոչ էսական զգացմունքի համար՝ սեր դեպի տանջվող մարդկությունը: Այս բարձր գաղափարն էլ դառնում է մեր երիտասարդի համար փրկության խարիսխ, նրա անձնական դժբախտությունը դառնում է մի պատվանդան, որի վրա բարձրանում է ընդհանուրի բախտավորության գաղափարը: Եսականը, անհատականը տեղի է տալիս սքանչելի մարդասիրության: Ծառայել տանջվողներին...» (ընդգծումս մերն է-Ա. Ա.) [5, 249]: Դրանից հետո նրա մեջ կատարվում է հեղափոխություն, արմատական շրջադարձ:

Ճանաչողության նման բազմանիստ քննությունը անհամեմատ մեծացնում է Լեոյի հետազոտությունների **գիտականության** գործակիցը:

Մակայն, «Էվելինան» վեպի ստեղծման հոգեբանական պատճառաբանող դրդիչները, ըստ էության, մնացել էին հետազոտողների տեսադաշտից դուրս: Այդ ազդակները, ըստ էության, Արծրունու **բնավորության** ու **արտաքին նկարագրի** մեջ էին և դիտարկելի են միայն կենսագրական-հոգեբանական գրականագիտության հետազոտական եղանակի հնարավորություններով: Այդ տեսանկյունից կարևոր տեղեկություն է հաղորդում Արծրունու **արտաքինի**, որպես որոշիչ գործոնի, մասին Շիրվանզադեն իր հուշագրության էջերում<sup>2</sup>:

Կենսագրական տեղեկություններին կարևորություն տրվում նաև Լեոյի մյուս երկերում («Մերոպ Թաղիաղյան», «Ղազարոս Աղայան»): Այդ հետազոտություններում նա կրկին քննում է ժամանակը, ապա մանրակրկիտ ներկայացնում է պատմական իրականությունը: Այնուհետև՝ հավելում է կենսագրական ակնարկ: Լեոն այնքան հետևողական է կենսագրական տեղեկությունների մեկտեղման ջանքերում, որ Մերոպ Թաղիաղյանի կենսագրությունը ամբողջացնելու նպատակով պեղել է անգամ Էջմիածնի հայրապետական դիվանը՝ այն լրացնելով հեղինակի ինքնակենսագրական փաստերով և մամուլում տպված հոդվածների տեղեկություններով:

---

<sup>2</sup> Արծրունին «փոքրամարմին էր, սպապտող», սնափառ էր, փառասեր, «ինքնասեր հիվանդության չափ», – վկայում է Շիրվանզադեն: «Այդ մարդու բնույթը հավասարակշռությունից գուրկ էր, և դա նրա դժբախտությունն էր: Նա ոչ միայն չափազանց ներվային էր, այլև մաղձոտ: Հոգեբանորեն դա ուներ իր բնական պատճառը: Մարմնավոր դրությունը մանկությունից ազդելով նրա պսիխիկայի վրա, տարիների ընթացքում ծայրաստիճան սրել էր նրա անձնասիրությունը: Այն կծու բողոքը բնության անիրավության դեմ, որ մարդ լռորեն կրում էր իր մեջ, աստիճանաբար մաղձոտել էր նրան... երկու միջոց կար այդ հոգեկան ժանգը ոչնչացնելու համար – կամ բարձր փիլիսոփայական մտայնություն, որ հատուկ է շատ քչերին, կամ դիվային հեզմանք ու ծաղր բնության երեսին, որ հատուկ է դարձյալ շատ քչերին: Արծրունին չունէր ոչ մինը և ոչ մյուսը»: Նա, ըստ էության, տառապում էր: «Սիրելով կյանքն անհունորեն, Արծրունին զգում էր, որ կյանքը ոչ սիրով, այլ կարեկցությամբ է նայում իրան» [7, 172]:

Իր կենսագրության կենսական դրվագը՝ մերժված սիրո վիրավորանքը, դրա պատճառած տառապանքը, կյանքից մերժված լինելու հոգեկան ճնշվածությունը Արծրունին, ըստ էության, հաղթահարում է՝ ստեղծելով արդեն կատարված եղելության վիպական համարժեքը, ուր հերոսները մատուցվում են հեղինակին ցանկալի արժեքային նկարագրով, նրա համար ճանաչողության պաշտպանական նշանակություն ունեցող մի հայեցողության համատեքստում, որը կատարսիսի գործառույթ ունի առաջին հերթին հենց հեղինակի համար:

Վեպի հղացքը «հավասար բարոյական մակարդակի վրա մնալու» կենսական պահանջի արդյունք է, ուր առավել մեծ դեր ունի հեղինակի ենթագիտակցության ոլորտը, որը գեղարվեստականացման միջոցով, դրա թողի տակ կազմակերպում է կատարվածի վերարժեքավորում, որի շնորհիվ էլ ձեռք է բերվում հոգեկան ատարաքսիա: Վեպում հեղինակը իրականությունը շրջում է իր օգտին, իր բարոյական հաղթանակը կազմակերպում է վիպական իրականության մեջ և նրա շնորհիվ: Նրա հռչակը, հանրօգուտ, ազգանվեր գործունեությունը վեհացնում են նրա բարոյական նկարագիրը:

Ավելին՝ նվազեցվում են զգայական սիրո նշանակությունը և խորհուրդը մարդու կյանքում և **բացառակացվում** հանրությանը նվիրվելու առաքելությունը, որը նույնպես պաշտպանական խոհանությունն է: Դա է պահանջում վեպի տրամաբանությունը, որի նպատակը հեղինակ-հերոսի բարոյական, հոգեբանական հաղթանակը կազմակերպելն է:

Իր վեպով հեղինակը անուղղակիորեն վրեժ է լուծում իրականությունից: Ըստ էության, նման կենսագրական ատաղձ ունեցող վեպը մշակութային դերառույթ ունի առաջին հերթին հեղինակի համար:

Եվ այսպես, գրականության պատմության քննությունը Լեոյի կողմից արվում է **պատմականության** հաշվառմամբ:

Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջան, ըստ նրա, ունի հետազոտության ենթակա պատմա-քաղաքական, տնտեսական, մշակութային, հոգևոր նախադրյալների որոշակի համատեքստ: Այստեղից էլ նրա հետազոտությունը ձեռք է բերում առարկայական դիտարկում, որն էլ պայմանավորում է շարադրանքի անաչառությունը:

Ըստ էության, Լեոյի վերոհիշյալ աշխատությունները գուտ գրականագիտություն չի կարելի համարել, այլ տվյալ գործի կենսագրության և գործունեության, հասարակական հոսանքների, պատմական ու մշակութային միջավայրի պատմություն:

Այդ իմաստով, Լեոյի այդ աշխատությունները կարելի է նաև համարել ներկայացվող ժամանակաշրջանի հասարակական մտքի պատմություն: Ավելին, Լեոյի շարադրանքը մասամբ կարելի է համարել ժամանակաշրջանի մատուլի պատմություն:

Ստ. Նազարյանցի և Գրիգոր Արծրունու և նրանց հրատարակած «Հյուսիսափայլի» և «Մշակի» բովանդակության մանրակրկիտ տեղեկատվությամբ Լեոն, ըստ էության, ամբողջացնում է մի քանի տասնամյակների հասարակական մտքի ամբողջական պատկերը իր զարգացման ընթացքի համապատկերում: Այստեղից գրականությունը արժևորվում է, երբ դառնում է **հասարակական իդեալների** արտահայտող: Նման աշխարհընկալման համաձայն, ապագան դրսևորվում է արդեն հայտնի նախադրյալների շնորհիվ, ընդ որում, բարեշրջական նպատակաբանվածությամբ (телеология):

Լուսավորական «Հյուսիսափայլը» և դրապաշտական «Մշակը», ըստ էության, արմատապես փոխեցին հայ հասարակական գիտակցությունը:

«Գռունկ», «Մեղու», «Արարատ», «Հայկական աշխարհ», «Մասյաց աղավին», «Ճաքաքաղ», «Գարուն» և այլ հանդեսների մթնոլորտում, ուր հիմնականում ազգայնական, կրոնական, եկեղեցական խնդիրներ էին արծարծվում, Ստ. Նազարյանցը և Գրիգոր Արծրունին սկսեցին իրենց վերանորոգչական, ազատամտական գաղափարների քարոզչությունը և, Լեոյի բնութագրմամբ, ստեղծեցին հրապարակախոսական լեզու:

Գրականության պատմաբանները պարբերացնում են այս փուլերը որպես **պահպանողական և ազատամտական** հոսանքների հակամարտություն:

Ազատամտականների գործունեության և գաղափարների իմացաբանությունը իրականում **դրապաշտությունն է** (pozitivizm), որի արմատական պահանջներից մեկը **օգտապաշտությունն էր**, որի տեսանկյունից էլ Լեոն գնահատում է Արծրունու գործունեությունը<sup>3</sup>:

Լեոն ըստ արժանվույն գնահատում է Արծրունու առաջադրած օգտապաշտությունը (utilitarizm): Այդ հայեցողությամբ, բոլոր կարգի երևույթները գնահատվում են իրենց **օգտակարության** տեսանկյունից: Գրական ստեղծագործությունները գրվում են այն նպատակով,

---

<sup>3</sup> «Ահա ինչ գրականություն չկար հայերի մեջ: Գրքեր, իհարկե, կային, հեղինակներ, թարգմանիչներ եղել էին և կային: Բայց դրանք «իդեալիստներ էին»: Գալիս է ռեալիստ մարդը և ասում է՝ գրականություն չկա: Նրանք չեն հասկանում, չեն հասկանում, որ ռեալիստի համար այդ գրքերը, որքան էլ գեղեցիկ լինին, ոչինչ են, քանի որ **օգուտ** չեն բերում ժողովրդին, ոչինչ են, ինչպես նկարչի այն հիանալի պատկերը, որ ներկայացնում է բնությունը, բայց որից ոչինչ օգուտ քաղել չէ կարող ժողովուրդը: **Օգուտ, միայն օգուտ:** Ինչի՞ս է ձեր մաքուր արվեստը... Ինձ հարկավոր է օգուտ քաղել գիտությունից, քաղաքակրթությունից և ինձ համար այն ամենը, ինչ իմ անմիջական, իրական օգուտից դուրս է, գոյության իրավունք չպիտի ունենա. Ես ժողովուրդ եմ, իսկ դուք ի՞նչ եք տալիս ինձ, ազգասիրական ճառե՞ր, խրատե՞ր, վարդի ու սոխակի պատմություն... Ժողովուրդը, նրա կյանքը, նրա օգուտը, հողը, արդյունաբերությունը և գիտություն, դրական գիտություն՝ ահա ինչ դրոշակով է մեզանում հրապարակ գալիս մեզանում այդ նոր մարդը» (ընդգծումը մերն է-Ս. Ա.) [5, 311]:

որ սովորեցնեն հասարակությանը մտածել և իր կյանքը քննել, ուրեմն և ձգտել դեպի լավը, դեպի առաջադիմությունը [5, 300]:

Նա առաջադրում էր ընտանիքի բարենորոգման, կնոջ ազատության, հասարական կյանքի, կրթության, դաստիարակության, տնտեսավարման ձևերի խնդիրներ և դրանց լուծման եղանակներ:

Արծրունին ջանում էր ավանդական մտածելակերպը, մտախառնվածքը, աշխարհի, կյանքի, բարոյականության դրական իմացությամբ վերակազմակերպել քննական, գիտական, բարոյական գիտակցության: «Զարգացած խելքը անբարոյականության թշնամին է. զարգացրեք խելքը, և բարոյականությունը, որ մեծ կապակցություն ունի նրա հետ, ինքնըստիներյան կգա»,- գրում էր Արծրունին [5, 291]:

Նրան մտահոգում էր նաև, որ թույլ է հայի ազգային ինքնաճանաչությունը, և նա իր գործերով ջանում էր սերմանել այդ գիտակցությունը:

Գրապատմական և գիտական արժեք ներկայացնող աշխատություններից է Լեոյի «Ռուսահայոց գրականությունը (սկզբից մինչև մեր օրերը)», որը տպագրվել է նախապես Վենետիկի «Գեղունի» տարեգրքում և «Բազմավեպ» հանդեսի համարներում, իսկ 1904 թ. հրատարակվել է առանձին գրքով: Այդ աշխատությունը նույնպես պետք համարել գրականության պատմություն:

Գրականության գնահատման Լեոյի տեսական ելակետերը ուսումնաստված են 19-րդ դարի ռուս անվանի իմաստասերներ և գրաքննադատներ Ն. Չեռնիշևսկու, Վ. Բելինսկու, Դ. Պիսարևի աշխատություններից: Ի դեպ, Լեոն հաճախակի է ծավալուն մեջբերումներով վկայակոչում նրանց տեսակետները:

Կյանքի, մարդու հոգեբանության ռոմանտիկական գեղարվեստականացման կերպը Լեոն պատմականորեն համարում է այլևս ժամանկավրեպ. «...մի թե վեպի կոչումն է միշտ երկնայինը նկարագրել: Վեպը առանց իրական ճշմարտության ոչինչ է, երևակայության զառանցանք է: Վեպի նյութը, նպատակ, ամբողջ գոյության խնդիրը կյանքն է, այն էլ երկրի, աշխարհի կյանքը, որ այնքան քիչ առնչություն ունի երկնքի և երկնային կյանքի հետ» [6, 21]:

«Գեղարվեստը անմիջապես կապված է կյանքի հետ, նույնիսկ բնության գեղեցկությունները գրավում են մեզ, նայած մեր ներքին աշխարհի տրամադրության, մեր հասկացողություններին»: Դրապաշտ գեղագետի հայացքով Լեոն բացատրում է, որ «իդեալը չի ստեղծվում առանց կյանքի և առանց մարդու բնությունը ուսումնասիրելու...» [6, 510]:

Ըստ նրա՝ ժամանակավրեպ է այլևս սիրահար գոյգեթի և հնապաշտ ծնողների բարոյական հակոտնյա ըմբռումները պատկերող լուսավորականության ժամանակաշրջանում առաջադրված թեմատիկան:

Լեոյի պատկերացմամբ գրականությունը մեծ դերառույթ ունի հասարակության և պատմական խնդիրների կազմակերպման պրոցեսում: Գրողը և կյանքը փոխազդեցական բազմապլան կապերի մեջ են: Նրա ձեռքը պետք է լինի «հասարակական զարկերակի վրա»: Գրողը պետք է մարմնավորի, «մարմին և արյուն հաղորդի» կյանքի այն իրողություններին որոնք կան «բայց աննկատելի են, լավ ձևակերպված, լավ ըմբռնված չեն»:

«Մարդկային բոլոր գործերը պետք է ծառայեն մարդու օգտին, էթե չեն կամենում լինել դատարկ և անբովանդակ պարապմունք: ...Ասում են, թե գուտ արվեստը արդեն այն օգուտն է տալիս մարդուն, որ մեղմացնում է նրա սիրտը, բարձրացնում է հոգին: Այո՛ դա ճիշտ է: ...Գեղարվեստը ավելի բարձր ու բարդ, հիմնավոր նշանակություն պիտի ունենա մարդու համար» (6, 510):

Լեոն գրական երևույթները դիտում առաջադիմության տեսանկյունից, իսկ դրան կարող է նպաստել կյանքը խորությամբ ընկալող և գիտական հայացքի ենթարկող և առավել ևս **գարգացման իդեալներ** առաջադրող գեղագետը: «...Տեղեկեցիա բառը դատարեց արհամար-

հանք ներշնչող մի հասկացողություն լինելուց: Իսկապես ի՞նչ է այդ տենդենցիան: Հեղինակը գիտակցական դիտավորություն է ունենում ընթերցողի մեջ մի հայտնի միտք զարթեցնել, մի հայտնի զգացմունք շարժել և դրանով հասնել մի հայտնի նպատակի: ...Տենդենցիան ծագում է այն տեսակ հեղինակների մեջ, որոնք անտարբեր հանդիսատեսներ չեն, որոնք մարտնչողներ են հասարակական բարիքի համար, որոնք ծառայում են իրանց ազգին և չեն կարող չնվիրել իրանց սիրտը, իրանց ուժեղ ստեղծագործական շնորհքը այն գաղափարին, որը պաշտում են իրանց կյանքում: ....Իսկական, սրբազան ոգևորությունը երևան է գալիս և տենդենցիոզ գրողի մեջ» [6, 510]:

«Ահա ինչ տեսակ գրական դաստիարակություն էին ստանում ռուսահայ գրողները: Եվ այդ դաստիարակության վրա հիմք դրեց մեր ամբողջ գրականությունը, նա դարձավ մեզ դեկավարող սկզբունք, նա անմիջապես կապվեց մեր կյանքի հետ, և **եթե մեր գրականությունը ունեցել է փայլուն շրջաններ, այդ միայն և միայն շնորհիվ այն հանգամանքի, որ մեզանում այդպես է հասկացվել գեղարվեստի կոչումը:** Գրականություն և կյանք-ահա մեծ, անչափ կարևոր սկզբունքը» [6, 511]:

Որքան որ դարասկզբին մշակված տեսությունները քննադատական բնույթ ունեին և խորտակում էին արգելքները նոր հասարակարգի ստեղծման համար, նույնչափ նոր ժամանակները, դրապաշտների կարծիքով, պետք է դառնան ստեղծագործական՝ գիտության հիմքի վրա արդյունաբերական հասարակություն կազմակերպելու համար, որի նշանաբանն է՝ «Մերն՝ իբրև սկզբունք, Կարգը՝ իբրև հիմք, Առաջադիմությունը՝ իբրև նպատակ: Նրա բարոյական բանաձևն է՝ ապրել ուրիշի համար» [1, 5]:

Լեոյի տեսադաշտում են եղել ոչ միայն հայ, այլև ռուս և համաշխարհային գրականության դեմքերը և գրական իրադարձությունները:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-35>

### **Գրականություն**

1. Բոմբարդ, Պոզիտիվիզմը, Թիֆլիս, 1913:
2. Гегель, «Философия религии» в двух томах, т.1, Москва, 1976.
3. История цивилизации Англии Бокля Санкт-Петербург, 1906.
4. Լեո, Երկերի ժողովածու, առաջին հատոր, Երևան, «Հայաստան», 1966:
5. Լեո, Երկերի ժողովածու, վեցերորդ հատոր, Երևան, «Հայաստան», 1987:
6. Լեո, Երկերի ժողովածու, իններորդ հատոր, Երևան, «Մտորհրդային գրող», 1989:
7. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1961:

## Лео как историк литературы (культурно-историческая школа)

*Александр Арам*

### Резюме

**Ключевые слова:** Бокль, научная историография, Лео, Гегель, географический детерминизм, Мхитаристы, природные влияния

В статье рассматривается историческая реальность перехода армянского литературоведения от просветительской традиции к позитивистской критике в контексте развития научного знания. Критически обосновывая позитивный характер исторической перспективы армянской литературы, Лео одновременно подчёркивает преемственность армянских литературоведческих школ. В отличие от своих предшественников, он выступает как последователь позитивистской школы критики и литературоведения.

Опираясь на опыт предыдущих исследователей, Лео в значительной степени способствовал переходу армянской литературы и ее исторического осмысления от провиденциалистских интерпретаций к научному объяснению культурных процессов. Как критик, он требовал, чтобы литература выражала определённую идейную тенденцию и оценивалась с позиций утилитаризма и исторического прогресса. По его мнению, литература должна содержать позитивное познание жизни и человеческой природы, а также выражать идеалы, направленные на общественный прогресс.

Литературное произведение, согласно Лео, должно воплощать тенденцию и идеал в самой структуре художественной реальности, а не лишь в образах героев-идеалистов. Подобная литература призвана служить благу нации, общества и человечества. Созданное на этих основаниях художественное творчество можно определить как форму утилитаристского реализма, эпистемологически связанного с утилитаристской философской традицией.

## Leo as a Literary Historian (Cultural-Historical School)

*Aleksanyan Aram*

### Summary

**Key words:** Buckle, scientific historiography, Leo, Hegel, geographical determinism, Mekhitarists, natural influences

The article examines the historical transition of Armenian literary criticism from the Enlightenment tradition to positivist criticism in connection with the development of modern science. Substantiating the positivist character of the historical interpretation of Armenian literature, Leo also emphasizes the continuity of Armenian literary schools.

Unlike many of his predecessors, Leo can be regarded as a representative of the positivist school of literary criticism. Building on the work of earlier scholars, he contributed to the shift in Armenian literary and historical studies from providential interpretations toward scientific explanations of cultural processes.

Leo argued that literature should contain a clear ideological tendency and be evaluated from a utilitarian perspective. Literary works, in his view, must express ideals of historical and social progress and provide a positive understanding of life and human nature. Such literature, aimed at the welfare of the nation, society, and humanity, may be described as a form of utilitarian realism grounded in utilitarian philosophical thought.

Ներկայացվել է 11. 12. 2025 թ.  
Գրախոսվել է 01. 02. 2026 թ.  
Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Պատմողի կերպարը Լ. Խեչոյանի «Խնկի ծառեր» վիպակում և «Սև գիրք, ծանր բզեզ» վեպում**

*Այվազյան Թինա*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-45>

*Հանգուցային բառեր. պատում, տեսանկյուն, առասպելաստեղծում, պատմողական եղանակ, ժամանակային հեռավորվածություն, կառուցվածք*

**Նախաբան**

**Սույն հոդվածի** ուսումնասիրման **առարկան** պատմողի կերպարի քննությունն է Լ. Խեչոյանի «Խնկի ծառեր» վիպակում և «Սև գիրք, ծանր բզեզ» վեպում: **Նպատակն է** պարզել պատմողի տիպական առանձնահատկությունները, որով պայմանավորված է հոդվածի **արդիականությունը**: Իրագործման համար առաջադրել ենք հետևյալ **խնդիրները**՝ քննել պատմողի կերպարի փոփոխման հիմնական ձևերը, ուշադրություն դարձնել պատմողի տեսանկյանը: Հոդվածում կիրառել ենք **պատումի կառուցվածքաբանության** մասնագիտական մեթոդը: **Գիտական նորությունը** պատմողի կերպարի տիպաբանական բնութագրի վերհանումն է Լ. Խեչոյանի վերոնշյալ ստեղծագործություններում:

**Բովանդակություն**

Պատումի կառուցման գործում առանձնահատուկ դեր ունի պատմողը, քանի որ իրադարձությունների ամբողջությունից պատմություն է ձևավորվում նրա տեսանկյամբ: Ռ. Բարտի բնորոշմամբ՝ պատմողը «թղթե էակ» է, և նրան չի կարելի շփոթել ստեղծագործության հեղինակի հետ [28, 411]: Ստեղծվելով հեղինակային մտահղցմամբ՝ պատկերվող իրականության մեջ նա վերամարմնավորում է հեղինակին՝ հանդես գալով վերջինիս փոխարեն:

Լ. Խեչոյանի պատումի արվեստին հատուկ է պատմողական տարբեր եղանակների, նորանոր հնարների օգտագործումը: Պատումի կառուցվածքային հարափոխությամբ պայմանավորված՝ նրա երկերում անընդհատ փոփոխվում է նաև պատմողի կերպարը: Այս տեսանկյունից առանձնակի դիտարկման են արժանի «Խնկի ծառեր» վիպակը և «Սև գիրք, ծանր բզեզ» վեպը: Վերոնշյալ ստեղծագործություններին նվիրված ուսումնասիրություններում գրականագետները (Ս. Աբրահամյան [1, 45], Ժ. Քալանթարյան [26, 135]), Ս. Մարգարյան [18, 156], Ք. Հովհաննիսյան [16, 186], Վ. Եփրեմյան [10, 68], Ա. Բեքմեզյան [5, 84], Վ. Դանիելյան [8, 216], Կ. Գաբրիելյան [6, 209, 272], Գ. Աքելյան [3], Ռ. Ոսկանյան [22], Վ. Փիլոյան [25, 111, 157], Ս. Ավետիսյան [2], Ք. Բազարյան [4], Վ. Գրիգորյան [7, 86, 240], Թ. Ղազարյան [17], Ա. Սովսիսյան [19], Բ. Պաստուխ [23], Ի. Ոյաբչի [24], Յ. Կովալ [13], Ա. Դրոզդա [9], Ժ. Կուլավա [15], Ի. Կոտիկ [14], Ն. Յացենկո [20]) քիչ են խոսում պատմողի կերպարի մասին, ուստի կարևոր ենք համարում վերջինիս քննությունը՝ տիպաբանական բնութագրի վերհանմամբ և տեսանկյան փոփոխության բացահայտմամբ:

**Պատմողի կերպարը «Խնկի ծառեր» վիպակում**

«Խնկի ծառեր» վիպակի պատմողը պատմությունը շարադրում է առաջին դեմքի հոգնակի թվով (մենք)՝ ձգտելով ցույց տալ իր անմիջական առնչությունը պատկերված դեպք ու դիպվածին: Այս կերպ՝ պատմողի անձը կարևոր նշանակություն է ստանում, քանի որ վերջինս հանդես է գալիս որպես տոհմի անդամ: Վիպական գործողություններին **մասնակիցականապես** լինելը **վաստակելի** է դարձնում նրան, իսկ պատմության համակողմանի իմացությունը վկայում է **ամենագետ** լինելու մասին: Սա երևում է հատկապես տոհմի ծագման մա-

սին խոսելիս: Տեղյակ է, թե ինչ է տեղի ունեցել իր ծնունդից առաջ և պատումը կառուցում է արարչագործության մի փուլից մյուսին անցնելու առասպելին հատուկ օրինաչափության կիրառմամբ՝ պատմությունը սկսելով Շուշան նախաստեղի և նրա որդու՝ Խեչո նախապապի «սրբազան» արարքներով, որոնք կատարվել են «բացարձակ անցյալում» [27, 459]: Վիպակի այդ հատվածները պատմվում են այնպես, աեսե բոլոր այդ կարևոր իրողությունները տեղի են ունեցել մի առասպելական նախաժամանակում, և այն սահմանազատված է հետագա ժամանակներից: Սահմանազատումն ընդգծելու համար օգտագործվում է էպոսի կառուցվածքային օրինաչափությունը՝ «էպիկական հեռավորվածությունը» [27, 460] և պատմելիս պատմողը փոխում է իր ժամանակային տեսանկյունը (այդ հատվածքները շարադրում է վաղակատար անցյալ ժամանակաձով՝ ի տարբերություն մնացած մասերի, որոնք պատմում է սահմանական ներկա և անցյալ ժամանակաձևերով)՝ մեծացնելով ժամանակային հեռավորությունը: Ժամանակային հայեցակետայի փոփոխմամբ պատմելու ձևը առասպելական երանգ է ստանում՝ փոխելով պատումի բնույթը, այն դարձնելով առասպելական-էպոսային. «*Խեչոն՝ իր հողատարածություններից շատ հեռու հոսող գետից ծայր ու դաշտեր փորելով, վտակ է բերել, անցկացրել իր հանդերի միջով, տների ներքև սալիկներով ծածկված տեղ է ընտրել*» [11, 98]: Կերպարները պատկերվում են արտահայեցմամբ: Նրանց ներաշխարհը փակ է ընթերցողից: Սա ևս բնորոշ է էպոսին, որտեղ տեսանելի են միայն հերոսների գործողությունները: Առասպելի, էպոսի պատմողական առանձնահատկությունների կիրառմամբ պատումը դառնում է համադրական: Նկատենք, որ վիպակը առասպելից ժառանգած կառուցվածքային ու բովանդակային այլ առանձնահատկություններ էլ ունի: Օրինակ՝ առասպելի «ամենասիրելի» թեմաներից էր քաղաքների հիմնադրումն ու նախահոր կամ հիմնադրի կերպարի պատկերումը (սրանք հետագայում անցան էպոսին), որոնք ևս տեղ են գտել «Խնկի ծառեր» վիպակում: Հիշենք վիպակի սկիզբը. «*Հակառակ բոլոր տոհմերի, մեր ազգությունն այս անգամ սկսվում է նախատատով*» [11, 98]: Պատահական չէ, որ «Խնկի ծառերն» ուսումնասիրած գրականագետներից շատերը (Վ. Եփրեմյան, Ա. Մեմիջյան, Վ. Փիլոյան, Վ. Գրիգորյան) իրավացիորեն ընդգծել են «Մասն Ծեր» էպոսի հետ ունեցած ընդհանրությունները: Բացի դա՝ վիպակի կերպարների գործելու ազատությունը թվացյալ է, նրանց ողբերգական ճակատագիրը կանխորոշված է, քանի որ տոհմը հավերժական նգովքի է դատապարտված: Պատմողի ամենիմացության մասին են խոսում նաև կերպարների կենսագրական փաստերից քաջատեղյակ լինելն ու իրադեպերի ժամանակային հաջորդականության պարբերական խախտումները: Նա հաճախ հետահայաց պարզաբանում է այս կամ այն իրողությունը. «*Բսկ մայրի աղջկա հետ այսպես է ծանոթացել: Մի օր Գիգրը գյուղացիների հետ ցորեն է տարել Նովոռոսիյսկ ծախելու ու ծանոթացել է մի ռուս աղջկա հետ...*» [11, 136], «*Տիրան հորեղբայրս փոքր ժամանակ եզներ է արածացրել: Մի անգամ, երբ շատ է շոգել, հանել է բրդից գործած շավարն ու մնացել տատիս կարմիր քիշվիրյա գլխաշորից կարած թումբանով...*» [11, 117], երբեմն էլ պատմողական անհամբերությամբ պատմում է գործողությունների հետագա զարգացումը. «*Հետո մի օր, երբ նա պատերազմ էր մեկնում, խճճեց մագերս՝ աչքերիս չնայելով: Եվ ամբողջ կյանքում իմ մեջ փակ աչքերով ապրում էր իմ ու Օհաննայի Ջաբարը*» [11, 127], «*Տարիներ անց, երբ ինՖարկտից ամբողջ շաբաթ մահանում էր հայրս և ինքնամոռաց՝ Գևորգին էր կանչում, մեր խելառ Օսանը հինգերորդ հեռագիրն էր ուղարկել Տաշքենդ...*» [11, 162], «*Նա տանը թաց սալիկների փրա գրանցած պահում էր ամբողջ գյուղի ռոնահետքերի նմուշ-պատճենները: Այդ սալիկները Մանուկի մահից հետո Սանդրոյի համար հոգս էին դարձել: Նա մի անգամ գրել էր շրջկենտրոն, որտեղ պետության շահերից դուրս գալով՝ շեշտում էր Մանուկի արխիվի եզակիության մասին*» [11, 146], «*Տարիներ հետո պապս նրա փայտյա ինքնաթիռի*

կմախքը պատահական գտել է մեր ցորենի հորերից մեկում...» [11, 104]: Ժամանակային հեռավորությամբ պայմանավորված՝ պատմողի տարածական հայեցակերպը տոհմի ծագման պատմությունը շարադրելիս չեզոք է, քանի որ նա լսել է այդ պատմությունը պապից, և ինքն անձամբ ականատես չի եղել: Սրա հետ մեկտեղ նրա ներկայությունը նկատելի է դառնում այն իրողությունների մասին խոսելիս, որոնց ինքը մասնակցել է: Այս դեպքում նա մշտապես կերպարների հետ նույն տարածության մեջ է: Պատմում է սովորաբար այն տարածքից, որտեղ կերպարներն են. «**Հավաքվում էինք նրանց բակում...**» [11, 103], «**Մի օր կարծես ինքնաթիռը պատրաստ էր թռիչքի, ինչ-որ տեղից ձի ճարեց, լծեց ինքնաթիռին, Ջեքային ձեռնելով ու լացացնելով նստեցրեց ձիուն, ինքն ինքնաթիռի դեկին նստեց ու մեզ բողբոջի ձեռքի թափահարումով մնաք բարով արեց**» [11, 104]: Տարածական տեսանկյունը փոխվում է հազվադեպ: Օրինակ՝ Սուրբ Հովհաննեսին նվիրված տոնակատարությունը պատկերվում է միննույն տեսարանում հաջորդական դիտմամբ: Մանրամասն պատմվում է, թե գյուղացիներն ինչպես էին նշում սրբի տոնը. «**Այստեղ, մարզագետնի կենտրոնում, հաստ, քարե պարիսպով շրջափակված էր մի մեծ խաչքար՝ մեր գյուղի «Սուրբ Օվանեսը»: Նրա շուրջը ամեն մի տոնի իր մշտական նստելու տեղն ուներ: Կանայք ձոխ սեղան էին պատրաստում: Տոնների ծերունիները շուրջ-բողբոջի շարում էին փոխանակելու բերած ապրանքները... Իսկ երաշտահավերք կանչում էին մոտերքում...**» [11, 111]: Մտացածին իրականության մեջ հանդես գալով որպես կերպար՝ պատմողը նույնիսկ այն իրադեպերին, որոնց մասնակցել է, նայում է ժամանակային հեռավորությունից, քանի որ դեպքերը շարադրում է հետահայաց: Նրա նախկին (իրադարձությունների մասնակից) «ես»-ի և ներկա (պատմող) «ես»-ի միջև կատարված հոգեֆիզիոլոգիական փոփոխություններն իրենց հետքն են թողնում պատմվի հյուսվածքում՝ տեսանելի դարձնելով դեպքերի նկատմամբ հին ու նոր հայեցակերպերի տարբերությունը: Ժամանակային հեռավորությունը թույլ է տալիս «սառը աչքով» նայել, նորովի գնահատել ու վերաիմաստավորել, հետևապես պատմողը կատարվածի մասին խոսում է իբրև մասնակից ու ականատես, բայց գնահատում է ժամանակային որոշակի հեռավորությունից, ինչի շնորհիվ այլ գնահատողական վերաբերմունքով է նայում իր ծանոթ ու սիրելի աշխարհին և կարողանում է նաև ինքն իրեն դիտել մյուս կերպարների հետ միասին: Պատմողի զգացմունքային վերաբերմունքի բնորոշ գծերից են հուսմունքն ու հեզմանքը: Վիպակը հագեցած է երգիծական բնույթի գնահատականներով: Որոշ իրողություններ, որոնք նախկինում վախ էին առաջացնում, արդեն զավեշտալի են թվում նրան: Օրինակ՝ Մարդագայլի մասին վաղ տարիքում լսածն ու իմացածը պատմում է հումորով. «**Ու այդ ձևեռ ամայի գյուղի փլատակ-լռությունից դուրս եկավ մարդագելը՝ սահմեկած գյուղացիների ձմռան երկար գիշերների հորինած պատմություններով: Գյուղացիների վախեցած երևակայությունը նրան էր վերագրում աշխահի բոլոր առեղծվածային չքացումները: Իբրև նա մարդուն մերկացնում է, հետո հոշոտում: Իբրև մարդու չափ խորամանկ է, մարդու չափ խելացի: Թաքնվում է ծխնելույզների տակ և սպասում ոտաց ճանապարհ գնացողներին, թաքնվում է կտուրներից, խոտերի դեզերի տակ ու սպասում լուսամույթին անասունների համար կեր իջեցնողներին, թաքնվում է շվաքներում՝ սպասում հարսներին: Թաքնվում է գետի ափին՝ սառույցների տակ, սպասում կովերը ցրի տանող անասնատիրոջը...**» [11, 116]: Եթե տարածական, ժամանակային ու գնահատողական հայեցակերպերը պատմողին են, ապա լեզվական հայեցակերպում նկատելի է **բազմաստե-սանկյունություն**: Պատումի զարգացման ընթացքում պատմողն անհրաժեշտ է համարում պարբերաբար օգտագործել կերպարների խոսքը՝ ընդգծելով, որ այս կամ այն բառը, արտահայտությունը իրենը չէ. «**Տարիներ հետո պապս նրա փայտյա ինքնաթիռի կմախքը պատահական գտել է մեր հորերից մեկում ու քթի տակ զակուտ»** ասել» [11, 104], «**Երբ Տարիները բացատրում էր, թե իր «գրական-կուլտուրական» անունը Հունան է, պապս ավելի շատ**

գարմանում է Տարիելի բառապաշարի՝ **«գրական-կուլտուրական»** բառի վրա, քան իր նոր անվան» [11, 106], «Երբ տառն սուրբ Արարատի առջ մեղրանում էր վառում և աղոթք շնչում, որ ես փրկվեմ **«չար կնոջ»** ճանկերից» [11, 131], «Տեր Նեսոն **«չարաշխանքե հալածանեն»** կրկնապատկեց, քառապատկեց, հասցրեց մինչև յոթ հարյուրի ու աղոթքը ձգվեց մինչև գիշերվա կեսը» [11, 132], «Պապս էլ չի նայել իր **«Ամծութանն ու ծանրութանը»** անձամբ գնացել է Գիգուկենց տուն...» [11, 142], «Բայց երբ հերոսը հերոսուհուն **«բող»** է անվանել, ռադիոն պապին բռունցքի մի հարվածից շաղ է եկել» [11, 143], «Ամբողջ գյուղը եկել էր մեղայններով զարդարված **«տաշքենդների տեր, Օնանենց մինիստր տղային»** տեսնելու» [11, 162], «Գյուղացիք պնդում էին, թե նրա ոսկեգոծ մեղայնները **«Հաստատ ոսկի են»**» [11, 162], **«Հետո, որպես ավագ, որպես «խոսքի նրբություններին տիրապետող, ինտելիգենտ մարդ»** խոսակցությունն իր վրա վերցրեց Տիրան հորեղբայրս» [11, 162] և այլն: Վերոնշյալից ակնհայտ է դառնում, որ օգտագործվում է կերպարների լեզվական տեսանկյունը՝ լսելի դարձնելու համար նրանց ձայնը: Պատմողի մտածողությունը, ժամանակային հեռավորությամբ պայմանավորված, փոխվել է: Նա այլևս ժողովրդական պարզունակ աշխարհընկալման կրող չէ, ավելի խելամարտ է դարձել ու առաջադեմ: Լեզվական տարբեր հայեցակերպերի համակցումը թույլ է տալիս կերպարներին իրենց իսկ խոսքով բացահայտել և նրանց անհատականության մասին ընթերցողին որոշակի պատկերացում տալ: Բացի այդ՝ կիրառելով կերպարների լեզվական տեսանկյունը և գնահատելով նրանց ասածներն իր գաղափարական տեսանկյամբ՝ պատմողը լեզվական և գնահատողական-գաղափարական տեսանկյունների անհամապատասխանություն է ստեղծում, իր և կերպարների աշխարհընկալումները բախվում են, որի շնորհիվ պատումը երգիծական երանգ է ստանում: Լեզվական բազմատեսանկյունության դրսևորման հիմնական ձևերից է նաև կերպարի անվան փոփոխությունը: Պատմողը կերպարներին նայում է համագյուղացիների աչքերով՝ անվանելով այնպես, ինչպես նրանք են կոչել՝ սատանա Վաղո, Պրաշչա Գիգու, ծախունենց աղջիկ, Խելառ Օնան, քոռ Աբգար (նալոկ Աբգար): Կիրառում է համագյուղացիների լեզվական տեսանկյունը: Զուգահեռաբար պատմվում է այդ անվանումների առաջացման պատմությունը: Օրինակ՝ Վաղոյին գյուղացիները սատանա էին անվանում՝ հիշելով նրա՝ իբրև թե սատանա տեսնելու պատմությունը. *«Մի անգամ Վաղոն գյուղի նախիրն արածացնելիս, երեկոյան «քոռ կամրջի» մոտ եղեգների մեջ մերկ ջրահարս է տեսել...»* [11, 132]: Պապը տատին անվանում էր «ծախունենց աղջիկ», քանի որ վերջինս սատանա Վաղոյի աղջիկն էր, իսկ «նրանց ցեղը հոգին ծախել էր սատանային» [11, 131]: Գիգույին կոչում էին «սագոժնիկ Պրաշչա»՝ պատմելով հետևյալ պատմությունը. *«Մի օր Գիգուը գյուղացիների հետ ցորեն է տարել Նովոռոսիյսկ ծախելու ու ծանոթացել է մի ռուս աղջկա հետ: Գյուղ վերադառնալու ժամանակ, աղջիկը եկել է կայարան ճանապարհելու: Նա աղջկան համբուրել է արմանք-գարմանք կտրած գյուղացիների աչքի առաջ ու գնացքի փակվող դռան արանքից գոռացել է. «Պրաշչա», իսկ վագոնի ուղեկցորդուհի խարտոյաշ ռուսն ուղղել է. «Պրոշչա» Գիգուը նրան ասել է, թե. «Քեզ ինչ, ես ուրիշ բան էի ասում»: Ու ամբողջ մի տարի գյուղում խոսում էին նրա ու ռուս աղջկա մասին»* [11, 136]: Կերպարն այլ անվանում է ստանում այն դեպքում, երբ համագյուղացիների վերաբերմունքը փոխվում է նրա նկատմամբ: Այսպես՝ պատերազմի չմասնակցած և մշտապես գյուղացիների ու զինվորների ծաղրին արժանացող փոստատար քոռ Աբգարի հանդեպ ծաղրական վերաբերմունքը փոխվեց, երբ վերջինս Օհաննայի հետ ամուսնանալուց երեք օր անց իր առնականությունն ապացուցելու համար վայրի կատու խաչեց տան ճակատին և նոր պաշտոն ստացավ. *«Գյուղացիք նրան այլևս քոռ Աբգար չէին ասում, այլ նոր պաշտոնի անունով, նալոկ Աբգար»* [11, 130]:

Պատմողն օգտագործում է տարբեր կերպարների լեզվական տեսանկյունը Խելառ Օնանին անվանելու համար, ում համագյուղացիները տարբեր անուններով են կոչում.

«Օրեստիի աղջիկ Նազին նոր ծնված տղայի անունը **Հունան** էր դրել... Գյուղացիք նրան էլ **Օնան** կանչեցին [11, 134]: Իսկ մենք չէինք ընդունում, երբ մեր կողմերն էր գալիս, ես ու Սերոբը ձեռնում էինք: «**Շուռ տված**» էինք ասում [11, 135], «...Մի անգամ էր միայն հաղթանակ տարել նրա շներինց մեկը, այն էլ տարիներ առաջ, ու ավագ հովիվը նրան մի ոչխար ու մի գույզ իրոմ սապոզ էր նվիրել: Գյուղացիները սկսեցին նրան **«խելառ Օնան»** կոչել» [11, 137], «**Դուրզար Օնան**, մինչև նրանք գան, բեր փայտերդ վառենք» [11, 164]:

Անվանումների բազմազանությամբ ընդգծվում է ապօրինածին Օնանի՝ թե հայրական, թե մայրական կողմի հարազատներից մերժված լինելը. «Գյուղացիք չգիտեին, թե Հունանին ումոնցից կոչեն: Օնանը մերժված էր ու օտարված. «Մի մասը նրան «Օնանի թոռ» էր կոչում, մյուս մասն էլ՝ «Օրեստիի թոռ»: Ու նա մոլորվել էր մեր երկուսի միջև՝ ոչ նրանք էին վերջնական իրենցը հաշվում, ո՛չ՝ մենք» [11, 136]: Խելառ Օնանի մասին խոսելիս պատմողն օգտագործում է նրա բոլոր անվանումները, բայց հիմնականում անվանում է համագյուղացիների պես՝ Օնան, Խելառ Օնան և միայն վիպակի վերջում է Օնանին կոչում իսկական անվամբ՝ Հունան՝ ազատվելով գյուղացիների գնահատողական հայեցակերպից և ինքնուրույն գնահատելով վերջինիս. «Պապիս մահից հետո Հունանը լրակյանը դարձավ...» [11, 168], իսկ համագյուղացիները սկսում են անվանել Դուրզար Օնան՝ վերջինիս նոր զբաղմունքին ու նախափորոջանը համապատասխան: Փոխվել էր Օնանի նկատմամբ թե՛ պատմողի, թե՛ համագյուղացիների նախկին վերաբերմունքը: Օնանը դարձել էր յուրային ու բարեկամ:

«Խնկի ծառեր» վիպակում լեզվական բազմատեսանկյունությունը կերպարակերտման հիմնական առանձնահատկությունն է, որի միջոցով ընթերցողի համար բացահայտվում է կերպարների աշխարհընկալումն ու բնավորության էական գծերը: Պատմողն ուշադիր է կերպարների խոսքի նկատմամբ և նրանց անհատականությունն ընդգծելու համար կիրառում է նույնիսկ հայերեն գրված վրացերեն բառեր ու արատահայտություններ՝ ընթերցողին հնարավորություն տալով պատկերացում կազմել վիրահայ գյուղացու կենցաղի ու կենսակերպի մասին. «Էջրիբե է, ամ մամա ձաղլս (Նայի էր շան որդուն)» [11, 99], «Տուսուցո գառի գարեթ, շենի (Հիմար, դուրս եկ, ես քո...)» [11, 107] և այլն: Կերպարների լեզվամտածողությամբ և, ինչպես նաև բացահայտում է ազգային մտածողության ու ապրելակերպի առանձնահատկությունները՝ տոհմի պատմությունը միջոց դարձնելով ազգային ոգու ու ճակատագրի պատկերման համար: Կերպարների արարքների, վարքուբարքի շեշտադրման նպատակը նախ՝ ազգային էության վերհանումն է բոլոր թերություններով ու առավելություններով, ապա նաև՝ հայ տեսակի աշխարհընկալման ու հոգեբանության պատկերումը, ինչի համար լավագույնս օգտագործվում են պատումի հնարավորությունները:

### **Պատմողի կերպարը «Մն գիրք, ծանր բզեզ» վեպում**

«Մն գիրք, ծանր բզեզ» վեպում պատմողի շարադրանքին զուգահեռ պատմությունն առաջ է տարվում նաև օրագրության ու նամակի ձևով, որի արդյունքում պատումը տրոհվում է առանձին հատվածների, և վեպը կառուցվում է զուգահեռ զարգացող պատմությունների հնարանքով, որոնք միասնական են գլխավոր կերպարով (1. երիտասարդ մտավորական Օնան Գարայանի գյուղական կյանքի, հրատարակած վիպակի պատմությունը և քաղաքային կյանքը պատերազմից առաջ ու հետո, 2. պատերազմական տարիների օրագրությունը, 3. Ելենի անկալը): Պատումի զարգացման ընթացքում փոխվում է պատմողի կերպարը՝ պայմանավորված պատումի եղանակի փոփոխմամբ: Պատմելու գործնառնությամբ իրականացնում են համապատասխան (հոմոլոգիկ) պատմողը՝ գլխավոր կերպար Օնանը, հարապատումային (հետերոլոգիկ) անդամ պատմողը և կերպար պատմողը՝ Ելենը, որոնք պատմությունը շարադրելիս փոխարինում են միմյանց: **Առաջնային պատմողը** գլխավոր կերպար Օնանն է: Նա պատկերված իրադարձությունների մասնակից է, և պատումի

մեծ մասը **բացահայտ** պատմում է իր տեսանկյունից՝ առաջին դեմքի եզակի և հոգնակի ձևերի կիրառմամբ՝ արտահայտելով իր մտքերն ու զգացմունքները: **Հմուտ է**, ներկայանում է որպես գրող-մտավորական: Պատերազմական տարիների օրագրային գրառումները պատմում է առաջին դեմքի հոգնակի թվով (մենք)՝ միաժամանակ բոլոր զինվորների տեսանկյունից: Այս հնարանքի կիրառումը թելադրված է վեպի գաղափարական առանցքի պահանջով: Եպատակը մենկ է՝ ցույց տալ պատերազմի դառնությունը ճաշակած մարդկանց՝ զինվորների տառապանքի, ապրածի ու զգացածի ընդհանրությունը. «*Գարեգինի դիակն ամբողջ օրը մեզ հետ ենք պատեցնում: Ֆորմալին էլ չենք ճարել, գիշերը թաղում ենք անտառում, առավոտյան հանում, բերում թոփաքների հրապարակ, խոստացված ուղղաթիռը դարձյալ չի գալիս: Արդեն չորրորդ անգամ է՝ թաղում, հողից հանում ենք*» [12, 55]: Ինչպես նկատում է գրականագետ Վ. Գրիգորյանը. «Դա ո՛չ մեկ հերոսի և ո՛չ էլ միայն հրագոհանցի զինվորների մասին պատմություն է: Դա պատերազմն է ներսից դիտված» [7, 293]:

Վեպի վերջին «Նամակ» վերնագրով հատվածում համապատումային, բացահայտ պատմողին փոխարինում է **հարապատումային փակ** պատմողը՝ պատմելով երրորդ դեմքից իբրև ամենատես դիտորդ: Նա **անդեմ է**, և, **երկրորդային պատմողի՝** Ելենի հետ նույն տարածական հարթության մեջ լինելով, պատկերում է նրան թե՛ **արտահայեցմամբ, թե՛ ներհայեցմամբ**. «*Ելենի մատների արանքում մոռացված ծխախոտը, գիշերվա ժամը, թուղթը, մոխրի ընկնելը, մտքերի շարադրանքը*» [12, 229], «*Ցանկանում էր, բայց երկար ժամանակ չէր կարողանում հաջորդ էջը սկսել, արդյոք մտքի մեջ եղածը հենց այդ նախադասությամբ շարունակի, ինչը իրեն շատ գեղեցիկ էր թվում...*» [12, 230]: Ըստ էության՝ վեպի վերջում համապատումային պատմողի կարճատև փոխարինումը հարապատումային պատմողով պայմանավորված է մի դեպքում՝ գլխավոր կերպար-պատմողի մահով (համենայն դեպս Ելենի նամակից կարելի է կոտակել, որ գլխավոր կերպարը՝ Օնանը, մահացել է), մյուս դեպքում՝ նամակը գրելու պահին Ելենի հույզերն ու ապրումներն այլ ընկալողական տեսանկյունից ընթերցողի առջև բացելու հեղինակային մտահղացմամբ: Հարապատումային պատմողը որոշակի պատկերացում է տալիս նաև գործողության կատարման ժամանակակի ու տեղանքի մասին. «*Չխախտո է վառել: Փողոցից մի անցորդի մենախոսությունը, հետո հեծկտոցը, հեռացավ: Քամուց բացվող-փակվող լուսամուտի փեղկը՝ կապույտ, շրիսկոցը՝ ծանր...* Հողմակոծ թիթեղի՝ թիթեղին գարկվելը...» [12, 230]: Պատումի գարգացման ամբողջ ընթացքում առաջնային պատմողը պատմում է իր տեսանկյունից, նա հակված չէ ներհայեցման, կերպարներին պատկերում է արտահայեցմամբ՝ փակ պահելով նրանց ներաշխարհը, մինչդեռ իր բոլոր ապրումներն ու մտորումները մանրամասն հաղորդում է: Սրան զուգահեռ վեպում կիրառվում է անձի երկատման գեղարվեստական հնարը. «*Հասկացա՝ լքվել, ինձ թողնելուց հետո կանգնել եմ քիչ հեռու, ինչպես կողքի կանգնած մարդը, հետևում եմ իմ ամեն մի շարժմանը: Բռնացրեցի, ես ինձ բռնացրեցի հաշվարկ անելիս, որ հաշվում եմ իմ վերից վար շարժումները: Հուսալքվում եմ, փորձում եմ մտածել խաղաղ օվկիանոսի մասին, դրանից ամեն ինչ ավելի վատթարացավ, քանի գնում, ավելի վատ ու վատ է դառնում*» [12, 28], «*Օրվա երկրորդ կեսին ավտոմատ էի մաքրում, վերջացրի, պատահական երեք գնդակ արձակեցի իմ բարձի, տեղաշորի, մեխից կախված բամբակափղոջ շավարի վրա: Ես էլ եմ գարմացել, թվաց՝ կրակողը ես չեմ, այլ ուրիշը, այսինքն՝ ես եմ, ես տեսնում եմ ինձ: Տարօրինակ զգացողություն է*» [12, 114]: Պատերազմը մարդուն ոչնչացնում է ոչ միայն ֆիզիկապես, այլ նաև հոգեպես, ուստի երկատման հնարով հեղինակը տեսանելի է դարձնում պատերազմի հետևանքով մարդկային ներաշխարհում տեղի ունեցած խեղաթյուրումը, խորտակված ճակատագրերը, ողբերգական ապրումները և նմանակների ստեղծմամբ պատկերում է Օնանի պես մտավորականների ծանր դրությունն ու հասարակությունից օտարումը: Սեփական ինքնության եռատումից ստեղծված թվացյալ երկու մտավորական ընկերների՝

Համոյի, Սոյոպի հետ տպագրված պատմվածքի կամ կայթողիկոսի կորած կատվին գտնելու դեպքում խոստացված չնչին գումարի համար անվերջանալի թափառումների պատկերումը բացահայտում է արվեստագետի ծանր դրությունը հետպատերազմական իրականության մեջ: Երկրորդային պատմողը՝ Ելենը, վեպի էպիգոնի կերպարներից է, ում մասին միայն մի կարճ հիշատակություն կա. «...Ելենը՝ այդ շնացող լիբբը, բոզը, բժշկի կարիքավոր, հիվանդ կրթերով անատունը, երբեք չէմ մոռանալու՝ այդ քաճը գիշերներն անապատով անցնող իմ քարավաններն էր կտում, իսկ ցերեկը գողացածները վերադարձնելով՝ երջանկացնում էր ինձ» [12, 67]: Ի հակադրություն առաջնային պատմողի, որ գիտի ու պատմում է տեղի ունեցածն ամբողջապես, երկրորդային պատմողը **սահմանափակ իմացություն** ունի, ավելի քիչ է պատմում: Հիմնականում խոսում է Օսան մտավորականի ու նրա գեղագիտական հայացքների մասին: Ելենի նամակի ստեղծման հեղինակային մտադրությոն, ըստ էության, գլխավոր կերպարին իբրև մտավորական-գրող բացահայտելն է, նրա ստեղծագործության գեղագիտական առանձնահատկությունները վերհանելով: Ինչպես նկատում է գրականագետ Փ. Ֆալանթարյանը. «*Թեև հեղինակը տարբեր առիթներով խոսում է սեփական գրական դավանանքի մասին, բայց ամեն ինչից երևում է, որ նա չհասկացվելու լուրջ մտահոգություն ունի: Մի առիթով Լենն Բաֆֆու մասին նկատում է, թե վերջինս չի հավատում ընթերցողի ըմբռնելու կարողությանը և նրա ականջից բռնած՝ անընդհատ հուշում է, նախ՝ նկարագրում է, ապա՝ սկսում է բացատրել: Ըստ երևույթին, Խեչոյանը ևս չի հավատում ընթերցողի ընկալունակությանը, այլապես չէր հորինի Ելենի նամակը: Գրողն ինքն էլ գիտե, որ կասկածելի քայլի է դիմում և ընդդիմախոսներ է ունենալու, ուստի նախօրոք պատասխանում է ենթադրվող ընդդիմախոսներին...*» [26, 141]: Ելենն ավելի շուտ փոխանցում է Օսանի մտքերը, քան պատմում է իր զգացածի ու տեսածի մասին: Այս կերպ՝ տրոհված պատումի երկու պատմողների պատմության առանցքում գլխավոր կերպարի՝ Օսանի կյանքն ու գործն է: Վիպական իրադարձությունները պատկերվում են պատմողի տարածական, ժամանակային, գնահատողական, լեզվական հայեցակերպերով: Պատմողը հազվադեպ է օգտագործում այս կամ այն կերպարի լեզվական տեսանկյունը: Նամանակի պոփոխությունները քիչ են. «*Լորա խոսելու, դեմքի, աչքերի, բառերի, տաք ձեռքերի հատու և ծանր շարժումների արտահայտություններից թվում էր, ահա, ուր որ է, ժողովրդի ձեռքին հանկարծ կհայտնվի մի մահակ, մի սուր, մի քար, մի բան՝ արյուն հանող (հոր խոսքերն են)...*» [12, 76], «*Երկրորդ՝ «ձերմակ սատանա» կոչելով հասկացվում էր հորս՝ այդ տեսակի հազարամյակների ընթացքում ստեղծվելը, որը դարերով քայլել է մարդու կողքով, որ նա ինչ մեղք էլ էր գործի, ինքն իր շալակը վերցնի»* [12, 213]: Առաջնային և երկրորդային պատմողների առկայությունը **ընկալողական բազմատեսանկյունություն** է ստեղծում: Երկու տարբեր ընկալողական տեսանկյունների համադրման պատմողական սկզբունքը թույլ է տալիս Օսանին ու նրա կյանքը պատկերել համակողմանիորեն: Սա լրացուցիչ անկեղծություն է հաղորդում պատմածին: Ընթերցողը հնարավորություն է ունենում գլխավոր կերպարին դիտել, գնահատել ու ըմբռնել նրա ստեղծագործությունը նաև մեկ ուրիշի ընկալմամբ: Ընկալողական տարբեր հայեցակերպերի առկայությունը որևէ կերպ չի հանգեցնում լեզվական տեսանկյան փոփոխման: Առաջնային ու երկրորդային պատմողների լեզվական տեսանկյունների միջև տարբերություններ չկան: Առաջնային պատմողին բնորոշ է իրադարձությունները տարբեր ժամանակային հայեցակերպերով պատմելը: Օրագրային գրառումներն, օրինակ, պատկերվում են այնպես, ինչպես տվյալ պահին տեղի են ունեցել կամ զգացվել ու ընկալվել են. «*...Լուսացավ, արդեն սիած է կանգնած օդը: Մոծակների պարտերը պտտվում են: Շտաբից երեկ բերած գերուն ուզում ենք փոխանակել Միերի դիակի հետ: Չի ստացվում»* [12, 89]: Սա պայմանավորված է պատումի կառուցման օրագրային եղանակով: Մինչդեռ գյուղական կյանքի մասին իմանալով ամեն ինչ՝ պատմողն իրադարձությունները շարադրում է ժամանակային

խառը հաջորդականությամբ՝ կարևորելով դրանց պատճառահետևանքային հարաբերությունները: Նախ՝ պատկերում է կատարվածը և միայն դրանից հետո ընթերցողի համար բացահայտում է, թե ինչպես է այն տեղի ունեցել, այսինքն՝ ընթերցողին ցույց է տրվում արդյունքը, հետո պատմվում է այն գործողությունների մասին, որոնք հանգեցրել են այդ արդյունքին: «...Նա այդ օրերին միայն Աբգարի հրացանի՝ մեջքիս դրած սառը փողից փրկվելու գիտեր: Դեռ վրացի Աբեգարան ինձ մահապատժի ենթարկելու փորձ չէր արել, իսկ իրեն՝ «Աղ դարձած աղջկա» ձերմակ քարկիտուկի մոտ չէր փորձել բռնաբարել: Դրա համար էլ հորս, մյուսների նման, ինքն էլ էր ծաղրում» [12, 206]: Առաջնային պատմողն ունի ուժեղ դրսևորվածություն: Նա արտահայտում է իր գնահատականն ու մեկնաբանում այս կամ այն իրողությունը, և, ըստ տեղեկացվածության, **ամենագետ է**, քանի որ գիտի պատկերվող իրադարձություններին նախորդող և հաջորդող մանրամասներ:

### Եզրակացություն

Կարելի է եզրակացնել, որ Լ. Խեչոյանի վերոնշյալ երկու ստեղծագործություններում պատմողն ունի հետևյալ առանձնահատկությունները.

ա) «Խնկի ծառեր» վիպակի պատմողը համապատումային է, պատմում է առաջին դեմքի եզակի և հոգնակի թվով (ես, մենք): Տոհմի պատմությունը առասպելականացնելու նպատակով պատմելու ընթացքում պարբերաբար փոխում է ժամանակային տեսանկյունը՝ մեծացնելով հեռավորվածությունը: Նրան հատուկ է կերպարների լեզվական տեսանկյան օգտագործումը, ինչի շնորհիվ *բազմատեսանկյունություն* է դրսևորվում լեզվական հայեցակերպում:

բ) «Սև գիրք, ծանր բզեզ» վեպն ունի երեք պատմող, որոնցից երկուսը համապատումային են և պատմում են առաջին դեմքից (Օնան, Ելեն), մեկն անդեմ, հարապատումային է: Առաջնային և երկրորդային պատմողների առկայությունը *բազմատեսանկյունություն* է ստեղծում ընկալողական հայեցակերպում:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-45>

### Գրականություն

1. Աբրահամյան Ս., Կենսապատումը «անտեսանելի ներկայության» առեղծվածի համակարգում, Գարուն, 2000, հ. 5, 95 էջ:
2. Ավետիսյան Ս., Լևոն Խեչոյանի արձակի թաքնագիտական շերտերը, <https://granish.org/levon-khechuyani-ardzaky/> (հասանելի է 07. 08. 2025):
3. Աբելյան Գ., Մարդագայլերի ժամանակը, <https://granish.org/werewolf-time/>, (հասանելի է 01. 08. 2025):
4. Բագրատյան Ք., Կոմպոզիցիոն առանձնահատկությունները Լևոն Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ վեպում» <https://granish.org/kerpakertman-arandzahnatkutyunnery> (հասանելի է 01. 08. 2025):
5. Բեքմեզյան Ա., Միֆակիրառության բնույթը արդի հայ արձակում, Երևան, 2007, 152 էջ:
6. Գաբրիելյան Կ., Սև-կապույտ-մշուշագույն լեռներ, Ստեփանակերտ, 2014, 207 էջ:
7. Գրիգորյան Վ., Լևոն Խեչոյանի ստեղծագործությունը, Երևան, 2019, 432 էջ:
8. Դանիելյան Վ., Չստացվող վեպի ձևագիրը, Գրականագիտական հանդես, Երևան, 2009, 371 էջ:
9. Դրոզդա Ա., Անցում անդունդի վրայով, <https://hetq.am/hy/article/27272>, (հասանելի է 20.08.2025):
10. Եփրեմյան Վ., Տեքստից ներս, տեքստից դուրս, Գարուն, 2004, հ. 6, 95 էջ:

11. Խեչոյան Լ., Խնկի ծառեր, Երևան, 1991, 168 էջ:
12. Խեչոյան Լ., Սև գիրք, ծանր բզեզ, Երևան, 2017, 240 էջ:
13. Կովալ Յ., Խեչոյանական արձակի հգոր ուժը, <https://www.aravot.am/2013/03/14/214642/>, (հասանելի է 27. 08. 2025):
14. Կոտիկ Ի., Ի դեպ, երբ բացերը փակվում են, փակերը՝ բացվում, <https://www.grakantert.am/archives/3304> (հասանելի է 26. 08. 2025):
15. Կույավա ժ., Ցավի մասին, որ հատիկի նման ծլել է մաշկի տակ, <https://hetq.am/hy/article/27272>, (հասանելի է 25. 08. 2025):
16. Հովհաննիսյան Ք., Տան փոխաբերությունը արդի արձակում, Գրականագիտական հանդես, հ.Ա, Երևան, 2004, 320 էջ:
17. Ղազարյան Թ., Գրողի կերպարն ու գրականության հարցերը Լ. Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ» վեպում <https://granish.org/groghi-kerparn-u-harcery/> (հասանելի է 25.08.2025)
18. Մարգարյան Ս., Գրողի փակ աշխարհը, Լրաբեր հասարակական գիտությունների, հ.2 (2), Երևան, 2001, 242 էջ:
19. Սովսիսյան Ա., Խնոցիներ հեծած յոթ վիուկները, <https://granish.org/khnociner-hetsats-yot-vhuuknery/>(հասանելի է 04. 09. 2025)
20. Յացենկո Ն., Չմոռանալ, այլ հնարավորություն տալ, որ կյանքը խոսի ստեղծագործության օգնությամբ, <https://hetq.am/hy/article/27272> (հասանելի է 03. 09. 2025):
21. Նիկողոսյան Ա., Լևոն Խեչոյանի ֆենոմենը, Անդին, Երևան, 2014, 132 էջ:
22. Ոսկանյան Ռ., Աղամը՝ որպես միայնության և անմեղության արքետիպ, Գրականագիտական հանդես (ԺԵ), Երևան, 2017, 360 էջ:
23. Պաստուխ Բ., Տաք լույսը և «Խելացի սառնապանքը», <https://granish.org/bogdan-pastux-article> (հասանելի է 03. 09. 2025):
24. Ոյաբչի Ի., Տոտեմի փորձություն, <https://granish.org/ivan-ryabchi/>, (հասանելի է 02. 09. 2025):
25. Փիլոյան Վ., Ակնարկներ արդի հայ գրականության, Երևան, 2018, 407 էջ:
26. Քալանթարյան ժ., Ժանրի թարմացման ուղիով (2000 թ.), Անդրադարձներ, Երևան, 2003, 232 էջ:
27. Бахтин М. Вопросы литературы и эстетики, Москва, 1975, 504 с.
28. Зарубежная эстетика и теория литературы 19-20 вв., Трактаты, статьи, эссе, Москва, 1987, 507 стр.
29. Шмид В. Нарратология, Москва, 2003, 312 с.

Բյուզանդ Թոփալյանը հավատում է, որ մի օր ազգովին կվերադառնան հայրենիք, ու նորից կշենացնեն այն: Եվ այդ ամենը կիրականանա հայ հանճարի շնորհիվ.

Ո՛ւ ցրուած ուժերն ա՛լ վերադառնան,  
– Հանճարդ հայութեան–  
Առասպելական թեւերով բոցեղ,  
Մետաղէ շաչերն ալ վերածուին թող  
Խրոխտ շեշտերու համանուագային... [Արձանագիր 47]:  
Հայ հանճարի հանդեպ անվերապահ հավատ ուներ նաև Ղևոնդ Ալիշանը.  
Կերդնու Նահապետ, կանչե՛ ձեզ, Հայե՛ր,  
Հանճարն է մեզ կյանք, ըզնա վառեցեք... [2, 69]:

Բյուզանդ Թոփալյանի համար փորձությունները, արհավիրքները հաղթահարելի են ու ժամանակավոր: Նա միասնության, համերաշխության կոչ է անում: Այդ նույն լավատեսությամբ է տոգորված Հովհաննես Թումանյանը, երգ գրում էր. «Փորձությունը, ինչքան էլ մեծ լինի, պետք է տանենք արիությամբ ու վեր կենանք միասին, միահամուռ ուժերով դիմադրելու մեր վատթար թշնամիներին և դարման տանենք ընդհանուր ազգային աղետին հանգիստ ու լիքը մոտիկ լավագույն ապագայի անսասան հավատով» [16, 317]:

Շատ վառ ու կենդանի են Բյուզանդ Թոփալյանի պատկերները, երևակայությունը, իրականության ըմբռնման խորքայնությունը: Նրա մտա, ինչպես շատ արվեստագետների վառ է գործում սինեսթեզիայի գործոնը. «Երկու և ավելի զգայարանների, սովորաբար լսողության և տեսողության զգայական ընկալումների միավորում... օրինակ՝ թմբուկի ձայնը ընկալվում է որպես վառ կարմիր...» [24, 113]:

Նա ուզում է հավատալ, որ հայրենի Կիլիկիայում իր նախնիները դեռ ապրում են, դեռ նծույզներ հեծած արշավում են լեռներում, ասես հստակորեն լսում է նրանց տուն կանչող ձայները:

Մի առիթով նա արտահայտվել է. «-Նախահայրերս, կ'ըսե՛ ան, ձիառներ էին. անոնց ստուերագիծը մտերմօհն կապումս է ձիուն ստուերագծին» [19]:

Ցեղի գրույցը իր զավակի հետ երբեք չի ավարտում: Այն կարող է ընդհատվել՝ նորից վերսկսվելու պայմանով: Չկա անհատ, կա անհատացված ցեղ՝ որպես ֆիզիկական ու հոգևոր մարմնի միասնություն: Իսկ ֆիզիկական մարմնի քայքայումից հետո՝ հոգին ոգեղենացված գնում է միանալու իր նախակգրբին՝ ցեղին. «...անհատական «անգիտակցականը»՝ մեր անցյալի, առաջին հերթին մեր մանկության և պատանության ինքնավար նստվածքը իր հիմքում կրում է «Կուլեկտիվ անգիտակցականը», որը ինքնավար հիշողությունն է մեր ռասայի անցյալի մասին, նույնիսկ մեր նախամարդկային հիշողությունը» [24, 114]:

Բանաստեղծը շատ լավ է սերտել հայոց պատմությունը, քաջատեղյակ է այդ պատմության բազմաթիվ շերտերին և տրամաբանական եզրահանգումների, վերլուծությունների ու համադրությունների միջոցով հասել է որոշակի հայեցումների: Շատ ոսոխներ է տեսել

Հայաստանը: Նրանք եկել են, տիրացել, զարկել ու ավիրել: Սակայն որոշակի ժամանակ անց՝ հետ են քաշվել իրենց երկրներ. ոչ մի ոսոխ նպատակ չի դրել հիմնավորելու հայի հայրենիքում՝ արմատ գցելու: Բայց ուրիշ է վերջին եկողը՝ թուրքը, որն ամեն կերպով ուզում է տեր դառնալ Հայաստանին, ջնջել բնիկներին, ոչնչացնել նրանց մշակույթը. «... Մինչ այդ թեև հայերը շատ անգամ են ընկած օտար լուծի տակ, բայց օտարը Հայաստանի մեջ բոյն չէ դրած իբր ժողովուրդ... ԺԱ դարից այս կողմն է միայն, որ վաչկատուն թուրք ու թաթար, արշաւելով Հայաստան, փորձում են եւ յաջողում մեր աշխարհը դարձնել բնակավայր նաեւ իրենց համար» [4, 156]:

Եվ այս ոսոխի թուրքի դեմ կռվելու համար է բանաստեղծն ուզում արթնացնել Ցեղը, որը Սասունցի Դավթի նման քուն է մտել խոր հորում:

Նա տեսնելով թե ինչպես է իր մեծ, ընդարձակ հայրենիքի մի հատվածում վերածնվում Խորհրդային Հայաստանը՝ անասհման բերկրանք է ապրում: Արվեստագետի մոտ այն համոզմունքն է, որ կարելի է այդ վերածնունդը տարածել ողջ հայրենիքով մեկ: Եվ այս հավատքը ոգեշնչման նոր որակներ է ձեռք բերում. «... «Ոգեշնչումը» ինչպես ավանդաբար կոչում են ստեղծագործության անգիտակցական գործոնը» [24, 117] - խախտելով բոլոր պայմանականությունները՝ իր բույնն է հյուսում Զվարթնոցի արժվաքանդակների սրտում, արարատյան պայծառ առավոտների արևաշողերի մեջ, հայության երիտասարդ երգերի հնչյուններում:

Ցեղը եղբայրությունն է, նույն ակունքների պատկանալու խորհուրդը, ցեղը արյան կանչն է՝ աստվածային դաշինքի ներկայությունը մարդու մեջ: Եվ բանաստեղծը բոլոր հայերին եղբայրության կոչ է անում՝ համարելով նույն ճակատագրով, արյամբ ու ոգով առիավետ «շղթավաճներ».

Երկարատեւ տառապանքն՝ որ մեր ցեղին վիճակուած՝  
Պիտի ջնջէր ու տանէր պատմութենէն առյաւէտ  
Աննըկուն կամքն ապրելու, – բարձրանալով աւերէն  
Վերածուեցաւ ցնծութեան ու յաղթական կոթողի [Լուսածնունդ 21]:

Ցեղը գաղափարի, նպատակի եղբայրությունն է, որի մասին Բյուզանդ Թոփալյանից շատ առաջ գրել է Մկրտիչ Պեշիկթաշլյանը.

Տո՛ւր ինձ քո ձեռք, եղբա՛յր եմք մեք,  
Որ մրրկավ էինք գատված,  
Բախտին ամեն ող չար ու նենգ  
Ի մի համբոյր ցրվին ի բաց.  
Ընդ աստղերոք ի նչ կա սիրուն,  
Քան գանձկալի եղբայր անուն [27, 41]:

Իսկ Սիւմանթոյի մոտ այդ եղբայրության գաղափարն հետևյալ կերպ է արտահայտված.

Եղբայրներ, այսօր օրերուն Օրն է, ու գիտենք որ պատրաստ եք դուք Արիավիրքին... [28, 7]:

Այլ կերպ չէր կարող վարվել Բյուզանդ Թոփալյանը: Նա ժառանգական պարտք ունի իր հոգևոր հայրերի առջև: Նա թույլ լինելու, վիստվելու իրավունք չունի, քանի որ ազգի պոետներին բարբառոսաբար ոչնչացնող թուրք ժողովուրդ կոչված գազանը դեռ չի հագցել հայի արյունը խմելուց, դեռ չի կշտացել հայոց մարմինները լավիելուց. «Նա գտնում է, որ կարոտների բեռան տակ կքշած տարագիր ժողովուրդը հոգեկան կորովի պետք ունի, հոգեպես ամրապնդվելու կարիք, և դա է, որ պիտի փրկի նրան տարաշխարհում կործանումից».– Բյուզանդ Թոփալյանի հայրենասիրական պոեզիայի մասին է գրել Վազգեն Գաբրիելյանը [8, 108]:

Որպես ցեղային մտածողության կիզակետ, որպես պայքարի հաղթական ավարտի ու հայրենադարձության, հայրենասիրության գեղարվեստական մարմնացում ուշագրավ է «Մարդ մը» գործը:

Տառապած, չարչարանքի բոլոր դառնությունները ճաշակած, աշխարհի բոլոր ծագերում թափառած հայ տարագիրը կոփված ու հոգեպես փոխված, հաղթական կամքով մուտք է գործում իր պատմական հայրենիք.

Ահավասիկ հեռաւոր աշխարհներէն վերադարձող մարդն է այս:  
Տարահալած իր գոյութիւնն երէկուան  
Ունի ճնշող ծանրութիւնը դարերու.  
Պայքարներու իր ծիրանին կ'երկարի  
Անապատէն անկարեկիր մինչեւ ծովերն այրեցեալ [Լուսածնունդ15]:

Անցյալն այլևս անգոր է ներագդելու հայի վրա, նա լի ստեղծագործ կորովով ու աննկուն կամքով վճռական է տրամադրված իր կյանքը կերտելու, իր երկիրը շենացնելու համար.

Ահաւասիկ մարդն,- ամբողջ կրակներէն մաքրուած:  
Հոգեկան նոր կորովին, իմաստութեան ուժերով-  
Բազուկներով աննահանջ  
Սպառազէն՝  
Կոփելու կէանքն իր վաղուան [Լուսածնունդ 16]:

Սա նոր հայի կերպարն է, նոր Հայաստանի քանդակն է՝ հավերժության մեջ իր դիրքն ապահոված:

Եվ շատ տեղին են գրականագետ Ե. Այվազյանի տողերը. «Բ. Թոփալեանը մեր մեջ այն հազուագիտուններից է, որ արժանի է տիեզերական բանաստեղծի կոչումին, ըստ իր անվերջանալի տաղերի և ստղերի, որոնք յայտաբերում են յարում ու պացք դեպի տարերք ու տիեզերք» [5]:

### **Եզրակացություն**

Ամփոփելով հայտնենք՝ Բյուզանդ Թոփալյանի գրական ժառանգությունն առաջին անգամ է արժևորվում ցեղային մտածողության տեսանկյունից: Նրա «Այգահանդէս», «Արեւագալ», «Հրախաղութիւն», «Արձանագիր», «Համայնական սեր», «Լուսածնունդ» բանաստեղծական ժողովածուներում ցայտուն երևան եկող ցեղային ոգու գեղարվեստական կերպավորումներն ենթարկել ենք ամբողջական քննության:

Օգտագործել ենք «դիվինացիայի» [33] սկզբունքը՝ այսինքն՝ հնարավորինս ներթափանցել ենք բանաստեղծի ստեղծագործական հոգեբանության մեջ, մտել նրա ներաշխարհի, էպոսը զգացել հեղինակին, անցել «...ստեղծագործությունների արտաքին թաղանթի ճեղքմանը ու ներսի կառուցվածքային տարրերի մասնատմանը, այդ տարրերի միջև առկա կապերի բացահայտմանը» [7]:

Ուսումնասիրության շրջանակում անդրադարձել ենք բանաստեղծի ժամանակակիցների գրախոսականներին, ժամանակի մամուլի արձագանքներին, նամակներին, գիտահասարակական գործունեության որոշ փուլերին, ֆոնդերում պահպանված նյութերին:

Թվում էր, թե հայությունը հաշտվել է իր պատմական ճակատագրի հետ, ասես թե հայոց հոծ սփյուռքն ինքն իր մեջ ամփոփվել՝ սպասում է այլ ազգերին ձուլվելուն ու անհետացմանը: Եվ նման բախտորոշ պահերի՝ այլ բախտակից գրողների հետ հանդես է գալիս Բյուզանդ Թոփալյանը՝ իր խոսքի ուժով, իր գաղափարների թարմությամբ արթնացնելով, պայքարի մղելով ազգին, հույս ու հավատ ներշնչելով վհատվածներին ու հուսախաբներին:

Բյուզանդ Թոփալյանի պոեզիայի ակունքները հայ ցեղի ոգու գաղտնախորհուրդ,

լուսե խորքերում են, հայոց հին, կենդանի հավատքի աստվածների սրտում, պայքարող, երբեք չընկճվող հայի մաքառումներում, խլված, թալանված հայրենիք վերադառնալու անհատների իդձերում:

Բանաստեղծն ազգի հետ խոսեց ցեղի լեզվով, իր հին աստվածների, իր հնագույն նախնիների սրբազան բարբառով: Նա ձգտեց հայի մեջ արթնացնել ցեղային գաղափարներ, ցեղային արժեքներ, նա խորը զգաց ցեղի հոգեբանական նրբությունները և աշխատեց ցեղայնացնել, ցեղաօծել ազգը:

Ցեղային բնավորության մեջ տեսնելով փրկությունն ու վերածնունդը՝ Բյուզանդ Թոփայանը վստահորեն կանգնեց Մկրտիչ Պեշիկթաշյանի, Ղևոնդ Ալիշանի, Սիամանթոյի, Վարուժանի, Ռուբեն Սևակի կողքին, որոնք անխոնջորեն ցեղապաշտություն ու հեթանոսություն քարոզելով՝ ձգտում էին ազգը հանել փրկության ուղեծիր:

Հայկական ցեղապաշտությունը ընդհանուր ոչինչ չունի ֆաշիզմի, շովինիզմի և այլ ազգերի ստորադասման ջատագովության հետ: Հայկական ցեղապաշտությունը դա ցեղի, տեսակի, արժեքի պահպանման գաղափարաբանություն է, դա դեպի մարդը գնալու ուղին է, դա մարդկության հետ համերաշխության լեզուն է:

Ցեղապաշտության համապատկերին է, երբ հնչեցին ցեղազարմ Գուրգեն Յանիկյանի կրակոցները՝ որպես նվիրական կոչ ու անհատի ինքնագոհաբերման պատգամ, և այս համապատկերին է, երբ պոռթկաց Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ՀԱՀԳԲ) սրբազան վրեժի հրաբուխը, Արցախյան հաղթական պատերազմների շքերթը:

Ցեղի հանդեպ հավատքը, հայրենիք վերադառնալու ու շենացնելու անհատնում հույսը, պայծառատեսության հասնող լավատեսությունը, մարդկության հանդեպ սերը, չարանալու, մարդ մնալու կամքը Բյուզանդ Թոփայանի պոեզիայի գաղափարական առանձնահատկություններն են: Այս ամենն ի նկատի առնելով է Երվանդ Քոչարը ասել. «...Բյուզանդը մեծ մտավորական է և մեծ արվեստագետ» [10]:

Նա առաջ մղեց նոր, հաղթող հայի գաղափարը, որը պետք է տեր կանգնի իր պատմական հայրենիքին, շենացնի, հզորացնի այդ հայրենիքը:

Յավի, տառապանքի արհամարումը, այդ ամենից վեր կանգնելը հայ գրականության մեջ դարձավ աշխարհընկալման գեղագիտական ռձ, ստեղծագործական սիմվոլիկայի փիլիսոփայական խաղ, որոնք հանգեցրեցին այն բանին, որ ցեղապաշտությունը հայ գրականության մեջ վերածվի գաղափարաբանության, հեթանոսությունը՝ ապագայի կենսակերպի:

Ցեղային մտածողության դրսևորումների հիման վրա ստեղծված գեղարվեստական փիլիսոփայությունը նոր շուք հաղորդեց հայ գրականությանը, այն ավելի մոտեցնելով համաշխարհային գրականության արժեհամակարգին, ավելի արժեվորեց **ցեղային անհատ և մարդ ընդհանրապես** հասկացությունը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-76>

### Գրականություն

1. Աթմաճեան Մ., ԳԱԹ, Բ. Թ. ֆոնդ, գ. 303:
2. Ալիշան Ղ., Երկեր, Երևան, Մովեստական գրող, 1981, 400 էջ:
3. Ալիքեան Ա., ԳԱԹ, Բ. Թ. ֆոնդ, գ. 26:
4. Աղբալեան Ն., Երկերի ժողովածու, եօթ հատորով, հատոր Ա, Պատմություն հայոց գրականութեան, Երևան., Լուսակն, 2025, 820 էջ:
5. Այվազեան Ե. Մեր մտքի եւ քերթողութեան երթն ու Բ. Թոփալեանի խոյանքը, «Զուարթոնց», Փարիզ, 1961, մարտի 1, 3-4, էջ 5 և 5-6, էջ 9-10:

6. Արտավազդ Գ., ԳԱԹ, Բ. Թ. ֆոնդ, գ. 403:
7. Բորև Յ., Գեղագիտություն, Երևան., Հայաստան հրատ., 1982, 512 էջ:
8. Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Երևան., ԵՊՀ հրատ., 2016, 424 էջ:
9. Գազազեան Զ., ԳԱԹ, Բ. Թ. ֆոնդ, գ.303:
10. ԳԱԹ, Բ. Թ. ֆոնդ, գ. 273
11. Գոբինո Ա., Համաշխարհային ցեղային տեսություն» մատենաշար, մատյան Ա, Երևան., Տիր հրատ., 2022, 166 էջ:
12. Երկաթ Ա., Գրքեր և դեմքեր բաժին, Բանաստեղծություններ Բիզանդ Թոփալեանի, Փարիզ, Ջուարթնոց, 1960, դեկտեմբերի 1, 1-2, 4 էջ:
13. Զարյան Կ., Միացյալ Նահանգներ, Երևան., Սարգիս Խաչենց հրատ., 2002, 502 էջ:
14. Զարուհան Պ., Անահիտ, «Արևազալ» Քերթուածներ Բիզանդ Թոփալեանի, Փարիզ, 1936, 5-6, էջ 37-39:
15. Թորանյան Թ., «Բյուզանդ Թոփալյան», «Հայրենիքի ձայն», Երևան, 1967, փետրվարի 2, 8 (82):
16. Թումանյան Հովհ., Երկեր, Երևան., Հայպետհրատ, 1951, հատոր 4, 317 էջ:
17. Թոփալեան Բ., Այգահանդէս, Հալէպ, Արաքս տպ., 1930, 54 էջ:
18. Թոփալեան Ն., ԳԱԹ, Բ. Թ. ֆոնդ, գ. 110:
19. Կրոֆիե ժ., Բանաստեղծ եւ նկարիչ Բյուզանդ Թոփալեանի հարուստ ներաշխարհը, Ջարթոնք, 31,07, 1965:
20. Համբարձումյան Ռ., «Գարեգին Նժդեհ», Երևան., Նախիջեան, 2003, 212 էջ:
21. Կիցզե Ֆ., Բարուց և չարից անդին: Չաստվածների մթնշաղր, Երևան., Ապոլոն հրատ., 1992, 272 էջ:
22. Շահնազար Է., ԳԱԹ, Բ. Թ. ֆոնդ, գ. 403:
23. Որբունի Զ. Մ., Բիզանդ Թոփալեանի հետ, «Գրական ամսաթերթ», Փարիզ, 1962, մարտ, 4, էջ 1; 3:
24. Ուելլեք Ռ., Ուորրեն Օ., Գրականության տեսություն, Երևան., Սարգիս Խաչենց-Փրինթինգ, 2008, 513 էջ:
25. Չարենց Ե., Երկերի ժողովածու, 4 հատորով, հատոր առաջին, Երևան, Սովետական գրող, 1986, 440 էջ:
26. Չարենց Ե., Երկերի ժողովածու, 4 հատորով, հատոր երրորդ, Երևան, Սովետական գրող, 1987, 544 էջ:
27. Պեշկոբաշյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Երևան., ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1987, 563 էջ:
28. Միամանթո, Ընտիր երկեր, Երևան., Հայպետհրատ, 1957, 251 էջ:
29. Վարուժան Դ., Երկեր, Երևան., Սովետական գրող, 1984, 576 էջ:
30. Քոլլինգվուդ Ռ. Զ., Արվեստի հիմունքները, Երևան., Սարգիս Խաչենց – Փրինթինգ, 2007, 421 էջ:
31. Օտեան Ե., Անիծյալ տարիներ, Երևան., Նաիրի, 2004, 584 էջ:
32. Лебон Г. Психология народов и масс, Москва, Изд: АСТ, 2023, 384 с.
33. Турышева О. Н. Теория и методология зарубежного литературоведения, Москва, Флинта, 2013, 160 с.

## Էթնիկական մտայնությունը Բյուզանդ Թոփալյանի արվեստում

Աղայան Լեռնիկ

### Րեզյումե

**Կարևոր բառեր:** *Բյուզանդ Թոփալյան, «Ջրնալ շարի», «Վաղարշ Լույս», «Փայրույթ», «Միջերկրյան սերունդ», «Նշանակությունը հուշարձանին», «Ծնված լույսով», Արմենիա, էթնիկական մտայնություն, ցեղային հոգի, ընտանիք, մարդկություն, արևելահայկական գրականություն*

Բյուզանդ Թոփալյան (1902–1970) – ֆրանսիացի բանաստեղծ, արևելահայկական ծագումով, հրատարակիչ, նկարիչ և հասարակական գործիչ։ Ծնվել է Կիլիկիայում, Այնտափում; հետո Գեոցիդից արևելահայերից ապաստանվել է Ալեքսանդրիայում, ապա Փարիզում, որտեղ և մահացել է։ Գրել է հինգ ժողովածու բանաստեղծությունների, երկուսը լեզու է թարգմանվել ֆրանսիացի լեզվի։

Մեծագույնը նրա ստեղծագործությանը – ցեղային մտայնությունը և ցեղային հոգի։ Բանաստեղծը արտահայտում է սիրտը հայրենիքի համար, վշտը կորուստի, երազը վերադարձի, խնդիրը պատճառի և ցանկությունը միանալու հոգիին նախնիների։ Նա դիմում է ժողովրդին լեզվով ցեղային, սրբազան լեզվով հնուց ժողովրդի, արթնացնելով արևելահայերի մեջ պայքարի հոգի, գաղափարը վերադարձի հայրենիք և արթնացնելու պատմական վնասները։

Բանաստեղծը ստեղծում է պարտադրյալ արևելահայերի, որոնք զրկվում են իրավունքները, կառուցում Արմենիան առանց սղոյանների և պարտադրյալի, որտեղ սերունդները ապրում են եղբայրության մեջ։ Նրա փիլոսոփայությունը, հիմնված է ցեղային մտայնության վրա, միավորում է օպտիմիզմը, սերունդը մարդկությանը և ցանկությունը դատարարությանը, տալով արևելահայկական գրականությանը նոր լույս և մոտենալով նրան արժեքներին աշխարհային գրականությանը։

## Ethnic Thinking in the Poetry of Byuzand Topalyan

Hakobyan Lernik

### Summary

**Key words:** *Byuzand Topalyan, "The Journal of Dawn", "Sunrise", "Fireworks", "Worldly Love", "Inscription on the Monument", "Born by Light", Armenia, ethnic thinking, tribal spirit, clan, humanity, Armenian literature*

Byuzand Topalyan (1902–1970) was a French-Armenian poet, publisher, painter, and public figure, born in Cilicia, in Ayntap. After surviving the Armenian Genocide, he settled first in Aleppo and later in Paris, where he lived until his death. He published five collections of poetry, two of which were translated into French.

Topalyan's poetry reveals profound layers of tribal and clan-based thinking. It reflects longing for the homeland, grief over loss, desire for retribution, and a deep connection to ancestral spirits. He communicated with his nation using the sacred dialect of his ancestors, seeking to awaken the spirit of struggle, preserve the idea of return, and heal historical wounds.

Faith in the tribe, optimism, love for humanity, and moral integrity define his poetry. Through these themes, Topalyan enriched Armenian literature, connecting it to universal literary values and emphasizing both the tribal individual and humanity as a whole.

Ներկայացվել է 19. 08. 2025 թ.

Գրախոսվել է 27. 10. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Ներագրման միջոցները սերիալներում.  
կադապարային արտահայտություններ և հաղորդակցություն**

*Մենենձյան Անահիտ,  
Մկրտչյան Մարինե*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-92>

*Հանգուցային բառեր. մեդիաազդեցություն, մեդիալեզվաբանություն, լեզվական կադապարներ, լեզվաաճական շեղումներ, մեդիատեքստ, արժեքային նարատիվներ*

**Նախաբան**

Վերջին տասնամյակների մեդիամշակութային և հաղորդակցական հետազոտությունները վկայում են, որ զանգվածային մեդիան, հատկապես հեռուստասերիալները, հանդես են գալիս ոչ միայն որպես ժամանցային բովանդակություն, այլև որպես արժեքների, սոցիալական նորմերի և վարքային մոդելների վերարտադրության միջոց: Սերիալային դիսկուրսի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն գործառույթներով մտտ է հանրային հաղորդակցությունը, որտեղ հաղորդակցական կադապարներն ու ստանդարտացված կառույցները դառնում են արժեքային ու գաղափարական ազդակների կրողներ:

Արդյունքում, հեռուստասերիալները դիտարկվում են ոչ միայն որպես մշակութային արտադրանք, այլև որպես դիսկուրսիվ տարածք, որտեղ ձևավորվում ու վերակազմավորվում են սոցիալական ներկայացուցչությունները, ինչպես նաև անհատական ու կոլեկտիվ ինքնությունների կառուցվածքային բաղադրիչները:

Այս տեսանկյունից սերիալներում կիրառվող լեզվական կադապարները դիտարկելը կարևոր է ոչ միայն մեդիագիտական, այլև միջգիտակարգային համատեքստում՝ ընդգրկելով սոցիոլոգիական, հոգեբանական, լեզվաբանական ու փիլիսոփայական մոտեցումներ: Դրանք հնարավորություն են տալիս վերլուծելու, թե ինչպես են հաղորդակցական մեխանիզմները նպաստում արժեքների վերարտադրությանը հանրային գիտակցության մեջ:

Հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ հեռուստասերիալները Հայաստանի ամենադիտվող մեդիապրոդուկտներից են և զգալի ազդեցություն ունեն երիտասարդության լեզվամտածողության ու արժեքային կողմնորոշումների ձևավորման վրա:

Հետազոտության համար վերլուծվող հեռուստասերիալների ընտրությունը հիմնավորված է էմպիրիկ տվյալներով: Այդ նպատակով 18-25 տարեկան 100 երիտասարդների շրջանում իրականացվել է հարցում: Ընտրանքը կազմվել է նպատակային եղանակով՝ ներառելով մայրաքաղաքում և մարզերում ապրող տարբեր բուհերի ուսանողների: Հարցման արդյունքները վկայում են, որ առավել դիտվող սերիալներն են «Սիրելի Սահմին (Ա-Թիվի)», «Երջանկության մեխանիկան» (Հանրային հեռուստաընկերություն) և «Կախվածությունը» («Շանթ») հեռուստաընկերություն): Ստացված տվյալները հնարավորություն են տալիս պարզելու հեռուստասերիալների դիտելիության ընդհանուր միտումները և ապահովում են հետազոտական կորպուսի ընտրության մեթոդաբանական հիմնավորումը:

Հետազոտությունն իրականացնելիս դիտարկել ենք, թե քննության առարկա դարձած հեռուստասերիալները՝ որպես մեդիատեքստեր, լեզվաաճական ինչպիսի հատկանիշներ ունեն և ինչ բնույթի ներգործություն կարող են ունենալ հեռուստադիտողի վրա: Այդ նպատակով ուսումնասիրել ենք գլխավոր հերոսների խոսքը՝ պարզելու, թե ինչ բառամթերք ունեն նրանք, ինչպիսի լեզվական կառույցներ, արտահայտչամիջոցներ են կիրառում

ուղերձներ փոխանցելիս՝ հիմք ընդունելով այն թեզը, որ մեղիատեքստի արտահայտչականության ուսումնասիրության համար կարևոր է շարահյուսության մակարդակում գործածվող ոճական միավորների քննությունը:

Հետազոտության **նպատակը** հետուսասերիալներում կիրառվող լեզվական կաղապարների և արտահայտչամիջոցների վերլուծությունն է՝ դրանց ներգործական պոտենցիալը և արժեքների փոխանցման մեխանիզմները պարզելու նպատակով:

Հետազոտությունը **խնդիր** ունի բացահայտելու ընտրված հեռուստասերիալների լեզվաոճական առանձնահատկությունները, վերլուծելու լեզվական կաղապարների կիրառությունն ու դրանց ներգործական դերը, դիտարկելու լեզվական սխալների և օտարաբանությունների կիրառությունն ու ազդեցության հնարավորությունները:

**Նորույթը** հեռուստասերիալների խոսքի և լեզվաոճական կաղապարների համակարգային վերլուծությունն է՝ մեղիագիտական մշակութաբանական և լեզվաբանական մոտեցումների համադրությամբ:

**Տեսական նշանակությունը** դրսևորվում է մեղիատեքստի լեզվաոճական և հաղորդակցական բնութագրիչների բացահայտման մեջ, ինչը կարող է հիմք հանդիսանալ հետագա միջոցիտակարգային ուսումնասիրությունների համար:

**Գործնական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ ստացված արդյունքները կարող են կիրառվել մեղիաուսուցման, լրագրության, ինչպես նաև մեղիաարտադրության ոլորտներում՝ նպաստելով մայրենի լեզվի մշակութային արժեքի և մեղիայում դրա դերի բարձրացմանը:

### **Մեղիալեզվաբանության տեսական հիմքերը և սերիալային խոսքը**

Մերիալը, լինելով կինեմատոգրաֆիական արտադրանք, շրջանառվում է մեղիամիջավայրում և հանդես է գալիս որպես մեղիաարտադրանք: Դրա լեզվական առանձնահատկությունների ուսումնասիրությունը պատկանում է մեղիալեզվաբանության հետազոտական դաշտին:

«Մեղիալեզվաբանություն» տերմինը վկայում է, որ այն գտնվում է երկու գիտակարգերի՝ մեղիայի և լեզվաբանության հատման կետում՝ հնարավորություն տալով ուսումնասիրելու մեղիատեքստերը երկու ոլորտների տեսանկյունից [7]: Ռուսաստանում մեղիալեզվաբանության հիմնադիր Ս. Գ. Դոբրոսկլոնսկայան, բնութագրելով ոլորտի կարևորությունը, գրում է՝ «Մեղիալեզվաբանության առարկան գանգվածային հաղորդակցության ոլորտում լեզվի գործառնությունն ուսումնասիրությունն է, այլ կերպ ասած՝ մեղիալեզվաբանությունը զբաղվում է խոսքի կիրառման որոշակի ոլորտի՝ գանգվածային մեղիայի ուսումնասիրությամբ»:

Ս. Դոբրոսկլոնսկայայի դիտարկմամբ՝ մեղիատեքստերի լեզվի գլխավոր գործառնություններից է ներգործումը հանրային մտածողության և իրադարձություններն ընկալելու կերպի վրա [6]: Այս տեսանկյունից՝ սերիալներում օգտագործվող հարալեզվական, վիզուալ, խոսքային և ձայնային բաղադրիչները հանդես են գալիս որպես ազդեցիկ մեխանիզմներ, որոնք ձևավորում են դիտողի ընկալումն ու վարքագծային մոդելները: Դիտողը, գիտակցաբար թե՛ հանգիսակցաբար, հաճախ վերարտադրում է սերիալային հերոսների լեզվական և վարքային մոդելները, որոնք, երկար ժամանակ պահպանվելով հանրային դիսկուրսում, դառնում են լեզվական սխալների և արտահայտչական շեղումների կայուն աղբյուր: Եթե հեռուստատեսային որոշ այլ ժանրերում արձանագրված լեզվական խախտումները ժամանակի ընթացքում մոռացվում են, ապա ֆիլմերի և հատկապես սերիալների դեպքում դրանք վերածվում են լեզվական վարակի մնայուն աղբյուրի [9]: Այս տեսանկյունից՝ թեև ուսումնասիրվող սերիալներն ունեն գեղարվեստական և արտադրական արժանիքներ, սակայն հայերենի կիրառության առումով դրանք, մեղմ ասած, բարենպաստ վիճակում չեն: Ուստի նպատա-

կահարմար է դիտարկել դրանցում արձանագրվող լեզվական շեղումները: Նախ անդրադառնանք դրանց դրսևորումներին շարահյուսական մակարդակում:

**Լեզվական շեղումներն ու արտահայտչական կաղապարները սերիալներում**

Շարահյուսական և ձևաբանական շեղումները դիտարկվող սերիալներում բազմապիսի են: Դրանք ընդգրկում են ինչպես համաձայնության, հոլովների և բայական ձևերի խախտումներ, այնպես էլ արտասանության, շեշտադրման ու ուղղախոսության նորմերից շեղումներ: Կառուցվածքային սխալներ առկա են «Սիրելի Սահմի», «Կախվածություն», «Երջանկության մեխանիկա» հեռուստասերիալների մի շարք դրվագներում:

Սերիալային հերոսների խոսքերում նկատելի են **ենթակայի և ստորոցայի համաձայնության որոշ սխալներ**, օրինակ՝ «շիզոֆրենիայի նշաններ կա» («Սիրելի Սահմի», սերիա 4), ճիշտ տարբերակն է՝ նշաններ կան): Որոշ դեպքերում **անորոշ բայի փոխարեն կիրառում են «խոնարհված բայ + ըղձական եղանակի բայաձև» կառույցը**, օրինակ՝ «չեմ կարողանում գտնեն» («Կախվածություն», սերիա 6), ճիշտ տարբերակն է՝ չեմ կարողանում գտնել): Հաճախ **ներգոյական հոլովաձևերը փոխարինում են «սեռական հոլով + վրա կառույցով**», օրինակ՝ Թումանյան փողոցի վրա ենք («Սիրելի Սահմի», սերիա 8, ճիշտ տարբերակն է՝ Թումանյան փողոցում ենք):

Հաճախ արձանագրվում են նաև արտասանության, շեշտադրման և ուղղախոսության շեղումներ: Թեև խոսքի արտաբերման անհատական առանձնահատկությունները բնական են, լեզուն այնուամենայնիվ ունի արտասանական նորմեր, որոնք ապահովում են հաղորդակցման միասնականությունը և պետք է լինեն լեզուն տիրապետող հանրության բոլոր անդամների լեզվամտածողության հիմքում [1]: Սերիալային հերոսները՝ որպես հանրային դաշտում «գործող» և լայն լսարան ունեցող կերպարներ, կրում են այդ նորմերի պահպանման պատասխանատվությունը: Սակայն սերիալներում արձանագրված արտասանական կոպիտ շեղումները՝ «թե՛Ռապիա», «հիս՛Օերիա», «սա՛Ռֆետկա», «վար՛Քաբեկեյ» և այլն, վկայում են հայերենի ուղղախոսական նորմերի թերագնահատման մասին. այն նորմերի, որոնց սահմանագծմանն ու հիմնավորմանը լայնորեն անդրադարձել են Դ. Գյուրջինյանը [3], Հ. Բարսեղյանը [2] և այլ լեզվաբաններ:

Բացի վերոգրյալից՝ հատկապես «Սիրելի Սահմի» հեռուստասերիալում նկատվում է օտարաբանությունների առատ կիրառություն, որը, ըստ երևույթին, ծառայում է ժամանակակից երիտասարդների խոսքի տիպականացմանը: Թեպետ «Կախվածություն» և «Երջանկության մեխանիկա» սերիալներում ևս հերոսներն իրենց խոսքում օգտագործում են օտարաբանություններ (Էսօր իվենթ՝ ունենք («Կախվածություն», սերիա 6)), սակայն դրանք չեն դառնում կերպարների խոսքի բնորոշ հատկանիշ:

Կարևոր է նկատել, որ «Սիրելի Սահմի» հեռուստասերիալում օտարաբանությունների քանակը սերիայից սերիա զգալիորեն նվազում է: Եթե երրորդ սերիայում արձանագրվում է շուրջ 30 օտարաբանություն, որոնցից տասը՝ «օքեյ» բառի կրկնվող կիրառություններ, ապա հաջորդող սերիաներում դրանց թիվը կտրուկ նվազում է: Այսպես, հինգերորդ սերիայում ընդհանուր հաշվով կիրառվում է ընդամենը 8 օտարաբանություն (որից 4-ը՝ «օքեյ» բառը): Հաշվի առնելով նաև սերիաների տևողությունը՝ համապատասխանաբար 43 և 28 րոպե, կարելի է արձանագրել, որ երրորդ սերիայում օտարաբանությունները հայտնվում են միջինում 1,4 րոպեում մեկ անգամ, մինչդեռ հինգերորդում դրանց միջև ընկած միջակայքը ավելանում է ավելի քան կրկնակի՝ հասնելով շուրջ 3,5 րոպեի:

Ըստ էության, սերիալում օտարաբանությունների կիրառության աստիճանական նվազումը պայմանավորված է գլխավոր հերոս Միհրանի հայտնվելով. կերպար, որը, ըստ սյուժեի, տեղափոխվել է անցյալից և խոսում է դասական գրական հայերենով: Միհրանի ներկայությունը դրական ազդեցություն է թողնում ոչ միայն մյուս հերոսների մտածելակերպի և արժեհամակարգի, այլև նրանց խոսքի մշակույթի վրա: Թեպետ սերիալում առերևույթ տրվում է հակադարձ ենթատեքստ՝ թե Միհրանը պետք է «սովորի» մերօրյա խոսքը, իրա-

կանում հենց մյուսներն են աստիճանաբար հարմարվում նրա լեզվամտածողությանը: Օրինակ՝ հինգերորդ սերիայում Ալեքսանդրը՝ գլխավոր հերոսուհու եղբայրը, «սուտկա» բառի կիրառման ժամանակ բախվում է Միհրանի անտեղյակությանը, ինչից հետո ինքն է ընդգծում. «Այ, որ հետո շատ շփվեւ, կամաց-կամաց հայերենդ կբացվի»: Սակայն դիտորդին ակնհայտ է դառնում հակառակ գործընթացը՝ հենց Ալեքսանդրն ու մյուս հերոսներն են սկսում ավելի մաքուր հայերենով խոսել:

### **Մերիալային խոսքի լեզվառճական դրսևորումներն ու ներգործական հնարավորությունները**

Մերիալային խոսքի կառուցվածքային և նորմատիվ շեղումները ոչ միայն հետաքրքրություն են ներկայացնում լեզվաբանության տեսանկյունից, այլև լեզվառճական դրսևորումների կրողներ են և ազդում են արտահայտչականության, հոգեբանական ներգործության և հեռուստադիտողի ընկալման վրա:

Մերիալի լեզվառճական առանձնահատկությունների վերլուծությունը առավել ամբողջական է դառնում, երբ այն համադրվում է միջազգային փորձի հետ, ինչը թույլ է տալիս բացահայտել տեղական և գլոբալ շեշտադրումների փոխհարաբերությունները: Այսպես, ամերիկյան սերիալների ուսումնասիրությանն առնչվող հոդվածում առանձնացվում են հետևյալ լեզվական հատկանիշները՝ հատուկ ընտրված բառապաշար, բազմիմաստություն, ոճականորեն գունավորված բառերի օգտագործում, բառերի ոչ ուղիղ իմաստով գործածություն՝ պատկերայնությունը ուժեղացնելու համար, ինչպես նաև իդիոմների հաճախակի կիրառություն [8]: Լեզվական նշյալ հատկանիշներով կարելի է բնութագրել հատկապես «Երջանկության մեխանիկա» հեռուստասերիալի հերոսների խոսքը: Այսպես՝ հատկապես սերիալի գլխավոր հերոսի՝ Ռուբենի հայրն ու եղբայրը իրենց խոսքը հանգավորելու և բարեհունչ դարձնելու նպատակով օգտագործում են քերականական գուգաձևություններ՝ ոճական արժեք հաղորդելով և՛ համապատասխան բառնորտությանն ու բառակազմությանը, և՛ բառերի հնչյունական կազմին: Հերոսների խոսքը առավել ազդեցիկ է դառնում նախադասության ու բառակապակցության շրջուն շարադասության, միակազմ անդեմ նախադասությունների շնորհիվ, ընդ որում՝ բայական անդեմ նախադասությունները նպաստում են հերոսի հոգեվիճակի պատկերմանը, նրա խոսքին հաղորդում է այլաբանական իմաստ, ասելիքը դարձնում առավել հուզական, դարձնում խորքային ու ներգործող: Բերենք ասվածի մասին փաստող մեկ օրինակ՝ *«Մարդուն քիչ բան է պետք, որ փնտրի ու գտնի, որ սկզբի համար մի ընկեր լինի, մի թշնամի... Մարդուն քիչ բան է պետք... Որ կածանը հեռու տանի, մայրը ողջ լինի, երկար ապրի: Մարդուն քիչ բան է պետք... Լռություն՝ ամպրուպից հետո, մշուշի կապույտ կտոր, մի կյանք, մի մահ ու մի մոլորակ: Առավոտյան թարմ լուրեր՝ մարդկությանը խառնվելու համար: Դե երազին հասնելու համար գուցե նաև ճանապարհի՝ դեպի աստղեր: Իրապես սա շատ չէ: Գուցե մեծ չէ պարզեր, բայց իսկապես որ մարդուն շատ բան պետք չէ, միայն թե ինչ-որ մեկը նրան սպասի»:* Հաճախ գլխավոր հերոսի հայրը՝ Արտաշես Խրիմյանը, որդու հետ զրույցներում նաև մեջբերում է հայ մեծանուն գրողների ստեղծագործություններից հատվածներ՝ այդ կերպ մեծացնելով ոչ միայն խոսքի ներգործության ուժը, այլև խորիմաստ, պատկերավոր դարձնելով ասելիքը: Այս իմաստով այն ունի նաև կրթական գործառույթ. մեջբերելով գրողների գործերը՝ հերոսը առիթ է ստեղծում վերաբժանելու դրանք, ներկայացնելու լայն լսարանին:

Մերիալային խոսքի լեզվառճական դրսևորումների վերլուծությունը հատկապես հետաքրքրական է «Միրելի Սահմի» հեռուստասերիալի օրինակով: Կերպարների խոսքը ոչ միայն արտահայտչականության, այլև ոճաբանական նորմերի պահպանման տեսակետից կարևոր եզրակացություններ կատարելու հնարավորություն է ընձեռում: Գլխավոր հերոս Միհրանի լեզվամշակութային առանձնահատկությունները պայմանավորում են «Միրելի Սահմիի» լեզվական որակի բարձր մակարդակը: Նրա խոսքում գերակշռում են դասական

հայերեն բառեր՝ հայրիկ, տանտիրուհի, մագաղաթ, ուսեստ, դեռատի և այլն, որոնք ոչ միայն նշանավորում են կերպարի պատկանելիությունը 19-րդ դարի մշակութային միջավայրին (այսուհետ՝ մոտ 1840-ական թվականներ), այլև հանդես են գալիս որպես արժեքային հղումներ՝ վկայելով հերոսի մշակութային և բարոյական հիմքերի մասին: Այս առումով Միհրանի խոսքը հակադրվում է մյուս սերիալների լեզվառճական միտումներին՝ հանդես գալով որպես նորմատիվ և գեղարվեստական լեզվի համադրության օրինակ:

«Գախվածություն» հեռուստասերիալի լեզվաբանական առանձնահատկությունների քննությունը, հակառակը, ցույց է տալիս, որ դրա խոսքի մշակվածությունը բավարար չէ՝ ստանդարտ լեզվաբանական նորմերի պահպանության, ոճաբանական ճշգրտության առումներով: Սա արտահայտվում է հերոսների խոսքում գերակշռող ժարգոնային ու կաղապարային ձևերով, հասարակաբանությունների և օտարաբանությունների լայն կիրառմամբ (օրինակ՝ «մեզ չեն կարենա քցեն» (Մերիա 6), «յանիմ» (Մերիա 4)): Նման լեզվական ընտրությունները ուղիղ ազդեցություն են ունենում հերոսների կերպարների ոճի ու կերպարի ընկալման վրա: Բացի դա՝ սոցիալական ու նորմատիվ նպատակների՝ օրինակ՝ հասարակության շրջանում թմրանյութերի շրջանառության կանխարգելման համատեքստում, երկրորդական նշանակություն են ստանում այլ պարտադիր գործառնություններ, ինչպիսին է մայրենիի անադարտ պահպանությունը: Ավելին, այս բազմասերիանոց դրամայում լեզուն որպես դիտողի վրա դրական ներգործության գործիք չի կիրառվում:

Ասվածը դիտարկենք խոսքի դրսևորման առանձին ձևերում:

### **Մենախոսություններն ու երկխոսությունները՝ ներգործական կառուցվածքներ**

«Գախվածություն» հեռուստասերիալում յուրաքանչյուր սերիալից առաջ ներկայացվում է մարդկային մի պատմություն (այս առումով նման է «Երջանկության մեխանիկային»), որտեղ թմրանյութեր օգտագործած մարդիկ պատմում են, թե ինչպես են ընկել կախվածություն մեջ՝ կարծես հեռուստադիտողին գոուշացնելով, որ ամենասովորական թվացող իրավիճակները կարող են հետագայում թմրանյութեր օգտագործելու հավանական պատճառ դառնալ: Ներկայացվող պատմությունները, որպես մեդիատեքստեր, ընդհանուր առմամբ, հեշտ ընկալելի են, սակայն երբեմն հասնում են պարզունակության: Բացի վերոգրյալից՝ դրանք չունեն տրամաբանական կառուցվածք, հարուստ են լեզվական սխալներով, օտարաբանություններով, խոսակցական բառերով, հասարակաբանություններով, կաղապարային արտահայտություններով, ժարգոնային, ավելորդ բառերով ու արտահայտություններով, անհարկի ներդրյալ միավորներով. *«Գործից նոր էին հանե, ուրիշ գործ էլ չէի կարում գտնեի, երկրից գնալ էլ չէի կարա, հաստատ, որովհետև ո՛չ կրթություն ունեի, ո՛չ էլ բարեկամ կամ հարազատ: Մի խոսքով ընգերներս էլ դրա մեջ էին, ասում էին լավ ա, լավ ա, չգիտեմ: Յանիմ ասում ա՝ մի քիչ երկար ապրենք կամ կարճ ապրենք, չգիտեմ, ասումա՞՞ դրա մեջ ա լրիվ ամեն ինչը: Բայց դե, ասում էին՝ հաճույք կա դրա մեջ, բայց վապշե ոչ մի հաճույք չկա դրա մեջ, ու էս ամեն ինչը փոխեց սող ցավի, ահավոր ցավի»* [11]: Թեպետ լեզվական այս սխալները ընդգծվում են հենց սերիալի սկզբում հնչող մենախոսություններում, այնուամենայնիվ, գլխավոր հերոսների խոսքը ևս գերծ չէ նման սխալներից:

Բացի վերոնշյալից՝ խոսք-կաղարային կոմպոզիցիայի և տեսողական լուծումների միջև նկատվում է անհամապատասխանություն. մթության մեջ երևացող կնոջ կամ տղամարդու կերպարանքը խոսում է փոխված ձայնով՝ ներկայացնելով իր պատմությունը: Երբեմն, սակայն, ձայնային փոփոխություններ ընդհանրապես չեն կատարվում: Եթե դա պայմանավորված է նրանով, որ հերոսը չի հրաժարվում նույնականացումից, ապա, միևնույն է, հեռուստադիտողի համար մնում է անհասկանալի, թե ինչու է այդ մոտեցումը կիրառվում ոչ բոլոր դեպքերում: Ձայնային տարբերությունը երբեմն դիտվում է որպես ինքնանպատակ հնարք, ինչը կարող է նվազեցնել պատմությունների իրատեսական ընկալումը, տպավորություն ստեղծել, թե ներկայացված պատմությունները հորինվածքներ են (նկ. 1):



**Նկար. 1 «Կախվածություն» սերիալի սկզբում ներկայացվող մենախոսության ուղեկցվող կարդ**

Ի հակադրություն վերոնշյալի՝ «Երջանկության մեխանիկա» հեռուստասերիալում մենախոսական ոճով ներկայացվող պատմությունները արդեն դառնում են միջոց՝ փոխանցելու այն ուղերձները, որոնք ցանկանում են փոխանցել սերիալ արտադրողները: Ավելին՝ սերիալում խոսքի դրսևորման հենց մենախոսական ձևում ընդգծվում են արտալեզվական այն միջոցները, որոնք մեծացնում են հեռուստադիտողի վրա ազդեցություն ունենալու հավանականությունը՝ միջավայրը, մենախոսողի կերպարը և այլն [1]:

Այսպես, «Երջանկության մեխանիկա»-ում յուրաքանչյուր սերիա սկսվում է գլխավոր դերակատարներից մեկի բարձրաձայն խոհերով՝ ներկայացնելով, թե երջանկության ինչ-պիսի պատկերացումներ գոյություն ունեն առհասարակ: Դրանք, ներկայանալով առօրյա խոսակցական ոճով, իրականում կրում են խոր իմաստային շերտեր, որոնց ըմբռնումը պահանջում է հեռուստադիտողից ոչ միայն ուշադրություն, այլև որոշակի կենսափորձ և մտավոր պատրաստվածություն՝ փոխանցվող ուղերձները հասկանալու և վերծանելու համար. «Շատերը մսխում են այն փողերը, որը իրենք չեն վաստակել: Օախսում են դրանք այն իրերի վրա, որը իրենց պետք էլ չեն, միայն այն բանի համար, որ տպավորիչ լինեն ուրիշների աչքերում, նրանց մոտ, ում նրանք չեն հավանում: Ու այդ մարդկանց երջակությունն ունի այլ մեխանիզմ: Այդ երջանկությունը սնվում է սեփական ստեղծությունից, որտեղ դիմացինի ստորացումը դառնում է սնունդ՝ փտած հոգու խրախճանքի: Դիմացինի դժբախտությունը երջանկություն.... Նրանց հունից հանելու մի ձև կա՝ ինչքան հանդարտ ես, հավասարակշռված, այնքան մեծ է դիմակայելու պոտենցիալը, և առավել մեծ կլինի հաջողությունը: Մտքի անասանությունը իմաստության մեծագույն գանձն է» [10]: Չնայած ասելիքը պարունակում է գաղափարական խոր ենթատեքստ, միևնույնն է, այն դառնում է հասկանալի. հերոսների՝ տեսալսողի առաջ մենախոսելը ստեղծում է հեռուստադիտողի հետ դեմ առ դեմ զրուցելու պատրանք և մեղմում հայտնած մտքի անհասկանալի լինելը:

Ելնելով մենախոսության դրամատիկական գործառույթներից՝ 16-մասանոց սերիալի բոլոր մենախոսություններում համադրվում են տեխնիկական և քնարական ձևերը: Այս հնարքով ներկայացվում է ոչ միայն հերոսի պատմությունը, այլև բացահայտվում են նրա հուզական ապրումները: Դրանք առավել ակնառու են դառնում ծխելու տեսարաններում, որտեղ հերոսի միմիկան, արցունքոտ հայացքը և նյարդային շարժումները խորացնում են հոգեբանական ներգործությունը՝ նպաստելով ներքին ապրումների ընկալմանը (բոլոր սերիաները սկսվում են «Ֆիլմում կան ծխելու կամ ծխախոտային արտադրանքի օգտագործման դրվագներ: Առողջապահության նախարարությունը զգուշացնում է՝ ծխելը վնասակար է առողջությանը» գրությամբ, ինչը օրենքի պահանջ է) (նկ. 2):



**Նկար. 2 «Երջանկության մեխանիկա» սերիալի սկզբում ներկայացվող մենախոսությանն ուղեկցվող կադր**

«Միրելի Սահմի» հեռուստասերիալում, հակառակ «Երջանկության մեխանիկայի», երկխոսական կառույցներն են դառնում հիմնական միջոցը հաղորդակցական դինամիկան և հաղորդակցության մշակույթը ներկայացնելու համար: Հոգեբան, սոցիոլոգ Ալբերտ Նալչաջյանի դիտարկմամբ՝ «Քիչ չեն այն մարդիկ, ովքեր վատ գրուցակիցներ են հենց այն պատճառով, որ չեն գգում, թե երկխոսության ընթացքում ինչի մասին պետք է ընդարձակ խոսել և ինչի մասին՝ միայն մեկ-երկու ակնարկով՝ առանց մանրամասնորեն շարադրելու այն, ինչ հայտնի է խոսակցին և հասկանալի է իրադրությունից և կոնտեքստից» [4]: Այս տեսանկյունից՝ նշված սերիալում երկխոսական կառույցները, որպես իրադրական ձևեր, կիրառված են բնական և հավասարակշռված կերպով. գրուցակիցների հարցուպատասխանները, խոսքային դադարներն ու երբեմն դիտավորյալ լռությունը ունեն տրամաբանական հերթագայություն և նպաստում են կերպարների հոգեբանական նկարագրի լիարժեք բացահայտմանը:

«Միրելի Սահմի» հեռուստասերիալում սերիալային արժեքների փոխանցման կարևոր միջոց են հռետորական հարցերը, որոնք նպաստում են երկխոսության հուզական լարվածության և արտահայտչական ուժի ձևավորմանը: Ինչպես նկատում է լեզվաբան Իրինա Գոլուբը, հռետորական հարցը խոսքային միջոց է, որի նպատակը ոչ թե պատասխանի ստացումն է, այլ ուշադրության կենտրոնացումը և լսողի հուզական ներգրավումը. այն «սոսկ ներքաշում է ընթերցողին դատողության կամ ապրումի մեջ, նրան դարձնում ավելի ակտիվ՝ կարծես ստիպելով, որ ինքը եզրակացություն կատարի» [5]: Այս դիտանկյունից՝ սերիալի երկխոսություններում հռետորական հարցերն օգտագործվում են ոչ միայն հուզական ինտենսիվության ուժեղացման, այլև կերպարների արժեքային դիրքորոշումների շեշտադրման համար:

Օրինակ՝ սերիալի հերոս Միհրանի խոսքում հռետորական հարցերի հաջորդականությունը արտահայտում է ոչ միայն ներքին բողոք և հիասթափություն, այլև ներկայացնում է արժեքային բախում ավանդական և ժամանակակից պատկերացումների միջև: Այսպիսով, հռետորական հարցերը դառնում են կերպարների աշխարհայացքային հակադրության ձևական արտահայտություն, որոնք միաժամանակ ապահովում են խոսքի դրամատիկական լարվածությունը և դիտողի ներգրավվածությունը.

*«- Ես թեզ խնդրեցի ոչինչ չանել, չէ՞: Ես ատում եմ, երբ ստիպված եմ ստել, դու դա գիտե՞ս:»*

*- Երավիճակն այլ էր:*

*- Ես գիտեմ իրավիճակն ինչպիսին էր, բայց կարելի էր, չէ՞, չխառնվել: Բա՞րդ էր եղբան:*

*- Այո՛, բարդ էր: Բարդ էր ինձ համար տեսնել, թե ինչպես են նստեցնում կնոջ արժա-*

նապատվությունը: Բարդ է... Սահմի՛, ես հասկանում եմ, որ ժամանակները փոխվել են, որ սա այլ աշխարհ է, սակայն ես չեմ կարողանում ընդունել, որ խեղաթյուրվել են մարդկային ամենապարզ արժեքները:

– Շատ ճիշտ ես: Լրիվ ուրիշ աշխարհ և սա, ու բոլորին չես կարողանա փրկել:

– Սա՞ է Ձեր ներկյան, որտեղ բոլորը բոլորին հեգնում են: Կանայք կիսամերկ մարմիններով նստած են գարեջրատներում ու փորձում են հավասարվել տղամարդկանց: Տղամարդիկ, ովքեր վախենում են պաշտպանել կանանց արժանապատվությունը: Եվ սա ձեզ դո՛ւր է գալիս:

– Միհրան, վաղուց կանանց համար մենամարտեր չեն ածում: Վաղուց արդեն պատշգամբների տակ սերենաղներ չեն երգում, գիտե՞ս: Ու վաղուց արդեն սիրո համար չեն մեռնում: Դու դա, այդ, չես հասկանում: Ուզես, թե չուզես, այո՛, դու լրիվ ուրիշ իրականության մեջ ես:

– Դրա՞ համար ես դու ուժեղ, դրա՞ համար ես մենակ՞ [12]:

Վերոնշյալ օրինակում, եթե հարցը չլիներ հռետորական ու Սահմին պատասխան տար, պապ գուցե շատերն սկսեին համակարծիք լինել դրա հետ կամ փորձեին հակառակվել Սահմիի տեսակետին: Իսկ այս դեպքում առանց որևէ ուղղորդումների հեռուստադիտողը սկսում է մտածել այն կերպ, ինչպես մտածում է Միհրանը. հռետորական հարցն առաջարկում է պատասխանի միայն մեկ տարբերակ:

Կարևոր մի նկատառում. ընտանիքին, ընտանեկան ու բարոյական արժեքներին վերաբերող ուղերձներ փոխանցելիս միմյանց հետ զրուցում են երկու տարբեր ժամանակաշրջանների հերոսներ և հնչեցնում հռետորական հարցեր՝ կրկին հեռուստադիտողին ստիպելով մտածել դրանց շուրջ, մինչդեռ մյուս դեպքերում ընտանիքի, ամուսնության մասին թեմաներ արծարծելիս զրուցակիցները թեման քննարկում են հարցուպատասխանի միջոցով, չկան առկախված պատասխաններ: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ:

Հեռուստասերիալում իդեալական արժեքներ կրող կերպարը Միհրանն է՝ տեղափոխված 19-րդ դարից, որ եկել է մերօրյա իրականություն՝ ցույց տալու այն, ինչը բարձր է, վեհ ու ընդօրինակելի, ուստի հեռուստադիտողը նրա և տարբեր կերպարների միջև տեղի ունեցող գրույցներից է, որ կարող է որևէ բան սովորել ու նրա արտահայտած մտքերն է, որ պետք է մտածելու տեղիք տան: Մյուս դեպքերում զրուցում են մեր ժամանակակիցները, որոնց հետ գրեթե նույնանում են իրականության նկատմամբ ունեցած մեր և նրանց պատկերացումները: «Երջանկության մեխանիկա» և «Կախվածություն» հեռուստասերիալների որոշ սերիաներում թեպետ հնչում են հռետորական հարցեր, բայց դրանք մեծ թիվ չեն կազմում և չունեն նույն նշանակությունն, ինչ «Միբելի Սահմի» հեռուստասերիալում են:

### **Եզրակացություն**

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ հեռուստասերիալները գործում են որպես արժեքային և հաղորդակցական նշանակության մեդիատեքստեր, որոնց լեզուն հանդես է գալիս գաղափարական հաղորդակցության և սոցիալական իմաստների ձևավորման առանցքային գործոնի դերում: Այն կողավորում է արժեքային նարատիվներ, ձևավորում լեզվական սովորություններ, վարքային մոդելներ և հանրային պատկերացումներ՝ վերածվելով մշակութային ինքնության վերարտադրության միջոցի:

Մերիալային հերոսների խոսքի կառուցվածքում նկատվում են առօրյա խոսքային կաղապարների, օտարաբանությունների և հուզական գերարտահայտչության միտումներ, որոնք մի կողմից նպաստում են հաղորդակցության բնականությանը, իսկ մյուս կողմից կարող են աղճատել արժեքային նարատիվների խորքային ընկալումը: Լեզվական կաղապարներն ու արտահայտչամիջոցները, ինչպես նաև մենախոսության և երկխոսության կառուցվածքային առանձնահատկությունները ունեն լսարանի ընկալումները ուղղորդելու և արժեքային կողմորոշումները վերարտադրելու մտայնություն: Դրանք կարող են խթանել կամ

հակառակը՝ խեղաթյուրել լեզվամտածողությունը՝ կախված յուրաքանչյուր դեպքում խոսքի որակից և հաղորդակցական միջավայրից:

Վերլուծված սերիալների համեմատությունը ցույց է տալիս, որ լեզվական մշակվածության բարձր մակարդակը նպաստում է հաղորդվող ուղերձների խորքային ընկալմանը և բարոյական արժեքների ներքինացմանը, մինչդեռ լեզվական աղավաղումները, օտարաբանությունների գերօգտագործումը և խոսքային սխալները նվազեցնում են հաղորդակցության ներգործության արդյունավետությունը և խաթարում են լեզվամշակութային ամբողջականությունը:

Ստացված արդյունքները վկայում են, որ մեդիաարտադրության որակի բարձրացման և հանրային հաղորդակցության մշակութային պատասխանատվության ամրապնդման համար անհրաժեշտ է մեդիագրագիտության և լեզվամշակութային հսկողության ինտեգրում՝ որպես մեդիափորձի բաղադրիչ: Հեռուստասերիալների լեզվառճական և հարալեզվական առանձնահատկությունների համակարգային վերլուծությունը բացում է միջդիսցիպլինար հետազոտությունների նոր հորիզոններ՝ միավորելով մեդիագիտության, լեզվաբանության, սոցիոլոգիայի և հոգեբանության տեսական մոտեցումները: Այդպիսի գիտական դիտակետը նպաստում է հայոց լեզվի մշակութային արժեքի վերարժևորմանը և մեդիադաշտում դրա կիրառության կատարելագործմանը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-92>

### Գրականություն

1. Ավետիսյան Յ. Ս., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2019:
2. Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երևան, 1973:
3. Գյուրջինյան Դ. Ս., Հայերեն բառարան-տեղեկատու, 2003:
4. Նալչաջյան Ա. Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1997:
5. Голуб И. Б. Стилистика русского языка, 2010.
6. Добросклонская Т. Г. Медиалингвистика: Системный подход к изучению языка СМИ, Москва: Флинта, 2008.
7. Кудрина Л. В. Сериал как медиатекст: проблемные аспекты. Медиаскоп. 2022. Вып. 3-4. Режим доступа: <http://www.mediascope.ru/2777>
8. Луценко Р. С., Скрипкина Е. Н. Языковые характеристики и особенности текста сериала. Пенза: Пензенский государственный университет, 2012.
9. Գրիգորյան Ե., Գործնական աջակցություն ֆիլմերի թարգմանիչներին (1-ին մաս), Լեզվի կոմիտե:
10. Երջանկության մեխանիկան, մաս 3, Armenian Public TV, 15.09.2021, <https://www.youtube.com/watch?v=XTsrnRL4xTo&list=PLYMtfmOzqv25D5VzvFyIgstKAncWRtSkE&index=3>
11. Կախվածություն, Shant TV, 23.11.2023, <https://www.youtube.com/watch?v=F7pbpQZAVN0>
12. Սիրելի Սահմի, Սերիա 3, PanArmenian TV, 12.03.2024, <https://www.youtube.com/watch?v=V0zZRhbJWnE&t=2130s>

## Средства воздействия в телесериалах: клишированные выражения и коммуникация

*Менемшян Анаит,  
Мкртчян Марине*

### Резюме

**Ключевые слова:** медиавоздействие, медиалингвистика, языковые клише, стилистические отклонения, медиатекст, ценностные нарративы

Статья посвящена изучению влияния телесериалов как медиатекстов, которые выполняют не только развлекательную функцию, но и служат важным инструментом формирования ценностей, социальных норм и языковых практик. Опираясь на эмпирические данные опроса, проведённого среди 100 молодых людей в возрасте 18-25 лет, исследование сосредоточено на наиболее популярных армянских телесериалах: «Дорогая Сахми» (ATV), «Механика счастья» (Общественное телевидение Армении) и «Зависимость» (Shant TV). Анализируются стилистические и коммуникативные особенности данных сериалов, особое внимание уделяется языковым клише, выразительным средствам, а также структуре диалогов и монологов. Результаты показывают, что короткометражные сериалы, такие как «Дорогая Сахми» и «Механика счастья», отличаются более высоким языковым уровнем: лексика, синтаксис и стилистические приёмы целенаправленно используются для передачи нравственных ценностей. В отличие от них, многосерийная драма «Зависимость» отличается более низким уровнем языковой проработанности, включая заимствования, просторечия и ошибки, что снижает качество транслируемых посланий и может исказить армянское языковое мышление. Исследование подчёркивает теоретическую значимость анализа стилистических и паралингвистических элементов медиатекстов и практическую ценность его результатов для медиаобразования, журналистики и медиапроизводства.

## Means of Influence in Television Series: Formulaic Expressions and Communication

*Menemshyan Anahit,  
Mkrtychyan Marine*

### Summary

**Key words:** media influence, media linguistics, linguistic clichés, stylistic deviations, media text, value narratives

This article examines the influence of television series as media texts that function not only as entertainment, but also as powerful instruments for shaping values, social norms, and linguistic practices. Based on empirical data from a survey conducted among 100 young people aged 18–25, the study focuses on the most popular Armenian TV series: “Dear Sahmi” (ATV), “Mechanics of Happiness” (Public Television of Armenia), and “Addiction” (Shant TV). The research analyzes the stylistic and communicative features of these series, with particular attention to linguistic clichés, expressive means, and the structure of dialogues and monologues. The results show that short series such as “Dear Sahmi” and “Mechanics of Happiness” demonstrate a higher linguistic level, where vocabulary, syntax, and stylistic devices are purposefully used to transmit moral values. In contrast, the multi-episode drama “Addiction” demonstrates less linguistic elaboration, including borrowings, colloquialisms, and errors, which reduce the quality of conveyed messages and may distort Armenian linguistic thinking. The study highlights the theoretical significance of analyzing stylistic and paralinguistic elements in media texts and underlines the practical value of applying its findings in media education, journalism, and media production.

Ներկայացվել է 09. 09. 2025 թ.

Գրախոսվել է 17. 10. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Մակար Բարխուդարյանցի «Արցախ» աշխատությունը ադրբեջանական «աղվանագիտության» կեղծիքների հերքման համատեքստում**

*Մուսայելյան Սոնա*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-102>

**Հագուցային բառեր.** *Մակար Բարխուդարյանց, Արցախ, պատմական, աղբյուրագիտական և ստեղծագործական փաստեր, Ուլվիա Հաջինա, ադրբեջանական կեղծիք*

Հայագիտության մեջ Մակար Բարխուդարյանցի «Արցախ» գրքին անդրադարձել են Ա. Առաքելյանը [3, 72], Պ. Չոբանյանը [10, 7-15], Զ. Բալայանը [6, 604], Վ. Եղիազարյանը [8, 320], Թ. Մինայանը [9, 20] և այլք:

Ադրբեջանական «աղվանագիտությունը» սեփականում է ոչ միայն հայ մշակույթի նշանավոր գործիչներին՝ ներկայացնելով նրանց որպես աղվան, այլև կեղծում հայ հոգևոր ժառանգությունը՝ ավետարանների ու հիշատակարանների պատմական փաստերի խեղաթյուրմամբ ստեղծելով կեղծ գիտություն:

Ու. Հաջինան իր «Дезтнизация кавказских албан в XIX веке» գրքում խոսելով Մակար Բարխուդարյանցի աղվանական ծագման, աղվան հոգևորական լինելու, արցախյան եկեղեցիների ավետարանների և հիշատակարանների «աղվանական» լինելու մասին, երբեք չի անդրադարձնում այն հարցին, թե ում է Մակար Բարխուդարյանցը ընծայագրել իր «Արցախ» գիրքը:

Ավելին՝ անտեսելով կենսագրական փաստերը՝ Ու. Հաջինան Մակար Բարխուդարյանցին ներկայացնում է ոչ միայն որպես աղվան, այլև շարունակում, որ Մակար Բարխուդարյանցը փորձում է աղվանական մշակույթը ներկայացնել որպես հայկական. «Являясь одним из последних представителей албанского духовенства, уже подвергшегося процессу григорианизации и арменизации, М.Бархударянц в начале своего труда декларативно заявляет, что составил труд по истории 15-го округа «Великой Армении». Арцах, и пытается представить албанское духовно-культурное наследие как армянское» [12, 17]:

Հակառակ այս պնդման՝ Մակար Բարխուդարյանցը գրքի առաջաբանում նշում է՝ այն ընծայագրել է Վեհափառ Խրիմյան Հայրիկին. «...վասն որոյ բարութ համարեցի նուիրել Հոգեծին և Բազմերայիտ Հորդ իմոյ՝ «Արցախ»-ը, որ պատկերացնում է Մեծն-Հայաստանի 15 նահանգներից մէկի հայկական աւերակների և հնութեանց փոշիները և Յիսուս Քրիստոսի ձեռագիր աւետարանների յիշատակարանների փշրանքները:

Յուսալով արժանանալ ընդունելութեան և Հայրական օրհնութեան մնամ նուաստ որդի Ձեր հոգևոր Մ. Եպիսկոպոս Բարխուտարեանց» [4, Ա]:

Այնուհետև Մակար Բարխուդարյանցը իր ծննդավայրին ու ծագումնաբանությանը անդրադարձնում է «Արցախ» գրքում՝ տողատակի հղմամբ ներկայացնելով. «Գիւղունս ծնուած է և գրքիս հեղինակն. գիւղիս հանգստարանում հանգչում են իմ պապ Քեանդ-խուտա-Խաչատուր Բարխուտարեանցն իւր շատ քաջերով, իմ հայր Գրիգոր, իմ մայր Եղիաբէթ, իմ տատ Մարիամ, իմ հօրեղբարք Մկրտիչ, Մարգիւս, Թեոս, իմ վաղաթառամ եղբայր Ստեփան, բայց կենդանի են Աստուծոյ ամենակարող զօրութեամբ իմ մեծ եղբայր Կարապետն, փոքր եղբայր Յակովբն և իմ մեծ քոյրերս Անթառամն, Շահգասն և Հերիքնազն (վաղաթառամ վախճանուած է Պալլուճայում իմ միջակ քոյր Վառվառիան)» [4, 154]:

Թե ինչու է բնիկ արցախցի, ծնունդով խնածախցի Մակար Բարխուդարյանցին ադրբեջանցի գիտնականը ներկայացնում որպես աղվան, որն է գիտական հիմնավորում չի տալիս:

Ավելին՝ Ու. Հաջինան երբեք չի նշում, որ մահմեդականների ձեռքով են ոչնչացվում

պատմական հնություններն ու հիշատակությունները, նա շրջանցում է եղած փաստերը՝ առավելապես նախընտրելով որպես մեղավոր ներկայացնել կամ էջմիածնի հոգևոր միաբանությանը, կամ էլ արցախահայերին. «Будучи подведомственными с 1836 г. Армянской Эчмиадзинской Церкви, эти монастыри к концу XIX в. уже не имели никаких архивов и библиотек, все таинственно исчезло. Это было связано с тем, что сами монастыри физически уничтожались, разрушались, церковная служба в них не велась, практически прекратилась, а вся церковная, литература была ликвидирована» [12, 19]:

Հակառակ այս պնդման՝ Մակար Բարխուդարյանը նշում է՝ մեկ անգամ չէ, որ հայկական հնություններն ավիրվել ու կործանվել են մահմեդականների ձեռքերով. «Հայաբնակ էր գաւառս վաղուց. բայց հայկական հնութիւններն իսպառ անհետացած են **մահմետական քնակիչների ձեռնով**» [4, 27]:

Ավելին՝ մեծ թիվ են կազմում Մակար Բարխուդարյանցի վկայությունները մահմեդականների կողմից հայկական հնությունների ոչնչացման մասին, նույնիսկ «Օսմանյութիւններ» բաժնում է հեղինակը անդրադառնում մահմեդականների վայրագություններին. «Ոչ մի գաւառ զարդարուած չէ այնքան քարեայ խաչարձաններով, որքան Գարդման գաւառս և նոյն իսկ Գարդման աւանս: **Գեղեցիկ խաչարձաններով զարդարուած են կոտորած և ջարդած են մահմետականք**» [4, 431]:

Մահմեդականների կողմից հայկական հնությունների ոչնչացումը միայն մեկ նպատակ էր հետապնդում. առավելապես վերացնել հայկական Արցախի հնամենի մշակույթը, եկեղեցիները, խաչարձանները, ավետարաններն ու հիշատակությունները:

Ու. Հաջիևան շարունակում է համառորեն հակադրվել՝ ի պաշտպանություն մահմեդականների՝ իրեն բնորոշ ձևով կրկին շրջանցելով եղած փաստերը. «Приписать подобное изуродование и уничтожение евангелий отношению мусульман неправомерно, ибо, во-первых, М.Бархударянц в начале своего труда заявляет, что еще в 1828 г. все албанское церковно-культурное наследие было в цветущем состоянии, т.е. в прекрасной сохранности до Туркманчайского договора. Во-вторых, если бы мусульмане уничтожали бы евангелия, они уничтожили бы их целиком. Какой смысл мусульманам уничтожать колофоны, а сами христианские писания оставлять?! Армянская Эчмиадзинская Церковь, захватив албанское этнокультурное наследие, приступила к его полной трансформации в армянское, что выразилось также в физическом уничтожении албанских евангелий во всех монастырях и церквах Арцаха» [12, 25]:

Մինչդեռ Մակար Բարխուդարյանը ցավով արձանագրում է Արցախի պատմական հնությունների նկատմամբ կատարած վայրագությունների մասին՝ խոր ափսոսանքով նշելով. «Վանքեր, մատուռներ և բեմեր. կարծում եմ թէ ոչ մի նահանգ այնպէս հարուստ չէ այսպիսի սրբավայրերով ու ուխտատեղիներով, ինչպէս Արցախեան նահանգն. բայց եւ այնպէս ոչ մի նահանգի վանքեր, անապատներ եւ ուխտատեղիներ այնպէս բոլորովին զրկուած չեն իւրենաց բարոյական եւ նիւթական փառքերից, ինչպէս Արցախեան վանքերն եւ սրբավայրերը» [4, 5]:

Պարզ է՝ եղած փաստերն էլ բավարար չեն Ու. Հաջիևայի համար, որ շարունակի պնդել հայերի կողմից աղվանական մշակույթի ոչնչացման մասին: Մինչդեռ այլ է պատկերը իրականում, հայկական հնությունները ոչնչացվել են հիմնականում մահմեդականների ձեռքով: Բսկ Ու. Հաջիևան շարունակում է կրկնել. «Совершенно пагубно осмыслять наличие армяноязычной, но албанской по содержанию, эпиграфики в качестве армянской и доказывать ее принадлежность к армянскому этнокультурному наследию. Лишь в этом суть того, что надписи на албанских храмах Арцаха дошли до нас на армянском языке, а на албанском их постарались уничтожить» [12, 70]:

Կեղծարարությունների շարքը ավելի ուժեղ ու բովանդակային դարձնելու համար Ու.

Հաջիկան մեջբերում է կատարում Ի. Ճավճավաձեից [13, 13], անդրադառնում նաև վրաց ժողովրդին, բայց արդյունքում կրկին մեղադրում է հայերին՝ վրացական մշակույթը ոչնչացնելու համար. «Как нами было указано выше, армянские ученые, несомненно, не без поддержки Армянской Эчмиадзинской Церкви, на протяжении всего XIX в. подвергали критике и частичной трансформации и грузинское этнокультурное наследие. И.Г.Чавчавадзе писал, что «свидетелями, говорящими о грузинах, служат летописи и хроники. Армянские ученые отлично понимают, что если только эти данные не будут уничтожены, они ничего особенного не смогут присвоить себе в Грузии» [12, 44]:

Մեջբերում կատարելով Ի. Ճավճավաձեից, Ու. Հաջիկան կա՛մ չի ցանկանում, կա՛մ չգիտի, կա՛մ է չիմանալու է տալիս Ք. Վերմիշլի (Վերմիշյանցի) «Материалы для истории грузино-армянских отношений: Ответ на книжку кн. И.Г. Чавчавадзе: Армянские ученые и "вопиющие камни"» գիրքը, որում հեղինակը պատասխանում և փաստերով հերքում է Ճավճավաձեի տեսությունը. «Грузинские надписи армянскими учеными монахами тщательно собирались и даже печатались, и, возможно, раньше, самими грузинами, было уделено серьезное внимание на грузинские надписи. Такое же отношение приходилось наблюдать нам лично. Во время наших археологических поездок мы видели грузинские надписи в местностях, исключительно армянских населений, особенно в селе Кош, т. е. почти под боком Эчмиадзина, и если замечалось что-либо в армянах, местных и сопровождающих нас, так это было озлобление против следов временного грузинского господства в Армении. В Александропольском уезде в открытом поле был найден кусок каменного креста с интересной грузинской надписью, интересной по самому своему место-нахождению, и этот камень с грузинской надписью был подобран и спасен армянином для научных исследований. Мы это видели своими глазами. Строки эти, принадлежащие компетентному лицу, могли бы вразумить каждого непредубежденного читателя. Но видно есть уши, которые совершенно глухи ко всему, что только может служить в пользу доброго имени армян, и болезненно чутки к малейшему факту, способному их опорочить» [11, 72]:

Ու. Հաջիկայի կեղծարարությունը այնքան սնանկ է, որ չի դիմանում քննության, հերքվում է ինչպես հայերեն, այնպես էլ օտարալեզու արդյունքների փաստերի հիման վրա: Ք. Վերմիշլի գրքում մեծ թիվ են կազմում այն էջերը, որով հեղինակը հերքում է Ճավճավաձեի, արդյունքում անտղղակիորեն հերքվում է նաև Ու. Հաջիկայի տեսությունը:

Քանի որ Ու. Հաջիկան մշտապես շրջանցում է իրականությունը, նախընտրում ներկայացնել կոնտեքստից դուրս հատվածներ, նա նաև չի անդրադառնում Աղվանքի կաթողիկոսների ծագումնաբանությանը: Հատուկ ուղղվածությամբ հայ կաթողիկոսներին աղվան ներկայացնելը կրկին նպատակային է Ու. Հաջիկայի համար. «Теперь рассмотрим отдельные фрагменты из албанских евангелий, которые содержат ценную информацию об албанском католикосате. Благодаря колофонам становятся известны имена албанских католикосов, возглавлявших Албанскую Апостольскую Автокефальную Церковь в момент написания того или иного евангелия: (X' Ованнеса (1579 г.), Григория (1645-1650 гг.), Петроса (1663-1671 гг.), Еремии (1680 г.), Есайи (1717 г.), Нерсеса (1742-1745 гг.), а также имена некоторых епископов (Саркиса, епископа Хаченского из рода Гасан-Джалала (начало XIV в.); X'Ованнеса, епископа Велико-Сюникского Татевского монастыря (1585 г.).» [12, 34]:

Ազգությամբ հայ Ջալալի սերնդից վերոնշյալ կաթողիկոսները ըստ Ու. Հաջիկայի աղվան են: Թե ինչ տրամաբանությամբ են աղվան հռչակվում այս կաթողիկոսները, պարզ չէ:

Եվ դա այն դեպքում, երբ Հասան Ջալալին հայ է անվանել Կիրակոս Գանձակեցին. «...որին փաղաքշանքով Ջալալ էին կոչում, աստվածապաշտ, երկյուղած ու պարկեշտ մարդ էր, ազգությամբ հայ» [7, 257]:

Ի լրումն վերոնշյալի՝ Դ. Ալիշանը իր «Արցախ» աշխատության մեջ գրում է. «Իսկ Աղվանքի վերջին կաթողիկոսներից և վանքի առաջնորդներից շատերը Ջալալի սերնդից են: Դրանք են՝ Սարգիսը՝ 1556-ին. Գրիգորը, որը հետո ուրացող դարձավ:

Դավիթ Արջաձորեցին, որին խեղդեցին խաչենցիները՝ կախելով եկեղեցու զանգակասնից:

Փիլիպպոսը.

Հովհաննես Ը-ն.

Գրիգոր Դ-ն՝ 1634.

**Պետրոսը՝ 1653.**

Սիմեոնը՝ 1675.

Երեմիան՝ 1676.

Եսային՝ 1702, որը գրի առավ ժամանակի դեպքերը:

Ներսես Ե-ն՝ 1706 թ., որը Եսայու հակառակորդն էր:

Իսրայելը և Հովհաննեսը՝ 1763.

Սարգիս Բ-ն՝ աթոռի հակառակորդը, 1794, որի ժամանակ, 1815 թ., վերացվեց Աղվանքի կաթողիկոսության անունը և տրվեց մետրոպոլիտի աստիճան: 1838 թ. նրան հաջորդեց Բաղդասար Հասան-Ջալալյանը, որը արքեպիսկոպոսական աթոռը տեղափոխեց Ծուշի» [1, 88]:

Արցախյան եկեղեցիների և վանքերի ավետարանների ու հիշատակարանների սեփականումը կամ աղվանական ներկայացնելը Ու. Հաջինայի հիմնական նպատակներից մեկն է: Նա նպատակային ձևով է սեփականում արցախյան ավետարանները՝ նախ ներկայացնելով որպես աղվանական, այնուհետև՝ որպես աղբբեջանական: Ու. Հաջինան, մեջբերում կատարելով Մ. Բարխուդարյանցից, նշում է. «2. «окончено сие евангелие в 1108 (1659) г. в стране Гянджа, в селе Караат под покровительством Пресвятой Богородицы во времена католикоса Агвании владыке Петросе» (из церкви св. Богородицы XVII в. в городке Аветараноц, в округе Варанда» [12, 27]:

Խոսքն Աղվանքի այն նույն տեր Պետրոսի մասին է, որ Ջալալի սերնդից է: Իսկ Մակար Բարխուդարյանցը նշում է. «...եղև աւարտ սուրբ աւետարանիս ի յերկիրս Գանջայ ի գիւղս, որ կոչի Քարահատ ընդ հովանեաւ սուրբ աստուածածնիս ի ժամանակս Շահ Ապախին փոքոյ և ի կաթողիկոսութեան հայոցս Աղուանից տեառն տէր Պետրոսի մաքրասուն և սուրբ հայրապետի և կրկին լուսավորչի, որ և խնամօքն Աստուծոյ» [4, 96]:

Ինչպես արդեն նշել ենք, Ու. Հաջինան շատ դեպքերում աղավաղում է նաև ավետարանների բովանդակությունը՝ առավելապես համապատասխանեցնելով իր գրքի բովանդակությանը:

Բացի այն, որ Ու. Հաջինան մեջբերում է ավետարանի միայն ավարտուն կամ վերջնական մասը, նա չի նշում որևէ կոնկրետ փաստ, թե ինչու է այս կամ այն ավետարանը աղվանական: Շատ դեպքերում աղբբեջանցի գիտնականը որպես փաստ ընդունում է միայն «աղվանական» եզրույթը:

Մակար Բարխուդարյանցը տալիս է նաև նույն ավետարանի սկիզբը. «Սուրբ աւետարան սրբագիր և ռսկեգօծ **վախմ /իբրև բարեպաշտական նւէր եկեղեցուն կտակուած հող կամ կալուած/** [5, 295] և յիշատակ է Աբրահամ պարոն-Տերին, որ տվան /տվեցին/ Մէլիք Պաղուն կուսակրոն դստերանցն Հռուբսիմէին և Դաւլաթին և Շահանդուխտին ձեռքն ի վայելումն...» [4, 96]:

Հայկական Արցախի հոգևոր ու մշակութային ժառանգությունը սեփականելու համար Ու. Հաջինան որպես աղվան է ներկայացնում ոչ միայն իրենց հայ համարող մշակույթի ու կրոնական երևելի գործիչներին, այլև արցախյան վանքերի ու մատուռների ավետարաններն ու հիշատակարաններն է փորձում ներկայացնել որպես աղվանական:

Այդ առումով Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու գրչագրերը՝ ավետարանները հիշատակելիս՝ Ու. Հաջինան 12 ավետարաններից մեջբերում է միայն առաջին, երկրորդ, չորրորդ, հինգերորդ ավետարանները. այսինքն նրանք, որոնցում կա աղվանական եզրույթը. «По словам М. Бархударянца, в Соборной церкви Все-спасителя в Шуше, построенной в 1868-1887/1888 гг., имелись 12 евангелий, из которых, судя по их памятным записям, 4 были албанские, ибо они были написаны в округах Вайоцдзор, Хачмаз, Нахчеван. Относительно других 4-х евангелий источник сообщает, что они были написаны в гг. Феодосия, Константинополь, Ван: «первое евангелие пергаментное написано в г. Феодосия, второе – в столице Константинополе... в 1105 (1656) г.»; «из памятной записи четвертого евангелия следует: «ныне завершено сие святое евангелие... в городе Ван в 909 (1460) г.»; колофон пятого евангелия гласит: «...принял сие евангелие и милостью Божьей завершил в городе Ван в 910 (1461) г. в патриаршество тер Захария, который воссел на престол св. Просветителя в Эчмиадзине» [12, 30]:

Հիմնական նյութի խեղաթյուրումը, կարճ մեջբերումներ անելն արդեն հիմնանպատակ է դարձել աղբբեջանցի գիտնականի համար: Նա այս ձևով փորձում է ներկայացնել չեղած իրողություններ՝ աղբբեջանական կեղծ աղվանագիտությունը նոր փաստերով հարստացնելու համատեքստում: Բայց ասվածը ավելի հասկանալի դարձնելու համար մեջբերենք Մ. Բարխուդարյանցի ներկայացրած 12 ավետարանների կարևոր հիշատակությունները, որոնցում չի գտնվի գեթ մեկ փաստ վերջիններիս աղվանական լինելու մասին:

Առաջին ավետարանում նշվում է «ի հայրապետութեան Հայոց տեառն Յակոբայ և յեպիսկոպոսութեան ամենայն հիւսիսական կողմանց տեր Խաչատուր արհնեալ քահանայապետի» [4, 139]:

Երկրորդ ավետարանը դազանչեցի Նարինեն ընծայում է եկեղեցուն, յոթերորդ ավետարանը գրվել է Արցախի Վարանդա գավառի Խաչմաչ գյուղում. «Աւետարան միջակ դիրքով, թղթի վերայ, գրուած է Արցախի Վարանդայ գաւառի Խաչմաչ գիւղում Աղեքսանդր եպիսկոպոսի ձեռնով ՌՇԸ. թուիս Հայոց, իսկ ստացած է Թաղէտս քահանան: Բոլորովին անճաշակ են պատկերներն» [4, 139]:

Ուշագրավ է հատկապես 11-րդ ավետարանի հիշատակումը, որով հերքվում է Ու. Հաջինայի այն պնդումը, թե հայկական ավետարանները «աղվանական» ծառանգություն են: Ու. Հաջինան այս պնդումը ներկայացնում է առանց որևէ համոզիչ պայացույցի՝ պարզապես կրկնելով այն կեղծ թեզերը, որոնք բացահայտորեն չեն հաստատվում որևէ աղբբուրով: Նա չի տրամադրում փաստական նյութ, որը կվավերացներ իր տեսությունը, և գրքի ողջ բովանդակությունը չի հիմնվում իրական պայացույցների վրա. **«Բագում արիւն անմեղաց եղաւ (հեղաւ) երկրի, անթիւ գիրք և անմեղ գերիք անկան ի ձեռն անօրինաց: Եկեղեցիք խախթեալ և խաւարեալ ամայի մնացին: Երկրորդ Օսմանլուն եկաւ կրկին, բագում արիւն-հեղութիւն եղև. Գերիսն անթիւ եղև ի ձեռս օսմանցոց վասն մեր ծովացեալ մեղացն՝ սուք մեծ եղև քրիստոնէից ազգիս...»** [4, 141]:

Այս ավետարանի մեջբերմամբ մեկ անգամ ևս հաստատվում է՝ արցախյան ավետարանները, հիշատակարանները ոչնչացվել են մահմեդականների ձեռքով:

Հիշատակության է արժանի նաև 12-րդ ավետարանից պահպանված 2 մասունքներից երկրորդը. «Արտաքուստ արևմտեան գաւթի հիւսիսային կողմում ամփոփուած է Անդրէաս եպիսկոպոսի մարմինն, որի տապանաքարի վերայ քանդակուած է՝ թագ, գաւազան և իւր տիտղոսների ձեւերն և արձանագրութիւնն, **վիճակավոր առաջնորդ Թեմին Հայոց Արցախայ Անդրէաս արքեպիսկոպոս** Պօլսեցի վախճանեալ է 8 Սեպ. 1882 ամի ի հասակի 48 ամաց» [4, 143]:

Անշուշտ Ու. Հաջինան շրջանցում է Հովհաննես կաթողիկոսին, Արցախի Անդրէաս արքեպիսկոպոսին, դազանչեցի Նարինեին, հայոց խաշլաբակեցի Միրզանց Սահակի որդի Գեորգին, որովհետև միայն փաստերը շրջանցելով և խեղաթյուրելով է հնարավոր արցախ-

յան մշակույթը ներկայացնել աղվանական, հայերին մեղադրել աղվանական մշակույթը ոչնչացնելու և սեփականելու մեջ, մինչդեռ այլ են ավետարանների վկայությունները և հիշատակությունները:

Ինչպես պարզ է դառնում, չկա գեթ մեկ ավետարան կամ հիշատակարան, որ աղվանական լինի: Ու. Հաջինայի համար նշանակություն չունի նույնիսկ այն փաստը, որ ավետարանը գրվել է Արցախի Խաչմաչ գյուղում, աղբբեջանցի գիտնականը առավելապես նախընտրում է մեջբերել կամ որպես փաստ ներկայացնել այն հատվածները, որտեղ կա միայն աղվանական եզրույթը:

Մ. Բարխուդարյանցի աշխատության կարևոր նշանակության մասին խոսելիս Ու. Հաջինան իր գրքի երկրորդ գլխում նշում է. «Макар Бархударянц в своем труде «Арцах» дает в хронологической последовательности все местопребывания Албанского католикосата..., сведения М.Бархударянца весьма ценны для воссоздания истории Албанской Апостольской Автокефальной Церкви, ее структуры, для понимания дальнейшей судьбы албанской культуры - письменности, литературы, культовых памятников, для выяснения истинной причины фантастического исчезновения албанской эпиграфики и многих албанских храмов» [12, 53]:

Սակայն այլ է գրքի նշանակությունը, ինչի մասին Մ. Բարխուդարյանցը գրում է. «Սակայն տեսնելով որ ժամանակի անողոր ճիրաններն լափում եւ եղծում են մեր թանկագին հայրենիքի-Արցախի ամենապատուական հնությունները եւ արձանագրությունները. տեսնելով որ տգետ եւ թշնամի ձեռներ քանդում, աւերում եւ ոչնչացնում են հայրենի սրբազան ւանդները. տեսնելով որ ցեցերն կրծում եւ անհայտացնում են անգին ձեռագիրների յիշատակարաններում եղած պատմական մարգարիտները եւ խոնաւությունն ու անհոգութիւնն կլանում են պատմական ակունքները...» [4, Ա]:

Սակար Բարխուդարյանցը գրքի «Յառաջաբանություն» բաժնում կետերով նշում է՝ ինչ հարցեր են քննարկվում գրքում, ինչ նպատակով է գրվել գիրքը, բայց հեղինակը որևէ խոսք չի ասում հայերի կողմից աղվանական եկեղեցիների ու մշակույթի ոչնչացման մասին. «Վանքեր, մատուռներ եւ բեներ. կարծում եմ թէ ոչ մի նահանգ այնպէս հարուստ չէ այսպիսի սրբավայրերով ու ուխտատեղիներով, ինչպէս Արցախեան նահանգն. բայց եւ այնպէս ոչ մի նահանգի վանքեր, անապատներ եւ ուխտատեղիներ այնպէս բոլորովին զրկուած չեն իւրեանց բարոյական եւ նիւթական փառքերից, ինչպէս Արցախեան վանքերն եւ սրբավայրերն» [4, Է]:

Մինևույն ժամանակ Ու. Հաջինան կեղծում է այն փաստը, որ Մ. Բարխուդարյանցը իր «Արցախը» գրել է ոչ միայն աղվանական մշակույթը կործանումից փրկելու, այլև աղվան ժողովրդի ինքնության փրկության համար. «Согласно М.Бархударянцу, он будто бы стремился создать труд по истории 15-го округа Великой Армении, но на самом деле дополнил еще одну страницу к истории албанского (агванского) этноса. Об албанском происхождении монастырей свидетельствует содержание надписей на дверях, алтаре, притворе, стенах снаружи и внутри монастырей» [12, 70]:

Սակար Բարխուդարյանցը նշում է՝ ինչ նպատակով է գրել «Արցախ» աշխատությունը, խոսում նաև «Աղվանից երկիր և դրացիք» [2, 383] աշխատության պատմական նշանակության մասին. «Վերստին Գանձասար, ուր եւ վախճանուած է կաթողիկոսութիւն Աղվանից եւ թաղուած վերջին Սարգիս կաթողիկոս Ջալալեանցի գերեզմանում: Աղուանից կաթողիկոսների մասին գրելու եւ «Աղուանից պատմութեան» մէջ եւ ոչ այստեղ: Որովհետեւ արդէն գրած եւ «Աղ. երկ. և Դրացիք» գրքում որոյ ավելորդ համարեցի գրել Արցախի կրօնական եւ քաղաքական կենաց մասին եւ գիւղական հիւանդությունների եւ բժշկութիւնների եւ կերակուրների մասին, որք գրեթէ նոյն են ամենայն մասամբ, միայն Արցախն չունի խընկալ կերակուրը» [4, Զ]:

Չբավարարվելով պատմական հնությունները սեփականելով՝ Ու. Հաջիևան փորձում է խեղաթյուրել նաև Արցախի սահմանները՝ նշելով. «По сведениям М.Бархударянца, «Арцахская область состояла из 24 округов (13-арцахских, 6-Утийской области, 4-Шакашен, Гардман, Колт и Заве; а также область Вартана-керт), принадлежащих агванцам» [12, 81]:

Ըստ Ու. Հաջիևայի՝ Վարդանակերտը պատկանում է Աղվանքին, մինչդեռ Մակար Բարխուդարյանց գրում է. «Քսան և չորս գաւառը ամբողջացնում է այսպէս- 13 Արցախի, 6 Ուտի գաւառի, 4 վերևի գաւառներն են, որք են Շիկաշեն և այլն. Վարդանակերտ գաւառ, որ գտնվում է Կուր և Երասխ գետերի խառնուրդի մէջ, **որով ամբողջանում են Արցախեան նահանգի 24 գաւառներն**» [4, Ա]:

Խոսելով հայկական գավառների դատարկվելու մասին՝ Ու. Հաջիևան շրջանցում է այն փաստը, թե ինչով է պայմանավորված այդ գործընթացը, ինչն է եղել պատճառը: Եվ առանց պատճառը նշելու Ու. Հաջիևան փորձում է ապացուցել հայերի ոչ բնիկ լինելը, նրանց կողմից օտար (տվյալ դեպքում՝ աղվանական) մշակույթը սեփականելը. «Из выше-изложенного следует, что М.Бархударянц вносит этническое разграничение между армянами и теми, кто исповедует армянскую веру - утийцами. Он указывает на то, что в этих местах армяне не жили, а удины (утийцы, удинцы) просто покинули родные места, где были разрушены и поруганы все их святыни и церкви» [12, 82]:

Մ. Բարխուդարյանցը նշում է ոչ միայն հայկական գավառների դատարկվելու պատճառը, այլև տալիս է Արցախյան նահանգում օտար ցեղերի բնակության պատկերը. «Բոլորովին զարմանում եւ սրտաճմլիկ դրութեան մէջ է ընկնում հետազօտող հայն, երբ տեսնում է միլիօնատր հայ բնակիչներով հարուստ Արցախն իսպառ դատարկուած: Այո, դատարկուած են իւրեանց հայ եւ հայադաւան բնակիչներից Պիան, Մուղան, Վարդանակերտ, Արանոտ, Տրի, Ռոցպատեան, Աղուէ, Տուչքատակ, Ուտիմիս, Ծար եւ Ըռստակ գաւառներն. իսկ կիսով չափ կամ ամենամեծ մասամբ դատարկուած են Գարդման, Փառիսոս, Քաւս կամ Քուստի, Ջաւէ, Ջրաբերք, Խաչեն, Վարանդայ և Դիզակ գաւառներն» [4, Է]:

Մ. Բարխուդարյանցը այնուհետև նշում է պատճառը՝ ինչու են դատարկվել հայկական գավառները, ինչն ուղղակիորեն շրջանցում է Ու. Հաջիևան. «Ի՞նչ եղան սոցա հայ բնակիչներ: – Մի մասն կերակուր եղաւ 1798-1799 թուի սովին եւ ժանտախտին. մի մասն գերի գնաց Պարսկաստան, մի մասն գաղթեց Տաճկահայաստան, մի մասն Պարսկաստան, մի մասն Շարի եւ Շամախի, մի մասն Կախէթ եւ Վրաստան, մի մասն Բագու, Ղուբա, Ղարբանդ եւ Ռուսիա» [4, Է]:

Չբավարարվելով պատմականորեն փորձում է նաև ժխտել հայկական ուսումնարանների գոյության փաստը.

«Ввиду того, что все монастыри и церкви Арцаха являлись албанскими, то они подлежали уничтожению и запустению со стороны Армянской Эчмиадзинской Церкви, чем был положен конец школам, находившимся при этих монастырях, по выпестовыванию албанской образованности» [12, 87]:

Մինչդեռ Ու. Հաջիևայի տեսությունը հերքվում է, երբ հղում ենք Մ. Բարխուդարյանցին.

1. «Շինեցաւ ուսումնարանն արդեամբ ի յիշատակ Բագուաբնակ Գրիգոր Թօմասեան Սյվազեանցին 1890 թիւ Դեկտեմբեր» [4, 103]:
2. «Գիւղումս (Գիիմի ճարտար) կայ Ս. Գրիգորեան միղասեան ուսումնարան տղայոց, աշակերտք մօտ 50, թռչակատու 38, ձրիավարժ 10. Միամեայ ոռճիկ վարժաօետին 220 ր» [4, 119]:
3. «Տղայոց միղասեան ս. Գրիգորեան ուսումնարան. աշակերտ 40, թռչակատու 38, տարեկան ոռճիկ վարժապետին 360 րբլ (Վարազարուն-Արանգամի գյուղ)» [4, 129]:
4. «Անապատիս արևմտեան կողմին խիստ մօտ է Հայոց Ուսումնարանի շէնքն, որ դեռ

կիսատ է և ունի 34 մետր 45 սանթիմ երկարություն և (պատշգամբով միասին) 11 մետր լայնություն» [4, 226]:

5. «Գիւղում (Մեծ-Բանանց) կայ տղայոց միդասեան ուսումնարան, որ ուսանում են 55 աշակերտ, թոշակատու 48, ձրիավարժ 7, միամեայ ռոճիկ ուսուցչի 35 թուրքի» [4, 285]:

6. «Միդասեան ծխական ուսումնարան. Աշակերտք 50, տարեկան ռոճիկ վարժապետին 300 ռուբլի (Ուզուն-Թալա գյուղ)» [4, 339]:

Հիշատակության է արժանի հատկապես հայոց բերդաքաղաք Շուշիի ուսումնարանները, որոնք ևս հիշատակվում են Մ. Բարխուդարյանցի կողմից:

7. «Թեմական դպրոց Ջ. Դասեան. Թիվ համօրէն աշակերտաց 330, թոշակատու 260, ձրիավարժ 70» [4, 150]:

8. «Մ. Մարիամեան օրիորդ. Երկդասեան ուսումնարան. Թիվ համօրէն աշակերտուհեաց մոտ 200, թոշակատու 165, ձրիավարժ 35» [4, 150]:

9. «Քաղաքում ևս կայ նաև Բէլալական գիմնազիա. քաղաքական ուսումնարանն օրիորդաց վարժարան» [4, 151]:

Հայկական քաղաքներում և գյուղերում ուսումնարանների գոյության փաստը շրջանցելով, մահմեդականների կողմից պատմական հնությունների ոչնչացման իրողությունը քողարկելով, ավետարաններն ու հիշատակությունները աղվանական ներկայացնելով, հայոց կաթողիկոսներին աղվան համարելով՝ Ու. Հաջիևան իր գրքում փորձում է նպաստել աղբրեջանական կեղծ աղվանագիտությանը, ինչը սակայն ժխտվում է եղած հայ և օտարալեզու աղբյուրագիտական, հիշատակարանային ու պատմական փաստերով:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-102>

### Գրականություն

1. Ալիշան Ղ., Արցախ, Երևան, 1993:
2. Աղունից երկիր եւ դրացիք, ի Մակար ծ. Վարդապետէ Բարխուտարեանց, Թիֆլիս, 1893:
3. Առաքելյան Ա., Մակար եպիսկոպոս Բարխուդարյան (Միաբան Մայր Աթոռի, 1836-1906), Էջմիածին ամսագիր, 1974, թիվ Է-Ը:
4. Արցախ, երկասիրեց Մակար եպս. Բարխուտարեանց, Բագու, 1895:
5. Աճառեան Հ., «Հայերէն արմատական բառարան», Երևան, 1923:
6. Բալայան Ջ., Արցախը XIX դարի հայ գրականության մեջ, Ստեփանակերտ, «Դիզակ պյուն», 2021:
7. Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, Երևան, 1980:
8. Եղիազարյան Վ., Հայագիտական ուսումնասիրություններ, Գ. Արցախի հայկականության ակունքները և աղբրեջանական աղվանագիտության կեղծիքների հերքում, Երևան, ՎՄՎ-ՊԲԻՆՏ, 2023:
9. Մինասյան Թ., Արցախի գրչության կենտրոնները, Երևան, «Նաիրի» հրատ., 2015:
10. Չորանեան Պ., Մակար եպս. Բարխուտարեանցի կեանքն ու գործը, Գանձասար Աստուածաբանական կենտրոն, Երևան, 1999:
11. Вермишев Х. Материалы для истории грузино-армянских отношений: Ответ на книжку кн. И. Г. Чавчавадзе: Армянские ученые и "вопиющие камни", Санкт-Петербург, 1904.
12. Гаджиева У. Деэтнизация кавказских албан в XIX веке, Баку, 2004.
13. Чавчавадзе И. Армянские учёные и вопиющие камни, Баку, 1902.

## Работа Макара Бархударянца «Арцах» в контексте разоблачения азербайджанских фальсификаций «албанистики»

*Мусаелян Сона*

### Резюме

**Ключевые слова:** Макар Бархударянец, Арцах, исторический анализ, источниковедение, интерпретация фактов, Улвия Гаджиева, азербайджанские фальсификации

Статья посвящена анализу и опровержению ложных утверждений, представленных в книге У. Гаджиевой «Деэтнизация кавказских албан в XIX веке», на основе труда Макара Бархударянца «Арцах». Цель исследования – разоблачение фальсификаций Гаджиевой и опровержение теории азербайджанской «албанистики», включая попытки представить Бархударянца «албанским» деятелем и присвоить культурное наследие Арцаха.

Научная новизна работы заключается в использовании исторических, источниковедческих и творческих данных для опровержения псевдотеорий. Гаджиева умышленно игнорирует ключевой факт: Бархударянец посвятил книгу «Арцах» Католикосу всех армян Хримяну Айрику. При этом она искажает содержание Евангелий, выдает армянские школы, памятники и духовных лидеров за «албанские» и замалчивает исторические события, направленные на разрушение армянских объектов.

Проведённый анализ показывает, что подобные манипуляции не выдерживают критики с точки зрения источниковедения, истории и фактов. Исследование подчеркивает необходимость внимательного анализа первоисточников и защиты культурного наследия Арцаха.

## Makar Barkhudaryants's Work "Artsakh" in the Context of Exposing Azerbaijani Falsifications of "Albanian Studies"

*Musayelyan Sona*

### Summary

**Key words:** Makar Barkhudaryants, Artsakh, historical analysis, source studies, creative facts, Ulviya Hajiyeva, Azerbaijani falsifications

This article analyzes and refutes the false claims presented in U. Hajiyeva's book "De-Ethnicization of Caucasian Albanians in the 19<sup>th</sup> Century," based on Makar Barkhudaryants' work "Artsakh". The aim of this study is to provide a critical analysis of Hajiyeva's interpretations and to assess the theoretical premises of Azerbaijani "Albanian studies," including claims that identify Barkhudaryants as an "Albanian" figure and reinterpretations of the cultural heritage of Artsakh.

The scientific novelty of this work lies in its use of historical, source-based, and creative data to refute pseudo-theories. Hajiyeva deliberately ignores a key fact: Barkhudaryants dedicated his book "Artsakh" to the Catholicos of All Armenians, Khrimian Hayrik. Moreover, she distorts the Gospels, presents Armenian schools, monuments, and spiritual leaders as "Albanian," and conceals historical events aimed at the destruction of Armenian sites.

The analysis shows that such interpretations do not withstand scrutiny from the perspective of source-based historical and factual analysis. The study emphasizes the importance of careful examination of primary sources and the protection of the cultural heritage of Artsakh.

Ներկայացվել է 21. 05. 2025 թ.

Գրախոսվել է 27. 10. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Հայելուն նայելու համարձակությունը.  
Զավեն Պիպեոյանի «Մրջյուններու վերջալույսը» վեպը  
նահանջի գրականության համապատկերում**

*Փիլոյան Վալերի*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-111>

*Հանգուցային բառեր. նահանջի գրականություն, սփյուռքահայ արձակ, Շահան Շահնուր, գլոբալացում, պոլսահայ գրական դպրոց, վիպագիր Զավեն Պիպեոյան*

**Ներածություն**

Սփյուռքահայ գրականությունը նախկին ու ներկա կորուստների գրականություն է: Նախկին կորուստների (կարոտի) գրականությունը արդեն մարդկային-անհատական հիշողության սահմաններից դուրս է, կա ազգի հիշողության մեջ, ներկա կորուստների (նահանջի) գրականությունը, սակայն, ամենօրյա իրողություն է, և «կնահանջե լեզուն»: Կարոտի գրականության վերջապահը 1978-ին անմահության սահմանը անցած, արդեն անդենակալնի բնակիչ Հակոբ Մնձուրիին է կամ ամենաերկարակյաց հայ գրագետ Հակոբ Ասատուրյանը, իսկ նահանջի վերջինը լինելու անպատեհությունը դեռ վիճարկվելու է, այնինչ առաջինը Շահնուրն է իր ամենի վեպով: Սփյուռքահայ և հայրենաբնակ տասնյակ ու տասնյակ գրող-գրագետներ են անդրադարձել ու անդրադառնում են այս ցավին, գտնում ու պատկերում նորանոր նրբերանգներ, ուժացման նորանոր մեխանիզմներ, և ահա այս ծիրում ենք փորձում դիտարկել Զավեն Պիպեոյանի ստեղծագործական բարձրակետը՝ «Մրջյունների վերջալույսը»՝ երբեմնակի այն գուգահեռելով Ռուպեր Հատտեճյանի «Առաստաղի» հետ:

Աշխատանքի նորույթը պայմանավորված է այն իրողությամբ, որ հիշատակված գործերը դիտարկվում են նահանջի գրականության թեմատիկ շրջանակներում, և որպես եղենի շարունակություն է պատկերացվում նահանջը, ինչի հաջորդ աստիճանն էլ գլոբալացումն է: Հոդվածի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ նահանջի ու գլոբալացման իրողություններն իրենց տեսանելի ու անտեսանելի հետևանքներով մերօրյա ներկայություն են, և Պիպեոյանի ու Հատտեճյանի վեպերն էլ արտահայտում են այդ տագնապը:

Հոդվածի նպատակը նահանջի ու գլոբալացման համապատկերում Զավեն Պիպեոյանի վիպասանի ստեղծագործության բարձրակետը կազմող «Մրջյուններու վերջալույսը» վեպի հիմնադրույթների ու ասելիքի բացահայտումն է, հեղինակի անվան ու գործի վերադարձը «ի շրջանս յուր»։ Կարծում ենք՝ այս խնդիրն իրագործվել է:

Ինչ վերաբերում է վերլուծության մեթոդներին ու մեթոդաբանությանը, ապա առաջնորդվել ենք սեմանտիկայի (իրականության հարաբերությունը նշանի հետ, այս դեպքում՝ մրջյուն և վերջալույս նշան-խորհրդանիշների մեկնությունը) և հերմենևտիկայի ընդհանուր մեթոդաբանությամբ:

**Եղենը, նահանջը և գլոբալացումը**

Այսօր հայ մարդու, հատկապես սփյուռքահայի համար չափազանց էական են գլոբալացման տագնապները: Օտար մշակութային տարածքներում գոյատևող հայի համար տագնապի առիթ են արմատներից կտրվելը, անարմատ բույսի պես ապրելը՝ ամեն թեթև հովից անգամ տեղիփոխվելը, հաճախադեպ դարձող խառնամուսնությունները, ի վերջո ավելի շատին ձուլվելու, հայրենիքն ու ազգային ոգին մոռանալով օտարվելու իրողությունները: Մասնավորապես Ռուպեր Հատտեճյանի «Առաստաղի» քննությունն իրականացնելիս նշվել է. «Տարաշխարհիկ հորիզոններում նահանջում է ազգայինի պահպանման բնագոյը, հայը և հայկականը լուծվում են օտար գաղափարներին՝ ի շահ հասարակական դիրքի, սուս ֆիզի-

կական գոյության, բարեկեցիկ կյանքի: Սփյուռքի լինելության մեջ մեծ ճիգ կա, որտեղ «ապրելն» անգամ դատապարտվածության իմաստ է ստանում: Ռուպեր Հատտեճյանի վեպի հերոսի լքվածության սահմանները խորքով քննելիս՝ պոլսահայ խոշորագույն բանաստեղծ Ջարեհ Խրախունին արտահայտում է սփյուռքահայ աշխարհի տագնապների իրատես հիմքերը. «Ո՛վ է սա անկողնին մեջ անշարժ պառկող հիվանդը... Ալո՛ւ, լքո՛ւմն է, որ մահագուշակ ուրվականի մը նման հայտնված է ամենուս հորիզոնին վրա և կուգա յուրաքանչյուրիս դուռը բախելու» (\*Մարմարա, 1983, 1 դեկտեմբերի):

Հարցադրումն ինքը տարողունակ է, այն դառնում է վեպի գաղափարական կովաններից մեկը: Ընդհանրացման շնորհիվ կարելի է դառնում խոսել երևույթի ազգային-գոյարբանական հատկանիշների մասին, որոնք վեպը նշանակալից են դարձնում 70-80-ական թթ. հայ վիպասանության ընդհանուր տեսադաշտում» [3, 140-141]:

Հայերեն սասցվածք կա՞ր «Կտրված հացը չի կաշում»: Սրա հանգույն՝ արմատներից կտրված բույսն էլ արմատ չի ձգում, չորանում է, կերպափոխվում: Մեկ դարից ավելի առաջ տեղ գտած եղեռնը, որ ցայսօր շարունակական է իր հետևանքներով, գլոբալացման մարտահրավերները հանգեցնում են նրան, որ հայության արմատախիլ արված (եղած) բեկորները կամ մեկուսանում, փոքրանում, ճահճանում են իրենց պատկերացրած աշխարհում, որ խեղճուկրակ ջրափոս է (հիշենք սփյուռքահայ արձակագիր Վահրամ Մավյանի «Հայու բեկորներ» շարքի կերպարներին), կամ տարրալուծվում, կերպափոխվում, ի վերջո հայությունից անէանում են՝ արդյունքում աստ և այսօր թողնելով ոչինչ, երբեմն միայն՝ աղոտ հիշողություն, բայց նահանջի և ուրացման ամենակոպ գործընթացը շարունակական է:

Ճշմարտությանն ու փաստի տրամաբանությանը նայենք սթափորեն: Եվ հիշենք, որ 20-րդ դարի հայ արձակի ամենամեծերից Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը ու սրանով սկզբնավորված գրականությունը բացահայտում են նահանջի մի շարք ճանապարհներ՝ կին և ամուսնություն (Հրաչն ու Պետրոսը), աշխատանք (Միսաքը), ակոհոլ ու հաշիշ (Ջարեհ-Լոխումը), ինքնահասատավելու մղում (Սուրենը)... Նահանջի այլևայլ ճանապարհներ են նշում Ջարեհ Որբունու «Փորձը»՝ իր անանուն կերպարով, Վագգեն Շուշանյանն իր «Ջավեն Մանկունիի սերերը» վիպակով, Հրաչ Ջարդարյանի «Մեր կյանքը» վեպի Արսեն Տերտերյանը... Նշենք, որ սրանք վերաբերում են և ավելի բնութագրական են սփյուռքահայության առաջին սերնդին: Հաջորդող սերունդների համար «գործն» ավելի է հեշտանում:

Մի չափազանց էական ու նրբանկատ իրողություն է մատնանշում գրականագետ և տեսաբան Երվանդ Ազատյանը Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպին վերաբերող իր հոդվածում՝ խոսելով պարտություններից ամենասարսափելիի՝ մշակութային պարտության մասին, երբ ուժացումից առաջ և ուժացմանը տանող մշակութային բախումն է դրսևորվում, և արդյունքում տեսնում ենք մասնավորապես արևելյան մշակութայինների պարտությունը արևմտյան մշակույթից կամ ուղղակի պարտություն. «Ամբողջ տնաքանդ ժողովուրդ մը թափուած էր Փարիզի մայթերուն վրայ յանկուծ, և այդ յոյս քաղաքի շտապյլներուն տակ կը ճանչնար իր խոշտանգուած էութիւնը և իր մերկութեամբ կը հիկաղղուէր հզօր մշակույթի մը. եւ առանց որ ժամանակը ունեն արհիքզիկնք պէղէրն» ինքնաժխտումի, ինքնուրացման տառապագին գալարում մը կը պրկէր իր էութիւնը. եւ ան, այդ ցաւին սաստկութեան մէջ՝ մաղձ մը կը ժայթթէր մինչեւ անգամ մեր մեծագոյն հանճարին՝ Նարեկացիին հասցէին» [1, 6]:

Ազատյանը շարունակում է. «Մշակույթների տարբերութեանց բախումը միշտ մարդկային էութեան մեջ յեղբորմներ յառաջացուցած է.այդբախումը, որճանչցուած է անգլիական կամ ամերիկյան գրականութեան մէջ իբրեւ cultural shock կամ այլուրացում, օտարում, իր նախատիպարները ունի մեր գրականութեան մէջ» [1, 6]: Որպես եզրահանգում Ազատյանը նշում է, որ «Շահնուրի մօտ այդ հակադրութիւնը ամբողջ տարբեր աշխարհներու բախում մըն է՝ օտարումի, այլուրացման և այլասերման իր անակոյր հետևանքներով» [1, 7]:

Տազնապը շարունակվում է, տազնապն իմաստավորվում է. «Ցեղ մը ամբողջ կ'ընկղմեր իր իսկ արեան մէջ ու անոր իլեակները, բախտէն հալածական, ինքնուրացման մրրիկներուն մատնուած՝ կը տուայտէին երոպական ոստաններուն մէջ, ի նչպէս կրնար իր աղաղակը զայլ Շահնուրի խանուածքը ունեցող խռովայոյզ գրագետ մը: Ան արծակեց իր աղաղակը եւ ժամանակի դատաստանին թողուց անոր մեկնաբանութիւնը: Եւ այսօր, եղեռնէն գրեթէ ինը տասնամեակ մը ետք, երբ **նահանջը համընդհանուր է ու համազգային**, «կը նահանջինք բանիւ և գործով, գիտութեամբ եւ անգիտութեամբ», երբ մանավանդ «կը նահանջէ լեզուս, կը նահանջէ լեզուն...»՝ ձեւ, կերպարանք, իմաստ կը զգենու շահնուրեան սրտապատառ աղաղակը եւ լաւագոյնս կը մեկնաբանէ «պատկերագարդ պատմութիւն հայոց» ըլլալու իր բնոյթը» [1, 7-8] (ընդգծումն իմն է՝ Վ.Փ.):

Պարզ է, որ ասելիքի ակունքը տեսակի կորուստն է, որ ասելիքը այդ կորուստի մեխանիզմներին անդրադարձնալն է, քանի որ «<...> սփիւռքի տարահալած կեանքը մահամերձի վիճակ մըն էր, ան ունեցավ իր միսիթարական լացողը՝ Շահնուրի ոչ լալկան գրականութեան ընդմեջէն:

Սակայն, այսօր, այդ կեանքը աւելի եղերական է, թէւ չկան սուր ու եաթաղան, արիւն ու սով, տարագրութիւն ու գաղթական, սակայն կա՛յ անտեսանելի ռդբերգութիւն մը, իմացական մակարդակի ռդբերգութիւն մը, որ կը մնայ միայն համապատասխան իմացականութեամբ ընկալելի ու ըմբռնելի:

<...> Շահնուրի «Պատկերագարդ պատմութիւն հայոց»ի դաժան տռամը կը շարունակուվի այսօր, առանց սգաւորի սակայն, իրարմէ անջատ, հեռաւոր գաղութներու մէջ, անձայն քանի մը արցունքներով, որոնք արդէն կը չորնան գետին չինկած՝ մեր կեանքի անպատին մեջ» [1, 10]:

Երբեմն տեղ են գտնում ինքնափնտրումն ու ինքնակայացման համառումը, բայց ավելի հաճախ կա ինքնակորստյան ավերը: Այս տեսակետից Հրանտ Մաթնոյանի ստեղծած կերպարն ախտորոշում է «համահայկական հիվանդությունը». «Ձերոնք որ փախչում են՝ իրենցից են փախչում – կարծում են գյուղից ու տեղից են փախչում, մատաղ» [8, 64]: Փախուստը մատնանշում է ինքնակորստյան տազնապը, որ իր հիմքում ոչ միայն Արևելքին բնորոշ կենսագագողության հետքեր ունի (չլինել ես, լինել մենք-ի բաղկացուցիչ. այստեղից է գալիս մարևոպանական ստեղծագործության վերջին շրջանի կերպարայնաբանի կողմից մենք-ի գործածությունը), այլև օտարման փիլիսոփայությունը, որ 20-րդ դարի երկրորդ կեսի գրականության պարտադիր բաղկացուցիչ է՝ սկսած Ալբեր Կամյուի «Օտարից» մինչև Կոբո Աբե և շատ ուրիշներ: Ինքն իրենից փախչում է մի ողջ սերունդ և սերունդներ՝ դրսևորելով ինքնակորստյան տազնապը: Տեղ է գտնում «ես»-ի կորուստը, երբ փորձ է արվում արհամարհել այդ ես-ը՝ ձուլվելով այլոց մենք-ի հետ, որովհետև Սփյուռքում (նաև հայրենիքում) չկա կամ լիարժեքորեն չի դրսևորվում ազգուտեսակի մենք-ի զգացողությունը: Իսկ **«մենք» կենսատարածքը ներդաշնակ գոյության միակ հանգրվանն** է, բայց ավելի հաճախադեպ է օտարումը կամ փախուստը սեփական ինքնությունից, այլ մի հավաքականության մաս դառնալու պատրաստակամությունը, օտար կեղևի մեջ պարսկավելու պարտադրանքը կամ ձգտումը, որի արդյունքում նախկին հայը դառնում է իր նախկին Էոլյանս ամենամեծ թշնամին. «Կտրատվել են ներքեղական կապերը, փրկություն է թվում փախուստը, մի այլ ցեղի, բարեկեցիկ ցեղի մեջ տարրալուծվելու գաղափարը: Հարմարավետ ու տաք անոթի փնտրտուք է: Իսկ քո անոթի վրա թքած: Քո անոթը թաղանթ է: Քո անոթի կճեպը փշրվել է, մնացել է թաղանթը: Այլոց անոթներից ջինի նման դուրս եկած հայածին պոռթկումը փառաբանում է դառնում օտարի անոթի, և ոչ թե ցեղիդ ոգու, որի պոռթկումը ավելի ուժգին էր լինելու, եթե դուրս ժայթքեր սեփական անոթից: Աշխարհաքաղաքացի՞ ես ուզում դառնալ: Աշխարհաքաղաքացին քո անոթից էլած ջինն է: Մնացյալը կենվորներ են...» [6, 184]: Կարծում է՝ այս իրողության արտահայտությունն է դառնում անտեսված (չգնահատված, չիմաստավորված) գրագետի՝ Ջ. Պիպեռյանի «Մրջիններու վերջալույսը» վեպը, որ ոչ միայն

«Նահանջի» հաջորդ աստիճանն է, այլև տեղի ունեցած(ո)յի ինքնուրույն մեկնաբանություններինց մեկը, որի մի տարբերակն էլ պոլսահայ արձակագիր Ռ. Հատտեճյանի «Առաստաղն» է, ապա «Առաստաղին միւս կողմը» պայմանաձևը, և շարունակություն էր պատկերացվելու «Առաստաղը փլա» պայմանականությունը, որը գեղարվեստական հանդերձ չունեցավ. «Առաստաղը փլա» Գ. հատորին մասին խօսիլը ինձի համար ուղղակի տառապանք է, խղճի անհանգստություն, որովհետև ես վաղուց գրած պետք է ըլլայի այդ Գ հատորը: Ըսեմ, թե արդեն անոր 30-40 էջերը գրուած են եւ վերիվարոյ մնացեալներուն մասին ալ ծրագիր մը մշակուած է» [11, 21]:

Ռ. Հատտեճյանը հարցազրույցի ընթացքում մանրամասնում է. «Ա. հատորը գաւառէն Պոլիս ապաստանած անդամայոյծ մարդու մը կեանքը կը պատմէ, եւ այդ մարդուն այլեւ կը պատմուի Քանատա գաղթած աղջկան բերանով: Ուրեմն, Պոլսոյ եւ գաւառէն եկած մեր կեանքը այլեւս զացած է Քանատա: Բ. հատորը Պոլսոյ կարօտով Քանատայի մէջ ապրող հայ սերունդներու պատմութիւնն է: Իսկ Գ. հատորը այլեւս Սփիւռքի մէջ հայ բեկորներու անկումը ապրող, հայութենէ հեռանալու, իրենց հայկական ինքնութիւնը կորսնցնելու ճամբուն գտնուող, տագնապներու պատմութիւնն է <...>» [11, 21]:

Իրավացի է ուսումնասիրողը, երբ նշում է, որ ««Առաստաղը» հայ գրականության մեջ ձեռք է բերել հոգեբանական վեպի կառուցվածքային հատկանիշներ իբրև «ներաշխարհի գեղարվեստական քննություն»: Այս վեպը լուսարձակ է նետում Սփյուռքի ներկայի ու անցյալի վրա, բերում արևմտահայության վաղվա օրվա տագնապները: Առաստաղը սահմանագիծ է հայի ու ամենակող «համաշխարհի» միջև, որն անցնում ենք գիտակցելով կամ անգիտակցից» [4, 21]:

Մենք էլ չենք վարանում կրկնելու, որ «Ռ. Հատտեճյանի վեպերը ներկայի պատկերմամբ լույս են սփռում ոչ միայն այդ նույն ներկայի, այլև անցյալի վրա և միաժամանակ դառնում են տագնապի ահազանգ, ազգովի միասին մտածելու ու ելք գտնելու անհրաժեշտության վավերագիր» [14, 397]:

Հանգամանքների բերումով «Առաստաղ» եռագրությունը անավարտ մնաց, իսկ Զ. Պիպեոյանի «Մրջիններու վերջալոյսը» մեր գրականության կայացած իրողությունն է, սփյուռքահայ վիպագրության սակավ նվաճումներից մեկը, որ շարունակում է ահազանգել նահանջը:

Շահնուրի «Նահանջը» գրվեց 1927-29-ին ու հրատարակվեց որպես թերթոն, ապա գրքի տեսքով կազմ ու շապիկ հագավ 1929-ին: Անցել է մոտ 100 տարի, և «Նահանջը», ցավոք (ասում եմ ցավոք), չի հնանում, որովհետև նահանջը շարունակական է ցայսօր: Բայց գրականությունը, թեկուզ խարխափելով կամ նպատակալաց, առաջանում է՝ հասնելով 21-րդ դարին, փորձելով համակերպվել դարի ռիթմի հետ: Դրսևորվե՞լ է նորօրյա իրողությունների համահունչ տագնապ: Այո՛: Հիշենք, ի մասնավորի, Հր. Մաթնոյանիճիճիչը. «Հայոց մեր աստղը պայթել ու բոլոր կողմերի վրա ցրիվ է գալիս, և այդ հեռացող կրակե բեկորները քանի դեռ տեսվում են՝ իմն են: Նրանք իմ ուժն ու կյանքն են հեռացնում: Այդպես, եթե հնարավոր է, խաչված մարմինը կնայեր վերացող հոգու ետևից» [7, 382]: Եվ անհ Զավեն Պիպեոյանի «Մրջիններու վերջալոյսը» վեպը խոսում է հոգեբանական նահանջի (ուրացման) հաջորդ աստիճանի մասին:

### **Զավեն Պիպեոյանի «Մրջիններու վերջալոյսը» վեպը**

Այս վեպն էլ հրատարակվել է 1970-ին «Ժամանակ» օրաթերթի էջերում «294 թերթօսներէն, որոնք հեղինակը ի մի հաւաքած, կազմել տուած և սրբագրելով մակագրած է իր գրչակից բարեկամներուն» [10, 2]: Գիրքը որոշ կրճատումներով հրատարակվել է 1984-ին՝

<sup>1</sup> Գրքում ներառվել է «Սփյուռք օվկիանոսը և մի մարդ.Ռոպերճատտեճյանի «Առաստաղ» և «Առաստաղին միւս կողմը» վեպերը» հոդվածը (14, 388-397):

հեղինակի մահվան տարում, ապա Սևան Տեյիբմենջյանի աշխատավիճակում 2007-ին Ստամբուլում վերահրատարակվել է «Արաս» հրատարակչության կողմից:

Փորձեն մասնավորել՝ անդրադառնալով վեպի ֆաբուլայի ինչ-ինչ իրողությունների: Նաֆըլայից (համաշխարհային պատերազմի ընթացքում զինվորագրված այլահավատներից կազմված շինարարական ջոկատներ) երեքուկես տարվա ծառայությունից հետո վերադարձած հայ երիտասարդ Պարետը իր ընտանիքը գտնում է աղքատացած, այլ մի բնակարանում, քանի որ 1942-ին ընդունված Ունևորության տուրքի պատճառով (թրք.՝ Վարլըք), որի թիրախում այլահավատների ինչքն ու ունեցվածքն էր, սահմանափակ ժամանակահատվածում մարդիկ ստիպված էին չնչին գներով վաճառել իրենց ունեցվածքը, վճարել ունևորության տուրքը, այլապես կուղարկվեին աշխատանքային ճամբարներ, կաքտրվեին: Պարետի մանկությունն ու պատանեկությունն անցել է ապահովության մեջ, զինվորական ծառայության ընթացքում, շնորհիվ հոր՝ Տիրանի գոհողությունների, չի գրգցել որևէ էական փոփոխություն, բայց արդեն կա ներկան՝ դաժան իրականությունը, որից ուզում է փախուստ տալ՝ ապավինելով հիշողություններին. «նոր եկած ատեն, հին երգերը անգամ այնքան խոռված էին զինք» [10, 250]: Սա է պատճառը, որ անցյալից մնացած հիշատակների շարքում էական են դառնում տոհմական տունն ու հորեղբայր Տրդատը: Սակայն սրանք էլ իրենք չեն այլևս: Միջավայրում մարդիկ կան, որ հեռանում են հայությունից՝ «չընդունիր հայ ըլլալը» [10, 179], չունի ընկերներ [«Պարզ ընկեր անգամ չունէր: Դպրոցական ընկերներն իսկ դպրոցին մեջ ընկեր էին: Այնքան վարժուած չէր ընկերական կեանքի, որ մնայուն բարեկամ ունենալու անկարող էր» [10, 189]], չունի սիրած աղջիկ, ունի աշխատանք, սակայն ավելի գորավոր է աշխատանքը կորցնելու վախը, ունի որոշ կրթություն, սակայն ղեկավարում են անկիրթ ու բռի մարդիկ, որ ուրացել են իրենց ազգությունը... Ըստ էության մարդը մենակ է, որից փրկվելու միակ տարբերակ է պատկերանում փախուստը: Այս առաջին փախուստին հաջորդում է երկրորդը: Աշխատատեղից ու Լուվայից փախչելուց հետո, երբ բնականաբար փախչում է նաև վարձած կացարանից, «անդրադարձաւ, թէ արժէք մը ունէր տանիքը իրեն համար: Եւ թէ հաւանաբար վախցած էր այսօր փողոցը մնալէ» [10, 408]: Բայց սա «տեղական նշանակության» փախուստ է, երբ կարող են իրեն գտնել, ինչպես այս դեպքում նրան գտնում է հորեղբայր Տրդատը: Սրանից հետո փորձում է ինքն իրենից փախչել՝ «Ու լքեր էր ինքզինքը՝ ջանալով բթանալ» [10, 409]: Ինքն իրենից լքվել-ընդարմանալը՝ «ջանալով բթանալ»-ը, հոգեբանական վիճակ է, անհուստության արտահայտություն: Մտում է ավելի մեծ փախուստը. «Հետաքրքրութիւն չէր զգար: Ոչ մէկ բանի: Քննանալ կ'ուզէր: Կամ հեռու ըլլալ այստեղէն: Առագաստանաւեր Մարմարա կը բացուէին մուրը կոխած ատեն: Մէջը ըլլայի, երթայի, երթայի կ'ըսէր ատենօք: Բայց չէր երեսակայած տունէն փրթիլ: Հիմա աչքին առջեւ նորէն առագաստանաւ մը կար, խոշոր: Նստիլ երթալ կ'ուզէր: Ուր որ տանէր: Այլևս երբէք ցամաք չտեսնել: Միս-մինակ ըլլալ մէջը: Մերկ հորիզոններու երթալ առանց երբէք տեղ մը հասնելու» [10, 436]:

Վեպի պայմանականության մեջ էական դերակատարում ունեն մրջյուն և վերջապես հասկացությունները: Նախ՝ «մրջյունը, որ զօրութիւն չունի, բայց իր կերակուրը պատրաստում է ամռանը» (Առակներ, Լ, 25):

Յր. Մաթևոսյանն իր «Խումհար» («Կենդանին և մեռյալը») վիպակում սցենարական հայտի միջոցով հպանցիկ անդրադարձ է կատարում մրջյունների թեմային (1970 թվականի ամսագրային տարբերակում չկա, լրացվել է վերամշակումից հետո): Սակայն այս «սցենարական նախակյութի մեջ» կա կոնկրետ խնդիր. «Ես մրջյունների մասին եմ պատմում, <...>: Գերի են տանում, բանեցնում են, իսկ գերին դու մի ասա այնքան էլ մրջյուն չի, համարյա թե մարդ է – կարոտում ու ուզում է փախչել, կարոտում ու փախչում՝ զզվեցնում է, կարծես միևնույն չի թե որտեղ է պարկեր շլակակելու: Եվ բռնում ու զինվորները վիզը կծում են, մկրտաբոցում ու կտրում են վիզը: <...> Գերի բանվորի վիզը՝ պահակ զինվորները: Լավ չի աշխատում, կարոտում ու փախչում է, կարոտում ու փախչում է սրիկան: Ինչի՞նչ է կարոտում – իր

հաստագլուխ եղբայրներին, իրենց նեղ փողոցներին, ջրի իրենց արահետին՝ որ գնում, իջնում, բարձրանում, ոլորվում, մասրենու արմատի տակով անցնում... Եվ որպեսզի մյուս անգամ այդ գերինները շատ էլ գուլիս չտանեն իրենց կարոտով, ոչ թե կենդանի մրջյուններ, այլ նրանց ձվերն են ավարում հաղթողները: Գալիս այստեղ ձվերից բանվորներ են ծնվում ու աշխատում են ու հավիտյան էլ չեն հասկանում, որ գերի են, որ զինվոր էին ծնվելու, որ ուրիշ տեղ է իրենց հայրենիքը» [8, 347]: Կարևորվում է հիշողության խնդիրը, և նրանից են ածանցվում մյուս բոլորը՝ ըմբոստությունը, կարոտը, փախուստը...

Իսկ ահա Ջ. Պիպեռյանի կերպարներից Տրդատը (մեր գրականության մեջ աշխարհաթողների, աշխարհից մեկուսացածների, յուրահատուկ Փոքր Միեր-ների շարքում կարելի է դիտարկել այս Տրդատին) մրջյունների վերաբերմամբ իր սեփական ընկալումն ու գնահատությունն նույնի. «Միշտ մրջինները խորհած են: Դպրոցն կը սկսին արել տղաքը: Մրջինը իբրև տիպար օրինակ ցույց կու տան: **Մարդը մրջինի վերածել կը ջանաս:** Ես կը յաջողին այ: Բոլոր հակակրելի, տգեղ բաները մարդոց պաշտել տալու, հիպոցումի առարկայ դարձնելու մեջ վարպետ ենք իրաւ: Ես կ'ատեմ մրջինը: Կենսքիս մեջ ես ո՛չ ուզեցի, ոչ ալ կրցայ մրջին ըլլալ: Տատե՛, կրե՛, ամբարե՛, ձմեռը կեր, նորէն տատե՛, կրե՛, ամբարե՛: Ամբողջ կեանք մը: Ետքը՝ մեռիր: Բուրգեր շինե՛: Քաղաքներ, շէնքեր, գործարաններ, մեքենաներ, ճարտարաբուհետ, քաղաքակրթութիւն: Այս բոլորին ծառայե՛: Ամբողջ կեանք մը: Ետքը՝ մեռիր: Որո՞ւ համար: Ինչո՞ւ համար: Ո՞վ կ'օգտուի: Ո՞վ կը վայելէ: Չորս հոգի: Այսինքն ո՛չ ոք: Գործը գործին համար: Քաղաքակրթութիւնը քաղաքակրթութեան համար <...> Քաղաքակրթութիւն վերտեր է, աշխատեր է, մրջինի պէս ապրեր, մրջինի պէս մեռել է: Մարդուն ճակատագիր մը տուեր ենք՝ քրտնիլ, ստեղծել, ստեղծածը չվայելէ: Չորս հոգիի քէֆին և հագար տարի ետքի յետախոյզին հաճոյքին համար մրջին ըլլալ» [10, 125-126]:

Համեմատությունն իրականացվում է հակառակ ծայրաբևեռներից. եթե Մաթևոսյանի մոտ մրջյունը մարդկային որակներով է օժտված (կարոտ, ըմբոստություն, փախուստ...), ապա Պիպեռյանի մոտ մարդուն մրջյունացնել ու գործառույթն է դրսևորվում: Սևան Տեյիթ-մենջյանը կարծում է, որ «Մրջինը վեպ բերուած է Եզրվորսի յայտնի առակէն, որպէս խորհրդանիշը աշխատասիրութեան, համբերատարութեան ու բոլոր այն յատկանիշներուն, զորս հասարակութիւնը բարի ու նպաստաւոր կը նկատէ մարդուն համար՝ զայն հակադրելով ձկուտի պարապ-սարապ ու անօգուտ կեանքին» [10, 17]: Կարծում են՝ այս դեպքում ծագումնաբանությունը չէ կարևորը, այլ խորհրդանիշ ձևավորելու կարողությունը:

Գլոբալացող աշխարհում տեղի է ունենում ստանդարտացում, որի արդյունքում մարդ բանականը վերածվում է կաղապարված կենդանու՝ զերծ անհատականությունից, հույզերից ու զգացմունքներից: Չափազանց բնութագրական է այս իմաստով Օլդոս Հաքսլիի «Չքնաղ նոր աշխարհ» վեպի պայմանաձևը: Նմանօրինակ պայմանականության դեմ է ընդդիմանում Ջ. Պիպեռյանն իր վեպում, որովհետև մարդու մրջյունացումը նշանակում է զրկել նրան ոչ միայն անհատականությունից, այլև ազգային ու անհատական հիշողությունից, ազգային պատկանելությունից, ինքնությունից, ես-ից, որ ձուլվում է այլոց մենք-ին (վեպում կերպարը մեկնում և կրկին մեկնելու է Անատոլիա): Կարծում ենք՝ մեր դեպքում, ինչքան էլ գլոբալացումը համաշխարհային գործընթաց լինի, այն պիտի գիտակցվի որպես եղեռնի շարունակություն՝ իր բերած աշխարհակուլ հետևանքներով:

Ինչ վերաբերում է վերջալույս գաղափարին... Սևան Տեյիթմենջյանը, իր խորիմաստ «Յառաջաբանում» կարևորելով գաղափարի իմաստավորումը, նշում է. «Վերապրելու, տեսելու, արշալույսի մը հասնելու համար մրջինին վերջալոյս է պէտք... Հակառակ պարագային մրջինը ինքն է որ պիտի կորսուի մեջտեղներէն, պիտի ապրի վերջալույսը» [10, 20]:

Վերջալույս բառի երեք իմաստ է առանձնացնում Էդ. Ադայանն իր բառարանում. «1. Արևը մայր մտնելու և մթնշաղմ իջնելու պահը: 2. Հորիզոնի մայրամուտային վառ լուսավորությունը: 3. փիլք. Վերք, վախճան» [2, 1384]: Վեպի ընթերցումն ու ընկալումը հուշում են, որ գործ չունենք մայրամուտի կամ մայրամուտային վառ լուսավորության հետ (առաջնորդ-

վում ենք այն մտայնությամբ, որ վերջապես ու մայրամուտը նույնական չեն, չեն կարող արտահայտել մեկ և նույնական հասկացություն), այլ հեղինակը կարևորել է վերջի, վախճանի գաղափարը: Սա ոչ թե մայրամուտ է, այլ *վերջնայնյա* [2, 1386]՝ «վերջին լույս, որևէ բանի վերջին պահի լույսը», նախաավարտն ու ավարտը, որ սկզբնավորվել են եղեռնով ու շարունակական են ցայսօր: Համակարծիք ենք Ս. Դանիելյանի դիտարկմանը, թե «Վերջալույսը մահն է, կորուստը, անկումը», <...> «Վերջալույսը» նաև նյութի հաղթանակն է հոգևորի նկատմամբ» [3, 153]:

Միջանկյալ նշենք, որ չենք կարծում, որ «Վեպի գլխավոր հարցադրումը զարգանում է սոցիալական ուղղվածությամբ» [3, 149]: Այս դեպքում սոցիալականը ոչ թե ի նչ-ն է, այլ ինչ-պե ս-ը, որի միջոցով տեղ է գտնում աստիճանական նահանջը հայկական միջավայրից, հայ ինքնությունից ու, բնականաբար, լեզվից: Ի վերջո միանական չէ աղքատության պատճառով օտարվելը, չնայած մեր պատմությունը լի է նման օրինակներով:

...Հրանտ Մաթևոսյանի «Տաշքենդ» վիպակում կերպարներից Միրուն Թևիկը մտասնեռում ունի՝ տաշքենդներից հետ բերել եղբորը, որպեսզի հայրական տանը բնակեցնի: Տունը գիտակցվում է որպես հենման կետ և կենսատարածք: Իսկ ահա «Մրջյուններու վերջալույսի» Պարետը գրկվում է անգամ այդ հենման կետն ունենալու հնարավորությունից: Թարհակյան գերդաստանին պատկանող տունը (թեկուզ ավերակ) Տրդատի հորեղբոր կտակով ժառանգվելու է Պարետի կողմից, սակայն ենթադրվում են այլ տերեր՝ Տրդատի փարիզաբնակ դուստրը ու ժամանակին ունեցած կինը: Արդյունքում չկայացած տուն, չկայացած ընտանիք, հեռացող հարպագուներ ու բարեկամներ, անընկեր, մենակության տագնապ, կա հավատի, ավելի շուտ՝ անհավատության խնդիր («Պարէտ, ինչո՛ւ՝ չէր գիտեր, գոհունակութիւն զգաց, թէեւ ինք հաւատացեալ չէր: Աւելի ճիշդ՝ չէր խորհած ո՛չ հաւատացեալ, ոչ անհաւատ ըլլալ» [10, 293]), այլ իրողություններ, որոնցից հետո միակ ելքը փախուստն ու դեգերելն է: Փախուստ տանից, փախուստ ընտանիքից, փախուստ սիրած աղջկանից ու աշխատատեղից, փախուստ ..., որ ի վերջո վերածվում էս եփական ինքնությունից փախուստի, իսկ դրանից առաջ կամ հետո փախուստ է ազգային արմատներից, այլ մի մենք-ի փնտրտուք, որովհետև ըստ էության չկա իր գենետիկ-տոհմիկ մենք-ը, կա զրբալացման պարտադրանքը: Սա է նահանջի այն տրամաբանությունը, որ դրսևորվում է վիպական պայմանականության մեջ: Փաստորեն *տարատեսակ պարտադրանքներին զուսմարվում է հոգեբանական պարտությունը:*

Շահնուրը նահանջի ունիվերսալ պայմանաձև է կտակել մեզ՝ «բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ»: (Շահնուրը բառացի փոխառել է հայոց ժամագրքի Ձոջում հատվածի տողերը. «Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղայ Սատուծոյ»): Ու թե կան նահանջողներ, որ խուսրով ու գործով են նահանջում (գործիխակ՝ շահնուրյան Սուրենը, Պիպեռյանի Քազիմիրը («Քազիմիրին Քազեմիրեան ըսէ: Չ'ընդունիր հայ ըլլալը») [10, 179]), ապա ակամա, անգիտությամբ նահանջողներ էլ կան:

Պիպեռյանի Պարետը սովորաբար չի մտածում՝ իր ինչ-որ տեղ ծուլ էությամբ պայմանավորված: Սակայն մտածելու դեպքում տխուր եզրահանգումների է գալիս. «Հայությունը մոռցած ըլլալու էր այսչափ տարի է: Հիմա կը սկսեր վերյիշել եւ, առաջին ապշությունը փարատել է վերջ՝ հասկնալ: *Ակամայ կը մտներ նորէն հայու մորթին մէջ: Ասիկա նոր անհանգստութիւն մը կու տար իրեն: Չէր ախորժեր: Ու կ'անդրադառնար, թէ «հայ չըլլալ» նոր արտաբերութիւն մըն էր:* Եվ սակայն անկարելի էր հայ չըլլալ» [10, 502-503]:

Վիպական պայմանականության մեջ, թվում է հպանցիկ, սակայն էական դերակատարություն ունեցող կերպար կա՝ Ազնիվ հանրմ Սարայկիլը, որ Պարետին մտածելու է դրդում: Վերջինս խորհում է, որ տեղի ունեցած իրողություններից հետո (չեն հիշատակվում, սակայն ենթադրվում են եղեռնը և ուշացումով ընդունված Տարագրության մասին օրենքը 1915-ի մայիսի 27-ին, 1922-ի սեպտեմբերի Լքյալ գույքի մասին օրենքը, 1936-ին ընդունված Ազգա-

յին փոքրամասնությունների համայնքապատկան կայվածքների մասին օրենքը, վիպական պայմանականության մեջ էական դերակատարություն ունեցած Վարլըքը՝ Ունևորության տուրքի մասին օրենքը՝ ընդունված 1942-ի նոյեմբերի 12-ին, որով ունեզրկեցին հայությանը՝ միաժամանակ կազմակերպելով նոր մի աքսոր՝ այս անգամ Աշքալե՝ Էրզրումի մոտ գտնվող մի գյուղաքաղաք) «<...> շատ հանգիստ էին... չէին վարժուած այս քան հանգստութեան, տեւական աղէտի մը մերձութիւնը կը կրճէր իրենց օրերը: Կը վաստկէին, կ'ուտէին, կը խմէին, կը գուարճանային: Բայց նաւաբեկութեան մը հապճեպը կար այդ ապրելուն մէջ: Ամէն վայրկեան բանի մը կը սպասէին: Խանգարումի մը: Եւ հիմա աւելի կը վախնային, քան տասը տարի առաջ: Որովհետեւ գոհ էին իրենց վիճակէն ու չէին ուզէր, որ բան մը փոխուի:

<...>

Առանց աղէտի անհանգիստ էին: Տարր մը պակաս էր իրենց կեանքին: Բանի մը կը սպասէին: Որովհետեւ չէին կրնար երեսակայել կեանք մը՝ յավերժաբար առանց աղէտի, միօրինակ ընթացքով: Տասը տարին շատ էր» [10, 503]:

Պարետը նույն միջավայրի ու ժամանակի ճնշումը է: Ինչքան էլ փախստական ապրած լինի, գոնե ժամանակավորապէս վերադարձել է մոր և քրոջ մոտ, և փաստն այն է, որ **«Ակամայ ինքզինքը կը գտնէր հայութեան ծիրին մէջ: Կը ջղագրգռուէր ասկէ: Նոյն հիւանդութեան ախտանիշները կը յայտնուէին այս տարիքէն ետք»** [10, 503]:

Ազնիվ հանրմ Սարայկիլը դիտարկում է պոլսահայությանը բնորոշ հիվանդություններին մեկը՝ «մեր ազգային գործերն ալ նպարավաճառի հաշիւներով քալած են» [10, 504] (ճիշտ այսօրվա պէս), որ «Ասիկա Բիզանդիոնի իսկական եւ վերջնական անկումը պիտի ըլլայ» [10, 504]՝ ասել է՝ Պոլիսն ի վերջո վերածվել է Ստամբուլի:

Վիպական գործողությունները տեղի են ունենում 1945-ի և 1955-ի միջև, թվում է՝ մոտ մի հարյուրամյակի հեռավորություն կա վեպի պատկերած ժամանակից, սակայն... «Բան մը չէ փոխուած: Ամբողջ կեանքս քաղաքական միջավայրի մէջ ապրեցայ: Ատենօք եկեղեցիէ մը ճամփայ կ'ելլէին, ազգին ուսերուն վրայ կոխելով կը բարձրանային, պալատին մարդ կ'ըլլային, հարստութիւն կը դիզէին: Չիմա նորէն եկեղեցիէ մը ճամբայ կ'ելլէն, համայնքին ուսերուն վրայ կոխելով կուսակցութիւններուն մարդը կը դառնան, հարստութիւն կը դիզեն: Ինչ մուր որ ունենան [ազգին ձակտին կը փակի հարկաւ: Բայց այս ազգը սովորութիւն չունի հայելիին նայելու...» [10, 504], դրա փոխարեն միայն խոսում են՝ մոռանալով գործելու անհրաժեշտությունը. «<...> կը խոսէին փսխել տալու աստիճան: Անպայման պէտք էր, որ այս տեսակ բան մը ունենային խոսելիք, տարիներով, սերնդէտերունը» [10, 505]:

Այս ամենից հետո տեղ է գտնում համազգային ախտանիշը, երբ «Տառապանքը կը դառնար հաճոյք, նուաստացումը՝ քաջագործութիւն, անարգանքը՝ սինիզմ» [10, 505]:

Եվ այս ամենից հետո «Ամէն մարդ կը սպասէր եւ բնական կը գտնէր, որ «բան մը ելլայ»: Բնականէն ալ անդին, անխուսափելի: Եւ կը համակերպէր, կարծես կը մտաթէր, որ ժամ առաջ ըլլայ ըլլալիքը: Ամէն մարդ անհանգիստ էր, երբ երկար ատեն բան մը չէր պատահեր: Անբնական բան մը կը գտնէր խաղաղութեան մէջ: Գուցէ ջիղերը կ'արուէին: Սեւ ամպ մը կը փնտռէր հորիզոնը, անհամբեր կը դառնար արեւը խափանուած տեսնելու: Քոյեկտիվ մագոշիզմ չէ՞ր աս: Անգիտակցորէն ինքնասպանութեան մղումով մը չէ՞ր որ իրենց ձակատագիրը անփոփոխ պահելու կամ փոխացնելու նախախնամական դերը ունէին: <...> Եւ հայութիւնը այս «տէլմէ տիպլումաթ»ներէն<sup>2</sup> դեղագիր պիտի սպասէր իր անբուժելի անձկութիւններուն» [10, 505-506]:

Ընթերցողը կարող է չհամաձայնել այս կամ այլ դրույթի հետ, անգամ մերժել վեպի ասելիքը, քանի որ իրավ դժվար է հայելուն նայելը և դեմքի մուրը տեսնելը, սակայն ավելի անպատվաբեր է մրոտ երեսով մարդամեջ մտնելը, տկլոր մեջքով կատու շալակելը՝ համազգային ցավը պատկերացնելով պարծենալիք: Թերևս սա է այն պատճառներից մեկը, որ

<sup>2</sup> Տէլմէ տիպլումաթ (թըք.) – լավագույն դիվանագետ:

տեղ է գտնում փախուստը ճշմարտությունից, փախուստը սեփական էությունից, և Պարետը ակամա, անզիտությամբ, նաև բանիվ և գործով հեռանալու է իր չձևավորված մենք-ից՝ իր ես-ը տեղավորելով այլոց մենք-ի մեջ:

Սրանից հետո կարծել, թե «Պարետը պատենշի վրա է» (Մ. Դանիելյան) [3, 153], ճշմարտությունից հեռու է թվում, որովհետև Պարետը ակամա պարտվածներից մեկն է, հոգեբանական պարտության ենթարկվածը, և այս հանգամանքը տեղավորվում է նահանջի պայմանականության ու տրամաբանության մեջ:

Այդ պարտությունն է մատնանշում վեպի վերջին՝ բնապատկեր հիշեցնող, բայց ըստ էության հոգեբանությունն ամբողջացնող պատկերը.

«Ձուրը անկենդան էր:

Աշխարհին մեկուսացած, երկինքի սեուլթեան վրայ առկախ բոլոր կարմորակ լոյսերը կը մարեին մեկիկ-մեկիկ:

Իսարոյկներ կը բարձրանային անոնց տեղ:

Ու խարոյկներն ալ կ'ընկնուգէին խաւարի մէջ: Թերակղզին կ'ընկնուգէր: Հրուանդանը կ'ընկնուգէր: Տեսանելի ամեն բան եւ տեսնող բոլոր աչքերը կը մարեին: Եւ ինչ որ կար երկրի վրայ՝ կը թաղուէր ընդերքին մէջ:

Եւ ալ լոյս չէր վառէր ոչ մէկ տեղ:

Առագաստանաւը անհետացաւ գնաց երկինքի ճամբէն» [10, 547]:

### **Զավեն Պիպեռայանի մայրամուտն ու արշալույսը կամ եզրակացության փոխարեն**

Երվանդ Ագապայանի արդեն հիշատակված «Աննահանջ Շահնուրը» հոդվածում դիտարկում կա. «Մփիւռը այսօր, իր այլասերման արագ ընթացքին մէջ կորսնցնելու վրայ է գիտակցութիւնը իր ազգային արժեքներուն» [1, 13]: Պատճառներից մեկն էլ այն է, որ «Մփիւռը այսօր ի վիճակի չէ տրեկ կանգնելու իր գրողներուն. մանաւանդ Շահնուրի նման հզօր տաղանդիմը» [1, 12]: Փորձենք լրացնել, որ սփյուռքն ու հանուր հայությունը ի վիճակի չէղան տեր կանգնելու իրենց գրողներին, այդ թվում նաև Զավեն Պիպեռայան գրագետին: Իսկ ցանկացած ազդեցության հետևում է հակազդեցությունը: Այդպես է կյանքի մայրամուտին տեղ գտնում այն պահվածքը, որ դրսևորվեց Զավեն Պիպեռայանի կողմից առ մեր լեզուն ու գրականությունը: Մի քանի քաղաքներում Ռ.Հատտեճյանի՝ օրագրային նշումների վրա հիմնված գրառումներից, որ ինչ-ինչ իրողություններ են պարզաբանում. «Իրահատուկ ազգային շեշտ ալ ունէին իր յողուածները, համայնքային շահերը պաշտպանելու յատուկ մերձեցում մը <...>: Մեր սերունդին համար անտոռանալի մնացած էր երկրին իշխանութիւններուն ուղղեալ յախուռն մէկ յողուածը, որ կը կրէր «Ալ կը բավէ» խորագիրը: Պիպեռեանի անունը նույնացուցած էր այդ «Ալ կը բավէ»ին հետ» [11, 138]:

«<...> մամուլի մէջ հետզհետէ պիտի հրատարակուէին անոր <Զավեն Պիպեռայանի> պատմուածքները: Այդ պատմուածքները պիտի հաւաքուէին «Օովը» խորագրեալ հատորի մը մէջ: Յետոյ պիտի գրէրերկու վեպեր՝ «Լկրտածը» եւ «Անկուտի սիրահարները»: Երկար լռութենէ մը վերջ ալպիտի հրատարակէր իր վերջին գործը, «Մրջիւններու Վերջալոյսը»: Այս գործը, եւ նախորդները, իր մէջ պիտի ստեղծէին մեծ յուսախաբուցիւն: Պիտի պաղէր Հայ գրականութենէն, եւ պիտի վճռէր մինչեւ մահ անգամ մըն ալ Հայերէն չգրել» [11, 140]:

Հայերէն չգրեց (՛), սակայն հայերէն հրատարակվեց «Մրջիւններու վերջալոյսը» վեպը, ըստ էության կարապի երգը և կտակը՝ ուղղված իր ժամանակակիցներին ու գալիքին:

Հատտեճյանը շարունակում է. «Պաղած էր մեր գրականութենէն, իր օրկանային բոլոր կապերը խզած էր Հայ գրականութեան հետ: Այսքան ուժեղ ու որակաւոր գրող մը, այսքան վարպետ վիպագիր մը, ձեռքերը լուացած եւ քաշուած էր հրապարակէն: <...> Որո՞ւ համար կը գրէս, քանի՞ հոգի կը կարդայ»: <...> Ան պարզապէս դառնացած էր Հայ ընթերցողին» [11, 145]: «Իր մահուան գուագոյիպեցաւ «Մրջիւններու Վերջալոյս»ին շքեղ մէկ վերահրատարակութիւնը: Ատիկա ի ր վերջալոյսը եղաւ:

Կորսնցուցիկ արժեքատր գրեղբայր մը: Բայց Հայ գրականությունը վաղուց կորսնցուցած էր զինք» [11, 146]:

Մա ժամանակակցի, ակնանտեսի, ժամանակի գրական կյանքի մասնակցի խոսք է, սակայն սեփական վերլուծությունը հանգեցնում է այլ մի գնահատականի: «Չէ՞ք տեսնում իմ կերպարի և ներկայացված իրականության ողբերգությունը, տեսե՞ք այդ ողբերգությունն իմ անձի ու գործի իրացմամբ», – ասես ուզում էր ասել Ջ. Պիպեռյանն իր կենսակերպով, որ մարտահրավեր էր իրականությանը, տագնապի ճիշ: Ի դեպ, կարելի է ինչ-ինչ նման իրողություններ տեսնել Պիպեռյան մարդու և Պարետի կերպարի միջև (տարիքը, զինվորական ծառայությունը, մի քանի տարով բացակայությունը Պոլսից և այլն):

Ջ. Պիպեռյանը թերևս գիտակցաբար և իրատեսորեն էր տեսնում «Մրջինների վերջալույսը»՝ սփյուռքահայի, մասնավորապես պոլսահայի առաջ կանգնած հայ ինքնության կորստի մեծագույն տագնապը, որի արդյունքը համաձայն վեպն է: Վեպն իր հրատարակության սկզբում ուշադրության չարժանացավ (մասնակի կարող ենք նկատել Ի. Աճեմյանի, Ս. Դանիելյանի [3], Մարկ Նշանյանի [7], ավելի ուշ՝ Ս. Տեյիբմենջյանի [12; 13], Հովհ. Եղոյանի [4] անդրադարձները), ըստ էության չգնահատվեց նաև պոլսահայ հանրության կողմից, անգամ երբեմն միտումնավոր մոռացության տրվեց Պոլսում և հայրենիքում<sup>3</sup>: Մենակ, չհասկացված Ջ. Պիպեռյանն ըստ էության կրկնեց իր կերտած Պարետ կերպարի գործելակերպը՝ օտարվելով կամ օտարվել փորձելով հայ գրից ու գրականությունից: Հեղինակի ուրվագծվող կերպարը ոչ թե ուրացման արտահայտություն է, որ դիտարկվում է ժամանակի հետադիմությունից, այլ տեսակի զուբալացման հետ կապված տագնապի ճիշ:

Այսօր այս ընթացքը շարունակական է: Սկրտիչ Մարկոսյանն իր հայերեն գրքերը («Մեր այդ կողմերը» և «Տիգրիսի ափերեն») գրելուց հետո շարունակեց գրել թրքերեն ու քրդերեն, Իզնա Սարըսալանն է ստեղծագործում նաև թրքերեն<sup>4</sup>, Վերձիհան Ջիֆլիօղլու տաղանդավոր բանաստեղծուհին է անցել թրքերենի... Էլ ավելի տագնապեցնող է այն իրողությունը, որ ոչ միայն նվազում է սփյուռքի բաղկացուցիչ պոլսահայ գաղութը, այլև պակասում է հայերենի կիրառությունը և դերակատարությունը պոլսահայության շրջանում: Նույն իրողությունն ենք տեսնում լատինաստերիկյան գաղթօջախներում, մեկ միլիոնից ավելի կազմող ֆրանսահայ գաղթօջախում:

Եվս մի գնահատություն. «Ու թող տարօրինակ չհնչի գլխավոր եզրահանգումը. «Զավեն Պիպեռյանը 20-րդ դարի երկրորդ կեսի հայ խոշորագույն վիպասաններից է: Մեղքը բոլորովին էլ հեղինակինը չէ, որ այսքան ուշացումով ենք դիմում նրան, որ ըստ էության խորհրդահայ ընթերցողը դեռ չի ճանաչում նրա ստեղծագործությունը» [3, 153]:

Ընդհանրապես հայ ընթերցողը (եթե կա նման հավաքականություն) չի ճանաչում նրա ստեղծագործությունը: Եվ հայ գրականությունը (նաև գրականագիտությունը), հուսանք, վերագտնում է իր արժանավոր գրագետ որդուն:

<sup>3</sup> Խոսում է Ս. Տեյիբմենջյանի «Ամբաստանագիր՝ գրական մահափորձի մը առթիվ» հոդվածը, որ նախ տպագրվել է «Բագին» հանդեսի 2022-ի թիվ 3-ում և 4-ում, ապա «Մարմարա» օրաթերթի 2025-ի 20.01-ի, 27.01-ի, 3.02-ի, 10.02-ի, 17.02-ի, 24.02-ի թվերում: Նշենք, որ Գեղամ Սևանի «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1945-1985)»-ի մեջ ընդամենը մեկ նախադասություն կա՝ կապված Զավեն Պիպեռյանի ստեղծագործության հետ, որ մեջբերում ենք առանց մեկնաբանությունների. «Զավեն Պիպեռյանին եթե հաջողվել է տալ նաև մարդկային կյանքի, նրա լուսանցքից դուրս գցված հերոսների, ընդհատակի, հանուն ապրոստի միջոցների հայթայթման ստրկացնող, մարդկային արժանապատվությունը ակամա կորցրած մարդկանց իրապաշտ պատկերը, ապա մյուսների արձակում կյանքի տրտվին է, նույնքան իրավ, առօրյա կյանքը իր ուրախ ու տխուր կողմերով և ողբերգական երեսներով նաև, մի խոսքով՝ կյանքը ինչպես որ կա, նրա կենսափիլիսոփայությունը, այնուամենայնիվ, հագեցած լույսով և վաղվա նկատմամբ հավատով» (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1997, էջ 313):

<sup>4</sup> Հոդվածը շարադրվել է Իզնա Սարըսալանի մահից (14. 02. 2026) առաջ:

### Գրականություն

1. Ազատյան Ե., Աննահանգ Շահնուրը, «Նոր-Դար», թիվ 3, 2004:
2. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976:
3. Դանիելյան Ս., Ժամանակակից պոլսահայ արձակը, Քննադատական տարեգիրք, գ. 3, Երևան, «Նաիրի» հրատ., 1991:
4. Եղոյան Հովհ., Պոլսահայ նորագույն շրջանի արձակը 1950-2000 թթ.: «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2013:
5. Հատտեճեան Ռ., Յուշատետր-15, Գրական հաւաքոյթ Սուստիյէի մեր պարտէզին մէջ, Իսթանպուլ, Մուրադ օֆսէթ, 1999:
6. Հովսեփյան Ռ., Ծիրանի ծառերի տակ, Երևան, «ԱՌՏ» հրատ., 2006, էջ 184:
7. Մաթևոսյան Հր., Ես ես եմ, Երևան, «Ոսկան Երևանցի», 2005, էջ 382:
8. Մաթևոսյան Հր., Վիպակներ, Երևան, «Նաիրի» հրատ., 1990, էջ 641:
9. Նշանեան Մարկ, Զաւէն Պիպէտեանի միջինները, Յառաջ. Միտք եւ Արուեստ, թիւ 123, 3 յունուար, 63-րդ տարի, թիւ 16653: Նույնը՝ Պիպէտեան Զ., Մրջիններու վերջալոյսը, Ստանպուլ, «Արաս» հրատարակչութիւն, 2007, էջ 557-571:
10. Պիպէտեան Զ., Մրջիններու վերջալոյսը, Ստանպուլ, «Արաս» հրատարակչութիւն, 2007:
11. Ռոպեր Հատտեճեանին հետ սիրտ-սիրտի, հատորը կազմեց, խմբագրեց եւ Յառաջաբան՝ Յակոբ Տիւնայեանի, Պոլիս, 2020:
12. Տէյիրմէնջեան Ս., Ամբաստանագիր՝ գրական մահափորձի մը առթիվ, «Բագին», 2022, 3, էջ 106-112 և «Բագին», 2022, 4, էջ 49-70, նույնը՝ «Մարմարա» օրաթերթի 2025-ի 20.01-ի, 27.01-ի, 3.02-ի, 10.02-ի, 17.02-ի, 24.02-ի թվերում:
13. Սեւան Տէյիրմէնջեանի Յառաջաբանը /Պիպէտեան Զ., Մրջիններու վերջալոյսը, Ստանպուլ, «Արաս» հրատարակչութիւն, 2007, էջ 10-21:
14. Փիլոյան Վ., Այսօր և միշտ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2023:
15. Սևան Գեղամ, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1945-1985), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1997:

### Мужество смотреть в зеркало:

### Роман Завена Пиперяна «Закат муравьев» в контексте литературы регресса

*Пилоян Валерий*

#### Резюме

**Ключевые слова:** *литература регресса, проза диаспоры, Шаан Шахнур, глобализация, константинопольская армянская литературная школа, романист Завен Пиперян*

Армянская литература диаспоры представляет собой литературу утрат – как прошлых, так и современных. В ней постоянно присутствует мотив отчуждения от армянской идентичности: именно в этом контексте рассматривается роман «Закат муравьев» Завена Пиперяна (1921-1984). Регресс осмысливается как продолжение Геноцида, за которым следуют тревоги глобализации, в условиях которой фрагменты армянской идентичности растворяются и утрачивают национальную принадлежность в результате культурного и психологического поражения. В тексте обозначена и «общермянская болезнь» – бегство от собственной идентич-

ности и естественного жизненного пространства, тогда как пространство «мы» предстает единственным возможным локусом гармоничного существования. Все более частотным становится бегство от собственной идентичности, выражающееся в готовности – либо вынужденной необходимости – стать частью иной общности. Ярким выражением данной реальности является роман З. Пиперяна «Закат муравьев», в котором изображены этапы регресса: за первым бегством следует второе, а затем – бегство от самого себя, более радикальная форма утраты. В системе художественной условности романа ключевую роль играют понятия «муравей» и «закат». В условиях глобализирующегося мира человек превращается в стандартизированное существо, лишенное индивидуальности, а также национальной и личной памяти, растворяясь в инокультурной среде. Смотреть в зеркало и видеть на собственном лице сажу трудно, однако еще более унизительно выходить к людям с замазанным лицом, преподнося общенациональную боль как предмет гордости. З. Пиперян, по-видимому, осознанно и трезво воспринимал величайшую тревогу, стоявшую перед диаспорой, в частности константинопольским армянством, – угрозу утраты армянской идентичности.

**The Courage to look into the Mirror:  
Zaven Piperyan's Novel "The Sunset of the Ants" in the Context  
of the Literature of Retreat**

*Piloyan Valery*

**Summary**

**Keywords:** *literature of retreat, diaspora prose, Shahan Shahnur, globalization, Constantinopolitan Armenian literary school, novelist Zaven Piperyan*

Literature of the Armenian Diaspora constitutes a literature of loss – both historical and contemporary. A persistent motif within it is alienation from the Armenian identity; it is within this context that Zaven Piperyan's novel "The Sunset of Ants" (1921–1984) is examined. Retreat is conceptualized as a continuation of the Genocide, followed by the anxieties of globalization, under the conditions of which fragments of Armenian identity dissolve and lose their national belonging as a result of cultural and psychological defeat. The text also identifies a "pan-Armenian malaise": flight from one's own identity and natural living space, while the space of the "we" emerges as the only possible locus of harmonious existence. Increasingly frequent is the escape from one's own identity, manifested in a willingness – or forced necessity – to become part of another community. A vivid articulation of this reality is found in Piperyan's novel «The Sunset of Ants», which depicts successive stages of retreat: the first flight is followed by a second, and then by a flight from the self – a more radical form of loss. Within the novel's system of artistic convention, the concepts of the "ant" and the "sunset" play central roles. In a globalizing world, the individual becomes a standardized being, deprived of individuality as well as national and personal memory, dissolving into an alien cultural environment. To look into the mirror and see soot on one's own face is difficult; yet even more humiliating is to appear before others with a smeared face, presenting collective national pain as a source of pride. Piperyan appears to have consciously and soberly perceived the gravest anxiety confronting the diaspora, particularly Constantinopolitan Armenians – the threat of the loss of Armenian identity.

**Ներկայացվել է 26. 11. 2025 թ.  
Գրախոսվել է 10. 02. 2026 թ.  
Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.**

ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ,  
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ФИЛОСОФИЯ,  
ЮРИСПРУДЕНЦИЯ И  
ИСТОРИОВЕДЕНИЕ

PHILOSOPHY,  
JURISPRUDENCE AND  
HISTORICAL STUDIES

## **Ֆալիբիլիզմի զարգացումը ժամանակակից իմացաբանությունում և գիտության փիլիսոփայությունում**

*Աբելյան Դավիթ*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-124>

*Հանգուցային բաժեր. սխալի հնարավորություն, մեթոդաբանություն, էմպիրիզմ, պրագմատիզմ, պոզիտիվիզմ, քննադատական ռացիոնալիզմ, ինդուկցիայի խնդիր, ճշմարտություն*

### **Նախաբան**

Ֆալիբիլիզմի ձևավորման և զարգացման պատմությունն ընդգրկում է փիլիսոփայության ու գիտության փոխհաջորդած ամենատարբեր շրջափուլեր, հարացույցեր և միտումներ: Այն նախ սկիզբ է առնում անտիկ հունական փիլիսոփայությունում, որտեղ ֆալիբիլիզմի տարրերն աստիճանաբար ձևավորվում են ակադեմիական կամ պիտոնյան սկեպտիցիզմի կողքին հետզհետե զարգացող մեդոնացված սկեպտիցիզմի շրջանակում: Ապա նկատելի է դառնում ֆալիբիլիզմի տարրերի զարգացումն ու դրսևորվելը Դեկարտի մեթոդաբանական սկեպտիցիզմի ու Հյումի ինդուկտիվիստական սկեպտիցիզմի շրջանակում, որոնց արդյունքում աշխարհայացքային-իմացաբանական նշանակության կողքին ֆալիբիլիզմը ձեռք է բերում նաև մեթոդաբանական-նորմատիվ դեր և նշանակություն: Ֆալիբիլիզմի հետագա զարգացումը և վերջինիս հիմնական սկզբունքների ձևակերպման ու սահմանման փորձերը կապված են 19-րդ դարի ամերիկյան պրագմատիզմի ներկայացուցիչներ Չարլզ Պիրսի, Ուիլյամ Չեյմսի և Ջոն Դյուիի հիմնարար աշխատանքների հետ: Պրագմատիկ փիլիսոփաների կողմից ուսումնասիրվող կենտրոնական հիմնահարցերից էին ռացիոնալ և էմպիրիկ ճանաչողության սահմանափակության, ճանաչողությունում ռացիոնալ կասկածի մշտական առկայության, համոզմունքների և գիտելիքների ձեռքբերման և հիմնավորման, գիտության ու գիտական հետազոտության նպատակի և մի շարք այլ հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրումն ու քննումը, ի թիվս այլ հիմնահարցերի, էլ ավելի բարձրացրեց ու ամրապնդեց ֆալիբիլիզմի իմացաբանական-գիտաբանական արժեքը իմացաբանության և գիտության փիլիսոփայության խնդրակարգերի համատեքստում: Հիմնվելով հարյուրամյակներ ընդգրկող իմացաբանական հարուստ ավանդույթների և մեծանուն մտածողների ուսմունքների վրա՝ 20-րդ դարում ֆալիբիլիզմի զարգացումը ստացավ սկզբունքորեն նոր որակ և ընթացք՝ նպաստելով ֆալիբիլիզմի հայեցակարգայնացմանը և հարուստ ինտելեկտուալ ավանդույթի ձևավորմանը: Ժամանակակից իմացաբանությունում և գիտության փիլիսոփայությունում ֆալիբիլիզմի զարգացումը կապված է այնպիսի մեծանուն մտածողների հետ, ինչպիսիք են Բերտրան Ռասելը, Ջոն Դյուիին, Կառլ Փոփերը և ուրիշները: Այնուամենայնիվ, ժամանակակից ֆալիբիլիստական իմացաբանության և ֆալիբիլիզմի հայեցակարգի ձևավորումը նախևառաջ պետք է դիտարկել 19-ից մինչև 20-րդ դարի առաջին կեսում աշխարհի գիտական պատկերում տեղի ունեցած փոփոխությունների և իմացաբանական-գիտաբանական խնդրակարգի մի շարք հիմնախնդիրների վերանայման ու վերաիմաստավորման՝ պրագմատիզմի, պոզիտիվիզմի և քննադատական ռացիոնալիզմի փիլիսոփայության շրջանակում կատարված փորձերի համատեքստում:

### **Ֆալիբիլիզմի զարգացումը դասական և ոչ դասական գիտական պատկերում**

18-րդ դարից ի վեր ավելի քան երկու հարյուրամյակ նյութոսոսական դասական մեխանիկական համարվել է գիտության ու ֆիզիկական իրականության վերաբերյալ լավագույն նկատման

րագրությունը, իսկ դասական ֆիզիկայի օրենքները՝ աշխարհի ֆիզիկական պատկերի վերաբերյալ «վերջնական խոսք»։ Դասական մեխանիկայից բխող կանխատեսումներն ու դրա շրջանակում նկարագրվող օրենքները մասնագիտական համայնքի մեծամասնության կողմից ընկալվում էին որպես բացարձակ, վերջնական ու անփոփոխ ճշմարտություններ. *«Այդ ժամանակներում գիտնականները կարծում էին, որ մեր ողջ տիեզերքը և մենք դրանում ձևավորում ենք հսկայական ու բարդ մեխանիկական մեքենա, որը ենթարկվում է նյուտոնյան օրենքներին»* [6, 10]: 20-րդ դարի սկզբին Ալբերտ Այնշտայնի հիմնարար աշխատանքները հարաբերականության հատուկ և ընդհանուր տեսությունների շրջանակում ցույց տվեցին դասական ֆիզիկայի խնդիրներն ու սահմանափակումները՝ իրականության դասական մեխանիկական պատկերը փոխարինելով քվանտառելյատիվիստական պատկերով, իսկ խիստ դետերմինիզմի գաղափարը հավանական ու հարաբերական դետերմինիզմով: Արդյունքում բացարձակ ճշմարտության հավակնություններ ունեցող գիտական տեսությունը դարձան սխալական և միայն սահմանափակություններով կիրառելի՝ ի ցույց դնելով ինչպես մարդկային ճանաչողության սահմանափակությունները և այնպես էլ մեր լավագույն տեսությունների ու ամենահիմնավոր գիտելիքների սխալականությունը: Ֆալսիֆիլիզմը, որպես փիլիսոփայական հայեցակարգ, հիմնված է նկարագրված նախադրյալի վրա՝ *«Մարդիկ երբեք չեն կարող ունենալ միանշանակ և վերջնական համոզմունք այն մասին, որ իրենց գաղափարները կամ համոզմունքները բացարձակ ճշմարտություններ են: Այն, ինչ մենք այսօր գիտենք, ապագայում, ամենայն հավանականությամբ, կփոխարինվի շատ տարբեր և ենթադրաբար ավելի լավ գաղափարներով»* [12, XI]: Առաջարկված մոտեցման դեպքում, եթե անքննելի և բացարձակ ճշմարտություն համարված նյուտոնյան ֆիզիկայի տեսությունը փոխարինվել է Այնշտայնի ֆիզիկական տեսությամբ, ապա ապագայում Այնշտայնի ֆիզիկական տեսությունն ու ընդունված համարվող ժամանակակից այլ տեսությունները կարող են լիարժեքորեն փոխարինվել ավելի լավ տեսություններով: Մարդկային սխալականության, ճանաչողությունում ռացիոնալ կասկածի մշտական առկայության, անցիոնալ և էմպիրիկ ճանաչողության սահմանափակության վերաբերյալ պատկերացումները եղել են Այնշտայնին և Նյուտոնին նախորդած փիլիսոփայական ու գիտական ավանդույթներում ևս: Մակայն մինչև 19-րդ դարը գրեթե բոլոր մտածողները համակարծիք են եղել այն հարցում, որ գիտելիքը պահանջում է անսխալականություն ու անկասկածելիություն, և իմացության շարունակական բարելավման արդյունքում ի վերջո հնարավոր է հասնել բացարձակ ճշմարտության (ինֆալսիֆիզմ): Ուստի ճշմարտությունը ոչ միայն հետազոտության և գիտության նպատակն է, այլ նաև դրա հասանելի վերջնաարդյունքը:

Ֆալսիֆիլիզմի ժամանակակից պատմությունն ու զարգացումը մեծապես կապված է եղել գիտական հետազոտության և, ընդհանրապես, գիտության նպատակի հիմնահարցերի քննության հետ: Իր ժամանակաշրջանում Նյուտոնի տեսության ազդեցիկությունն այնքան մեծ էր, որ այդ շրջանի մի շարք մտածողների համար գիտության և հետազոտության նպատակը այլևս չէր համարվում ճշմարտությունը կամ դրան ձգտելը (որովհետև այն արդեն բացահայտված է), այլ միայն դրա լրացումը և մեկնաբանումը: Ի հակադրություն 19-րդ դարի գիտական համայնքի մեծամասնության բրիտանացի փիլիսոփա Ջոն Ստյուարտ Միլն առաջիններից էր, ով *«չէր կարողանում տեսնել Նյուտոնի՝ բացարձակ ճշմարտությունը բացահայտելու «պարզ փաստը»* [12, XX]: Խոսելով ճշմարտության և գիտական հետազոտության նպատակի մասին՝ Միլը գրում է. *«Այն համոզմունքները, որոնց վրա մեծամասամբ ապավինում ենք, պաշտպանված և երաշխավորված չեն, այլ փոխարենը մշտապես ուղղված են աշխարհին՝ պահանջելով ապացուցել իրենց իսկ անհիմնավորվածությունը...: Եթե մենք բաց լինենք ճշմարտությունների նկատմամբ, ապա մենք կարող ենք հուսալ, որ էթե կա ավելի լավ ճշմարտություն, այն կգտնվի, երբ մարդկային միտքը կարողանա ընկալել այն:*

Միևնույն ժամանակ մենք կարող ենք հույս դնել ճշմարտության վերաբերյալ մեր օրերում առկա մոտեցումներին: Լինելով սխալական՝ սա այն որոշակիության աստիճանն է, որին հնարավոր է հասնել» [7, 21]: Ընդունելով մարդու և իր ճանաչողության կարողությունների սխալականությունը՝ Միլը համոզված էր, որ գոյություն չունի մեկ վերջնական ճշմարտություն, այլ փոխարենը պետք է անընդհատ փնտրել նոր ճշմարտություններ՝ հիմնվելով այդ պահի համար ընդունելի ճշմարտության վրա: Ճշմարտության բնույթի, ինչպես նաև հետազոտության ու գիտության նպատակի վերաբերյալ Միլի մոտեցումները մեծ ազդեցություն ունեցան պրագմատիզմի ներկայացուցիչների իմացաբանական հայացքների և հատկապես 20-րդ դարի առաջին կեսում բուռն գործունեություն ծավալած Ջոն Դյուիի մոտեցումների վրա: Զարգացնելով Միլի, Պիրսի և Ջեյմսի ֆալսիֆիստական մոտեցումները՝ Դյուին իր ավելի ուշ շրջանի աշխատանքներում փորձում է գիտության համար զարգացնել այնպիսի փիլիսոփայություն, որը թույլ չէր տա նոր գիտությանը (Այնշթայնի տեսությանը) հավակնել բացարձակ ճշմարտությանը և վերածվել գիտական դոգմայի այնպես, ինչպես դա տեղի ունեցավ նյուտոնյան ֆիզիկայի հետ: Մտաստիսանելով հարցին, թե «ո՞րն է գիտության և գիտական հետազոտության նպատակը», Դյուին, ինչպես և Պիրսը, արձանագրում է, որ գիտական տեսությունները երբեք չեն կարող լինել ճշմարիտ և բոլոր գիտական տեսությունների ճշմարտացիության արժեքը պայմանավորված է տվյալ ժամանակում առկա իմացությամբ: Եթե ապագայում գիտնականներին հաջողվի հայտնաբերել նոր փաստեր, որոնք կհակասեն ճշմարտության մասին առկա պատկերացումներին, ապա առկա ճշմարտությունը պետք է փոխարինվի նոր ճշմարտությամբ [12, XXIII]: Ճշմարտության դասական և անփոփոխ ըմբռնումն այս կերպ փոխարինվում է պրագմատիկական ճշմարտության գաղափարով: Պրագմատիզմի ներկայացուցիչների ըմբռնմամբ ճշմարտությունը կարծիք է, որը ձևավորվում է տվյալ ժամանակ գիտական հանրությունը՝ հաշվի առնելով և համադրելով մի շարք փաստեր ու արդյունքներ: Եթե փոխվում են փաստերը, ու տեղի են ունենում նոր բացահայտումներ, ապա փոխվում է նաև կարծիքը: Այս առնչությամբ Դյուին գրում է, որ տրամաբանության տեսանկյունից ճշմարտության լավագույն սահմանումը, որն իրեն հայտնի է, պատկանում է Պիրսին. «Կարծիքը, որը վճռված է ի վերջո ընդունվելու բոլորի կողմից, ովքեր ուսումնասիրում են այն, հենց այն է, ինչը մենք անվանում ենք ճշմարտություն: Եվ օրյեկտը, որը ներկայացված է այս կարծիքի շրջանակում, կհամարվի իրական» [5, 345]: Գիտական փաստերի և ճշմարտության փոփոխական բնույթի վերաբերյալ պրագմատիկական ըմբռնումը ձևավորվել է ոչ միայն 19-րդ դարի դասական ֆիզիկայի ճգնաժամի ու Այնշթայնի տեսության, այլ նաև Չարլզ Դարվինի էվոլյուցիոն տեսության ի հայտ գալու արդյունքում: Դյուին, մեծ խանդավառությամբ ընդունելով էվոլյուցիոնիզմի գաղափարը, այն փորձում է տարածել նաև գիտելիքների և ճանաչողության վրա՝ համոզված լինելով, որ ոչ միայն բնությունն ու օրգանիզմներն են էվոլյուցիա ապրում, այլ նաև մարդկային իմացությունն ու դրա ձևավորման միջոցները. ««Տեսակների ծագում»-ը իր հետ բերեց մի մտածելակերպ, որը, ի վերջո, պետք է փոխեր գիտելիքի տրամաբանությունը, հետևաբար, նաև բարոյականության, քաղաքականության և կրոնի նկատմամբ վերաբերմունքը» [5, 2]: Այս իմաստով դարվինյան էվոլյուցիոնիզմը դիտարկվում էր որպես բնության անընդհատ և շարունակական զարգացման ու փոփոխման անհերքելի փաստ, որը նախևառաջ տարածվում էր բնության ու աշխարհի կենսաբանական գործընթացների և, այնուհետև, դրանց վերաբերյալ մեր պատկերացումների ու գիտելիքների վրա: Այսպիսով, պրագմատիզմի ներկայացուցիչները արձանագրում են, որ բացարձակ, անփոփոխ և անսխալական ճշմարտությունը երբեք հասանելի չէ: Եվ քանի որ այն հնարավոր չէ ձեռք բերել, ապա այն նաև չի կարող լինել ճանաչողության, հետազոտության և գիտության նպատակը: Հարկ է նշել, որ պրագմատիզմի ներկայացուցիչները թեև չեն ընդունում բացարձակ ճշմարտությունը որպես գիտության նպատակ հետազոտության ու ճանաչողության անմիջական արդյունքի իմաստով, այնուհաս-

մենայնիվ, նրանք կարևորում են ճշմարտության փնտրտուքին ուղղված գիտնականի ներքին մղումը, որը ուղենիշային դեր է ունենում գիտնականի՝ հետազոտությունում մշտապես ճշմարտության իդեալին ձգտելու համար: Հատկապես Պիրսն իր մի շարք աշխատանքներում ճշմարտության մասին խոսելիս արձանագրում է վերջինիս թեև անհասանելի, սակայն հետազոտության ու գիտական համայնքի կողմից մտավոր գործունեության կարգավորման ու ուղղորդման համար կարևոր արժեքային-ուղենիշային դերն ու նշանակությունը [8, 13-14]:

Գիտական ճանաչողության նպատակի վերաբերյալ պրագմատիկական ֆալսիֆիզմից բխող մոտեցումը բավականին լայն տարածում է ընդունում ստացավ 20-րդ դարի մի շարք մտածողների կողմից: Մասնավորապես, Ռիչարդ Ռոբրտին և Դոնալդ Դելվիտոնը պնդում են, որ քանի որ լիարժեք որոշակիությունն ու միանշանակությունն անհասանելի են ճանաչողությունում և անկախ այն բարելավելու փորձերից՝ մեր իմացությունը մշտապես պարունակելու է սխալական համոզմունքներ, ապա անիմաստ է հռչակել ճշմարտությունը որպես ճանաչողության և գիտական հետազոտության նպատակ [4, 6-7]: Լևան մոտեցմանը սկզբունքորեն դեմ են արտահայտվել 20-րդ դարի նշանավոր ֆալսիֆիստներ Բերտրան Ռասելը և Կառլ Փոփերը՝ արձանագրելով, որ ոչ մի պարագայում չպետք է հրաժարվել բացարձակ ճշմարտությունից՝ որպես գիտության և հետազոտության նպատակ: Ե՛վ Ռասելը, և՛ Փոփերն, իհարկե, իրենց փաստարկներում հաշվի են առնում ֆալսիֆիստական իմացաբանությունից բխող բոլոր խնդիրները՝ մարդկային սխալականություն, ճանաչողական կարողությունների ու փորձի սահմանափակությունը, հավաստի և բացարձակ գիտելիքների ձեռքբերման, ինչպես նաև գիտելիքների հիմնավորման բարդությունները: Այնուամենայնիվ, փիլիսոփաները համակարծիք են այն հարցում, որ բացարձակ ճշմարտությունը պետք է դիտարկել որպես գիտական հետազոտության և, ընդհանրապես, գիտության անհասանելի և անսովաճելի նպատակ: Այսպիսի մոտեցումն արձանագրում է, որ վերջնական և բացարձակ լինելու հայտ ներկայացնող ցանկացած ճշմարտություն ի վերջո անըմբռնելի է և կարող է բովանդակությամբ անվերջ ընդլայնվել [12, XXV]: Այս առնչությամբ Փոփերը գրում է. *«Գիտության խնդիրն է փնտրել ճշմարտություններ և, հասկապես, ճշմարիտ տեսություններ: Միևնույն ժամանակ մենք պնդում ենք, որ ճշմարտությունը գիտության միակ նպատակը չէ: Մենք ցանկանում ենք ավելին, քան ճշմարտությունը՝ ակնկալելով, որ այն, ինչ մենք փնտրում ենք, կլինի հետաքրքիր ճշմարտություն՝ մի բան, որը կտրվի խիստ դժվարությամբ: Մոսկ ճշմարտությունը բավական չէ, մեր փնտրածը մեր խնդիրների պատասխաններն են»* [9, 229]: Հակադարձելով ճշմարտության վերաբերյալ Դյուլիի պրագմատիկական հայացքներին՝ Ռասելը նշում է, որ ճշմարտության մեկնաբանումը «որպես մարդու կողմից առավելապես ոչ կառավարելի փաստերից կախված իրողություն» մեր ժամանակների մեծագույն վտանգն է [11, 827-828]: Ռասելը դեռևս 20-րդ դարի առաջին կեսում նկատել է ճշմարտության ընկալման ու սահմանման այն միտումը, որն այսօր լայն տարածում է գտել փիլիսոփայական շրջանակում: Մասնագիտական համայնքի ներկայացուցիչներից շատերն այսօր էլ համակարծիք են բացարձակ ճշմարտության անհասանելիության և անհնարիմության հարցում: Սակայն, միևնույն ժամանակ, գիտնականների շրջանում ընդունված չէ ուսումնասիրության և հետազոտության համար սահմանել գործնականում անհասանելի և անիրականանալի նպատակներ: Ճշմարտության պրագմատիկական հայեցակարգը հաճախ էլ ավելի է կարևորվում դինամիկ և արագ փոփոխվող աշխարհն ուսումնասիրող ժամանակակից գիտության կողմից՝ շատ ավելի բարձր իմացաբանական արժեք վերագրելով փոփոխվող, ոչ կայուն, սակայն հասանելի, չափելի, իրատեսական և սխալական ճշմարտություններին: Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ Ռասելի և Փոփերի կողմից հետապնդվող ֆալսիֆիստական կամ սխալական ճշմարտության հայեցակարգը ոչ միայն չի հակասում պրագմատիկական ճշմարտությանը, այլ նաև լրացնում ու զարգացնում է այն՝ էլ ավելի կա-

ռուցողական ու պտղաբեր դարձնելով գիտական ուսումնասիրությունը, հետազոտությունը և ճանաչողությունն ընդհանրապես: Բացարձակ ճշմարտությունը վերադարձնելով գիտության նպատակի բարձրագույն պատվանդանին՝ Ռասելը և Փոփերն այս կերպ ապահովում են մեր իմացության շարունակական և անընդհատ բարելավումը: Ֆալսիֆիստը, ով ձգտում է բացարձակ ճշմարտության աննվաճելի և անհասանելի նպատակին, չի անում սա մարդկանց վիստեցնելու համար, այլ այս կերպ քաջալերում և խթանում է մարդկանց շարունակական կատարելագործման ձգտումը: Ճշմարտության պրագմատիկական հայեցակարգը և դրանից բխող պրակտիկ և հասանելի նպատակները, ինչպես, օրինակ, հիմնավոր գիտական տեսությունների մշակումն է, ճանաչողության շրջայի մասը կազմող կարևորագույն բաղադրիչներն են, քանի որ առանց հասանելի և գործնականում հնարավոր նպատակների հնարավոր չէ առաջ ընթանալ: Սակայն բացարձակ ճշմարտությունը սահմանելով որպես գիտության և գիտական հետազոտության նպատակ՝ ճանաչողությունը ձեռք է բերում օբյեկտիվ և համընդհանուր իմացաբանական ուղենիշ, որը ապահովում է իմացության շարունակական կատարելագործման, սխալներից մաքրելու ու բարելավելու անշեղությունը և անընդհատությունը, ինչպես նաև երաշխավորում է գիտության՝ որպես մեկ միասնական նպատակին ուղղված ռացիոնալ ու օբյեկտիվ գործունեության ոլորտի ապահովումը և եղելիությունը:

Գիտության և հետազոտության նպատակի հիմնախնդիրը միակը չէ, որի վերաբերյալ ժամանակակից ֆալսիֆիզմի ներկայացուցիչների կարծիքները հաճախ տարանջատվել կամ հակադրվել են միմյանց: Դեռևս 18-րդ դարում, ջաստիֆիկացիոնիստական իմացաբանության շրջանակում Էմպիրիզմի մի շարք ներկայացուցիչների կողմից առանձնակի կարևորում ստացավ ինդուկցիայի հիմնախնդիրը: Էմպիրիզմի ներկայացուցիչները միակարծիք էին այն հարցում, որ փորձը կարող է լինել հավաստի և հիմնավոր գիտելիքի աղբյուր: Սակայն արդեն այդ ժամանակաշրջանում շատերը հասկանում էին, որ փորձի կողմից տրված եզակի դատողություններից ընդհանուր եզրահանգումների իրականացումը միշտ չէ, որ ապահովում է կանոնավոր ու միանաչանակ եզրակացություններ: Անգամ ձևավորված կարծիքին հակասող մեկ մասնավոր դեպքը կարող է ինդուկտիվ մտահանգումն ու ստացված եզրակացությունը դնել կասկածի տակ: Այստեղ ի հայտ են գալիս մի շարք հարցեր՝ արդյո՞ք հնարավոր է եզակի դատողություններից բխեցնել ընդհանուր եզրահանգումներ, և արդյո՞ք փորձը կարող է հիմնավորել տեսությունը: Դեյվիդ Հյումի իմացաբանական համակարգում այս հարցերի քննությունը ունեցել է կենտրոնական նշանակություն: Հյումի կողմից մշակված ինդուկտիվիստական փիլիսոփայությունը և ինդուկցիայի հիմնախնդիրը հիմք դարձան ֆալսիֆիզմի հիմնական սկզբունքների ձևավորման, ինչպես նաև հետագայում ֆալսիֆիզմի աշխարհայացքային ու իմացաբանական-մեթոդաբանական նշանակություն ունեցող տարատեսակների զարգացման համար: Հյումն առաջ է քաշում հետևյալ հարցադրումները՝

- *«Անիջականորեն չդիտարկելի ապագայի իրադարձությունները կամ իրավիճակները կանխատեսելիս ինչպե՞ս է հնարավոր հիմնվել նախորդ փորձի վրա»:*
- *«Ինչպե՞ս կարող է փորձը ապացուցել և հիմնավորել մեր գաղափարների ու տեսությունների բացարձակ որաշակիությունն ու ճշմարիտ լինելը»:*

Հյումն արձանագրում է, որ անցյալում և ներկայում կատարված մեծաթիվ հաջող դիտարկումները երբեք չեն կարող երաշխավորել մեր եզրակացության բացարձակ ճշմարիտ լինելը ապագայում, քանի որ մշտապես առկա է այն մտավախությունը, որ հետագայում ի հայտ կարող է գալ մեր ունեցած փորձին ու եզրակացությանը հակադրող նոր փորձառություն [2, 91-92]: Խոսելով նաև մարդու ճանաչողական կարողությունների սահմանափակությունների մասին՝ Հյումը եզրակացնում է, որ մեր բոլոր համոզմունքներն ու եզրակացությունները սխալական են, և ապագայի վերաբերյալ մեր բոլոր եզրակացությունները լավա-

գույն դեպքում կարող են հիմնավորվել սխալականորեն և ունենալ հավանական բնույթ: Ինդուկտիվ փորձառության ու ինդուկտիվ եզրակացությունների վրա հիմնված դատողությունները և տեսությունները երբեք չեն կարող ունենալ հավակնություններ լինելու բացարձակորեն ճշմարիտ, անսխալական և անկասկածելի: Իսկ արդեն 19-րդ դարում դասական ֆիզիկայի խնդիրների ի հայտ գալն ու հետազատական ֆիզիկայով փոխարինումը հիմք դարձավ ինդուկցիայի խնդրի անհատափորձիության ընդունման և գիտության ներսում իմացաբանական ճգնաժամի առաջացման համար: Ինդուկցիայի հիմնախնդիրը խիստ կարևոր նշանակություն է ունեցել 20-րդ դարում ֆալսիֆիկովի զարգացման և ֆալսիֆիկովի տարբեր մեկնաբանությունների ու տարատեսակների ի հայտ գալու համար: Բերտրան Ռասելը ընդունում է ինդուկցիայի վերաբերյալ Հյումի մոտեցումը՝ նույնպես արձանագրելով, որ ինդուկցիան չի կարող ապահովել գիտական ճշմարտությունների բացարձակ ճշմարիտ լինելը և անսխալականությունը: Այնուամենայնիվ, Ռասելը, ինչպես այդ շրջանի այլ մտածողներ, համարում էին, որ գիտական ճանաչողությունը հնարավոր չէ առանց ինդուկցիայի, և այս մեթոդից հնարավոր չէ հրաժարվել: Այս առնչությամբ փիլիսոփան գրում է. *«Հյումի թերահավատությունն ամբողջությամբ հիմնված է ինդուկցիայի սկզբունքի մերժման վրա... Եթե այս սկզբունքը ճիշտ չէ, ապա առանձին դիտարկումներից ընդհանուր գիտական օրենքներին հասնելու յուրաքանչյուր փորձ պետք է համարվի սխալ: ... Հյումն ապացուցել է, որ մաքուր էմպիրիզմը բավարար հիմք չէ գիտության համար: Բայց եթե այս մեկ սկզբունքը (ինդուկցիայի սկզբունքը) ընդունվի, մնացած ամեն ինչ պետք է դիտարկել այն տեսության շրջանակում, ըստ որի, մեր ողջ գիտելիքը հիմնված է փորձի վրա: Պետք է ընդունել, որ սա լուրջ շեղում է մաքուր էմպիրիզմից, և նրանք, ովքեր էմպիրիստ չեն, կարող են հարցնել, թե ինչու, եթե մեկ շեղումը թույլատրելի է, մյուսները ոչ: Սրանք, սակայն, հարցեր են, որոնք ուղղակիորեն չեն բարձրաձայնվել Հյումի փաստարկներում: Այն, ինչ ապացուցում են այս փաստարկները, և են չեն կարծում, որ սա կարելի է վիճարկել, այն է, որ ինդուկցիան անկախ տրամաբանական սկզբունք է, որը հնարավոր չէ բխեցնել ոչ փորձից, ոչ էլ այլ տրամաբանական սկզբունքներից, և որ առանց այս սկզբունքի գիտությունն անհնար է»* [11, 673-674]: Այստեղ արդեն կարող ենք նկատել այն փաստական հիմքը, որի հիման վրա Ռասելը պնդում է, որ գիտության նպատակը պետք է լինի անհասանելի, սակայն բացարձակ ճշմարտությունը: Եթե գիտությունը չի կարող գոյություն ունենալ առանց ինդուկցիայի, իսկ վերջինս իր հերթին չի կարող ապահովել գիտելիքների որոշակիությունն ու բացարձակ ճշմարիտ լինելը, ապա առավելագույնը, որը հնարավոր է գիտական ճանաչողությունում որպես վերջնարդյունք, սխալական ճանաչողության անընդհատ բարելավման միջոցով անհասանելի ու աննվաճելի բացարձակ ճշմարտության իդեալին ձգտելն է: Ինդուկցիայի հիմնախնդրի հարցում Դյուիին համակարծիք է Ռասելի հետ հետևյալ երկու մոտեցումներում՝

1. Գիտական ճանաչողությունը չի կարող տեղի ունենալ առանց ինդուկցիայի,
2. Ինդուկցիան չի կարող ապահովել և երաշխավորել գիտական գիտելիքի բացարձակ ճշմարիտ լինելը:

Սակայն Դյուիի մոտեցումը հեռանում է Ռասելի դիրքորոշումից գիտության և գիտական հետազոտության նպատակի հիմնախնդրի հարցում՝ արձանագրելով, որ եթե ճանաչողության և, հատկապես, գիտական ճանաչողության ընթացքում փոփոխվում են փաստերն ու իրողությունները, իսկ ինդուկցիան երբեք էլ չի կարող ապահովել բացարձակ ճշմարտությունների բացահայտումն ու ճանաչումը, ապա գիտության նպատակը կարող է լինել միայն պրագմատիկ և փոփոխական բնույթ ունեցող ճշմարտությունը: Պետք է արձանագրել, որ ինչպես Ռասելը և Դյուիին, այնպես էլ ժամանակակից գիտության փիլիսոփայության մի շարք ներկայացուցիչներ այդպես էլ չէին կարողանում հաղթահարել ինդուկցիայի հիմնախնդիրը և պատկերացնել գիտական ճանաչողությունը առանց ինդուկցիայի ու այս մեթոդի սահմանափակումների:

## Ֆալիբիլիզմի զարգացումը Կառլ Փոփերի փիլիսոփայությունում

Ոչինդուկտիվիստական գիտության փիլիսոփայության և ֆալիբիլիստական տեսության կառուցման առաջին հաջող փորձի հեղինակն է Կառլ Փոփերը, որը գիտության տիրապետող ինդուկտիվիստական վերլիֆիկացիոնիզմի մեթոդը փոխարինեց ոչինդուկտիվիստական ֆալիբիլիզացիոնիզմով (հերքելիությամբ): Փոփերը գտնում է, որ գիտության մեթոդը պետք է ընկալել որպես այնպիսի փորձի վերաբերյալ տեսություն, որն օգնում է մարդկանց հերքել գիտական արդյունքները և ի ցույց դնել ենթադրյալ տեսությունների սխալակախությունը [12, XLII]: Հատկանշական է արձանագրել, որ ինչպես Դյուին և Ռասելը, այնպես էլ Փոփերը համոզված է, որ ստուգելի փորձի կուտակման միջոցով երբեք հնարավոր չէ հասնել բացարձակ գիտական ճշմարտություններին և դրանց անսխալական հիմնավորմանը: Փոփերը միննույն ժամանակ մերժում է Դյուիի պրագմատիկական ճշմարտության գաղափարը և կիսում է Ռասելի բացարձակ ճշմարտությունը գիտական ճանաչողության ու հետազոտության նպատակ սահմանելու վերաբերյալ մոտեցումը: Սակայն որպեսզի հնարավոր լինի հաղթահարել ինդուկցիայի խնդիրը և վերջինիս սահմանափակումները, Փոփերն առաջարկում է դեռևս Հյումի կողմից ձևակերպված խնդրի իր բանաձևը՝ *«Ինչպե՞ս կարող է փորձն օգնել մեզ բացահայտել այնպիսի գիտական գաղափարներ, որոնք ավելի մոտ կլինեն անհասանելի և աննվաճելի բացարձակ ճշմարտության նպատակին»* [12, XLIV]: Փոփերի համոզմամբ՝ էմպիրիկական գաղափարները հիմնավորող կամ ապացուցող փորձի կուտակումը (կուտույսատիվիզմ) չունի որևէ առնչություն գիտության մեթոդի հետ, քանի որ *«չկա որևէ տրամաբանություն նրանում, որ մենք իրավունք ունենք համընդհանուր պնդումներ բխեցնել առանձին դատողություններից, անկախ այն բանից, թե որքան շատ են դրանք: Այս ճանապարհով ստացված ցանկացած եզրակացություն միշտ կարող է սխալ լինել: Անկախ նրանից, թե այժմ մենք սպիտակ կարապների քանի մասնավոր դեպք կարող ենք արձանագրել, սա չի հիմնավորի այն եզրակացությունը, որ բոլոր կարապները սպիտակ են»* [10, 27]: Գիտությունը պետք է առաջնորդվի բացառապես այնպիսի էմպիրիկական դատողություններով, որոնք «հնարավոր է միանշանակորեն որոշարկել կամ որոնք սխալական են, այսինքն, կարող են ենթարկվել այնպիսի կանոնավոր փորձերնության, որը կփորձի հերքել դրանք» [10, 42]: Ձեռք բերած փորձի և իմացության հերքելիությունը կամ սխալակախությունը հիմք է գիտական առաջընթացի և գիտելիքների աճի համար, քանի որ այս կերպ գիտական իմացություն և տեսություններ կարող են մաքրվել հայտնաբերված սխալներից, իսկ սխալներից ուսուցանվելը թույլ կտա հետագայում առաջարկել նոր տեսություններ, որոնք նախորդ տեսությունները հերքող փորձի ու գործիակազմերին կկարողանան դիմախալ շատ ավելի արդյունավետ կերպով: *«Մենք երբեք չենք կարող հիմնավորել որոշակի կարգ (կրկնվող փորձ) ենթադրող համոզմունքի ճշմարիտ լինելը: Սակայն որպես նախընտրություն հիմք կարգը (ինդուկտիվ ճանապարհով ստացված եզրահանգումը) կարող է օգնել մրցակցող հիպոթեզների միջև ընտրություն կատարելիս»* [3, 94]: Ինդուկցիայի խնդրի վերաձևակերպման և վերաբժնորման փոփերյան փորձը կարելի է նաև դիտարկել բացատրող տեսությունների (ոչ փորձնական դրույթների) համատեքստում: Պատասխանելով հարցին, թե արդյոք հնարավոր է որևէ համընդհանուր բացատրող տեսության սխալակախությունը հաստատել փորձում տրված եզակի «ստուգող դատողությամբ», փոփերը դրական պատասխան է տալիս՝ նշելով, որ փորձնական եզակի փաստը կարող է միայն ցույց տալ առաջադրված համընդհանուր բացատրող տեսության սխալակախությունը և օգնել մրցակցող բացատրող տեսությունների միջև նախընտրություն կատարելիս [1, 44-52]: Փոփերյան ֆալիբիլիզացիոնիզմն իր հերթին հիմնված է մարդկային իմացության, գիտելիքների սխալական բնույթի, մարդկային ճանաչողության կարողությունների սահմանափակության, ինչպես նաև բացարձակ ճշմարտություններ (հատկապես գիտական) բացահայտելու անհնարիտության ֆալիբիլիստական հիմնարար գաղափարների վրա: Կարելի է արձանագրել, որ Դյուին

և Ռասելը, հիմնվելով դասական ֆիզիկայի ճգժնածամի և էվոյուցիոն տեսության ի հայտ գալու պատմական իրադարձությունների, ինչպես նաև մարդկային սխալականության, գիտության մեթոդի ու գիտական ճշմարտությունների փոփոխական և սխալական բնույթի իրողությունների վրա, մնում են առավելապես աշխարհայացքային ֆալսիֆիկովի շրջանակում: Ե՛վ Ռասելը, և՛ Դյուին արձանագրում են բացարձակ, անսխալական, անկասկածելի և վերջնական ճշմարտություններին հասնելու անհնարինությունը: Սակայն Ռասելին այդպես էլ չի հաջողվում հաղթահարել ինդուկցիայի հիմնախնդիրն ու այստեղից բխող սահմանափակումները, որոնք գիտությանը զրկում են բացարձակ ճշմարտության վերջնանպատակին հասնելու որևէ իրատեսական մեթոդից: Դյուին փորձում է վերաձևակերպել ինդուկցիայի հիմնախնդիրը, սակայն, այն հարմարեցնելով պրագմատիկական ճշմարտությունների հայեցակարգին, գիտական ճանաչողությունը հանգեցնում է զուտ ժամանակավոր պրագմատիկական ճշմարտությունների բացահայտմանը: Սա նաև հիմք է նախապատրաստում իմացաբանական ռելյատիվիզմի համար, քանի որ ճշմարտության պրագմատիկական կամ օգտապաշտական բնույթը կարող է գիտական համայնքի տարբեր ներկայացուցիչների կողմից մեկնաբանվել տարբեր կերպ և իրարամերժ չափանիշներով: Միևնույն ժամանակ անհասկանալի է մնում, թե ինչպես պետք է որոշել պրագմատիկական ճշմարտության կիրառելիության տիրույթը, դրա կենսունակությունը և օգտակարությունը կշռադատությունների տվյալ համակարգի համար, այն ավելի լավ պրագմատիկական ճշմարտությամբ փոխարինելու անհրաժեշտությունը, ինչպես նաև մեկ պրագմատիկական ճշմարտությունը մյուսով փոխարինելու իմացաբանական-մեթոդաբանական հիմքերն ու ընթացակարգը: Ի հակադրություն Ռասելի և Դյուի ֆալսիֆիկովի, Փոփերյան ֆալսիֆիզմը իմացաբանական-մեթոդաբանական հիմք է ձևավորում գիտության առաջնագծով կիրառելիություն ունեցող քննադատական գործիքակազմերի համար, ի դեմս ֆալսիֆիկացիայի, որը ապահովում է հավանական սխալականությանը հակված մարդկային իմացության և հատկապես գիտական գիտելիքների կանոնավոր քննադատական փորձաքննություն և ենթարկվելու անհրաժեշտությունը և մրցակցող սխալական (հիպոթետիկ) տեսությունների միջև հիմնավոր ընտրություն կատարելու հնարավորությունը՝ այս կերպ անմիջականորեն նպաստելով գիտելիքների աճին և գիտական առաջընթացին:

Ֆալսիֆիզմի մի շարք ներկայացուցիչների մտեցումները տարբերվում են նաև ռացիոնալ ճանաչողության հնարավորության վերաբերյալ հիմնահարցերում: Իրապես, ֆալսիֆիզմը, առնվազն այն տարբերակով, ինչպես ձևակերպվել և զարգացվել է Հյումի և հետագա մի շարք այլ մտածողների կողմից, ունի շատ ավելի սահմանափակ և խիստ բնույթ, որը սկզբունքորեն կարող է հանգեցնել գիտական և ռացիոնալ ճանաչողության նկատմամբ թերահավատության՝ խթանելով ֆալսիֆիզմի իռացիոնալիստական դրսևորումների առաջացմանը: Այս իմաստով 20-րդ դարի փիլիսոփայությունը նշանավորվում է նաև իռացիոնալիստական ֆալսիֆիզմի զարգացման տարաբնույթ փորձերով: 20-րդ դարի նշանավոր իսպանացի փիլիսոփա Միգել դե Ունամունոն կարծում էր, որ մարդիկ պետք է բանականությունը և միտքը փոխարինեն հավատով, քանի որ բանականությունը չի կարողանում հաղթահարել գիտելիքների անորոշության և սխալականության խնդիրները: Այս առնչությամբ Ունամունոն գրում է. *«Ռացիոնալության կազմալուծումը ավարտվում է հենց բանականության լուծմամբ. այն ավարտվում է բացարձակ թերահավատությամբ՝ Հյումի ֆենոմենալիզմում: ... Բանականության գերագույն հաղթանակը՝ վերլուծական՝ կործանարար և տարրալուծող ունակությունը, կասկածի տակ դնելն է իր իսկ վավերականությունը: Խոց պարունակող ստամոքսը վերջանում է ինքն իրեն մարսելով»* [13, 104]: Ի տարբերություն Ունամունոյի և իռացիոնալիստական ֆալսիֆիզմի մի շարք այլ ներկայացուցիչների՝ Ռասելի, Դյուիի ու հատկապես Պիրսի և Փոփերի ֆալսիֆիզմի տեսություններից բխում է, որ նույնիսկ բացարձակ ճշմարտության անհասանելիության պարագայում հնարավոր է որոշակի ռացիոնալ

ընտրություն կատարել մրցակցող տեսությունների միջև և ունենալ թեև սխալական, բայց որոշակիորեն հիմնավոր և ճշմարիտ գիտելիքներ: Բանականությունը շարունակում է մնալ իմացության բարելավման, գիտելիքների աճի և գիտության զարգացման անօտարելի նախապայման: Հիմնված լինելով գիտելիքի, իմացության ու ճանաչողությանը վերաբերյալ ֆալսիֆիզմի աշխարհայացքային-իմացաբանական գաղափարների և մեթոդաբանական առավել ընդհանուր սկզբունքների վրա՝ հնարավոր է ոչ միայն ձեռք բերել հիմնավոր գիտելիքներ հետագա կշռադատությունների և տեսությունների ձևավորման համար, այլ նաև ապահովել դրանց շարունակական զարգացումն ու աճը՝ մշտապես քննադատության ենթարկելով ու բարելավելով եղած իմացությունը: Դիտարկելով ֆալսիֆիզմի զարգացումը տարածաժամանակային ավելի մեծ պատկերում՝ կարելի է նկատել նաև, որ ֆալսիֆիզմի ավելի վաղ ի հայտ եկած տարատեսակներն ունեին շատ ավելի խիստ, կատեգորիկ, սահմանափակող և պակաս կառուցողական բնույթ, քան ֆալսիֆիզմի ավելի ժամանակակից տարբերակները: Այս միտումը կարելի է արձանագրել Պիրսից ի վեր ֆալսիֆիզմի գրեթե բոլոր ներկայացուցիչների իմացաբանական հայացքները դիտարկելով: Այն, նախևառաջ, պայմանավորված է ինդուկցիայի, գիտական մեթոդի և գիտության փիլիսոփայության այլ հիմնախնդիրների հասկացման, վերաթմուրման ու հաղթահարման բարդություններով, ինչպես նաև այլ հայեցակարգերի կողքին (ինչպես, օրինակ, իմացաբանական ֆունդամենտալիզմը, ռելյատիվիզմը, ինֆալսիֆիզմը և այլն) ֆալսիֆիզմի հայեցակարգայնացման ու արժևորման հաջող փորձերի բացակայությամբ:

### **Եզրահանգումներ**

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ ֆալսիֆիզմի զարգացումը ժամանակակից իմացաբանությունում և գիտության փիլիսոփայությունում առավելապես պայմանավորվել է 19-20-րդ դարերում դասական ֆիզիկայի ճգնաժամով և գիտությունում քվանտառելյատիվիստական ֆիզիկայի հաստատումով: Մինևս ժամանակ ֆալսիֆիստական իմացաբանության զարգացման վրա էական ազդեցություն են ունեցել նաև իմացաբանական-գիտաբանական դասական խնդրակարգի մի շարք հիմնախնդիրների վերաիմաստավորման ժամանակակից փորձերը, որոնցից քննարկվող հարցի առնչությամբ առավել հետաքրքրական են գիտության և գիտական հետազոտության նպատակի, ինդուկցիայի ու ռացիոնալ ճանաչողության հնարավորության հիմնախնդիրները: Թեպետ ֆալսիֆիստական իմացաբանության շրջանակում Դյուին և Ռասելը կարողանում են հիմնավորել և զարգացնել ֆալսիֆիզմի հիմնական սկզբունքները, այնուամենայնիվ, նրանց չի հաջողվում անցում կատարել աշխարհայացքային ֆալսիֆիզմից, որի արդյունքում ֆալսիֆիստական հայեցակարգի իմացաբանական-մեթոդաբանական նշանակությունը իմացաբանության և գիտության փիլիսոփայության արդի հիմնախնդիրների հասկացման և լուծման համատեքստում շարունակում է մնալ վիճահարույց: Մակայն այս հարցում հիմնարար նշանակություն ունեցան Փոփերի ռացիոնալ ֆալսիֆիզմը և ոչինդուկտիվիստական ֆալսիֆիկացիոնիզմը՝ հիմք դառնալով ռացիոնալ և գիտական ճանաչողության արժևորման, ինդուկցիայի հիմնախնդրի հաղթահարման, գիտության իմացաբանական-մեթոդաբանական հիմքերի վերաթմուրման և ֆալսիֆիզմի առավել կառուցողական ու մեղմ տարբերակների ձևավորման համար: Փոփերի կողմից ձևակերպված ֆալսիֆիզմի հիմնարար ձեռքբերումներից է այն, որ նույն տեսության շրջանակում համադրվում են գիտական ճանաչողության և գիտելիքի սխալականությունը, գիտության առաջընթացի հնարավորությունը և ճշմարտությունը որպես գիտության վերջնանպատակ: Այս համադրությունը ոչ միայն ապահովում է գիտելիքների աճի ներքին տրամաբանությունը, այլև վեր է ածվում գիտության զարգացման հիմնական մեթոդաբանական նախապայմանի:

## Գրականություն

1. Գրիգորյան Ք., Դեմարկացիայի և գիտության աճի հիմնախնդիրների նույնացումը ըստ Իմրե Լակատոսի // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 2 (17), Երևան, 2015, էջ 44-52:
2. Akelyan D. The Development and Manifestations of Fallibilism in the Epistemology of Descartes and Hume. Region and the World, No 1(50), 2024, p. 87-94.
3. Поппер К. Объективное знание: Эволюционный подход, 4-е изд., Ленанд; Москва, 2022, с. 384.
4. Davison D. Truth Language and History, Clarendon Press, Oxford, 2005, p. 372.
5. Dewey J. The Study of Inquiry. Henry Holt and Company, New York, 1939, p. 546.
6. Infeld L. Albert Einstein: His Work and Its Influence on Our World, Charles Scribner's Sons: New York, 1950, p. 132.
7. Mill S. J. On Liberty, Appleton-Century-Crofts, New York, 1947, p. 118.
8. Pierce C. S. Collected Papers (ed. C. Hartshorne, P. Weiss, and A. Burks). Harvard University Press, Volume 1-8, Cambridge, 1931-1958, (CP. VI, 1897).
9. Popper K. R. Conjectures and Refutations: The Growth of Scientific Knowledge, Routledge, 2<sup>nd</sup> edition, 2002, p. 608.
10. Popper K. R. The Logic of Scientific Discovery, Routledge, London and New York, 1985, p. 544.
11. Russell B. A History of Western Philosophy, Simon and Schuster, New York, 1945.
12. Swartz R, Perkinson H., Edgerton S. Knowledge and Fallibilism: Essays on Improving Education, New York University Press: New York, London, 1980.
13. Unamuno D. Tragic Sense of Life, Dover Publications, New York, 1954, p. 332.

## Развитие фаллибилизма в современной эпистемологии и философии науки

Акелян Давид

### Резюме

**Ключевые слова:** возможность ошибки, методология, эмпиризм, прагматизм, позитивизм, критический рационализм, проблема индукции, истина

В эпистемологии и философии науки XIX–XX вв. формирование концепции фаллибилизма было обусловлено рядом факторов. Важнейшими из них стали кризис классической физики и становление квантово-релятивистских теорий, а также попытки пересмотра традиционной эпистемологической проблематики. Существенную роль сыграли также фундаментальные работы представителей американского прагматизма и позитивистской философии.

Несмотря на то, что эти направления заложили теоретические основания фаллибилизма, им не удалось преобразовать его из мировоззренческого принципа в развернутую методологическую программу. В результате, эпистемологическое и методологическое значение фаллибилизма для решения современных проблем философии науки продолжает оставаться дискуссионным.

В рамках критического рационализма, прежде всего в работах Карла Поппера, фаллибилизм получает нормативно-методологический статус. Он оформляется как целостная программа неиндуктивистского фальсификационизма, ориентированная на критическую проверку научных теорий. Предложенный К. Поппером подход позволяет по-новому рассматривать проблемы демаркации науки и индукции, преодолевая ограничения иррационалистских интерпретаций. Одновременно он развивает фаллибилистско-эволюционистскую эпистемологию, согласно которой признание принципиальной ошибочности знания совместимо с пониманием истины как цели науки и выступает условием роста знания и развития научного познания.

## The Development of Fallibilism in Modern Epistemology and Philosophy of Science

*Akelyan Davit*

### Summary

**Key words:** *possibility of error, methodology, epistemology, philosophy of science, rationalism, empiricism, problem of induction, fallibility, truth*

In nineteenth- and twentieth-century epistemology and philosophy of science, the conceptual development of fallibilism was shaped by several factors. Most importantly, it was influenced by the crisis of classical physics and the emergence of quantum and relativistic theories, as well as by attempts to reconsider and reinterpret traditional epistemological and philosophy-of-science issues. The foundational works of representatives of American pragmatism and positivist philosophy also played a significant role.

Although pragmatists and positivists articulated and developed the core principles of fallibilism, they did not transform it from a general worldview into a fully developed methodological program. Consequently, the epistemological and methodological significance of fallibilism for addressing contemporary problems in epistemology and the philosophy of science has remained a matter of debate.

Within the framework of critical rationalism, particularly in the works of Karl Popper, fallibilism acquires a normative methodological status. It becomes a comprehensive methodological program in the form of non-inductivist falsificationism. Popper's approach offers solutions to the problems of demarcation and induction, overcomes the limitations of irrationalist conceptual approaches, and develops a fallibilist-evolutionary epistemology that reconciles the fallibility of knowledge with truth as the goal of science, linking the recognition of error with the growth of knowledge and the advancement of science.

Ներկայացվել է 28. 08. 2025 թ.

Գրախոսվել է 14. 09. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Միապետի դերն ու գործառույթները Կիլիկյան Հայաստանում**

*Բրուտյան Մարիյա,  
Հակոբյան Լիլիթ*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-135>

***Հանգուցային բառեր.** իշխան, իշխանության տարանջատում, ֆեոդալ, արքունիք, գործառույթ, արքունիք*

Հոդվածի նպատակն է սկզբնաղբյուրների, մասնագիտական գրականության և օտար հեղինակների աշխատանքների ուսումնասիրության հիման վրա վերլուծել միապետի դերն ու գործառույթները, ուսումնասիրել Կիլիկիայի հայկական պետության իշխանական մարմինների փոխադարձ ազդեցությունն ու փոխգործունեությունը միապետի գործունեության վրա:

Հոդվածի խնդիրներն են հասկանալ արդյո՞ք միապետի գործառույթները կարգավորվել են հակակշիռների կամ զսպումների համակարգով, և արդյո՞ք Կիլիկյան Հայաստանում միապետի կառավարման համակարգը ազդեցություն է կրել խաչակրաց արևելյան պետությունների կամ բյուզանդական միապետների կառավարման համակարգերից: Հոդվածը թույլ է տալիս համակարգային պատկերացում կազմել Կիլիկյան Հայաստանում միապետի ունեցած դերի և գործառույթների մասին: Գալով եզրակացության՝ կարող ենք ասել, որ չնայած պատմական արմատներով Կիլիկյան հայկական պետությունը կապված է եղել Արշակունիների և Բագրատունիների օրոք գոյություն ունեցած միապետական համակարգի հետ, այնուամենայնիվ Կիլիկյան Հայաստանում միապետական իշխանության մի շարք տարրեր ազդվել են եվրոպական, բյուզանդական կամ խաչակրաց պետական համակարգերից, բայց ամբողջապես չեն կրկնօրինակվել, այլ ստացել են նոր տեսք. դրանով էլ պայմանավորված է Կիլիկյան հայկական պետության առանձնահատկությունը:

Պետության և միապետական իշխանության առաջացման հարցը Սմբատ Սպարապետը մեկնաբանում է աստվածաբանական տեսակետից, որին հանդիպում ենք Դատաստանագրքի՝ ստորև մեջբերված հատվածում՝ «Յառաջ պատեհ համարեցաք զվիճակեալ դատաւորացն գրել. բուն յառաջ զթագաւորացն, վասն զի յԱստուծոյ կարգեցաւ թագաւորութիւնն...» [8, 249]: Մեկ այլ հատվածում էլ նա գրում է «Թագաւորքն յԱստուծոյ են կարգած» [8, 95]: Սակայն կիլիկյան հայկական պետության ծագումը բացատրվում է Կիլիկիայի սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման, Կիլիկիայի միջազգային դրության բարելավման և նրա միջազգային հեղինակության բարձրացմամբ [4, 45]: XII դարի վերջին հռչակված Կիլիկիայի հայկական թագավորությունը հանդիսանում էր ինքնամփոփ կենտրոնացված պետություն [4, 43]: Թագավորության հռչակումը կարևոր էր մի քանի տեսանկյունից. նախ՝ լուծվել էր Լոննի «Լեգիտիմության հարցը», և երկրորդ՝ էականորեն փոխվել էր Կիլիկյան Հայոց պետության միջազգային իրավական կարգավիճակը [10, 186]:

Կիլիկյան հայկական պետությունն իր քաղաքական կառուցվածքով նման էր եվրոպական պետությունների կամ արևելքի մի շարք խաչակրաց պետությունների քաղաքական կառուցվածքին: Ըստ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի»՝ Կիլիկիայի ֆեոդալական հիերարխիայի հիմքում ընկած է արևմտաեվրոպական ֆեոդալիզմին հատուկ «իմ վասալի վասալը իմ վասալը չե» սկզբունքը [4, 43]: Վերոնշյալ միտքն են արտահայտում նրա հետևյալ տողերը. «Եւ իշխան, գոր ինք թագաւոր լինի իշխանացուցել, նա ինքն կարէ ձգել,

երբ ու կամի, յիշխանութենէն, և խրատել և այնել, զինչ իր պիտի, բայց զայլ ինքնակալք, որ ինքեանք չլինին իշխան դրել, նա չկարեն առանց այլ իշխանաց, որ իր ընկերք լինին, գնա արքարել, և ոչ ձգել» [8, 202]: Կիլիկիայի ֆեոդալական հիերարխիայի գագաթին կանգնած էր թագավորը, ով երկիրը կառավարում էր արքունիքի միջոցով. այն բաղկացած էր արքունի ատյանից (խորհրդից), բարձրագույն դատական ատյանից և գործակալություններից:

Նախքան միապետի դերին և գործառնություններին անդրադառնալով կարևոր է ընդգծել Կիլիկյան Հայաստանում իշխանության թևերի տարանջատումը: Իշխանության տարանջատմանը անդրադարձել են հնագույն ժամանակներից, սակայն դրա ավարտուն մեկնաբանությունը տալիս է ֆրանսիացի իրավագետ և փիլիսոփա Շառլ Լուի Մոնտեսքյուն. իր «Օրենքների ոգու մասին» գրքում իշխանության տարանջատումը մեկնաբանում է այնպես, որ եթե միացած լինեն օրենսդիր և գործադիր իշխանությունները, ապա չի լինի ազատություն, նման արդյունք կլինի նաև բոլոր այն դեպքերում եթե միացած լինեն իշխանության բոլոր ճյուղերը մեկ անձի ձեռքում [13, 20]: Իշխանության տարանջատման կարևորությունը հայ իրականության մեջ ներկայացրել է Սմբատ Սպարապետը: Սակայն կային գործառնություններ, որոնք բացառապես թագավորին էին: Ըստ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի»՝ միայն թագավորի հիմնական գործառնություն ու իրավունքն էր հանդիսանում դրամ հատելը, քաղաք ու բերդ, նույնիսկ կամուրջ կառուցելը, «Եւ թագավորն մէն է՝ որ կարէ դէկան շինել՝ եւ քաղաք եւ բերդ՝ եւ մեծ գետոց կանդարայ՝ եւ հոգւտուն ի վերայ մեծ ճամփնի եւ ի կապննի երկրին» [8, 136]: Այս հատվածից հասկանում ենք, որ թագավորի առանձնաշնորհային իրավունքն ավելի շատ պետական, քան անձնական բնույթ ուներ: Բացի վերոնշյալ իրավունքներից՝ արքան ուներ նաև այլ «հատուկ» իրավասություններ և գործառնություններ, օրինակ՝ թագավորն էր ղեկավարում արտաքին հարաբերությունները, ընդունում և ուղարկում դեսպանություններ ու դեսպաններ: Նրան էին պատկանում երկրի բոլոր ոսկու հանքերը, ինչպես նաև պատերազմի ժամանակ որպես ռազմավար ձեռք բերված ոսկին: Արքային էր պատկանում արտասահմանից ներմուծվող ապրանքներից մաքսատուրք վերցնելու իրավունքը, նա էր երկրի բոլոր զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը՝ ով պատերազմ էր հայտարարում և հաշտություն կնքում, օրենքներ էր հրապարակում և լուծում շատ ուրիշ կարևորագույն հարցեր [12, 739]: Բացի այս իրավունքներից՝ թագավորն ուներ հողատեփականատիրական իրավունք, որը տարածվում էր անգամ երկրի ընդերքի՝ հանքերի, ձկնորսարանների, անտառների, մարգագետինների և լեռների վրա: Միապետի իշխանությունը չէր հիմնվում հողային գերագույն սեփականատիրական իրավունքի վրա, այլ կրում էր սոսկ իրավական բնույթ: Եվ միապետի՝ որպես բարձրագույն իշխողի իրավունքը ոչ միայն տարածվում էր հողի և ջրի վրա, այլև մարդկանց անձի վրա, բայց վերջինս կրել է ձևական բնույթ [12, 716-717]:

Երկրի ամբողջ իշխանությունը գտնվում էր ֆեոդալական դասակարգի ձեռքում, որը, ինչպես նշեցինք, իրականացվում էր արքունիքի միջոցով, իսկ արքունիքի գլուխ կանգնած էր թագավորը, ով իր մեջ մարմնավորում էր երկրի գերագույն իշխանությունը: Չնայած այս ամենին՝ միապետի իշխանությունը անսահմանափակ չէր: Դա փաստում է այն, որ Լևոն II-ի կողմից 1201 թվականին ջենովացիներին շնորհած առևտրական շնորհագիրը սրված է «կուրիայի համաձայնությամբ»: XIII դարի վերջում արքունական կուրիան հայկական աղբյուրներում անվանվում է արքունական «դիվան»: Այս վերին կամ արքունի ատյանն իր զարգացման հետագա շրջանում դառնում է թագավորական խորհուրդ, որին կից ստեղծվում է դատարան, որն էլ կոչվում է Վերին կամ Մեծ դարպաս [12, 716-717]: Արքունի ատյանի առկայությունը վկայում է այն մասին, որ թեև Կիլիկիայի պետական կարգը հայկական

էր, բայց այն խորապես ազդվել էր արևմտաեվրոպական պետությունների և արևելքի խաչակրաց պետությունների պետական կարգից [12, 739]: Օրինակ՝ խաչակրաց պետություններում Գերագույն կամ Արքունական ատյանի միջամտության անհրաժեշտությունը ծագում էր երկու պարագայում՝ առաջին, երբ հանգուցյալ գահակալի անզավակության պատճառով հարկ էր լինում պետության ղեկը փոխանցել նրա եղբորը կամ մերձավորագույն ազգակալին, և երկրորդ, երբ ատյանի որոշմամբ ամուսին էր ընտրվում գահի իրական գծով ժառանգորդի համար [10, 155]: Հետևելով նրանց օրինակին՝ Կիլիկյան հայկական պետության արքունիքի մեջ ավելացվում է արքունի ատյան, մի բան, որին մենք չենք հանդիպում ո՛չ Արշակունիների, ո՛չ Բագրատունիների արքունիքում [12, 739]: Արքունի ատյանը խորհրդատու մարմին էր, և իր այդ բնույթով մասամբ կարող էնք համեմատել Արշակունյաց ժամանակաշրջանի «աշխարհաժողովների» հետ, որոնցում քննարկվում էին երկրի համար կարևորագույն խնդիրներ [11, 828]: Կարելի է ասել, որ այս արքունի ատյանը, որտեղ կայացվում էին կարևորագույն որոշումներ, թագավորի մենիշխանությունը որոշակիորեն զսպող և նաև որոշ չափով հակակշռող մարմին էր, քանի որ կոնկրետ խնդիրների լուծման համար թագավորը մենիշխան որոշումներ չէր կայացնում: Կիլիկիայում վերին ատյանի դերը կարևորվում էր երկրի համար ճգնաժամային իրավիճակներում: Որպես խորհրդատու մարմին՝ արքունի ատյանի գործունեությանը հանդիպում ենք այն ժամանակ, երբ Լևոն II-ը Ռայմոնդ-Ռուբենին գահաժառանգության իրավունքից զրկելու նպատակով հրավիրում է արքունի ատյանի նիստ և գահաժառանգ է հռչակում իր դստերը՝ Չաբեկին [10, 226], կամ երբ Կոստանդին III-ը արքունի ատյանի կողմից ընտրվում է թագավոր, ինչը առաջին դեպքն էր Կիլիկիայի պատմության մեջ [10, 425]:

Սմբատ Սպարապետը, թեև գիտակցում է իշխանության տարանջատման դերը պետության կառավարման մեջ, բայց կառավարման լավագույն եղանակը համարում է միապետությունը, միապետին օժտում բացառիկ իրավասություններով. «Եւ թագաւորն մէն է՝ որ կարէ ղեկան շինել, եւ քաղաք եւ բերդ, եւ մեծ գետոց կանգարայ՝ եւ հողէտուն ի վերայ մեծ ճամփին եւ ի կապանի երկրին» [8, 209]: Թագավորի անձի այդպիսի մեծարումը և բացառիկ իրավասության շնորհումը Սմբատի կողմից պայմանավորված էր նրանով, որ նա, ուսումնասիրելով և տեղյակ լինելով իր ժողովրդի պատմությանը, գիտակցել է, որ հայկական պետականության կործանման պատճառներից են եղել նախարարական տների կամայականություններն ու կենտրոնախույս ուժերի կործանարար գործունեությունը, բնականաբար նաև միջֆեոդալական չղաղարող կռիվները: Սմբատը հարցը դիտարկում է իշխող դասակարգի դիրքերից, այն եզրակացությանն է գալիս, որ միայն ուժեղ կենտրոնացված թագավորությունը կարող է երկիրը պահպանել արտաքին թշնամիների ոտնձգություններից և կենտրոնախույս ուժերի կործանարար գործողություններից: Դատաստանագրքի հողվածներից պարզ երևում է, որ միապետին՝ որպես առաջին խոշոր ֆեոդալի վերագրում են լայն լիազորություններ և իրավունքներ, որոնք տարբերվում են մյուս բոլոր ֆեոդալ իշխանների, ներառյալ իշխանաց իշխանի կամ ավագ պարոնի լիազորություններից և իրավունքներից: Դատաստանագրքի առաջին իսկ հոդվածում խոսելով թագավորի իրավունքների մասին՝ նշում է. «Եւ թագաւորն մէն է՝ որ կարէ ղեկան շինել, եւ քաղաք եւ բերդ»: Այլ հոդվածում էլ խոսելով թագավորի աստվածային լինելու մասին՝ նրան դասում է բարձր մյուս իշխաններից՝ կոչելով ինքնակալ: Թագավորին ինքնակալ է կոչում ոչ միայն Սմբատ Սպարապետը, այլ նաև Միքայել Ասորին՝ գրելով. «Եւ ցուցաւ ինքնագլուխ և ճոխ իշխանութեամբ», իսկ Ներսես Լամբրոնացին Լևոն Բ-ին ուղղված նամակում նշում է, որ նա իշխում է «ինքնակալությամբ»: Վարդան Այգեկցին էլ միապետությունը համարում է կառավարման օրինական և անհրա-

ժեշտ ձև: Չնայած իր առակներում թագավորին նույնացնում է զիշատիչների հետ, դա կարելի է բացատրել նրանով, որ Այգեկցու իղեալը հեզաբարո թագավորն է, ոչ թե զիշատիչի պես կեղեքող թագավորը: «Թուղթ առ երիտասարդ արեղայս» նամակում Այգեկցին բացահայտում է տիրող դասակարգի տնտեսական հարաբերությունների, քաղաքական ճնշման էությունը [7, 224-225]: Սակայն այս ամենից չի կարելի ենթադրել, թե Կիլիկիայում թագավորը իշխում էր անսահմանափակ իրավունքներով:

Մ. Բ. Բոռնազյանը իր «Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական թագավորությունում XI-XII դարերում» գրքում արդարացիորեն ընդգծում է, որ XIII-XIV դարերում միջազգային դրության փոփոխմանը զուգընթաց փոխվել են նաև նրա իրավունքներն ու լիազորությունները: Սակայն գլխավորը՝ իշխանության ֆեոդալական դասակարգին պատկանելը, նա համարում է, որ մնացել է անփոփոխ, այսինքն՝ արքունիքի գլուխ շարունակել է կանգնած մնալ թագավորը, որն իր մեջ մարմնավորել է երկրի գերագույն իշխանությունը [4, 47]: Միապետի իշխանության ուսումնասիրության մեջ հետաքրքրական է այն, որ Սմբատ Սպարապետը այն չի դարձնում դասական արևելյան բռնապետություն, այլ տարատեսակ իրավական նորմերով սահմանափակում է: Որպես օրինակ կարող ենք մեջբերել հետևյալ իրավանորմը. «Եւ իշխան՝ գոր ինք թագաւորն լինին իշխանացուցել, նա ինք կարէ ձգել, երբ ու կամի՝ իշխանութենէն, ել խրատել ու այնել զինչ իր պիտի: Բայց գայլ ինքնակալք, որ ինքեանք չլինին իշխան դրել, նա չկարէ առանց այլ իշխանաց որ իր ընկերք լինին՝ ոչ գնա քսորդել եւ ոչ ձգել » [8, 601], այսինքն՝ թագավորը կարող է զրկել իշխանական իրավունքից այն իշխանին, որին անձամբ է շնորհել այդ իրավունքը: Այն իշխաններին, որոնք մինչ արքայի թագադրվելն էին իշխանական տիտղոսի աստիճանի հասել, թագավորը, առանց մյուս ֆեոդալների համաձայնության, իրավունք չունի զրկել օրինական իրավունքներից կամ քսորդել երկրից: Այս իրավանորմով Սմբատ Սպարապետը սահմանափակում է վերջինիս իրավասությունների շրջանակը՝ նրան չտալով բացարձակ լիազորություններ և այդպիսով կատարում կարևորագույն քայլ՝ հակակշիռ ստեղծելով նրա իշխանության հանդեպ, չնայած կարևորում է միապետության դերն ու նշանակությունը շատ հարցերում: Հետաքրքրական է նաև այն, որ Սմբատը նաև սահմանում է թագավորի ապրելակերպը. «Չէ իրավունք որ թագաւոր անպասկ սիրողով կենայ, ասու չէ զի Աստուծոյ եւ հայրապետին արիննադրակից է. թող օւրինաւոր ամուսնանա» [8, 627]. ամենայն հավանականությամբ նման նորմը հետապնդել է գահի ապահովագրումը ապօրինի ժառանգներից: Միապետի իրավասություններից դուրս է եղել նաև իշխանների ներքին գործերին միջամտելը, բայց միապետները պետք է աջալուրջ լինեին հպատակների անհնազանդության փորձերը ճնշելու հարցում: Այդ առթիվ Սմբատը Կիլիկիայի թագավորներին հիշեցնում է, որ Գազիկը, գահ բարձրանալով, միավորեց «զօրսն Հայոց, և գնաց ընդ կողմանս աշխարհի հայրենեաց իւրոց, զանհնազանդոսն հնազանդեցոյց, և զհակառակսն հալածեաց» [9, 37]: Այս տողերը հավելյալ վկայությունն են Սմբատի՝ իր նախնյաց պատմությանը քաջատեղյակ լինելուն: Կիլիկյան Հայաստանի մոնղոլական գերիշխանության ընդունելուց հետո միապետը գնում էր այսպես կոչված «իշխանության տվչության» կամ միջազգային տերմինաբանությամբ ասված, «ինվեստիտուրայի», որը, սկսած Լևոն III-ի կառավարումից, դառնում է պարտադիր երևույթ հայոց թագավորության յուրաքանչյուր նոր գահակալի «լեգիտիմությունը» ապահովելու համար [10, 425]: Փատորեն մոնղոլական տիրապետությունը ընդունելուց հետո իշխանությունը Կիլիկյան Հայաստանում «աստվածատուր» չէր: Թագավորի փոփոխության դեպքում մոնղոլական ինվեստիտուրային արժանանալը պարտադիր էր, օրինակ՝ Հեթում I-ը 1268 թվականին գնացել է Աբաղա խանի մոտ, որպեսզի նրանից թույլտվություն ստանա

գահը իր որդուն՝ Լևոն Գ-ին հանձնելու համար: Ընդ որում տվյալ դեպքում բավարար չի լինում միայն Հեթումի մեկնելը մոնղոլական արքունիք, քանի որ 1271 թվականին Լևոն Գ-ն է գնում մոնղոլական արքունիք ինվեստիտուրայի արժանանլու համար: Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ մոնղոլների կողմից շրջանառության մեջ դրված «ինվեստիտուրայի» համակարգը ուներ ոչ թե վճռական, այլ վավերացնող լիազորության բնույթ՝ այսինքն ոչ թե մոնղոլներն էին որոշում, թե ով պետք թագավորի Կիլիկիայում, այլ վավերացնում էին Հայոց օրինական թագաժառանգի գահակալման իրավունքը [10, 321]:

Մանաստիպ տվորույթ էղել է նաև մամլուքների հետ հարաբերություններում, որի համաձայն՝ Կիլիկյան Հայոց թագավորները գահակալության առթիվ մեծաքանակ ընծաներ են հանձնել Եգիպտոսի սուլթանին [10, 322-323]:

Կիլիկյան Հայոց միապետներին տրվում էին զանազան տիտղոսներ. օրինակ Լևոն II-ը կրել է «Քրիստոսասեր», «աստվածասեր», «առաքինի», «բարերար և հեզահոգի» [6, 89, 233, 682], «քրիստոսապասկ և բարեպաշտ» [5, 202], «մեծն», «հաղթող», «ամենաբարի», «հեզա-նազ», «ճշմարտասեր», «առաքինի» տիտղոսները: Նրա տիտղոսաշարում հատկապես ուշադրության են արժանի «թագաւոր Հայոց» և «թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսները [10, 322-323]: Լևոնը «Թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսով թողարկել է դրամներ, որոնցից 59-ը իրենց նկարագրությունն են գտել Պ. Պտուկյանի «Կիլիկյան Հայաստանի դրամները» գրքում: Բացի դրամներից՝ նա վերոնշյալ տիտղոսով է հանդես գալիս Ինոկենտիոս պապին ուղղված իր առաջին իսկ նամակում, որը թվագրված է 1199 թվականի մայիսի 23-ով: Այս փաստը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ նա իր թագավորման սկզբնական տարիներին արդեն իսկ գիտակցել է այդ տիտղոսի կարևորությունը [10, 418]:

Լևոնին «Թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսով հիշատակում է նաև Ղևոնդ Ալիշանը իր «Միսունս» աշխատությունում [1, 380]: Այս տիտղոսները, սուկ ինքնանվանումներ լինելով, լայն տարածում են գտել Մեծ Հայքում ու հայկական սփյուռքում բնակվող հայերի շրջանում՝ համահունչ լինելով նրանց սեփական պետականություն ունենալու վաղեմի բաղձանքին [10, 418]: Ընդ որում «Թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսի հաղորդած և բովանդակված պատգամը ուղղված էր ոչ միայն հայությանը, այլև արտաքին աշխարհին: Դրանով նա օտարների առջև հավակնում էր հանդես գալ որպես ողջ հայության ներկայացուցիչ, իսկ հայերի միջավայրում ընդգծել իր միակ թագավորը լինելու հանգամանքը: Ուսումնասիրողներից Լևոն Տեր-Պետրոսյանը գտնում է, որ այդ տիտղոսը ստեղծվել է Հայոց կաթողիկոսների նույնաբնույթ տիտղոսի նմանությամբ, այսինքն՝ հետևելով այն տրամաբանությունը, որ գոյություն ունի «ամենայն Հայոց կաթողիկոս», ապա ինչո՞ւ չպետք է լինի նաև «ամենայն Հայոց թագաւոր»: Ընդունված տեսակետի համաձայն՝ «ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսը պաշտոնապես սկսել է կիրառվել XV դարում [10, 206-208]: Մինչդեռ ուսումնասիրողներից Ա. Բոգոյանը գտնում է, որ այն ստեղծվել է ավելի վաղ՝ XI-XII դարերում, երբ հակաաթոռ կաթողիկոսությունները չեզոքացնելու նպատակով «Կաթողիկոս հայոց մեծաց»-ի փոխարեն շրջանառության մեջ է դրվում «Ամենայն Հայոց Կաթողիկոս», կամ «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսը [3, 80-81]:

Հետաքրքրական է այն, որ «Թագաւոր ամենայն Հայոց» մակագրությամբ դրամներ մեզ հասել են ոչ միայն Լևոն II-ից, այլև տիտղոսով դրամներ վրա ներկայանում են նաև Լևոն Գ թագավորը (1269-1289), Հեթում Բ թագավորը (1289-1306) և Լևոն Զ թագավորը (1374-1375) [10, 198]:

Տիտղոսներ տրվել են գրեթե բոլոր միապետներին, ընդ որում դրանք ունեցել են ինչպես դրական, այնպես էլ բացասական իմաստներ: Օրինակ՝ Օշին թագավորը (1308-1320)

հիշատակարաններից մի քանիսում հիշատակվում է որպես «քարեպաշտ եւ յոյժ հեզ թագաւոր», «ի Քրիստոս Աստուած հաւատարիմ արքայ», «մեծ եւ արքայակերպ թագաւոր», «տիրապասկ արքայ» և այլ տիտղոսներով [10, 196-197]: Մինևույն ժամանակ նա Գեորգ Սկևռացու վարքում հիշատակվում է «եղկելի», «չար զազան», «ապականեալ յոգի», «բռնաւոր» և այլ մակնուններով [2, 431-432]: Տվյալ դեպքում Գեորգ Սկևռացու կողմից Օշինին տրված բացասական մակնունները կարելի է բացատրել նրանով, որ Սկևռա վանքը գտնվել է Լամբրոնի իշխանների տարածքում, իսկ Լամբրոնի իշխանները մշտապես աչքի են ընկել հակապետական քաղաքականությամբ, և պատահական չէ, որ նրանց տարածքում գրված վարքի հեղինակը նման կարծիք է արտահայտում թագավորի մասին:

### **Եզրակացություն**

Այսպիսով կարող ենք ասել, որ Կիլիկյան Հայաստանում իշխանության տարանջատումը և միապետի դերն ու գործառույթները բացառապես բխում էին պետության և ժողովրդի շահերից: Միապետի գործունեությունը կարգավորվում էր մի շարք իրավանորմերով, որոնք կանգնած էին տրամաբանական և իրավական հիմքի վրա: Վերջինիս իշխանությունը անսահմանափակ չէր, ինչը նս համակարգում էր պետական կառավարումը և կապված էր կառավարման արդյունավետության հետ: Չնայած որ պատմական արմատներով Կիլիկյան հայկական պետությունը կապված է եղել Արշակունիների և Բագրատունիների օրոք գոյություն ունեցած միապետական համակարգի հետ, այնուամենայնիվ Կիլիկյան Հայաստանում միապետական իշխանության մի շարք տարրեր ազդվել են եվրոպական, բյուզանդական կամ իսլամական պետական համակարգերից, բայց ամբողջապես չեն կրկնօրինակվել, որն էլ Կիլիկյան հայկական պետության առանձնահատկությունն է:

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-135>

### **Գրականություն**

1. Ալիշան Ղ., Միսուան, Վենետիկ, Մր. Ղազար, 1885, 592 էջ:
2. Բաղդասարյան Է., Գեորգ Սկևռացու «Վարքը», «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1964 թ, էջ 431-432:
3. Բոզոյան Ա., Կաթողիկոս հայոց տիտղոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո», «Էջմիածին», 1997, էջ 80-81:
4. Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյայի հայկական թագավորությունում XI-XII դարերում, Երևան, 1973, 319 էջ:
5. Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, 756 էջ:
6. Մաթևոսյան Ա., Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, Երևան, 1984, 987 էջ:
7. Միքայելյան Գ., Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, 551 էջ:
8. Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Երևան, 2019, 749 էջ:
9. Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, 269 էջ:
10. Տեր-Պետրոսյան Լ, Խաչակիրները և հայերը, հատոր II, Երևան, 2007, 668 էջ:
11. Հայ ժողովրդի պատմություն, հատոր I, Երևան, 1971, 991 էջ:
12. Հայ ժողովրդի պատմություն, հատոր III, Երևան, 1976, 1023 էջ:
13. Монтескье III. Л. О духе законов, Москва, 1955, 274 стр.

## Роль и функции монарха в Киликийской Армении

*Брутян Мария,  
Акопян Лилит*

### Резюме

**Ключевые слова:** князь, разделение властей, феодальный, суд, функция

Цель статьи – проанализировать роль и функции монарха в Киликийской Армении на основе изучения первоисточников, профессиональной литературы и произведений зарубежных авторов, а также изучить взаимное влияние и взаимодействие органов власти на деятельность монарха и их влияние на общественные процессы. Деятельность монарха регулировалась рядом правовых норм, стоявших на логической и правовой основе. Основные задачи статьи заключаются в том, чтобы понять, ограничивались ли функции монарха системой противовесов, и находилась ли система управления под влиянием систем управления крестоносных восточных государств или византийских монархов, учитывая при этом внутренние традиции армянского государства.

В статье дан систематический обзор роли и функций монарха, показывающий, что, хотя Киликийское Армянское государство исторически опиралось на монархическую традицию Аршакуни и Багратуни, отдельные элементы власти находились под влиянием европейского, византийского и крестоносного строя. Эти элементы не были полностью скопированы, а получили новый облик и адаптировались с учётом особенностей Киликийского государства, создавая уникальную и эффективную модель монархической власти.

## Role and Functions of the Monarch in Cilician Armenia

*Brutyana Mariya,  
Hakobyan Lilit*

### Summary

**Key words:** prince, separation of powers, feudal, court, function

The purpose of the following article is to analyze the role and functions of the monarch based on the study of primary sources, professional literature, and the works of foreign authors, as well as to examine the mutual influence and interaction of the governmental bodies of the Armenian state of Cilicia on the activities and authority of the monarch. The article addresses whether the monarch's functions were regulated by a system of counterbalances or limitations, and whether the governance system in Cilician Armenia was influenced by the administrative practices of the Crusader eastern states or Byzantine monarchs, while also considering the internal traditions of the Armenian state.

A systematic overview of the role and functions of the monarch shows that, although the Cilician Armenian state was historically linked to the monarchical system of the Arshakunis and Bagratunis, certain elements of monarchical authority were influenced by European, Byzantine, and Crusader state systems. These influences were not fully adopted but were adapted, transformed, and integrated, acquiring a new form that reflected the unique characteristics and political realities of the Cilician Armenian state.

Ներկայացվել է 04. 09. 2025 թ.

Գրախոսվել է 28. 10. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

## **Միջավայրային վտանգի վերաբերյալ հանրային իրազեկման պետության պոզիտիվ պարտավորությունը**

*Թումանյան Կարեն*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-142>

**Հանգուցային բառեր.** «միջավայրային վտանգ», հանրային իրազեկում, տեղեկատվության մատչելիություն, նախազգուշության սկզբունք, տեղեկատվական հավասարություն, շրջակա միջավայրի անկախ խորհուրդ

**Մեթոդներ:** Հետազոտությունը ներառել է սահմանադրական և ներպետական իրավական նորմերի, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և շրջակա միջավայրի քաղաքականությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը կարգավորող փաստաթղթերի վերլուծություն: Օգտագործվել են համեմատական իրավական մեթոդ, համակարգային մոտեցում և նկարագրության ու մեկնաբանության վերլուծական մեթոդներ:

### **Ներածություն**

Շրջակա միջավայրի պահպանությունը և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը XXI դարի սկզբներին դարձել են ժամանակակից սահմանադրական իրավունքի կարևոր ուղղություններից մեկը: Բնապահպանական խորացող խնդիրները՝ կլիմայական փոփոխությունները, կենսաբազմազանության կրճատումը, բնական ռեսուրսների ինտենսիվ շահագործումը և արդյունաբերական աղտոտումը դիտարկվում են ոչ միայն որպես էկոլոգիական, այլև սահմանադրաիրավական և մարդու իրավունքների պաշտպանության համակարգային մարտահրավերներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքը հետևողականորեն հաստատում է, որ շրջակա միջավայրի պաշտպանությունը հանդիսանում է կյանքի իրավունքի և անձնական ու ընտանեկան կյանքի հարգման իրավունքի իրականացման պայմաններից մեկը:

Ժամանակակից սահմանադրաիրավական դոկտրինայում աստիճանաբար ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ մարդու իրավունքների արդյունավետ իրացումը չի կարող սահմանափակվել դրանց ձևական ամրագրմամբ: Իրավունքների իրական բովանդակությունը կախված է այն նյութական և ինստիտուցիոնալ պայմաններից, որոնց շրջանակում դրանք իրականացվում են: Այս համատեքստում շրջակա միջավայրի վիճակը հանդիսանում է որպես իրավական գնահատման կարևոր չափանիշ, քանի որ այն ազդում է կյանքի, առողջության և արժանապատիվ ապրելու վրա: Հետևաբար, շրջակա միջավայրի պահպանությունը պետք է դիտարկվի որպես սահմանադրական արժեքների նյութական հիմք:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ստանում հանրային իրազեկումը՝ որպես շրջակա միջավայրի պաշտպանության և մարդու իրավունքների արդյունավետ իրացման գործիք: Տեղեկացվածությունը հնարավորություն է տալիս անձանց գնահատել միջավայրային ռիսկերը, ձևավորել տեղեկացված դիրքորոշում և մասնակցել որոշումների ընդունման գործընթացներին: Ուստի այն հանդես է գալիս և որպես առանձին իրավունք, և հիմնարար իրավունքների իրականացման նախապայման՝ ապահովելով դրանց բովանդակային, այլ ոչ թե ձևական իրացումը:

### **Պետության պոզիտիվ պարտավորությունները և «միջավայրային վտանգ» հասկացության տեսական հիմքերը**

Ժամանակակից մարդու իրավունքների տեսությունը, որը զարգացել է Միավորված Ազգերի Կազմակերպության Տնտեսական, Սոցիալական և Մշակութային Իրավունքների

հարցերով կոմիտեի և միջազգային իրավական դոկտրինի շրջանակներում, առանձնացնում է պետության պարտավորությունների եռամակարգ՝ հարգելու պարտավորությունը, պաշտպանելու պարտավորությունը և իրականացնելու պարտավորությունը [24, 14]:

Հարգելու պարտավորությունը (obligation to respect) ներկայացնում է պետության նեգատիվ պարտավորություն՝ ձեռնպահ մնալ իրավունքների խախտումից: Շրջակա միջավայրի համատեքստում սա նշանակում է, որ պետությունը չպետք է ինքը վնասի շրջակա միջավայրը կամ թույլ տա իր մարմինների կողմից նման վնասի պատճառումը: Պաշտպանելու պարտավորությունը (obligation to protect) պահանջում է, որ պետությունը կանխի երրորդ անձանց կողմից իրավունքների խախտումը: Սա արդեն պոզիտիվ պարտավորություն է, որը պահանջում է ակտիվ միջոցառումներ՝ օրենսդրական, վարչական, դատական [14, 15]: Շրջակա միջավայրի ոլորտում սա ենթադրում է մասնավոր անձանց և կազմակերպությունների կողմից շրջակա միջավայրի վնասման կանխումը՝ կարգավորման, լիցենզավորման, վերահսկողության և պատասխանատվության մեխանիզմների միջոցով:

Իրականացնելու պարտավորությունը ամենաընդգրկունն է և պահանջում է պետությունից ակտիվորեն ստեղծել պայմաններ: Սա ներառում է օրենսդրական շրջանակի մշակումը, ինստիտուցիոնալ կարողությունների ստեղծումը, ռեսուրսների հատկացումը, գիտական հետազոտությունների ֆինանսավորումը, հանրային իրազեկման ծրագրերը և այլն [15, 1]:

Եվրոպական դատարանը, մեկնաբանելով Եվրոպական կոնվենցիայի դրույթները «կենդանի գործիք» դոկտրինայի լույսի ներքո, աստիճանաբար ընդլայնել է պետության պոզիտիվ պարտավորությունների շրջանակը: Մարքսն ընդդեմ Բելգիայի (Marckx v. Belgium) գործով Եվրոպական դատարանը առաջին անգամ հստակորեն ձևակերպեց, որ «հարգելու» (respect) հասկացությունը «ոչ միայն ենթադրում է պետության պարտավորությունը ձեռնպահ մնալ միջամտությունից, այլ նաև ներառում է պոզիտիվ պարտավորություններ՝ ուղղված անհատի մասնավոր կյանքի արդյունավետ հարգանքի ապահովմանը» [5]:

«Էյրլին ընդդեմ Իռլանդիայի (Airey v. Ireland)» գործով Եվրոպական դատարանը հաստատեց, որ «Կոնվենցիայի նպատակն ու հիմնական արժեքները կստանան իրենց լրիվ արտահայտությունը, եթե պետությունները պարտավորվեն ձեռնպահ մնալ իրավունքների խախտումից, ինչպես նաև ձեռնարկել պոզիտիվ միջոցներ՝ ապահովելու դրանց արդյունավետ պաշտպանությունը» [9]: Շրջակա միջավայրի հարցերում պոզիտիվ պարտավորությունների դոկտրինան ձևավորվել է 1990-ական թվականներից սկսած՝ López Ostra v. Spain (1994 թ.), Guerra and Others v. Italy (1998 թ.), Hatton and Others v. United Kingdom (2003 թ.) և հետագա գործերի շարքում [10, 4]:

Շրջակա միջավայրի իրավունքը դասակարգվում է որպես «երրորդ սերնդի» կամ «համերաշխության իրավունք» (solidarity right), որը տարբերվում է դասական քաղաքացիական-քաղաքական (առաջին սերնդի) և սոցիալ-տնտեսական (երկրորդ սերնդի) իրավունքներից [1]:

Շրջակա միջավայրի իրավունքը նպատակ ունի պաշտպանելու առանձին անձանց անհատական շահերը, ինչպես նաև հանրային շահը՝ որպես հասարակության ընդհանուր բարեկեցության հիմք: Այս իրավունքի կարգավորման առարկան իր բնույթով անդրազգային և միջսերնդային է, ուստի այն ներառում է համայնքների, ժողովուրդների, ինչպես նաև ապագա սերունդների շահերի պաշտպանությունը [1, 17]: Այդ համատեքստում շրջակա միջավայրի պահպանությունը դիտարկվում է որպես համընդհանուր արժեք, որի նկատմամբ պետությունը կրում է անհատների ուղղված, ինչպես նաև հանրության լայն շրջանակների իրավունքների ապահովմանն ուղղված պոզիտիվ պարտավորություններ:

Մարդու արժանապատվությունը և շրջակա միջավայրի պայմանների կապը պահանջում է պետական քաղաքականության վերաիմաստավորում: Եթե արժանապատվությունը հանդիսանում է սահմանադրական համակարգի հիմքը, ապա պետությունը չի կարող սահ-

մանափակվել միայն տնտեսական արդյունավետության կամ զարգացման ցուցանիշներով: Պետական որոշումների կայացման գործընթացում պետք է առաջնահերթորեն գնահատվեն դրանց ազդեցությունները մարդու կյանքի պայմանների, առողջության և արժանապատիվ գոյության վրա [15]:

Եվրոպական դատարանի և միջազգային իրավական դոկտրինայի զարգացումները վկայում են, որ արժանապատվությունը աստիճանաբար մեկնաբանվում է որպես «կյանքի որակի նվազագույն շեմ» [15]: Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում սա նշանակում է, որ պետությունը պարտավոր է ապահովել այնպիսի էկոլոգիական պայմաններ, որոնք չեն իջեցնում կյանքի որակը այդ նվազագույն շեմից ներքև: Երբ այդ շեմը խախտվում է, արժանապատվության իրավական պաշտպանությունը պահանջում է և կանխարգելման միջամտություններ, ինչպես նաև «միջավայրային վտանգի» վերաբերյալ պարտադիր հանրային իրազեկում:

«Միջավայրային վտանգ» է այնպիսի իրավիճակը, որը բխում է շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող գործունեությունից կամ անգործությունից և կարող է ազդել մարդու կյանքի, առողջության կամ բարեկեցության վրա: Այն բնութագրվում է վնասի իրական կամ էական հավանականությամբ և պահանջում է կանխարգելիչ միջամտություն [15, 1]:

Նշված գիտական կատեգորիայի ներդրումը հնարավորություն է տալիս շրջակա միջավայրի պաշտպանության իրավական մեխանիզմները գործարկել ռիսկի փուլում՝ մինչև վնասի փաստացի առաջացումը կամ անդառնալի հետևանքների նյութականացումը: Վերոնշյալ հասկացության կառուցվածքում առանձնահատուկ նշանակություն ունի «իրական կամ հավանական վնասի ռիսկ» տարրը, որի իրավական բովանդակության հստակեցումը հնարավորություն է տալիս բացահայտել պետության պոզիտիվ պարտավորությունների ծավալը և դրանց ակտիվացման պահը [15, 1]:

«Իրական կամ հավանական վնասի ռիսկի» տարրը միջավայրային վտանգի իրավական կառուցվածքում ունի էական նշանակություն, քանի որ այն իրավական գնահատման կենտրոնը տեղափոխում է վնասի փաստացի առաջացումից դեպի ռիսկի գոյության և բնույթի գնահատում: Տվյալ համատեքստում տարբերակվում են ռիսկի երկու հիմնական տեսակ՝ իրական ռիսկ՝ հիմնված հաստատված տվյալների վրա, և հավանական ռիսկ՝ ձևավորվող անորոշության պայմաններում: Այս տարբերակումը տեսական և գործնական նշանակություն ունի, քանի որ այն պետության պոզիտիվ պարտավորությունների ծավալի և ինտենսիվության որոշման չափանիշ է [15, 1]:

Ֆրանսիայի շրջակա միջավայրի խարտիան (*Charte de l'environnement*, 2005), ամրագրելով նախագուշտության և հանրության մասնակցության սկզբունքները, ենթադրում է պետության պարտավորությունը ապահովելու վտանգների վերաբերյալ տեղեկատվության ժամանակին և հասկանալի տրամադրում, քանի որ առանց դրա այս սկզբունքների գործնական իրացումը անհնար է [26]: Նմանապես, Գերմանիայի հիմնական օրենքի (*Grundgesetz*) 20ա հոդվածով նախատեսված շրջակա միջավայրի պաշտպանության պետական պարտավորությունը մեկնաբանվում է նաև որպես նյութական միջավայրի պահպանություն և որպես կանխարգելիչ կառավարման պարտականություն, որը ներառում է ռիսկերի վերաբերյալ հանրության իրազեկումը [3]:

Էկվադորի Սահմանադրությունը (2008) և Հարավային Աֆրիկայի Սահմանադրությունը (1996) առավել ընդգծված կերպով կապում են շրջակա միջավայրի որակը մարդու հիմնարար իրավունքների հետ՝ ձևավորելով այնպիսի իրավական շրջանակ, որտեղ տեղեկատվության մատչելիությունը հանդիսանում է որպես այդ իրավունքների իրացման նախապայման [8, 13]: Այս մոտեցման մեջ տեղեկատվության տրամադրումը դիտարկվում է ոչ թե որպես վարչական ընթացակարգ, այլ որպես պետության պոզիտիվ պարտավորություն,

որն ուղղված է պահովելու անձանց կարողությունը գնահատելու միջավայրային ռիսկերը և պաշտպանելու իրենց իրավունքները [15, 1]:

Միջազգային փորձի վերլուծությունը տեղեկատվության մատչելիության և պետության պոզիտիվ պարտավորությունների համատեքստում ցույց է տալիս, որ ժամանակակից սահմանադրական համակարգերում շրջակա միջավայրի պաշտպանությունը աստիճանաբար վերածվում է ակտիվ իրավական պարտավորությունների համալիրի, որի կարևոր տարրերից մեկը հանրային իրազեկումն է [24, 15]:

### **Տեղեկատվության մատչելիությունը միջավայրային վտանգի պայմաններում**

Տեղեկատվության մատչելիության պահանջը ժամանակակից իրավական դոկտրինայում ձևափոխ է բերել բազմաշերտ բնույթ, որը կարելի է մեկնաբանել որպես իրավական ստանդարտների համալիր, այլ ոչ թե մեկ չափորոշիչ [12, 22]: Մույն վերլուծությունը նպատակ ունի վերլուծել տեղեկատվության մատչելիության դոկտրինալ հիմքերը միջազգային իրավունքի, մարդու իրավունքների և բնապահպանական իրավունքի համատեքստում [12, 19]:

Մարդու տեղեկացված լինելը ներառում է տեղեկատվության ֆիզիկական և իմացաբանական հասանելիությունը, գործնական կիրառելիությունը և հավասար հասանելիությունը տարբեր սոցիալական խմբերի համար [12, 24]: Իմացաբանական հասանելիությունը ենթադրում է տեղեկատվության պարզ և հասկանալի ներկայացում [12]:

Այս պահանջը հատկապես կարևոր է բնապահպանական տեղեկատվության դեպքում, որը հաճախ ունի գիտատեխնիկական բարդ բնույթ (օրինակ՝ աղտոտման ցուցանիշներ, ռիսկերի մոդելավորում, քիմիական բաղադրիչներ) [12]: Ուստի պետության պարտավորությունը չի սահմանափակվում տվյալների հրապարակմամբ, այլ ներառում է նաև դրանց թարգմանումը հանրային հասկանալի լեզվի [12, 24]:

Տեղեկատվության մատչելիության ընդլայնված ընկալումը բխում է Օրհուսի կոնվենցիայի համակարգային տրամաբանությունից, որի կարևոր տարր է հանդիսանում արդյունավետությունը, այսինքն՝ այնպիսի, որը իրականում հնարավորություն է տալիս անձին օգտագործել այդ տեղեկատվությունը իր իրավունքների պաշտպանության համար [12]:

Եվրոպական դատարանը, թեև ուղղակի չի ձևակերպում «իմացաբանական մատչելիության» սկզբունքը, սակայն պրակտիկական փաստացի շարժվում է այդ ուղղությամբ [19]:

Գուեռա և ուրիշներ ընդդեմ Իտալիայի (*Guerra and Others v. Italy, 1998*)» գործում Եվրոպական դատարանը հաստատեց, որ պետությունը պարտավոր է տրամադրել տեղեկատվություն արդյունաբերական վտանգների մասին, քանի որ դրա բացակայությունը խաթարում է անձանց կարողությունը պաշտպանել իրենց առողջությունն ու բարեկեցությունը (Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդված) [16]: Մույն գործը կարևոր է նրանով, որ ընդգծում է տեղեկատվության տրամադրման և դրա գործնական օգտակարության անհրաժեշտությունը:

«Օներյըլդըզ ընդդեմ Թուրքիայի (*Öneryıldız v. Turkey, 2004*)» գործում Եվրոպական դատարանը ընդգծեց պետության պոզիտիվ պարտավորությունը՝ իրազեկել հանրությանը այնպիսի վտանգների մասին, որոնք կարող էին ընդգրկել նրանց կյանքը, առողջությունը և բարեկեցությունը [24]: Այս գործը ընդգծեց տեղեկատվության մատչելիության կապը կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) համատեքստում:

Տեղեկատվության իրավունքը որպես ինքնուրույն բաղադրիչ զարգացվել է նաև «Տարսաշագ ազ Մաբադշագոգոկերտ ընդդեմ Հունգարիայի (*Társaság a Szabadságjogokért v. Hungary*)» և «Հաջին ընդդեմ Ադրբեջանի (*Hajiyev v. Azerbaijan*)» գործերով՝ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակում, որտեղ դատարանը հաստատել է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության հասանելիությունը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության հիմնարար տարր [18, 14]:

Վերջին զարգացումները, մասնավորապես «Վերեին Կլիմա Սենյորինեն Շվայց և այլք ընդդեմ Շվեյցարիայի (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland)» գործում Դատարանի մեկնաբանությունը ցույց են տալիս, որ պոզիտիվ պարտավորությունների դոկտրինան տարածվում է նաև կլիմայական ռիսկերի և երկարաժամկետ միջավայրային վտանգների վրա [5]:

Այս իրավիճակում պետությունը հանդես է գալիս որպես միջնորդ և հավասարակշռող սուբյեկտ, որի պարտականությունն է ապահովել տեղեկատվության այնպիսի ձևակերպում և տարածում, որը նվազեցնում է այս կառուցվածքային անհավասարությունը [12, 24]: Այս մոտեցումը համահունչ է «տեղեկատվական անհավասարության տեսության» տեղեկատվական ասիմետրիայի տնտեսագիտական դոկտրինային հետ, որն իրավական հարթակում ենթադրում է պետության կողմից ակտիվ միջամտություն տեղեկատվական կարգավորման դաշտում [24]:

Մարդու տեղեկացվածությունը հանդիսանում է իրավական կարողությունների հիմք [12, 24]: Եթե տեղեկատվությունը անհասկանալի է կամ դժվարամատչելի, ապա՝ հանրային մասնակցությունը դառնում է ձևական, դատական պաշտպանության իրավունքը՝ տեսական, իսկ վերահսկողությունը՝ անարդյունավետ [12]: Այս առումով տեղեկատվությունը հանդիսանում է իրավունքի իրացման նախապայման երաշխիք, որը նախորդում և պայմանավորում է այլ իրավունքների արդյունավետ իրացումը [12, 24]: Այն կարող է դիտարկվել որպես այնպիսի հիմնարար պայման, որը հնարավորություն է տալիս անձին կատարել տեղեկացված ընտրություն իր կյանքի պայմանների վերաբերյալ՝ վերածելով ձևականորեն ամրագրված իրավունքը իրական կարողության և գործնական իրացման միջոցի [12]:

Տեսական առումով հրապարակվող տեղեկատվությունը պետք է լինի նաև հասանելի և մատչելի [12, 24]: Մա ենթադրում է դրա ներկայացում պարզ և հասկանալի լեզվով (լեզվական մատչելիություն), հստակ կառուցվածքով և ընկալելի ձևաչափերով (կառուցվածքային մատչելիություն), ժամանակակից թվային հարթակներով և տեխնոլոգիական միջոցներով (տեխնոլոգիական մատչելիություն), տարբեր սոցիալական խմբերի համար հավասար հասանելիության ապահովմամբ (սոցիալական մատչելիություն), ինչպես նաև բարդ գիտական տվյալների հանրամատչելի մեկնաբանմամբ (բովանդակային պարզություն) [12]: Այս չափանիշների համադրումը ապահովում է, որ տեղեկատվությունը ծառայի ոչ թե ձևական իրազեկմանը, այլ իրականում հնարավորություն տա անձանց հասկանալու միջավայրային ռիսկերը և արդյունավետորեն իրացնելու իրենց իրավունքները [12, 24]:

Հանրային իրազեկման նյութական չափանիշները՝ ժամանակայնությունը, լիարժեքությունը և ակտիվ տարածումը, դոկտրինալ առումով ձևավորում են պետության պոզիտիվ պարտավորության բովանդակային կառուցվածքը և հանդես են գալիս որպես կանխարգելիչ իրավունքի հիմնարար գործիքներ [12, 24]: Ժամանակայնության սկզբունքը սերտորեն կապված է կանխարգելման և նախագոյազմման սկզբունքների հետ և պահանջում է, որ տեղեկատվությունը տրամադրվի ոչ թե արդեն առաջացած վնասից հետո, այլ ռիսկի առաջացման փուլում՝ ապահովելով հանրության կողմից վարքագծի փոփոխության, պետական միջամտության պահանջման և որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու իրական հնարավորություն [12, 22]:

Լիարժեքության պահանջը, իր հերթին, ձևակերպվում է որպես տեղեկատվության բավարարության ստանդարտ, որի համաձայն պետությունը պարտավոր է տրամադրել ռիսկի բնույթի, ազդեցությունների, տարածական և ժամանակային պարամետրերի, ինչպես նաև կանխարգելման և մեղմման միջոցների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն [12, 24]: Այս երկու տարրերը միասին ապահովում են, որ հանրությունը կարողանա ձևավորել տեղեկացված դիրքորոշում և իրականացնել իր իրավունքները ոչ թե ձևական, այլ բովանդակային իմաստով [12]:

Միաժամանակ հանրային իրազեկման համակարգում առանցքային նշանակություն

ունի ակտիվ տարածման սկզբունքը, որը պետության պարտավորությանը տալիս է ինքնագործուն և շարունակական բնույթ [12, 24]: Այս մոտեցմամբ պետությունը չի կարող սահմանափակվել միայն պահանջով տեղեկատվություն տրամադրելու մոդելով, այլ պարտավոր է սեփական նախաձեռնությամբ բացահայտել և տարածել այն տեղեկատվությունը, որը վերաբերում է հանրային առողջությանը և շրջակա միջավայրին սպառնացող վտանգներին [12, 24]: Այս պարտավորությունը հիմնավորվում է պոզիտիվ պարտավորությունների տեսությամբ, տեղեկատվական անհավասարության հաղթահարման անհրաժեշտությամբ և շրջակա միջավայրի վնասների հաճախ անդառնալի բնույթով [24]:

Միջավայրային վտանգի պայմաններում տեղեկատվության ստացման իրավունքը Հայաստանի Հանրապետության իրավակարգավորման մեջ պետք է դիտարկվի նախ և առաջ սահմանադրական հենքի շրջանակում, քանի որ հենց Սահմանադրությունն է ձևավորում պետության պոզիտիվ պարտականությունների բովանդակությունն ու ծավալը [6]: Թեև գործող սահմանադրական տեքստը ուղղակիորեն չի ամրագրում «շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության իրավունքը» որպես առանձին ինստիտուտ, սակայն դրա համակարգային մեկնաբանությունը, մասնավորապես՝ տեղեկատվություն ստանալու ազատության, կյանքի և առողջության պաշտպանության (Սահմանադրության 25-րդ հոդված) և անձնական ու ընտանեկան կյանքի անձեռնմխելիության (31-րդ հոդված) համադրությամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ նման իրավունքն առկա է որպես սահմանադրական իրավունք [6, 7]:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի ոլորտում կիրառվում են «վնաս», «ռիսկ», «վտանգավոր գործունեություն» և այլ հարակից հասկացություններ, սակայն բացակայում է «միջավայրային վտանգ» հասկացության միասնական և համակարգված իրավական ձևակերպումը: Այս հանգամանքը հանգեցնում է նրան, որ իրավական գնահատումը հիմնականում կենտրոնանում է արդեն առաջացած վնասի վրա [6]: Այս պայմաններում անհրաժեշտ է տեսականորեն ձևակերպել այնպիսի հասկացություն, որը թույլ կտա իրավական կարգավորումը տեղափոխել ռիսկի մակարդակ և ապահովել պետության պոզիտիվ պարտավորությունների արդյունավետ ակտիվացումը [24]:

Այս համատեքստում տեղեկացվածությունը դառնում է այդ իրավունքների արդյունավետ իրացման նախապայման, իսկ պետության վրա դրվում է ակտիվ գործողությունների իրականացման պարտականություն՝ ապահովելու հանրության իրազեկվածությունը շրջակա միջավայրի վտանգի վերաբերյալ [12, 24]:

Օրենսդրական մակարդակում տեղեկատվության իրավունքի ապահովումը իրականացվում է առաջին հերթին «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով, որը ձևավորում է տեղեկատվության մատչելիության ընդհանուր իրավական ռեժիմը [7]: Օրենքի կարևոր առանձնահատկությունն այն է, որ նախատեսում է նաև տեղեկատվության նախաձեռնողական հրապարակում՝ հատկապես այն դեպքերում, երբ տեղեկատվության հրապարակումը կարող է կանխել շրջակա միջավայրին, հանրության առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող վտանգը [7]:

Կարգավորումն ունի էական թերություններ. օրենքը չի սահմանում «վտանգ» հասկացության հստակ չափանիշներ, չի կոնկրետացնում «անհապաղ» հրապարակման ժամանակային շրջանակը, չի նախատեսում տեղեկատվության տարածման պարտադիր ձևաչափեր և, ամենակարևորը, չի ամրագրում արդյունավետ պատասխանատվության մեխանիզմներ այս պարտականության չլատարման համար [6, 7]: Արդյունքում, տվյալ նորմը հաճախ մնում է դեկլարատիվ [6]:

Վարչարարության ոլորտում գործող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը լրացուցիչ հիմք է ստեղծում տեղեկատվության իրավունքի ապահովման համար՝ ամրագրելով, որ վարչական մարմինները պարտավոր են իրենց լիազո-

րություններն իրականացնել մարդու իրավունքների պաշտպանության, համաչափության և կամայականության արգելքի սկզբունքների հիման վրա: Այս սկզբունքները ենթադրում են, որ շրջակա միջավայրի վտանգի դեպքում տեղեկատվության տրամադրումը պետք է դիտարկվի որպես պարտադիր վարչարարական գործողություն: Մինևույն ժամանակ օրենքը նախատեսում է արագացված վարչարարություն անմիջական վտանգի դեպքերում, ինչը կարող էր ծառայել նաև տեղեկատվության արագ փոխանցման հիմք [7]: Սակայն այստեղ բացակայում է հստակ նորմատիվ կապը վարչարարական գործողությունների և տեղեկատվության տրամադրման միջև, ինչի հետևանքով առաջանում է իրավական բաց՝ հատկապես արտակարգ կամ վտանգավոր իրավիճակներում հանրության իրազեկման պարտականության առումով [6]:

Տեղեկատվության տարածման ինստիտուցիոնալ հիմքերը լրացվում են «Ձանգվածային լրատվության մասին» օրենքով, որը երաշխավորում է տեղեկատվության ազատ շրջանառությունը և լրատվամիջոցների գործունեությունը: Այն ապահովում է այն միջավայրը, որտեղ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հասնել հանրությանը, սակայն չի նախատեսում պետական մարմինների ուղղակի պարտականություն՝ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ: Այս հանգամանքը վկայում է, որ տեղեկատվության տարածման համակարգը կառուցված է հիմնականում «ազատության», այլ ոչ թե «պարտականության» տրամաբանության վրա [7]:

Միաժամանակ տեղեկատվության իրավունքը սահմանափակվում է պետական և ծառայողական գաղտնիքի ինստիտուտով, որը թույլ է տալիս որոշ տեղեկություններ դասել գաղտնիք՝ ազգային անվտանգության նկատառումներով: Թեև նման սահմանափակումները սկզբունքորեն արդարացված են, սակայն օրենսդրությունը չի ապահովում բավարար հավասարակշռություն հանրային շահի և գաղտնիության պաշտպանության միջև՝ հատկապես շրջակա միջավայրի վտանգների վերաբերյալ տեղեկատվության դեպքում [18]: Գործնականում սա կարող է հանգեցնել այն իրավիճակին, երբ հանրային նշանակություն ունեցող բնապահպանական տեղեկությունները սահմանափակվում են՝ առանց բավարար հիմնավորման [6]:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության իրավակարգավորումը ձևավորում է տեղեկատվության իրավունքի որոշակի համակարգ՝ սկսած սահմանադրական հիմքերից մինչև ոլորտային օրենքներ, սակայն այդ համակարգը բնութագրվում է մասնակիության և ոչ բավարար համակարգավածության հատկանիշներով: Թեև առկա են կարևոր առաջադեմ նորմեր, մասնավորապես՝ վտանգի դեպքում տեղեկատվության նախաձեռնողական հրապարակման պարտականությունը, դրանց արդյունավետ իրացումը խոչընդոտվում է հստակ ընթացակարգերի, ինստիտուցիոնալ վերահսկողության և պատասխանատվության մեխանիզմների բացակայությամբ: Ուստի կարելի է եզրակացնել, որ գործող իրավակարգավորումը ապահովում է տեղեկատվության իրավունքի իրականացման ձևական հիմք, սակայն չի ստեղծում այնպիսի ամբողջական և արդյունավետ համակարգ, որը կկարողանա լիարժեք ապահովել շրջակա միջավայրի վտանգների վերաբերյալ հանրության ժամանակին և ամբողջական իրազեկումը [6, 7]:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) ինստիտուտի արդյունավետությունը կախված է տեղեկատվության մատչելիությունից, քանի որ առանց դրա հանրային մասնակցությունը և կանխարգելումը դառնում են ձևական [12, 24]: Սակայն վերոգրյալ սահմանադրական և օրենսդրական վերլուծության համադրումը ցույց է տալիս, որ, թեև Հայաստանի Հանրապետության իրավակարգավորումը ձևականորեն ամբազանում է շրջակա միջավայրի վտանգների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման պարտականության որոշ տարրեր, այն չի ապահովում այդ պարտականության համակարգային և գործնական իրականացումը [6, 7]: Մասնավորապես, բացակայում են ՇՄԱԳ գործընթացի շրջանակում վտանգի վերաբերյալ տեղեկատվության պարտադիր, ժամանակին և

կառուցակարգված հաղորդման հստակ մեխանիզմներ, ինչի արդյունքում տեղեկատվության տրամադրումը հաճախ կախված է վարչական մարմինների հայեցողությունից [6]: Այս հանգամանքը էապես սահմանափակում է կանխարգելման սկզբունքի արդյունավետ իրացումը և վկայում է, որ տեղեկատվության իրավունքը, որպես պետության պոզիտիվ պարտականություն, շարունակում է մնալ ոչ լիարժեք ինստիտուցիոնալացված՝ հատկապես շրջակա միջավայրի վտանգների պայմաններում հանրության պատշաճ իրազեկման տեսանկյունից [24, 6, 7]:

### **Եզրակացություն և առաջարկներ**

Վերլուծության արդյունքներով կարելի է ձևակերպել, որ Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վտանգի պայմաններում տեղեկատվության մատչելիության իրավական համակարգը գտնվում է ձևավորման և զարգացման փուլում. այն ունի անհրաժեշտ նորմատիվ հիմքերը, սակայն չի ապահովում դրանց ամբողջական և արդյունավետ իրացումը: Տեղեկատվության մատչելիությունը, որպես պետության պոզիտիվ պարտականություն, պետք է դիտարկվի որպես տեղեկատվություն տրամադրելու հստակ իրավական պարտավորություն:

Անհրաժեշտ է սահմանել հանրային իրազեկման պարտադիր համակարգ, որը կգործի ակտիվ տարածման սկզբունքով և չի սահմանափակվի միայն դիմումի հիման վրա տեղեկատվություն տրամադրելով: Այս համակարգը պետք է ապահովի տեղեկատվության ժամանակայնությունը, լիարժեքությունը և շարունակականությունը՝ որպես շրջակա միջավայրի ռիսկերի կանխարգելման հիմնարար մեխանիզմ:

Այս համատեքստում նպատակահարմար է առաջարկել մի շարք գիտական և օրենսդրական ուղղություններ, որոնք կարող են ապահովել տեղեկատվության իրավունքի առավել արդյունավետ իրացումը:

**Առաջին՝** անհրաժեշտ է սահմանադրական մակարդակում ամրագրել շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության իրավունքը և պետության պոզիտիվ պարտականությունը՝ այն ամրագրելով որպես ինքնուրույն իրավունք կամ առնվազն որպես հստակ ձևակերպված պարտականություն՝ կապված կյանքի և արժանապատիվ գոյության ապահովման հետ: Սա հնարավորություն կտա դուրս բերել տվյալ իրավունքը մեկնաբանության ոլորտից և դարձնել այն ուղղակի կիրառելի նորմ:

**Երկրորդ՝** «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում անհրաժեշտ է կոնկրետացնել վտանգի դեպքում տեղեկատվության տրամադրման պարտականությունը՝ սահմանելով «**միջավայրային վտանգ**» հասկացության իրավական չափանիշներ, տեղեկատվության հրապարակման հստակ ժամկետներ, պարտադիր ձևաչափեր և չտրամադրելու դեպքում արդյունավետ պատասխանատվության մեխանիզմներ: Անհրաժեշտ է օրենսդրությամբ ամրագրել տեղեկատվության մատչելիության բովանդակային չափանիշները՝ ներառելով դրա լեզվական, կառուցվածքային և գործնական հասանելիությունը, որպեսզի տեղեկատվությունը լինի ոչ միայն ձևականորեն հասանելի, այլև ընկալելի և կիրառելի հանրության համար, ինչը հանդիսանում է տեղեկատվության իրավունքի արդյունավետ իրացման անբաժանելի պայման: Առանց այս տարրերի կարգավորումը մնում է դեկլարատիվ:

**Երրորդ՝** անհրաժեշտ է ՇՄԱԳ գործընթացում ներդնել տեղեկատվության պարտադիր, շարունակական և փուլային հաղորդման ինստիտուտ՝ ապահովելով, որ հանրությունը տեղեկացվի ոչ միայն նախագծի վերջնական գնահատման, այլ նաև դրա բոլոր միջանկյալ փուլերում առկա ռիսկերի վերաբերյալ: Սա կապահովի հանրային մասնակցության իրական, այլ ոչ ձևական բնույթը:

**Չորրորդ՝** շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելի դարձնելու և դրա հրապարակման պարտականության կատարման վերահսկողությունը պետք է վերապահվի շրջակա միջավայրի անկախ խորհրդին, որը պետք է ունենա սահմանադրական կամ օրենքով ամրագրված կարգավիճակ և համապատասխան լիազորություններ՝ գնահա-

տելու տեղեկատվության ամբողջականությունը, ժամանակայնությունը և հավաստիությունը, ինչպես նաև ապահովելու հանրային շահի պաշտպանությունը տվյալ ոլորտում: Նման ինստիտուցիոնալ լուծումը թույլ կտա նվազեցնել վարչական մարմինների հայեցողության ազդեցությունը և ապահովել տեղեկատվության մատչելիության պարտականության արդյունավետ, համակարգված և անկողմնակալ իրականացում:

Այս առաջարկությունների իրականացումը թույլ կտա վերափոխել տեղեկատվության մատչելիության ինստիտուտը ձևական իրավական նորմերից դեպի արդյունավետ մեխանիզմ՝ ամրապնդելով պետության պոզիտիվ պարտավորությունների իրականացման համակարգը և ապահովելով շրջակա միջավայրի վտանգների պայմաններում մարդու իրավունքների լիարժեք պաշտպանությունը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-142>

### Գրականություն

1. Բոյդ Դ. (Boyd D.), Շրջակա միջավայրի իրավունքների հեղափոխություն (The Environmental Rights Revolution):
2. Բուդաևա և այլք ընդդեմ Ռուսաստանի (Budayeva and Others v. Russia), դիմումներ № 15339/02 և այլք, 20 մարտի 2008:
3. Գերմանիայի հիմնական օրենք (Grundgesetz), հոդված 20ա:
4. Գուեռա և այլք ընդդեմ Իտալիայի (Guerra and Others v. Italy), դիմում № 14967/89, 19 փետրվարի 1998 (Մեծ պալատ):
5. Եվրոպական դատարան, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույց (Guide on Article 8 of the Convention), 2023 թ.:
6. Եվրոպական միության դիրեկտիվ 2003/4/ԵՇ (Directive 2003/4/EC)՝ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության մասին:
7. Եվրոպական միության դիրեկտիվ 2004/35/ԵՇ (Directive 2004/35/EC)՝ բնապահպանական պատասխանատվության մասին:
8. Էկվադորի Սահմանադրություն (Constitution of Ecuador), 2008, հոդված 71:
9. Էյրին ընդդեմ Իռլանդիայի (Airey v. Ireland), դիմում № 6289/73, 9 հոկտեմբերի 1979:
10. Լոպես Օստրա ընդդեմ Իսպանիայի (López Ostra v. Spain), դիմում № 16798/90, 9 դեկտեմբերի 1994:
11. Հաջին ընդդեմ Ադրբեջանի (Hajiyev v. Azerbaijan), դիմում № 37883/11, 16 նոյեմբերի 2021:
12. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015 թ. (փոփոխություններով):
13. Հարավային Աֆրիկայի Հանրապետության Սահմանադրություն (Constitution of South Africa), 1996, հոդված 24:
14. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (European Convention on Human Rights), հոդվածներ 2, 8, 10:
15. Շելթոն Դ. (Shelton D.), Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը (Human Rights and the Environment):
16. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2014:
17. Ռազզաքուե Ջ. (Razzaque J.), Բնապահպանական կառավարում և մարդու իրավունքներ (Environmental Governance and Human Rights):
18. Ռիոյի հռչակագիր շրջակա միջավայրի և զարգացման մասին (Rio Declaration on Environment and Development), 1992, սկզբունքներ 10, 15:
19. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2004:

20. Վերին ԿլիմաՍենյորինեն Շվայց և այլք ընդդեմ Շվեյցարիայի (Verein Klima Seniorinnen Schweiz and Others v. Switzerland), դիմում № 53600/20, 9 ապրիլի 2024 (Մեծ պալատ):
21. Տարսաշագ ազ Սարադշագոգոկերտ ընդդեմ Հունգարիայի (Társaság a Szabadságjogokért v. Hungary), դիմում № 37374/05, 14 ապրիլի 2009:
22. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2003:
23. Օներյըլդըզ ընդդեմ Թուրքիայի (Öneryıldız v. Turkey), դիմում № 48939/99, 30 նոյեմբերի 2004 (Մեծ պալատ):
24. Օրհուսի կոնվենցիա (Aarhus Convention)՝ շրջակա միջավայրի հարցերով տեղեկատվության մատչելիության, հանրային մասնակցության և արդարադատության հասանելիության մասին, 1998:
25. Ֆադեյենա ընդդեմ Ռուսաստանի (Fadeyeva v. Russia), դիմում № 55723/00, 9 հունիսի 2005:
26. Ֆրանսիայի շրջակա միջավայրի խարտիա (Charte de l'environnement), 2005:

## **Позитивная обязанность государства по обеспечению общественной осведомлённости об экологической опасности**

*Туманян Карен*

### **Резюме**

**Ключевые слова:** «экологическая опасность», осведомленность общественности, доступ к информации, принцип предосторожности, равенство информации, независимый экологический совет

В статье обосновывается, что осведомленность общественности об экологических опасностях является ключевым компонентом позитивных обязательств государства, обеспечивающих своевременное, полное и доступное предоставление информации о рисках.

Понятие «экологическая опасность», используемое в статье, представляет собой доктринальную формулировку, предложенную автором, разработанную в рамках соответствующих научных исследований и направленную на дальнейшее уточнение превентивного характера экологического права. Это понятие заполняет пробел в правовом регулировании, переводя правовую оценку со стадии ущерба на стадию риска.

Применение понятия «экологическая опасность» позволяет активировать правовые механизмы на стадии риска, обеспечивая профилактику, в то время как информированность является предпосылкой для практической реализации этого подхода. Это компонент защиты жизни и неприкосновенности частной жизни и институциональная основа экологического управления.

В то же время, правовое регулирование Республики Армения, хотя и формально закрепляет право на доступ к информации, не обеспечивает его полного и систематического осуществления из-за отсутствия четких стандартов, процедур и механизмов контроля. В этом контексте институционализация контроля за доступом к информации посредством независимого экологического совета рассматривается как необходимое условие для эффективного выполнения государством своих позитивных обязательств.

## **The State's Positive Obligation to Ensure Public Awareness Regarding Environmental Hazard**

*Tumanyan Karen*

### **Summary**

**Key words:** *"environmental hazard", public awareness, access to information, precautionary principle, information equality, independent environmental council*

The article substantiates that public awareness of environmental hazards is a key component of the state's positive obligations, ensuring the provision of timely, complete and accessible information on risks.

The concept of "environmental hazard" used in the article is a doctrinal formulation proposed by the author, which was developed within the framework of relevant scientific research and is aimed at further clarifying the preventive nature of environmental law. This concept fills the gap in legal regulation, moving the legal assessment from the damage stage to the risk stage.

The application of the concept of "environmental hazard" makes it possible to activate legal mechanisms at the risk stage, ensuring prevention, while being informed is a prerequisite for the practical implementation of this approach. It is a component of the protection of life and privacy and an institutional basis for environmental management.

At the same time, the legal regulation of the Republic of Armenia, although formally enshrining the right to access to information, does not ensure its full and systematic implementation, due to the lack of clear standards, procedures and control mechanisms. In this context, the institutionalization of control over access to information through an independent environmental council is considered a necessary condition for the effective implementation of the state's positive obligations.

Ներկայացվել է 01. 12. 2025 թ.  
Գրախոսվել է 07. 04. 2026 թ.  
Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

## 1980-90-ական թվականների բրիտանական պատմագիտությունն Անգլիայում 16-րդ դարում հումանիզմի և Ռեֆորմացիայի մասին

*Խաժակյան Վաչագան*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-153>

*Հանգուցային բառեր.* *հումանիստ, ռեֆորմիստ, գաղափարախոսություն, կրոն, աստվածաբան, ուսմունք, աշխարհայացք, բարոյագիտություն*

### Նախաբան

20-րդ դարի վերջին բրիտանական պատմագիտության մեջ հանդես եկան մի շարք գիտնականներ, որոնք Վերածննդի դարաշրջանի որոշ անգլիացի հումանիստների և ռեֆորմիստների գաղափարախոսության, փիլիսոփայության և բարոյագիտական հայացքների բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա փորձում էին, ի տարբերություն մարքսիստական պատմագիտության, նորովի մեկնաբանել հումանիստական աշխարհայացքի ձևավորման և զարգացման, ինչպես նաև Ռեֆորմացիայի հիմնախնդիրներն Անգլիայում 16-րդ դարում: Այդ գիտնականները նկատելի առաջընթաց քայլ կատարեցին մեթոդաբանության բնագավառում: Նրանք եկան այն համոզմանը, որ հումանիզմը՝ որպես Վերածննդի կարևոր բաղադրիչ, հայացքների ամբողջական համակարգ և հասարակական մտքի լայն ընթացակարգ, մասամբ տարածում գտնելով Անգլիայում 15-րդ դարում, արդեն 16-րդ դարում հեղաշրջում կատարեց անգլիական մշակույթում և ժամանակակից մարդու աշխարհայացքում: Ռեֆորմացիայի էությունը բրիտանացի պատմաբանները տեսնում էին դրան բնորոշ կրոնական և հասարակական-քաղաքական հարաբերություններում, որոնց բնույթն առավել պարզորոշ դրսևորվեց անգլիացի ռեֆորմիստների հայացքներում:

Վերածննդի դարաշրջանի հումանիստական մտքի և ռեֆորմիստական հայացքների շուրջ 20-րդ դարի 80-90-ական թվականների բրիտանական պատմագիտական մտքի անդրադարձի ուսումնասիրությունն ու մեկնաբանությունը կարևոր է և ուսանելի: Այդ ոլորտում առանձնապես աչքի ընկան պատմաբաններ Քրիստոֆեր Հեյզը, Արթուր Դիքենսը, Ռիչարդ Մարիուսը, Թերենս Մորիսը, Մյուգան Բրիգդենը, Մարտին Ֆլեյշերը, Էրիկ Այվը, Ջեֆրի Էլթոնը, Ջերարդ Վեգեմերը և ուրիշներ, որոնց հետազոտությունները միանգամայն նոր լույս են սփռում անգլիացի հումանիստների և ռեֆորմիստների հայացքների վիճահարույց դրվագների վրա:

Սույն թեմայի ուսումնասիրության առանցքը վերոնշյալ բրիտանացի գիտնականների կողմից այդ հումանիստների և ռեֆորմիստների հայացքների ու գաղափարախոսության գնահատականն է, որն, անշուշտ, արդիական նշանակություն ունի: Մասնավորապես՝ էական է վերջիններիս դերակատարության բացահայտումը Անգլիայի պատմության մեջ, որը նաև անհնարին կլինեք ներկայացնել առանց բնութագրելու այդ հումանիստների և ռեֆորմիստների ապրած դարաշրջանը և անգլիական հասարակության սոցիալ-քաղաքական իրադրությունը 16-րդ դարում:

### Ռենեսանսյան հումանիզմի և Ռեֆորմացիայի խնդիրների ուսումնասիրությունը բրիտանական պատմագրությունում

1980-90-ական թթ. բրիտանացի հետազոտողների ուշադրությունը հիմնականում բևեռված էր 15-16-րդ դարերի հումանիստներ Թոմաս Լինակրի (1460-1524), Ջոն Քոլերի (1467-1519), Թոմաս Մորի (1478-1535), Թոմաս Էլիոթի (1490-1546), Թոմաս Ստարքի (1495-1538), Էլիս Հեյվուդի (1529-1578), ռեֆորմիստներ Լաթիմեր Հյուի (1487-1555), Կովերդեյլ Մայլզի (1488-1568), Թոմաս Քրանմերի (1489-1556), Վիլյամ Թինդեյլի (1494-1536) և այլոց

հումանիստական աշխարհայացքի և ռեֆորմիստական գաղափարախոսության խնդիրների շուրջ:

Այսպես՝ հայտնի բրիտանացի պատմաբան Արթուր Ջեֆրի Դիքենսն իր «Անգլիական Ռեֆորմացիան» աշխատության մեջ [2, 197-198] ընդգծում էր, որ դժվար է պատկերացնել բողոքական ռեֆորմիստ Վիլյամ Թինդեյլի և նրա համախոհների գործունեությունը, եթե նրանց նախորդած չլինեին նիդեռլանդցի հումանիստ Էրազմոս Ռոտերդամցու և անգլիացի աստվածաբան, հումանիստ Ջոն Քոլեթի հումանիստական շարժումը՝ եկեղեցու բարեփոխման իրենց նախագծերով: Ըստ Ա. Դիքենսի՝ թեև փորձեր եղել էին ընդգծելու «քրիստոնյա հումանիստներ» Էրազմոս Ռոտերդամցու կողմնակիցների և ռեֆորմիստների միջև եղած սկզբունքային տարբերությունները, մասնավորապես՝ վերջիններիս կողմից ստեղծված բարոյագիտական արժեհամակարգի տարբեր բնույթը, որը հատկապես երևում էր ազատ կյանքի մասին Վիլյամ Թինդեյլի և գերմանացի աստվածաբան, բողոքականության հիմնադիր Մարտին Լյութերի հետ Թոմաս Մորի և Էրազմոս Ռոտերդամցու միջև եղած բանավեճում, այնուամենայնիվ, ինչպես նշում էր Դիքենսը, պետք է հաշվի առնել հումանիզմի և Ռեֆորմացիայի պատմական կապի բազմակողմանիության բնույթը [4, 69]: Բրիտանացի պատմաբան Քրիստոֆեր Հեյզը գրում էր. «Երբ ռեֆորմացիոն շարժումը զարգացավ Անգլիայում, հումանիզմը սկսեց փոփոխության ենթարկվել ոչ միայն կաթոլիկական, այլև ռեֆորմացիոն ուղղությամբ» [10, 124]: Հեղինակը նկատի ունեւր այն հումանիստներին, ովքեր ընդունել էին Թյուրդրների Ռեֆորմացիան և իրենց պարտքը տեսնում էին բացարձակ միապետությանը ծառայելու մեջ: Որոշ հայտնի հումանիստների համար անգլիական ռեֆորմացիան գտնվում էր բացարձակ միապետության հսկողության ներքո, որի գաղափարական հիմքը, ըստ Քրիստոֆեր Հեյզի, հանդիսացավ Վիլյամ Թինդեյլի և նրա համախոհների աշխատությունները, և որոնք հիմք հանդիսացան 1529-1536 թթ. անգլիական պառլամենտի աշխատանքի համար և մասամբ իրագործվեցին մի շարք օրենսդրական ակտերի տեսքով՝ դառնալով լիովին ընդունելի [10, 78-79]:

Անգլիական ռեֆորմացիայի հայտնի գաղափարախոս Վիլյամ Թինդեյլը հումանիստորեն կրթված անձնավորություն էր, ակնավոր բանասեր և որոշակիորեն Էրազմոս Ռոտերդամցու աշակերտը, ուստի, ըստ Հեյզի, պետք էր նկատի ունենալ ոչ միայն 16-րդ դարի հոգևոր մշակույթի այդ երկու ուղղությունների՝ հումանիզմի և Ռեֆորմացիայի վեճերն ու թշնամանքը, այլև այդ երկու տարբեր գաղափարական ուղղությունների դրական կապն ու փոխներթափանցումը [11, 91-92]: Այդ հարցը հստակ ուսումնասիրության առարկա էր դարձել նաև մի շարք պատմաբանների, մասնավորապես՝ պրոֆեսոր Էրիկ Այվզի կողմից: Այսպես. վերջինս իր «Ռեֆորմացիայի փորձը. հաղթահարելով հեղինակը 16-րդ դարը» մենագրության մեջ, անդրադառնալով «քրիստոնյա հումանիստներին» քննադատական ժառանգությանը, մատնանշում էր, որ այն, ինչպես նաև որոշ դրական գաղափարներ օգտագործվել են նաև ռեֆորմիստների կողմից, ովքեր երկար ժամանակ կարծում էին՝ Ռոտերդամցու գաղափարակիրներն իրենց իսկական համախոհներն են: Այդ կապակցությամբ հեղինակը հիշատակում էր, թե ինչպես էր Մարտին Լյութերն աջակցություն ակնկալում Էրազմոս Ռոտերդամցու և նախատում էր նրան դրա բացակայության համար՝ բացատրելով դա միայն իր ենթադրյալ համախոհների վախկոտությամբ [13, 89]: Այդպիսի միջադեպ տեղի էր ունեցել նաև Վիլյամ Թինդեյլի հետ, ով, վիճաբանելով Թոմաս Մորի հետ, ենթադրում էր, որ նա չկարողացավ դատապարտել «Աստվածաշնչի»՝ Էրազմոս Ռոտերդամցու անգլերեն թարգմանությունը: Եվ որ նա, եթե այդպես է վարվել, ապա դա եղել է երեսպաշտություն, թեև հոգով նա վերջինիս համախոհն էր համարվում [13, 110]:

Մի շարք հետազոտողներ գտնում էին, որ եթե հումանիստների և ռեֆորմիստների քննադատությունը՝ ուղղված կաթոլիկ եկեղեցու դեմ, ուներ բազմաթիվ ընդհանրություններ, ապա երկուսն էլ երբեմն ունենում էին նաև նույն հակառակորդը: Այսպես՝ պրոֆեսոր

Ձեֆրի Էլթոնն իր «Ռենեսանսը և Ռեֆորմացիան, 1300-1648» մենագրության մեջ գրում էր. «Ուշագրավ գուգադիպություն է այն փաստը, որ Ռեֆորմացիայի նախօրեին Էրազմոս Ռոտերդամցու ամենալուրջ հակաաղորդող ֆլամանդացի աստվածաբան Ժակ Լաթոմոս Լյուվենացին էր (1475-1544), ով խստորեն բողոքում էր դիլետանտ բանաստեղծների և հռետորաբանների ներխուժումն աստվածաբանության ոլորտ, որտեղ տիրում էր դիակլետիկական արվեստը, և այդպես պատահաբար նույն Լաթոմոսն իր պահպանողական առաքելությամբ հայտնվելու էր այն գլխավոր աստվածաբան փորձագետների շարքում, ովքեր հաստատել էին Թինդեյլի հերետիկոս լինելու մեղադրանքը և դրանով դատապարտել նրան մահվան: Դա անշուշտ պատահականություն էր, բայց դրանում դրսևորվում էր պատմության տրամաբանությունը»,- նշում էր հեղինակը [5, 78-79]:

Ըստ պրոֆեսոր Վիլյամ Էսթեփի՝ Ռեֆորմացիայի պայմաններում հումանիզմի Էվոլյուցիայի խնդիրը անչափ էական էր և միաժամանակ բարդ: Այդպիսին էր Թոմաս Մորի օրինակը, ով դարձավ ապագա հակառեֆորմացիայի դիրքորոշման ենթարկվող եռանդուն պաշտպաններից մեկը [8, 173]: Այդ առումով եղել են նաև հումանիստներ, ովքեր աջակցել են Ռեֆորմացիային: Այդ հայեցակարգն առավել հստակորեն ձևակերպել է պրոֆեսոր Սյուզան Էլիզաբեթ Բրիգոնը, որն իր մենագրության մեջ ընդգծում էր, որ այդքան էլ պարզ չէ, թե ինչպես էին ոմանք հայտնվում հակառեֆորմացիայի ճամբարում: «Ոչ միայն «երկչտ» Էրազմուսը, այլ նույնիսկ հակառեֆորմացիայի պաշտոնական գործիչ, անգլիացի կարդինալ, արքեպիսկոպոս Ռեջինալդ Փոուլը (1500-1558) երբեք չազատվեցին օքսֆորդյան խմբակի հումանիստների ղեկավար, աստվածաբան Ջոն Քոլեթի հումանիստական ժառանգությունից՝ պաշտոնական եկեղեցու նկատմամբ իր քննադատական վերաբերմունքով: Եվ պատահական չէ, որ Էրազմոս Ռոտերդամցին մշտապես կասկածի տակ է եղել հակառեֆորմացիայի գործիչների շրջանում, իսկ կարդինալ Ռեջինալդ Փոուլը, լինելով Հռոմում եկեղեցական իշխանների շարքում, այնուամենայնիվ այդպես էլ երբեք չարժանացավ Հռոմեական կուրիայի իսկական վստահությանը և ոչ առանց պատճառի: Անգամ Տրիդենտի եկեղեցական համընդհանուր ժողովի ժամանակաշրջանում (1545-1563) այդ կարդինալի մերձավոր շրջապատում հայտնվեցին գործեր, որոնք իրենց հումանիստական գաղափարներով համահունչ էին Թոմաս Մորի «Ուտոպիային» [1, 93-94]: Այդպիսին էր, օրինակ, անգլիացի հումանիստ Էլիս Նելվուդի (1529-1578) «Il Moro» (Մուլթը) աշխատությունը, որը հրատարակվել էր իտալերենով 1556 թ. Ֆլորենցիայում՝ ի հիշատակ Թոմաս Մորի [1, 94]: Գրքի հեղինակը՝ Էլիս Նելվուդը, Անգլիայի թագավոր Շեռնի VIII-ի հայտնի պալատական բանաստեղծ և դրամատուրգ, Թոմաս Մորի մտերիմ Ջոն Նելվուդի որդին էր, ով ծառայում էր որպես կարդինալ Ռեջինալդ Փոուլի քարտուղար, որին էլ նա նվիրել էր այդ աշխատությունը [11, 79-80]: Էլիս Նելվուդի այդ ստեղծագործությունը «ի՞նչ է իսկական երջանկությունը» հարցադրումն անելիս և քննարկելիս միավորում էր հումանիստական երկխոսության ձևը սքոլաստիկական հիմնավորվածության հետ: Որպես այդ երկխոսության մասնակիցներ հանդես էին գալիս Թոմաս Մորը և նրա վեց գրուցակիցները, որոնցից յուրաքանչյուրը ձևակերպում և հիմնավորում էր երջանկության իր ըմբռնումը: Քննելով մարդու գործունեության նպատակը և իրական երջանկության բնույթը՝ այդ գրուցակիցները դիտարկում էին հաճույքի և առաքինության փոխհարաբերության հավերժական հարցը: Հարատույնը, արժանապատվությունը, սերը և աշխարհի մասին գիտելիքը հետևողականորեն համարվում էին երջանկության ենթադրյալ հիմքը: Թոմաս Մորը՝ որպես երկխոսության հիմնական մասնակից և գլխավոր մրցավար, վերլուծում էր յուրաքանչյուր տեսակետ և «քրիստոնեական հումանիզմի» տեսանկյունից հիմնավորում էր իրական երջանկության բնույթը:

Մարտին Ֆլեյշերը նույնպես անդրադարձել է Էլիս Նելվուդի «Il Moro» ստեղծագործությանը, որտեղ Թոմաս Մորի տեսակետը մոտ էր համարում «Ուտոպիայում» ձևակերպված առաքինության և հաճույքի բարոյագիտական հայեցակարգին: «Ամբողջովին «ուտոպիայի»

ոգով Թոմաս Մորը»,- գրում է Ֆլեյշերը,-«Հելվոլդի հետ երկխոսության մեջ ամենևին չանտեսելով երկրային բարիքների կարևորությունը՝ այնուամենայնիվ երջանկության հիմքը տեսնում էր հոգևոր հաճույքի մեջ, որի ճանապարհը խելամուտ ինքնազսպման մեջ էր, երբ միտքը վերահսկում է զգայական կարիքները, որպեսզի մարդու աստվածային կարողություններն ու շնորհներն ուղղված լինեն դեպի բարձրագույն և հոգևոր հաճույքները: Ինչ վերաբերում է նյութական բարիքներին, ապա դրանք պետք է ծառայեն որպես գործիք, որն օգնում է մարդուն իրագործել իր բարձր նպատակը՝ մարդուն Աստծուն մոտեցնելը» [9, 82-83]:

Անդրադառնալով Ռեֆորմացիայի և հակառեֆորմացիայի պայմաններում հումանիզմի էվոլյուցիային՝ Արթուր Դիքենսն ուշադրություն էր հրավիրում անցյալի գաղափարական ժառանգության հումանիստների մեկնաբանության շեշտադրումների փոփոխությանը [2, 65]: Ըստ վերջինիս՝ հասարակության բարեփոխումների հումանիստական հայեցակարգի, ինչպես նաև ընդհանրապես հումանիստների աշխարհայացքի ձևավորումը տեղի է ունեցել անտիկ ժամանակաշրջանի և միջնադարի ժառանգության ազդեցության ներքո, և դրանում հումանիստներին մեծապես օգնել են նրանց բանասիրական խոր գիտելիքները, որոնք հնարավորություն են տվել բնագրով կարդալ ոչ միայն լատինական գրողներին, այլև հույն փիլիսոփաներին: Սակայն հումանիստների վերաբերմունքն անտիկ մտածողների, ինչպես նաև միջնադարյան հեղինակների նկատմամբ միանշանակ չէր: Այսպիսով՝ վերոհիշյալ հեղինակը գալիս էր այն եզրակացության, որ անգլիացի հումանիստները, ինչպիսիք էին, օրինակ, Վիլյամ Գրոսսին, Թոմաս Լինակըր, անտիկ փիլիսոփաներից փոխառել էին միայն այն գաղափարները, որոնք համապատասխանում էին ակտիվ քաղաքացիական դիրքորոշմանը և քրիստոնեական բարեփոխումների ցանկությանը: Դա, ինչպես նշում էր Արթուր Դիքենսը, հստակ երևում էր հումանիստական գրականության այնպիսի հայտնի ստեղծագործություններում, ինչպիսիք էին «Գովք հիմարությանը», և «Ուտոպիան»: Եվ եթե մենք դիմենք «Ուտոպիայի» իդեալական հասարակության էթիկային, ապա Թոմաս Մորի ծանոթությունը հին հույն փիլիսոփա Էպիկուրի (մ. թ. ա. 342-270) ուսմունքին՝ և ստոյիկների փիլիսոփայությանը<sup>2</sup>, ակնհայտ է դառնում» [4, 83]: Ընդհանուր առմամբ Դիքենսի տեսակետը կիսում էր նաև անգլիացի հետազոտող Քրիստոֆեր Հեյզը. «Էպիկուրյան և ստոյիկյան փիլիսոփայության տարրերն անկասկած առկա էին ուտոպիական էթիկայի հայեցակարգում», այդուհանդերձ նա այն որակում էր որպես հումանիստական բարոյագիտություն, այլ ոչ թե միայն էպիկուրյան կամ ստոյիկյան [10, 92]:

Որքան էլ մեծ է եղել անցյալի գաղափարական ժառանգության ազդեցությունը, այդուհանդերձ, ըստ որոշ հետազոտողների, հումանիստական և այլ հասկացությունների բովանդակությունը մշտապես որոշվել է տվյալ դարաշրջանի՝ 16-րդ դարի սոցիալական և քաղա-

<sup>1</sup> Էպիկուրականությունը փիլիսոփայական ուսմունք է, որը հիմնված է հույն փիլիսոփա Էպիկուրի (մ.թ.ա 342-270) և նրա հետևորդների գաղափարների վրա: Ըստ այդ ուսմունքի՝ բարձրագույն բարիք դիտվում է կյանքի վայելքը, որը ենթադրում է ֆիզիկական ցավի ու տագնապի բացակայություն և մահվան ու աստվածների վախից ազատում: Էպիկուրը ժխտում էր հոգու անմահության գաղափարը: Ըստ նրա՝ իմաստունը պետք է ձերբազատվի ճակատագրի և մահվան վախից՝ երջանկության հասնելով ինքնակատարելագործման միջոցով:

<sup>2</sup> Ստոյիկականությունը՝ որպես հունահռոմեական փիլիսոփայության ուղղություն, առաջացել է վաղ հելլենիզմի դարաշրջանում մ. թ. ա. մոտ 300-ին: Անունը ստացել է հին Աթենքի պատկերազարդ պուրնագավիթից (stoa Poikile), որտեղ հույն փիլիսոփա Ջենոն Կիտիոնացին (մ. թ. ա. մոտ 334-263) ներկայացնում էր իր ուսմունքը: Ստոյիկյան փիլիսոփայության կենտրոնում բարոյագիտությունն է՝ հիմնված բնափիլիսոփայության և տրամաբանության վրա: Այդ ուղղության առավել նշանավոր ներկայացուցիչներից են հռոմեացի փիլիսոփա Սենեկան (մ. թ. ա. մոտ 8 - մ. թ. 65), հույն փիլիսոփաներ Կլեանթեսը (մ. թ. ա. մոտ. 331 - մոտ 232), Խրիսիպոսը (մ. թ. ա. մոտ 281-208), Էպիկտետոսը (մոտ 50-138), հռոմեական կայսր և փիլիսոփա Մարկոս Ավրելիոսը (161-180):

քական կարիքներով: Այդ առումով ուշագրավ է պրոֆեսոր Ջերարդ Վեգեների՝ 16-րդ դարի անգլիացի հումանիստների կողմից ստոյիկների ուսմունքի յուրօրինակ մեկնաբանության մասին տեսակետը. «ստոյիկյան փիլիսոփայության ազդեցությունը հստակ երևում է ուտոպիստների սովորությունների թմասա Մորի նկարագրության մեջ: «Ուտոպիա» կղզու քաղաքացիների մեջ տարածված էր այն համոզմունքը, որ մարդու երջանկությունը միայն բարեգործության մեջ էր: Բայց «Ուտոպիայում» ոչ մի տեղ մենք չենք գտնում մարդու ազատության կամքին, նրանից վեր կանգնած ցանկացած քաղաքական իշխանությանն անառարկելիորեն ենթարկվելու, ճակատագրի, պարտականության մասին ստոյիկյան վարդապետության քարոզը» [17, 98-99]: Բոլորովին այլ շեշտադրում է ստանում ստոյիկյանների ժառանգության մեկնաբանությունը Ռեֆորմացիայի դարաշրջանի Եվրոպայի գաղափարախոսական կյանքում պրոֆեսոր Թերենս Մորիսի «Եվրոպան և Անգլիան 16-րդ դարում» շախատության մեջ [15, 78-80]: Ըստ հեղինակի՝ հակաավատատիրական ժողովրդական շարժումների դասապարտումը և բացարձակապետական իշխանության անձեռնմխելիության գաղափարական հիմնավորումը արտահայտվում էին ստոյիկյան վարդապետության այն հատկանիշների հանրահռչակմամբ, ինչպիսիք էին իշխանություններին հնազանդություն քարոզելը և պատիժների արդարացումն այն անձանց նկատմամբ, ովքեր սպառնում էին միապետի աստվածային իրավունքին: Ստոյիկյան վարդապետության այդ հատկանիշների հանրահռչակումը հակառեֆորմացիայի ժամանակաշրջանի որոշ հումանիստների կողմից ուղեկցվում էր «Ուտոպիայում» քարոզվող քաղաքական համակարգի ժողովրդավարական սկզբունքների բացասական գնահատականով և հատկապես թոմաս Մորի իդեալական պետության կառուցվածքում մարմնավորված հասարակության գաղափարի նկատմամբ թշնամական վերաբերմունքով [15, 82]:

Ռեֆորմացիայի հետ կապված ժողովրդական շարժումների պատմական և քաղաքական փորձը, ըստ որոշ պատմաբանների, մի շարք հումանիստների դրդեց վերանայել և վերագնահատել ռեֆորմացիոն գաղափարները՝ հավատարվել արդարության և մարդկանց իրավահավասարության հիման վրա հասարակության վերակազմավորմանը՝ անկախ նրանց դասակարգային պատկանելիությունից: Այդ առումով որպես հատկանշական օրինակ մատնանշվում էր թոմաս Մորի մտերիմ, հումանիստ, գիտնական և դիվանագետ թոմաս Էլիոթի դիրքորոշումը, որն արդեն 1533 թ. վճռականորեն բանավիճում էր արդարության՝ որպես ընդհանուր բարիքի գաղափարի դեմ, ինչը, ըստ էության, կազմեց «Ուտոպիայի» հիմքը [16, 324]: Էլիոթը պնդում էր, որ Republica (հանրապետություն) եզրույթը պետք է ընկալել որպես հանրային տիրույթ, որը չի ենթադրում ընդհանուր բարիք, քանի որ նրանք, ովքեր սխալմամբ քարոզում էին համայնքի գաղափարը, առաջնորդվում էին ավելի շատ զգացմունքներով, քան խոհեմությամբ [16, 326]: Հավասարությունը հակասում էր սոցիալական կարգին: Էլիոթի համար հավասարությունը քառսի մայրն էր: «Եթե հետևենք խոհեմությանը և մարդկային էության բնական հակմանը,– պնդում էր Էլիոթը,– հավասարությունն անհամատեղելի է «հանրապետության» հետ, քանի որ այն ժխտում է սոցիալական կարգը» [16, 332]: Միայն նրանք, ովքեր կառավարվում են կրքերով, այլ ոչ թե գիտակցությամբ, հավանում են արդարությունը նույնականացնել հավասարության հետ: Գիտակցության փոխարեն զգացմունքով առաջնորդվելու այդ ձգտումը բնորոշ էր մասնավորապես հասարակ մարդկանց (պլեբսի) համար: Այդ իսկ պատճառով, հանուն սոցիալական կարգի պաշտպանության՝ պլեբսին պետք է կառավարեին հասարակության առավել բանական տարրերը: Նկատի ունենալով Ռեֆորմացիայի սոցիալ-քաղաքական փորձը, որն ուղեկցվում էր արմատական պլեբեյական ընդդիմության ելույթներով, օրինակ՝ անաբապտիստների կողմից, Էլիոթը դիտարկում էր հավասարության համար բոլոր մարտնչողների դեմ բռնաճնշումների անհրաժեշտությունը: Լիոլվին համապատասխան Թյուրոնների պաշտոնական միահեծանական գաղափարախոսությանը՝ հումանիստները, ի դեմս թոմաս Մորի և հումանիստ,

Ռեֆորմացիայի կողմնակից Թոմաս Սթարքի, քարոզում էին հպատակների՝ միապետին անվիճելի ենթակայություն՝ արդարացնելով գոյություն ունեցող հասարակական կարգը խախտողի դեմ բռնաճնշման օրինականությունը և նպատակահարմարությունը: Ինչպես նշում էին որոշ հետազոտողներ, 16-րդ դարի 20-ական թթ. անգլիացի հումանիստների քաղաքական ստեղծագործություններում բարեփոխումից դեպի բռնաճնշում շեշտադրման նման հստակ փոփոխություն նկատվում էր նաև Թոմաս Մորի մերձավորների շրջանում: «Որքան ավելի բռնաճնշող էր դառնում հասարակությունը,– նշում էր Մարտին Ֆլեյշերը,– այնքան ավելի բարոյական էր դառնում նրա գաղափարախոսությունը»: Հենց այդ միտումն էր բնորոշ Ռեֆորմացիայի ժամանակաշրջանի անգլիական հասարակության քաղաքական գաղափարախոսությանը, երբ միաժամանակ քաղաքական ստեղծագործություններում ռեպրեսիվ տարրերի ուժեղացմանը զուգահեռ նկատվում էր ստոյիկ փիլիսոփա, հռոմեական պետական գործիչ Լուցիուս Աննեուս Սենեկայի (թ. ա. մոտ 54-39) նկատմամբ տարվածությունը, ում մոտ այն ժամանակվա քաղաքական մտածողները փնտրում և գտնում էին իշխանությունների բռնաճնշումներին անվիճելի ենթարկվելու նպատակահարմարության մասին իրենց գաղափարների հաստատումը [9, 162]:

Այդ հայեցակարգին համապատասխան ընկալվում էր նաև ստոյիկների անտիկ ավանդույթը, որը կոչ էր անում դիմակայել կրքերին [9, 162]: Այդ կապակցությամբ սոցիալական հավասարության քարոզը հումանիստների կողմից վճռականորեն դատապարտվում էր որպես ոչ գիտակից կրքերի դրսևորում և միաժամանակ արդարացվում էր հավասարության համար պայքարողների դեմ բռնաճնշումների անհրաժեշտությունը: Թոմաս Էլիոթը մասնավորապես սպացուցում էր հասարակական կարգին վնաս պատճառողներին հետապնդելու և պետժելու ողջամտությունը, և ըստ նրա՝ այդպիսիք էին հավարասարության քաղաքական Ռեֆորմացիոն դարաշրջանի հումանիստական քաղաքական հայեցակարգերում, ըստ Ֆլեյշերի, գերակշռում էր անհատի իշխանությանը ենթարկվելու գաղափարը: Մինևույն ժամանակ այն ժամանակաշրջանի քաղաքական գործիչների մոտ կրոնական և սոցիալական հեղաշրջումները միանշանակ ասոցացվում էին Ռեֆորմացիայի հետ, որին հումանիստները մասնավորապես կապում էին եվրոպական հասարակության սոցիալ-քաղաքական վերափոխման և անբաբայտիզմի նման արմատական ուսմունքները [9, 173-174]: Ինչպես դա երևում էր Էլիոթի օրինակով, քաղաքական գործերում բանական սկզբունքը Ռեֆորմացիայի դարաշրջանի հումանիստների կողմից մշտապես միավորվել էր սոցիալական անհավասարության վրա հիմնված քաղաքական կարգի կայունության գաղափարի հետ: Մինչ այդ կարգը քննադատվում էր, և սոցիալական արդարության քարոզ էր ընթանում՝ իբրև հավասարության կոչ, այժմ այն ընկալվում էր որպես կրքերի դրսևորում, որը պետք էր բռնաճնշման ենթարկել: Եվ այդ իմաստով հումանիստ քաղաքական գործիչը բռնաճնշումը դիտարկում էր որպես ողջամիտ և արդար միջոց, որը սոցիալական կարգի բնական և հիմնական հատկանիշն էր [9, 161]: Քաղաքական գործերում բանական սկզբունքի և կրքերի մասին այդ դատողությունը համապատասխանում էր անհատի հոգու և մարմնի առձակատման մասին համանման պատկերացմանը, երբ մարմնական ցանկությունները ճնշվում են մտքի կողմից [9, 161]: Հաշվի առնելով այդ զուգադրությունը՝ Ֆլեյշերը հակադրում էր Էլիոթին «Ուտոպիայում» Թոմաս Մորի տեսակետին, որտեղ ընդհակառակը՝ վճռականորեն մերժվում էր մարդու մարմնական էության բնածին այլատրվածության մասին ավանդական դատողությունը և ընդունում էր հոգու և մարմնի հավասարակշռված հաճույքը: Հետևաբար, հանուն մարդու երջանկության, հանուն նրա իսկական բարիքի, հոգու և մարմնի հաճույքի ցանկությունը և նրանց միջև ներդաշնակության պահպանումը միանգամայն նորմալ էր և հաստատված էր բնության կողմից [9, 167]: Եվ չնայած Թոմաս Մորը նախապատվություն էր տալիս հոգևոր հաճույքներին, միաժամանակ ամենևին մեղք չէր համարում մարմնական հաճույքները նույնպես, միայն եթե դրանց հետապնդումը վնաս

չպատճառեր հասարակությանը, և հանուն մարմնական հաճույքների չզոհաբերվեին հոգու ավելի բարձր հաճույքները [17, 68]:

Համադրելով հումանիստական գաղափարները նախքան Ռեֆորմացիայի և հետո Ռեֆորմացիայի ժամանակաշրջաններում՝ ըստ պրոֆեսոր Դիքենսի, չի կարելի չնկատել ճակատագրի և պարտականությունների առնչությամբ մարդու դերի ընկալման մեջ էական տարբերությունները: Նախառեֆորմացիոն հումանիզմի համար (Թոմաս Մոր, Էրազմոս Ռոտերդամցի, Նիկոլո Մաքիավելի) ճակատագրին պասիվ ենթարկվելու ստոյիկյան մեկնաբանությունն ամեննին էլ բնորոշ չէր: Ընդհակառակը, այդ հումանիստները հակված էին ընդգծել հասարակական գործունեության ակտիվ դերը, մարդու ընդունակությունը՝ որոշելու սեփական ճակատագիրը: Թոմաս Մորի և Էրազմոս Ռոտերդամցու տեսանկյունից, ըստ վերոհիշյալ հեղինակի, ովքեր պաշտպանում էին ազատ կամքը և բարի գործերի կարևորությունը մարդկանց կյանքում, սոցիալական արդարությունը, խաղաղությունն ու հասարակության բարգավաճումը լիովին հասանելի կատարակներ էին: Կարևոր էր միայն մարդկանց գործունեությունն ուղղել դեպի այդ նպատակների իրականացումը: Հետո Ռեֆորմացիոն դարաշրջանի հումանիստներն այլ միտում ունեին՝ քարոզելով անվիճելի ենթարկվել իշխանություններին և ավանդական սոցիալական կարգերին: Այդպիսին էին Էլիոթը, ինչպես նաև ռեֆորմիստների բարոյագիտական ուսմունքների հետևորդները, ովքեր ժխտում էին մարդու ազատ կամքը և հակադրում այն լիակատար ենթարկվելու բարձրագույն կամքին՝ նախախնամությանը [4, 138-139]:

Ըստ Ռիչարդ Մարիուսի՝ Թոմաս Մորը, ինչպես նաև Էրազմոս Ռոտերդամցին, լինելով «քրիստոնյա հումանիստներ», ոչ միայն քրիստոնեական դոգմայի կողմնակիցներ չէին, այլև մեկ անգամ չէ, որ բացահայտեցին իրենց ազատ մտածողությունը՝ գերադասելով հետևել բանականությանը, քան դոգմային, ինչպես պահանջում էր միջնադարի պաշտոնական կաթոլիկությունը [14, 223]:

Ռեֆորմացիայի նախօրեին «քրիստոնյա հումանիստները» քարոզում էին քաղաքացիական պարտքի ըմբռնում և ընդհանուր բարօրության ակտիվ ծառայություն, այլ ոչ թե պասիվ խոնարհություն: Մարդու խնդրի վերաբերյալ բոլորովին այլ տեսակետներ էին պաշտպանում ռեֆորմացիոն ուսմունքների հետևորդները, որոնք կենտրոնանում էին մարդային բնության թերի բնույթի գաղափարի և այդ բնույթի յուրաքանչյուր հնարավոր կրթության անհրաժեշտության վրա: Այսպիսով, ըստ այդ ռեֆորմիստների՝ մարդը, ինչպես ստոյիկ մարդը, իր էությունը արատավոր էր [9, 102]: Ռեֆորմիստները, ըստ Ֆլեշերի, ջանք չէին խնայում մարդկային արատավոր էությունը մերկացնելու համար: Թոմաս Մորը և Էրազմոս Ռոտերդամցին բոլորովին անտարբեր չէին մարդկային արատների նկատմամբ, բայց նրանք գերադասեցին դատապարտել հասարակության արատները՝ համարելով, որ մարդիկ առաջին հերթին հասարակական անարդարության և սեփական սխալների ու նախապաշարմունքների գոհ են: Երկուսն էլ վերացնելով՝ կարելի էր մարդկանց ազատել նաև արատներից: Ըստ Թոմաս Էլիոթի՝ «քրիստոնյա հումանիստների» ռեֆորմացիայի ճանապարհը հասարակության լուսավորության մեջ էր, քրիստոնյաների մեջ ավետարանի պատվիրանների տարածման մեջ, որոնք պաշտոնական եկեղեցին իբր երկար ժամանակ անտեսել էր [7, 433]: «Ուտոպիայում» արտահայտված Թոմաս Մորի հայեցակարգի համաձայն՝ դա բնավ սկզբնական մեղք չէ. մարդկանց բոլոր վատ հակումները մարդկային դժբախտությունների և առաջին հերթին անարդար հասարակական համակարգի պատճառ են: Ուստի, հումանիստի տեսանկյունից, բարեփոխումների և սոցիալական ներդաշնակության հասնելու միակ իրական ճանապարհը հասարակության անարդարության վերացումն էր:

Այսպիսով՝ «քրիստոնյա հումանիստների» քարոզած Հիսուս Քրիստոսի նմանակումը հագեցած էր շատ կոնկրետ սոցիալական բովանդակությամբ: Պատահական չէր, որ Թոմաս Մորի և նրա համախոհների համար քրիստոնեական ուսմունքի հիմքը սերն էր դեպի մեր-

ձավորը, որը նրանց համոզմամբ պետք է ներթափանցեր մարդկային գործունեության բոլոր ոլորտները: Եվ նույնիսկ անձնական փրկության համար, ի տարբերություն Մարտին Լյութերի, Թոմաս Մորը մարդու հանդեպ սերն ավելի կարևոր էր համարում, քան հավատքը [14, 178]: Թոմաս Մորը, ինչպես նշում էր Ռիչարդ Մարիոսն իր մենագրության մեջ, պարզ է դարձնում, որ արդար հասարակական համակարգը, որը ներառում է մասնավոր սեփականության և բոլոր դասային արտոնությունների ոչնչացումը, միակ բանն է, որը կարող է ընդմիջտ վերացնել մարդկային հիմնական արատները, ինչպիսին է հպարտությունը (superbia), որը դարեր շարունակ ապարդյուն փորձել են հաղթահարել հեղինակավոր քրիստոնյա քարոզիչները: Մինչդեռ ամեն ինչ հենց մարդու ձեռքում է, զանցանքի ոչ մի անեծք չի կարող կանխել հասարակական անարդարության պատճառների հստակ գիտակցումը և մերձավորի հանդեպ ակտիվ, արդյունավետ սերը, որը կրում են մարդիկ, իրականում ազատագրում է դարավոր փորձանքներից ու չարիքներից: Հատկանշական է, որ ռեֆորմիստների հետ բանավեճի ժամանակաշրջանում, երբ Թոմաս Մորը չէր ուզում նույնիսկ մտածել իր նախկին ուտոպիստական երազանքների մասին՝ այն համարելով ժամանակավրեպ և անպատեհ Ռեֆորմացիայի դարաշրջանի կատաղի պայքարի և սոցիալական ցնցումների մթնոլորտում, բայց նույնիսկ և այն ժամանակ Մարտին Լյութերի և Վիլյամ Թինդեյլի հետ բանավեճում հումանիստը շարունակում էր պաշտպանել իր հավատքը՝ սերը մերձավորի հանդեպ, որը քրիստոնեական բարձրագույն առաքինությունն է, հետևաբար մարդու կարողությունը բարի գործեր անելու մեջ է, որոնք միջտ ավելի կարևոր են, քան աստվածաբանական հնարքները, քանի որ դրանք պարունակում են իրական ճանապարհ դեպի մարդկային կատարելություն և փրկություն [14, 336-337]:

Այսպիսով՝ ըստ որոշ բրիտանացի հետազոտողների՝ Ռեֆորմացիայի և հակառեֆորմացիայի պայմաններում հումանիզմի ճակատագիրը 16-րդ դարում թերևս միանշանակ չէր: Նրանց կարծիքով հումանիզմի և Ռեֆորմացիայի պատմական կապը և յուրահատկությունն առավել լավ ըմբռնելու արդյունավետ ճանապարհն այդ երևույթների երկարատև ու համակողմանի ուսումնասիրությունն է դրանց զարգացմանը համընթաց:

### **Եզրակացություն**

Վերածննդի հումանիզմը և Ռեֆորմացիան, դրանց պատմական ճակատագիրը՝ որպես գաղափարական շարժումներ հասկանալու համար, բրիտանացի պատմաբաններն իրենց աշխատություններում հատկապես կարևորում էին 16-րդ դարի Անգլիայի հասարակական մտքի պատմությունը, ինչը թույլ է տալիս դիտարկել այդ երևույթները զարգացման և փոխազդեցության մեջ՝ բացահայտելով ոչ միայն անգլիացի հումանիստների և ռեֆորմիստների միջև եղած սկզբունքային տարբերությունը գաղափարախոսության և քաղաքականության հիմնարար խնդիրների շուրջ, այլև որոշակի պատմական կապը և փոխադարձ ներթափանցումը Ռեֆորմացիայի և հումանիզմի միջև:

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-153>

### **Գրականություն**

1. Brigden Susan Elizabeth: *New Worlds, Lost Worlds: The Rule of the Tudors, 1485-1603*. London, 1998, 434 pp.
2. Dickens A. G. *The English Reformation*. Penn State University Press, 1989, 460 pp.
3. Dickens A. G. *Reformation and society in sixteenth-century Europe*. London, Thames Hudson, 1980, 216 pp.
4. Dickens A. G. *The age of humanism and reformation: Europe in the fourteenth, fifteenth, and sixteenth centuries*. Prentice Hall, 1982, 290 pp.
5. Elton G. R. *Renaissance and Reformation: 1300-1648*, Prentice Hall, 1986, 334 pp.
6. Elton G. R. *Reform and Reformation: England, 1509-1558*. Cambridge, Mass: Harvard University Press, 1991, 423 pp.
7. Elyot Sir Thomas. *The Book Named The Governor*. Revised by Kessinger Publishing, 2008, 556 pp.
8. Estep William R. *Renaissance and Reformation*. Wm. B. Eerdmans Publishing Co., 1986, 331 pp.
9. Fleisher Martin, *Radical Reform and Political Persuasion in the Life and Writings of Thomas More*. Geneve, Librairie Droz, 1998, 186 pp.
10. Haigh Christopher, *The English Reformation Revised*. Cambridge University Press, 1987, 240 pp.
11. Haigh Christopher, *English reformations: religion, politics, and society under the Tudors*. Oxford: Clarendon Press, 1993, 367 pp.
12. Heywood Ellis, il Moro. *Dialogue in Memory of Thomas More*. Harvard University, 1978, 158 pp.
13. Ives Eric William, *The Reformation Experience: Living through the Turbulent 16<sup>th</sup> Century*. Lion Books, 1999, 320 pp.
14. Marius Richard, *Thomas More: A Biography*. London, J. M. Dent, 1984, 592 pp.
15. Morris Terence Alan, *Europe and England in the sixteenth century*. Psychology Press, 1998, 360 pp.
16. Stapleton Thomas, *The Life and Illustrious Martyrdom of Sir Thomas More*. Fordham University Press, 2011, 504 pp.
17. Wegemer Gerard B., *Thomas More: A Portrait of Courage*. Scepter Pubs, 1995, 198 pp.

## Британская историография 1980–1990-х годов о гуманизме и Реформации в Англии XVI века

*Хажакян Вачаган*

### Резюме

**Ключевые слова:** гуманист, реформатор, идеология, религия, теолог, учение, мировоззрение, этика

В 1980–1990-х годах ряд британских историков сосредоточил внимание на изучении мировоззрения и идеологии английских гуманистов и реформаторов XV–XVI веков. В отличие от марксистской историографии, они стремились переосмыслить формирование и развитие гуманистического мировоззрения, а также ключевые аспекты английской Реформации через всесторонний анализ философских, этических и идеологических взглядов представителей эпохи Возрождения. Такой подход опирался на комплексное изучение идейного наследия английских мыслителей.

Особое внимание уделялось истории общественной мысли Англии XVI века, что позволило рассматривать гуманизм и Реформацию как динамичные и взаимосвязанные идеологические течения, которые формировали ценности, влияли на политику и культурное развитие общества. Исследователи выявили не только принципиальные различия между английскими гуманистами и реформаторами в вопросах идеологии и политики, но и историческую преемственность, а также элементы взаимопроникновения между Реформацией и гуманизмом, подчеркивая сложность и многомерность развития английской интеллектуальной традиции.

## British Historiography of the 1980<sup>s</sup>–1990<sup>s</sup> on Humanism and the Reformation in England in the 16<sup>th</sup> Century

*Khazhakyan Vachagan*

### Summary

**Key words:** humanist, reformist, ideology, religion, theologian, doctrine, worldview, ethics

During the 1980<sup>s</sup> and 1990<sup>s</sup>, several British historians focused primarily on the worldview and ideology of English humanists and reformers of the 15<sup>th</sup> and 16<sup>th</sup> centuries. In contrast to Marxist historiography, these scholars sought to reinterpret the formation and development of the humanist worldview, as well as the fundamental problems of the English Reformation, through a comprehensive analysis of the ideology, philosophy, and ethical views of various Renaissance humanists and reformers.

British historians placed particular emphasis on the history of social thought in England during this period, which allowed humanism and the Reformation to be examined as evolving and interacting ideological movements. This approach revealed not only the fundamental differences between English humanists and reformers on key ideological and political problems, but also demonstrated the existence of a historical continuity and mutual influence between humanism and the Reformation.

Ներկայացվել է 30. 10. 2025 թ.

Գրախոսվել է 04. 12. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

## **Կենդանի բարոյագիտությունը որպես մշակութաստեղծ իմաստասիրություն**

*Խաչատրյան Գեղամ*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-163>

*Հանգուցային բառեր. բնափոխություն, ոգեղեն, կատարելագործում, գիտակցության ընդլայնում, գիտություն, գիտելիք, համադրում, տիեզերական*

**Նախաբան:** Ինչպես մարդկության մակարդակի վրա գոյություն ունի մշակույթի երևույթը, այնպես էլ մարդու մեջ մշակույթը որոշակի եռանդուծային կառուցվածք է, ենթահամակարգերից մեկը, որով բնորոշվում է մարդու բնագարգացման աստիճանը: Մշակույթային նուրբ եռանդուծերն իրենց բնութագրերով համահունչ են հոգու, սրտի նախանյութի եռանդուծային գոյաձևերին, դրանց շարժումներին և թրթռոցներին, կառուցվածքային կազմակերպմանը: Այդ պատճառով մշակույթը ոգու, սրտի հատկությունն է, ոգու զարգացածության աստիճան, լուսավորի, բարձրագույնի պաշտամունք, դեպի վերինը, Բացարձակը ձգտման նշան: Եվ ինչպես տարբեր մարդկանց և մարդկանց զանազան խմբավորումների մոտ այդ ձգտումը դեպի վերինը կարող է արտահայտվել տարբեր կերպ՝ մեկը գնում է դեպի Բացարձակը կրոնի օգնությամբ, մյուսը՝ գիտության միջոցով, երրորդը՝ արվեստի և այլն, այնպես էլ Կենդանի բարոյագիտությունը ձգտում և սովորեցնում է ձգտել դեպի Բարձրագույնը մշակույթի միջոցով, քանի որ մշակույթն է մարդու բնագարգացման՝ կատարելագործման, բացարձակացման, աստվածացման նպաստավոր միջավայրը, կարող ուժը, որովհետև մշակույթն է իր մեջ հավաքում և ամփոփում մարդկության հայթայթած, մշակած, ստեղծած, արարած գիտելիքը, կարողությունը, հնարավորությունը, կատարելությունը, որը հնարավոր է տարածության և ժամանակի տվյալ հատվածում: Այն իր մեջ ամփոփում է և՛ կրոնը, և՛ գիտությունը, և՛ արվեստը, և՛ իմաստասիրությունը, և՛ գիտելիքի ու բնագարգացման բոլոր այլ բնագավառներն ու ձևերը: Մարդն ազատ է ընտրելու իրեն դուր եկած բնագավառը և ընթանալու դրանով, որն, ըստ իրեն, ամենաճիշտ ուղին է դեպի կյանքի նպատակների իրականացումը: Այդ բոլոր ոլորտներն էլ իրենց հերթին իրենց յուրահատուկ մոտեցումներն ունեն վերջնական նպատակակետին հասնելու ուղիներին: Կրոնը խոստանում է դեպի աստվածը հասցնել հրաշքի միջոցով, քանի որ մեկ կյանքի ընթացքում աստված դառնալը իրոք հրաշք կլիներ: Գիտությունը աստծո մասին չի խոսում ընդհանրապես, այլ ուզում է տեսնել միայն այն, ինչ կարող են տեսնել իր աչքերը: Արվեստը տանում է դեպի կատարելություն՝ զարգացնելով մարդու մոտ միայն հուզական, զգացմունքային կարողությունները՝ լսողությունը, տեսողությունը, շոշափելիքը, համը, հոտը, մի խոսքով՝ այն ամենը, ինչը կարող է զգացմունքի նրբացում և կատարելագործում բերել: Կյանքի մյուս կողմերն էլ իրենց մասնավոր գործերն են անում, և միայն մշակույթն է, որ ընդհանրական, համապարփակ, համակարգային մոտեցում ունի կյանքի վերջնական նպատակին. այն աստիճանաբար, հետևողականորեն, բնական արագությամբ և աշխրջությամբ զարգացնում է մարդու բոլոր կողմերը, որոնցից ամեն մեկը կապված է կյանքի համապատասխան աշխարհին կամ մակարդակին: Այդպիսով՝ մարդը պիտի կարողանա զգալ իրեն ինչպես տանը, տիեզերքի զարգացման բոլոր մակարդակների վրա՝ և՛ հրաշքների աշխարհում, և՛ մտքի աշխարհում, և՛ զգացմունքների, և այլն: Այն հայեցակարգերի մեջ, որոնք հաշվի են առնում մարդու բազմակողմանի կապերը տիեզերքի հետ, ինչպես նաև բացահայտում են նման կապերի լծակները՝ առանձնահատուկ տեղ է գրավում մշակույթի հայեցակարգը, որը առաջ է քաշվել և զարգացել Կենդանի բարոյագիտության ուսմունքի կողմից: Մշակույթը զարգացնում է մարդուն անկախ այն բանից, մարդը գիտակցում է դա, թե ոչ: Սակայն Կենդանի բարոյագիտությունը

ուսմունք է այդ մասին, և այն, ցանկացած այլ ուսմունքի նման, իր հետևորդներին տանում է դեպի նախանշված, որոշակի, սահմանված նպատակը գիտակցված, նպատակամղված ձևով, ինչը երաշխիք է տալիս հասնելու ձգտածին հնարավոր ամենակարճ ճանապարհով, ժամանակի և պաշարների ամենավախճալիս եղանակով:

**Ոգեղեն բնագրագույն:** Ամենակայն իմաստով Կենդանի բարոյագիտությունը կարող է մեկնաբանվել որպես իմաստասիրաբարոյագիտական հայեցակարգ, որը դիտարկում է մարդկության ոգեղեն բնագրագույն ուղիները: Դա ո՞չ կրոնական և ո՞չ էլ գաղտնագիտական ուսմունք է: Կենդանի բարոյագիտության շարադրանքներն իրենցից ներկայացնում են ճանաչողության և ինքնաճանաչման բոլոր հայտնի հիմնական եղանակների ներդաշնակ համադրում: Դա միավորող գիտաիմաստասիրական ուսմունք է: Կենդանի բարոյագիտությունում գիտական մասը, արվեստն ու կրոնը միասնական են: Ըստ որում, Կենդանի բարոյագիտությունում հռչակված է ոգեղեն ազատություն, իսկ միակ հեղինակությունը գիտելիքի հեղինակությունն է: Համադրման առանցքը գիտությունն է: Եվ համադրումը ցույց է տալիս համադրողի գիտակցության մակարդակը: Ահա թե ինչու է Կենդանի բարոյագիտությունը դնում գիտակցության ընդլայնման հիմնահարցը: Կենդանի բարոյագիտության իմաստասիրությունը ուղղված է ոգեղեն նորացման անհրաժեշտությունը գիտակցած և ինքնակատարելագործման ձգտող մարդկանց: Կենդանի բարոյագիտության համաձայն, ինքը կարող է ընկալվել և օգուտ բերել միայն այն դեպքում, եթե նման ընկալումը կամավոր տեղի է ունենում դրա համար արդեն հասունացած գիտակցության կողմից: Այն առաջարկում է ոգեղեն վերածննդի ուղի, որը կենդանի կապված է ամբողջ մարդկության ընկերային նորացման հետ, որն անհնար է առանց ոգեղեն նորացման: Կենդանի բարոյագիտության դիրքորոշման համաձայն՝ մոլորակային բնագրագույն գործընթացը դանդաղեցված է համաշխարհային մշակույթում ոգեղեն և բարոյական արժեքների առաջնահերթության կորուստի հետևանքով, փոխարինվելով գործնապաշտական, օգտապաշտական կարգի արժեքների առաջնահերթությամբ: Այդպիսով, Կենդանի բարոյագիտության նպատակն է ձևափոխել մարդկային գիտակցությունը, բարձրացնել այն մինչև տիեզերական մակարդակի:

**Ինքնակատարելագործում:** Կենդանի բարոյագիտության ուսմունքի բարոյագիտական հիմնական դրույթներից մեկը մեծ ուշադրություն է դարձնում մարդու ներքին աշխատանքին իր վրա, նրա ինքնակատարելագործմանը և բնական զարգացմանը բարձր աշխարհներին հասնելու համար: Իր վրա աշխատանքը սկսվում է բացասական և վնասակար սովորություններից ու որակներից ազատվելուց: Ուսուցանվում է հաղթահարել չարությունը, կասկածամտությունը, անվստահությունը, անհամբերությունը, անհանդուրժողությունը, ծուլությունը, զազրախտությունը, ստախտությունը, անբարյացակամությունը և այլ վատ հատկությունները: Մարդու զարգացումը և կատարելագործումը Կենդանի բարոյագիտության ստեղծողների կողմից մեկնաբանվում է որպես շատ կյանքերի ընթացքում կատարվող դանդաղ և երկարատև գործընթաց: Ըստ այդմ, յուրաքանչյուր մարդ երկարատև բնափոխության արդյունք է: Կենդանի բարոյագիտության ուսմունքում ասվում է, որ «միայն նախկին գոյությունների փորձից է կուտակվում այն որակը, որը կոչվում է մշակութականություն» [25]:

Կենդանի բարոյագիտության բարոյական ուսմունքի մյուս էական կողմն է կյանքի վերափոխումը համամարդկային արժեհամակարգի հաստատման միջոցով, այնպիսի մշակութային գործունեության միջոցով, որն ընդհանուր կլինի չնայած սովորությունների, դավանանքների և լեզուների բազմազանությանը:

Ուսմունքի անվան մեջ առկա «բարոյագիտությունը» նշանակում է ոչ միայն գիտական գիտելիք, այլ անհատական ընտրություն, վարք, բարոյական գործողություն, որը կապում է անհատին աշխարհի, տիեզերքի հետ: Անվան մեջ բարոյագիտությունը կենդանի է կոչվում այն պատճառով, որ կիրառվում է ոչ թե որպես չափանիշների անկենդան պնդումներ, այլ

չընդհատվող գիտակցության, ուղղակի անհատական գործողության և տիեզերքի առջև անհատի անձնական պատասխանատվության բարոյագիտություն: Ըստ որում, կեցության հետ բարոյականության միավորման տեղը մարդու սիրտն է:

Մարդու ոգին իրականացնում է իր ճանաչողական ընդունակությունը սրտի միջոցով: Ոգեղեն սրտի զարգացածությունն արտահայտվում է մարդու սրտի որակներով, մշակութային որակներով: Սրտի մտածողությունը կապված է բարոյական հիմքերի հետ և կոչվում է իմաստություն: Ոգեղենությունը անբաժան է գիտակցությունից, որը, ըստ Կենդանի բարոյագիտության, գտնվում է սրտում: Ներքին բարոյականության, մշակութականության բարձրացումը զարգացնում է գիտակցությունը կամ ընդլայնում է այն՝ բերելով սրտի զարգացմանը: Գիտակցության ընդլայնումից շահում է նաև մարդու միաբը: Այդպիսով, մարդու ստեղծագործական մտքի կատարելագործումը տեղի է ունենում մշակույթի հիման վրա: Մշակույթը կամ մարդու ոգու զարգացման գործընթացը անդրգիտական ճանաչողության գլխավոր պայմանն է: Անդրգիտության և փորձառական գիտության համադրման արդյունքում էլ ծնվում է ոգեղենացված գիտությունը:

Մշակույթի և ճանաչողության անդրգիտական եղանակի կապի բացահայտումը պայմանավորված է Կենդանի բարոյագիտության իմաստասիրական համակարգի հայացքով դեպի մարդը և նրա զարգացումը: Մշակույթը և անդրգիտությունը անբաժանելի են տիեզերքի բարձրագույն վիճակներից: Բսկ Բարձրագույնը տիեզերական բնագարգացման ազդակի ակունքն է: Տիեզերական բնափոխությունը գործում է մշակույթի դաշտում: «Մշակույթի վրա կան և՛ արտաքին ազդեցություններ, և՛ ներքին: Արտաքինը բարձրագույն բնափոխական ազդակները և գիտելիքներն են, որոնք դարերով տրվել են մարդկությանը նրա ուսուցիչների կողմից: Ներքինը կատարվում է մարդու մեջ՝ շնորհիվ նրա ոգու ընդունակության կապվելու գիտելիքի աղբյուրների հետ, ընդունելու, ընկալելու և յուրացնելու այն» [22, 227-233]: Գիտելիքը տիեզերական բնափոխության գլխավոր գործոնն է և արտացոլում է տիեզերքի իրականությունը: Ճանաչողը իր բնությամբ նույն բազմակողմանիությունը պիտի ունենա, ինչ և ճանաչվողը: Ճանաչողության առաջին հիմնական ուղղությունը գիտական փորձառականն է, երկրորդը՝ անդրգիտականը կամ գերգիտականը, գերբնականը կամ գերբնականը, ներգագացականը կամ գերգագացականը: Երկրորդը ներքին, ոգեղեն եղանակն է, որն ավելի մեծ պատկերացումներ է տալիս նախանյութի մասին, ուստի և ավելի բարձր գիտելիքով է ապահովում ոգուն: Առաջինը լայնորեն հայտնի է գիտությանը, իսկ երկրորդը՝ կրոնին: Կենդանի բարոյագիտության ուսմունքը գիտականի և անդրգիտականի հենց այդպիսի համադրում է ներկայացնում:

**Մշակույթի իմաստասիրություն:** Կենդանի բարոյագիտությունը կարելի է դիտարկել որպես մշակույթի համալիր միավորիչ իմաստասիրություն, որն իր մեջ մշակույթի նոր կերպար է կրում, տիեզերամոլորակային և բնապահպանական գաղափարների, մարդկության և տիեզերքի միասնության գեղագիտական գաղափարների հետ կապվող կերպար: Կենդանի բարոյագիտության գեղագիտությունը տիեզերքի գեղագիտությունն է կամ անդրիմացականի գեղագիտությունը:

Կենդանի բարոյագիտությունում մշակույթի նոր կերպարը կապված է նաև մարդու՝ որպես տիեզերական բնափոխության ենթակայի, նոր կերպարի հետ: Մարդու ոգեղեն՝ մշակութային կուտակումները պայմանավորում են նրա մեջ ոգու՝ որպես տիեզերական ոգենախանյութի մասի, գիտակցումը իր կողմից: Դա կարևոր փուլերից մեկն է իրեն տիեզերքի աշխատակիցը գիտակցելու ճանապարհին: Մարդն աստիճանաբար հասնում է տիեզերական բնափոխության միասնական հոսանքի սահմաններին:

Մշակույթի հայտնի գործառույթները հիմնականում ընկերային բնույթ ունեն՝ մարդասիրական, ճանաչողական, հարմարվողական, միավորող, կարգավորող, հաղորդակցային,

տեղեկատվական և այլն: Կենդանի բարոյագիտությունը մշակույթի դերը տեսնում է նաև նրա նոր գործառնությունում: «Մշակույթի նոր հարացույցում հատուկ գործառնություններ են հայտնվում՝ կապող, կերպարանափոխող, բնագարգացնող, փրկիչ, որոնք արտահայտում են մարդու ոգու ինքնակազմակերպվող համակարգի կարևոր գծերը» [23, 11]: Մշակույթի նոր հարացույցին բնորոշ գործառնություններից մեկը մարդու սերտ կապն է տիեզերքի հետ, որը տեղի է ունենում նրա մեջ բարոյական հիմքերի զարգացման կամ մշակութային զարգացման մակարդակի վրա: Մշակույթը փոխում է մարդու նուրբ կառուցվածքները: Մարդու կերպարանափոխման գործընթացը՝ նրա ներքին որակների կատարելագործումն էլ հենց նրա տիեզերական բնագարգացման ուղու գլխավոր բաղկացուցիչն է: Նաև կերպարանափոխվում է այն տարածքը, որում մշակութային գանձերի մեծ հավաքածու է կենտրոնացված, քանի որ այն իր մեջ պարունակում է մարդու ոգու ստեղծագործությունների բարձր եռանդուժ, կապված տիեզերքի համապատասխան ստեղծագործ զարկաչափերի հետ: Ոգին նուրբ նախանյութի բարձրեռանդուժային տեսակ է: Գործելով նախանյութի զանազան վիճակներում, նախանյութը կերպարանափոխող ոգու ուժը ոգեղենացնում և կատարելագործում է ոգենախանյութի կոպիտ վիճակները, դրանով նպաստելով բնագարգացման գլխավոր նպատակին հասնելուն: Անցնելով ոգեղեն մշակութային կատարելագործման ուղի, մարդը գիտելիք և ընդունակություն է ձեռք բերում ազդելու բնագարգացման ընթացքի և որակի վրա: Ըստ Կենդանի բարոյագիտության իմաստասիրության՝ մշակույթի փրկարար գործառնությունը կնպաստի արդիականության բազմաթիվ ճգնաժամերից ելքին, ճգնաժամեր, որոնք պայմանավորված են մշակույթի ճգնաժամով, և որոնց արդյունքում մարդկությունը դրել է իրեն կործանման եզրին:

Մշակույթի եւությունից է գալիս նրա անվան ձևը: Օտար՝ «կուլտուրա» անվան առաջին արմատը՝ «կուլտ»-ը կելտերեն նշանակում է պաշտամունք: Երկրորդը՝ «ուլ»-ը, քաղղեերեն նշանակում է լույս: Երկուսի միացումից ստացվել է «լույսի պաշտամունք»: Մակայն ավելի ուշ ժամանակներում «կուլտուրան» թարգմանում էին «մշակում» և մշակարույսերին նույնպես սկսեցին անվանել «կուլտուրա»: Իհարկե, անվան փոփոխության տակ նկատի էր առնվում ոգեղեն կամ հոգևոր այգու մշակությունը, այսինքն հոգու մշակումը՝ աճեցումը, մեծացումը, զարգացումը, պտուղների հասունացումը և մարդկության բարեկեցության համար ծառայելու: Ոգու մշակումը հավասարագոր է ձգտմանը դեպի լույսը և նրա պաշտամունքը: Այդտեղից՝ հայերեն մշակույթ հասկացության անվանումը:

Եվ իրոք, պատմությունը վկայում է, որ ծաղկում լինում է այնտեղ, որտեղ սկսվում է պաշտամունքը մշակույթի կրակին, այսինքն՝ սիրուն, ճշմարտությանը, գեղեցկությանը և այլ նման արժեքներին:

Մշակույթը կազմվում է բազմազան բաղադրիչներից՝ հաղորդակցման մշակույթ, խոսքի և արտասանության մշակույթ, վարքի, կենցաղի, աշխատանքի մշակույթ և այլն: Մակայն դրանք բոլորը կախված են մտքի կամ մտածողության մշակույթից: «Միտքը պարզ, հստակ է և հակիրճ արտահայտելու կարողությունը կլինի կարգապահ մտածողության ցուցիչը» [7]:

Կենդանի բարոյագիտությունը դիտարկում է մարդու մտքի եռանդուժի ազդեցությունը շրջակա տարածության վրա բարոյական տեսանկյունից: Այդ ազդեցությունը որոշվում է մարդու գործունեության բարոյական շարժառիթներով և նրանց համապատասխանության աստիճանով համընդհանուր բարօրության գաղափարին: Մարդը ինքն է իր մտքերով, ցանկություններով և գործողություններով կանխորոշում իր ապագա կյանքի հիմնական նշանադրերը: Ոգեղենությանը առավել հաստատ ձևով հասնում են մտքերի մաքրությամբ, ստեղծագործական վերաբերմունքով աշխատանքին և ուրախության զգացումով սեփական առաքելության գիտակցումից: Ե. Ի. Ռեբրիլը գրում է, «Մտքի ճշմարիտ մշակույթը աճում է ոգու և

սրտի մշակույթով» [6, 3]: «Ներքին եռանդուծի ծախսն անհամեմատ ավելի մեծ է մտավոր աշխատանքի դեպքում, քան մարմնական: Այդ ցուցանիշը թող դրվի մշակույթի հիմքում» [2, հ. 490]: Աշխատելով մտքով՝ մարդն ավելի մեծ և ծանրակշիռ գործ է կատարում, քան մարմնական աշխատանքով: Մակայն միայն մտավորական լինելը դեռ զարգացածության, մշակութականության նշան չէ: Անհրաժեշտ է, որ միտքը լինի բարոյական, դրա համար ուղեղը պետք է ներդաշնակության մեջ լինի սրտի հետ, կամ միտքը՝ ոգու հետ:

Ոգու միացումը խելքի հետ Կենդանի բարոյագիտության կողմից դրված խնդիր է: Մշակույթային կուտակումները բերում են ոգու զարգացման: Հանճարները նման ձևով են հասել իրենց մեծագույն հայտնագործություններին: Դեպի դրանք տանող ուղին ընկած է ներքին մշակույթի, զարգացած սրտի միջով: Մրտում է կատարվում եռանդուծատեղեկատվական փոխանակումը Բարձրագույնի հետ, և սրտում է ավելի խոր գիտելիքը՝ համեմատած մտավոր գիտելիքի հետ: Սրտի եռանդուծը հոգեկան եռանդուծն է: Որքան մեծ են մարդու հոգեկան եռանդուծի կուտակումները, այնքան բարձր է նրա գիտակցության մակարդակը:

Մշակույթը մարդուն տալիս է իր աշխարհայացքի հիմքը, կոփում է նրանում զարգացման և ինքնակատարելագործման ձգտում, բնագարգացման ուղու նկրտում: Մշակույթը մարդուն դարձնում է ուժեղ և նրբացնում է նրա գիտակցությունը, ընդունակ դարձնելով նրան լինելու գթասիրտ և արդարամիտ, ազնիվ և անաչառ, սկզբունքային և խիզախ: Մշակույթի բազմաթիվ սահմանումներ կան: Ամենից շատ սահմանումներ մշակույթի մասին տվել է Ն. Կ. Ռերիխը. «Մշակույթը լույսի պաշտամունք է, սեր է դեպի մարդը, անուշահոտություն է, կյանքի և գեղեցիկի զուգակցում, վեհ և նրբի ձեռքբերումների համադրում, Լույսի գենք, փրկություն, շարժիչ, սիրտ: Մշակույթը հիմնվում է գեղեցկության և գիտելիքի վրա» [19, 63]:

Ռերիխը նույնիսկ նշել է ուղին, որով պիտի անցնի մարդը մշակույթային դառնալու համար: «Տգեղ մարդը նախ պետք է դառնա քաղաքակրթված, հետո կրթված. դառնալով կրթված՝ նա դառնում է մտավորական, այնուհետև զալիս են նրբանկատությունն ու համադրման գիտակցումը, որն ավարտվում է մշակույթի հասկացության ընդունումով» [9]: Մշակույթային մարդը նա է, որը կարող է օգնել թույլին, օգնության ձեռք մեկնել, օգնել և՛ գործով, և՛ բարի խոսքով, և՛ մտքով, և՛ բարի հայացքով: Մշակույթի հասկացությունը կապված է մարդկայության հասկացության հետ: Վարքի մշակույթը մեր կյանքի կարևոր բաղադրիչն է, և մենք պետք է ոգեղենացնենք, բարոյական հիմքի վրա դնենք ամեն մի հասկացություն: Մշակույթն արտահայտվում է և՛ ուրիշ մարդու արժանապատվության հարգանքի մեջ, և՛ սեփական արժանապատվության պահպանման մեջ: «Մշակույթի պատմությունը սիրո պատմությունն է: Սիրո հրում նրբանում են մարդկային ոգու բոլոր ուժերը» [15]:

Միայն նրբացած մարդուն կարելի է անվանել մշակույթային, քանզի նրբացածությունը հենց այն է, որը կոչվում է մշակութականություն: «...Նրբագացությունը մշակույթի աստիճանն է» [3]: Այդտեղից հետևում է, որ մշակութականությունը մարդկության զարգացման ամենաբարձր աստիճանն է: Չէ որ ճշմարտությունները բացահայտվում են ոչ այնքան խելքով, որքան գիտակցության ընդլայնումով և նրբացումով, սրտի բացումով:

Մշակույթի մասին գիտությունում ընկերաբանական աշխարհագրությունը բավականին լայն տարածում է գտել՝ սահմանափակվելով լոկ հասարակական հարաբերություններով, հեռու գտնվելով տիեզերական անսահմանության բնագարգացումային փոխազդասարքերից: Կենդանի բարոյագիտության գաղափարների տարածությունում մշակույթի իմաստավորումը ենթադրում է բուն մշակույթի բնության հանդեպ վերաբերմունքի փոփոխում: Դա թելադրված է եռանդուծային աշխարհայացքի յուրահատկություններով և

նախանյութի էության ավելի լայն հասկացողությամբ: Մշակույթը ձևավորվում է հենց ոգու տարածությունում եռանդուժատեղեկատվական փոխանակության ազդեցության տակ: Դա սկզբունքորեն նոր մտեցում է մշակույթի բնույթի գիտակցմանը և իմաստավորմանը: Իմաստասիրական համակարգի բուն անվանումը՝ «Գենդանի բարոյագիտությունը» նույնպես սկզբունքային նորություն է պարունակում մշակույթի նկատմամբ: Նախկինում բարոյագիտությունը չէր դիտարկվում մարդու տիեզերական բնագարգացմանը կից, որտեղ սերտ կապ կա բարոյական սկզբունքների, տիեզերական օրենքների և իր նախանյութի կատարելագործման անվերջանալի սանդուղքի վրայով մարդու առաջընթացի միջև: Նման բնագարգացումային իմաստով բարոյագիտությունը, որը անսահմանության մեջ մարդու կյանքի գիտակցման նոր սահմաններ է բացում, դառնում է հենց կենդանի, այսինքն՝ ապրող: Լոր հարացույցի տարբերակիչ գիծն այն է, որ մշակույթը ներդրվում է համատիեզերական բնագարգացումային գործընթացի մեջ և դիտարկվում են այդ գործընթացի բաղադրիչներն ու լծակները:

Մշակույթ ստեղծողը՝ մարդը, ստեղծագործում է տիեզերքում: «Տիեզերքի ստեղծագործության հետ միասին գործում է նրա մի մասը՝ մարդու ոգին» [1], ասվում է Գենդանի բարոյագիտությունում: Գենդանի բարոյագիտությունը խոսում է գիտակցաբար տիեզերական գործակիցներ դառնալու հնարավորության մասին: Մշակույթի ամենագլխավոր բնութագիրը կապն է Բարձրագույնի հետ: Եվ այդ կապը պայմանավորված է այնպիսի որակների զարգացումով, ինչպիսիք են զթասրտությունը, կարեկցանքը, սերը և նման կարգի այլ որակները, ինչպես նաև շատ լուսավոր ձգտումներով, որոնք հանդիսանում են «բարձրագույն եռանդուժերի հետ հաղորդակցման ուղիները» [4]:

Մարդու կողմից արարված ոչինչ չի անհետանում, այլ մտում է տարածության մեջ ձգողական ուժի տեսքով, որը ձգում է արարիչների հաջորդ սերունդների ուշադրությունը և մղում արարման: Հանրահայտ է, որ գեղեցկությունը կփրկի աշխարհը: Եվ քանի որ «գեղեցկությունը բյուրեղանում է մշակույթում» [14], հետևաբար, մշակույթը կփրկի աշխարհը: «Մշակույթը երկրի վրա մարդկային ոգու դրսևորման և ստեղծագործ զարգացման կարևոր գործոն է: Դրա լույսի ներքո այն հասկացվում է որպես մարդկանց մեջ ստեղծագործական կրակի պահպանում և զարգացում» [8, 72]: Մշակույթի տարածությունում է իրականացվում այնպիսի երևույթների գիտակցումը, ինչպիսիք են գեղեցկությունը, սերը, ստեղծագործությունը, որոնք տիեզերական բնագարգացման հիմքերն են: Այդ պատճառով մշակույթի ոգեղեն արժեքների պահպանությունը և զարգացումը մարդկային ընկերակցության կարևոր խնդիրներից մեկն է: «Մենք տեսել ենք, ինչպես են արվեստի ստեղծագործությունները կերպարանափոխել մարդուն» [5]:

Ցավոք, «մեծամասնության մոտ մշակույթի հասկացությունը նախ և առաջ կապվում է գոեհիկ ոսկեգոծված պալատների, մեռած աղամանդների, թանկ խնջույքարաններում խմիչքների և սրանց նման «վեռ» զբաղմունքների հետ: Աշխարհի վիճակն ասավոր է» [10]: Այնինչ՝ «Չբեղությունը գեղեցկության հակոտնայն է» [2]: «Եթե մշակույթը չկա արյան մեջ, ապա այն ձեռք բերելն էլ ոսկու ոչ մի տեսակ պարկերով հնարավոր չէ, և ոչ մի կախ տված պիտակ էլ չի օգնի: Եվ ինչպիսի գեղեցիկ շրջանակի մեջ էլ որ կախեն կեղծված նկարը, նրա արժեքավորությունը դրանից չի մեծանա» [12]:

Գեղեցկությունը մշակույթի կարևորագույն հիմքն է: Գեղեցկության սկզբունքի համաձայն է տեղի ունենում ոգու զարգացումը, կատարելագործումը: Ըստ Լ. Վ. Շապոշնիկովայի՝ «գեղեցկությունը մշակույթի եռանդուժային դաշտում ձևակազմիչ պայմաններից մեկն է» [26, 81]: Մովորել ընկալել գեղեցկությունը և հասկանալ նրա իմաստը, նշանակում է կարևոր քայլ անել սեփական ոգեղեն կերպարանափոխման ուղղությամբ: Համապատասխանություն գոյություն ունի մարդու ոգեղեն զարգացման մակարդակի և ներզգացողության հիման

վրա մտահայեցական ճանապարհով գիտելիքների ստացման հնարավորության միջև: Ճանաչման մակարդակը կախված է մարդու ոգեղեն, մշակութային զարգացման աստիճանից: Մարդու ներքին աշխարհով եկող բարձր ճանաչողությունը մատչելի է նրանց, ովքեր կարողանում են բարձր մշակույթի դաշտ կազմել իրենց ներսում:

Մշակույթի եռությունը գտնվում է տիեզերական կառույցների գործողության ոլորտում: Բարձրագույնի հետ եռանդուծային փոխանակությունը մարդու բնության խորքերում մշակույթի զարգացման հիմքն է: Ըստ Լ. Վ. Շապոշնիկովայի՝ դրա վրա ազդում են «ուղղորդված եռանդուծային ներգործությամբ» նրանք, որոնց նա անվանում է «տիեզերական բնագարգացման ենթականեր» [27, 104], այսինքն՝ գործող անձինք: Այդ ներգործությունը անմիջականորեն վերաբերում է մշակույթին: Լ. Վ. Շապոշնիկովան սահմանում է մշակույթը որպես ոգու ինքնակազմակերպվող համակարգ: Ինքնակարգավորվող գործընթացների գլխավոր սկզբունքներից մեկը հետևյալն է. որևէ համակարգի ինքնակազմակերպումը տեղի է ունենում ավելի բարդ (տվյալ համակարգի համեմատ ավելի բարձր) համակարգի ազդեցության տակ: Դրանում է արտահայտվում մշակույթի բնագարգացումային կապը մարդկության ուսուցիչների հետ:

Մարդու ոգու ստեղծագործության մարմնացումները՝ մշակույթի նյութեղեն կրողները, նույնպես օժտված են արարիչ մարդու կողմից նրանցում դրված հատուկ եռանդուծերով, ինչպես նաև տիեզերքի եռանդուծային կյանքի հետ կապերով: Մշակույթի նյութեղեն կրիչների ամբողջությունը եռանդուծի ընդարձակ դաշտ է ստեղծում, որը նույնպես կապված է բարձր տիեզերական կառույցների զարկաչափերի հետ և առաջ է տանում քաղաքակրթության զարգացումը: Հենց այդ ձևով են տիեզերական եռանդուծատեղեկատվական փոխանակության ազդեցության տակ մարդու ոգում կատարվող մշակույթի ձևավորման գործընթացներն արտացոլվում ամբողջ մոլորակի եռանդուծերի վրա: Այնպես որ՝ տիեզերական նպատակահարմարությունից է բխում մշակույթի կառույցների պահպանությունը, որոնք, պատկերավոր ասած, կապում են Երկինքն ու Երկիրը:

Մշակույթի հասկացությունը անքակտելիորեն կապված է արվեստի, ստեղծագործության հետ: Արվեստի նպատակը նույնպես, ինչպես և իմաստասիրությանը, մարդու դաստիարակությունն է: Դեռևս Պլատոնն էր ընդունում իմաստասիրությունը որպես արվեստներից մեծագույնը: Մարդը դարեդար ձգտել է դեպի գեղեցիկը՝ միշտ զարդարելով կացարանները, ամանեղենը, հագուստը: Գեղեցիկի հետ հանդիպումը արթնացնում է մարդու մեջ ամենալավ, վեհացնող զգացումներ, սիրելու, բարիք գործելու ցանկություններ: «Մշակույթի մասին խոհը սպազայի դարպասն է» [17, 223-225]: Հայտնի է հին իմաստունի խոսքը. «Իր որդու ձեռքերին վարպետություն չսովորը նրանից մեծ ճանապարհի ավագակ է պատրաստում» [18, 371]: Ըստ Ռ. Թագորի՝ գեղեցիկը լսելը և տեսնելը երեխայի հոգին ազնվացնող գլխավոր գործոնն է, որը նրան կյանքի դժվարությունները հաղթահարելու հիմք է ուժ է տալիս:

**Տիեզերականություն:** Կենդանի բարոյագիտության կենտրոնական գոյաբանական և բարոյական գաղափարը տիեզերքի ամբողջական և բոլոր բաղադրիչ մասերի, ներառյալ մարդկության և ամեն առանձին անհատի բնագարգացման գաղափարն է: Մարդու և հասարակության տիեզերական բնագարգացման իմաստավորման իմաստասիրական նախադրյալն է պատկերացումը անսահման տիեզերքի մասին, որը ոգեղեն է, բանական, նպատակահարմար, ներդաշնակ կազմակերպված և գտնվում է անընդհատ առաջընթաց զարգացման վիճակում: Կենդանի բարոյագիտության տիեզերաբանության պատկերացմամբ՝ Երկիրը տիեզերքի բազմաթիվ աշխարհներից մեկն է, որտեղ իրականացվում է մարդկային ոգու կատարելագործումը: Մոլորակային բնագարգացման նպատակը ամբողջ երկրային նախանյութի կատարելագործումը և ոգեղենացումն է: Մարդու առաքելությունն է կատարել-

լագործվելով ոգեղենացնել իրեն, բնությունը, հասարակությունը՝ պատասխանատվություն կրելով իր ճակատագրի, ուրիշ մարդկանց, բնության, հասարակության և ամբողջ մոլորակի ճակատագրերի համար: Այդպիսով, Կենդանի բարոյագիտության նպատակն է կերպարանափոխել մարդկային գիտակցությունը, բարձրացնել այն տիեզերական մակարդակի: Կենդանի բարոյագիտության իմաստասիրությունը հազեցած է նոր իրականության՝ բարոյական տիեզերքի ստեղծագործման ոգով, որում դատողական գիտակցությունը զիջում է իր տեղը սրտի բանականությանը: Տիեզերական օրենքների հասկացողության վրա հիմնված բարոյական գիտակցությունը տիեզերքի համակարգակազմիչ գործոն է դառնում:

Կենդանի բարոյագիտության հեղինակների համար մշակույթի երևույթը վերացական հասկացություն չէ, այլ ոգեղեն մշակույթը մարդկային հասարակության հիմքն է և նրա պատմական առաջընթացի շարժիչը: Նրանց համար մշակույթը ոգին է, ոգու ընկերային պատմական մարմնավորումը, որն արտահայտվում է ոգեղեն ուսմունքներում և կրոններում, իմաստասիրությունում, գիտությունում և արվեստում: Իսկ քաղաքակրթությունը նախանյութի ընկերային պատմական մարմնավորումն է: Նրա նշանակությունն է նյութական ձևեր, միջոցներ կամ անոթներ, օջախներ ստեղծել ոգու կրակների, այսինքն՝ մշակույթի համար: Քաղաքակրթության զարգացումը պետք է դիտարկվի որպես միջոց մշակույթային՝ ոգեղեն զարգացման համար: Պետության գլխավոր խնդիրը պետք է լինի անձի ստեղծագործական ինքնաիրականացման, նրա ոգեղեն զարգացման և կատարելագործման համար լավագույն պայմանների ստեղծումը: Այդ խնդրի լուծման դեպքում զանգվածների գիտակցությունը կբարձրանա նոր աստիճանի վրա: Ամենաարմատական իրապաշտներն էլ են ընկնում գեղեցիկի իշխանության տակ և փնտրում այն՝ հրապուրվելով թատրոնով, պարերով, երաժշտությամբ ու գրականությամբ: «Մշակույթը ձգտումն է դեպի նրբացումը, դեպի գեղեցիկը, դեպի կատարելագործումը: Կատարելագործման գործընթացը հենց ձգտումն է դեպի երազանքը» [16]: Մշակույթը տիեզերական ոգու բարձր եռանդների դրսևորումն է, այն աշխարհների, որոնցում բոցավառվել են կյանքի կայծերը և որոնց մեջ պիտի վերադառնան ոգեղենացված մարդկության գիտակցության բոցերը: Ըստ իր էության՝ մշակույթը միավորող և կազմակերպող սկիզբ է, որը ներդաշնակեցնում է հասարակական նախանյութի ստորին անկազմակերպ ուժերը և բնազարգացման բարձր հաճախականության եռանդուժային ազդակ է տալիս նրան:

**Համադրում:** Կենդանի բարոյագիտությունը դիտարկում է մշակույթի անկումը որպես մարդկության համաշխարհային հիմնախնդիրը: Անոգեղենությունը տարածվել է շատ ազգերի մեջ, ամենաշատը՝ արևմտյան երկրների: Ե. Ի. Ռեբրիխը գրում է այն մասին, որ «քաղաքակրթությունը դուրս է մղել մշակույթի հասկացությունը, և շատերը չեն հասկանում, որ հնարավոր է լինել քաղաքակրթված վայրենի: Հաշվի չի առնվում, որ մշակույթի շերտավորումները կուտակվում են դարերով, իսկ քաղաքակրթությունը կարող է ստեղծվել մեկ տասնամյակում» [13]: Յու. Ն. Ռեբրիխը գրել է ցածրակարգ բնագոյների ազդեցության աճի մասին [20, 65]: Արևմտյան մշակույթի զարգացման բացասական կողմերը հետազոտողները տեսնում են բնությունից գիտակցության օտարացման մեջ, որով կանխատեսվում է արևմտյան քաղաքակրթության մոտավուտ անկումը [24, 7-11]: Ունևորության և նյութական բարիքների սպառման նկատմամբ հետաքրքրությունը սկսել է գերազանցել ստեղծագործական գործունեության նկատմամբ հետաքրքրությանը [21, 64]: Արդի քաղաքակրթված սպառողական հասարակություններում շարժընթացի բացասական միտումներից է այն, որ քաղաքակրթությունը տեխնիկական միջոցների պաշտամունք է առաջացրել, առանց հասկանալու, որ մարդը ամենակատարյալ սարքն է և թաքնված ոգեղեն ուժերի անսահմանափակ ներուժ ունի: Բացի այդ, մշակույթի վրա արևմտյան կենսակերպի բացասական ազդեցություններից է ոգեղեն մշակույթի կարևոր բաղադրիչներից մեկի՝ կրոնական մշակույթի

այլասերումը: Ըստ Կենդանի բարոյագիտության հեղինակների՝ ոչ մի կրոն չի խուսափել մեծ ուսուցիչների տված ոգեղեն ուսմունքների նախասկզբնական հիմունքներից շեղումից:

Դեպի անկում տանող ուղու թեքությունից ելքը ցույց է տալիս Կենդանի բարոյագիտությունը: Մշակույթն այն ապաստարանն է, որտեղ մարդկային ոգին գտնում է ուղիները դեպի ամենայն լուսավորողը և գեղեցիկը: Կենդանի բարոյագիտությունը համաշխարհային մշակույթի զարգացման արդյունքն է, դարերի միջով անցած մշակույթի շատ շերտերի արդյունքը, առաջին հերթին արևելյան մշակույթի, ինչպես նաև արևմտյան: Այն հասկանալու և իմաստավորելու համար հարկավոր է ոչ փոքր մշակութային պաշար ունենալ:

Մշակույթի պատմությունը վկայում է, որ ամենայն նորը, ոչ ավանդականը, գոյություն ունեցող պատկերացումներին և չափանիշերին հակառակ գնացողը միշտ հանդիպում է զգուշավոր, իսկ երբեմն էլ պարզապես թշնամական վերաբերմունքի ավանդական տրամադրված մեծամասնության կողմից: «Վերածնունդը միշտ այնտեղ է, որտեղ հետաքրքրություն է հանդես բերվում ոգեղեն մշակույթի նկատմամբ, քայքայումն այնտեղ, որտեղ քաղաքակրթությունը դուրս է մղում մշակույթի հասկացությունը, զբաղվելով ամենահնարավոր մեքենամարդկանց պատրաստումով» [11]:

Քանի որ մշակույթը դիտարկվում է որպես մարդու ոգու ինքնակազմակերպվող համակարգ, որը մասնակցում է աշխարհաշենքի ավելի բարձր կառուցվածքների հետ եռանդուժատեղեկատվական փոխանակմանը, հենց Բարձրագույնի հետ կապի կամ եռանդուժափոխանակման գործընթացն է համարվում մշակույթի զարգացման գլխավոր գործոնը: Ուստի կյանքում կարևոր դեր են խաղում Բարձրագույնի հետ այդ կապն ապահովող ոլորտները, այդ թվում նաև կրոնը: Կրոնի դերը կարևորվում է նրանով, որ այն Բարձրագույնի հետ կապի հնարավորություն է տալիս մարդուն:

Կենդանի բարոյագիտությունը իր մեջ միավորում է բնագարգացման երեք անհրաժեշտ տարրերը՝ անցյալը, ներկան և ապագան: Անցյալը պատմությունն է՝ դիցաբանությունը, կրոնը, գաղտնուսմունքը, աստվածիմաստությունը: Ներկան կենդանի բարոյագիտությունն է՝ անցյալին գումարած գիտությունը, իմաստասիրությունը, արվեստը, այսինքն՝ անցյալի և ներկայի համադրումը: Ապագան նպատակակետն է և դեպի այն տանող ուղին՝ ոգին, մշակույթը, դրանց զարգացումը: Կենդանի բարոյագիտությունը գլխավոր բաղադրիչն է՝ կազմակերպված ուժը, գաղափարական հիմքը, ուսմունքը: Այն իր մեջ ունի և՞ հոգին՝ գաղափարները, ուսմունքը, և՞ մարմինը՝ Կենդանի բարոյագիտության կազմակերպական կառույցները, որոնք սփռված են աշխարհով մեկ: Կազմակերպությունը հասարակական, ընկերային կենսամարմին է, այն ունի կենսականություն, էթե ունի անցյալի փորձը, ներկայի կենդանությունը՝ գաղափարները, և ապագայի տեսլականը, նպատակին հասնելու առաջադրանքը: Ներկան՝ Կենդանի բարոյագիտությունը, դա զգացմունքների և բանականության կրոնականությունն է, մտքի և սրտի մոլեռանդությունն է, հավատի և սիրո գիտակցությունը և տրամաբանականությունն է: Այս բոլորը դնելով ներկայի գործը կատարող կազմակերպության մեջ՝ կստացվի ապագայի էությունը և նպատակը: Կենդանի բարոյագիտությունը՝ ներկան, կարելի է համեմատել պատճառահետևանքային կապի հետ: Անցյալում գոյության պատճառներն են, որոնք գետի մի ափին են, ապագայում գոյության հետևանքներն են մյուս ափին, իսկ ներկայում մարդը ճակատագրի հարցերն է լուծում ափերն իրար կապող նպատակի կամուրջի վրայով անցնելիս: Ե՞վ ավանդապաշտ, և՞ ապագայատենչ լինել է սովորեցնում ներկան՝ կազմակերպող ուժը. սովորելով անցյալից՝ ձգտել դեպի ապագայի ձգող ու սիրավառ հորիզոնները: Բմաստությունը քաղել պատմությունից, տենչանքը՝ մշակութականությունից և ոգու անսահմանությունից, և ներկան վստահել կազմակերպող ուժին: Ուժերի այսպիսի համադրությամբ սերունդները կկարողանան արարել ապագան: Կենդանի բարոյագիտության մշակույթի նոր հարացույցը ենթադրում է վերաբեր-

մունքի փոփոխություն մշակույթի նկատմամբ, քանի որ ցույց է տրվում, որ մշակույթի բնությունը իր էությունը տիեզերական երևույթ է: Մշակույթը բնության, աշխարհի կամ կյանքի ներկայի կազմակերպված փորձն է ստեղծելու ապագայի կատարյալ մարդուն:

Ուստի Ռեբիինների մշակույթի հայեցակարգը 20-րդ դարի գիտական և իմաստասիրական մտքի խոշորագույն ձեռքբերումներից մեկն է: Մշակույթը մարդկության ոգին է: Զարգացնելով մարդկանց ոգին՝ Կենդանի բարոյագիտությունը իրականացնում է իր պատմական առաքելությունը՝ կատարում է իր մշակութաստեղծ դերը:

### **Եզրակացություն**

Վերջում, ամփոփելով հետազոտության արդյունքները, հանգում ենք ընդհանրացնող հետևություններին:

Ոգեղեն մշակույթը մարդկային հասարակության հիմքն է և նրա պատմական առաջընթացի շարժիչը: Ոգեղեն ճգնաժամից էլքը ցույց է տալիս Կենդանի բարոյագիտությունը: Մշակույթն այն ապաստարանն է, որտեղ մարդկային ոգին գտնում է ուղիները դեպի ամենայն լուսավորողը և գեղեցիկը: Մարդու մշակույթն արտահայտվում է նրա ձգտման մեջ դեպի գեղեցիկը, իսկ գեղեցիկը բողբոջվում է սրտում: Ոգեղենությունը գտնվում է սրտում: Մշակույթը ոգու, սրտի հատկություն է, ոգու զարգացածության աստիճան, զարգացման գործընթաց: Մշակույթի բովանդակության կրողը ոգին է: Մշակութային կուտակումները բերում են ոգու զարգացման: Մշակույթը հասկացվում է որպես մարդկանց մեջ ստեղծագործական կրակի պահպանում և զարգացում: Մարդու ստեղծագործական մտքի կատարելագործումը տեղի է ունենում մշակույթի հիման վրա: Մշակույթի ամենագլխավոր բնութագիրը կապն է Բարձրագույնի հետ: Կենդանի բարոյագիտությունը ձգտում է դեպի Բարձրագույնը մշակույթի միջոցով:

Կենդանի բարոյագիտության մշակույթի նոր հարացույցը ենթադրում է վերաբերմունքի փոփոխություն մշակույթի նկատմամբ, քանի որ ցույց է տրվում, որ մշակույթի բնությունը իր էությամբ տիեզերական երևույթ է: Կենդանի բարոյագիտության ուսմունքի կողմից առաջ քաշված մշակույթի հայեցակարգը հաշվի է առնում մարդու բազմակողմանի կապերը տիեզերքի հետ, բացահայտում է նման կապերի լծակները:

Կենդանի բարոյագիտության բարոյական ուսմունքի էական կողմն է կյանքի վերափոխումը համամարդկային արժեհամակարգի հաստատման միջոցով: Մշակույթի նյութեղեն կրիչների ամբողջությունը եռանդուն է ընդարձակ դաշտ է ստեղծում: Մարդու ոգուն կատարվող մշակույթի ձևավորման գործընթացներն արտացոլվում են ամբողջ մոլորակի եռանդունների վրա: Այդպիսով, Կենդանի բարոյագիտության ուսմունքի կողմից 20-րդ դարում նոր այլընտրական համաշխարհային մշակույթի դաշտ է ստեղծված: Իր մեջ արևելյան և արևմտյան մշակույթների համադրումը պարունակող ուսմունքը նախապատրաստում և աջակցում է նոր համամոլորակային մշակույթի կայացումը և նոր մարդու ծնունդը: Այդպես Կենդանի բարոյագիտությունը համաշխարհային իմաստասիրական հայեցակարգ է դառնում: Կենդանի բարոյագիտությունը համաշխարհային մշակույթի զարգացման արդյունքն է, դարերի միջով անցած մշակույթի շատ շերտերի արդյունքը: Մշակույթը բնության, աշխարհի կամ կյանքի ներկայի կազմակերպված փորձն է՝ ստեղծելու ապագայի կատարյալ մարդուն: Կենդանի բարոյագիտությունը մշակութաստեղծ գործառույթ է կատարում: Մշակույթը մարդկության ոգին է, զարգացնելով մարդկանց ոգին՝ Կենդանի բարոյագիտությունը զարգացնում է մշակույթը: Զարգացնելով համաշխարհային մշակույթը՝ Կենդանի բարոյագիտությունը զարգացնում է մարդկության ոգին:

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-163>

## Գրականություն

1. «Ազնի Յոգա: Անսահմանություն», մաս1-ին, Երևան, «Զանգակ-97», 2008, հատված 454:
2. «Ազնի Յոգա: Հրեղեն աշխարհ», մաս 1-ին, Երևան, «Զանգակ-97», հատված 490:
3. «Ազնի յոգայի նշանները», Երևան, Լուսարաց-04, 1997, հատված 457:
4. «Կենդանի էթիկայի ուսմունք. սիրտ», Երևան, «Լուսարաց» հրատարակչատուն, 2000, հատված 374:
5. «Հիերարխիա: Կենդանի էթիկայի ուսմունք», Երևան, «Լուսարաց», 2000, հատված 359, 366:
6. Бузина Л. В. Живая Этика и Культура. Идеи наследия семьи Рерихов в нашей жизни, Санкт-Петербургский Государственный Университет культуры и искусства, 2011, № 47, с. 3.
7. Грани Агни Йоги, Новосибирск, в 13-и томах, 1960.
8. Письма Елены Рерих, в 2 т., 1999, т. 1, с. 72.
9. Письма Елены Рерих. Т. 1. Рига, 1940, письмо от 29.05.1931.
10. Рерих Е. И. Письма в Америку, 1929-1936. В 3 т. Т.1, Москва: Сфера, 1996, письмо от 21.08.1931.
11. Рерих Е. И. Письма. Том 2, Москва: Международный Центр Рерихов, 2000, письмо от 3.05.1934.
12. Рерих Е. И. Письма. Том 3, Москва: Международный Центр Рерихов, 2001, письмо от 15.10.1935.
13. Рерих Е. И. Письма. Том 3, Москва, 2001, письмо от 5.09.1935.
14. Рерих Е. И. Письма. Том 4, Москва: Международный Центр Рерихов, 2002, письмо от 12.10.1936.
15. Рерих Е. И. Письма. Том 7, Москва: Международный Центр Рерихов, 2007, письмо от 12.06.1944.
16. Рерих Е. И. Письма. Том 7, Москва: Международный Центр Рерихов, 2007, письмо от 2.09.1946.
17. Рерих Н. К. Врата в будущее. Рига, 1991, с. 223-225.
18. Рерих Н. К. Листы дневника. Т. 1, с. 371.
19. Рерих Н. К. Твердыня Пламенная. Рига, 1991, с. 63.
20. Рериховский вестник, Вып. 5, Санкт-Петербург-Москва, 1992, - с. 65.
21. Смелзер Н. Социология, Москва: Феникс, 1994, - с. 64.
22. Соколов В. Г. Культура как главный фактор метанаучного познания в контексте методологии живой этики. Москва: Международный Центр Рерихов, 2011, - с. 227-233.
23. Соколов В. Г. Парадигма культуры в философском наследии Е. И. Рерих и Н. К. Рериха, Харьков, 2008, с 11.
24. Тавризян Г., Шпенглер О., Хейзинга Й., Две концепции кризиса культуры, Москва: Искусство, 1988, с. 7-11.
25. Учение Живой Этики. Надземное, Москва: МЦР, Мастер-Банк, 1996.
26. Шапошникова Л. В. Пакт Рериха и эволюционное значение Культуры, 1995. Москва: МЦР, Мастер-Банк, 1996, с. 81.
27. Шапошникова Л. В. Философия космической реальности, Москва: МЦР, Мастер-Банк, 2003, с. 104.

## Живая этика как культуросозидающая философия

*Хачатрян Гегам*

### Резюме

**Ключевые слова:** *эволюция, духовный, совершенствование, расширение сознания, наука, знание, синтез, космический*

Живая этика предлагает выход из духовного кризиса, вызванного кризисом культуры, представляя новую философско-этическую концепцию духовного развития человечества. Она объединяет науку, искусство и религию, где ось синтеза – наука, отражающая уровень сознания синтезатора. Основной задачей Живой Этики является расширение сознания и духовное возрождение, тесно связанное с социальным обновлением общества. Учение уделяет особое внимание внутренней работе человека над собой, самосовершенствованию и естественному развитию, что способствует достижению высших миров. Новая парадигма культуры рассматривает её как космическое явление и раскрывает многогранные связи человека с мирозданием. Духовная культура – основа общества и двигатель исторического прогресса, а её носителем является дух, связанный с Высшим. Живая Этика, синтезирующая восточные и западные традиции, формирует мировую культуру и подготавливает рождение нового человека. Развивая дух человека, она развивает и культуру, выполняя тем самым культурообразующую функцию, создавая предпосылки для духовного и социального совершенствования человечества.

## Living Ethics as a Culture-Creating Philosophy

*Khachatryan Gegham*

### Summary

**Key words:** *evolution, spiritual, improvement, expansion of consciousness, science, knowledge, synthesis, cosmic*

Living Ethics offers a way out of the spiritual crisis caused by the cultural crisis, presenting a new philosophical and ethical concept of human development. It unites science, art, and religion, with science as the axis of synthesis, reflecting the level of consciousness of the individual. Its core goal is the expansion of consciousness and spiritual rebirth, which is inseparable from social renewal. A key principle emphasizes inner work, self-improvement, and natural development, guiding humanity toward higher realms. Living Ethics introduces a new cultural paradigm, viewing culture as a cosmic phenomenon and exploring the multifaceted connections between humans and the universe. Spiritual culture is considered the foundation of society and the driver of historical progress, with the spirit as its bearer and its connection to the Supreme as essential. By combining Eastern and Western traditions, Living Ethics fosters the development of world culture and the emergence of a “new” human. Through cultivating the spirit of humanity, it simultaneously develops culture, fulfilling a culture-creating function. This philosophy shapes both individual spiritual growth and the evolution of global cultural values.

Ներկայացվել է 26. 11. 2025 թ.

Գրախոսվել է 04. 12. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

## Անգլիական հրամանատարության ադրբեջանամետ քաղաքականությունը (1918 թ. դեկտեմբեր – 1919 թ. օգոստոս)

Ղույան Յուրիկ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-175>

*Հանգուցային բառեր. Մեծ Բրիտանիա, Այսրկովկաս, Ադրբեջան, Հայաստան, քաղաքական նպատակներ, տնտեսական շահեր, հակախորհրդային ճակատ, նավթ*

### Նախաբան

Այսրկովկասը դարեր շարունակ մեծ տերությունների քաղաքական նպատակների ու տնտեսական շահերի բախման վայր է: Երկրամասում քաղաքական առաջնայնության ու ազդեցության համար մղվող պայքարը դրսևորվել է ինչպես նախընթաց, այնպես էլ 19-րդ ու 20-րդ դարերում: Այն դրսևորվեց նաև 44-օրյա պատերազմը ընթացքում և առայսօր շարունակվում է: Առաջին աշխարհամարտից հետո տարածաշրջանի համար մղվող պայքարում անգլիական քաղաքականությունը հակահայ էր ու ադրբեջանամետ: Անգլիայի ադրբեջանամետ քաղաքականության պատմության թեման այսօր էլ արդիական է, որին և նվիրված է մեր կողմից ներկայացվող հոդվածը:

Այսրկովկասում Անգլիայի քաղաքական նպատակներն ու տնտեսական շահերը

1918 թ. նոյեմբերի 17-ին բրիտանական զորամասերի մուտքը Բաքու սկիզբ դրեց Անտանտի կողմից երկրամասի զինագրավմանը: Հաշտության պայմանագրով Թուրքիային չպատկանող տարածքները գերմանացիներից ու թուրքերից անհապաղ ազատելն ու Այսրկովկասում կարգ ու կանոն պահպանելը հայտարարվեց Մեծ Բրիտանիայի կառավարության նպատակ [19, 202]:

Անդրկովկասում անգլիական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնը 1918 թ. դեկտեմբերի 6-ին իր կառավարությանը հղած զեկուցագրում տեղեկացնում էր, որ անգլիական զորքերի առջև խնդիր էր դրված ոչ միայն նվաճել ողջ Անդրկովկասը Դադստանի հետ միասին, այլև վերահսկողություն սահմանել երկրամասի ամբողջ տնտեսական ու քաղաքական կյանքի վրա, քանի որ Անդրկովկասը կարևոր նշանակություն ուներ բրիտանական կայսրության շահերի և մասնավորապես Հնդկաստանի համար [7, 252]:

1918 թ. սեպտեմբերի 8-ից մինչև հոկտեմբերի 30-ը հատուկ հանձնարարություններով Բաքվում, Պետրոպոլսում, Էնգելիում եղած հայկական բանակի հետախուզության կապիտան Գուրգեն Կոլմանյանը ղեկոս մինչև Այսրկովկաս անգլիացիների գալը նրանց նպատակների մասին Հայաստանի կառավարությանը զեկուցում է, որ Պարսկաստանում իրենց գերիշխանությունը հաստատելուց հետո անգլիացիները կգբաղվեն Այսրկովկասով՝ ստեղծելու բուֆեր Պարսկաստանի և ապագա Ռուսաստանի միջև՝ ի դեմս առանձին և մանր հանրապետությունների, որոնց նույնպես կարելի է իրար հետ կովեցնել [4, 311]:

Բրիտանական թագավորական բանակի 27-րդ դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Ջորջ Թաունզենդ Ֆորեստյե-Ուոկերը 1919 թ. հունվարին գեներալ Ա. Դենիկինի ներկայացուցիչ գեներալ Էրդելիին հայտնեց, որ անգլիական զինվորական առաքելության նպատակն է մինչև Փարիզի վեհաժողովի որոշման ընդունումը Այսրկովկասում ապահովել ու պահպանել կարգ ու կանոն և աջակցել Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի կառավարություններին՝ հետևելու տարածաշրջանում իրավիճակի կայունացմանը [19, 202]:

Քողարկվելով խաղաղարարի առաքելությամբ՝ Անգլիան թաքցնում էր իր իրական նպատակը՝ հաստատվել Այսրկովկասում: Տարածաշրջանում նրա բոլոր քայլերն ուղղված էին դրան: Անգլիացիներն անցան Այսրկովկասի խնդիրների լուծմանը: Այստեղ ստեղծված փոքր հանրապետությունները կարող էին բուֆեր լինել Պարսկաստանի և ապագա Ռուսաս-

տանի միջև: Բացի այդ՝ Այսրկովկասում քաղաքական հավասարակշռություն պահպանելու համար նրանց պետք էր կռվեցնել միմյանց հետ, ինչպես դա անում էին իրենց արևելյան գաղութներում: Անդրկովկասում անգլիական գործերի հրամանատարությունը Անդրկովկասի հանրապետությունների բախումների դեպքում դատավորի դեր էր կատարում, որոնց որոշումներով վիճելի տարածքներն անցնում էին կողմերից մեկին կամ էլ վեր էին ածվում «չեզոք գոտիների», որը և Անդրկովկասյան հանրապետությունների միջև նոր ընդհարումների աղբյուր էր հանդիսանում [24, 187-188]:

Դաշնակիցների քաղաքական ու վարչական կենտրոնը Թիֆլիսն էր, իսկ գլխավոր տարրը իր զինվորական ու քաղաքական ազդեցությամբ անգլիականն էր: Թիֆլիսում էին կենտրոնացված դաշնակիցների ներկայացուցիչները՝ ի դեմս բարձր կոմիսարների, իսկ Երևանում և Բաքվում գտնվում էին բարձր կոմիսարների ներկայացուցիչները: Գլխավոր կոմիսարները Երևան էին գալիս միայն առանձին կարևոր դեպքերում:

Այսրկովկասում անգլիացիներն ավելի մեծ իրավունքներ ունեին, քան դաշնակիցներն ընդհանրապես [10, 151]: Հատկանշական է, որ Անդրկովկասում անգլիական բոլոր պաշտոնյաները մինչև 1919 թ. վերջերը ցուցումներ ստանում էին ոչ թե արտաքին գործերի նախարարությունից, այլ ռազմական ղեկավարությունից [25, 395]: Այսրկովկասը մտնում էր անգլիական ռազմական զինագրավման գոտու մեջ և բոլոր հարցերը, նույնիսկ տարածքայինը, որոշվում էին զինվորական իշխանությունների կողմից: Այս առումով անգլիացիներն Անդրկովկասում իրենց ամուր ու տանտիրոջ նման էին զգում: Անդրկովկասում բրիտանական հրամանատարությունը հետապնդում էր ոչ թե համադաշնակցային, այլ ազգային-կասերական շահեր [12, 79]:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Մեծ Բրիտանիան անմիջապես ձեռնամուխ եղավ Կովկասը Ռուսաստանից վերջնականապես մեկուսացնելու և իր ազդեցությունն այնտեղ հաստատելու ծրագրին, քանի որ այն մեծ նշանակություն ուներ որպես ռազմավարական կարևոր դիրք ունեցող տարածաշրջան, որը պետք է դառնար բոլշևիկների՝ դեպի Մերձավոր Արևելք առաջխաղացումը կանխող արգելապատնեշ: Իսկ Մեծ Բրիտանիայի տնտեսական հետաքրքրությունը, անշուշտ, նաև նավթն էր [22, 274-276]:

Միասնական հակախորհրդային ճակատ ստեղծելու իր ձգտման մեջ անգլիական հրամանատարությունը հիմնականում կարևորում էր Այսրկովկասի պետական այն կազմավորումները, որոնք կարող էին առավել մեծ նշանակություն ունենալ նախաձրագրած պայքարում: Դրանք Վրաստանն ու Ադրբեջանն էին, որոնց բնական հարստությունները և անմիջական մոտիկությունը գործողությունների կիզակետին ռազմավարական կարևոր նշանակություն էին ստանում այդ ծրագրերում: Բրիտանական քաղաքականության տեսանկյունից կենսունակ Ադրբեջանը պետք է պատնեշ հանդիսանար վերածնված Ռուսաստանի՝ դեպի հարավ առաջխաղացման ճանապարհին:

Անդրկովկասում անգլիացիներն իրենց զավթողական ծրագրերի իրականացման գործում մեծ տեղ էին հատկացնում հատկապես Ադրբեջանին: Բրիտանական նվաճողների այդպիսի դիրքորոշումը, ինքնին հասկանալի է, նրանց նպատակն էր մուսուլմանական Ադրբեջանը, որը տարածաշրջանում աչքի էր ընկնում իր ընդգծված հակառուսական և հակաբոլշևիկյան կեցվածքով, դարձնել բոլշևիզմի դեմ պայքարի ամուր հենարան [23, 5], տիրանալ Բաքվի նավթին, ապա ձեռնամուխ լինել ազդեցության ոլորտներն տարածմանը ամբողջ Անդրկովկասի, հետագայում նաև՝ Մերձավոր և Միջին Արևելքի վրա: Բրիտանական զինվորական հրամանատարությունը Անդրկովկասի մուսուլման բնակչությունը դիտում էր իբրև ավելի հավատարիմ, հակառուսական ավելի վստահելի տարր:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Սիրական Տիգրանյանը ժամանակին հետևյալ կերպ է գնահատել Անգլիայի քաղաքականությունը. «Անդրկովկասի թուրքությունը, – հայտարարել է նա, – բրիտանական գորահրամանատարության օրոք ավելի նպաս-

տավոր պայմանների մեջ է գտնվում, քան գերմանա-օսմանյան հաղթական օկուպացիայի ժամանակ... որովհետև Թուրքիան է նրա՝ Անգլիայի, աչքում ամենավստահելի պատվարը Ռուսիայի դեմ այստեղ» [7, 71]:

Ադրբեջանի կառավարությունը, Մուսավաթը, մուսուլման հոգևորականությունը երախտագիտական զգացումներով պատրաստակամություն էին հայտնում օրինակելիորեն ծառայել անգլիական շահերին, բոլշևիկյան Ռուսաստանի դեմ մղվող պայքարում հնարավոր բոլոր միջոցներով աջակցել դաշնակիցներին՝ նրանց տրամադրելով նաև Ադրբեջանի տարածքը՝ որպես պլացդարմ [13, 472]:

Այս պարագայում պակաս հետաքրքրություն էր ներկայացնում քայքայված ու արյունաքամ եղած Հայաստանը, որն ավելի հեռու էր Խորհրդային Ռուսաստանի հետ նախատեսվող առձակատման վայրերից: Անգլիացիներն իրենց պայքարի հիմնական սլաքն ուղղել էին այն բոլոր ուժերի դեմ, որոնք Այսրկովկասի շահերը շաղկապում էին Ռուսաստանի շահերին:

1919 թ. անգլիացիները Ադրբեջանին փրկեցին Ա. Դենիկինի ձեռքից, որի Կամավորական բանակը բոլշևիկներից մաքրեց Ռուսաստանի ամբողջ հարավը և հասավ Կասպից ծով: Մեծ Բրիտանիան ուներ իր աշխարհաքաղաքական խոշոր ծրագիրը. Դենիկինի ռազմական հաջողությունները կարող էին հանգեցնել բոլշևիզմի դեմ նրա լիակատար հաղթանակին, և արդյունքում Ռուսաստանը կվերականգնվեր նախկին կայսրության սահմաններում, բայց դա Անգլիային բոլորովին պետք չէր: Անգլիացիները ձգտում էին Այսրկովկասն անջատել, ստեղծել իրենց ենթակայության տակ գտնվող բուֆերային գոտի՝ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև: Անջատման գիծն անցնում էր Ղրզըլ Բուրունով, Զաքաթալայով, Կովկասյան լեռնաշղթայով մինչև Տուսպսե [8, 164]: Նկատենք, որ դեռևս 1917 թ. դեկտեմբերի 23-ին Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի միջև կնքված գաղտնի պայմանագրի համաձայն Ռուսաստանը բաժանվել էր ազդեցության ոլորտների: Մեծ Բրիտանիան տնօրինելու էր Հյուսիսային Կովկասը, Այսրկովկասը, Թուրքեստանը, Ֆրանսիան վերահսկողություն էր հաստատելու Բեսարաբիայի, Ուկրաինայի, Դրինի ու Դոնբասի նկատմամբ:

Անգլիացիներն Ադրբեջանում ունեին ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական հետաքրքրություններ ու շահեր: Գներալ Թոմսոնը, որը Բաքու էր մտել նոյեմբերի 17-ին Պարսկաստանից, երկու օր անց տարածած հռչակագրերով Բաքվի բնակչությանը հայտարարեց, որ քաղաքը արդյունաբերական կենտրոններով պիտի զբաղեցվի բրիտանական գործերով: Անգլիացիներին առաջին հերթին մտահոգում էր Բաքվի նավթային արդյունաբերությունում համակարգի պահպանումը, որտեղից նրանք միանգամից սկսեցին նավթի մղումը դեպի Բաթում [17, 151]: Շահագրգռված Բաքվի նավթային շրջանի պաշարներով՝ անգլիական հրամանատարությունն առաջին հերթին վերահսկողության տակ վերցրեց Բաքվի նավթային շրջանը, Բաթումի նավահանգիստը, Բաքու-Բաթում նավթամուղը և Բաքու-Թիֆլիս-Բաթում երկաթուղին: Անգլիական հրամանատարությունը Ադրբեջանում իր տնօրինության տակ վերցրեց նաև ջրային տրանսպորտը, Կասպիական առևտրական նավատորմը, բանկերը, ինչպես նաև Բաքվում գտնվող զինվորական գործատերը [26, 41]: Անգլիական նավթարդյունաբերության ընկերություններից մեկի ներկայացուցիչը Լոնդոնում բաժնետերերի հավաքի ժամանակ հայտարարեց, որ Բաքվի նավթային արդյունաբերությունը՝ բրիտանական ղեկավարությամբ համապատասխան ձևով կազմակերպված, Բրիտանական կայսրության համար կարող է հանդիսանալ թանկարժեք ձեռքբերում [18, 98]: Նավթի հոտն առած անգլիացիների համար առաջնայինը օրվա շահն էր: Նրանց նպատակը Այսրկովկասի հարստությունները թալանելն ու դուրս տանելն էր:

Անգլիացիները բացեիբաց հայտարարում էին, որ իրենք Բաքու են եկել, որպեսզի տեր կանգնեն ժամանակին նավթարդյունաբերությունում կատարած կապիտալ ներդրումներ-

րին: Եվ քանի որ Բաքվում գոյություն ունեւորինական իշխանություն՝ ադրբեջանական կառավարությունը, անգլիացիները իսկույն սրտակից հարաբերություններ հաստատեցին իրենց նախկին հակառակորդի հետ: «Անգլիան ինչպես միշտ Կովկաս գալով, այդ բուխգալտերը առաջին իսկ քայլերից հաշվի առավ, թե ումից ինչ կարող է վերցնել: Հաշիվը պարզ էր, Ադրբեջանը նավթ ունեւոր, իսկ Հայաստանը՝ միայն որբեր և մեռնող ժողովուրդ: Եվ բնականաբար, Ադրբեջանը նրա համար Հայաստանից նույնիսկ շատ լավ էր» [9],– գրում է Լեոն:

Զրկվելով թուրքական սվինների աջակցությունից՝ մուսավաթականները շտապեցին ծառայության անցնել անգլիացիների մոտ, որոնք հարմար պահի էին սպասում Ադրբեջանը նվաճելու համար: 1918 թ. նոյեմբերին մուսավաթական կառավարությունը հատուկ պատվիրակություն ուղարկեց Էնգելի, որն անգլիական հրամանատարությանը հավաստիացրեց Ադրբեջանի անգլիական զինագրավման աջակցելու իր պատրաստակամության մասին: Այդպիսով, թուրքական աջակցությունից զրկված մուսավաթական Ադրբեջանը, նոր տիրոջ՝ անգլիացիների մոտ ծառայության անցնելով, իրեն հատուկ խորամանկության, կաշառքի միջոցով ու զանազան սադրանքներով իր շահն առաջ տանելու վարպետության շնորհիվ կարողացավ նրան նույնպես օգտագործել Հայաստանի նկատմամբ իր գավթողական ծրագրերի իրականացման հարցում:

Այսրկովկասում փոխարինելով թուրք-գերմանական գավթիչներին՝ անգլիական հրամանատարությունը բացահայտորեն իր պաշտպանության տակ առավ երեկվա իրենց պատերազմական հակառակորդներին՝ կովկասյան թուրքերին, Ադրբեջանի հայաստյաց իշխանություններին:

Անգլիացիների համար Այսրկովկասում ամենալուրջ գործոնը դարձավ մուսուլմանական բազմաքանակ բնակչությունը, որի հետ պետք էր պահպանել լավ հարաբերություններ: Մուսավաթականների բացահայտ թուրքամետ քաղաքականությունը չէր խանգարում ադրբեջանա-անգլիական բարեկամությանը:

Անգլիացիների ադրբեջանամետ դիրքորոշումը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Առաջին. Բրիտանական գաղութային կայսրությունն իր կազմում ներառում էր հարյուր միլիոնավոր մուսուլմանների և պատմության մեջ առաջին մուսուլմանական հանրապետության հովանավորությունը բարենպաստ կերպով կանդրադառնար նրա հեղինակության վրա իր մուսուլման հպատակների շրջանում: Այդ քաղաքական գիծն առավել ընդգծված էր Բաքվում բրիտանական հրամանատարության մոտ, որը մինչև այդ ծառայել էր Հնդկաստանում: Երկրորդ. անգլիացիները չէին մոռանում, որ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը (ԱՀՀ) ստեղծվել էր թուրքական սվինի օգնությամբ, ուստի նրան թուրքական ազդեցությունից գերծ պահելու համար անհրաժեշտ էր հնարավորինս հանդուրժողական դիրքորոշում գրավել ԱՀՀ կառավարության հանդեպ, ինչպես նաև նպաստել ռազմա-քաղաքական և տնտեսական առումով կենսունակ պետականության ստեղծմանը: «Անգլիացիք աշխատում էին անպայման ազատել Կովկասը թուրքական գրավումից: Ուժեղացնելով մահմեդական Ադրբեջանին, նրանք թուլացնում էին մահմեդական Թուրքիան: Այսպիսով դա ոչ զուտ մահմեդական քաղաքականություն էր, այլ քաղաքականություն, որի նպատակն էր ուժեղացնել Ռուսաստանի սահմանի մեջ գտնված և հարուստ նավթահորերի տեր երիտասարդ պետությունը» [10, 151],– գրում է Ալ. Խատիայանը:

Անդրկովկասում անգլիացիները հաշվի էին նստում մուսուլմանական մեծաքանակ բնակչության հետ, որոնց հետ նրանք չէին ուզում ստեղծել լարված հարաբերություններ:

Դեռևս 1918 թ. օգոստոսի 8-ին Բաքու մտնելու առիթով Էնգելիից անգլիական ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Լ. Դենստերվիլի հոլած հայտարարության մեջ ասվում էր. «Բրիտանական կառավարությունը չի հետապնդում որևէ անհաստակ շահեր և Բաքվում որևէ շահ չունի՝ բացի գերմանական իմպերիալիզմի և գրավումների դեմ մղած

դաշնակից պետությունների կողմից հետ կապված շահերից» [20,184]: Բաքվի պաշտպանությանը անգլիացիների մասնակցությունը պայմանավորված էր Միջագետքում գտնվող անգլիական բանակին էնգելիի վրայով վառելանյութ հասցնելու անհրաժեշտությամբ և որպես վերջնական նպատակ Այսրկովկասին, Միջին Ասիային և Կասպից ծովին տիրելու առաջադրանքով [15, 388]: Բաքվում գտնված ժամանակ գեներալ Դենստերվիլը ընդհանրապես խուսափում էր Բաքվի մուսուլմանների դեմ սուր ելույթներից [4, 311]: Կոչով դիմելով մուսուլմաններին, նշում էր անգլիացիների ավանդական հովանավորությունը մուսուլման ազգաբնակչությանը և նվիրվածությունը վերջինիս:

1918 թ. դեկտեմբերից մինչև 1919 թ. օգոստոսը Բաքվում անգլիական հրամանատարության կողմից աստիճանաբար հանվեցին ադրբեջանական կառավարության գործունեության վրա դրված բոլոր սահմանափակումները: Անգլիացիներն իրենց վերահսկողությունը հանեցին ջրային տրանսպորտի և նավթային արդյունաբերության վրայից, կառավարությանը վերադարձրին նաև հրատարակչության նկատմամբ հսկողության իրավունքը [21, 196]:

Հայերին թվում էր, թե դաշնակից Մեծ Բրիտանիայի զինվորների ներկայությունն Այսրկովկասում կապահովի կայուն խաղաղություն, ազգամիջյան հարաբերությունները և տարածքային վեճերը արդարացի լուծում կստանան:

Հայաստանի Հանրապետությունը դիտարկելով որպես ռուսական շահերի ջատագով՝ հենց սկզբից անգլիացիները բացահայտ պաշտպանեցին մուսավաթական Ադրբեջանի շահերը: Տեղի ունեցավ պատմության կնճիռներից մեկը. Օսմանյան թուրքերի «կրտսեր եղբայր» կովկասյան թրքությունն օրերի ընթացքում դարձավ անգլիացիների դաշնակիցը, իսկ հայ ժողովուրդը, որ սրանց դատին ծառայել էր անմնացորդ, տվել անհաշիվ մարդկային գոհեր, կորցրել իր հայրենիքի մեծ մասը, այժմ ստիպված էր շարունակել իր գոյապայքարը՝ կռիվը մուսավաթական Ադրբեջանի դեմ, որի թիկունքում այս անգամ արդեն ամուր կանգնել էր բրիտանական իմպերիալիզմը: Օգտվելով անգլիացիների աջակցությունից՝ Ադրբեջանի իշխանությունները շարունակեցին Ղարաբաղի և Զանգեզուրի նկատմամբ վարվող իրենց գավթողական քաղաքականությունը: Գեներալ Թոմսոնը, ընդառաջելով Ադրբեջանի կառավարության ղեկավար Ֆաթալի Խան-Խոյսկու դիմումին, Բաքվից Ջորավար Անդրանիկին նամակով հրահանգեց դադարեցնել զորաշարժը դեպի Շուշի՝ շեշտելով, որ արշավանքը չդադարեցնելու դեպքում հազիվ թե Փարիզի խաղաղության վեհաժողովը որոշում ընդունի հօգուտ հայերի, այդ թվում՝ Արցախի և Զանգեզուրի պատկանելության հարցերը քննարկելիս [3]: Անդրանիկը տեղի տվեց և թողնելով Զաբուղի ձորը՝ վերադարձավ Գորիս: Խոչընդոտելով Անդրանիկի Ղարաբաղ ստնելուն՝ փաստորեն Անգլիան փրկեց Ադրբեջանին Ղարաբաղը կորցնելու վտանգից:

1918 թ. դեկտեմբերի վերջերին գեներալ Վ. Թոմսոնը Բաքվում հանդես եկավ մի պաշտոնական հայտարարությամբ՝ նշելով, որ Մեծ Բրիտանիան Ադրբեջանի տարածքը համարում է միասնական ամբողջականություն և այդ տարածքի վրա ճանաչում է մի իշխանություն՝ ադրբեջանականը: Միասնական տարածքում նա ընդգրկում էր նաև Ղարաբաղը և Զանգեզուրը [6, 33]: Կովկասում անգլիական զորքերի հրամանատարության անմիջական մասնակցությամբ ու ջանքերով կազմակերպվում էր հարավարևմտյան մեծ Ադրբեջան, որի սահմաններում պետք է ներառնվեին նաև Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևան-Շարուրի և Սուրմալուի գավառները [14, 245]:

Ադրբեջանի պաշտամենտի 1918թ. դեկտեմբերի 30-ի նիստում գոր. Թոմսոնի հայտարարության մասին ռուսալեզու «Ազերբայջան» թերթը հաղորդագրություն տարածեց, որում մասնավորապես ասվում էր, որ. «Խոսք վերցնելով, Ահմեդ Աղանը մասնավորապես ասում է, որ Քառյակ դաշինքի պարտությունից հետո Ադրբեջանը դաշնակիցներին ոչ մի դիմադրություն ցույց չի տվել, ավելին, ինչ-որ չափով նույնիսկ նպաստել է, որ նրանք գան Անդր-

կովկաս: Մեր ժողովուրդը, նշել էր նա, դաշնակիցների առջև «լայնորեն և հավատով բացել է Ադրբեջանի հյուրասեր գիրկը»: Եվ պետք է ասել, որ մեր վստահությունը մեզ չի դավաճանել. դաշնակիցների գորքերի պետ գոր. Թումսունը... հայտարարում է, որ նա Ադրբեջանի սահմաններում ճանաչում է միայն մի օրինական կառավարություն՝ ադրբեջանականը, որին էլ ցույց կտա իր աջակցությունը: Պարոններ, մի թե սա առաջին քայլը չէ Ադրբեջանի Հանրապետության ամբողջականության պահպանման» [27]: Իր հերթին Ռասուլզադեն, պառլամենտի նույն նիստում ելույթ ունենալով Մուսավաթի խմբակցության կողմից, ասում է. «Հյուր եկած դաշնակիցները մեզ խոստանում են իրենց աջակցությունը: Հետևապես, մեր դեմ գործող տարրերը պետք է հասկանան, որ դաշնակիցների ուժերը պաշտպանում են Ադրբեջանի օրինական իրավունքները: Դա մեր հակառակորդներին կստիպի մտածել, որ ադրբեջանական ինքնուրույնության ոչնչացման գործում նրանք ոչ մի աջակցություն չեն ստանա դաշնակիցներից: Նրանք կհամոզվեն, որ իրենց հույսը խաբուսիկ է և որ ադրբեջանական ժողովուրդը երբեք չի զիջի իր իրավունքները և բոլոր ուժերով կպաշտպանի դրանք: Դաշնակից ուժերի ղեկավարի հայտարարությունը նրան էլ ավելի է թևավորում ու ոգեշնչում իր ինքնուրույնության պաշտպանության խնդրում» [27]:

Ակնհայտ է, որ հակառակորդներ ասելով առաջին հերթին նկատի ունեին Հայաստանի Հանրապետությանը:

Ադրբեջանի անկախ հանրապետության ձեռքում նավթի գտնվելը և ընդհանրապես Ռուսաստանից Ադրբեջանի անջատվելը ձեռնտու էին անգլիացիների համար: Ադրբեջանի կառավարությունը, այդ հանգամանքն օգտագործելով, գրանցեց դիվանագիտական հաջողություններ [16, 155]: Ադրբեջանն իր շահն առաջ տանելու վարպետության շնորհիվ կարողացավ Անգլիային օգտագործել Հայաստանի նկատմամբ իր զավթողական ծրագրերի իրականացման հարցում: Ղարաբաղի, Ջանգեզուրի ու Նախիջևանի հարցում Ադրբեջանի ու Հայաստանի վեճում անգլիական հրամանատարությունը բռնեց Ադրբեջանի կողմը [21, 196]: Հայկական երկրամասերն Ադրբեջանին հանձնելը անգլիական հրամանատարությունը բացատրում էր նրանով, որ ՀՀ-ին միացվելու էին Օսմանյան կայսրության արևելյան վիլայետների լայնարձակ տարածքներ, ուստի Ղարաբաղը և Ջանգեզուրը դիտում էր որպես տարածքային փոխհատուցում ԱՂՀ-ին, առավել ևս, որ արևմուտքում տարածքների ձեռքբերումը ԱՂՀ-ի համար բացառվում էր [10, 162]: Դրանով բրիտանական քաղաքականությունն, ըստ իրենց՝ բրիտանացիների, դրսևորում էր իր անկողմնակալությունը: Բացի այդ, Ղարաբաղն ու Ջանգեզուրը ԱՂՀ-ին հանձնելով՝ անգլիացիները առաջացնում էին լարվածության մշտական օջախ տարածաշրջանում՝ պահպանելով իրենց միջամտության հնարավորությունը և դրանով իսկ՝ ազդեցությունը թե Երևանի և թե Բաքվի վրա:

Անդրկովկասում անգլիական գորքերի հրամանատար գեներալ Ֆորեստիե Ուոքերը փետրվարի 19-ին ՀՀ կառավարությանը խիստ կերպով նախագովջացրեց վիճելի տարածքները գեներալ ուժով գրավելու անթույլատրելիության մասին ու պահանջեց սպասել Փարիզում խաղաղ խորհրդաժողովի վերջնական որոշմանը: Փաստորեն ՀՀ-ից պահանջվում էր ուժ չգործադրել գրավելու համար մի տարածք, որն արդեն իսկ գտնվում էր ՀՀ իշխանության ներքո, և միաժամանակ խրախուսվում էր Ադրբեջանի կողմից քաղաքական և ռազմական ճնշման գործադրումը Ղարաբաղի և Ջանգեզուրի հայությանը հպատակեցնելու համար: Չնայած այն հանգամանքին, որ անգլիացիներն ամեն անգամ շեշտում էին Ղարաբաղի և Ջանգեզուրի նկատմամբ ԱՂՀ-ի իշխանության ժամանակավոր բնույթը, ինչը չէր կարող որևէ կերպ պայմանավորել այդ շրջանների պատկանելիության հարցի վերջնական լուծումը: Անգլիացիները, մոռանալով վիճելի հայտարարված հայկական գույգ երկրամասերի պատկանելիության հարցը Փարիզի վեհաժողովում քննության առնելու իր կառավարության խոստումները, կանգնեց մուսավաթականների հավակնությունների աներկբա պաշտպանության դիրքերում: Ավելին՝ անգլիացիները բոլոր միջոցներով օգնում էին Ադրբեջանի

կառավարությանը՝ զենքի ուժով իր իշխանությունը Արցախի և Զանգեզուրի վրա հաստատելու նրա նկրտումներում:

At the conclusion of the *Introduction to Tourism* course, students reported that the structured integration of scaffolding strategies facilitated their engagement with the final group project. According to post-course reflections and feedback, students found it easier to plan, sequence, and execute the project tasks, as the scaffolded activities throughout the semester had prepared them for complex problem-solving and project management.

Students indicated that scaffolding improved both their individual and collective performance. The majority of students showed improvement from Semester 1 to Semester 2 (See Table 1). Increases in both average and median scores indicate an overall positive trend, while a smaller number of students performed worse, suggesting areas for targeted support. Students improved quality of the group project, with clearer planning, stronger application of concepts, and more developed analytical reasoning.

*Table 1*

***Student performance comparison across Semesters 1 and 2***

<b><i>Metric</i></b>	<b><i>Comparison of Semester 1 and Semester 2</i></b>
<b>Students improved</b>	24 out of 44
<b>Students worsened</b>	12 out of 44
<b>Students unchanged</b>	6 out of 44

***The results suggest that the deliberate integration of scaffolding in the curriculum design of specialized tourism courses combining with other pedagogical techniques and methods can enhance both student learning processes and practical project outcomes.***

**Limitations**

A key limitation of this study is that the effectiveness of scaffolding in tourism higher education depends heavily on learners’ prior knowledge, skills, and learning styles. Although questionnaires were designed to assess student knowledge and understanding, they provided only a limited view of individual learning processes. More detailed, continuous observation of each learner’s Zone of Proximal Development (ZPD) would be necessary to fully capture how students interacted with scaffolding support, how effectively they internalized guidance, and where adjustments might have further optimized learning. Additionally, the study was conducted in a domestic course with Armenian students using their native language, so the cultural and linguistic context was relatively homogeneous; future research should consider cultural diversity as a factor influencing the design and effectiveness of scaffolding strategies.

Finally, because the study focused on a single course and a specific student cohort, the generalizability of the findings is constrained. The effectiveness of scaffolding strategies may differ in other tourism courses, in different institutional contexts, or with students of varying professional and academic experience levels. Future research could address these limitations by combining detailed ZPD-based observations, statistical analysis of project outcomes, and long-term assessment across multiple courses and cohorts to better understand the peculiarities of scaffolding in tourism higher education.

**Conclusion**

The findings suggest that scaffolding provides an effective instructional strategy for tourism courses in higher education. Well-designed and, where possible, customized scaffolding materials, used by an educator who manages access to these tools, allow learners to engage in activities within

their ZPD and make meaningful learning discoveries. This approach can enable students in tourism courses to better transfer theoretical knowledge into practical skills, help reduce difficulties during complex tasks, and enhance the overall quality of their project outcomes. While developing effective, tailored scaffolding tools is challenging, it is essential for genuinely educative teaching. The study may be particularly useful for educators, curriculum designers, and researchers aiming to improve instructional practices in tourism programs.

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-193>

### **Bibliography**

1. Ashurov N. Advantages of Teaching Tourism Terminology Using the Scaffolding Method, *International Journal of Artificial Intelligence*, Vol. 5(03), 2025, p. 1338-1341.
2. Belland B. R. *Instructional Scaffolding: Foundations and Evolving Definition*, Springer Nature, 2016, p. 17-19, doi:10.1007/978-3-319-02565-0\_2
3. Bloom B. S., Engelhart M. D., Furst E. J., Hill W. H., Krathwohl D. R. *Taxonomy of Educational Objectives: The Classification of Educational Goals. Handbook 1: Cognitive Domain*, Longman, 1956, p. 120-125.
4. Bruner J. S. Play, Thought, and Language, *Peabody Journal of Education*, 1983, p. 60-69, doi: 10.1080/01619568309538407
5. Dermawan E., Sunarno W. The Effect of Discovery Learning Model with Scaffolding on Students' Cognitive Learning Outcome at Tourism Area in the Special Region of Yogyakarta. *Advances in Social Science, Education and Humanities Research*, 2018, p. 262, 90-96, doi:10.2991/icctte-18.2018.15
6. Lunzer E., Gardner K. *The Effective Use of Reading*, United Kingdom. 1979, p. 240-285.
7. Pea R. D. The Social and Technological Dimensions of Scaffolding and Related Theoretical, *Journal of the Learning Sciences*, 2004, p. 423-451, doi:10.1207/s15327809jls1303\_6
8. Pintrich P. R. The Role of Metacognitive Knowledge in Learning, Teaching, and Assessing. *Theory into Practice.*, 2002, p. 219-225. doi: 10.1207/s15430421tip4104\_3
9. Ruhanen L. Bridging the Divide Between Theory and Practice, *Journal of Teaching in Travel & Tourism*, Vol. 5, 2005, p. 33-51, doi:10.1300/J172v05n04\_03
10. Sinha C., Vygotsky L. S. Internalization, *Evolution*. 1992, p. 99-122. Retrieved from [https://www.researchgate.net/publication/365730830\\_Vygotsky\\_Internalisation\\_Evolution](https://www.researchgate.net/publication/365730830_Vygotsky_Internalisation_Evolution) (watched 25.05.2025)
11. Smith W. W. Incorporating an Instructional Scaffolding Approach into the Classroom: Teaching for Authentic Learning in Hospitality and Tourism Education. *Journal of Teaching in Travel & Tourism*, 2015, p. 264-265. doi:10.1080/15313220.2015.1059306
12. Taber K. S. Scaffolding Learning: Principles for effective teaching and the design of classroom resources. *Science Education Centre*, Vol. 2, 2017, p. 73-74.
13. Vygotsky L. S. *Mind in society: The development of higher psychological processes*, 1978, p. 9-14, 31-91.
14. Հովհաննիսյան Ա. Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության բարձրագույն կրթության համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի «Բանբեր», Երևան, 2024, էջ 25-36, doi: 10.51307/182931072015233260-24.67-26
15. Մինասյան Ա., Համակցված ուսուցման արդյունավետությունը «Զբոսաշրջություն» և «Մերվիս» մասնագիտությունների մասնագիտական առարկաների դասավանդման գործընթացում, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի «Բանբեր», Երևան, 2024, էջ 164, doi:10.51307/182931072015233260-24.67-160

## **«Փայտամած» ուսուցման ռազմավարության կիրառության արդյունավետությունը զբոսաշրջության մասնագիտական դասընթացների ուսուցման գործընթացում**

*Մինասյան Աննա*

### **Անվտոմում**

***Հանգուցային բառեր.** փայտամած, մոտակա զարգացման գոտի, զբոսաշրջության բարձրագույն կրթություն, ուսումնական ծրագրի նախագծում*

Սույն հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է «փայլտամած» ուսուցման ռազմավարության արդյունավետությունը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդվող զբոսաշրջության մասնագիտական առարկաների ուսուցման գործընթացում: Աշխատանքում ուսումնասիրվել են «փայտամած» ռազմավարության գործիքներ, որոնք կարող են օգնել ուսանողներին ավելի արդյունավետ կիրառել տեսական գիտելիքները գործնականում, զարգացնել քննադատական մտածողությունը և կատարել ավելի բարդ առաջադրանքներ, ինչպիսիք են խմբային նախագծերը:

Ուսումնասիրությունը իրականացվել է «Զբոսաշրջության հիմունքներ» դասընթացի շրջանակում, որտեղ «փայտամած» ռազմավարության գործիքները ինտեգրվել են դասընթացի նախագծման ընթացքում: Նպատակն էր «փայտամած» ռազմավարության համապատասխան գործիքների միջոցով ուսանողներին ցուցաբերել համակարգված աջակցություն՝ ելնելով յուրաքանչյուր ուսանողի մոտակա զարգացման գոտուց և նրանց աստիճանաբար ուղղորդելով դեպի ինքնուրույն գործունեություն: Տվյալների հավաքագրման մեթոդներն ընդգրկել են հարցաթերթիկներ, դասընթացի ավարտին ուսանողների կարծիքների ուսումնասիրման վերաբերյալ բանավոր հարցում և խմբային նախագծային աշխատանքների արդյունքների վերլուծություն:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ «փայտամած» ուսուցման ռազմավարությունը օգնել է ուսանողներին ավելի համակարգված ծրագրել և իրականացնել նախագծային աշխատանքը: Խմբային նախագծերը նախորդ կիսամյակի համեմատ առանձնացել են տեսական գիտելիքների ավելի խորքային կիրառմամբ և կառուցվածքով:

Այսպիսով, լավ մշակված և ուսանողների պահանջմունքներին հարմարեցված «փայտամած» ռազմավարության գործիքակազմը, համակցված այլ ժամանակակից դասավանդման մեթոդների հետ, կարող են բարելավել ուսումնառության արդյունքները զբոսաշրջության մասնագիտական դասընթացներում:

Սույն հետազոտությունը կարող է կիրառվել բարձրագույն ուսումնական հաստատություններում զբոսաշրջության մասնագիտական առարկաներ դասավանդողների կողմից ծրագրերի արդյունավետ նախագծման համար:

# Скаффолдинг в образовании по туризму: повышение эффективности обучения и готовности к профессиональной деятельности

**Минасян Анна**

## Резюме

**Ключевые слова:** скаффолдинг, зона ближайшего развития, высшее образование в сфере туризма, разработка учебной программы

В исследовании рассматривается применение скаффолдинга для повышения эффективности обучения на специализированных курсах по туризму в системе высшего образования Армении. Основное внимание уделяется формированию у студентов навыков практического применения теоретических знаний, критического мышления и успешного выполнения сложных заданий, включая групповые проекты.

Методы скаффолдинга были интегрированы в курс «Введение в туризм», обеспечивая постепенное сопровождение студентов от структурированной поддержки к самостоятельному выполнению задач в рамках их зоны ближайшего развития. Для оценки результатов использовались опросы, анализ обратной связи студентов и оценка итоговых групповых проектов.

Результаты показали, что скаффолдинг способствовал более эффективной организации и планированию проектной работы, повышению аналитических навыков и глубокому применению теоретических концепций. Итоговые проекты отличались структурированностью и высоким уровнем критического мышления.

Выводы исследования подтверждают, что адаптированные материалы скаффолдинга в сочетании с активным педагогическим руководством значительно повышают образовательные результаты, способствуют готовности студентов к профессиональной деятельности и помогают преподавателям разрабатывать практико-ориентированные курсы по туризму.

Ներկայացվել է 01. 10. 2025 թ.

Գրախոսվել է 25. 10. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**«Ղեկավարի ուսումնասիրություն» (Case study) մեթոդի կիրառումը  
զբոսաշրջության բուհական դասընթացներում**

*Միմոնյան Նարինե*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-202>

*Հանգուցային բառեր. դասավանդման մեթոդ, իրավիճակային վերլուծություն, ինտե-  
րակտիվ մեթոդ, զբոսաշրջություն, բարձրագույն կրթություն*

**Նախաբան**

Ժամանակակից հասարակության դինամիկ փոփոխություններն անհատին դնում են ընտրության առջև. ձեռք բերել նոր հմտություններ՝ արագ փոփոխվող պայմաններին ի պատասխան, կամ հանդիպել անձնական և մասնագիտական խոչընդոտների: Այս մարտահրավերն առավել արդիական է մասնագիտական ոլորտում, որտեղ արդյունավետ և հիմնավորված որոշումներ կայացնելու կարողությունը որոշիչ դեր ունի մասնագիտական առաջընթացում:

Զբոսաշրջության ոլորտում նույնպես, տարբեր իրավիճակներում արագ և ճշգրիտ կողմորոշվելու համար, մասնագետից պահանջվում են որոշակի հմտությունների և կարողությունների առկայություն. վերլուծական և քննադատական մտածողություն, սեղմ ժամկետում ստեղծված իրավիճակից ռազմոնալ ելք գտնելու կարողություն, միջանձնային շփման հմտություն և այլն:

Նախկինում այդ որակները ձևավորվում էին մասնագիտական գործունեության ընթացքում: Այնուամենայնիվ, ժամանակակից հասարակության զարգացման տեմպերը պահանջում են, որ անհատն անհրաժեշտ գործնական հմտություններին տիրապետի արդեն ուսումնական գործընթացի ավարտին:

Սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դասավանդման ավանդական մեթոդները հաճախ բավարար չեն աշխատաշուկայի ժամանակակից մարտահրավերներին արձագանքելու համար, ինչն առաջացնում է ինտերակտիվ մեթոդների կիրառման անհրաժեշտություն, հատկապես զբոսաշրջության բուհական դասընթացներում: Ինտերակտիվ մեթոդներից է «ղեկավարի ուսումնասիրություն» (case study) մեթոդը, որը ձևավորում և զարգացնում է քննադատական մտածողություն, հաղորդակցվելու և մի շարք այլ հմտություններ՝ ապահովելով ուսանողների ապագա մասնագիտական արդյունավետ գործունեությունը:

Հոդվածի նպատակն է հիմնավորել «ղեկավարի ուսումնասիրություն» մեթոդի կիրառման արդյունավետությունը զբոսաշրջության բուհական դասընթացներում:

Նպատակով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել «ղեկավարի ուսումնասիրություն» մեթոդի տեսական հիմքերը,
- համեմատական վերլուծության ենթարկել դասավանդման ինտերակտիվ և ավանդական մեթոդները (դասախոսություն, սեմինար)՝ բացահայտելով «ղեկավարի ուսումնասիրություն» մեթոդի կիրառման առավելություններն ու սահմանափակումները,
- մշակել և փորձարկել «ղեկավարի ուսումնասիրություն» մեթոդի օրինակ՝ կիրառելով «Կայուն զբոսաշրջություն և ղեկավարի կառավարում» դասընթացի ընթացքում,
- չափել մշակված օրինակի արդյունավետությունը զբոսաշրջության մասնագիտական դասընթացում՝ հիմնավորելով մեթոդի կիրառման նպատակահարմարությունը:

Հետազոտության նորույթն այն է, որ հոդվածում համատեղվում են «ղեկավարի ուսումնա-

սիրություն» մեթոդի տեսական հիմքերը և զբոսաշրջության բուհական կրթության մեջ դրա կիրառման գործնական առաջարկը:

Հոդվածում օգտագործվել են մասնագիտական գրականության, փաստաթղթերի ուսումնասիրության, համեմատական վերլուծության մեթոդները, ինչպես նաև հարցման մեթոդով դուրս են բերվել «դեպքի ուսումնասիրություն» մեթոդի կիրառման արդյունավետության առանցքային գործոնները:

Հոդվածը տեսական մակարդակում համալրում է դասավանդման մեթոդների վերաբերյալ մասնագիտական գիտական նյութերի շարքը: Գործնական մակարդակում առաջարկում է մեթոդի կիրառման օրինակ, որը կարող է գործարկվել զբոսաշրջության կրթական գործընթացում:

### **«Դեպքի ուսումնասիրություն» մեթոդի ձևավորման փուլերը**

«Դեպքի ուսումնասիրություն» (Case study) մեթոդի կիրառման առաջին փաստաթղթավորված օրինակները վերաբերում են Հարվարդի համալսարանի իրավաբանական դպրոցի 1870-ական թվականների կրթական գործընթացին, առավել համակարգված այն կիրառվել է 1920-1921 թվականներին Հարվարդի բիզնես դպրոցի կրթական ծրագրերում [1]: Մեթոդն այդ շրջանում դիտարկվում էր որպես դասախոսությունների լրացում՝ գործարար ոլորտի կոնկրետ խնդիրների վերաբերյալ վերլուծությունների, քննարկումների ձևով:

Ժամանակի ընթացքում մեթոդը տարածում գտավ ոչ միայն ԱՄՆ-ի, այլև Եվրոպայի, Ասիայի առաջատար կրթական հաստատություններում: 20-րդ դարի կեսերին այն արդեն կիրառվում էր տնտեսագիտության, կառավարման, բժշկության և սոցիալական գիտությունների դասավանդման գործընթացում [10]:

Ընդունված է տարբերակել «դեպքի ուսումնասիրություն» մեթոդի կիրառման երկու դասական մոտեցում՝ Հարվարդի (ամերիկյան) և Մանչեսթերի (եվրոպական): Ամերիկյան մոտեցումը խրախուսում է գտնել խնդրի միակ ճիշտ լուծումը, մինչդեռ Եվրոպականը կենտրոնանում է խնդրի բոլոր հնարավոր լուծումները գտնելու, հավանական տարբերակների տարատեսակությունը ընդգծելու վրա [2]:

Մեթոդը հիմնվում է իրական դեպքերի կամ հորինված, մտացածին, սակայն իրատեսական իրավիճակների վրա [6]: Սույն հոդվածում այդ իրավիճակներին վերաբերող կրթական փաթեթները կանվանվեն «դեպք»:

Խմբավորելով հետազոտողների տեսակետները մեթոդի կիրառման արդյունքների վերաբերյալ՝ ստացել ենք հետևյալ պատկերը.

- նպաստում է վերլուծական, քննադատական և ստեղծագործ մտածողության զարգացմանը [3, 8],
- համատեղում է տեսությունն ու պրակտիկան կրթական առաջադրանքներում՝ ամրապնդելով դրանց կապը [8, 5],
- համակողմանի է դարձնում մասնագիտական ոլորտի վերաբերյալ տեսական գիտելիքները կոնկրետ իրավիճակների վերլուծության միջոցով [5],
- մասնագիտական իրավիճակների մոդելավորման միջոցով թույլ է տալիս ապագա մասնագետներին ոչ միայն լուծել խնդիրը, այլ նաև կանխատեսել իրավիճակի հետագա զարգացումը [9],
- զարգացնում է որոշում կայացնելու, վճռական գործելու հմտությունները և կարողությունները [3],
- բարելավում է քննարկելու, գեկույցներ պատրաստելու և ներկայացնելու, թիմային արդյունավետ համագործակցության հմտությունները [7, 3]:

Ամփոփելով նշենք, որ «դեպքի ուսումնասիրություն» մեթոդը հնարավորություն է տալիս ուսանողներին իրականացնել համակողմանի վերլուծություններ և քննարկումներ՝

անդրադառնալով ոլորտի տարբեր խնդիրներին, ինչպիսիք են ճգնաժամերի կառավարումը (քաղաքական անկայունություն, բնական աղետներ, համավարակներ), կայուն զբոսաշրջության ռազմավարությունները, մարքեթինգը և այլն [4]:

**«Ղեկավարող ուսումնասիրություն» մեթոդի կիրառումը զբոսաշրջության մասնագիտական դասընթացներում. առավելությունների և սահմանափակումների վերլուծություն**

Զբոսաշրջությունը ներառում է տնտեսագիտության, մշակույթի, էկոլոգիայի, կառավարման և այլ ոլորտների տարրեր, որով էլ պայմանավորվում է միջգիտակարգային մոտեցման անհրաժեշտությունը այս մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և կազմակերպման գործընթացում: Զբոսաշրջության բուհական կրթությունը պարբերաբար բարեփոխվում է, որի հիմքում ընկած են աշխատաշուկայի նոր պահանջներն ու կրթական նոր մոտեցումները: Հատկապես կարևորվում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը, մասնավորապես «ղեկավարող ուսումնասիրություն» մեթոդը [10]:

Սույն հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի (ԲՊՀ) «Զբոսաշրջություն» մասնագիտության կրթական ծրագրի առարկայական նկարագրերը, ուսումնամեթոդական նյութերը, անցկացվել է հարցազրույց դասախոսների շրջանում (տասնհինգ մասնագետ): Հարցերը միտված էին մեթոդի կիրառման պայմանների, առանձնահատկությունների բացահայտմանը և արդյունավետության հիմնավորմանը:

Ամփոփելով ուսումնասիրության և հարցազրույցների արդյունքները՝ հարկ է նշել, որ մեթոդը կիրառվում է նշված կրթական ծրագրի գրեթե բոլոր մասնագիտական դասընթացներում (մոտ 84 %): Հատկանշական է, որ այն դասընթացները, որոնց վերջնարդյունքներում առկա է հաշվողական, ֆինանսական, կառավարչական հմտությունների, կարողությունների զարգացումը, հիմնականում կիրառվում են այնպիսի «ղեկավարող», որոնցում նկարագրվում է մտացածին իրավիճակ՝ չգործող կազմակերպություն, հնարավոր ֆինանսական խնդիրներ և այլն: Առաջադրվող իրավիճակներն իրատեսական են. կարող են ոլորտում հանդիպել ապագա մասնագետին, սակայն, հաշվի առնելով ֆինանսական և այլ տվյալների գաղտնիությունը, «ղեկավարող» կոնկրետ որևէ կազմակերպության առնչվող փաստ չի նշվում:

Ի հակադրություն դրանց՝ այն դասընթացները, որոնց վերջնարդյունքներում գերակշռում են զբոսաշրջային արդյունք ձևավորելու, զբոսաշրջային ծառայություններ մատուցելու հմտությունների և կարողությունների զարգացումը, առաջարկվող «ղեկավարող» իրական են: Այս տարբերակում էլ կարող ենք հանդիպել կազմակերպությունների կամ մասնագետների անունների փոփոխության՝ մասնագիտական էթիկայի պահանջներից ելնելով:

Բոլոր դեպքերում մեթոդը կիրառելիս հաշվի են առնվում ուսանողների տեսական գիտելիքների մակարդակը, վերլուծական աշխատանքներ, զեկույցներ պատրաստելու կարողությունը և մի շարք այլ գործոններ:

Զբոսաշրջության մասնագիտական դասընթացներում «ղեկավարող ուսումնասիրություն» մեթոդի կիրառման օրինակների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու մեթոդի մի շարք առանցքային առավելություններ և սահմանափակումներ, որոնք համակարգված ներկայացված են ստորև.

**Մեթոդի կիրառման առավելությունները զբոսաշրջության բուհական դասընթացներում**

**Կիրառական ուղղվածություն.** Ի տարբերություն տեսական նյութի պասիվ յուրացման՝ այս մեթոդը ուսանողներին «տեղակայում» է ռեալ կամ մոդելավորված պրոֆեսիոնալ իրավիճակներում՝ նպաստելով մասնագիտական կարողունակությունների ձևավորմանը և զարգացմանը:

**Քննադատական և վերլուծական մտածողության զարգացում.** մինչ դասախոսությունները, սեմինարները կենտրոնանում են տեսական նյութի յուրացման և կրկնության վրա, «դեպքի» վերլուծությունը պահանջում է տեղեկության համադրում, համեմատություն, այլընտրանքային տարբերակների գնահատում և փաստարկված ընտրություն՝ խթանելով մտածողության գործընթացները:

**Դասապրոցեսին ներգրավվածության բարձր մակարդակ.** որպես կանոն, «դեպքի» հետ աշխատանքն ուսանողների մոտ առաջացնում է ավելի մեծ հետաքրքրություն և մոտիվացիա, քան ավանդական դասախոսությունները: Խմբային քննարկումների և բանավեճերի միջոցով ուսանողները դառնում են գիտելիքի ակտիվ «ստեղծողներ», այլ ոչ թե պասիվ «սպառողներ»:

**Հաղորդակցական և թիմային աշխատանքի հմտությունների ձևավորում.** դեպքերի քննարկումը զարգացնում է գաղափարների հստակ ձևակերպման, հանրային ելույթների և կառուցողական բանավեճի կարողություն, ինչն առանցքային է զբոսաշրջության ոլորտի մասնագետների համար:

### **Մեթոդի կիրառման սահմանափակումները զբոսաշրջության բուհական դասընթացներում**

**Ժամանակային և կազմակերպչական ռեսուրսների անհրաժեշտություն.** մեկ «դեպքի» մշակումն ու իրագործումը զգալիորեն ավելի շատ ժամանակ և կազմակերպչական ռեսուրսներ է պահանջում, քան ավանդական դասախոսությունը, ինչը հանգեցնում է դասավանդողի ծանրաբեռնվածության աճին:

**Դասավանդողի դերի վերափոխման անհրաժեշտություն.** մեթոդի կիրառումը պահանջում է, որ դասավանդողը դառնա կրթական գործընթացի համակարգող և մոդերատոր՝ հեռանալով «տեղեկատուի» ավանդական դերից: Այս վերափոխումը պահանջում է մասնագիտական պատրաստվածություն՝ խմբային աշխատանքը կազմակերպելու, քննարկումներն արդյունավետ կառավարելու և վերլուծական եզրակացությունների հանգեցնելու համար:

**Ոչ համակարգված գիտելիքների ձևավորման վտանգ.** մեթոդի «մեկուսացված» կիրառումը, առանց նախնական տեսական հիմքի յուրացման, կարող է հանգեցնել ուսանողների մոտ մակերեսային և ոչ համակարգված գիտելիքների ձևավորմանը: Ավանդական դասախոսությունն ապահովում է հիմնարար տեսության կառուցվածքային և հստակ յուրացում, որը հանդես է գալիս որպես նյութի ընկալման անհրաժեշտ նախապայման:

**Սուբյեկտիվ գնահատման վտանգ.** «դեպքի» վերլուծության արդյունքների գնահատումը, ի տարբերություն թեստերի կամ բանավոր հարցման, ենթակա է սուբյեկտիվության, հատկապես այն դեպքերում, երբ բացակայում են գնահատման նախապես մշակված հստակ չափանիշները:

Համեմատական վերլուծության արդյունքները հաստատում են, որ «դեպքի ուսումնասիրություն» մեթոդը պետք է դիտարկել ոչ թե որպես ավանդական մեթոդների փոխարինում, այլ որպես դրանց օրգանական լրացում: Մեթոդի առավելագույն արդյունավետությունն ապահովվում է ինտեգրված մոտեցմամբ, որի շրջանակում դասախոսությունը հանդես է գալիս որպես հիմնարար տեսական հիմքի աղբյուր, սեմինարը՝ որպես գիտելիքների ամրապնդման մեխանիզմ, իսկ «դեպքի» ուսումնասիրությունը ստեղծում է գործնական կոնտեքստ՝ ձեռք բերված կարողունակությունների կիրառման և զարգացման համար:

### **Մեթոդի կիրառումը «Կայուն զբոսաշրջություն և դեստինացիայի կառավարում» դասընթացում**

Որպես մեթոդի կիրառման օրինակ, ներկայացվում է «Կայուն զբոսաշրջություն և դես-

տինացիայի կառավարում» դասընթացի համար կազմված «դեպքը», որը մշակվել է դասընթացի վերջնարդյունքներին համապատասխան: Փորձարկումը իրականացվել է ԲԴՀ «Զբոսաշրջություն» մասնագիտության 3-րդ կուրսում (34 ուսանող):

Հետազոտության համար ընտրվել է թեմա՝ «Կայուն զբոսաշրջության զարգացման մարտահրավերները Հայաստանի Հանրապետության մարզերում»: Թեմայի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն բազմաբովանդակ է և ընդգրկում է «Դեստինացիայի կառավարում. շահառուների ներգրավվածություն և ռեսուրսների կայուն օգտագործում», «Կայուն զբոսաշրջության պլանավորում. տնտեսական, բնապահպանական և սոցիալ-մշակութային հավասարակշռություն» և այլ ենթաթեմաներ:

Ընտրված թեմայի շրջանակում սահմանվել է հետևյալ նպատակը՝ բացահայտել ՀՀ մարզերում զբոսաշրջության կայուն զարգացման մարտահրավերները՝ քննելով շահառուների ակտիվ մասնակցության և ռեսուրսների կայուն օգտագործման համատեղման խոչընդոտներն ու հնարավորությունները:

Նպատակով պայմանավորված առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- կատարել շահառուների քարտեզագրում (stakeholder mapping),
- ներկայացնել ՀՀ մարզերի (յուրաքանչյուր խումբ մեկ մարզի) զբոսաշրջային ռեսուրսները,
- վերլուծել ռեսուրսների կայուն կառավարման գործիքները,
- քննել հիմնական շահառուների (տեղական համայնք, զբոսաշրջային օպերատորներ, տեղական ինքնակառավարման մարմին, հասարակական կազմակերպություններ) շահերի համընկնումներն ու հակադրությունները,
- բացահայտել ռեսուրսների կայուն կառավարման մարտահրավերները, ինչպես նաև շահառուների համագործակցությունը խթանող մեխանիզմները (հանրային լուսմներ, համատեղ խորհուրդներ և այլն):

Ձևավորվել են 3-4 հոգանոց աշխատանքային խմբեր, որոնցից յուրաքանչյուրի համար նախատեսվել է Հայաստանի Հանրապետության կոնկրետ մարզում առկա հիմնախնդրին վերաբերող «դեպք»: Նման տարանջատումը հնարավորություն է տվել խուսափել աշխատանքների կրկնությունից, ապահովել դրանց համապարփակությունը և ամփոփիչ քննարկման ընթացքում վերլուծել հանրապետության բոլոր մարզերում առկա խնդիրները:

Դասավանդողը ներկայացրել է բարդության մակարդակով ուսանողների պատրաստվածությանը համապատասխան մշակված «դեպքեր», դրանցից յուրաքանչյուրի նկարագրությունը, նպատակը, խնդիրները և արդյունքների գնահատման չափանիշները: Բոլոր խմբերին տրամադրվել են թեմային առնչվող նյութեր, ներառյալ գիտական գրականությունը, հոդվածները, պաշտոնական փաստաթղթերը և այլ աղբյուրներ:

Մասնակիցները սահմանված ժամկետում (տվյալ դեպքում՝ երկու շաբաթ) ուսումնասիրել են տրված փաստաթղթային փաթեթը, համակողմանիորեն վերլուծել խնդիրը, այնուհետև մշակել լուծում-առաջարկներ՝ հաշվի առնելով իրենց ուսումնասիրած մարզում զբոսաշրջության կայուն զարգացման հնարավորությունները: Վերլուծության արդյունքներն ամփոփվել են երեքից հինգ էջանոց փաստաթղթում, քննարկմանը ներկայացվել գեկույցի տեսքով:

Եզրափակիչ փուլում ամփոփվել են կատարված աշխատանքների արդյունքները, գնահատվել է ներկայացված լուծումների արդյունավետությունը, նաև՝ ընդհանրացվել ուսումնական նյութը և հիմնական եզրակացությունները: Այս փուլում կարևորվել է թվացյալ միևնույն խնդրին, տվյալ մարզի ռեսուրսների և ենթակառուցվածքների առանձնահատկություններով պայմանավորված, այլ լուծում առաջադրելու ունակությունը:

Գնահատման հիմնական չափանիշներ են սահմանվել առաջադրված խնդիրների հա-

մապարփակ վերլուծությունը, եզրակացությունների հիմնավորվածությունը, հիմնախնդրի լուծման առաջարկվող տարբերակների իրագործելիությունը, քննարկումներին ակտիվ մասնակցությունը:


Մեթոդի կիրառման արդյունավետությունը չափվել է ուսանողների գիտելիքների նախնական և եզրափակիչ թեստավորման արդյունքների համեմատությամբ:

Հետազոտության մեթոդաբանությունը ներառել է գիտելիքների և հմտությունների գնահատման բազմաբնույթ մոտեցում: Տեսական պատրաստվածությունը, ինչպես նաև քննադատական և վերլուծական մտածողությունը գնահատվել են կիսափակ և փակ հարցերի միջոցով: Ի հավելումն այդ օբյեկտիվ չափումների, հաղորդակցման հմտությունների դինամիկան բացահայտվել է ուսանողների ինքնագնահատման միջոցով: Ըստ այդմ հարցերը խմբավորվել են երեք բաժիններով:

**Հետազոտության արդյունքների ամփոփում**


Թեստի արդյունքները վերլուծվել են՝ հաշվի առնելով ուսանողների նախնական թեստավորման վարկանիշային գնահատականները, առանձնացվել է երկու խումբ՝ ըստ ԲՊՀ գնահատման սանդղակի 60-84,9 և 85-100 վարկանիշային գնահատական (ՎԳ) ստացած ուսանողներ:

Նախնական թեստավորման արդյունքում 60-84.9 վարկանիշային գնահատական (ՎԳ) ստացած ուսանողների մոտ, ըստ ամփոփիչ թեստավորման տվյալների, առավել բարելավվել են տեսական գիտելիքները (14 %) և հաղորդակցման հմտությունները (18 %), մինչդեռ քննադատական և վերլուծական մտածողությանը վերաբերող հարցաշարում ունենք 6 % դրական տեղաշարժ (գծապատկեր 1):



**Գծապատկեր 1. Թեստերի արդյունքների ամփոփում (նախնական թեստավորման արդյունքում 60-84.9 ՎԳ ստացած ուսանողներ)**

Նախնական թեստավորման արդյունքում 85-100 վարկանիշային գնահատական ստացած ուսանողների թեստերի արդյունքների վերլուծությունը արձանագրել է հետևյալ ցուցանիշները: Այսպես, ամփոփիչ թեստավորման ընթացքում տեսական գիտելիքների յուրացման մակարդակում դիտվել է 5 % դրական տեղաշարժ, վերլուծական հմտությունների բարելավումը կազմել է 15 %, հաղորդակցման հմտություններինը՝ 21 % (գծապատկեր 2):



**Գծապատկեր 2. Թեստերի արդյունքների ամփոփում  
(նախնական թեստավորման արդյունքում 85-100 ՎԳ ստացած ուսանողներ)**

Առաջին խմբի (60-84,9 ՎԳ) տեսական բաժնում արձանագրված դրական փոփոխությունը հիմնականում պայմանավորված է վերլուծական աշխատանքի և քննարկումների ընթացքում տեսական նյութին անդրադառնալու հանգամանքով: Մյուս ցուցանիշների առումով նման արդյունքը պայմանավորում ենք մեթոդի կիրառման առավելություններով: Տեսական գիտելիքների բավարար մակարդակը թույլ կտար ուսանողներին առավել ակտիվ ներգրավվել վերլուծական աշխատանքներին և քննարկումներին, ինչը հաստատում է տեսական նախապատրաստվածության կարևորությունը մեթոդի հաջող կիրառման համար:

Ի հակադրություն՝ երկրորդ խմբում (85-100ՎԳ) նկատվել է տեսական հատվածի թեև դրական, բայց ավելի համեստ տեղաշարժ, որի նշանակալիությունը պայմանավորված է սկզբնական բարձր արդյունքների կայունությամբ և թեև փոքր, բայց աճով: Այս խմբի վերլուծական և քննադատական մտածողության ցուցանիշների բարելավումը հաստատում է մեթոդի դրական ազդեցությունը նաև բարձր պատրաստվածություն ունեցող ուսանողների հետ աշխատանքում:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հաստատում է, որ զբոսաշրջության բուհական դասընթացներում «դեպքի ուսումնասիրություն» մեթոդի կիրառումը բարելավում է ուսանողների պատրաստվածությունը: Ստացված տվյալները վկայում են տեսական գիտելիքների խորացման, վերլուծական մտածողության և հաղորդակցական կարողությունների զարգացման մասին, ինչը հիմնավորում է մեթոդի կիրառման արդյունավետությունը՝ անկախ ուսանողների նախնական պատրաստվածության մակարդակից:

Մասնավորապես, մեթոդը նպաստում է տերմինաբանության գործնական յուրացմանը քննարկումների միջոցով, զարգացնում է փաստերի համադրման և հարցադրումներ ձևակերպելու ունակությունը, ինչպես նաև խթանում բանավոր հաղորդակցությունն ու թիմային աշխատանքը: Մեթոդի ճկունությունը, որն ընդգրկում է մտագրոհի, բանավեճի և դերային խաղի տարրեր, թույլ է տալիս ուսանողներին ակտիվորեն կիրառել տեսական գիտելիքները մասնագիտական համատեքստում՝ ապահովելով գիտելիքների և հմտությունների համալիր զարգացում:

## Եզրակացություն

Զբոսաշրջային բուհական կրթության գործընթացում «դեպի ուսումնասիրություն» մեթոդի կիրառումը թույլ է տալիս համադրել տեսական գիտելիքները և գործնական հմտությունները: Մեթոդը նպաստում է դասախոսության ընթացքում ստացած տեսական գիտելիքների համակարգմանը, ամրապնդմանը, քննադատական մտածողության, որոշումներ կայացնելու հմտությունների և համագործակցային կարողությունների զարգացմանը: Հատկապես ընդգծվում է վերլուծություններ կատարելու և դրանք ներկայացնելու կարողությունների զարգացումը:

Միևնույն ժամանակ, մեթոդի հաջող ներդրումը պահանջում է մանրակրկիտ պլանավորում և բավարար ռեսուրսների ապահովում: Հայաստանյան զբոսաշրջային բուհական կրթության գործընթացում «դեպի ուսումնասիրություն» մեթոդի առավել լայն կիրառումը կարող է նպաստել մրցունակ մասնագետների պատրաստմանը:

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-202>

## Գրականություն

1. Christensen C. Teaching and the Case Method. Boston: Harvard Business School, 1987.
2. Chumak M., Nekrasov S., Hrychanyk N., Prylypko V., & Mykhalchuk V. Applying Case Method in the Training of Future Specialists. *Journal of Curriculum and Teaching*, 11(1), 2022, pp. 235-244. <https://doi.org/10.5430/jct.v11n1p235>
3. Dipuja D., Wahyuni R. Development of Case Method-Based Modules to Enhance Critical Thinking, Creativity, Communication and Collaboration Skills (4Cs) in Disaster Management Students, 2025.
4. Gössling S., Scott D. Hall C. Pandemics, tourism and global change: A rapid assessment of COVID-19. *Journal of Sustainable Tourism*, 29(1), 2020, pp. 1–20.
5. Mahdi O. R., Nassar I. A., Almuslamani H. A. The role of using case studies method in improving students' critical thinking skills in higher education. *International Journal of Higher Education*, 9(2), 2020, pp. 297-308.
6. Roszkowska E., Filipowicz-Chomko M. Measuring sustainable development using an extended Hellweg method. *Social Indicators Research*, 2021, pp. 299-322. <https://doi.org/10.1007/s11205-020-02491-9>
7. Thomas G. How to do Your Case Study: A Guide for Students and Researchers. Sage Publications, 2021.
8. Xu C., Wang M., Luo Q., Zhang Y. A Study on Experiential Learning Model of Tourism Management in Higher Education in China: A Case Study of Chongqing Normal University. *Open Journal of Social Sciences*, 2023, pp. 232-242. doi: 10.4236/jss.2023.113016.
9. Wei Y. D., Wu T. J. Research of innovation and entrepreneurship education into professional education. *Journal of Shenyang Institute of Engineering*, 2019, pp. 532-535.
10. Yin R. K. Case Study Research and Applications: Design and Methods (6th ed.). Sage Publications. 2018.

## Применение метода «Case study» в университетских курсах по туризму

*Симонян Нарине*

### Резюме

**Ключевые слова:** метод преподавания, ситуационный анализ, интерактивный метод, туризм, высшее образование

Современная система высшего образования требует постоянной модернизации в соответствии с динамичными изменениями экономики, социальной среды и приоритетов общества. Основная задача университетов – подготовка конкурентоспособных специалистов, способных гибко и оперативно реагировать на требования рынка.

Эффективность образовательного процесса зависит от множества факторов, среди которых важное место занимает правильный выбор методов обучения. Традиционные подходы часто не отвечают современным вызовам, что обуславливает необходимость применения интерактивных методов. Среди них особенно выделяется метод «кейс-стади».

В статье анализируются особенности применения метода «кейс-стади» в профессиональном образовании по туризму. Метод объединяет элементы мозгового штурма, дебатов и геймификации, позволяя студентам применять теоретические знания для анализа реальных профессиональных ситуаций.

Одновременно успешная реализация метода требует тщательного планирования и обеспечения необходимых ресурсов. Более широкое внедрение «кейс-стади» в туристическом образовании Армении может повысить качество подготовки специалистов и их конкурентоспособность на рынке труда.

## The Use of the “Case Study” Method in University Tourism Courses

*Simonyan Narine*

### Summary

**Key words:** teaching method, situational analysis, interactive method, tourism, higher education

Modern higher education requires continuous adaptation to the dynamic changes in the economic, social, and professional priorities. A key task of universities is to train specialists capable of responding flexibly and effectively to evolving industry demands.

The effectiveness of the educational process depends on multiple factors, among which the selection of appropriate teaching methods is crucial. Traditional methods often fail to meet the challenges of modern vocational training, highlighting the importance of interactive approaches. Among these, the “case study” method has proven particularly effective in tourism education.

This article examines the application of the “case study” method in university tourism programs. Combining elements of brainstorming, debates, and gamification, the method allows students to apply theoretical knowledge to analyze real professional scenarios, develop critical thinking, and improve decision-making skills.

Successful implementation requires careful planning, structured guidance, and adequate resources. Expanding the use of the “case study” method in Armenian higher education can enhance the practical training of students, better preparing them for professional challenges and increasing their competitiveness in the tourism sector.

Ներկայացվել է 12. 10. 2025 թ.

Գրախոսվել է 02. 11. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Էկոլոգիական կրթության ինտեգրման հնարավորությունները  
զբոսաշրջության մասնագիտական կրթական ծրագրերում**

**Վարդանյան Մերի**

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-211>

**Հանգուցային բառեր.** բարձրագույն կրթություն, էկոլոգիական գիտակցություն, միջոց-տակարգային մոտեցում, արտալսարանային ուսուցում, հմտություն

**Նախաբան:** Զբոսաշրջությունը ներկայումս համարվում է տնտեսության ամենադինամիկ զարգացող ճյուղերից մեկը: Այն նպաստում է տնտեսական աճին, միջնաշրջային հաղորդակցության զարգացմանը և բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացմանը: Զբոսաշրջության ոլորտի շարունակական աճը, դրական ազդեցությունների հետ մեկտեղ, գործալ մակարդակում հանգեցնում է բնապահպանական բացասական հետևանքների, ինչպիսիք են բնական ռեսուրսների գերօգտագործումը, կլիմայի փոփոխությունը, կենսաբազմազանության կորուստը և այլն: Այս համատեքստում էկոլոգիական կրթության ինտեգրումը զբոսաշրջության բարձրագույն կրթության համակարգում դառնում է ոչ միայն անհրաժեշտություն, այլև ոլորտի կայուն զարգացման համար կարևոր գործոն:

Զբոսաշրջության մասնագետներն այսօր պետք է լինեն ոչ միայն զբոսաշրջային ծառայություններ մատուցողներ, այլև էկոլոգիական գիտակցությամբ օժտված մասնագետներ, ովքեր կարող են կարևոր դեր ունենալ կայուն զբոսաշրջության զարգացման գործում: Վերոնշյալ հանգամանքներով էլ պայմանավորված է թեմայի *արդիականությունը*:

Հոդվածի *նպատակն* է ուսումնասիրել էկոլոգիական կրթության ինտեգրման ձևերն ու հնարավորությունները զբոսաշրջության մասնագիտական կրթական ծրագրերում՝ հիմնվելով իրականացված փորձի վերլուծության վրա: Հիմնական *խնդիրներն* են՝ հիմնավորել էկոլոգիական կրթության դերը զբոսաշրջության ոլորտի մասնագետների պատրաստման գործում, ներկայացնել Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ ԲՊՀ) «Զբոսաշրջություն» մասնագիտական կրթական ծրագրում էկոլոգիական կրթության ինտեգրման արդյունավետ փորձը և առաջարկել ուղիներ ու գործնական լուծումներ՝ զբոսաշրջության մասնագիտական կրթական ծրագրերում էկոլոգիական կրթության արդյունավետ ինտեգրման համար:

Գիտական *նորույթը* այն է, որ ներկայացվում են զբոսաշրջության կրթական ծրագրերում տարբեր մոտեցումների, ուսուցման ձևերի և մեթոդների համադրման միջոցով էկոլոգիական կրթության ինտեգրման հնարավորությունները, ինչպես նաև ներկայացվում է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում իրականացված փորձը՝ որպես արդյունավետ մոդել:

Հոդվածի *տեսական և գործնական նշանակությունը*: Հոդվածում ներկայացված դրույթները կհարստացնեն զբոսաշրջության մասնագիտական կրթության համակարգում էկոլոգիական կրթության ինտեգրման վերաբերյալ տեսական գրականությունը, իսկ հոդվածում վերլուծված փորձը կարող է ծառայել որպես գործնական մոդել՝ այլ բուհերում էկոլոգիական կրթության ինտեգրման արդյունավետ ձևեր ներդնելու համար:

Հոդվածում օգտագործվել են մասնագիտական գրականության ուսումնասիրության, վերլուծության, համադրման, դեպքի վերլուծության և հարցման *մեթոդները*:

**Էկոլոգիական կրթության կարևորությունը զբոսաշրջության բարձրագույն կրթության համակարգում:** Զբոսաշրջության ոլորտի զարգացումը հանգեցնում է մի շարք էկոլոգիական հիմնային խնդիրների, որոնք մեղմելու հիմնական ուղիներից է կայուն զբոսաշրջության զարգացումը: Զբոսաշրջության ոլորտում կայունության հասնելն իր հերթին պահանջում է

բարեփոխումներ ոչ միայն պետական քաղաքականության, այլ նաև կրթության ոլորտում [4]: Այս համատեքստում Էկոլոգիական կրթության համակարգված ինտեգրումը զբոսաշրջության մասնագիտական կրթական ծրագրերում դառնում է կարևոր նախապայման՝ ձևավորելու Էկոլոգիական գիտակցությամբ և կայուն զարգացման սկզբունքներին հավատարիմ ոլորտային մասնագետներ:

Էկոլոգիական կրթությունը շարունակական գործընթաց է, որն իրականացվում է ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ձևերի միջոցով: Էկոլոգիական կրթության ինտեգրումը զբոսաշրջային բարձրագույն կրթության համակարգում կարևոր դեր ունի պատասխանատու զբոսաշրջիկների, զբոսաշրջության մասնագետների և ոլորտի քաղաքականությունը մշակողների Էկոլոգիական կրթության և դաստիարակության գործում, իսկ Էկոլոգիական գիտակցությամբ օժտված զբոսաշրջության մասնագետներն ավելի հակված են կիրառել կայուն գործելակերպերը՝ ազդելով ոլորտի վրա թե՛ միկրո, թե՛ մակրո մակարդակներում [4]:

Էկոլոգիական կրթության ինտեգրումը կրթական գործընթացում բխում է միջազգային օրակարգում ամրագրված առաջնահերթություններից: Դրա ինտեգրման անհրաժեշտությունը բազմիցս շեշտադրվել է տարբեր միջազգային համաժողովներում: Մասնավորապես, Էկոլոգիական կրթության կարևորությունը միջազգային մակարդակում ընդգծվել է դեռևս 1972 թ. Ստոկհոլմի համաժողովում, որը հիմք դրեց բնապահպանական խնդիրների վերաբերյալ նոր մոտեցումների: Ստոկհոլմի հռչակագիրը բնապահպանական խնդիրները սահմանեց որպես առաջնահերթություններ և նշանավորեց արդյունաբերական ու զարգացող երկրների միջև երկխոսության սկիզբը՝ տնտեսական աճի, օդի, ջրի և օվկիանոսների աղտոտման, ինչպես նաև բնակչության բարեկեցության փոխկապակցվածության համատեքստում [8]:

1977 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի (UNESCO) և ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) հովանու ներքո Թբիլիսիում անցկացված համաժողովն առաջինն էր, որի հիմնական օրակարգը Էկոլոգիական կրթությունն էր: Համաժողովի արդյունքում մշակվել են Էկոլոգիական կրթության նպատակները, խնդիրները, սկզբունքները, բովանդակությունն ու մեթոդաբանական մոտեցումները: Համաժողովի արդյունքում ամրագրվեց, որ Էկոլոգիական կրթությունն անհրաժեշտ է իրականացնել բոլոր տարիքի և բոլոր մակարդակի սովորողների համար՝ որպես շարունակական և համալիր կրթական գործընթաց [7]:

Էկոլոգիական կրթության նկատմամբ հետաքրքրությունը զգալիորեն աճել է հատկապես ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների ընդունումից հետո «Օրակարգ 2030»-ի համատեքստում: Արդյունքում, բարձրագույն ուսումնական հաստատություններին վերապահվել է կրթության միջոցով կայուն զարգացման խթանման կարևոր մանդատ [6, 2]:

ՀՀ-ում Էկոլոգիական կրթության կազմակերպման համար հիմք է հանդիսանում «Ազգաբնակչության Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքը (2001): Օրենքը սահմանում է, որ Էկոլոգիական անընդմեջ կրթության համակարգը ՀՀ միասնական կրթական համակարգի բաղադրիչն է՝ ընդգրկելով բոլոր բաղադրիչները (նախադպրոցական, միջնակարգ, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական և հասարակության լայն խավերի Էկոլոգիական կրթություն և դաստիարակություն, այդ թվում՝ զինված ուժերում) [1]: Մա վկայում է, որ Էկոլոգիական կրթությունը բարձրագույն կրթության անբաժանելի մասն է:

Հարկ է նշել, որ բարձրագույն կրթության առաքելությունը չի սահմանափակվում միայն ակադեմիական գիտելիքների փոխանցմամբ: Այսօր այն ուղղված է ուսանողների համապարփակ կարողությունների զարգացմանը՝ հնարավորություն տալով ձևավորվել ոլորտային մարտահրավերներին արձագանքող կոմպետենտ մասնագետներ [9, 442]: Նման մոտեցումը կարևոր դեր ունի հատկապես դինամիկ զարգացող ոլորտներում, ինչպիսին է զբո-

սաշրջությունը, քանի որ մասնագիտական պատրաստվածության մակարդակը անմիջականորեն պայմանավորում է ոլորտի կայունությունը:

Ջրոսաշրջության ոլորտում կայուն զարգացման աճող պահանջարկը հանգեցրել է նոր ուսումնական ծրագրերի և մանկավարժական մեթոդաբանությունների մշակման ու ներդրման, որոնք նպատակ ունեն ձևավորել պատասխանատու, էթիկապես և էկոլոգիապես գիտակից մասնագետներ: Ջրոսաշրջային կայուն կրթությունը դիտարկվում է որպես կարևոր գործիք՝ ուղղված ոչ միայն մասնագետների, այլև զբոսաշրջիկների շրջանում կայուն վարքագծի խթանմանը: Այն հնարավորություն է տալիս զբոսաշրջիկներին գիտակցված ընտրություններ կատարել՝ գնահատելով այցելվող տարածքների բնապահպանական և մշակութային արժեքները, ինչն իր հերթին նպաստում է պատասխանատու զբոսաշրջային գործելակերպի տարածմանը և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների մեղմանը [5, 1156]:

Կայուն զարգացման սկզբունքները կրթական ծրագրերում ներդնելը բարձրագույն ուսումնական հաստատություններին հնարավորություն է տալիս ձևավորել ուսանողների քննադատական մտածողությունը, պատասխանատու որոշումներ կայացնելու կարողությունը և երկարաժամկետ խնդիրների արդյունավետ լուծման հմտությունները: Այսպիսի կրթական մոտեցումը նպաստում է ոչ միայն շրջակա միջավայրի պահպանությանը, այլև մարդկանց բարեկեցության մակարդակի բարձրացմանը [3, 1]:

Սակայն այս համատեքստում տեսական ուսուցումն ինքնին բավարար չէ. համալսարանները պետք է ապահովեն, որ ուսանողները ձեռք բերեն էկոլոգիական զբոսաշրջության ոլորտում գործնական փորձ: Ժամանակակից մասնագիտական ոլորտը պահանջում է մասնագետներից խորքային տեսական գիտելիքների հետ մեկտեղ նաև կարողություն՝ այդ գիտելիքները գործնականում կիրառելու և համալիր խնդիրների լուծման արդյունավետ մոտեցումներ մշակելու համար:

Ջրոսաշրջության մասնագիտական կրթական ծրագրերում էկոլոգիական կրթության ինտեգրումը իրականացվում է առարկայական և միջգիտակարգային մոտեցումների միջոցով: Առարկայական մոտեցումը ենթադրում է մասնագիտական կրթական ծրագրում ներդնել առանձին մոդուլներ կամ դասընթացներ (օրինակ՝ «Ջրոսաշրջության էկոլոգիական կառավարում», «Էկոտուրիզմի կազմակերպում», «Կայուն զբոսաշրջություն», «Ջրոսաշրջություն և շրջակա միջավայր» և այլն), որոնք կենտրոնանում են էկոլոգիական գիտելիքների և հմտությունների ձևավորման վրա: Միջգիտակարգային մոտեցումը ենթադրում է, որ առանձին բնապահպանական թեմաներ ներառվում են հարակից ոլորտների դասընթացների ծրագրերում, ինչպիսիք են տնտեսագիտությունը, կառավարումը, աշխարհագրությունը, մշակութային ժառանգությունը և այլն: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ուսանողներին համապարփակ պատկերացում կազմել, թե ինչպես է բնապահպանական գործոնը ազդում զբոսաշրջության տարբեր ասպեկտների վրա:

Ջրոսաշրջության ապագա մասնագետների էկոլոգիական կրթությունն իրականացվում է լսարանային և արտալսարանային ուսուցման ձևերի համակցմամբ: Լսարանային ուսուցումը կարևոր միջավայր է հանդիսանում համակարգված և խորացված գիտելիքների ձեռքբերման համար: Լսարանային ուսուցման ժամանակ ուսանողները հնարավորություն են ունենում ստանալ բնապահպանության ոլորտի վերաբերյալ տեսական գիտելիքներ, ուսումնասիրել էկոլոգիայի հիմնարար սկզբունքները, բնության պահպանության և էկոլոգիական զբոսաշրջության առանձնահատկությունները: Լսարանային ուսուցման գործընթացում կարող են կիրառվել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են ընթերցանությունը և գրավոր աշխատանքները, դեպքերի վերլուծությունը, մտագրոհը, բանավեճը, խմբային աշխատանքները, քննարկումները և խաղերը:

Արտալսարանային ուսուցումը կարևոր դեր ունի զբոսաշրջության ոլորտի ապագա մասնագետների էկոլոգիական կրթության արդյունավետ իրականացման համար, քանի որ

հնարավորություն է տալիս ուսանողներին կիրառել ստացած տեսական գիտելիքները իրական կյանքում: Արտալսարանային դասերը դրական ազդեցություն են թողնում նաև ուսանողների գեղագիտական դաստիարակության, հետազոտական հմտությունների զարգացման և ինտելեկտուալ զարգացվածության վրա [2, 442]: Այս համատեքստում որպես արդյունավետ մեթոդներ կարող են կիրառվել ուսումնական այցերը, էքսկուրսիաները, դաշտային հետազոտությունները, հարցումները, հարցազրույցները, դիտումը, խաղային ուսուցումը, նախագծային ուսուցումը և այլն:

**«Զբոսաշրջություն» մասնագիտական կրթական ծրագրում էկոլոգիական կրթության ինտեգրման փորձը (Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի օրինակով).** Էկոլոգիական կրթության ինտեգրումը զբոսաշրջության բարձրագույն կրթության համակարգում հանդիսանում է ժամանակակից կրթական ռազմավարությունների կարևոր ուղղություն: Զբոսաշրջության մասնագիտական կրթական ծրագրերում էկոլոգիական կրթության ինտեգրման կարևորության համատեքստում ներկայացվում է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում իրականացված փորձը:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում «Զբոսաշրջության և սերվիսի» ամբիոնի կողմից մշակված «Զբոսաշրջություն» մասնագիտական կրթական ծրագրում ներդրվել է «Էկոտուրիզմի կազմակերպում» կամընտրական դասընթացը, որի նպատակը զբոսաշրջության ապագա մասնագետներին էկոտուրիզմի ոլորտում անհրաժեշտ տեսական գիտելիքներով և գործնական հմտություններով զինելն է:

Դասընթացը կառուցված է ավանդական (դասախոսություն, տեսանյութերի դիտում, հարց ու պատասխան, մասնագիտական գրականության ընթերցում և քննարկում) և ինտերակտիվ մեթոդների (դեպյի վերլուծություն, մտազոծ, ուսումնական այցեր, նախագծային աշխատանք) համակցմամբ:

Դասընթացի գնահատումն իրականացվել է բազմաբաղադրիչ մոտեցմամբ, որը ներառում է.

- թղթապանակի ներկայացում (20 %),
- միջանկյալ ստուգում՝ անհատական նախագծային աշխատանքի ձևով (40 %),
- դասընթացի վերջնական ստուգում՝ գրավոր աշխատանքի միջոցով (40 %):

Թղթապանակը, որը դասընթացի հիմնական գործնական բաղադրիչն է, առանձնահատուկ կարևորություն ունի ուսանողների էկոլոգիական կրթության իրականացման գործընթացում: Դասընթացի ավարտին ուսանողներից պահանջվում է ներկայացնել հաշվետվություն՝ կիսամյակի ընթացքում իրականացված արտալսարանային գործունեության վերաբերյալ, որը ներառում է ուսումնաձանաչողական և մասնագիտական այցելություններ բնագիտական ուղղվածության թանգարաններ, բուսաբանական այգիներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, միջազգային բնապահպանական կազմակերպությունների գրասենյակներ, ինչպես նաև մասնակցություն ոլորտային միջոցառումներին (կոնֆերանսներ, փառատոներ, թեմատիկ դասախոսություններ):

Դասընթացի ավարտին ուսանողները ներկայացնում են գրավոր հաշվետվություն, որտեղ ամփոփում են իրենց մասնակցությունը տարբեր միջոցառումներին, ինչպես նաև դրանց արդյունքում ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները, որոնք նպաստում են նրանց մասնագիտական զարգացմանը: Հաշվետվությանը կցվում են լուսանկարներ՝ որպես մասնակցության փաստական ապացույց:

Սույն հետազոտության շրջանակում իրականացվել է նաև անանուն հարցում ուսանողների շրջանում: Հարցման նպատակն էր գնահատել «Էկոտուրիզմի կազմակերպում» դասընթացի արդյունավետությունը և արտալսարանային այցերի ազդեցությունը ուսանողների էկոլոգիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերման, ամրապնդման և էկոլոգիական գիտակցության ձևավորման գործընթացում:

Հարցաթերթիկը բաղկացած էր 6 հարցից, որոնցից 5-ը՝ փակ, 1-ը՝ բաց: Հարցմանը

մասնակցել են 25 ուսանողներ, և հարցման արդյունքում ստացված տվյալները վերլուծվել են վիճակագրական և որակական մեթոդներով՝ հարցման նպատակներին համապատասխան:

Այսպիսով՝ վերլուծված տվյալները փաստում են, որ հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը (72 %) դասընթացից հետո ավելի հաճախ է մտածում շրջակա միջավայրի պահպանության մասին, մասնակիցների 24 %-ը՝ մասամբ, իսկ 4 %-ը նախընտրել է չպատասխանել այս հարցին:

Ըստ հարցման արդյունքների՝ դասընթացը բարձրացրել է ուսանողների մեծ մասի (56 %)՝ ոլորտում աշխատելու մոտիվացիան, 24 %-ի մոտիվացիան բարձրացել է մասամբ, իսկ հարցվածների 20 %-ը նախընտրել է չպատասխանել:

Հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը (68 %) համաձայն է այն պնդմանը, որ արտալսարանային դասերը նպաստել են իրենց տեսական գիտելիքների ամրապնդմանը, իսկ 32 %-ը մասամբ է համաձայնել:

Հարցվածները միաձայն հաստատում են, որ արտալսարանային դասերը նպաստել են էկոտրոփիզմի և բնապահպանության ոլորտի վերաբերյալ նոր գիտելիքների ձեռքբերմանը: Արտալսարանային դասերին մասնակցելու արդյունքում զարգացել են ուսանողների հետևյալ հմտությունները՝

**Հանգուցային բառեր.** *թվային տեխնոլոգիաներ, անգլերեն լեզվի դասավանդում, թվային գործիքներ, թվային կարողություններ, առցանց ուսուցում, ինտերակտիվ ռեսուրսներ, թվային հմտություններ, հեռավար ուսուցում, լեզվական կարողություններ, կրթական հարթակներ, թվային կրթական գործիքներ*

Այսօրվա կրթական միջավայրում թվային տեխնոլոգիաները դառնում են օտար լեզուների դասավանդման անբաժանելի մասը: Այս հոդվածը ուսումնասիրում է անգլերեն լեզվի դասավանդման մեջ օգտագործվող թվային գործիքները և դրանց ազդեցությունը ուսանողների թվային հմտությունների զարգացման վրա: Ուսումնասիրվում են առցանց հարթակները, հավելվածները, ինտերակտիվ ռեսուրսները և տեխնոլոգիաները, ինչպիսիք են ուսուցման կառավարման համակարգերը (LMS), տեսակոնֆերանսները, բջջային հավելվածները և թվային խաղերը: Հատուկ ուշադրություն է դարձվում նրան, թե ինչպես են այս գործիքները նպաստում ուսանողների քննադատական մտածողության, անկախության, համագործակցության և տեղեկատվական գրագիտության զարգացմանը:

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել թվային տեխնոլոգիաները անգլերեն լեզվի դասավանդման մեջ ինտեգրելու արդյունավետ մեթոդներ և որոշել դրանց դերը ուսանողների լեզվական և թվային կարողությունների զարգացման գործում:

Մեթոդաբանական արդյունքը ներառում է առաջարկություններ թվային տեխնոլոգիաների կրթական գործընթացում ինտեգրման մեթոդաբանության վերաբերյալ՝ համալսարանում օտար լեզու դասավանդելիս ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:

## Using Modern Digital Technologies in Teaching English

*Avetisyan Ruzanna*

### Summary

**Key words:** *digital educational tools, language competence, digital competence, distance learning, interactive resources, educational platforms*

In today's educational environment, digital technologies are becoming an integral part of foreign language teaching. This article examines the digital tools used in English language teaching and their impact on the development of students' digital skills. Online platforms, applications, interactive resources and technologies, such as learning management systems (LMS), video conferencing, mobile applications and digital games, are studied. Special attention is paid to how these tools contribute to the development of students' critical thinking, independence, collaboration and information literacy.

The aim of the study is to identify effective methods for integrating digital technologies into English language teaching and to determine their role in the development of students' linguistic and digital competences.

The methodological result includes recommendations on the methodology for integrating digital technologies into the educational process for organizing students' independent work during the foreign language teaching at the university.

Ներկայացվել է 29. 10. 2025 թ.

Գրախոսվել է 31. 10. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

## Մանկավարժի հուզական ինտելեկտի ազդեցությունն ուսուցման գործընթացի արդյունավետության վրա

Բաղդասարյան Լիլիթ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-235>

**Հանգուցային բառեր.** *ինքնակարգավորում, սեփական հույզեր, էմպաթիա, անհատական մոտեցում, սոցիալական հմտություն, հույզերի կառավարում, համագործակցություն, ուսման մոտիվացիա, սկադեմիական առաջադիմություն*

### Նախաբան

Աշխարհում կատարվող փոփոխությունները, գլոբալիզացիան, պատերազմներն ու աղետները, հասարակական արժեքների փոփոխությունը, սոցիալական խնդիրներն առաջ են բերում հուզական տարբեր վիճակներ, որոնք ազդում են մարդկանց փոխհարաբերությունների վրա: Այս համատեքստում կրթական ոլորտում առավել կարևոր է մանկավարժի հուզական ինտելեկտը: Կարողունակա՞հեն, գիտելիքա՞հեն կրթական ոլորտում մանկավարժը նաև սովորողի հուզական ինտելեկտի ձևավորողն է: Ժամանակակից կրթությունն ուղղված է կոմպետենտ, ճկուն, շուտ կողմորոշվող անհատի ձևավորմանը՝ շեշտադրելով նրա մտավոր, հուզական, սոցիալական և ստեղծագործական որակների զարգացումը: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ապահով, բարենպաստ, համագործակցային և մոտիվացնող ուսումնական միջավայր ստեղծել, որի համար կարևոր պայման է, որ մանկավարժը ճանաչի, հասկանա, կառավարի սեփական և սովորողների հույզերը, քանի որ մանկավարժի հուզական ինտելեկտը կարող է էական ազդեցություն ունենալ ուսուցման գործընթացի արդյունավետության վրա: Այս մոտեցումը համահունչ է նաև 21-րդ դարի կրթության պահանջներին, այն են՝ անձնային մոտեցումը, համագործակցային-սիներգետիկ ուսուցումը և ճկունությունն ուսումնական գործընթացում:

Ժամանակակից կրթական համակարգում մանկավարժի դերը նաև առաջնորդ լինելն է, ով համարվում է ուղղորդողի տիպային մոդել, հասկանում է իր սովորողներին, կառավարում է իր և սովորողների հույզերը: Այս առումով կարևոր է.

**1. Դասարանի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ձևավորումը.** մանկավարժի հուզական ինտելեկտը զգալի ազդեցություն ունի այն մթնոլորտի վրա, որը տիրում է դասարանում: Բարձր հուզական ինտելեկտով ուսուցիչը՝

- ստեղծում է անվտանգ ու վստահելի միջավայր, որտեղ սովորողները կարող են ազատ արտահայտվել,
- խթանում է փոխադարձ հարգանքը և համագործակցությունը,
- նվազեցնում է սթրեսն ու վախը, ինչը նպաստում է արդյունավետ ուսուցմանը:

Այսպիսի միջավայրում սաները սովորում են ոչ միայն գիտելիքներ, այլև հուզական ու սոցիալական հմտություններ, որոնք կարևոր են կյանքում հաջողության համար:

**2. Անհատական մոտեցում սովորողին.** յուրաքանչյուր սովորող տարբեր է իր անհատականությամբ, և մանկավարժը կարող է.

- «կարդալ» երեխայի հոգեվիճակը,
- ճկուն կերպով հարմարեցնել իր մոտեցումը երեխայի կարիքներին,
- աջակցել սովորողի ինքնավստահության և ինքնագնահատականի ձևավորմանը:

Մրանով իսկ հուզական ինտելեկտը դառնում է արդյունավետ անհատականացված ուսուցման բանալին:

**3. Դաստիարակչական գործընթաց.** ուսուցիչը համարվում է տիպային մոդել իր վարքով, խոսքով, ռեակցիաներով, և սովորողները սովորում են՝

- ինչպես վարվել զգացմունքների հետ,
- ինչպես առանց բախման շփվել մարդկանց հետ,
- ինչպես հարգանքով կարգավորել հակասությունները:

Այս հմտությունները չեն դասավանդվում գրքերով, դրանք ձևավորվում են հարաբերությունների և օրինակի միջոցով, որտեղ մանկավարժի դերը առանցքային է:

Գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ մանկավարժների բարձր հուզական ինտելեկտը.

- նվազեցնում է սթրեսի մակարդակը դասարանում,
- բարձրացնում է սովորողների ակադեմիական արդյունքները,
- նպաստում է դասարանային միասնականության և արդյունավետ վարքագծի ձևավորմանը:

Այս ամենը վկայում է, որ ցածր հուզական ինտելեկտը կարող է խաթարել այն ամենն, ինչը նպաստում է աշակերտի ակադեմիական առաջադիմությանը:

Հուզական ինտելեկտը մանկավարժի մասնագիտական պրոֆեսիոգրամայում առանցքային ունակություն է, որն ուղղակիորեն ազդում է ոչ միայն սովորողի գիտելիքների վրա, այլև նրա անձնային որակների ձևավորման վրա:

Հոդվածի նպատակն է պարզել՝ ինչպես է մանկավարժների հուզական ինտելեկտն ազդում ուսուցման արդյունավետության վրա:

Նպատակից բխող խնդիրներն են՝ պարզել մանկավարժների հուզական ինտելեկտի մակարդակը, վերլուծել, թե հուզական ինտելեկտից կախված ուսուցման գործընթացը որքանով է արդյունավետ, առաջարկել հուզական ինտելեկտը զարգացնող տեխնիկաներ: Հոդվածի տեսական նշանակությունը այն է, որ ուսումնասիրվել և վերլուծվել է հուզական ինտելեկտի վերաբերյալ գիտական գրականություն, իսկ հոդվածում ներկայացվող հուզական ինտելեկտը զարգացնող տեխնիկաներն ունեն գործնական նշանակություն:

### **Հոդվածի բովանդակություն**

Հարկ է նշել, որ *հուզական ինտելեկտը (EI–Emotional Intelligence)* ունակությունն է հասկանալու, ճանաչելու, վերահսկելու սեփական հույզերը և ըմբռնելու ու ղեկավարելու ուրիշների հույզերը՝ հարաբերությունների, որոշումների կայացման և սոցիալական փոխգործակցության շրջանակներում [4]:

Ըստ Դենիել Գոուլմանի՝ հուզական ինտելեկտի հիմնական բաղադրիչներն են.

#### *1. Ինքնագիտակցում (Self-awareness)*

- Հասկանալ սեփական հույզերն ու դրանց ազդեցությունը վարքի վրա:

#### *2. Ինքնակարգավորում (Self-regulation)*

- Կառավարել հույզերը, պահպանել հանգստություն սթրեսային պայմաններում:

#### *3. Ներքին մոտիվացիա (Motivation)*

- Ունենալ ներքին մղում՝ նպատակների հասնելու համար:

#### *4. Էմպաթիա (Empathy)*

- Զգալ և հասկանալ ուրիշների հույզերը՝ առանց բացահայտ արտահայտման:

#### *5. Սոցիալական հմտություններ (Social skills)*

- Արդյունավետ հաղորդակցվել, համագործակցել, լուծել հակամարտություններ [3, 47]:

Էմոցիոնալ ինտելեկտը կարևոր է.

- *Անձնական կյանքում*, քանի որ բարելավում է հարաբերությունները, սթրեսի կառավարումը, ինքնագիտակցումը:
- *Սոցիալական կյանքում*, քանի որ նպաստում է առաջնորդությանը, թիմային աշխատանքին, արդյունավետ հաղորդակցմանը:

- *Ուսումնական միջավայրում*, քանի որ օգնում է մանկավարժներին և սովորողներին հասնելու բարձր ակադեմիական ու սոցիալական արդյունքների:

Բարձր հուզական ինտելեկտ ունեցող մանկավարժներն ավելի արդյունավետ են շփվում սովորողների, ծնողների, գործընկերների հետ, կարողանում են արդյունավետ կառավարել դասարանական միջավայրը, ըմբռնում են աշակերտների հուզական վիճակները և օգնում հաղթահարել սթրեսը, ստեղծում են դրական, ապահով և բարենպաստ ուսումնական մթնոլորտ:

Պիտեր Սայրվեյը և Ջոն Մայերն են այն հոգեբանները, ովքեր դեռևս 1990-ականներին առաջիններից էին, որ ձևակերպեցին հուզական ինտելեկտի գիտական տեսությունը: Նրանք առաջարկեցին *հուզական ինտելեկտի չորսաճյուղային մոդել (Four-Branch Model)*, որը մինչ օրս համարվում է ամենագիտական և օբյեկտիվ մոդելներից մեկը:

*Մայեր-Սայրվեյ-Կարուզոյի հուզական ինտելեկտի չորսաճյուղանի մոդելն է (ունակությունների մոդել 1997)* [2].

1. *Էմոցիաների ընկալում (Perceiving Emotions)*,

- Ուշադրություն սեփական և ուրիշների էմոցիաների հանդեպ,
- Էմոցիաների ճիշտ ճանաչում՝ դեմքի արտահայտությունների, ձայնի տոնի, ժեստերի միջոցով,
- Կարողանալ տարբերել իրական և կեղծ (կամ «կառուցված») էմոցիաները

2. *Էմոցիաներով մտածում (Using Emotions to Facilitate Thought)*

- Էմոցիաների օգտագործում՝ ուշադրության կենտրոնացման, ստեղծագործականության կամ որոշումների կայացման համար,
- Էմոցիաները որպես «ուղղորդող»՝ ինչի վրա կենտրոնանալ, ինչպես մտածել

3. *Էմոցիաների հասկացում (Understanding Emotions)*

- Էմոցիաների պատճառների և հետևանքների ըմբռնում,
- Բարդ էմոցիոնալ վիճակների տարբերակում՝ օրինակ՝ գայրույթ + վախ = վիրավորանք,
- Էմոցիաների «գարգացման» կանխատեսում (օրինակ՝ ինչպես կարող է ուրախությունը վերածվել հիասթափության),

4. *Էմոցիաների կառավարում (Managing Emotions)*

- Սեփական էմոցիաների վերահսկում անհարմար կամ սթրեսային իրավիճակներում,
- Ուշադիր և էթիկական վերաբերմունք ուրիշների զգացմունքների հանդեպ,
- Զգացմունքների կառավարում նպատակին հասնելու կամ միջավայրը պահպանելու համար [1; 4]:

Մոդելի հիմնական գաղափարն այն է, որ հուզական ինտելեկտը ոչ թե պարզապես «զգացմունքային» լինելու մասին է, այլ՝ ունակությունների համալիր է:

*Հուզական ինտելեկտի դրսևորման քեյսի օրինակ. դասարանական իրավիճակ.* 8-րդ դասարանի աշակերտներից Ա.-ն դասի ընթացքում հաճախ միջամտում է, կատակներ է անում և խանգարում է դասընթացը: Ուսուցչուհի տիկին Գ. Ս.-ն կարող էր բարկանալ և կոպիտ արձագանքել, սակայն իր բարձր հուզական ինտելեկտի շնորհիվ նա այլ կերպ է արձագանքում:

*Մանկավարժի հուզական արձագանքը.* Տիկին Գ. Ս.-ն նկատում է, որ Ա.-ի վարքը հաճախ սրվում է այն օրերին, երբ նա մենակ է նստում կամ մինչ դասն ավելի լռակյաց է: Ուսուցչուհին զրուցում է նրա հետ դասից հետո: Դիմելով նրան խաղաղ, հանգիստ ձայնով՝ ասում է. «Միբլի Ա., նկատում եմ, որ վերջին օրերին դասերին կենտրոնանալը մի քիչ բարդ է քեզ համար: Ինչ-որ բան է պատահել է, ուզո՞ւմ ես խոսել: Քեզ լավ եմ հասկանում, բայց ուզում եմ օգնել, որ քեզ ավելի վստահ ու հանգիստ զգաս դասի ընթացքում»:


*Արդյունք.*

- Ա.-ն սկսում է վստահել ուսուցչուհուն:
- Նա բացատրում է, որ տանը խնդիրներ կան, ինչն ազդում է նրա պահվածքի վրա:
- Ուսուցչուհին նրան ներգրավում է դասագործընթացում ավելի ակտիվ դերերով (օրինակ՝ օգնող, խմբի ղեկավար), որպեսզի Ա.-ն զգա, որ ինքը կարևոր է:
- Աշակերտը զգում է աջակցություն ու դադարում է խանգարել դասին:  
*Վերլուծություն.*

Այս օրինակում տիկին Գ. Ս.-ն ցուցաբերում է հետևյալ հուզական ինտելեկտի բաղադրիչները.

1. Ինքնագիտակցություն. նա զգում է նրա հույզերը ու չի արձագանքում հուզական պտոթկումով:
2. Էմպաթիա. նա հասկանում է աշակերտի ներքին վիճակը:
3. Մոցիալական հմտություններ. նա կարողանում է կառուցել վստահության մթնոլորտ:
4. Էմոցիոնալ կառավարում. նա կառավարում է իրավիճակն՝ առանց լարվածության: Հուզական ինտելեկտի զարգացման ռազմավարությունների երեք կանոններն են.
  1. Մովորեք լսել՝ ուշադրություն դարձնելով մարմնի լեզվին:
  2. Մտածեք Ձեր սեփական զգացմունքների մասին:
  3. Մի փորձեք ճնշել, այլ սովորեք կառավարել զգացմունքները:

Ուսումնասիրությունների արդյունքում ներկայացվում է բարձր հուզական ինտելեկտի համալիր մոդելը (տե՛ս սխեմա 1):



**Սխեմա 1. Բարձր հուզական ինտելեկտի մոդել**

Կիրառել ենք Ն. Հոլլի հուզական ինտելեկտի այստորոշման թեստը Վանաձորի թիվ 1, 3, 4, 20 դպրոցների, ՎՊՀ հենակետային վարժարանի 160 մանկավարժների հետ:

Հուզական ինտելեկտի թեստի նպատակն է պարզել, թե ինչպես է անձն օգտագործում զգացմունքներն իր կյանքում և ինչպես է հաշվի առնում հուզական ինտելեկտի տարբեր կողմերը՝ վերաբերմունքը ինքն իր անձին և ուրիշներին, հաղորդակցման հմտությունները, վերաբերմունքը կյանքի նկատմամբ և ներդաշնակության որոնումը: Արդեն անվիճելի փաստ է, որ հուզական ինտելեկտը նպաստում է մարդու հաջողությանը և մտավոր ու ֆիզիկական բարեկեցությանը: Փաստ է նաև, որ EQ-ն կարող ենք զարգացնել, ի տարբերություն IQ-ի: Թեստի արդյունքները կօգնեն արդյունավետորեն հասնել իր նպատակներին և միևնույն ժամանակ ներդաշնակ ապրել ինքն իր և ուրիշներին հետ: Թեստը բաղկացած է 30 պնդումներից, որոնք բաժանվում են 5 սանդղակի՝


- զգացմունքային իրազեկվածություն,
- ձեր զգացմունքների վերահսկում,
- ինքնակառավարում (զգացմունքների կամայական վերահսկողություն)
- էմպաթիա,
- այլ մարդկանց զգացմունքների հասկացում:

Արդյունքները ներկայացվում են ստորև (տե՛ս աղյուսակ 1, տրամագիրներ1-2).


**Աղյուսակ 1**

**Մասնակի հուզական ինտելեկտի մակարդակ**

	<b>Ցածր մակարդակ (0-7)</b>	<b>Միջին մակարդակ (8-13)</b>	<b>Բարձր մակարդակ (14 և ավելի)</b>
զգացմունքային իրազեկվածություն	29 անձ (18.2 %)	48 անձ (30 %)	83 անձ (51.8 %)
ձեր զգացմունքների վերահսկում	41 անձ (25.7 %)	56 անձ (35 %)	63 անձ (39.3 %)
ինքնակառավարում	19 անձ (11.95 %)	34 անձ (21.25 %)	107 անձ (66.8 %)
էմպաթիա	21 անձ (13.1 %)	43 անձ (26.9 %)	96 անձ (60 %)
այլ մարդկանց զգացմունքների հասկացում	13 անձ (8.15 %)	58 անձ (36.25 %)	89 անձ (55.6 %)



**Տրամագիր 1. Մասնակի հուզական ինտելեկտի մակարդակ**



**Տրամագիր 2. Հուզական ինտելեկտի ինտեգրատիվ մակարդակ**

Համաձայն հուզական ինտելեկտի ինտեգրատիվ մակարդակի քանակական ցուցանիշների՝ գերիշխում է բարձր մակարդակը, ինչը վկայում է, որ մանկավարժների 73 %-ը կարողանում է ապահովել առողջ հարաբերություններ, հասկանում է իր սովորողներին, կառավարում է իր և սովորողների հույզերը, ու կարող են հասնել բարձր ակադեմիական ու սոցիալական արդյունքների:

**Եզրակացություն**

Մանկավարժի հուզական ինտելեկտի զարգացումը պահանջում է ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև նպատակային, երկարաժամկետ ինքնազարգացման ռազմավարություն, աշխատանքներ ուսումնական հաստատության ներսում՝ մասնագիտական խմբերում, որտեղ կկարողանան փորձ ու գործիքներ փոխանակել, որոնք կլինեն շարունակական և կառուցողական:

Առաջարկվում է տեխնոլոգիական քայլաշար իր տեխնիկաներով հուզական ինտելեկտի զարգացման համար.

**1. Ինքնագիտակցության զարգացում.**

- Պարբերական ինքնավերլուծություն՝ «Ի՞նչ եմ զգում հիմա և ինչո՞ւ»:
- Զգացմունքների օրագիր վարել՝ օրական 5-10 բույե գրառելով իրավիճակներն ու արձագանքները:
- Գործընկերների հետ փորձի փոխանակում՝ առանց քննադատության, միայն դիտարկումներ:

**2. Ինքնակարգավորում և սթրեսի կառավարում.**

- Սթրեսի կառավարման պարզ մեթոդներ՝ շնչառական և մկանային լարվածության թուլացման տեխնիկաներ (4-7-8 շնչառություն):
- Դադարների «միկրո-տեխնիկա»՝ դասի ընթացքում կամ հետո 1-2 բույե լուռ շնչառության կենտրոնացում:
- Դժվար իրավիճակների սցենարների նախապատրաստում, օրինակ՝ ինչպե՞ս արձագանքել աշակերտի ագրեսիային կամ անուշադրությանը:
- Զայրույթի և հիասթափության «թույլատրելի արտահայտման» տեխնիկա, որպեսզի դրանք չփոխանցվեն աշակերտներին:

**3. Էմպաթիայի զարգացում.**

- Ակտիվ լսման վարժություններ՝ աշակերտի ասածը վերարտադրել սեփական բառերով:
- «Դիրքափոխ» վարժություն. փորձել հասկանալ աշակերտի կամ ծնողի վիճակը նրա տեսանկյունից, տարբեր տեսանկյուններից իրավիճակ դիտարկելու վարժություններ («Ինչպե՞ս կզգար այս պահին աշակերտը, ծնողը, գործընկերը»):
- Կարողալ գրականություն կամ դիտել ֆիլմեր, որոնք ներկայացնում են տարբեր մարդկանց ներաշխարհը:

- Պատմվածքների և ֆիլմերի քննարկման միջոցով վերլուծել հերոսների զգացմունքներն ու մտիվացիան:
- 4. Սոցիալական հմտությունների կատարելագործում.**
  - Խմբային քննարկումների կազմակերպում՝ լսելու, ոչ թե միայն խոսելու նպատակով:
  - Ակտիվ լսելու հմտությունների զարգացում՝ չընդհատել, ամփոփել լսածը:
  - Ոչ-վերբալ ազդակների ընթերցման վարժություններ (միմիկա, ժեստեր, ձայնի տոն):
  - Կոնֆլիկտների կառուցողական լուծման մոդելների յուրացում (win-win մեթոդ, mediating techniques):
  - Հավասարակշռված արձագանք դասարանում՝ հատկապես կոնֆլիկտային իրավիճակներում:
- 5. Մտիվացիայի և դրական վերաբերմունքի պահպանում.**
  - Մասնագիտական նպատակների հստակ ձևակերպում և դրանց պարբերաբար վերանայում:
  - Փոքր հաջողությունների նշում (իր և աշակերտներին համար)՝ որպես բարոյական խթան:
  - Սեփական աշխատանքի կարևորության գիտակցում՝ «ինչու եմ անում այս գործը» վարժությամբ:
- 6. Շարունակական վերապատրաստում և աջակցություն.**
  - Մասնակցել հուզական ինտելեկտի վերաբերյալ սեմինարների կամ մաստեր-կլասների:
  - Գործընկերների հետ «զգացմունքային հետադարձ կապ» կազմակերպել՝ քննարկելով բարդ դեպքերն ու լուծումները:
- 7. Մշակութային և արժեքային գիտակցում.**
  - հասկանալ, որ տարբեր աշակերտներ տարբեր մշակույթներից կարող են զգացմունքներ արտահայտել տարբեր ձևերով:
  - զարգացնել հանդուրժողականությունը և բացությունը բազմազանության նկատմամբ:
- 8. Մտավոր ճկունություն.**
  - սովորել արագ ադապտացվել փոփոխություններին դասի ընթացքում, օրինակ՝ անսպասելի հարցերին կամ դասի ընթացքի խափանումներին:
  - զարգացնել «բազմակի լուծումների մտածողություն»՝ խնդրին մի քանի տարբերակով նայել:
- 9. Հումորի առողջ կիրառում.**
  - դասարանում կառուցողական հումորի օգտագործումը՝ լարվածությունը թուլացնելու համար:
  - զգուշանալ սարկազմից կամ անհատական վիրավորանք առաջացնող կատակներից:
- 10. Արտահայտչական հաղորդակցություն.**
  - ձայնի տոնն ու մարմնի լեզուն գիտակցված օգտագործել, որպեսզի դրանք համահունչ լինեն հաղորդագրությանը:
  - օրինակ՝ բարի հորդորներ տալ ջերմ ժպիտով, ոչ թե չոր հրահանգով:
- 11. «Զգացմունքային սահմանի» պահպանում.**
  - սովորել չվերցնել աշակերտների կամ ծնողների բացասական հույզերը անձնական վիրավորանքի տեսքով,
  - զգացմունքները ճանաչել, ընդունել, բայց չկլանվել դրանցով:
- 12. Հուզական ռեզիլիանս.**
  - վերականգնվելու հմտություններ՝ ծանր դասից կամ բարդ շաբաթից հետո:

- սովորել հաջողված փորձերը հիշել և ամրապնդել ինքնավստահությունը դրանց վրա:

**13. Ինքնաճանաչման «արտացոլանք».**

- գործընկերներից կամ մենթորից պարբերաբար ստանալ անկեղծ, կառուցողական հետադարձ կապ:
- տեսաձայնագրել դասը և դիտել՝ հասկանալու, թե ինչպիսի հուզական ազդանշաններ եք ուղարկում աշակերտներին:

**14. Զգացմունքային ստեղծագործություն.**

- ավետի, երաժշտության, գրականության կամ թատերական տարրերի կիրառումը դասում՝ ոչ միայն թեմայի բացատրության, այլև հույզերի մշակման համար:

**15. Մեղիտացիա և գիտակցական ներկայություն (Mindfulness).**

- օրական նույնիսկ 2-3 րոպե գիտակցված շնչառություն՝ ուշադրությունը պահելով ներկա պահին,
- դասից առաջ կամ հետո «զգացմունքային վերականրոնացում»՝ բացասական հույզերը չտեղափոխելու համար հաջորդ դաս:

**16. Մոդելավորում և դերային խաղեր.**

- մանկավարժների փոքր խմբերում խաղարկել դասարանում հնարավոր կոնֆլիկտային իրավիճակներ և գտնել հուզականորեն խելամիտ արձագանքներ:

**17. «Զգացմունքային կամուրջների» կառուցում աշակերտների հետ**

- փոքր, անկեղծ ժեստեր՝ անունով դիմելը, անձնական հետաքրքրությունների հիշելը, որ աշակերտը զգա՝ ինքը կարևոր է:

**18. Գործնական հոգեբանության ընթերցանություն.**

- ամեն ամիս կարդալ մեկ գիրք կամ հոդված հույզերի կառավարման կամ հաղորդակցական հմտությունների մասին,
- ստացված գիտելիքը անմիջապես փորձարկել դասարանում:

**19. Կոլեգիալ հուզական աջակցություն.**

- դպրոցում ստեղծել «զգացմունքային աջակցության» փակ խումբ, որտեղ ուսուցիչները կարող են կիսվել իրենց հույզերով ու փորձով՝ առանց քննադատության վախի:

**20. Հույզերի լեզվի ուսուցում աշակերտներին.**

- ոչ միայն ինքներդ գարգացնել EI, այլև աշակերտներին սովորեցնել արտահայտել և հասկանալ հույզերը: Դա կօգնի դասարանում ընդհանուր հուզական մթնոլորտը բարելավել:

**21. «Զգացմունքային դիտույալներ».**

- օրինակ՝ դասի սկիզբը սկսել կարճ դրական արտահայտությամբ («Եկեք այսօր մեկ լավ բան հիշենք»), կամ դասի վերջում կիսվել մեկ փոքր հաջողությամբ:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-235>

**Գրականություն**

1. Bar-On R. The Bar-On Model of Emotional-Social Intelligence (ESI). *Psicothema*. 2006, p. 13-25.
2. Heamalatha K. & Siti Rahmah A. Emotional Intelligence: Historical Development, Theoretical Models, and Assessment Approaches. *International Journal of Academic Research in Business and Social Sciences*, 2025, Volume 15, Issue 2, p. 516-537.
3. Goleman D. *Working with Emotional Intelligence*. Penguin Random House, 1998, 400 p.
4. Mayer J. D., Salovey P. & Caruso Emotional Intelligence: Theory, Findings, and Implications. *Psychological Inquiry*, 2004, p. 197-215.

## Влияние эмоционального интеллекта педагога на эффективность учебного процесса

*Багдасарян Лилит*

### Резюме

**Ключевые слова:** саморегуляция, собственные эмоции, эмпатия, индивидуальный подход, социальные навыки, управление эмоциями, сотрудничество, учебная мотивация, академическая успеваемость

В статье рассматривается роль эмоционального интеллекта педагога и его влияние на эффективность учебного процесса. Эмоциональный интеллект предполагает способность распознавать, понимать и управлять как собственными эмоциями, так и эмоциями других, что важно для формирования положительной и доверительной образовательной среды. Исследования показывают, что педагоги с высоким уровнем эмоционального интеллекта создают поддерживающую, заботливую и мотивирующую атмосферу, способствующую вовлечённости и активному участию обучающихся.

Эмоциональный интеллект также помогает педагогу справляться со стрессом, разрешать межличностные конфликты и выстраивать открытую коммуникацию. Эти навыки повышают качество образования, эмоциональное благополучие учеников и их академическую успеваемость.

В современных условиях роль педагога включает функции лидера и наставника, который понимает учеников и управляет как своими, так и их эмоциями. Развитие эмоционального интеллекта педагога становится ключевым фактором повышения эффективности учебного процесса и формирования продуктивной образовательной среды.

## The Impact of a Teacher's Emotional Intelligence on the Effectiveness of the Learning Process

*Baghdasaryan Lilit*

### Summary

**Key words:** self-regulation, own emotions, empathy, individual approach, social skills, emotion management, cooperation, learning motivation, academic progress

This article examines the role of a teacher's emotional intelligence and its influence on the effectiveness of the learning process. Emotional intelligence encompasses the ability to recognize, understand, and manage one's own emotions as well as those of others, which is essential for creating a positive and trusting educational environment. Research indicates that teachers with high emotional intelligence foster a supportive and motivating atmosphere, enhancing students' engagement and participation.

Moreover, emotional intelligence enables teachers to cope effectively with stress, resolve interpersonal conflicts, and maintain open communication. These skills contribute to students' academic achievement, emotional well-being, and overall quality of education. The article emphasizes that modern teaching requires not only professional expertise but also well-developed emotional capacities.

Teachers act as leaders and role models, guiding students while managing both their own and their students' emotions. Developing teachers' emotional intelligence is therefore crucial for improving the learning process, promoting cooperation, and fostering a productive and empathetic classroom environment.

Ներկայացվել է 10. 09. 2025 թ.

Գրախոսվել է 17. 09. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

## Արհեստական բանականության կիրառությունը դասապրոցեսում

*Գատյան Սրբուհի*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-244>

***Հանգուցային բառեր.** ուսուցման գործընթաց, 21-րդ դարի մարտահրավեր, գործիքակազմ, ծրագրային թարմացում, գեներացնել, հրահանգ, նախագծային աշխատանք*

### **Նախաբան**

Սույն հոդվածի *ուսումնասիրության առարկան* արհեստական բանականությունն է, *նպատակը՝* ներկայացնել արհեստական բանականության կիրառությունն ուսուցման գործընթացում:

Ինչպես գիտենք, Հանրակրթության պետական չափորոշիչը կարողունակահեն է: Կոմպյուտենցիաներից է *գիտատեխնիկական* կարողունակությունը, որի զարգացման մեր սույն փորձը հիմնավորում է հոդվածի *արդիականությունը*: այն խթան կարող է դառնալ արհեստական բանականության նոր գործիքակազմի ներդրման, կրթության որակի բարելավման և ուսուցման գործընթացի կազմակերպման տեսանկյունից: Ինչպես գիտենք, արհեստական բանականությունը ոչ բոլոր գիտական ոլորտներում է արդյունավետ աշխատանք կատարում, օրինակ՝ հայոց լեզվի և հայ գրականության: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ գործիքակազմը չունի բավարար գիտելիքների պաշար (ներկայումս շարունակական համալրման փուլում է գտնվում նաև կիրառողների, ոչ միայն ստեղծողների կողմից): Հոդվածի ուսումնասիրությունը բխում է հենց այս դրույթից՝ շեշտադրելով արհեստական բանականության թերի կողմերը՝ այնուհանդերձ գործնականում ներկայացնել, թե ինչպես ենք մենք այն կիրառել դասապրոցեսի ժամանակ: Սա էլ պայմանավորում է մեր աշխատանքի *նորույթը* և *արդիականությունը*:

Ուսումնասիրություն իրականացնելու նպատակով առանձնացրել ենք հետևյալ *խնդիրները*.

1. ուսումնասիրել արհեստական բանականության կողմից առաջարկվող առկա գործիքակազմը,
2. տարանջատել արհեստական բանականության դրական և բացասական կողմերը,
3. քննարկել հասարակության գիտակցության և ընդհանուր վերաբերմունքն ու արժեհամակարգային ընկալումները խնդրո առարկա թեմայի վերաբերյալ,
4. առաջարկել վճարովի և անվճար տարբերակներով ուսուցչական համայնքին առավել հարմար և հեշտ գործիքակազմ ընդգրկող ԱԲ ծրագրեր:

Ուսումնասիրությունն արդյունավետ իրականացնելու համար օգտագործել ենք ներքոբերյալ *մեթոդները*՝ նյութի համակարգման և ընդհանրացման, վերլուծության, համադրության, համեմատության և անձնական փորձի փոխանակման:

### **Բովանդակություն**

Իսկ ի՞նչ է արհեստական բանականությունը:

Արհեստական բանականությունը գործիք է, որ արտաքին միջավայրից ստանում է ազդակ և իրականացնում որոշակի գործողություններ [10, 7]:

Ոչ վաղ անցյալում արհեստական ինտելեկտի կամ բանականակության մասին մարդիկ կարող էին միայն պատկերացնել և կերպավորել կինոարտադրության, խաղերի կամ գրքերի մեջ: Այժմ, սակայն, արհեստական բանականությունն առավել քան իրական է: Այն ապրում է մեզ հետ և մեր կողքին:

Որոշակի դեպքերում կարող է ենթադրվել, թե արհեստական բանակությունը 21-րդ դարի ծնունդ է, սակայն ուսումնասիրությունները պարզում են, որ դեռևս 1956 թվականին մի խումբ գիտնականներ (Ալեն Նյուել, Հերբերտ Սայմոն, Ջոն Մակկարտի, Մարվին Մինսկի և Արթուր Սամուել) դարձել են արհեստական բանակության հիմնադիրները և առաջին հետազոտողները: Անհերքելի է, որ 21-րդ դարում՝ զարգացած տեխնոլոգիաների դարաշրջանում, բնականաբար, արհեստական բանականության օգտագործումն ու լայն տարածումն անխուսափելի է:

Հոգեբանության մեջ նշվում է, որ ցանկացած նոր երևույթ, նոր միտք, նոր գաղափար առաջին փուլում բախվում է դիմադրության: Որոշակի ժամանակ, անգամ տասնյակ տարիներ են պահանջվում, մինչև մարդը կկարողանա ընկալել իրականությունն այնպիսին, ինչպիսին այն կա ըստ էության: Եթե վերաձևակերպենք վերը նշված միտքը, կարող ենք առանձնացնել հետևյալ շղթան՝

1. հանրությանն առաջարկվում կամ ներկայացվում է միտքը, գաղափարը, նորույթը,
2. հասարակությունը նախ գիտակցությամբ կամ ենթագիտակցությամբ մերժում է այդ նորույթը,
3. երրորդ փուլում գիտակցում է նորույթի էությունը և նպատակները,
4. հաջորդիվ պարտադիր փորձում է այն՝ կիրառելով գործնականում,
5. այնուհետև այդ նորույթը մտնում է առօրյա կենցաղ,
6. որպես հետևանք՝ հանրությունը վերջնականապես կիրառում է այն իր ամենօրյա գործունեության կամ կենսակերպի մեջ:

Ահա այս նույն փուլային հաջորդական ընկալման մեջ է այս պահին արհեստական բանականությունը: Կարծում ենք, որ այն մեր հայկական իրականության մեջ հաղթահարել է շղթայի 4-րդ բաղադրիչը, այժմ լիարժեքորեն գտնվում է 5-րդ բաղադրիչում՝ վստահ քայլերով շարժվելով առաջ՝ դեպի վերջնական կիրառության դաշտ:

Ուսումնասիրելով համաշխարհային փորձը՝ տեսնում ենք, որ Չինաստանում և ԱՄՆ-ում արհեստական բանականությունն արդեն իսկ մտել է հանրակրթական դպրոցներ և 2025-2026 ուստարուց կուսումնասիրվի որպես դպրոցական առարկա: Հիշենք, որ մեր օրերում արդեն իսկ բարձրագույն ուսումնական հաստատության ուսանող է արհեստական բանականություն կրող էակը:

Արհեստական բանականությունն ունի թե՛ դրական, թե՛ բացասական կողմեր: Բացասական կողմեր՝

1. Այն չունի զգացմունքներ և չի կարող զգալ, ապրումակցել, ինչպես մարդը:

2. Ինչպես նշել ենք վերը, հաճախ տալիս է ճշգրտությունից հեռու և կրկնակի վերանայման կարիք ունեցող պատասխաններ: Խոսքը մասնավորապես վերաբերում է հայոց լեզվին, հայ գրականությանը և հարակից գիտությանը՝ հայոց պատմությանը: Մա կարելի է բացատրել այսպես՝ արհեստական բանականությունն առայժմ քիչ տեղեկատվություն ունի այս գիտությունների վերաբերյալ. գործիքակազմը հիշում և մտապահում է այն հարցումները կամ պատասխանները, որոնք տրվել են իր հետ երկխոսության ընթացքում: Ուստի պետք է ենթադրել, որ կարճ ժամանակ անց վստահելի և ճշգրիտ տեղեկատվություններ կստանան նաև վերը նշված գիտություններն ուսումնասիրողները, ուսուցիչները և աշակերտները:

3. Կան արհեստական բանականության գործիքներ, որոնք կարող են խախտել մարդկանց իրավունքները և անձնական տվյալների արտահոսք թույլ տալ և այլն:

Դրական կողմեր՝

1. Հաճախ հաճելի գրուցակից է, որ երբեք քո կարծիքին հակառակ կարծիք չի արտահայտի, միշտ համախոհ է:

2. Ունի վճարովի և անվճար տարբերակներ: Վճարովի տարբերակներն ունեն առավել հարուստ գործիքակազմ և կարող են ըստ պահանջի գեներացնել ձեր բոլոր մտքերն ու մտահղացումները:

3. Կարող է գեներացնել տեսանյութեր, նկարներ, սահիկաշարեր, պատրաստել գրաֆիկներ, ծրագրավորման կոդեր գրել, մաթեմատիկական խնդիրներ լուծել, գեկույցներ և հաշվետվություններ պատրաստել և այլն:

4. Ըստ նախընտրության՝ կարող եք ընտրել ձեզ հարմար գործիքը և իրականացնել ձեր նպատակները:

5. Հաճախ (որոշ գործիքներ՝ գրեթե ամենօրյա հաճախականությամբ) կրում են վիզուալ (տեսողական) փոփոխություններ և ծրագրային թարմացումներ, ըստ այդմ՝ առաջարկելով առավել մասշտեյի, թարմացված և առավել օգտակար գործիքակազմ:

6. Կարող է օգտակար լինել ցանկացած ոլորտում՝ բժշկություն, խոհանոց և այլն, իսկ մասնավորեցնելով իր գործունեությունը և կարողությունները մեր մասնագիտական ոլորտում՝ կարող ենք նշել, որ այն կարող է գեներացնել նկարներ, ինտերակտիվ խաղեր, տեսանյութեր, դասի պլաններ, հաշվետվություններ, բաց դասերի և միջոցառումների սցենարներ, հաջողված սահիկաշարեր և այլն: Այսինքն՝ այն ամենը, ինչը որոշակիորեն կթեթևացնի ուսուցչի ծանրաբեռնվածությունը, կնպաստի դասերի ինտերակտիվության բարձրացմանը, նոր գաղափարներ կառաջարկի և այլն:

Անդրադառնալով մեր անձնական փորձին՝ նշենք, որ 2024-2025 ուստարվա առաջին կիսամյակում (դեկտեմբեր) «Եղեգնաձորի վարժարան» ՊՈԱԿ-ի 10<sup>րդ</sup> դասարանի աշակերտների մասնակցությամբ և ակտիվ ներգրավվածությամբ իրականացրել և ներկայացրել ենք նախագծային աշխատանք «Բնքություն և մշակույթ» թեմայի շրջանակներում՝ «Հայ գրականության Ոսկեդարը» խորագրով: Ի սկզբանե սահմանել ենք նախագծային աշխատանքի նպատակներ, ի թիվս որոնց ներառել ենք նաև հետևյալը՝ զարգացնել սովորողների գիտատեխնիկական կարողունակությունները՝ ըստ հանրակրթական պետական չափորոշի (ՀԳՉ [1]) համապատասխան դրույթների և պահանջների: Պետք է շեշտել, որ մենք հասել ենք սահմանած վերջնարդյունքին, քանի որ աշակերտները, ցուցաբերելով նախաձեռնողականություն, համագործակցային և այլ հմտություններ, ներկայացրին նախագծային աշխատանքի վերջնարդյունքը, այն է՝ սահիկաշար, տեսանյութ և նկարներ՝ ստեղծված արհեստական բանականության կիրարկմամբ:

Անդրադառնալով միայն խնդրո առարկա արհեստական բանականության կիրառությանը՝ պետք է նկատել, որ աշակերտները ստեղծել են կից ներկայացված նկարները [տե՛ս նկար 1]՝ գեներացնելով Ոսկեդարի պատմիչների, ականավոր քաղաքական և պետական գործիչների ենթադրվելիք դիմապատկերները:

Այս գործում մեզ օգնության է հասել վերջին տարվա ընթացքում բավականին լայն տարածում գտած ChatGPT-ն [9]: Գեներացված նկարները հնարավորություն տվեցին.

1. ինտերակտիվ պատկերացում կազմել ուսումնասիրության ենթակա ժամանակաշրջանի պատմիչների, առավել վաղ և այդ նույն շրջանում գործունեություն ծավալած պետական գործիչների վերաբերյալ,

2. համեմատել մեր պատկերացումները և գեներացված նկարները:

Սակայն պետք է շեշտել, որ ChatGPT-ն նախնական տարբերակները գեներացրել էր ոչ հայկական մոտիվներով (առավելապես արևելյան դետալ-մանրամասներով հագեցած կերպարներ էր պատրաստել), սակայն արհեստական բանականության այս գործիքին ուղղված ճիշտ փորձը՝ հրահանգը, տվեց իր արդյունքը, և աշակերտների հետ համատեղ ջանքերի արդյունքում ստացանք իրականությանն առավել մոտ տարբերակներ:




*Մեսրոպ Մաշտոց և Կորյուն*




*Ագաթանգեղոս*




*Եղիշե*



*Փավստոս Բուզանդ*



*Ղազար Փարպեցի*



*Մովսես Խորենացի*



*Արտաշես Առաջին*




*Արտավազդ Երկրորդ*



*Տրդատ Գ Մեծ*



*Գրիգոր Լուսավորիչ*



*Արշակ Բ և Շապուռ*



*Վարդան  
Մամիկոնյան*



*Վահան  
Մամիկոնյան*

*Նկար 1*

Նշենք, որ այս գործիքը կիրառել ենք նաև 8-րդ դասարանում՝ «Գրականություն» առարկայի շրջանակներում՝ Վահան Տերյանին նվիրված ամփոփման դաս-միջոցառմանը՝ գեներացնելով հեղինակի նկարը, ինչպես նաև՝ 10-րդ դասարանում՝ «Հովհաննես Թումանյան» թեմայի շրջանակներում հանձնարարել ենք աշակերտներին գեներացնել «Անուշ» պոեմի գործող կերպարների նկարները [տե՛ս նկար 2]: Աշակերտները ստացել են բավական հաջող նկարներ:



*Վահան Տերյան*



*Անուշ*



*Սարո*



*Մոսի*

## Նկար 2

Այսինքն՝ գործիքը կիրառել ենք ոչ միայն նախագծային աշխատանքի ժամանակ, այլև բաց դասի և ընթացիկ դասապրոցեսի կազմակերպման ընթացքում: Աշակերտների մոտ այս մեթոդով մեծանում է հետաքրքրությունն առարկայի նկատմամբ, զարգանում են վերը նշված կարողունակությունները և ձեռք են բերվում նոր հմտություններ՝ ուսուցման գործընթացի արդյունավետ և ինտերակտիվ կազմակերպման նպատակով:

Սակայն հիշատակենք, որ բացի ChatGPT-ն՝ ներկայումս կան բազմաթիվ և բազմապիսի այլ գործիքներ ևս: Աստ կանոդադաշտանք դրանցից մի քանիսին:

Ուսուցիչներին, ինչպես գիտենք, անհրաժեշտ են լինում դասի պլաններ, միջոցառումների կամ բաց դասի սցենարներ, սահիկաշարեր, հաշվետվություններ և այլն: Այսօրինակ դեպքերում ևս արհեստական բանականությունը, ինչպես նշել ենք վերը, կարող է «օգնող ձեռք» լինել: Բացի ChatGPT-ն՝ կառանձնացնենք նաև հետևյալները՝

1. սահիկաշարեր պատրաստող գործիքներ՝ Gamma [2], Slidesgo [3] և այլն,
2. նկարներ գեներացնելու համար օգտակար են Midjourney [4], Magicschool [5], Dall-E [6] և այլն,
3. հարցաշարեր, դասացուցակներ, դասապլաններ կազմելու համար՝ Gemini [7], Perplexity [8] և այլ գործիքներ:

Որպեսզի այս գործիքներն աշխատեն առավել արդյունավետ, անհրաժեշտ է գրանցվել AI-երի համակարգում, իսկ որպեսզի առավել շատ գործիքներ հասանելի լինեն, անհրաժեշտ է ընտրել վճարովի տարբերակները:

Նշենք, որ վերոբերյալներից անվճար հիմունքներով առավել հասանելի գործիքակազմ են առաջարկում Gemini, Perplexity, Gamma.app, Slidesgo գործիքները (հիարկե՛ր՝ կայքում գրանցում կատարելուց հետո), իսկ նկարներ և տեսանյութեր գեներացնելու նպատակով խորհուրդ է տրվում օգտվել վճարովի տարբերակներից:

## Եզրակացություն

Վերոնշյալ գործիքներն ուսուցման գործընթացում կարող են տնտեսել և խնայել ուսուցչի ժամանակը, բարձրացնել դասապրոցեսի արդյունավետությունն ու ինտերակտիվությունը, նպաստել, որ սովորողն ու ուսուցիչը քայլեն ժամանակին համահունչ և պատրաստ լինեն ընդունելու 21-րդ դարի մարտահրավերները:

Պետք է, սակայն, շեշտել հետևյալ հանգամանքը՝ արհեստական բանականությունը որքան էլ զարգանա, որքան էլ զբաղեցնի և գրավի օրվա զգալի ժամանակը, որքան էլ խելացի լինի, օպերատիվ և արդյունավետ աշխատի, այն երբևիցե չի կարող փոխարինել ուսուցչին, չէ՞ որ այն կարող է իր գիտելիքներով հավասարագոր լինել ուսուցչին և մրցունակ, բայց չունի այն զգայական կողմը, որ սերում է ուսուցիչ-աշակերտ անքակտելի, բառի բուն իմաստով՝ *մարդկային* փոխհարաբերություններից: Չմոռանանք, որ այն ի վերջո բանականություն է, բայց արհեստական, որը պիտի լինի կառավարելի և գտնվի մարդու անմիջական վերահսկողության ներքո:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-244>

## Գրականություն և հղումներ

1. ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշում՝ 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>
2. <https://gamma.app/>
3. <https://slidesgo.com/>
4. <https://www.journeyfree.ai/>
5. <https://www.magicschool.ai/>
6. <https://www.dall-efree.com/pricing/>
7. <https://gemini.google.com/app?hl=ru>
8. <https://www.perplexity.ai/>
9. <https://chatgpt.com/>
10. Russell S., Norvig P. Artificial Intelligence, Pearson, 2003 Գրքի աղցանց տարբերակը՝ <https://lib.yzu.am/disciplinesbk/efdd4d1d4c2087fe1cbe03d9c ed6 7f34.pdf>

## Применение искусственного интеллекта в учебном процессе

Гасоян Србуи

### Резюме

**Ключевые слова:** учебный процесс, вызов 21-го века, инструментарий, обновление программного обеспечения, генерировать, инструкция, проектная работа

Предметом исследования данной статьи является искусственный интеллект, а цель – представить возможности его использования в образовательном процессе, а также продемонстрировать конкретные подходы и методы его интеграции в учебную деятельность. В работе рассматривается практический опыт применения ИИ, включая успешные примеры, а также предлагаются инновационные инструменты, способные сэкономить время преподавателя, повысить эффективность, интерактивность и вовлечённость обучения.

Актуальность темы определяется современными вызовами 21-го века: для того, чтобы быть информированными и подготовленными, необходимо владеть новейшими инструментами и технологиями, предоставляемыми постоянно развивающимся технологическим прогрессом, и учитывать их влияние на образовательный процесс. Освоение этих инструментов позволяет не только повысить профессиональные компетенции педагогов, но и оптимизировать процесс обучения, сделать его более динамичным, адаптивным и результативным.

Сочетание теоретических знаний и практического применения ИИ способствует развитию современных профессиональных навыков, улучшению образовательных стратегий, а также повышению мотивации и вовлечённости учащихся, что делает учебный процесс более эффективным, увлекательным и адаптированным к потребностям современного общества.

## The Application of Artificial Intelligence in the Learning Process

Gasoyan Srбуi

### Summary

**Key words:** learning process, 21st-century challenge, toolset, software update, generate, instruction, project work

The subject of this article is Artificial Intelligence (AI), and its purpose is to present practical ways of using AI in the learning process, as well as to demonstrate specific approaches and methods for its integration into educational activities. The study shares personal experience and showcases successful examples of AI application in classrooms. It also proposes innovative AI tools that can save teachers' time, enhance lesson effectiveness, interactivity, and student engagement, and support collaborative and project-based learning.

The relevance of this topic is determined by the challenges of the 21<sup>st</sup> century: to stay informed, prepared, and capable of developing appropriate strategies to address these challenges, educators need to master modern tools and leverage the opportunities offered by rapidly evolving technological advancements. Mastery of these tools not only improves teachers' professional competencies but also optimizes the learning process, making it more dynamic, adaptive, and results-oriented.

The combination of theoretical knowledge and practical AI application promotes the development of modern professional skills, enhances educational strategies, and increases student motivation and involvement, making the learning process more effective, interactive, and aligned with the needs of contemporary society.

Ներկայացվել է 24. 06. 2025 թ.

Գրախոսվել է 22. 09. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Ուսումնական խմբակներում սովորողների առաջընթացի գնահատման արդիական մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը**

*Էմինյան Գագիկ*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-251>

*Հանգույցային բառեր. գնահատում, ուսումնական, խմբակ, ռուբրիկ, ուսուցիչ, սովորող, կրթություն, ուսուցում, գնահատման մեխանիզմ*

**Նախաբան**

Վերջին տասնամյակում կրթական համակարգերում շեշտադրումը աստիճանաբար տեղափոխվում է սովորողի կուտակած գիտելիքի չափումից դեպի նրա՝ ուսումնառության ընթացքում ձեռք բերած հմտությունների, մտածողության ձևերի, համագործակցային կարողությունների և արժեքային համակարգի գնահատումը: Այս մոտեցումը արտացոլված է ինչպես միջազգային օրակարգերում (օրինակ՝ OECD-ի «Բազմաչափ կրթություն» և UNESCO-ի «Ուսուցման 21-րդ դարի հմտություններ» շրջանակներում), այնպես էլ Հայաստանի հանրակրթական կրթական բարեփոխումների համատեքստում և ռազմավարական ծրագրերում:

Հայաստանի հանրակրթական համակարգում ներդրվել են նոր չափորոշիչներ, որոնք ուղղված են սովորողի անհատական առաջընթացին, հետազոտական և հաղորդակցական հմտությունների ձևավորմանը: Այս համատեքստում ուսումնական խմբակները հանդես են գալիս որպես լրացուցիչ կրթական միջավայր, որտեղ սովորողը կարող է կիրառել, խորացնել և զարգացնել իր կարողությունները ոչ պաշտոնական (ավանդական), բայց նպատակային ձևաչափով:

Ուսումնական խմբակներում իրականացվող գնահատման գործընթացը հաճախ մնում է ավանդական, միակողմանիորեն կենտրոնացած՝ նպատակաուղղված լինելով միայն արդյունքին կամ մասնակցությանը, ինչը չի արտացոլում ուսուցման իրական նպատակները: Արդի գնահատման գործիքների (օրինակ՝ բազմաբաղադրիչ ռուբրիկների) և մեխանիզմների ներդրումը ուսումնական գործընթացում կարևորագույն խնդիրներից է:

Հատկանշական է նաև, որ թե՛ ուսուցիչները, և թե՛ սովորողները հաճախ չունեն հստակ ըմբռնում գնահատման ռուբրիկների կիրառման հնարավորությունների, սահմանների և գործնական արժեքի մասին, ինչը խոչընդոտում է դրանց տարածմանը:

Թեև ուսումնական խմբակներն իրենց բնույթով նախատեսված են զարգացնելու սովորողի հետաքրքրությունները, ինքնագործունեությունը և ստեղծագործական կարողությունները, սակայն գնահատման գործընթացը այդ միջավայրում հաճախ մնում է խիստ ձևական կամ սուբյեկտիվ: Շատ դեպքերում այն սահմանափակվում է միայն մասնակցության փաստով կամ վերջնարդյունքի ներկայացմամբ՝ առանց հաշվի առնելու սովորողի իրական առաջընթացը, ներգրավվածության խորությունը, համագործակցային վարքը, վերլուծական մոտեցումները և արժեքային կողմնորոշումները:

Գնահատման միակողմանի մոտեցումը խոչընդոտում է ուսուցման իրական ներուժի իրացումն ու խթանումը: Հատկապես այն պայմաններում, երբ կրթական բարեփոխումներն ընթանում են դեպի սովորողակենտրոն, բազմաբովանդակ ուսուցում, գնահատումը նույնպես պետք է վերաիմաստավորվի: Մինևույն ժամանակ ուսուցիչները հաճախ չունեն համապատասխան գործիքներ և մեթոդներ՝ խմբակներում բազմաչափ գնահատում իրականացնելու համար:

Այդ պատճառով ներկայում բաց է մնում հետևյալ հիմնախնդիրը.

ինչպիսի՞ պատկերացումներ և մոտեցումներ ունեն ուսուցիչները ուսումնական

խմբակներում բազմաբաղադրիչ, ռուբրիկային գնահատման վերաբերյալ, որքանո՞վ է այն կիրառելի, հասանելի և ընդունելի կրթական դաշտում՝ հաշվի առնելով առկա ռեսուրսները, մոտեցումները և իրական գործնական մարտահրավերները:

Այս հիմնախնդրի վերահանումը թույլ կտա ավելի հստակ արձանագրել ուսուցիչների կարիքները, համապատասխանեցնել առաջարկվող գործիքները և ստեղծել օժանդակ մեխանիզմներ, որոնք կնպաստեն գնահատման որակի բարձրացմանը՝ հատկապես ոչ ֆորմալ ուսուցման միջավայրում:

Նյութերի ընտրությունը պայմանավորված է մի քանի գործոններով.

1. **Համապատասխանություն արդի կրթական պահանջներին** – գնահատման համակարգի վերափոխման անհրաժեշտությունը նշվում է ինչպես պետական չափորոշիչներում, այնպես էլ համաշխարհային կրթական կազմակերպությունների շրջանակներում:

2. **Գործնական կիրառելիություն** – ներկայացված ռուբրիկները մշակվել են դպրոցի ներսում գործնական փորձարկման նպատակով՝ ներառելով իրական ուսումնական խնդիրներ, հանձնարարություններ և աշխատանքային ձևաչափեր:

3. **Հստակ կառուցվածք և բազմակողմանիություն** – դրանք հնարավորություն են տալիս դիտարկելու սովորողի զարգացումը մի շարք ուղղություններով՝ խուսափելով միակողմանի կամ գնահատման նեղացված ձևերից:

4. **Ինքնագնահատման և փոխադարձ գնահատման ներառվածություն** – օգտագործվող նյութերն ընդգրկում են նաև սովորողների ներգրավվածությունը գնահատման գործընթացում, ինչը համահունչ է սովորողակենտրոն կրթության սկզբունքներին:

5. **Համակարգային մոտեցում** – նյութերը ներառում են նաև ուսումնական օրագրեր, հաշվետվությունների ձևեր, հետազոտական գնահատման մեխանիզմներ, ինչը թույլ է տալիս տեսնել գնահատումը ոչ թե որպես մեկ գործողություն, այլ շարունակական գործընթաց:

Թեմայի ընտրությունը ոչ միայն հիմնավոր կերպով կապում է տեսական մոտեցումները գործնական լուծումներին, այլ նաև ստեղծում է հարթակ՝ գնահատելու առաջարկվող ռուբրիկային համակարգերի իրական կիրառելիությունը, ընկալելիությունը և բարելավման հնարավոր ուղիները ուսուցիչների կողմից:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում, ուսումնական խմբակներում սովորողների առաջընթացի գնահատման գործընթացը հաճախ մտում է միակողմանի, ոչ կառուցողական և սուբյեկտիվ: Բազմաչափ, ռուբրիկային գնահատման գործիքների ներդրումը դեռևս լայն կիրառություն չունի՝ մասնավորապես ուսուցիչների պատկերացումների, մեթոդաբանական հիմնությունների և գործնական հնարավորությունների սահմանափակումների պատճառով: Արդյունքում գնահատումը չի ծառայում որպես ուսուցման աջակցող գործիք՝ խոչընդոտելով ուսումնական խմբակի լիարժեք կրթական ներուժի իրացումը:

Խմբակների աշխատանքի շնորհիվ բացահայտվում են աշակերտների ընդունակությունները, նախաիրությունները, բավարարվում են ճանաչողական և ստեղծագործական պահանջումները [1, 218]:

**Նպատակը.** Ուսումնասիրել և բացահայտել հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների պատկերացումները, վերաբերմունքը և գործնական պատրաստակամությունը՝ ուսումնական խմբակներում սովորողների առաջընթացի բազմաչափ, ռուբրիկային գնահատման գործիքների կիրառման նկատմամբ, մշակել և այդ գործընթացի իրականացման համար արդյունավետ մեխանիզմներ և գործիքակազմ:

### **Խնդիրները.**

1. Հատկապես ուսումնական խմբակների համատեքստում վեր հանել ուսուցիչների պատկերացումները գնահատման ժամանակակից մոտեցումների վերաբերյալ:

2. Ուսումնասիրել, թե որքանով են ուսուցիչները ծանոթ և պատրաստ կիրառելու բազմաչափ գնահատման ռուբրիկներ:

3. Ուսուցիչների գնահատման գործընթացի կարողությունների զարգացման և գնահատման համակարգի բարելավման համար մշակել և ներկայացնել ուսումնական խմբակներում ընդգրկված սովորողների առաջընթացը արձանագրող գնահատման մեխանիզմներ և գործիքներ:

**Նորույթը.** Նորովի և համակարգված կերպով վերլուծում է ուսումնական խմբակներում ռուբրիկային գնահատման կիրառման հնարավորություններն ու խոչընդոտները՝ ուսուցիչների պատկերացումների և պատրաստակամության համատեքստում: Մշակվել են գործնականում կիրառելի բազմաչափ գնահատման ռուբրիկներ, որոնք թույլ են տալիս արձանագրել սովորողների ոչ միայն վերջնական արդյունքը, այլև ուսումնառության ողջ ընթացքը՝ ընդգրկելով հաղորդակցային, վերլուծական, համագործակցային և արժեքային դրսևորումները:

Ուսումնական խմբակները հանրակրթական կրթահամակարգում նախատեսված են որպես ոչ ֆորմալ, բայց կառուցվածքային հարթակ՝ սովորողների հետաքրքրությունների, ստեղծագործական ունակությունների և ինքնուրույն աշխատանքային կարողությունների զարգացման համար: Այս հարթակներում իրականացվող ուսուցումն իր բնույթով շատ հաճախ դուրս է մնում հստակ և համակարգված գնահատման շրջանակներից: Առաջարկվող կարգավորումներով՝ «խմբակում ընդգրկված սովորողների ուսումնառության արդյունքները գնահատվում են ձևավորող գնահատման մեթոդներով» [3]: Արդյունքում այդ աշխատանքը հաճախ ընկալվում է իբրև արտադասարանական գործունեություն՝ առանց փաստագրված առաջընթացի գրանցման ցուցանիշների:

Որոշ դեպքերում սովորողների առաջընթացի գնահատումը միտված է գնահատելու սովորողի մասնակցությունը: Այս մոտեցումը թեև պարզ, սակայն բավարար չէ՝ ամբողջությամբ արտացոլելու սովորողի ներգրավվածության, մտածողության, ստեղծագործականության կամ համագործակցային վարքի մակարդակը որոշելու և բարելավելու համար: Հենց վերաբերյալով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել բազմաչափ գնահատման ռուբրիկների մշակման և ներդրման անհրաժեշտությունը:

Ուսուցման խմբային եղանակը ուսուցման կազմակերպման ձև է, որի հիմքում ընկած է սովորողների հաղորդակցման ու համագործակցության խմբային ձևը: Ուսուցման խմբային եղանակի դեպքում սովորողները բաժանվում են 3-4 խմբերի և ծավալում են գործունեություն փոքր խմբերով: Խմբերում տիրում է փոխադարձ օգնության և ընդհանուր նպատակին հասնելու մթնոլորտը [2, 225]:

Գնահատման գործընթացում ռուբրիկների կիրառումը հնարավորություն է տալիս գործնականում օգտագործել համապարփակ չափանիշների համակարգ, որի միջոցով հնարավոր է գնահատել ոչ միայն վերջնարդյունքը, այլ նաև ամբողջ գործընթացը՝ գաղափարից մինչև գործնական իրականացում:

Մեր կողմից մշակված ռուբրիկաներում առանձնացված են հետևյալ առանցքային բաղադրիչները.

- **գիտելիքի ընկալում և վերարտադրում,**
- **վերլուծական և ստեղծագործական հմտությունների կիրառություն,**
- **թիմային աշխատանք և հաղորդակցություն,**
- **դիրքորոշում և արժեքային կողմնորոշում,**
- **տեխնոլոգիական հմտություններ և նախաձեռնողականություն:**

Այս բաղադրիչների ներառումը թույլ է տալիս գնահատումը դիտարկել ոչ միայն որպես արդյունքի միջոց, այլ որպես

- **զարգացման գործիք,**
- **հետադարձ կապի ձև,**
- **ինքնագնահատման և արտացոլման հնարավորություն:**

Ուսումնական խմբակում գնահատման այդպիսի մոտեցումը կխթանի սովորողների

## **ներքին մտտիվացիան, անձնային և թիմային պատասխանատվությունը, կրթելավի աշխատանքի որակը:**

Չնայած գնահատման գործընթացում ռուբրիկների կիրառման համակարգը տեսակա- նորեն արդյունավետ է և դիպակոսիկ տեսանկյունից արդիական, սակայն **ուսուցիչների կողմից դրանց ճիշտ և հմտությամբ կիրառման հարցը մնում է անորոշ:** Մեր երկարամյա փորձի, դիտարկումների և քննարկումների հիման վրա կարելի է ընդգծել մի քանի խնդիր.

- **Սահմանափակ ռեսուրսներ.** ուսուցիչների մի մասը չունի բավարար ժամանակ և տեխնիկական հնարավորություններ՝ նմանատիպ գնահատման համակարգ ներդնելու համար:
- **Մեթոդաբանական դժվարություններ.** որոշ ուսուցիչների համար գնահատման այդ ձևաչափը կարող է թվալ չափազանց բարդ կամ ավելորդ:
- **Մոտիվացիայի պակաս.** երբ ուսուցիչը ըստ առարկաների կամ ՀՊՀ բնագավառների չունի ռուբրիկների՝ որպես գնահատման մեխանիզմների նմուշօրինակներ, որն ընկալվում է իբրև կիրառման համար ոչ պարտադիր և կիրառելիության տեսանկյունից լրացուցիչ բեռ:
- **Հասարակական և կառույցային աջակցություն չլինելը.** պակասում է վերապատրաստման համապատասխան միջավայրը, ինչպես նաև այլ ուսուցիչների հետ փորձի փոխանակման համակարգը:

Հենց այս առումով է կարևոր **ուսուցիչ պատկերացումների և կարիքների բացահայտումը,** ինչը թույլ կտա հետազայում՝

1. հարմարեցնել ռուբրիկները՝ ըստ իրական դաշտի պահանջների,
2. ծրագրավորել ուսուցիչների վերապատրաստումը թիրախավորված ձևով,
3. ներդնել գնահատման նոր մշակույթ ոչ թե պարտադրանքի, այլ գիտակցված կիրառման հիման վրա:

Պարզելու համար ուսուցիչների պատկերացումները ուսումնական խմբակներում սովորողների առաջընթացի գնահատման վերաբերյալ, իրականացրել ենք առցանց հարցումներ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերի հանրակրթական հիմնական, միջնակարգ, ավագ և հատուկ դպրոցների 166 ուսուցիչների շրջանում: Հարցաթերթիկի առաջին՝ «Ձեր կարծիքով՝ ի՞նչ նպատակ պետք է ծառայի գնահատումը ուսումնական խմբակում ընդգրկված սովորողի համար (նշեք առավելագույնը 2 տարբերակ)» հարցին, հարցվողների 30 %-ը պատասխանել է՝ ուղղորդել սովորողի առաջընթացը, 40 %-ը՝ խրախուսել սովորողի առաջընթացը, 20 %-ը՝ ստուգել սովորողի գիտելիքները, իսկ 10 %-ը՝ առանձնացնել ուժեղ և թույլ սովորողներին: Հարցաթերթիկի երկրորդ՝ «Ծանո՞թ եք բազմաբաղադրիչ գնահատման գաղափարին, երբ գնահատվում են ոչ միայն գիտելիքները, այլ նաև հմտությունները, դիրքորոշումները և այլն» հարցին հարցմանը մասնակցած ուսուցիչների 22 %-ը պատասխանել է այո, լավ ծանոթ եմ և կիրառել եմ, 27 %-ը՝ լսել եմ, պատկերացում ունեմ, 44 %-ը՝ սահմանափակ պատկերացում ունեմ, իսկ 7 %-ը՝ առաջին անգամ եմ լուսում: «Ձեր կարծիքով՝ գնահատման ռուբրիկները (ըստ գիտելիքի, հմտության, դիրքորոշման, ստեղծագործ մտտեցման) որքանով է կիրառելի ձեր առարկայի դասավանդման ընթացքում» հարցին տրվել են հետևյալ պատասխանները՝ լիարժեք կիրառելի է՝ 21 %, կիրառելի է որոշ թեմաների ժամանակ՝ 52 %, դժվար կիրառելի է՝ 8 % և բոլորովին անհարմար է՝ 19 %: Հարցաթերթիկի հաջորդ՝ «Ի՞նչ հաճախականությամբ եք նախապես մշակված ռուբրիկներով իրականացնել գնահատում ուսումնական խմբակների ժամերին, ընդգծելով ոչ միայն գիտելիքը, այլ նաև հմտությունը կամ դիրքորոշումը» հարցին, հարցվողների 15 %-ը՝ հաճախ, 25 %-ը՝ երբեմն, իսկ անհա 60 %-ը նշել է, որ գործնականում երբեք չի կիրառել:

«Ռըքանո՞վ եք պատրաստակամ կիրառել բազմաբաղադրիչ գնահատման մտտեցումը (օր.՝ գիտելիք, հմտություն, դիրքորոշում, համագործակցություն և այլն)» հարցվողների

26 %-ը պատասխանել է՝ լիովին պատրաստ եմ և հետաքրքրված եմ այն փորձարկելու մեջ, 42 %-ը՝ կփորձեմ որոշ բաղադրիչներ ներգրավել իմ աշխատանքում, իսկ 32 %-ը՝ կարող է հետաքրքիր լինել, եթե ունենամ համապատասխան օրինակներ և աջակցություն: Հարցաթերթիկի հաջորդ՝ «Ո՞ր բաղադրիչների գնահատումն է առավել դժվար իրականացնել» հարցին հարցվողների 35 %-ը պատասխանել է դիրքորոշում և արժեքներ, 14 %-ը՝ ստեղծագործ մոտեցում և նախաձեռնություն, 10 %-ը՝ խմբային աշխատանք և հաղորդակցություն, 12 %-ը՝ տեխնոլոգիական կամ հետազոտական հմտություններ, իսկ 39 %-ի կարծիքով բոլորն էլ իրագործելի են: «Ո՞ր դեպքերում է գնահատումը առավել արդյունավետ (նշեք առավելագույնը 2 տարբերակ)» հարցին տրվել են հետևյալ պատասխանները՝ նախագծային աշխատանքում՝ 16 %, խմբային կամ համագործակցային աշխատանքում՝ 18 %, դասի ընթացքի գնահատում՝ 29 %, թեմատիկ/ամփոփիչ աշխատանքներում՝ 21 %, տնային առաջադրանքների վերլուծության ժամանակ՝ 7 %, իսկ 9 %-ը պատասխանել է, որ գնահատումն համար նախընտրում եմ 10 միավորանոց համակարգը: «Ձեր կարծիքով ռուբրիկների կիրառման ժամանակ ո՞րն է հիմնական խոչընդոտը» հարցին հարցվողների 17 %-ը պատասխանել է՝ ժամանակի պակաս, 18 %-ը՝ դասարանում սովորողների մեծ թիվը, 21 %-ը՝ ռուբրիկների բարդ ձևաչափերը և անհասկանալի ձևակերպումները, 23 %-ը կարծում է, որ անհրաժեշտ են նախապատրաստական նյութեր, իսկ 21 %-ը ըստ էության լուրջ խոչընդոտներ չի տեսնում: Հարցաթերթիկի հաջորդ՝ «Ի՞նչ է անհրաժեշտ, որպեսզի գնահատման ռուբրիկները կիրառվեն լայնորեն (նշեք առավելագույնը 2 տարբերակ)» հարցին ուսուցիչները տվել են հետևյալ պատասխանները՝ առարկայական օրինակներ ու ձևաչափեր՝ 37 %, համապատասխան վերապատրաստում՝ հմտությունների զարգացման համար՝ 42 %, թվային գործիքների հասանելիություն (օր.՝ Google Forms)՝ 16 %, իսկ 5 %-ը՝ փորձի փոխանակման համար համապատասխան հարթակի առկայությունը: Հարցաթերթիկի վերջին՝ «Կցանկանայի՞ք մասնակցել նմանատիպ գնահատման մեխանիզմների գործնական փորձարկմանը կամ անցնել համապատասխան վերապատրաստում» հարցին հարցվողների 50 %-ը պատասխանել է՝ այո, մեծ հետաքրքրությամբ, 47 %-ը՝ այո, եթե համատեղելի լինի իմ ծանրաբեռնվածության հետ, իսկ 3 %-ը՝ ոչ, հետաքրքրություն չունեմ: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ հանրակրթական դպրոցների ուսուցիչների պատկերացումները գնահատման մասին բազմաշերտ են՝ արձանագրելով միտում դեպի զարգացնող և բազմաբաղադրիչ գնահատման մոտեցումների ներդրումը: Նախ, գնահատման նպատակների վերաբերյալ ուսուցիչների արձագանքները վկայում են, որ գերակշռում է գնահատման դերը որպես խրախուսման և առաջընթացի ուղղորդման գործիք, ինչը համահունչ է ձևավոր գնահատման արդի սկզբունքներին: Սակայն դեռևս պահպանվում են գիտելիքահեն և դասակարգող մոտեցման տարրեր՝ որպես նպատակ նշելով գիտելիքի ստուգումը կամ սովորողների տարբերակումը: Ուսուցիչների միայն մի հատվածն է լիարժեք ծանոթ և կիրառել է բազմաբաղադրիչ գնահատման մեխանիզմներ, մինչդեռ շուրջ կեսը սահմանափակ պատկերացում ունի կամ բացակայում է նման փորձառություն, ինչը վկայում է թեմայի վերաբերյալ մեթոդական և գործնական աջակցության պակասի մասին: Չնայած դրան՝ պատասխանները ցույց են տալիս բարձր պատրաստակամություն նոր մոտեցումներ փորձարկելու հարցում. ուսուցիչների մեծ մասը հետաքրքրված է կամ պատրաստ է ներգրավվել: Գնահատման ռուբրիկների կիրառելիության և գործնական օգտագործման վերաբերյալ պատասխանները վկայում են տեխնիկական և կազմակերպչական խոչընդոտների առկայության մասին՝ մասնավորապես ժամանակի սղություն, ռեսուրսների պակաս, բարդ ձևաչափերի ըմբռնման դժվարություն և այլն: Այս ամենը խոսում է այն մասին, որ ուսուցիչների մեծամասնությունը գործնականում գրեթե երբեք չի կիրառում ռուբրիկներով գնահատումը: Բազմաբաղադրիչ գնահատման բաղադրիչներից ամենադժվար ընկալվողը և գնահատվողը ուսուցիչները համարում են սովորողների դիրքորոշումների ու արժեքների, ինչպես նաև ստեղծագործական և համագործակցային հմտությունների բաղադրիչները: Սա վկայում է ոչ

միայն չափման գործիքների պակասի, այլ նաև տվյալ ոլորտների վերաբերող հստակ չափանիշների ու հմտությունների հստակեցման անհրաժեշտության մասին:

Մինևույն ժամանակ ուսուցիչների մոտ նկատվում է գնահատման առավել արդյունավետ ոլորտների՝ դասի ընթացքի և նախագծային գործունեության նկատմամբ բարձր վստահություն, ինչը հնարավորություն է տալիս բազային կրթական միջավայրում ներդնել ավելի կիրառական և շարունակական գնահատման ձևաչափեր: Վերջապես, ստացված պատասխաններից պարզ է դառնում, որ բազմաբաղադրիչ գնահատման համակարգի լայն կիրառման համար առաջնային անհրաժեշտություն է մեթոդական պատրաստվածությունը և հստակ օրինակների հասանելիությունը: Սա հաստատում է այն գաղափարը, որ գնահատման համակարգի բարելավման ուղին ոչ այնքան գաղափարների ընդունման մեջ է, որքան դրանց կիրառման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման:

Հաշվի առնելով իրականացված ուսումնասիրությունները, մեր աշխատանքային փորձը, ուսուցիչների շրջանում իրականացված հարցումների արդյունքները՝ ուսումնական խմբակներում սովորողների առաջընթացը գնահատելու և գնահատման գործընթացը ավելի արդյունավետ և թափանցիկ իրականացնելու նպատակով մշակվել և ստորև աղյուսակների տեսքով ներկայացված են ուսումնական խմբակներում սովորողների առաջընթացի գնահատման և այդ արդյունքների վերլուծության ձևաչափեր, լրացված նմուշ օրինակներով: Ավելի մանրամասն տե՛ս աղյուսակ 1-12:

**Աղյուսակ 1**

**Գնահատման ուղորդիկ (ընդհանուր ձևաչափ)**

<b>Գնահատման չափանիշ</b>	<b>Բացառիկ (4)</b>	<b>Լավ (3)</b>	<b>Ձիջող (2)</b>	<b>Անհրաժեշտ է բարելավել (1)</b>
<b>Գիտելիքի ընկալում</b>	Ավելին գիտի, քան նախատեսվում է, հստակ ու մանրամասն է բացատրում թեման	Լավ է պատկերացնում հիմնական բովանդակությունը, ճիշտ պատասխաններ է տալիս	Հիմնական գաղափարները հստակ չի բացատրում, կան թերություններ	Չի գիտակցում թեմայի բուն էությունը, անպատասխանատու մոտեցում
<b>Հմտությունների կիրառում</b>	Վերլուծում է և հաջողությամբ կիրառում է ստացած գիտելիքները	Կարող է օգտագործել հիմնական հմտությունները, բայց ոչ միշտ ինքնուրույն	Կախված է արտաքին օգնությունից, հմտություններն էական թերություններ ունեն	Չեղբերումները գործնականում չի կարողանում կիրառել
<b>Դիրքորոշում և արժեքներ</b>	Ցույց է տալիս քաղաքացիական մեծ պատասխանատվություն, հարգանք ու համակցության մտեցում	Ընդունում է արժեքները և փորձում դրանք պահել	Մեկուսացված է ընդհանուր արժեքամակարգից, դրսևորումներում առկա են թերություններ	Անհարգալից վերաբերմունք կամ անհանդուրժողականություն
<b>Խմբային աշխատանք և հաղորդակցություն</b>	Ապագա առաջնորդի հատկանիշներով է, խրախուսում է թիմալի և աշխատանքը	Լավ է աշխատում թիմում, բայց կարող է ավելի ակտիվ լինել	Թիմային աշխատանքում քիչ ներդրում ունի	Թիմային միջավայրում չաշխատող է, հաճախ անհամաձայն կամ խոչընդոտող
<b>Ստեղծագործ մոտեցում և նախաձեռնություն</b>	Ինքնուրույն և արդյունավետ է գտնում նոր լուծումներ	Ներկայացնում է որոշ նոր գաղափարներ, բայց սահմանափակ	Մահմանափակվում է սովորական լուծումներով	Ակտիվ չէ, չունի նախաձեռնողականություն

**40 Ավելացվող կետեր՝ ըստ անհրաժեշտության, ըստ թեմաների.**

- ներկայացման հստակություն (բանավոր/գրավոր),

- տեխնոլոգիաների օգտագործում,
- հետազոտական աշխատանքների որակ,
- համեմատությունների, համադրությունների վերլուծության խոր մակարդակ:

## Աղյուսակ 2

### Գնահատման ռուբրիկի բաղադրիչները

Կարգորոշիչներ	4 – գերազանց	3 – լավ	2 – բավարար	1 – վատ
<b>Գիտելիքներ և հասկացությունների ըմբռնում</b>	Գիտելիքները խորն են և մնայուն, թեման խորապես է հասկանում, կարողանում է բացատրել և կիրառել	Բավական լավ գիտելիքներ ունի, կարողանում է հիմնականում բացատրել թեման և որոշակիորեն կիրառել	Ունի հիմնական գիտելիքներ, բայց կան բացեր և դժվարություններ դրանց կիրառման մեջ	Գիտելիքները մակերեսային կամ սխալ են, դժվարությամբ է ընկալում թեման
<b>Հետազոտական և վերլուծական հմտություններ</b>	Խորը հետազոտություն է անում, վերլուծում տվյալներ, ինքնուրույն ձևավորում է եզրակացություններ	Հաջողությամբ կիրառում է հետազոտական մեթոդներ, հաճախ է վերլուծում	Ունի սահմանափակ հմտություններ հետազոտության և վերլուծության մեջ, օգնություն է պահանջում	Հետազոտական հմտությունները թույլ են կամ չեն կիրառվում
<b>Տեխնոլոգիական հմտություններ</b>	Խմբային և անհատական աշխատանքներում հմտորեն օգտագործում է ժամանակակից տեխնոլոգիաներ	Հաճախ է օգտագործում տեխնոլոգիական գործիքները, բայց կան թերություններ	Միակողմանի կամ անհամարժեք է կիրառում տեխնոլոգիաները	Չի օգտագործում տեխնոլոգիական միջոցներ կամ դրանք անարդյունավետ է կիրառում
<b>Դիրքորոշում և արժեքային բաղադրիչ</b>	Ունի հստակ, խորացված ու քննադատական դիրքորոշում	Դիրքորոշումն ընդհանուր առմամբ դրական է, որոշ տեղերում, սակայն, կարող է զարգանալ	Դիրքորոշումը մակերեսային է, արժեքների ընկալումը՝ սահմանափակ	Դիրքորոշումն անորոշ կամ բացասական է, արժեքներն արտահայտված չեն
<b>Խմբային աշխատանք և համագործակցություն</b>	Լավ է համագործակցում, ակտիվ է, պատրաստ է օգնել և լսել ուրիշներին	Համագործակցում է, հազվադեպ է բացակայում կամ անտարբեր է	Հաճախ սահմանափակ մասնակցություն ունի, խնդիրներ են ծագում համագործակցության մեջ	Հաճախ բացակայում է կամ խոչընդոտում է թիմային աշխատանքին
<b>Մտեղծագործական մտեցում և նախաձեռնողականություն</b>	Ինքնուրույն է ստեղծագործում, նորարարական մտեցումներ է ցուցաբերում, նախաձեռնող է	Առկա է որոշակի ստեղծագործական մտեցում, բայց սահմանափակ	Մահմանափակ է ստեղծագործությունը, ավելի շատ կատարողական բնույթի աշխատանքներ է կատարում	Մտեղծագործական մտեցում չի ցուցաբերում, միայն կատարում է հանձնարարականները

### Խորհուրդներ կիրառման համար՝

• Յուրաքանչյուր գնահատական հնարավոր է հարմարեցնել ըստ կոնկրետ դասի կամ թեմայի: Օրինակ՝ տեխնոլոգիական հմտությունների բաժնում կարելի է ընդգծել համակարգչային վերարտադրությունների կամ մոդելների պատրաստման հմտությունները:

• Հարկ եղած դեպքում դասավանդողը կարող է ավելացնել հավելյալ բաղադրիչներ կամ բացատրություններ՝ ըստ թեմայի բովանդակության և խմբի մակարդակի:

Այս ռուբրիկի նպատակն է աջակցել ուսուցիչին ուսուցման գործընթացում ամբողջական, օբյեկտիվ և թափանցիկ գնահատում կազմակերպելու համար:

**Աղյուսակ 3**

**Ինքնագնահատման ձևաչափ (յուրաքանչյուր դասի կամ նախագծից հետո)**

<b>Հարցադրումներ</b>	<b>Այո (✓)</b>	<b>Ոչ (X)</b>	<b>Մասամբ (Δ)</b>	<b>Մեկնաբանություն (կամ օրինակ)</b>
Հասկացա թեմայի հիմնական միտքը	✓			Սովորեցի՝ ինչպես է տարբերվում մարտավարությունը ռազմավարությունից
Լսեցի ուրիշների կարծիքը առանց ընդհատելու	✓			Անգամ համաձայն չէի, բայց չընդհատեցի
Ինքս ակտիվորեն խոսեցի / կարծիք հայտնեցի			Δ	Մի անգամ միայն խոսեցի, պիտի ավելի բաց լինեմ
Աշխատելիս ներդրում ունեցա խմբում	✓			Ես ընտրեցի քարտեզը և բացատրեցի
Իմ տեսակետը փոխվեց որևէ մի բանի շուրջ		Δ		Մտածում էի՝ ճակատամարտը միշտ բախում է, բայց քննարկումը փոխեց կարծիքս

★ **Ընթացքը.** *Սովորողը լրացնում է դասից հետո կամ նախագծային աշխատանքի ավարտին: Ուսուցիչը կարող է օգտագործել դա որպես ուսումնական առաջընթացի արտացոլման գործիք:*

**Աղյուսակ 4**

**Փոխադարձ գնահատման ձևաչափ (խմբային աշխատանքից հետո)**

<b>Սովորողի անունը</b>	<b>Ինչով է նա նպաստել թիմին</b>	<b>Ինչ կցանկանայի, որ նա բարելավի</b>	<b>Իմ գնահատականը (1-10)</b>
Մարիամ	Մշտապես կազմակերպում էր աշխատանքը	Թող ավելի շատ լսի մյուսներին	8
Սերգեյ	Տեղեկատվություն լավ էր հավաքում	Կարող է ավելի հստակ խոսել	8
Լիլիթ	Բավականին ստեղծագործ մտեցում ուներ	Դադարեցնի ուշացումները	7

★ **Լպպատակ՝** *գարգացնել ոչ միայն վերլուծական, այլև բարոյական և միջանձնային ընկալումները: Ուսուցիչը վերահսկում է, որ արձագանքները լինեն հարգալից:*

**Աղյուսակ 5**

**Անասական ինքնավերլուծության ձև (յուրաքանչյուր սովորողի կողմից)**

1. Ի՞նչ նոր բաներ սովորեցի, որոնք ինձ զարմացրին: <i>Օրինակ՝ ինչպես կարող եմ քարտեզները բացահայտել գաղափարախոսությունը:</i>
2. Ի՞նչ բարոյություն հաղթահարեցի: <i>Անհամաձայն էի թիմակցիս հետ, բայց փորձեցի խոսել և լուծել խնդիրը:</i>
3. Ի՞նչ եմ սկսել մտածել նորովի: <i>Բռնությունը միշտ չէ, որ հաղթանակի միակ ուղին է:</i>
4. Ի՞նչ հմտություն եմ զարգացրել: <i>Գործուն մասնակցություն քննարկումներին, ճիշտ հարցադրումներ անել:</i>
5. Ի՞նչ խորհուրդ կտամ ինքս ինձ հաջորդ ամսվա համար: <i>Ավելի համբերատար լսել թիմակիցներին և պատրաստվել նախապես:</i>

**■ Լրացուցիչ էջ – ամսական ամփոփում**

**Ամսվա ամփոփում – Օրագիր**

**1. Իմ ամենամեծ ձեռքբերումը այս ամսվա ընթացքում.**

*Օրինակ՝ սովորեցի աշխատել ռազմավարական քարտեզներով, ինչն առաջ չէի կարողանում:*

**2. Իմ ամենաբարդ պահը.**

*Երբ պետք էր ներկայացնել մոդել կամ ինչ-որ նյութ, որի ընթացքում շատ նյարդայնացա:*

**3. Իմ առաջընթացը գնահատում եմ՝**

- Արժանի եմ խրախուսման
- Պետք է ջանքերս կրկնապատկեմ

**Աղյուսակ 6**

**Ուսումնական օրագրի կառուցվածքային նմուշ օրինակ (յուրաքանչյուր դասի (թեմայի) համար անհրաժեշտ է լրացնել նույն սկզբունքով)**

Չաս №	1	2	3
<b>Թեմա</b>	Ներածություն	Սկզբնաղբյուրներ, քարտեզներ, փաստաթղթեր	Հակամարտություն և համակեցություն
<b>Իմ հիմնական հայտնագործությունները</b>	Հասկացա, որ ռազմագիտությունը միայն մարտ չէ, այլ նաև մտածողություն	Իմացա, որ քարտեզը նույնպես սկզբնաղբյուր է	Ըմբռնեցի՝ ոչ բոլոր հակամարտությունները բախումով են ավարտվում
<b>Ինչ հարցեր առաջացան ինձ մոտ</b>	Ինչու են որոշ պատերազմներ համարվում սուրբ	Ինչպես որոշել՝ սկզբնաղբյուրը օբյեկտիվ է, թե ոչ	Հնարավոր՝ ր է հաղթել առանց զենքի
<b>Իմ ներդրումը խմբային աշխատանքում</b>	Մասնակցեցի ծրագրի կանոնների քննարկմանը	Ընտրեցի քարտեզ և բացատրեցի խմբին	Բերեցի օրինակ պատմությունից՝ Իսրայել-Արաբական կոնֆլիկտից
<b>Ինչով եմ հպարտ</b>	Առաջարկեցի լավ հարց	Հաջողվեց ճիշտ համեմատել սկզբնաղբյուրներ	Խորացված քննարկման մասնակից էի
<b>Ինչ կփորձեմ անել հաջորդ անգամ</b>	Կաշխատեմ ավելի ուշադիր լսել ուրիշներին	Կփորձեմ կարդալ լրացուցիչ փաստաթղթեր	Կարդալ կոնֆլիկտաբանության նյութեր

\* Այս աղյուսակը յուրաքանչյուր դասից հետո լրացվում է սովորողի կողմից՝ գուցե նաև դասավանդողի ուղղորդմամբ: Այն կարող է լրացվել գրավոր, էլեկտրոնային կամ Google Forms տարբերակով:

**Աղյուսակ 7**

**Արտագնա այցի հաշվետվության ձև (անհատական կամ խմբային լրացման համար)**

Բաղադրիչ	Նմուշային բովանդակություն / Լրացման ցուցում
<b>Այցի վայրը</b>	Օրինակ՝ Հայոց բանակի պատմության թանգարան, Սարդարապատի հուշահամալիր
<b>Այցի ամսաթիվը</b>	2025 թ. հոկտեմբերի 15
<b>Ուղեկցող անձ (ուսուցիչ/մասնագետ)</b>	Պատմության ուսուցիչ՝ Արմեն Մաթևոսյան
<b>Ցուցադրված հիմնական</b>	Օրինակ՝ Սարդարապատի հերոսամարտի

<i>Բաղադրիչ</i>	<i>Նմուշային բովանդակություն / Լրացման ցուցում</i>
<b>Նյութերը/բաղադրիչները</b>	զինատեսակներ, զինվորական զգեստներ, հերոսների լուսանկարներ
<b>Իմ տպավորությունները և իմացածը</b>	«Ինձ զարմացրեց, թե որքան ինքնուրույն էին հայ զինվորները: Ուշադրությունս գրավեց մարտական դրոշի պատմությունը»
<b>Այցի ընթացքում առաջացած հարցեր</b>	«Ինչպե՞ս էին զենքերը մատակարարվում հայ կամավորական ջոկատներին»
<b>Իմ կատարած գրառումները / նկարչական էջերը</b>	<input type="checkbox"/> (կցվում է նկարը կամ գրառումների էջը)
<b>Հետադարձ աշխատանք / ներկայացվելիք արդյունք</b>	Էսսե (1 էջ)՝ «Ի՞նչ կվերցնեի ինձ հետ այդ ժամանակից», գծապատկեր, տեսաներկայացում կամ բանավոր պատմություն
<b>Նկար/վիդեո/ցուցադրական նյութ (կցված է)</b>	<input type="checkbox"/> / <input type="checkbox"/> / <input checked="" type="checkbox"/>
<b>Վարկանիշ/գնահատում այցի մասին (ինքնագնահատում)</b>	★ ★ ★ ★ ☆ (4/5) – լավ էր կազմակերպված, բայց ցանկանում էի երկար դիտել վավերագրական ֆիլմը

**Ներկայացման ձևաչափի տարբերակներ**

- Լրացվում է ձեռագիր՝ թղթային տարբերակով
- Կազմվում է PDF ձևաչափով՝ ուսուցիչն ուղարկում է Google Classroom կամ Teams հարթակով
- Սովորողը կարող է պատրաստել նաև փոքր տեսահաշվետվություն կամ սահիկա-շար՝ ստեղծարարության զարգացման համար

**Աղյուսակ 8**

**Յուցահանդես\* / Փառատոնի պլանավորման ձևաչափ**

<i>Բաղադրիչ</i>	<i>Նմուշային բովանդակություն / Լրացման ցուցում</i>
<b>Միջոցառման անվանումը</b>	«Պատմության հնչյունները. ճակատամարտերի հետքերով»
<b>Միջոցառման տեսակը</b>	Յուցահանդես + բանավոր ներկայացումներ (poster session)
<b>Նպատակը</b>	Մովորողների ուսումնառության ամփոփում, ստեղծագործ արդյունքների ներկայացում, պատմական մտածողության խորացում
<b>Ժամանակը / Տևողությունը</b>	Մայիսի 20, 2026 թ. / 2 ժամ
<b>Տեղը</b>	Դպրոցի դահլիճ կամ պատմության լսարան
<b>Մասնակիցներ</b>	Խմբակի բոլոր սովորողները (անհատական կամ խմբային ներկայացումներով)

<i><b>Բաղադրիչ</b></i>	<i><b>Նուշային բովանդակություն / Լրացման ցուցում</b></i>
<b>Հրավիրվածներ</b>	Ծնողներ, այլ դասարանների սովորողներ, ուսուցիչներ, վաստակաշատ զինվորականներ
<b><u>Ցուցադրվող աշխատանքների ձևաչափը</u></b>	
- Մանրակերտեր (պատմական ճակատամարտեր)	
- Ալբոմներ / պաստառներ	
- Փոքրիկ ներկայացումներ / թատերական դրվագներ	
- Ժամանակագրություններ	
- Տեսանկարահանումներ կամ սահիկաշարեր	
- Ուսումնական օրագրեր (մասամբ ցուցադրության մեջ)	
<b><u>Գնահատման եղանակ</u></b>	
- Հատուկ ձևավորված գնահատման ռուբրիկ (ուսուցչի կողմից)	
- Հանդիսատեսի քվեարկություն՝ «Լավագույն ստեղծագործական մոտեցում», «Լավագույն պատմական վերլուծություն»	
- Փոքրիկ մրցանակներ / պատվոգրեր	
<b><u>Աջակցող թիմ / պատասխանատու անձինք</u></b>	
- Դասավանդող ուսուցիչ	
- Տեխնիկական աջակցություն (հնչյուն, պրոյեկտոր)	
- Սովորող կամավորներ (ընկերների աջակցությամբ)	
<b><u>Լրացուցիչ բաղադրիչներ (ըստ հնարավորության)</u></b>	
- Տպագիր ծրագիր այցելուի համար	
- QR կոդեր՝ աշխատանքների թվային ձևաչափի հասանելիությամբ	
- Արձագանքների տախտակ (post-it մեթոդով)	
<b><u>Նախապատրաստական փուլ</u></b>	
- Առաջադրանքների բաշխում ըստ խմբերի (3 շաբաթ առաջ)	
- Նյութերի հավաքագրում, ներկայացումների փորձ	
- Նախնական ցուցադրություն ուսուցչի հետ միասին	
- միջավայրի նախապատրաստում 1 օր առաջ	

\* Յուցահանդեպը ոչ միայն ամփոփում է ուսումնական գործընթացը, այլ նաև հարթակ է սովորողի ինքնարտահայտման, պատմության ընկալման և հանրության հետ կապի ձևավորման համար:

**Աղյուսակ 9**

**21-րդ դարի հմտությունների ինտեգրում ըստ թեմաների**

Թեմա	Քննադատական մտածողություն	Ստեղծարարություն	Համագործակցություն	Թվային/մեդիա գրագիտություն	Հաղորդակցություն
Ներածություն	Դասընթացի նպատակի գիտակցում, պատմության բազմակողմանիության ըմբռնում	—	Խմբային կանոնների քննարկում	—	Ծփում խմբի ներսում, դասավանդողի հետ
Սկզբնաղբյուրներ, քարտեզներ, փաստաթղթեր	Աղբյուրի վերլուծություն, փաստերի արժեկոծում	Քարտեզի ստեղծում կամ ձևափոխում	Զույգերով աշխատանք	Աղբյուրների վերլուծություն համացանցից	Բանավոր և գրավոր մեկնաբանություն
Հակամարտություն և համակեցություն	Հակամարտության պատճառների վերլուծություն	Խաղարկային իրավիճակների ստեղծում	Փոխադարձ վերլուծություն	Գոնֆլիկտաբանական տեսանյութերի դիտում	Քննարկում, դիրքորոշման ներկայացում

**Նպատակը.**

- **Ուսուցիչի համար** պարզ է դառնում, թե որտեղ պետք է ուժեղացնել համագործակցային կամ թիմային բաղադրիչները:
- Տեսնում է **սովորողի համար**, որ հմտություններն են դասընթացի միջոցով զարգանում:
- **Օճողի համար** հստակ ներկայացվում է, թե ինչ կարողություններ է ձեռք բերում իր երեխան:

**Աղյուսակ 10**

**Խմբակի աշխատանքների հաշվետվության աղյուսակի լրացման ուղեցույց**

Մյունակ	Նկարագրություն և լրացման հուշումներ
№	Հերթական համարը՝ յուրաքանչյուր հանդիպման կամ հաշվետվության համար
Ամսաթիվ / Պարբերականություն	Նշել հանդիպման կամ հաշվետվության իրական օրը կամ ժամանակահատվածը (օր, շաբաթ, ամիս)
Թեմա / Դասի վերնագիր	Դասի կամ թեմայի անունը, որը մշակվել է տվյալ հանդիպման ընթացքում
Դասավանդողի անունը	Հասցեագրել խմբակի դասավանդողի (ուսուցչի) անունը և ազգանունը
Սովորողների մասնակցություն (համար)	Նշել դասին մասնակցող սովորողների թիվը կամ բացակայողների թիվը (ընտրովի կարելի է նշել նաև ակտիվության մակարդակը)
Կատարած աշխատանքներ / Նպատակներ	Մեղմ նկարագրել, թե ինչ աշխատանքներ են կատարվել, ինչ նպատակներ են ձևակերպվել այդ դասին

<i><b>Մյուսակ</b></i>	<i><b>Նկարագրություն և լրացման հուշումներ</b></i>
Օգտագործված մեթոդներ և նյութեր	Նշել դասի ընթացքում օգտագործված հիմնական մեթոդները (դասախոսություն, քննարկում, աշխատանք խմբերով, ինտերակտիվ նյութեր, դիդակտիկ խաղեր և այլն) և հիմնական նյութերը (թվային, տպագիր, տեսանյութեր)
Արդյունքներ / Հիմնական ձեռքբերումներ	Նկարագրել ձեռք բերված գիտելիքները, հմտությունները կամ խմբի գործունեության արդյունավետությունը (օրինակ՝ նոր գիտելիքի յուրացում, հմտությունների զարգացում, թիմային աշխատանք)
Տրված հանձնարարություններ / Հաջորդ քայլեր	Գրանցել հաջորդ դասի կամ հաջորդ շաբաթվա համար տրված տնային հանձնարարությունները կամ հետագա աշխատանքների պլանը
Խնդիրներ / Հանձնարարությունների կատարման խոչընդոտներ	Պետք է նշել հնարավոր խոչընդոտները, դժվարությունները, որոնք խանգարել են աշխատանքին կամ տնային առաջադրանքների կատարմանը
Նշումներ / Համառոտ մեկնաբանություններ	Ուսուցչի կամ խմբի պատասխանատուի լրացուցիչ դիտարկումներ, առաջարկություններ, կարևոր նկատառումներ

**Աղյուսակ 11**

**Խմբակի աշխատանքների հաշվետվության ձև (աղյուսակ)**

<i><b>Ամսաթիվ / Պարբերականություն</b></i>	<i><b>2025-06-05</b></i>	<i><b>2025-06-12</b></i>
Թեմա / Դասի վերնագիր	Ներածություն	Սկզբնաղբյուրներ, քարտեզներ, փաստաթղթեր
Դասավանդող	Հովհաննես Մելիքյան	Հովհաննես Մելիքյան
Սովորողների մասնակցություն (համար)	12	11
Կատարած աշխատանքներ / Նպատակներ	Ծանոթացում ծրագրին, թեմայի ներկայացում	Փորձաքննություն և աշխատանք աղբյուրներով
Օգտագործված մեթոդներ և նյութեր	Դասախոսություն, քննարկում, քարտեզներ	Խմբային աշխատանք, ինտերակտիվ վեբ ռեսուրսներ
Արդյունքներ / Հիմնական ձեռքբերումներ	Սովորողների մոտ հիմնարար պատկերացումներ	Սովորողներն սկսել են վերլուծել իրական աղբյուրները
Տրված հանձնարարություններ / Հաջորդ քայլեր	Կարդալ պատմական աղբյուրներ	Պատրաստել փոքրիկ զեկույցներ
Խնդիրներ / Հանձնարարությունների կատարման խոչընդոտներ	Մի քանիսը բացակայել են դասից	Առկա են տեխնիկական խնդիրներ
Նշումներ / Համառոտ մեկնաբանություններ	Սովորողների հետաքրքրությունը բարձր է	Լավ է, պետք է ավելի շատ ժամանակ հատկացնել

**Տարբերակներ և հավելումներ՝**

- Սովորողների մասնակցությունը. կարելի է նշել բացակայողների թիվը, ակտիվության մակարդակը կամ խմբային գնահատականները:
- Արդյունքներում կարելի է ընդգծել գիտելիքների, հմտությունների կամ դիրքորոշումների փոփոխությունը՝ ըստ ծրագրի նպատակների:
- Խնդիրների հաստատումն նշել հնարավոր դժվարություններ՝ տեխնիկական, կազմակերպչական կամ այլ բնույթի:
- Նշումների բաժնում ընդգծել կարևոր դիտարկումներ, առաջարկություններ կամ կարևոր դեպքեր:

*Աղյուսակ 12*

**Վերջնարդյունքներ ըստ կարողունակությունների**

Բաղադրիչ	Վերջնարդյունք	Պարզաբանում / Օրինակ
<b>ԳԻՏԵԼԻՔ</b>	Սովորողը ունի համակարգված պատկերացում ռազմարվեստի պատմական, մշակութային և քաղաքագիտական նշանակության մասին	Օրինակ՝ բացատրում է տարբեր ժամանակաշրջանների ճակատամարտերի պատճառները, ընթացքն ու հետևանքները՝ կապելով պատմական համատեքստին
<b>ՀՄՏՈՒԹՅՈՒՆ</b>	Ունի պատմական աղբյուրների, քարտեզների, փաստաթղթերի վերլուծության կարողություն	Ընդունակ է քննադատորեն վերլուծել փաստաթուղթ, համեմատել հակասական աղբյուրներ, կառուցել ժամանակագրություն կամ բանավոր ելույթ
<b>ԴԻՔՈՐՈՇՈՒՄ</b>	Ճանաչում է խաղաղության և համակցության արժեքը՝ պատմական փորձի հիման վրա	Հարգանքով է մոտենում տարբեր ազգերին կամ գաղափարներին՝ անկախ պատմական կոնֆլիկտներից
<b>ԱՐԺԵՔ</b>	Ունի ազգային և համամարդկային արժեքների գիտակցում. զարգացնում է պատասխանատվության զգացում և պատմական հիշողություն	Ներկայացնում է իր աշխատանքը հպարտությամբ, գնահատում է հայրենասիրությունն ու մարդկանց զոհաբերությունը հանուն խաղաղության

**Ինչ կտա այս աղյուսակը**

- **Ուսուցիչին.** հնարավորություն գնահատելու՝ արդյո՞ք ուսումնական գործընթացը բերում է ակնկալվող կարողությունների ձևավորում:
- **Սովորողին.** կօգնի ինքնագնահատման և մոտիվացիայի ձևավորման հարցում:
- **Օտոլին և դպրոցի ղեկավարությանը.** կհստակեցնի խմբակի կրթական և քաղաքացիական դաստիարակության նշանակությունը:

**Տարբերակներ և հավելումներ՝**

- Սովորողների մասնակցությունը. կարելի է նշել բացակայողների թիվը, ակտիվության մակարդակը կամ խմբային գնահատականները:
- Արդյունքներում կարելի է ընդգծել գիտելիքների, հմտությունների կամ դիրքորոշումների փոփոխությունը՝ ըստ ծրագրի նպատակների:
- Խնդիրների հաստատումն նշել հնարավոր դժվարություններ՝ տեխնիկական, կազմակերպչական կամ այլ բնույթի:
- Նշումների բաժնում ընդգծել կարևոր դիտարկումներ, առաջարկություններ կամ կարևոր դեպքեր:

**Եզրակացություն:** Հարցման նախնական վերլուծությունը և ուսումնասիրությունը վկայում են, որ ուսուցիչների մեծ մասը գնահատումը ընկալում է որպես սովորողի առաջընթացը իրախուսող միջոց, այլ ոչ որպես ուսումնական գործընթացի կառուցվածքային մաս: Սա առավել ակնհայտ է ուսումնական խմբակների դեպքում, որտեղ գնահատումն ավանդաբար իրականացվում է ոչ ֆորմալ եղանակներով: Հետևաբար անհրաժեշտ է վերանայել ուսուցիչների մոտեցումը գնահատման նկատմամբ՝ վերանայելով դրա դերը՝ ոչ միայն որպես վերահսկողական գործիք, այլ՝ զարգացնող մեխանիզմ: Իրականացված հարցումներից պարզ դարձավ, որ ուսուցիչների մի ստվար հատված չունեն բավարար փորձ և մեթոդաբանական գործիքակազմ՝ նմանատիպ ռուբրիկներ ինքնուրույն ձևավորելու կամ արդյունավետորեն կիրառելու համար: Միևնույն ժամանակ որոշ ուսուցիչներ արտահայտել են բարձր հետաքրքրություն՝ պայմանով, որ կկիրառեն ռուբրիկներով գնահատում ուսուցման գործընթացում սովորողների առաջընթացը գրանցելու համար: Մեր կողմից մշակված գնահատման բազմաբնույթ ռուբրիկները կօգնեն ուսուցիչներին ոչ միայն գործնականում կիրառել դրանք, այլև մշակել նույնանման ռուբրիկներ՝ ըստ առարկաների կամ թեմաների, որոնք կարող են ունենալ նաև տեխնոլոգիական լուծումներ (օր.՝ Google Forms, Canvas կամ MS Teams):

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-251>

### **Գրականություն**

1. Սասարյան Լ. և ուրիշներ, Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ բուհերի համար), Երևան, Արտագերս, 2017, 360 էջ:
2. Հարությունյան Ն. և ուրիշներ, Մանկավարժական բառարան, Երևան, Զանգակ, 2018, 248 էջ:
3. <https://escs.am/am/news/14383>

## Необходимость внедрения современных механизмов оценивания прогресса учащихся в учебных кружках

Эминян Гагик

### Резюме

**Ключевые слова:** оценивание, учебный, контроль, кружок, рубрика, учитель, ученик, образование, обучение, механизм оценивания

В статье рассматривается необходимость внедрения современных механизмов оценки прогресса учащихся, участвующих в учебных кружках общеобразовательных учреждений, с особым акцентом на многомерную и рубрифицированную оценку. Отмечается, что в условиях кружковой работы оценивание часто носит формальный, односторонний и субъективный характер, что ограничивает полноценное развитие навыков обучающихся.

Анализируются представления учителей, их методологическая готовность и ограничения практического применения, а также выделяются основные препятствия и потребности. Рассматриваются системы рубрифицированной оценки, инструменты и механизмы, включающие коммуникативные, аналитические, кооперативные и ценностные компоненты, позволяющие оценивать не только конечный результат, но и весь процесс обучения.

В статье подчеркивается необходимость подготовки педагогов и разработки практико-ориентированных инструментов для повышения качества образования. Представленные механизмы рассматриваются как основа формирования новой культуры оценивания, где оценивание становится развивающим процессом, способствующим прогрессу и личностному росту учащихся, а не лишь контролем.

## The Necessity of Implementing Modern Mechanisms for Assessing Student Progress in Study Groups

Eminyan Gagik

### Summary

**Key words:** assessment, control, educational, study group, rubric, teacher, pupil, education, teaching, assessment mechanism

The article examines the necessity of implementing modern mechanisms for assessing pupil progress in extracurricular study groups within general education institutions, with particular emphasis on multidimensional, rubric-based assessment. It notes that in group learning environments, assessment often remains formal, one-sided, and subjective, which can hinder the comprehensive development of pupils' skills.

The study analyzes teachers' perceptions, methodological preparedness, and practical limitations, identifying key challenges and needs. It presents rubric-based assessment systems, tools, and mechanisms that incorporate communicative, analytical, collaborative, and value-oriented components, allowing evaluation not only of final outcomes but of the entire learning process.

The article emphasizes the importance of teacher training and the development of practice-oriented tools to enhance educational quality. The proposed mechanisms are viewed as the foundation for a new culture of assessment, in which evaluation becomes a developmental and constructive process rather than solely a supervisory one, fostering pupil progress, engagement, and holistic skill development.

Ներկայացվել է 11. 08. 2025 թ.

Գրախոսվել է 07. 11. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Տեսամեթոդի կիրառումը որպես «Հայոց պատմության հիմնահարցեր» դասընթացի դասավանդման արդյունավետության բարձրացման միջոց**

*Կոյսիկյան Արամայիս*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-267>

**Հանգուցային բառեր.** պատմության դասագործընթաց, գննականություն, տեխնիկական միջոցներ, նոր տեխնոլոգիաներ, տեսանյութ, կրթական համակարգ

**Նախաբան**

Ցանկացած կրթական համակարգ, արձագանքելով ժամանակի նոր մարտահրավերներին, մշտապես կարիք ունի վերափոխման և որակի բարելավման: Ցանկալի արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է վեր հանել կրթության ոլորտում առկա մարտահրավերները, ապա գտնել դրանց հաղթահարման ուղիները: 21-րդ դարում կրթության, այդ թվում նաև բուհական կրթության մարտահրավերներից մեկը կրթության համընդհանրապնուցումն է կամ կրթության համակարգը արդի համաշխարհային քաղաքակրթության պահանջմունքներին համապատասխանեցնելը:

Չնայած հայ ժողովուրդը ունի կրթության կազմակերպման և կրթական համակարգեր ստեղծելու հսկայական ժառանգություն, բայցևայնպես, այսօր Հայստանը ևս կարիք ունի կրթական առաջատար համակարգի ձևավորման:

Կրթական բարեփոխումների հաջողությունը պայմանավորված է ոչ միայն ուսանողների գիտելիքների արմատավորմամբ, այլև նրանց համապատասխան ճանաչողական ու կիրառական հմտությունների զարգացմամբ: Դա ապահովելու համար անհրաժեշտ է ուսումնառության ընթացքում, կարևորելով ուսանողի ակտիվության բարձրացումը, նորովի զարգացնել ուսանող-դասախոս ավանդական հարաբերությունները:

Ակնհայտ է, որ ուսանողի ինքնուրույն, իմացական ակտիվության խթանումը ավելի արդյունավետ է, քան նրան «պատրաստի գիտելիք» հաղորդելու ավանդական ուսուցման եղանակները [7, 46]:

Դա իր հերթին կրթական համակարգի առջև դնում է նոր պահանջներ՝ ապագա մասնագետների պատրաստվածության աստիճանի բարձրացումը: Այս խնդրի լուծման համար յուրաքանչյուր դասախոս պետք է ձգտի կատարելագործել դասագործընթացը: Այդ նպատակով դասավանդողը կարող է օգտագործել բազմաթիվ փոխներգործուն /ինտերակտիվ/ մեթոդներ ու տեխնոլոգիաներ, այդ թվում՝ հաղորդակցման տեղեկատվական միջոցների կիրառումը:

Ուսումնառության նորարական մեթոդներն ու տեխնոլոգիաները ապահովում ու երաշխավորում են դասավանդողի ու դասավանդվողի սերտ համագործակցությունը, վերջինիս մտավոր-վերլուծական, ստեղծագործական կարողությունների զարգացումը:

Երբ լսարանում հայտնվեցին էլեկտրոնային հարթակները, դասախոսության ավանդական մեթոդները դարձան ժամանակավրեպ: Դասախոսը հնարավորություն ստացավ թվային տեխնոլոգիաների միջոցով ընդլայնել դասագործընթացի տեսողական ու ճանաչողական բաղադրիչները՝ համադրելով գիտելիքի ստացման խոսքային, գննական և գործնական աղբյուրները:

Ուսումնառության նորարական մեթոդներն ու տեխնոլոգիաները ապահովում ու երաշխավորում են դասավանդողի ու դասավանդվողի սերտ համագործակցությունը, վերջինիս մտավոր-վերլուծական, ստեղծագործական կարողությունների զարգացումը:

Կրթական բարեփոխումների համատեքստում, կրթության մարդասիրական մոտե-

ցումներով և պատմագիտության կերպարանափոխմամբ պայմանավորված, նոր պահանջներ են դրվում նաև դասախոսների առջև: Այդ պահանջները փոխկապակցված են և մասնագիտական ու դասավանդման արդի հմտություններ են պահանջում:

Այդ պահանջներից մեկը բուհի ոչ մասնագիտական բաժիններում «Հայոց պատմության հիմնահարցեր» դասընթացի դասավանդումն է: Այդ բաժինների ուսանողները ուղղակի մասնագիտական հետաքրքրություն չեն ցուցաբերում դասընթացի նկատմամբ: Ուստի դասախոսի կողմից նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը կարող է դառնալ դասընթացի արդյունավետության բարձրացման կարևոր գործիք:

Հոդվածում փորձ է արվում քննարկել տեսամեթոդի դերը «Հայոց պատմության հիմնահարցեր» դասընթացի արդյունավետության բարձրացման գործում:

Ցավոք, որպես դասավանդման նորարարական մեթոդ, տեսամեթոդը համակողմանի հետազոտության չի ենթարկվել: Հրատարակվել են առանձին աշխատություններ ու գիտական հոդվածներ, որոնցում անուղղակի անդրադարձներ կան տեսամեթոդի վերաբերյալ: Բայցևայնպես, այդ հրապարակումները օգնել են վերը նշված թեման ներկայացնել ամբողջական:

### **Տեսամեթոդի դերը «Հայոց պատմության հիմնահարցեր» դասընթացի արդյունավետության բարձրացման գործում**

Ժամանակակից կրթությունը դասախոսի առջև նոր պահանջներ է դրել ոչ միայն ուսուցման բովանդակության հարստացման, այլև մեթոդական տարաբնույթ հնարների հարուստ զինանոցից օգտվելու կարողության առումով: Խոսքը մասնավորապես վերաբերում է ուսուցման տեսակետից այնպիսի «պահպանողական» դասընթացի, որպիսին «Հայոց պատմության հիմնահարցերն» է: Վերջինիս կազմակերպման առավել արդյունավետ եղանակը թեև հիմնականում շարունակում է մնալ դասախոսությունը, իսկ դասավարման հիմնական եղանակը՝ նյութի բանավոր շարադրումը: Այնուամենայնիվ, այսօր արդեն ակնհայտ է, որ առանց ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններից օգտվելու՝ դժվար է պատկերացնել արդյունավետությամբ առանձնացող Հայոց պատմության դասագործընթացը: Հետևաբար ժամանակն է պատմության դասավանդումն ազատել այն կաղապարված պատկերացումներից, թե վերջինիս կազմակերպման միակ և անփոփոխ կերպը դասախոսության ձևով նյութի մատուցման եղանակն է: Ժամանակակից դասավանդման փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր դասագործընթաց, այդ թվում՝ նաև պատմության, պետք է կազմակերպել ոչ թե խստորոշ սահմանված որևէ եզակի մեթոդով, այլ փորձել կազմակերպել զանազան մեթոդների համադրմամբ, ինչի դեպքում միայն հնարավոր կլինի հասնել որոշակի արդյունավետության:

Տեղեկատվական տեխնոլոգիաների հսկայական նշանակությունը ժամանակակից կրթության համար այլևս վիճարկելի չէ: Սակայն մի բան է՝ տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառել մի առանձին դասախոսությունում, և բոլորովին այլ բան՝ այդ տեխնոլոգիաները վերածել արդյունավետ ուժի, որը կփոխակերպի դասագործընթացը, ի վերջո՝ նաև կրթական ամբողջ գործընթացը:

Համաշխարհային մասշտաբով ժամանակակից կրթական գործընթացը բուհում բնորոշվում է տեղեկատվական նոր տեխնոլոգիաների գործադրմամբ տեխնիկական միջոցների կիրառման աճող միտումով. վերջինս հնարավորություն է տալիս առարկայի վերաբերյալ սովորողներին հաղորդել ոչ միայն անհրաժեշտ, այլև հավելյալ տեղեկություններ, ձևավորել ճանաչողական կարողություններ, ինչպես նաև ակտիվացնել սովորելու դրդապատճառները: Ուսումնական տեխնիկական միջոցների գործադրման բուհական ամբողջ նախընթաց հարուստ փորձը միանշանակ կերպով վկայում է, որ դրանց օգտագործումը միշտ էլ նպաստել է ճանաչողության գործընթացի կատարելագործմանը, իսկ ուսումնական այլ մեթոդների զուգակցումը ուսուցման տեխնիկական միջոցների հետ այն դարձրել է ավելի խոր և գիտակցված: Տեղեկատվական միջոցները կարող են ոչ միայն մեծացնել հաղորդող տեղե-

կատվության ծավալը, այլև խորացնել դրա ճանաչողական նշանակությունը, փոխել ուսումնական նյութի հաղորդման կառուցվածքն ու ձևերը: Ուստի ժամանակակից բուհը ուսումնական միջոցների զինանոցում կարևոր տեղ է հատկացնում մեղիա կրթացուցադրական մեթոդներին՝ սահիկահանդես, փաստավավերագրական կամ գեղարվեստական, պատմական ֆիլմերի դիտում, գիտաճանաչողական հաղորդումների ցուցադրում, քննարկում և այլն [1, 79-80], որոնց ամբողջությունն անվանվում է տեսամեթոդ: Իսկ դասախոսի մասնագիտական կարողությունները որոշելու չափանիշներից մեկն էլ դառնում է ուսումնական տեխնիկական միջոցների օգտագործման մեթոդական հնարներին տիրապետելու կարողության մակարդակը:

Մանկավարժագետների մեծ մասը, ովքեր անդրադարձել են ուսանողների ճանաչողական գործունեության վրա ուսուցման տեխնիկական միջոցների ազդեցության խնդրին, առանձնացնում են դասագործընթացին առնչվող նյութերի ցուցադրման հետևյալ արժանիքները՝ սովորողների հարստացումը անհրաժեշտ պատկերացումներով, ուսումնասիրվող երևույթի առավել հաջող բացահայտումը, սովորողների ճանաչողական ակտիվության և ինքնուրույնության զարգացումը, սովորելու և որոշակի առարկայի նկատմամբ դրական վերաբերմունքի ու հետաքրքրության ձևավորումը, ուսումնական աշխատանքի մակարդակի բարձրացումը: Բացի այդ, ուսուցման այլ տեխնիկական միջոցների համեմատ՝ գիտաճանաչողական նյութի և համակարգչային էկրանային միջոցների հնարավորությունների համադրումով ստեղծված տեսանյութը կարելի է օգտագործել ուսումնական իրավիճակների ավելի լայն շրջանակում: Դա կապված է տեսամեթոդի յուրօրինակ առանձնահատկությունների հետ: Այս դեպքում համակցվում են խոսքը և պատկերը, տեղեկատվության ծավալն ավելի մեծ է, իրադարձություններն ավելի դինամիկ են, էկրանն ավելի փոքր է, առաջացնում է ներկայության և շփման տպավորություն, հաղորդվող տեղեկատվությունը ավելի հրատապ է և հավաստի, հնարավորություն կա պատկերը կանգնեցնել կամ ցուցադրել մի քանի անգամ և այլն:

Տեսամեթոդի առավելությունները, որոնց մասին կխոսվի ստորև, դասավանդողին հնարավորություն են տալիս դասախոսության ընթացքում կազմակերպել և ղեկավարել ուսանողների բազմաբովանդակ գործունեությունը՝ համապատասխանացնելով այն առաջադրված կրթական և զարգացնող նպատակներին: Տեսամեթոդի կիրառումով կարելի է զգալիորեն խորացնել սովորողների տեսական գիտելիքները, նրանց նախապատրաստել բազմամակարդակ առաջադրանքների կատարմանը, նրանց մոտ ձևավորել ու զարգացնել մտավոր կարողություններ, ինչպես նաև ուսումնական և լրացուցիչ նյութի հետ կատարվող ճանաչողական գործունեության հմտություններ:

Դասախոսության ժամանակ օգտագործվող տեսանյութերը նպաստում են տեսական գիտելիքներն իրական կյանքին մոտեցնելուն: Փորձը ցույց է տալիս, որ տեսանյութերի օգտագործմանը դասախոսությունները խթանում են ուսանողներին՝ տրամադրելով նրանց հետաքրքիր և ոչ ավանդական աշխատանքների: Համապատասխանաբար աճում է դասախոսի մասնագիտական և անձնական հեղինակությունը. նա կարողանում է ազատ և գրագետ կերպով, ժամանակակից տեղեկատվական միջոցներով ղեկավարել ճանաչողության գործընթացը:

Ուսումնական տեխնիկական միջոցների զարգացումն ու կատարելագործումը կապված է Արևմտյան դպրոցի հետ, որն ուսումնական գործընթացում տեխնիկական միջոցներին հատկացնում է գլխավոր դերը: Օրինակ՝ գերմանացի մեթոդաբանները տեսանյութը համարում են որպես տեղեկատվության, աշխատանքի արդյունավետության վրա հսկողություն իրականացնելու, պրոցեսները և օբյեկտները դիտարկելու, երևույթները, փաստերը, իրադարձությունները գնահատելու կարողությունների ձևավորման, ինչպես նաև սովորողներին իրահանգելու միջոց: Գերմանացի գիտնականներն անհրաժեշտ են համարում ուսումնական տեսանյութերի արժանիքների այդպիսի համակցումը կոնկրետ դասընթացի

առանձնահատկությունների հետ, քանի որ տեսանյութ օգտագործող դասախոսը հնարավորություն ունի աշակերտներին ինքնուրույն գործունեությունն առավել հետաքրքիր կազմակերպելու, զարգացնելու նրանց քննադատական և ստեղծագործական մտածողությունը, նպաստելու ուսումնական պրոցեսի մեջ ավելի խորանալուն [13, 24]:

Ժամանակակից ռուս մանկավարժագիտությունը ևս դասավանդողին կողմնորոշում է ուսուցման ժամանակ օգտվելու տեղեկատվության զգայական ընկալումից, որը կարելի է ապահովել տեխնիկական միջոցներով, մասնավորապես՝ տեսանյութով: Ուսումնական տեխնիկան, որը հենված է տեսա-լսողական սինթեզի վրա, ակտիվացնում է ուսանողի մտածողությունը՝ դասախոսին հնարավորություն տալով գտնել սովորողների գիտակցության տանող ճանապարհը: Այս տեսակետը ռուսական ուսումնական հեռուստատեսության հիմնադիր Վ. Կուզնեցովը հիմնավորում է հետևյալ կերպ. «Սովորողների համար կյանքն իր բնականոն զարգացմամբ և ընթացքով տեսնելու և լսելու, ձևերի ներդաշնակությունը զգալու, խառն ձեռնարկումներին ներկա լինելու, իրադարձությունները տարբեր դիրքերից տեսնելու, դրանց ընդհուպ մոտենալու, սովորական պայմաններում մարդու տեսողությանն անհասանելի գիտական և տեխնոլոգիական փորձերին ակնաստես լինելու հնարավորությունը հանդիսանում է ուսուցման նկատմամբ կայուն և ուժեղ շարժառիթ, նպաստում է ակտիվ ընկալմանը, նյութը վերլուծելուն և մտապահելուն» [14, 45]:

Կասկած չի հարուցում այն փաստը, որ Հայոց պատմության դասավանդման ժամանակ դիտազննումն ուսումնական նյութը դարձնում է կենդանի և պատկերավոր: Խորհրդային ժամանակաշրջանում դասախոսի մեթոդների զինանոցում լուրջ տեղ էր զբաղեցնում ուսումնական հեռուստատեսությունը, որի հաղորդումները կոչված էին ուսումնական նյութը լավագույն ձևով մատուցելուն, ընդ որում՝ դա արվում էր ակադեմիական բարձր մակարդակով: Պրակտիկան ցույց տվեց, որ ուսումնական հեռուստատեսության թափանցումը պատմության դասի մեջ ուղեկցվում է ինչպես կազմակերպչական, այնպես էլ մեթոդական բնույթի դժվարություններով: Ուսումնական հեռուստատեսությանը փոխարինելու եկավ տեսաներիքը, որը հնարավորություն տվեց բազմացնել ուսումնական հեռուստահաղորդումները, ինչն էլ դասավանդողներին հնարավորություն տվեց դրանք օգտագործելու իրենց հայեցողությամբ: Այսօր համացանցը ողողված է բազմաթիվ գիտաճանաչողական հաղորդումներով, որոնց առանձին հատվածները կրիչի վրա ներբեռնելուց հետո կարելի է հաջողությամբ օգտագործել Հայոց պատմության դասախոսության ընթացքում: Դասախոսն այս ձևով կարող է ստեղծել սեփական տեսադարան: Դասախոսի ներբեռնած նյութը նրան հնարավորություն է տալիս որոշել ոչ միայն տեսանյութի ցուցադրման բովանդակային մասը, այլև դրա օգտագործման նպատակահարմար ժամանակը և դրա հետ կապված առաջադրանքների համակարգը:

Որպես ուսուցման միջոց դասախոսի կողմից ներկայացվող տեսանյութն ունի մի շարք առավելություններ. առաջին՝ հարկավոր է նշել ցուցադրման ժամանակային հնարավորությունները, դասավանդունք ինքն է ընտրում անհրաժեշտ նյութը, հաշվարկում ցուցադրման ժամանակը և տեսանյութի հետ կատարվող հետագա աշխատանքները: Երկրորդ՝ ցուցադրվող տեսանյութը դասախոսի ստեղծագործական աշխատանքի արդյունք է, այդ պատճառով էլ այն կարող է կիրառվել տարբեր կերպ՝ կապված ուսումնական առաջադրանքի հետ:

Տեսամիջոցների ստեղծման առավել բարդ տարբերակ է տեսանյութերի զուգակցումը տեղեկատվության այլ աղբյուրների հետ: Թույլ լսարանի հետ աշխատելու ժամանակ օգտագործվում է լրիվ տեսանյութը՝ հաղորդակարի տեքստի հետ համատեղ: Ուժեղ լսարանի համար այդ նույն տեսանյութն օգտագործվում է կրճատված տարբերակով. հանվում են բացատրություններն ու հաղորդակարի շարադրանքը: Սա լսարանին հնարավորություն է տալիս աշխատել պրոբլեմային ուսուցման պայմաններում:

Դասախոսության յուրօրինակ տեսահավելման մյուս արժանիքն այն է, որ հնարավոր

րություն կա առկա նյութին լրացուցիչ տեսանյութեր ավելացնել, որը թույլ կտա ընդարձակել սովորողների պատկերացումները քննարկվող հարցի, թեմայի կամ հիմնախնդրի վերաբերյալ, կամ էլ դասախոսը հնարավորություն ունի կրճատել տեսանյութը՝ դրա փոխարեն ավելի նոր և ժամանակակից նյութ ներբեռնելու համար: Մտեղծագործական մոտեցման դեպքում դասավանդողը կարող է առավել կարևոր և հիմնարար թեմաների վերաբերյալ ստեղծել ամբողջական տեսանյութեր՝ հավաքել ինչպես իլյուստրացիոն, այնպես էլ խաղարկային նյութեր [14, 69]:

Խոսելով դասախոսի անձնական տեսադարանի մասին՝ անհրաժեշտ է հիշատակել տեսանյութերի հատուկ տեսակը, որոնք նկարահանվում են պատմական վայրեր, թանգարաններ և ցուցահանդեսներ այցելելիս: Նման նկարահանումներն արժեքավոր նյութ են պարունակում, որոնց օգնությամբ դասախոսը կարող է դասախոսության ընթացքում կամ դրանից հետո հետաքրքիր գրույց կազմակերպել, քանի որ, բացի ճանաչողական նշանակությունից, այդպիսի նյութերն ունեն նաև դաստիարակչական մեծ նշանակություն:

Բայց քանի որ բոլոր դասախոսները չեն կարող իրենց տեսադարանը հարստացնել սեփական տեսանյութերով, այդ պատճառով էլ տեսանյութերի օգտագործման առավել տարածված ձևը մնում է համացանցից ներբեռնած գիտաճանաչողական նպատակներով ստեղծված պատրաստի տեսանյութի հետ կատարվող աշխատանքը: Մասնագետների կողմից ստեղծված, գիտականորեն հիմնավորված և որակյալ տեսանյութերի դիդակտիկական արդյունավետությունը խիստ բարձր է, և Հայոց պատմության հիմնահարցերի դասախոսության ժամանակ դրանց օգտագործումը բարենպաստ պայմաններ է ստեղծում ուսումնական գործունեության համար, դասախոսին հնարավորություն է տալիս ղեկավարել ուսանողների ճանաչողական գործունեությունը և օպտիմալ ձևով իրականացնել ուսուցման գործընթացը:

Որպես կանոն՝ պատրաստի տեսանյութերն իրենցից ներկայացնում են ավարտուն նյութ՝ հաղորդավարի շարադրանքով, որը հերթականությամբ ներկայացնում է կրիչի վրա ներբեռնած նյութը: Այդպիսի տեսանյութերի տևողությունը զգալիորեն գերազանցում է դասախոսության տևողությանը, այդ պատճառով էլ դասավանդողը պարտավոր է առանձնացնել նյութի անհրաժեշտ մասը և օգտագործել այն դասախոսության ժամանակ: Նման դասախոսություններին պատրաստվելու ժամանակ դասավանդողի գործողությունների հաջորդականությունը դասավորվում է հետևյալ կերպ՝ ա) թեմայի բովանդակությանը ծանոթանալու նպատակով տեսանյութի նախնական դիտում, բ) դասախոսության համար անհրաժեշտ դրվագների ընտրություն, գ) նյութը ներկայացնելու ձևերի և դրա ցուցադրման մեթոդների ընտրություն, դ) ցուցադրված դրվագների վերաբերյալ հարցերի և առաջադրանքների ձևակերպում [3, 48]:

«Հայոց պատմության հիմնահարցեր» դասընթացի վերաբերյալ տեսանյութերի բովանդակային հագեցվածությունն դասավանդողին հնարավորություն է տալիս ոչ միայն պլանավորել առանձին դասախոսությունը, այլև կոնկրետ թեմայի վերաբերյալ դասավանդման ամբողջական համակարգը՝ այդ նպատակով օգտագործելով տեսանյութի տարբեր դրվագները: Տեսանյութի օգտագործմամբ դասախոսությանը նախապատրաստվելու ժամանակ կարևոր հարցերից մեկն էլ դասախոսության կառուցվածքում տեսանյութի օգտագործման տեղի որոշումն է:

Գիտաճանաչողական տեսանյութերի յուրահասկությունն այն է, որ դրանք կարելի է օգտագործել դասախոսության ցանկացած փուլում: Օրինակ՝ դասախոսության ընթացքում ցուցադրված փոքրիկ դրվագը ուսանողներին առանց դժվարության կարող է ներգրավել նախորդ դասախոսության թեմայի մեջ, ակտիվացնել նրանց գիտելիքները՝ նախապատրաստելով նորի ընկալման համար: Եթե տեսանյութն ամբողջությամբ արտացոլում է ծրագրային նյութը, ապա այն կարող է հիմք դառնալ դասախոսի բացատրության համար և հանդես

գալ որպես տեղեկատվության հիմնական աղբյուր, հետևաբար այն կարող է մեծ դեր խաղալ բացատրության փուլում:

Գիտելիքների ստացման անփոխարինելի միջոց կարող է հանդիսանալ կարճ, բայց հետաքրքիր տեսանյութը, որն ուսանողների համար ցուցադրվում է նյութի ամրապնդման փուլում: Այս դեպքում նպատակահարմար է օգտագործել այնպիսի մեթոդական հնար, ինչպիսին է սովորողի կողմից տեսադրվագի բացատրությունը: Այս նույն հնարը կարելի է օգտագործել նաև սեմինար պարապմունքի համար հանձնարարության հարցման ժամանակ, երբ ուսանողները հերթականությամբ մեկնաբանում են տեսանյութի դրվագները:

Ամփոփիչ-ընդհանրացող դասախոսություններին տեսանյութը սովորողներին օգնում է հիշողության մեջ թարմացնել ամբողջ բաժինների և թեմաների նյութը, ինչպես նաև ծանոթանալ դասընթացի վերաբերյալ լրացուցիչ նյութերի [13, 51]:

Տեսանյութերն առանձնապես կարևոր նշանակություն ունեն գարգացնող դասախոսությունների կազմակերպման համար: Վերջին ժամանակներում արտասահմանյան շատ երկրներում պատմության բուհական ուսուցման համար սկսել են թողարկել պրոբլեմային առաջադրանքներով ուսումնական տեսանյութեր: Այդ առաջադրանքները կարող են լինել հետևյալ կերպ. ուսանողները հարցեր են ձևակերպում տեսանյութի վերաբերյալ կամ կազմում են պլան, երբ դասախոսը հանձնարարում է ցուցադրված նյութը բաժանել դրվագների և ձևակերպել հիմնական միտքը [3, 112]: Նման աշխատանքը զգալիորեն հեշտացնում է դասավանդողի գործը տեսանյութերի օգտագործմամբ դասախոսություններին նախապատաստվելու ժամանակ և մեծ արդյունավետություն է ապահովում:

Տեսանյութերի հետ կապված ոչ ավանդական ստեղծագործական առաջադրանքներից մեկն էլ հանդիսանում է շարադրությունը: Այն հնարավորություն է տալիս պարզել ուսանողների վերաբերմունքը պատմական գործիչների և իրադարձությունների նկատմամբ. նրանց մղում է արտահայտել իրենց զգացմունքներն ու մտքերը, հնարավորություն է տալիս լինել անցյալում և երազել ապագայի մասին:

Խոսելով տեսամիջոցների հետ կատարվող աշխատանքների զարգացնող մեթոդների մասին՝ չի կարելի շրջանցել ուսանողների գործունեության բանավիճակին ձևերը: Հաջող ընտրված տեսադրվագները կարող են սովորողներին հեշտությամբ առաջնորդել պրոբլեմային իրավիճակի մեջ և հետաքրքիր գրույց-քննարկում կազմակերպել թեմայի վերաբերյալ: Տեսանյութում ներկայացված իրարամերժ տեսակետները, հակասական իրավիճակները, տարաբնույթ վարկածները և հայացքները, որոնք վերաբերում են պատմական իրադարձություններին և դրանց հետևանքներին, լսարանին մղում են բանավեճի: Նույնիսկ եթե բանավեճի արդյունքում ճշմարտություն չի բացահայտվում, այդպիսի դասախոսության արդյունքը խիստ նշանակալի է, քանի որ այդ դեպքում ուսանողները սովորում են հիմնավորված ներկայացնել իրենց պատասխաններն ու առաջարկությունները, անկաշկանդ մտքեր փոխանակել, վիճել ընդդիմախոսների հետ և մտածել:

Կրթական գործընթացում արհեստական բանականության կիրառման շրջանակի ընդլայնումն ապագայում անխուսափելի է: Այս դեպքում կարևորվում է դասախոսի մեղիագրագիտությունը: Այն ենթադրում է տեղեկատվական տարբեր աղբյուրների և տեխնոլոգիաների օգնությամբ անհրաժեշտ տեղեկատվություն ընտրելու, մշակելու, պահպանելու և հաղորդելու կարողություն: Կարևոր է նաև ստացված տեղեկատվությունը վերլուծելու, գնահատելու, տարբեր տեսանկյուններից ներկայացնելու, ինչպես նաև այդ արդյունքը արդյունավետ օգտագործելու կարողությունը:

Արհեստական բանականությունը սովորողին հնարավորություն է տալիս մոդելավորել տարբեր պատմական իրադարձությունները, նորովի վերլուծել և ըմբռնել անցյալը: Կարծում ենք՝ ապագայում կներդրվի արհեստական բանականության կիրառման համապատասխան գործիքակազմ [8, 111]:

## Եզրակացություն

Որպես ամփոփում նշենք, որ տեսամեթոդը դասագործընթացում դասախոսի և ուսանողի միջև փոխգործակցության այն ձևն է, որը կարող է նպաստել գիտելիքի արդյունավետ յուրացմանը և իմաստավորմանը և ուսանողի կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս առանց դրանց պատմական հիմքերը բացահայտելու ճանաչել պատմական օրինաչափությունները, արդի հասարակական-քաղաքական գործընթացները, դրանց տարածմանակային բնութագրությունը, էական կողմերն ու զարգացման միտումները:

Պատմական դասավանդման նոր (արդի) մեթոդների ու տեխնոլոգիաների, այդ թվում նաև տեսամեթոդի կիրառումը հետապնդում է հետևյալ նպատակները.

1. Դասընթացը վերածել ոչ թե փաստերի ուսուցման, այլ ապահովել հիմնախնդրային ուսուցում: Այս դեպքում մասնագետների բազմաթիվ տեսակետների առկայությունը կարող է պարունակել թվացյալ կամ իրական հակասություններ, ինչը ուսումնառուից պահանջում է ոչ թե պատրաստի գիտելիք, այլ որոնում, ինքնուրույն դատողություն և մտածողություն:

2. Այս սկզբունքի կիրառումը զարգացնում է ուսանողների որոնողական-ճանաչողական հմտությունները:

3. Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ տարբեր տեսակետների վերլուծության և համեմատության միջոցով ուսանողը կարող է դեպքերը դարձնել համեմատելի, շեշտադրելով պատճառահետևանքային կապերի վերհանումը: Այսինքն՝ կիրառել տիպաբանացման մոտեցում:

4. Պատմության դասավանդման ժամանակ պատմական երևույթները կապել առօրյա պրակտիկայի հետ: Դա կնպաստի սովորողների կողմից պատմական գիտելիք ձեռք բերելուն, ինչպես նաև անցյալի փորձի իմաստավորմամբ կկարողանան արժևորել ներկան, կանխորոշել ապագան: Այսինքն՝ դասընթացի դասավանդմանը հաղորդել նպատակասլացություն:

5. Ընդլայնել որոշակի թեմաների կամ երևույթների պատմական վերլուծության շրջանակները՝ նրանցում ընդգրկելով այն տեսակետները, որոնք պաշտոնական պատմագիտության կողմից անտեսվել են: Դրանով ընդլայնվում են պատմագիտության շրջանակները:

5. Սովորողների մեջ ձևավորել էմպատիայի (ներապրումի) հատկանիշ, այսինքն՝ օտարի արարքն ըմբռնելու, իմաստավորելու, նաև սեփական վարքագիծն օտարի վարքային հարաբերակցելու ունակություն:

Չպետք է անտեսել նաև այս մեթոդին խոչընդոտող գործոնները: Այսօր աճում է պատմությանը նվիրված համացանցային կայքերի թիվը, որի պատճառով պատմական նյութի մեծ զանգված և բազմաթիվ, հաճախ հակադիր տեսակետներ դառնում են հասանելի: Հետևաբար, դասավանդողի համար խիստ կարևոր է պատմական նյութի գիտականորեն հիմնավորված ընտրությունը:

Մյուս խոչընդոտող՝ տեսակետների բազմազանությունը, կարող է հիպոթեփություն առաջացնել պատմություն առարկայից և թերահավատություն պատմական ճշմարտության կատմամբ այն ուսանողների մոտ, ովքեր ուսումնառությունը դիտում են որպես օբյեկտիվ գիտելիքի ձեռքբերման գործընթաց և դասընթացի մեջ փնտրում են ակնհայտ ճշմարտություններ: Այս դեպքում կարևորվում է դասավանդողի՝ պատմական իրողության նկատմամբ տարբեր տեսակետների ճիշտ, զգայուն հավասարակշռումը և այդ հիմքով պատմական դրվագի վերաիմաստավորումը: Դասավանդողը պետք է ընդգծի, որ պատմագիտության մեջ բազմաթիվ տեսակետների առկայությունը սովորական երևույթ է:

Ինչպես յուրաքանչյուր ուսումնական դասընթացի, այնպես էլ պատմության դասախոսությունը ներկա տեխնոլոգիական զարգացման պայմաններում չի կարող համարվել լիարժեքորեն արդյունավետ, եթե չի իրականանում զանազան մեթոդների համադրմամբ, այդ թվում՝ թվային տեղեկատվական միջոցների գործադրման:

### Գրականություն

1. Եփրիկյան Ա., Պատմության դասավանդման արդի մեթոդները և տեխնոլոգիաները, Երևան, «ՎԻՎ-Պրինտ», 2022:
2. Ամիրջանյան Յու., Մահակյան Ա., Մանկավարժություն: Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Մանկավարժ», 2004:
3. Ղույումյան Գ., Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք առաջին, Երևան, «Զանգակ – 97», 2005:
4. Պետրոսյան Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ: Գիրք 2-րդ, «Մանկավարժ», Երևան, 2008:
5. Մկրտչյան Ա., Շահվերդյան Մ. և ուրիշն., Կրթության արդի հիմնախնդիրներ. դեպքերի ուսումնասիրություններ, հեռանկարներ: Երևան, 2005:
6. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն., Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան, Երևան, 2004:
7. Գիրք պատմության ուսուցման. Ինչու, ինչպես, Երևան, «Պարադիգմա», կրթական հիմնադրամ, 2020:
8. Մկրտչյան Լ., Քոչիկյան Ա., Ղևոնդյան Հ., «Հայաստանի պատմություն» առարկայի դասավանդման ուղեցույց: Ուսումնամեթոդական նյութեր, Երևան, «ԿԶՆԱԿ», 2025:
9. Ասատրյան Ա., «Հայոց պատմություն» առարկայի դասավանդումը ոչ մասնագիտական բուհերում. Մարտահրավերներ և հեռանկարներ, Պատմության ուսուցման հիմնախնդիրները, գիտական հանդես, 2024 թիվ 2(2), Երևան, 2024:
10. Խաչատրյան Ա., Պատմության առարկայի գործառույթները և հիմնական մեթոդները, «Բամբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն», N3(24), Երևան, 2017:
11. Ինովացիոն հնարավորությունները և մարտահրավերները ժամանակակից աշխարհում, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Նաիրի», 2018:
12. Подласый И. Педагогика, кн. 1, Москва, “Просвещение”, 2002.
13. Бохович Л. Личность и её формирование в детском возрасте. Москва, “Просвещение”, 1968.
14. Березовский И., Павлов Л. Методика преподавания истории в школе. Пособие для учителей и студентов. Москва, “ПОМАТУР”, 2001.
15. Слостенин В. и др. Педагогика. Москва, “Школа Пресс”, 2003.

### Применение видеометода как средство повышения эффективности преподавания курса «Основные проблемы изучения истории Армении»

*Кохликян Араманс*

#### Резюме

**Ключевые слова:** учебный процесс по истории, наглядность, технические средства, новые технологии, видеоматериал, образовательная система

В условиях образовательных реформ и гуманизации обучения к преподавателям предъявляются новые требования, предполагающие владение современными профессиональными и педагогическими компетенциями. Развитие цифровых платформ сделало традиционные методы преподавания недостаточно эффективными, одновременно открыв возможности для расширения визуальных и познавательных аспектов обучения посредством интеграции словесных, наглядных и практических форм представления знаний.

Инновационные методы и технологии способствуют более тесному взаимодействию между преподавателем и студентами, развитию их аналитических и творческих способностей. В статье рассматривается роль видеометода в повышении эффективности курса по истории. Отмечается, что использование информационных технологий в вузах усиливает мотивацию обучающихся, расширяет объём и глубину усваиваемой информации, а также совершенствует процесс познания.

Видеометод позволяет организовать разнообразную учебную деятельность, углубить теоретические знания студентов и развить их когнитивные навыки. Одновременно возрастает профессиональный авторитет преподавателя, способного эффективно управлять образовательным процессом с использованием современных средств. В итоге подчеркивается, что сочетание различных методов, включая цифровые технологии, является необходимым условием полноценного и современного преподавания истории.

## **Application of the Video Method as a Means of Enhancing the Effectiveness of Teaching the Course “Key Issues of Armenian History”**

*Kokhlikyan Aramais*

### **Summary**

**Key words:** *history learning process, visualization, technical means, new technologies, video materials, educational system*

In the context of educational reforms and the humanization of education, new requirements are imposed on teachers, including the mastery of modern professional and pedagogical skills. The emergence of digital platforms has rendered traditional teaching methods less effective, creating opportunities to expand the visual and cognitive aspects of learning through the integration of verbal, visual, and practical forms of knowledge delivery.

Innovative methods and technologies foster closer interaction between lecturers and students, as well as the development of students' analytical and creative abilities. The article examines the role of the video method in improving the effectiveness of history courses. It is noted that the use of information technologies in higher education increases student motivation, expands both the volume and depth of acquired knowledge, and enhances the learning process.

The video method makes it possible to organize diverse learning activities, deepen students' theoretical knowledge, and develop their cognitive skills. At the same time, the professional authority of the lecturer increases, as they are able to effectively manage the educational process using modern tools. In conclusion, it is emphasized that the combination of various methods, including digital technologies, is a necessary condition for effective and contemporary history teaching.

Ներկայացվել է 25. 05. 2025 թ.  
Գրախոսվել է 23. 03. 2025 թ.  
Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**«Կյանքի իմաստ»-ի մոդելի դերը դեռահասության տարիքում**

**Հովհաննիսյան Նարե**

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-276>

*Հանգուցային բաներ. դպրոց, արժեք, նպատակ, ազատություն, ինքնաճանաչում, բավարարվածություն, ձգտում, միջանձնային հարաբերություններ*

**Նախաբան**

Դեռահասությունը մարդու զարգացման այն կարևոր շրջաններից է, որը հաճախ նշանավորվում է ինտենսիվ հուզական և հոգեբանական փոփոխություններով: Այս փուլում դեռահասներն սկսում են բացահայտել իրենց ինքնությունը, արժեքները և նպատակը, սկսվում է կյանքի իմաստի որոնման քայլերը՝ հանգեցնելով մի շարք հարցերի:

Կյանքի իմաստի որոնումը ոչ միայն գոյաբանական հարց է, այլև անձի հոգեբանական առողջության, ներքին հավասարակշռության և սոցիալական ակտիվության հիմնական պայմաններից մեկը: Կյանքի իմաստի գիտակցումը նպաստում է դժվարությունների հաղթահարմանը, ինքնագնահատականի բարձրացմանը և ապագայի նկատմամբ դրական վերաբերմունքին:

«Կյանքի իմաստի» մոդելը դիտարկվում է ոչ միայն որպես փիլիսոփայական, այլև որպես սոցիալ-մանկավարժական գործիք: Մոդելի կիրառումը նպաստում է դեռահասների սոցիալական ադապտացիայի բարձրացմանը: Դեռահասության շրջանում «կյանքի իմաստի» մոդելը դառնում է կարևորագույն գործոն՝ օգնելով կողմնորոշվել արժեքների բազմազանության մեջ, ձևավորել սեփական նպատակներն ու կատարել պատասխանատու ընտրություն: Այս հարցում դեռահասին աջակցում է ոչ միայն ընտանիքը, այլև սոցիալական մանկավարժը, որը ոչ միայն օգնում է կյանքի իմաստի որոնման և ընկալման ճանապարհին, այլև ստեղծում է անվտանգ միջավայր արժեքների բացահայտման և նպատակների սահմանման համար, պատրաստում հասարակության մեջ ինքնուրույն կենսագործունեության:

Սոցիալական մանկավարժը նպաստում է դեռահասի աշխարհայացքում կյանքի մասին պատկերացումների ձևավորմանը, առողջ ինքնագնահատականի և պատասխանատվության զարգացմանը, սոցիալական ակտիվության և համագործակցային հմտությունների ամրապնդմանը և ինքնիրացմանը:

Հոդվածի նպատակն է պարզել դեռահասների շրջանում կյանքի իմաստի գիտակցման մակարդակը:

Նպատակից բխող խնդիրներն են՝ պարզել կյանքի իմաստի մասին դեռահասի պատկերացումները, ուսումնասիրել միջավայրի ազդեցությունը դեռահասի կյանքի իմաստի ընկալման վրա, որոշել սոցիալական մանկավարժի ազդեցությունը կյանքի իմաստավորելու գործում, ներկայացնել առաջարկություններ սոցիալական մանկավարժի համար՝ «կյանքի իմաստի» մոդելն արդյունավետ կիրառելու նպատակով:

Հոդվածի տեսական նշանակությունն այն է, որ քննարկվում է «կյանքի իմաստի» մոդելի փոխկապակցվածությունը ինքնաճանաչման, արժեքային կողմնորոշումների և սոցիալական ինտեգրման հետ:

Հոդվածի գործնական նշանակությունն այն է, որ սոցիալական մանկավարժներին առաջարկվում են գործնական մոտեցումներ՝ դեռահասների հետ «կյանքի իմաստի» մոդելը կիրառելու և դրանով անձնային զարգացմանը նպաստելու համար:

## Հիմնական բովանդակություն

Կյանքի իմաստը վերաբերում է անհատի գոյության, նպատակի, համախմբվածության, նշանակության և դերի գիտակցմանը: Կյանքի իմաստի որոնման և ձեռքբերման ճանապարհին ձևավորվում է որոշակի վերաբերմունք սեփական անձի նկատմամբ: «Կյանքի իմաստի» մոդելն ստեղծում է ներդաշնակություն կյանքի գաղափարների, արժեքների և նպատակների միջև: Մոդելի կիրառումը հնարավորություն է տալիս զգալ կյանքի արժեքը, հավատալ սեփական ուժերին, առաջ շարժվել և հասնել հաջողության: Անձի ինքնաճանաչման, ինքնիրացման կարիքների հիման վրա առաջանում է կյանքի իմաստի ձեռքբերման ձգտում:

Գիտական գրականության մեջ կյանքի իմաստի վերաբերյալ կան բազմաթիվ մեկնաբանություններ: Այսպես, օրինակ՝ Մոկրատեսը գտնում էր, որ կյանքի հիմնական նպատակը իմաստության ձգտման և ինքնաճանաչման մեջ է:

Արիստոտելի կարծիքով կյանքի իմաստը երջանկությունն է, որը ձեռք է բերվում մարդու ներուժի իրացման, հոգու զարգացման և աշխարհի հետ ներդաշնակության հասնելու միջոցով:

Կ. Յունգը պնդում էր, որ կյանքի իրական իմաստն ընկած է անհատականացման մեջ՝ ինքնաճանաչման և ինքնագարգացման գործընթացում:

Ա. Կոնան Դոյլը գտնում էր, որ կյանքի իմաստը ճշմարտության որոնման, անարդարության դեմ պայքարի և դժվարությունները հաղթահարելու մեջ է:

Ֆ. Նիցշեն առաջ քաշեց գերմարդու գաղափարը, որն ունակ է ստեղծելու իր սեփական առաքելությունը և իմաստը:

Ըստ է. Կանտի՝ իրական երջանկությունն այն է, որ աշխարհն ավելի լավը դարձնենք այլ մարդկանց համար:

Ըստ Վ. Ֆրանկլի՝ կյանքի իմաստը անընդհատ փոխվում է, բայց երբեք չի անհետանում [6]: Այն պարզում է, թե ինչպես են անհատները դիմակայում մարտահրավերներին, որոշումներ կայացնում և ապրում իրենց առօրյա կյանքում: Վ. Ֆրանկլը գտնում էր, որ իմաստի որոնումը մարդու կյանքում առաջնային մոտիվացիոն ուժն է: Դեռահասների համար իմաստը կարելի է գտնել երեք հիմնական ուղիներով՝ ստեղծագործ աշխատանք, ուրիշների հանդեպ սիրո և կապվածության զգացում, տառապանք [8]: Դեռահասները կարող են իմաստ գտնել՝ հետապնդելով իրենց անձնական արժեքներին համահունչ նպատակներ՝ խորը կապեր հաստատելով ուրիշների հետ և հաղթահարելով դժվարությունները: Դեռահասների համար կյանքի իմաստի որոնումը հաճախ ներառում է այնպիսի հարցերի պատասխաններ, ինչպիսիք են՝ «Ո՞րն է իմ նպատակը», «Ի՞նչն է իմ կյանքին նշանակություն տալիս», «Ինչո՞ւ ես գոյություն ունեմ»:

Կարևորելով կյանքի իմաստային նշանակությունը՝ Ն. Մանդելան ասել է. «Մեր կյանքում կարևոր է ոչ այնքան մեր սեփական գոյության փաստը, որքան այն ամեն դրականը, որ մենք կարող ենք տալ մարդկանց, հենց այդ փաստն էլ որոշիչ ու կարևոր է դարձնում մեր կյանքը» [7]:

Ինչպես տեսնում ենք, կյանքի իմաստի մասին պատկերացումները տարբեր են՝ կան երջանկություն, ճշմարտություն, ինքնաճանաչում, ինքնագոհաբերություն և իմաստնություն:

Կյանքի իմաստը... սեփական կյանքից խորը բավարարվածության զգացումն է, որը կապված է մարդու հիմնական կարիքների բավարարման հետ (կամ այն բավարարելու ցանկության հետ): Այս զգացողությունը կարող է լինել կամ գիտակցված, կամ լիովին անգիտակից: Այսպիսով, «կյանքի իմաստ» հասկացությունը սերտորեն կապված է այնպիսի հասկացության հետ, ինչպիսին է «երջանկությունը» [2, 38]:

Գ. Ռեբերը և Փ. Կոնգը սահմանում են կյանքի անձնական իմաստը որպես «կարգի,

հետևողականության և իրենց գոյության նպատակների իրագրություն, արժանապատիվ նպատակներին հասնելու ձգտում և բավարարվածության ուղեկցող զգացում» [3, 221]: Վունգն առաջարկել է կյանքի իմաստի չորս բաղադրիչ [5, 637].

1. ընտրել կյանքի արժանապատիվ կամ իմաստալից նպատակ,
2. ունենալ բավարար պատկերացում, ով եք դուք, ինչ է կյանքը պահանջում ձեզինից, ինչպես կարող եք զգալի դեր կատարել կյանքում,
3. պատասխանատվություն կրել որոշում կայացնելու համար՝ ինչ կյանք եք ուզում ապրել, ինչ է իրենից ներկայացնում կյանքի կարևոր նպատակը,
4. հաճույք ստանալ կարևորության և բավարարվածության խորը զգացումից միայն այն ժամանակ, երբ իրականացնեք ձեր ինքնորոշման պատասխանատվությունը և ակտիվորեն հետևեք արժանապատիվ կյանքի նպատակին:

Այսպիսով, կյանքի իմաստի բաղադրիչներն օգնում են հստակորեն նախագծել գործողությունները և անցնել դրանց իրագործմանը:

Կյանքի իմաստի որոնումը կարող է լինել դրական, սակայն, միևնույն ժամանակ, դժվարին գործընթաց: Դեռահասության շրջանում իմաստի որոնումը ձևավորվում է մի շարք գործոնների ազդեցությամբ, ներառյալ ընտանեկան դինամիկան, սոցիալական հարաբերությունները, մշակութային ազդեցությունները և անձնական փորձը: «Կյանքի իմաստի» մոդելն օգնում է կյանքի դժվարին իրավիճակներում վերագտնել և իմաստավորել կյանքը՝ հնարավորություն տալով որոշումներ կայացնել, վստահ լինել, կատարել ինքնավերլուծություն, ունենալ կայուն դիրքորոշում: Սակայն իմաստի երկարատև որոնումը կարող է հանգեցնել անտարբերության:

Այն դեռահասները, որոնք հասկացել են իրենց կյանքի իմաստը, ավելի մեծ հոգեբանական բարեկեցություն են զգում, ունեն բարձր ինքնագնահատական, բավարարվածության զգացում և լիարժեք հոգեկան առողջություն: Կյանքի իմաստը հասկանալը նաև օգնում է դեռահասներին հաղթահարել սթրեսը, անհաջողությունը և անորոշությունը: Այն օգնում է դիմակայել մարտահրավերներին և ապագայի հանդեպ հույս է ներշնչում:

Մյուս կողմից, դեռահասների մոտ կյանքի իմաստի բացակայությունը կարող է նպաստել հուսահատության, շփոթության և օտարության զգացմանը, ինչը կարող է խանգարել ընդհանուր բարեկեցությանը:

Դեռահասների զարգացման և կյանքի իմաստը գտնելու հարցում վճռորոշ դեր են խաղում *ընտանեկան և սոցիալական հարաբերությունները*: Ընտանեկան միջավայրը և հասակակիցների հետ հարաբերությունները հիմք են հանդիսանում դեռահասի կյանքի իմաստի որոնման համար: Ընտանեկան ջերմ հարաբերությունները կարող են ապահովել անվտանգության, սիրո և առաջնորդության զգացում, որն օգնում է դեռահասներին իրենց համար մեծ նպատակներ սահմանել: Նմանապես, ընկերական հարաբերությունները դեռահասներին հնարավորություն են տալիս իմաստ գտնելու ընդհանուր փորձառությունների, հուզական մտերմության և փոխադարձ աջակցության միջոցով: Մյուս կողմից, ընտանեկան կոնֆլիկտը, հասակակիցների շրջանում մերժված լինելը կամ սոցիալական մեկուսացումը կարող են խանգարել իմաստի ընկալմանը՝ հանգեցնելով օտարության և շփոթության զգացումների:

Չափորդ կարևոր գործոնը *մշակութային և կրոնական համոզմունքներն* են: Մշակութային և կրոնական շրջանակները կարող են դեռահասներին ներշնչել համայնքին, խմբին պատկանելիության և կյանքի իմաստը հասկանալու զգացում: Ուժեղ կրոնական կամ հոգևոր ավանդույթներ ունեցող մշակույթներում դեռահասները հակված են հավատալ այն համոզմունքներին, որոնք օգնում են հասկանալ կյանքի նպատակը և մղում են առաջնորդության: Այնուամենայնիվ, աշխարհիկ կամ բազմամշակութային միջավայրում գտնվող

դեռահասները կարող են տարբեր մարտահրավերների առաջ կանգնել կյանքի իմաստը գտնելու հարցում:

*Ճանաչողական զարգացման և արտացոլման* միջոցով դեռահասները կարող են վերացարկված և քննադատորեն մտածել կյանքի մասին: Այն հնարավորություն է տալիս մտածել իրենց սեփական գոյության մասին, կասկածի տակ դնել հասարակության նորմերը և զարգացնել արժեքների և նպատակների իրենց սեփական համակարգը: Այս մտորումների բարդ և հաճախ հակասական բնույթը կարող է հանգեցնել շփոթության կամ գոյության ճգնաժամի: Ինքնարտացոլման կարողությունը կարևոր նշանակություն ունի կյանքի իմաստի որոնման մեջ, քանի որ այն օգնում է դեռահասներին գնահատել իրենց նպատակները, ձգտումները և արարքների համապատասխանեցումը իրենց իսկ արժեքներին:


*Կյանքի փորձառություններն ու դժբախտությունները* կարող են խորը ազդեցություն ունենալ կյանքի իմաստի որոնման վրա: Դեռահասները, որոնք ունեցել են կորուստ կամ դժվարություններ, սկզբում պայքարում են իրենց տառապանքի իմաստը գտնելու համար: Այնուհետև, ժամանակի ընթացքում, այս փորձառությունները հանգեցնում են անձնական աճի և ճկունության՝ օգնելով դեռահասներին ավելի խորը նշանակություն տալ իրենց կյանքին: Ճկունությունը ենթադրում է, որ մարտահրավերների հաղթահարումը կարող է խթանել իմաստի ընկալումը, քանի որ դեռահասները ավելի լավ են հասկանում իրենց ուժեղ կողմերը և դժվար իրավիճակներից դուրս գալու իրենց կարողությունը:

Դեռահասների կյանքի իմաստային ընկալումները հասկանալու համար կատարել ենք հետազոտություն՝ պարզելու դեռահասների կյանքի իմաստի առկայությունն ու որոնումը, կյանքի իմաստային կողմնորոշումն ու նպատակը:

Հետազոտության համար կիրառել ենք Մ. Ֆ. Ստեգերի, Պ. Ֆրեզիերի, Շ. Օիշի և Մ. Կալերի «Կյանքի իմաստային հարցարանը» (MQI) [4], որը որոշում է մտտիվացիայի մակարդակը կյանքի իմաստի որոնման և այդ իմաստի գիտակցման գործում, ինչպես նաև Դ. Ա. Լեոնտի «Կյանքի իմաստային կողմնորոշումների» թեստը [1], որն ուղղված է կյանքի իմաստայնության ընդհանուր որոշչի բացահայտմանը:

Հետազոտությանը մասնակցել է 8-րդ դասարանում սովորող 55 դեռահաս:

Անդրադառնալով «Կյանքի իմաստային հարցարանի» արդյունքներին՝ կատարում ենք հետևյալ վերլուծությունը.




**Պատկեր 1. «Կյանքի իմաստային հարցարանի» վերլուծություն**

Կատարելով «Կյանքի իմաստային հարցարանի» վերլուծությունն ըստ ընդհանուր մասնակիցների թվի՝ դեռահասների մոտ կյանքի իմաստի առկայության ցուցանիշը նշանակում է, որ հարցվածների 38,18 %-ն իրենց կյանքում արդեն գտել կամ գգում է, որ ունի հստակ իմաստ, նպատակի զգացում: Այն համեմատաբար ցածր ցուցանիշ է և կարող է մատնանշել էքզիստենցիալ անորոշություն, կյանքի բավարարվածության պակաս կամ դեռ ընթացող որոնման փուլ:

Կյանքի իմաստի որոնման 58,18 % ցուցանիշը բավականին բարձր է. հարցվածների մեծ մասը դեռևս ակտիվորեն որոնում է իր կյանքի իմաստը, ինչը վկայում է կյանքի իմաստի հարցի արդիականության, զարգացող ինքնագիտակցության և ներքին դինամիկայի մասին: Նրանք չեն հրաժարվել իմաստից, այլ գտնվում են որոնման գործընթացում:

Կյանքի իմաստի առկայության և որոնման հավասարության 3,63 %-ը ներկայացնում է այն դեռահասներին, ովքեր միաժամանակ և՛ ունեն իմաստի որոշակի զգացում, և՛ շարունակում են որոնել նոր իմաստներ: Այն կարող ենք դիտել որպես առավել առողջ և կայուն դիրք, քանի որ դեռահասն ունի հիմք, բայց շարունակում է բաց լինել նոր նպատակների և արժեքների առջև:

Անդրադառնալով «Կյանքի իմաստային կողմնորոշումների» թեստին՝ կատարում ենք հետևյալ վերլուծությունը.



**Գծապատկեր 2. «Կյանքի իմաստային կողմնորոշումների» թեստի վերլուծություն՝ ըստ կյանքի իմաստային կողմնորոշման և նպատակի առկայության**

Կյանքի իմաստային կողմնորոշման (10,9 %) և նպատակի առկայության (14,5 %) ցածր մակարդակները վկայում են, որ հարցվածների մոտ կյանքի իմաստի բացակայությունը կամ դրա նկատմամբ անտարբերությունը հատուկ ընդգծված խնդիր չէ: Սակայն այս խումբը կարող է ռիսկային համարվել՝ կապված կյանքի բավարարվածության և հոգեբանական կայունության ցածր մակարդակի հետ:

Կյանքի իմաստային կողմնորոշման (67,2 %) և նպատակի առկայության (50,9 %)

միջին մակարդակները վկայում են, որ հարցվածների մեծամասնությունն ունի որոշակի կողմնորոշում և նպատակներ, բայց դրանք դեռևս ամբողջովին կայացած կամ հաստատուն չեն: Կյանքի իմաստային կողմնորոշման բարձր միջին տոկոսը ցույց է տալիս, որ մարդիկ ունեն որոշակի արժեքային կողմնորոշումներ, իսկ նպատակի առկայությունն ավելի ցածր է, քանի որ նպատակները հաճախ չեն լինում հստակ կամ երկարաժամկետ, այլ ավելի շատ ընթացիկ բնույթի են:

Կյանքի իմաստային կողմնորոշման (21,8 %) և նպատակի առկայության (34,5 %) բարձր մակարդակները վկայում են, որ հարցվածներն ունեն կայուն իմաստային կողմնորոշումներ և հստակ նպատակներ: Նպատակի առկայությունն այստեղ ավելի բարձր է, քան իմաստային կողմնորոշումը, ինչը ցույց է տալիս, որ որոշ հարցվածներ երբեմն ունեն կոնկրետ նպատակներ, բայց դրանք միշտ չեն տեղավորվում կյանքի ամբողջական իմաստային համակարգի մեջ:

Չետագոտության արդյունքները վկայում են, որ հարցված դեռահասների մեծամասնությունը կյանքի իմաստի և նպատակի ձևավորման միջին փուլում է: Նրանք արդեն ունեն որոշակի արժեքային կողմնորոշումներ, բայց դեռևս գտնվում են որոնման և կայացման գործընթացում: Միաժամանակ, բարձր մակարդակ ունեցող խումբը ցույց է տալիս կայուն և իմաստավորված կյանքի օրինակ, մինչդեռ ցածր մակարդակի փոքրաթիվ խումբը կարիք ունի հավելյալ աջակցություն:

Այս տվյալները ևս մեկ անգամ ընդգծում են, որ «կյանքի իմաստի» մոդելի կիրառումը կարևոր է դեռահասների կյանքի իմաստավորման և նպատակների սահմանման համար:

Առաջարկում ենք կրթական միջավայրում սոցիալական մանկավարժի կողմից «կյանքի իմաստի» մոդելի կիրառման որոշ մեխանիզմներ.

- Կյանքի նպատակների քարտեզ՝ աշակերտները ձևակերպում են իրենց կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակները:
- Ինքնաձանաչողության վարժություններ՝ աշակերտներին առաջարկել կատարել օրագրային աշխատանքներ, էսսեներ «Իմ կյանքի նպատակը», «Ի՞նչն է իմաստավորում իմ օրը» թեմաներով:
- Դերային խաղեր՝ կյանքի տարբեր իրավիճակների քննարկում, որոշումների կայացում և դրանց հետևանքների վերլուծություն:
- Խորհրդատվություն՝ սոցիալական մանկավարժների կողմից անհատական աջակցություն՝ նպատակի ձևավորման և կյանքի իմաստի որոնման հարցերում:
- Արժեհամակարգի ձևավորում՝ դպրոցում մշակութային և սոցիալական ծրագրերի իրականացում, որոնք խթանում են արժեքների մասին քննադատական մտքերը:
- Համագործակցային նախագծեր՝ խմբային նախաձեռնություններ, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին փորձել իրենց ուժերը և հավկանալ իրենց ներդրումը, մասնակցել հասարակական օգտակար գործունեության՝ ունենալով կյանքի իմաստի իրացման հնարավորություն:

Ընդհանուր առմամբ, «կյանքի իմաստի» մոդելի ներդրումը կրթական միջավայրում կարելի է իրականացնել ուսումնական ծրագրերի ինտեգրմամբ, գործնական փորձառությունների ստեղծմամբ և աջակցող միջավայրի ապահովմամբ:

### **Եզրակացություն**

Այսպիսով՝ կյանքի իմաստի մասին առողջ պատկերացումները դեռահասի զարգացման գործընթացում ունեն հիմնարար նշանակություն: Դրանք նպաստում են ինքնաձանաչման խորացմանը, արժեքային կողմնորոշումների կայացմանը և սեփական նպատակների ձևավորմանը: Երբ դեռահասը կարողանում է հասկանալ կյանքը, ընկալում է նաև դրա

իմաստը՝ որպես ինքնիրացման ճանապարհ, նրա մոտ զարգանում է պատասխանատվության զգացում և ապագայի նկատմամբ վստահություն:

Կյանքի իմաստը գիտակցված արժեք է, որին մարդը ենթարկում է իր կյանքը, որի համար նա սահմանում է նպատակներ և հասնում դրանց: Ուստի «կյանքի իմաստի» մոդելը կարևոր գործիք է՝ ուղղորդելու դեռահասին դեպի առողջ մտածողություն և կառուցողական վարքագիծ: Այն հնարավորություն է տալիս տարբերել ոչ իրատեսական ձգտումները իրական ու արժեքային նպատակներից, խթանում է սոցիալական ակտիվությունը և դրական փոխհարաբերությունների ձևավորումը, օգնում է դրսևորվել որպես ինքնաբավ անհատ և կառուցել իմաստալի կյանք, իսկ այդ գործում նրան աջակցում է սոցիալական մանկավարժը:

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-276>

### **Գրականություն**

1. Леонтьев Д. А. Тест смысловых ориентаций (СЖО). 2-е изд. Москва: Смысл, 2000, - 18 с.
2. Пятаков Е. О. Подросток и смысл жизни. Ещё одна попытка ответа. Социальная педагогика, № 3, 2010, с. 38-48.
3. Reker G. T., & Wong, P. T. Aging as an individual process: Towards a theory of personal meaning. New York: Springer, 1988.
4. Steger M. F., Oishi S., et al. Meaning in life across the life span: Levels and correlates of meaning in life from emerging adulthood to older adulthood. Journal of Positive Psychology 4(1), 2009, pp. 43-52.
5. Wong, P. T. From logotherapy to meaning-centered counseling and therapy. Theories, research, and applications. New York: Routledge, 2012, 2<sup>nd</sup> ed., pp. 619-647.
6. <https://hy.wikipedia.org/> (հասանելի է 19. 08. 2025 թ.)
7. <https://mitk.am/2025/07/> (հասանելի է 19. 08. 2025 թ.)
8. <https://4brain.ru/blog> (հասանելի է 19. 08. 2025 թ.)

## Цель использования модели «Смысл жизни» в подростковом возрасте

*Оганнисян Наре*

### Резюме

**Ключевые слова:** школа, подросток, цель, свобода, самопознание, удовлетворение, стремление, межличностные отношения

Подростковый возраст – критический период, сопровождающийся интенсивными эмоциональными и психологическими изменениями. В это время подростки активно исследуют свою идентичность, ценности и предназначение, что приводит к вопросам о смысле жизни. Модель «смысла жизни» особенно актуальна для подростков, поскольку именно в этом возрасте начинается осознанный поиск смысла. Она играет ключевую роль в развитии личности, формировании ценностных ориентаций, планировании будущего и повышении социальной адаптации. Цель статьи – определить уровень осознанности модели «смысла жизни» среди подростков и рассмотреть её как механизм наполнения жизни смыслом. Задачи включают анализ влияния среды и социальной поддержки, выявление роли социального педагога в сопровождении подростка, а также разработку практических рекомендаций для эффективного применения модели в образовательной среде. Исследование показывает, что большинство подростков находятся на среднем этапе формирования смысла жизни: у них есть определенные ценностные ориентировки, но процесс их осознания и становления продолжается. Это подчеркивает необходимость использования модели «смысла жизни» как инструмента образовательной и социально-педагогической работы.

## The Purpose of Using the “Meaning of Life” Model in Adolescence

*Hovhannisyan Nare*

### Summary

**Key words:** school, teenager, goal, freedom, self-knowledge, satisfaction, aspiration, interpersonal relationships

Adolescence is a critical stage in human development, marked by emotional and psychological changes. During this period, teenagers actively explore their identity, values, and life purpose, raising questions about the meaning of life. The “meaning of life” model is especially relevant for adolescents, as it supports the search for purpose and contributes to the overall well-being and life satisfaction. The aim of the study is to assess adolescents’ awareness of the model and to consider it as an effective tool for providing meaning to their lives. The study examines the model’s role in shaping identity, value orientations, and future plans, the influence of the environment on adolescents’ perception of life’s meaning, and the role of social educators in supporting its implementation. The results show that most adolescents are at a mid-stage in forming their sense of purpose: they have some established values but are still exploring and consolidating them. This highlights the importance of integrating the “meaning of life” model into educational and socio-pedagogical practice, offering practical guidance for educators to support adolescents in their personal development.

Ներկայացվել է 26. 08. 2025 թ.

Գրախոսվել է 18. 09. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Ղիզայն առարկան նկարիչ-մանկավարժի  
համալսարանական կրթության համակարգում**

*Մելիքսեթյան Գոռ*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-284>

**Հանգուցային բառեր.** գեղարվեստական կրթություն, մասնագիտական, միջառարկայական, կրթական ծրագրեր, էրգոնոմիկա, համակարգչային ղիզայն, հորինվածք մեթոդիկա, ուսումնասիրություններ, մանկավարժական

**Նախաբան**

Ղիզայնեական կրթությունը՝ որպես գեղարվեստական կրթության անբալկտելի բաղադրամաս, արդեն XX դարավերջի գոյություն ունի և ժամանակին զուգընթաց առավել ցայտուն է դրսևորում իր գործնական կարևորության աստիճանը մասնագիտական լիարժեք պատրաստվածության համակարգում՝ կախված մասնագիտական արդի պայմաններից համապատասխան պատրաստվածություն հաղորդելու սկզբունքայնությունից:

Հաշվի առնելով առարկայի մասսայական պահանջարկը, հասարակական տարբեր շերտերի կողմից ցուցաբերվող հետաքրքրությունն այս մասնագիտության նկատմամբ և արտադրական հարաբերություններում նրա կարևորությունը՝ պետք է նշել, որ առարկայի դասավանդման եղանակները, մեթոդներն ու բովանդակությունը ենթակա են անընդմեջ ձևափոխման և կատարելագործման, իսկ նկարիչ-մանկավարժների մասնագիտական պատրաստվածության համակարգում՝ այդ փոփոխությունները նպատակային, արագ և արդյունավետ կիրառելուն:

Պատահական չէ, որ գեղարվեստագիտական կրթության համակարգում ղիզայնը, կամ, ինչպես նախկինում տարածված էր կոչել, գեղարվեստական ձևավորումը, թերևս միջառարկայական կապեր ունեցող ամենակտիվ կրթական առարկան է և, որոշ առումներով, ելնելով ստեղծագործական գիտելիքների լայն կիրառման հնարավորությունից, այն հանրագիտական է, որտեղ արտացոլվում են ոչ միայն ուսանողի ստեղծագործական հնարավորությունների մակարդակը, այլև նրա աշխարհայացքն ու գեղարվեստական կարողությունների ընդհանուր պաշարը:

**Նպատակը**

Բացահայտել սովորողների ղիզայնեական կարողության զարգացման գործընթացում առկա բացերը (թերացումները) և մշակել դրանց հաղթահարման ուղիներն ու եղանակները:

Մշակել և ուսուցման գործընթաց ներդնել այնպիսի մեթոդական խնդիրներ, որոնք կնպաստեն ապագա նկարիչ-մանկավարժի նախագծային կարողությունների մակարդակի բարձրացմանը, գեղարվեստաստեղծագործական կարողությունների մակարդակի զարգացմանը:

**Նորույթը**

Ուսումնասիրությունների վերլուծության արդյունքում սահմանել մանկավարժական ղիզայնի ուսուցման սկզբունքներն ու տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկությունները, մշակել «ղիզայնի» պարապմունքների կազմակերպման և իրացման արդյունավետ եղանակներ՝ գեղարվեստական նախագծումներ և տարաչափ մոդելավորումներ:

**Տեսական նշանակությունը:** Մշակվել են գեղարվեստական կրթության ֆակուլտետում

դիզայն առարկայի տեսագործական ուսուցման մանկավարժական մեթոդական մոտեցումներ, որոնք կհարստացնեն գեղարվեստական կրթությունը տեսական, մեթոդաբանական և մեթոդական նոր դրույթներով:

**Գործնական նշանակությունը:** Կարող են օգտագործվել դասախոսների և ուսուցիչների գեղարվեստական նախագծման և նրանց մասնագիտական իրազեկությունների մակարդակի բարձրացման ուղղված վերապատրաստումների գործընթացում:

Ուսումնասիրելով գեղարվեստական կրթության ֆակուլտետում դասավանդող ուսումնական առարկաների ցանկը՝ կարելի է եզրակացնել, որ այն բավարար է սովորողի մոտ լիարժեք և համակողմանի մասնագիտական պատրաստվածություն ձևավորելու համար, սակայն էթե այն համադրենք նաև բուհից դուրս առկա առևտրատնտեսական զարգացումներից բխող վերտիկալ մասնագիտության պահանջարկի հետ, ապա, ցավոք, պետք է նշենք, որ թերևս այն շտկումների և լավարկման կարիք ունի:

Կրթական ծրագրերում ամենևին չառաջացնելով կտրուկ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն՝ առաջարկում ենք ուղղակի կարճատև ուսումնասիրություն կատարել հասարակական պահանջարկ վայելող այս առարկայի դասավանդման ծրագրերի նկատմամբ՝ բացերը հնարավորինս նվազեցնելու նպատակով: Ամենևին գաղտնիք չէ, որ գլոբալիզացմանը զուգընթաց սրդի դարաշրջանում արտադրական հարաբերություններում ավելի ու ավելի տարածում է ստանում որոշակի համաշխարհային չափանիշների կիրառումը, որը հնարավորություն է ստեղծում արտադրողի համար սեփական արտադրանքը ավելի լայնածավալ կիրառմանը ուղղելուն: Ահա ինչու արտադրանքի գեղագիտական տեսքն ու էրգոնոմիկական հատկանիշները առավելագույնս պահպանելու գործոնը համարվում է առաջնակարգ:

Գեղագիտական առնչության ձևավորվածության մակարդակի ցուցանիշների բացահայտման ընթացքը մենք պայմանավորում ենք Ա. Վ. Մոտորինի ընդգծումով «...որ իր գլխավոր հատկանիշը օբյեկտիվ զգայական գնահատման և գեղագիտական իմաստավորման, զգայական-ներդաշնակ վերլուծության, գույնի և ոճի լավ զգացողության ընդունակությունն է» [1, 28]:

Այսօր ցանկացած իր, սկսած լոգոտիպիայից մինչև տիեզերանավ, իր գեղարվեստագեղագիտական լուծումներով ամբողջովին ենթարկվում է դիզայնի և նրանց «մշակման» երբեմն ունենալով գրաֆիկական արվեստին հարիր կատարյալ լուծումներ՝ ձևի և բովանդակության միասնությամբ: Ըստ Ս. Բ. Սերովի՝ «Գրաֆիկական դիզայնը միշտ գտնվել է նախագծային մշակույթի առաջնագծում» [4, 23]:

Հաշվի առնելով վերտիկալը՝ նշենք, որ մեր կարծիքով գոյություն ունեցող բազմաթիվ փաստարկներից միայն սա էլ արդեն հրամայական է առաջացնում գեղարվեստական ուղղվածություն ունեցող «Իզայն» առարկայի դասավանդմանը ավելի հիմնավոր մանկավարժական մոտեցումներ ցուցաբերելու փաստով: Չէ՞ որ սկսած պարզագույն մանկական ցանկությունից, վերջացրած մանկավարժի պիտանելիության չափանիշներից, դիզայնը այսօր գեղարվեստական առարկայախմբից ամենամեծ հետաքրքրություններ ու պահանջմունքներ է պարունակում, որն ամբողջովին հիմնված է տեսական, գործնական գիտելիքների ինտեգրվածության վրա:

Ուսումնասիրելով գեղարվեստական կրթության ֆակուլտետում առարկայի դասավանդման մեթոդները՝ պետք է նշել, որ այն հանդես է գալիս նյութական ապահովվածության ոչ լիարժեք մակարդակով, մասնավորապես՝ համակարգիչների և դրանց ծրագրերի բացակայությամբ, որը անհամապատասխանություն է ստեղծում մասնագետ ունենալու շուկայական հարաբերությունների և թողարկվող մասնագետի պատրաստվածության մեջ: Ավելին՝ մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ շատ ու շատ դասավանդող մասնա-

գետներ ոչ միայն չեն ընկալում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական համակարգում, այլ ավելին՝ բացարձակապես անտեղյակ են նմանատիպ հասկացության հնարավորությունից: Թերևս խնդիրը լուրջ ուսումնասիրման կարիք ունի: Ե. Տ. Ռոմանիչև և Օ. Գ. Յացյուկը գտնում են, որ «Դիզայն եզրույթը նշանակում է նախագծել, գծագրել, մտահղանալ, ինչպես նաև՝ նախագիծ, գծանկար, որով նշվում են առարկայական աշխարհի նախագծման նոր եղանակները» [3, 18]: «Համակարգչի վրա գեղարվեստական ստեղծագործության պարապմունքների ոլորտում էլ հենց առաջանում են հնարավորություններ ինքնահաստատվելու համար»: Պ.Մ. Յակոբսոնը գեղագիտական զգացմունքները հասկանում է «այնպիսի արձագանք գեղագիտական օբյեկտին, որը անպայման բնորոշվում է ապրումներով» [5, 186]:

Դիզայներական արժեքների «Մատուցման արդի միջոցները նկատելիորեն տարբերվում են նախկին ավանդականներից, և այստեղ գլխավոր ուղղորդիչը համակարգչային հնարավորություններն են»: Յուրաքանչյուր օբյեկտի վրա գունային, տոնային, հորինվածքային զանազան փոփոխությունների ներառումը նույնիսկ ոչ մասնագետին հնարավորություն է տալիս անմիջապես ընկալելու այնպիսի խնդիրներ, որոնք նախկինում պահանջում էին բազմամյա մասնագիտական փորձ:

Հետևություն անելով սավաճից՝ կարելի է նշել, որ դիզայնում հորինվածքի դասավանդման գլխավոր խնդիրներից մեկը գրաֆիկական լուծումներն են: Դիզայները պարզապես օգտագործում է պատրաստի գրաֆիկական ձևեր՝ ընտրելով դրանք լուծվող կոմպոզիցիոն առաջադրանքին համապատասխան:

Հաջորդ խնդիրը տոնային և գունային հարաբերությունների արտահայտման նպատակային չափի պահպանումն է, որին վերագրվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների պաշարը սովորողը ձեռք է բերում բնօրինակից պատկերագրելու փորձի հիման վրա: Անշուշտ կարևորելով ուսուցման տվյալ սկզբունքը դիզայնի հորինվածքի կազմակերպման գործընթացում՝ հարկ ենք համարում անդրադառնալ մի կարևոր հանգամանքի. նշված գործընթացի յուրաքանչյուր փուլ պետք է գործնական փորձարկումների ճանապարհով ենթարկվի արդյունավետության ապացուցմանը՝ կրթական համակարգի զարգացման տեսանկյունից: Մեր կողմից քննարկվելիք առարկայի համեմատաբար բարդ և ծավալուն ամբողջությունը, դասավանդման օրինաչափությունների ու սկզբունքների ուսումնասիրությունը բացահայտում են հանրապետությունում նրա ոչ համակարգված բնույթը, ի դեմս գոյություն ունեցող ուսումնական ծրագրերի, որոնք գլխավորապես հիմնված են դասախոսի անհատական, ոչ համակարգային մոտեցման վրա:

Որպեսզի դիզայնի հորինվածքի տեսագործնական գիտելիքների ուսուցումը դրվի ճիշտ ուղու վրա, անհրաժեշտ է համապատասխան գիտամանկավարժական սկզբունքների կիրառում, որի շնորհիվ միայն հնարավոր կլինի տվյալ դասընթացի արդյունավետ կազմակերպումը: Դրանցից մեկը ինտեգրատիվ մոտեցումն է:

Պետք է նշել, որ այսօր որոշ նկարիչ-մանկավարժներ դիզայնի հորինվածքի դասավանդման գործընթացում, զգալով ժամանակի տեղեկատվական տեխնոլոգիաների բարերար շունչը, ընդհանուր առմամբ կիրառում են նման բնույթի մոտեցումներ՝ սովորողներին առաջադրելով առաջադրանքը կատարել գրաֆիկական ինտերֆեյսի մշակման գործընթացի ուսուցման ինտեգրատիվ մոտեցման մեթոդիկայով և նախագծմամբ:

Ինտեգրացիան գիտությունների մոտեցման և կապի գործընթացն է, որը կատարվում է դիֆերենցիայի գործընթացների հետ միաժամանակ: Ինտեգրման գործընթացը միջառարկայական կապերի ծավալումն է և ուսուցման որակապես նոր մակարդակի վրա:

«Ինտեգրացիան» ուսուցման համակարգի հետ կապված կարող է ունենալ երկու նշանակություն՝ ուսուցանվողների մոտ շրջակա միջավայրի մասին ամբողջական պատկերաց-

ման ստեղծում, առարկայական գիտելիքների ընդհանուր հենահարթակի հայտնաբերում:

Դիզայնի ուսուցման ժամանակակից ծրագրի ստեղծումը ինտեգրատիվ գործունեություն է, որը ներառում է ստեղծագործական ունակությունների, գրաֆիկական գործունեության հմտությունների կիրառում և հատուկ գիտելիքների համակարգ, որոնք ներառում են կոգնիտիվ հոգեբանության, դասավանդման մեթոդիկայի մանկավարժության տեսակետները:

Ինտեգրացիան սահմանող ոչ պակաս կարևոր գործոն է նաև հենց ինքը՝ դիզայն դասընթացը, որը իր մշակման համար պահանջում է գեղարվեստական, գրաֆիկական, տեխնոլոգիական, գիտական և կիրառական ստեղծագործության փոխադարձ կապը: Ասվածից ելնելով՝ ապագա նկարիչ-մանկավարժին դիզայն դասընթացի մշակման գործընթացի ուսուցման համար սկզբունքայնորեն կարևոր է հիմնել այնպիսի ուսումնական առարկայախմբի գիտելիքների, կարողությունների, հմտությունների վրա, ինչպիսիք են գծանկարը, գեղանկարչությունը, կոմպոզիցիան, գրաֆիկան, դեկորատիվ արվեստը, ինֆորմատիկան, տեղեկատվական և համակարգչային գրաֆիկան: Առարկայախմբի մանկավարժական ինտեգրացիան հնարավորություն կտա գեղարվեստական կրթության ֆակուլտետի պայմաններում «Մանկավարժական դիզայնի դասընթացի դեկորատիվ գրաֆիկական ինտերֆեյս» ընտրությամբ ստեղծել բազա դիզայնի ժամանակակից ծրագրերի մշակման համար, որն իրենից ներկայացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների (համակարգչի) և ուսուցանվողի փոխներգործություն՝ ներառելով նաև էկրանային պատկերը և ուսուցման գործընթացի բոլոր գործողությունները:

Սակայն ժամանակակից մանկավարժական դիզայնի դասընթացի մշակման փորձը Հայաստանում ոչ շատ մեծ է: Այդ ուղղությամբ դեռևս առաջին քայլերն են արվում՝ հենվելով արդեն մշակված արտերկրի մասնագետների մեթոդների մշակումների վրա, այն է՝ կոմպոզիցիայի կազմման հիմնավորվածությունը, գունաշարի ընտրությունը, գրական տեքստի գեղարվեստական ձևակերպումը, գործառնական տարրերի ընտրությունը և ձևավորումը, էկրանի հորինվածքային որոշումները, պատկերագրվող նյութի ակնառությունը, դիզայնի դասընթացի համապատասխանությունը ուսուցանվողների տարիքային առանձնահատկություններին:

Գոյություն ունեցող «Մանկավարժական դիզայն» դասընթացի վերլուծման արդյունքում պետք է նկատել, որ ընդհանուր առմամբ մանկավարժական տեսանկյան դրսևորման մակարդակը բավականին ցածր է: «Դիզայն» դասընթացի (ավանդական) մշակման բնորոշ խնդրահարույց տեսանկյուն է գունային ձևավորումը, որը հիմնականում խոչընդոտում, ոչ թե նպաստում է ուսումնական նյութի ակնառությանը, քանի որ իրագործված է ներդաշնակ գունային աղյուսակների կառուցման սկզբունքների խախտմամբ և առանց հաշվի առնելու ուսուցանվողի վրա գույնի հոգեբանական ազդեցությունը: Դրա հետ մեկտեղ կառավարման միջոցները և դրանց գրաֆիկական ձևավորումները նույնպես ստեղծողների կողմից առավել հստակ և արհեստավարժ գործողությունների կարիք ունեն:

Կարելի է արձանագրել նաև չհաջողված հորինվածքային լուծումներ, ինչը տեղիք է տալիս մտածելու մշակման բաց թողնված տեխնոլոգիական փուլերի մասին, օրինակ՝ դասընթացի կառուցման ընդհանուր մոդելը, ինչպես նաև պատկերագրող նյութի առկայությունը համեմատած նախորդ չափանիշների հետ ավելի քիչ հարցեր են առաջացնում: Սակայն հաճախ հանդիպող հայեցակարգի նմուշօրինակների որակ կարելի է անվանել դրանց ձևակառուցությունը և համակողմանիությունը, որը համարվում է դասընթացի ծրագրի արդյունավետության հաստատուն և ոչ բարձր մակարդակի գրավական:

Ընդհանուր առմամբ ուսումնական նյութը, կառավարման միջոցները, ձևավորման ուժարանությունը և այլն իրագործվել էին միմյանց հետ փոխգործակցված, ինչը և արտա-

հայտվել է ուսուցանվողների տարիքային խմբի համապատասխանելիության չափանիշի համեմատաբար բարձր ցուցանիշով:

Այդ դասընթացների բերված վերլուծությունը հիմք է տալիս հաստատելու, որ անհրաժեշտ է իրականացնել դրա գրաֆիկական ինտերֆեյսի հատուկ նախագծում արհեստավարժ նկարիչ-մանկավարժների կողմից, որոնք ընդունակ են մշակել հարմար, արդյունավետ դիզայներական գործունեության մեթոդապես մշակված ծրագրեր:

Ուսումնասիրության մեջ մենք քննարկում ենք համակարգչային դիզայնի ինտերֆեյսի գործիքային ալգորիթմական եղանակները և միջոցները մանկավարժական տեխնոլոգիաների համատեքստում: Դրա հետ մեկտեղ նկարիչ մանկավարժներին դիզայնի դասընթացի մշակման գործընթացի ուսուցման գործիքային ալգորիթմական մանկավարժական եղանակների ու միջոցների մշակման ժամանակ մենք հաշվի ենք առել բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում կրթական գործընթացների մոդելավորման և նախագծման հիմնական դիզայնիկական մոտեցումները: Այստեղ կենտրոնական տեղ են զբաղեցնում կիրառվող ինտերֆեյսերի դիզայնի եղանակները՝ որպես նոր և համակողմանիության միջոցի:

Ինտեգրատիվ մոտեցման նախագծման գլխավոր պայման է ապագա նկարիչ-մանկավարժի հոգեբանական և անձնական բնութագրիչների հաշվառումը, նրանց հետաքրքրությունը մասնագիտության հանդեպ (մասնագիտական ուղղվածություն), մանկավարժական պատրաստվածության որակը, մշտական սեփական ուսումնական գործունեության վերահսկողությունը:

### **Մեթոդները**

Առաջադրված խնդիրները լուծելու համար կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները. հետազոտությունների և մանկավարժական առաջավոր փորձի տեսական վերլուծման և ընդհանրացման մեթոդներ, էմպիրիկ՝ դիտարկում, ուսանողների անկետավորում, թեստավորում, հարցում (հայտորոշիչ և ստուգիչ), փորձարարական ուսուցում, մոդելավորում: Վիճակագրական՝ թեստավորման և փորձարարական ուսուցման արդյունքների քանակական և որակական տվյալների մաթեմատիկական վիճակագրական վերլուծություն:

Դիզայնի դասընթացի գրաֆիկական ինտերֆեյսի մշակման ուսուցման գործընթացի նախագծման համար անց է կացվել ուսանողների գիտելիքների և կարողությունների վերլուծություն, որոնք նրանք ստացել են հատուկ մասնագիտական առարկաների (գծանկար, գեղանկար, կոմպոզիցիա, տեղեկատվական և համակարգչային գրաֆիկա, դեկորատիվ արվեստ և այլն) ուսումնասիրման ժամանակ: Դրա հետ մեկտեղ պետք է իրականացվեն հարաբերությունների այնպիսի համակարգեր, ինչպիսիք են «դասախոս-ուսանող», «համակարգիչ-ուսանող», «ուսանող-ուսանող»:

Հարաբերությունների տվյալ համակարգերի առանձնահատկությունը մի կողմից համակարգչի՝ որպես ուսուցման գործիքի համապատասխանորեն ընկալելն է, մյուս կողմից ուսուցանող միջավայրի: Ընդ որում, գրաֆիկական ինտերֆեյսի տեսության և պրակտիկայի հարցերը պետք է լուծվեն միասնականորեն (համալիր)՝ ստացված գիտելիքները էլեկտրոնային ուսումնական ձեռնարկների մշակման գործընթացում զարգացնելով ուսանողների կարողությունները: Այս ամենին կարելի է հասնել՝ կիրառելով ծրագրային նյութի ուսուցման հաջորդականության սկզբունքը, սկսած ուսուցանվող դասընթացի բաժինների մասին ընդհանուր տեղեկություններից՝ ուսանողի գործունեության և ստեղծագործական կարողությունների դրսևորմամբ տարբեր խնդիրների լուծման պրակտիկայի միջով: Մեր կարծիքով, ինտեգրատիվ մոտեցումը պետք է նպաստի ուսանողներին դիզայնի ուսուցմանը նախապատրաստելուն:

## Եզրակացություն

Տեսական ուսումնասիրության արդյունքներով ստացված տվյալները թույլ են տալիս ձևակերպել հոդվածից բխող հետևյալ հետևությունները.

- Տեսականորեն հիմնավորվել և հետագոտվել են ուսանողների գեղարվեստատեխնիկական իմացության խնդիրները դիզայն առարկայի ուսուցման գործընթացում:

- բուհում «Դիզայնի» ուսուցումը պետք է դարձնել նպատակային: Այդ նպատակով փորձ է արվել մշակել համապատասխան մեթոդական համակարգ.

- Մանկավարժական գործընթացում խորացվել են տեղեկատվական տեխնոլոգիա հասկացության տեսական և գործնական ուսուցման գործընթացները:

- Հիմնավորվել է մանկավարժական պայմանների այն համակարգը, որը գրաֆիկական դիզայնի ուսուցման գործընթացում ապահովում է բուհական կրթության արդյունավետությունը և զարգացնող գործառնությունը:

- Հիմնավորված է նկարիչ-մանկավարժի համալսարանական կրթության համակարգում դիզայն առարկայի ուսուցման հոգեբանամանկավարժական գործընթացը, որի համար ներկայացված են ապագա մասնագետին անհրաժեշտ վերամշակված և ամբողջական մեթոդական համակարգը, դրա տեխնոլոգիական ապահովման նմուշօրինակը, ստեղծագործական գործունեության համար բուհական ծրագիր-առաջադրանքները:

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-284>

## Գրականություն

1. Моторин А. В., Орлова Г. А., Копытцева Н. М. и др. На рубеже веков: взгляд в будущее. 2001, вып 1., с. 18.
2. Неменский Б. М. Мудрость красоты. Москва, 1981, с. 81.
3. Романычева Э. Т., Яцюк О. К. Дизайн и реклама. Компьютерные технологии: справочное и практическое руководство. Москва, ДМК пресс, 2002, с. 18.
4. Серов С. И. Гармония классической типографики. Москва, 2003, с. 23.
5. Якобсон П. М. Психология художественного восприятия. Москва, Искусство, 1964, 186 с.

## Предмет дизайна в системе университетского образования художника-педагога

*Меликсетян Гор*

### Резюме

**Ключевые слова:** художественное образование, профессиональное, междисциплинарное, образовательные программы, эргономика, компьютерный дизайн, композиционная методика, исследования

Однако следует учитывать ряд ограничений, обусловленных, например, численностью участников, субъективной характеристикой анкеты, а также недостаточным включением культурных и социальных факторов при изучении гендерных различий. Кроме того, исследование не включает долгосрочное наблюдение за динамикой коммуникации, что может ограничивать углублённый анализ изменений и развития отношений.

В дальнейших исследованиях целесообразно расширить масштаб исследуемой группы, включить пары из различных социально-культурных сред и применить комплексные методологические подходы для многоуровневого анализа.

Таким образом, настоящая работа, проведённое исследование могут рассматриваться как важный начальный шаг на пути к развитию психологических исследований коммуникативного процесса в супружеских отношениях.

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-315>

## Լիտերատուրա

1. Андреева Т. В. Межличностное общение и социальная психология, Москва, Наука, 1994, с. 88-90.
2. Андреева Т. В. Социальная психология, Москва, Высшая школа, 1994, с. 89-91.
3. Bowen M. Family Therapy in Clinical Practice, New York, Jason Aronson, 2019, 45 p.
4. Gottman J., Levenson R. Marital interaction and relationship stability. Journal of Consulting and Clinical Psychology, 1992, Vol. 60, № 1, pp. 84-93.
5. Goleman D. Emotional Intelligence: Why It Can Matter More Than IQ. New York, Bantam Books, 1995, 317 p.
6. Dindia K., Canary D. J. Sex Differences and Similarities in Communication, New York, Routledge, 2013, 392 p.
7. Зацепин В. И. Социальная психология семьи, Санкт-Петербург, Питер, 2001.
8. Каплан Л. Современные подходы к терапии семейных отношений, Москва, Академия, 2017.
9. Кратохвиль Э. Семейные кризисы и их преодоление. Психология семьи, 2005, № 3, 142 с.
10. Lewis R., Spanier J. Model of Marital Quality: Interpersonal Communication of Spouses. Journal of Marriage and Family, 1990, Vol. 52, № 4, pp. 875-884.
11. Ломов Б. Ф. Общая психология общения, Москва, Просвещение, 1984, с. 245-246.
12. Markman H., Rhoades G., Stanley S. Fighting for Your Marriage: A Deluxe Revised Edition of the Classic Best-seller for Enhancing Marriage and Preventing Divorce, San Francisco, Jossey-Bass, 2010, 368 p.
13. Седракян С. С., Семейная психология, Ереван, Издательство Армянского университета, 2010, с. 380-381.
14. Вахтель Б. Психотерапевтические аспекты семейного общения, Москва, Когито-Центр, 2010, с. 350-386.
15. Vijan K. Marital Communication and Its Impact on Conflict and Satisfaction among Young Couples, 2024, pp. 907-918.
16. Weber D., Lavner J., Beach S. Marital Communication Quality Across Different Topics. Journal of Family Psychology, 2023, Vol. 37, № 6, pp. 670-680.

## Հաղորդակցման դերակատարումն ամուսնական զույգերի հոգեբանական և սոցիալական ներդաշնակության մեջ

Եղիազարյան Մերի

### Ամփոփում

**Հանգուցային բառեր.** *ընտանիք, ամուսնական հարաբերություններ, փուլային ճգնաժամեր, ներդաշնակություն, հոգեբանական ընկալումներ, ինքնագնահատում, շփում*

Հետազոտության նպատակն էր՝ ուսումնասիրել ամուսնական զույգերի հաղորդակցական գործընթացների կառուցվածքային և հոգեբանական առանձնահատկությունները՝ բացահայտելով գույճընկերների սոցիալ-հոգեբանական ներդաշնակության վրա ազդող գործոններն ու պարամետրերը: Ուսումնասիրությունը ներառում է գրականության տեսական վերլուծություն և փորձնական հետազոտություն՝ 8-15 տարվա ամուսնական փորձ ունեցող զույգերի ընտրանքով, որոնք, նախնական գնահատումների համաձայն, հաջողությամբ հաղթահարել էին ամուսնական կյանքի առաջին փուլային ճգնաժամը:

Հատուկ ուշադրություն դարձվեց հաղորդակցության որակին՝ որպես հարաբերությունների կայունության և ներդաշնակության հիմնարար գործոն:

Վերլուծությունը ցույց տվեց հարաբերական ներդաշնակություն՝ տեսանկյունների համընկման և խորհրդանիշների ընդհանուր ըմբռնման մակարդակներում, սակայն արձանագրվեցին նաև հաղորդակցական խզումներ, հասկապես տղամարդկանց շրջանում:

Հաղորդակցության թերապևտիկ բնույթի և թեթևության միջինից բարձր ցուցանիշները վկայում են հարաբերական կայունության մասին, սակայն միաժամանակ բացահայտում են զարգացման ներքո՝ հուզական ազատության, փոխըմբռնման և վստահության խթանման ուղղությամբ: Տղամարդկանց համար առաջնահերթ է հաղորդակցական վստահության ամրապնդումը, իսկ կանանց դեպքում՝ փոխըմբռնման պահպանությունն ու հուզական բազմակողմանիության զարգացումը:

Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հաղորդակցական խզումների հետ աշխատանքը զուգընկերների հետ կարող է նպաստել ընտանեկան ներդաշնակության և հարաբերությունների կայունության զարգացմանը՝ հնարավորություն ընձեռելով նրանց հաջողությամբ հաղթահարելու ամուսնական կյանքի ճգնաժամերն ու դժվարությունները համատեղ, փոխըմբռնմամբ և կառուցողական միջանձնային համագործակցությամբ: Հետևաբար, արդյունքները հանդիսանում են կարևոր գիտական և գործնական հիմք ընտանեկան հոգեբանական խորհրդատվության և աջակցության ծրագրերի համար:

## **The Role of Communication in Maintaining the Psychological and Social Harmony of Married Couples**

*Yeghiazaryan Meri*

### **Summary**

**Key words:** *family, marital relations, phased crises, harmony, psychological perceptions, self-esteem, interaction*

This study examines structural and psychological aspects of communication among married couples, identifying factors that influence socio-psychological harmony. The article combines a theoretical literature review with an empirical study involving couples with 8-15 years of marital experience who had successfully overcome early-phase marital crises.

Particular attention was given to communication quality as a key determinant of relationship stability and harmony. Responses were analyzed using self-assessments and partner perceptions, revealing gender-specific differences. Men often underestimated the reliability of their communication and perceptual abilities, whereas women demonstrated higher perceptual awareness and emotional sensitivity, reflecting social and cultural role expectations.

The findings show that improving communication can help strengthen harmony in a marriage and make it easier for partners to deal with challenges together. These results can be useful for family counseling and support programs, focusing on practical ways to build better communication, emotional understanding, and long-term stability in relationships.

**Ներկայացվել է 14. 08. 2025 թ.**

**Գրախոսվել է 17. 09. 2025 թ.**

**Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.**

## Արտաքին և ներքին խոսքը՝ որպես խոսքի և մտքի ներքին փոխհարաբերության պարտադիր բաղադրիչ

*Գոստանդյան Նունե*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-324>

**Հանգուցային բառեր.** *մտածողություն և լեզու, միաբառ նախադասություն, խոսքի հոգեբանական և իմաստային կողմ, խոսքային ասույթ, եսակենտրոն խոսքի գործառույթ, ինքն իրեն ուղղված խոսք, խոսքի կտրտվածություն, գրուցակիցների տեղեկացվածություն, բառերի անձայն արտաբերում*

### Նախաբան

Սկսած իր ծննդյան օրից մինչև մահը իր շրջապատող բնական և սոցիալական միջավայրում հանդիպում է բազմաթիվ նոր, իր կողմից անընկալելի և իր պահանջմունքների բավարարմանը խոչընդոտող դժվարությունների: Շրջապատող աշխարհից մարդու ստացած տեղեկատվությունը նրան հնարավորություն է տալիս պատկերացնել, գանձանել և տարաբաժանել այն և համապատասխան վերաբերմունք դրսևորել շրջապատող երևույթների նկատմամբ: Մարդու գիտակցական մտածողությունը իրագործվում է խոսքի մասնակցությամբ: Մակայն գոյություն ունեն նաև մտածողության մինչխոսքային ձևեր ևս, որոնք առաջ են գալիս, օրինակ, երեխայի հոգեկանում, մինչև լեզվին տիրապետելը և ոչ խոսքային, երբ մարդու մտածական գործընթացները ընթանում են առանց խոսքի: Հողվածում ներկայացվում է արտաքին և ներքին խոսքը՝ որպես խոսքի և մտքի ներքին փոխհարաբերությունների պարտադիր բաղադրիչ: Ներկայացվում են նաև արտաքին և ներքին խոսքի վերաբերյալ հոգելեզվաբանների տեսական մոտեցումները՝ Լ. Վիգոտսկի, Բ. Սեչենով, Ժ. Պիաժե և այլք:

### Հողվածի բովանդակությունը

Մարդկային մշակույթը, հասարակական գործունեությունը և մտածողությունը, ինչպես հայտնի է, լեզվից անկախ գոյություն ունենալ չեն կարող: Մակայն հնարավոր է արդյոք մտածողության և խոսքի տարանջատումը: Ամերիկյան բիոէվոլյուցիոնիստ առաջնորդներն այս հարցի վերաբերյալ հետևյալ մոտեցումն ունեն. մտածողությունն ոչ այլ ինչ է, քան թաքնված խոսք: Այլ դիրքորոշում է դրսևորել ռուսական հոգեբանխոսության հիմնադիր Բ. Սեչենովը [1]: Նա նշում է, որ լեզուն և մտածողությունը սերտորեն կապված են մանկության տարիներին, սակայն զարգացման արդյունքում մեծահասակի մտածողությունն ինչ-որ չափով ազատվում է բացահայտ խոսքային հակագոյուններից: Լ. Վիգոտսկին մտածողության և խոսքի փոխհարաբերություններին վերաբերող իր ամենախոշոր աշխատության մեջ այն միտքն է արտահայտում, որ և ֆիլոզոֆները, և օնթոգենետիկ գոյություն ունեն ոչ բառային մտածողության բաղադրիչներ, ինչպես նաև ոչ ինտելեկտուալ խոսք (հուզական բացականչություններ): Խոսողը այստեղ փորձում է հետևել այդ բաղադրիչների փոխկապակցված զարգացմանը մինչև այն պահը, երբ խոսքը սկսում է ապահովել մտածողությունը, իսկ մտածողությունն արտացոլվում է խոսքում: Չնայած լեզվի վերաբերական, հուզական, ճանաչողական, առնչանակային, արտահայտչական և այլ գործառույթներին, նրա ամենակարևոր և առաջնային գործառույթը մնում է հաղորդակցականը, որի նպատակն իր սեփական և այլ մարդկանց գործունեության ղեկավարումն է: Լեզվի վերը նշված գործառույթներն առավել հստակ են արտահայտում լեզվի գիտակցականությունը և մեկը մյուսի համար փոխադարձ անհրաժեշտությունը: Լեզվի ճանաչողական և հաղորդակցական գործառույթների կատա-

րումը կապված է լեզվական գիտակցության ղեկավարող-վերահսկող գործառույթների հետ: Այսինքն լեզվական գիտակցությունն ապահովում է լեզվի գործառույթներից յուրաքանչյուրի բրակակնագումը: Լեզվական և ճանաչողական գիտակցությունները հատվում են, երբ վերաբերության օբյեկտ է դառնում լեզուն: Դրանցից յուրաքանչյուրը, ունենալով իր խնդիրները, սերտորեն համագործակցում է մեկը մյուսի հետ:

Լեզվախոսքային գործունեության աղբյուրը հաղորդակցական ճանաչողական պահանջումն է, որը, առարկայացվելով մտքի մեջ, դառնում է այդ գործունեության ներքին մոտիվը: Վերջինս որոշում է լեզվախոսքային գործունեության ընթացքը: Մեջբերելով Լ. Վիգոտսկուն՝ պետք է նշել, որ մտքի հիմքում հիմնականում ընկած են մեր հետաքրքրությունները, հակումները, աֆեկտներն ու հույզերը: «Եթե համեմատելու լինենք միտքը վերևում կախված ծանրացած, անձրևել պատրաստվող ամպի հետ, ապա, շարունակելով այդ պատկերավոր համեմատությունը, մոտիվ պետք է կոչել այն քամին, որը շարժման մեջ է դնում ամպերը [2]: Լ. Վիգոտսկին գրում է. «Խոսքն իր կառուցվածքով մտքի բնույթի հայելային արտացոլումը չէ: Հետևաբար, այն չի կարող միտքը զգեստավորողի դեր կատարել: Խոսքը նաև պատրաստի մտքի արտահայտիչը չէ: Միտքը, խոսք դառնալով, ձևափոխվում ու վերակառուցվում է: «Միտքը կայանում և կատարելագործվում է խոսքում» [2]: Բառի և մտքի միջև ներքին փոխհարաբերությունը նախապես տրված չէ և, հետևաբար, այն չի կարող հիմք դառնալ նրանց հետագա զարգացման համար: Միտքն ու բառը ծագում ու ձևավորվում են մարդու գիտակցության պատմական զարգացման ընթացքում: Նրանք մարդու կայացման ոչ թե նախաղրայաններն են, այլ արդյունքը: Երեխաների զարգացման նախնական փուլում գոյություն ունի մինչնատածական ձևավորման փուլ: Միտքն ու բառը չունեն նախնական կապ. այդ կապը ծագում, փոփոխվում է մտքի զարգացման գուգահեռ: Մտածողության ու խոսքի միասնության մեջ իր արտացոլումն է ստանում բառի նշանակությունը: Այն և մտածողության, և խոսքի արդյունքն է: Նշանակությունից գուրկ բառը ոչ թե բառ է, այլ դատարկ հնչյուն, հետևաբար, նշանակությունը բառի պարտադիր բաղադրիչն է: Թվում է, թե մենք կարող ենք այն խոսքային երևույթ անվանել, սակայն հոգեբանական տեսանկյունից բառը ոչ այլ ինչ է, քան ընդհանրացում կամ հասկացություն: Ընդհանրացումն ու նշանակությունը այստեղ հոմանիշներ են: Իսկ ընդհանրացման յուրաքանչյուր տիպ հասկացության յուրաքանչյուր տիպի գոյացման ամենախրական մտածական ակտերն են: Հետևաբար բառի նշանակությունը կարող է դիտարկվել նաև որպես մտածական երևույթ: Բառի նշանակությունը կայուն չէ: Այն փոփոխվում է մտքի տարբեր գործառնություններին համապատասխան: Նշանակության դինամիկ բնույթի հասկացումը հնարավոր է միայն նրա էության ընկալման պարագայում: Այս առումով կարևոր է պարզաբանել բառերի նշանակության գործառնական դերը մտածական ակտում: Մա է պատճառը, որ հարկավոր է գենետիկ պլանից անցնել գործառնական պլան և ներկայացնել ոչ թե նշանակության զարգացման գործընթացը, այլ նշանակությունների գործառնությունը՝ բառային մտածողության հոսքում: Պետք է հաշվի առնել, որ մտքի վերաբերությունը բառին գործընթաց է, որն անցնում է մի քանի փուլեր՝ ենթարկվելով փոփոխությունների: Զարգացումն այստեղ ոչ թե տարիքային, այլ գործառնական է: Քանի որ միտքը ոչ թե արտահայտվում է բառում, այլ որոշվում է նրանում: Յուրաքանչյուր միտք փորձում է մի բառը կապել մյուսին: Յուրաքանչյուր միտք այս առումով շարժում է, հոսք. այն ինչ-որ խնդիր է լուծում, ինչ-որ աշխատանք է կատարում: Հետևաբար, մտքի և բառի փոխհարաբերություններն ուսումնասիրելու համար նախ և առաջ պետք է ուսումնասիրել այն փուլերը, որոնցից ձևավորվում է այդ շարժումը:

Նման վերլուծությունը հանգեցնում է խոսքի երկու պլանների տարբերակմանը.

- ներքին՝ իմաստային,
- արտաքին՝ հնչող [2]:

Խոսքի նշված յուրաքանչյուր տարբերակում ունի իր սեփական կանոնները: Խոսքի միասնակամությունը միատարր չէ. այն բարդ երևույթ է:

Հայտնի է, որ խոսքի արտաքին կողմը երեխայի մոտ զարգանում է երկու-երեք բառերի կցումից, որը վերածվում է բառակապակցության, ավելի ուշ՝ բարդ նախադասությունների և կապակցված խոսքի: Խոսքի յուրացման ընթացքում երեխան «մասից ամբողջի» մեթոդով է առաջնորդվում: Սակայն հայտնի է նաև, որ երեխայի առաջին բառը մի ամբողջ ասույթ, միաբառ նախադասություն կարող է լինել: Խոսքի իմաստային զարգացումը սկսվում է ամբողջից և անցնում մասերի, իսկ դրա արտաքին կողմը բառից անցնում է նախադասության: Միայն այս փաստն արդեն բավարար համոզիչ է խոսքի հնչող և իմաստային ձևերի տարբերակման համար: Սա, իհարկե, չի նշանակում դրանց տարանջատում կամ փոխկապակցվածության ժխտում, սակայն խոսքի միասնության առանձնահատկություններին ուսումնասիրությունը հնարավոր է միայն այդ տարբերակման շնորհիվ:

Երեխայի միտքը ծագում է որպես մի խավար, չմասնատված ամբողջ: Սա է պատճառը, որ այն պետք է իր արտացոլումը ստանա առանձին բառերում: Երեխան ընտրում է իր մտքի «հագուստը» կարծես ըստ չափի: Այսպիսով միտքը և խոսքը ի սկզբանե համաչափ լինել չեն կարող: Միտքը, վերափոխվելով բառի, կայանում է դրանում: Հետևաբար, խոսքի հնչյունային և իմաստային տարբեր ուղղություն ունեցող գործընթացները մեկ ամբողջություն են կազմում հենց իրենց հակասակամության հաշվին [2]:

Այդ հակասությունն առավել ակնհայտ է արտացոլվում զարգացած մտքի պարագայում: Սա արտահայտվում է քերականական ու հոգեբանական ենթակայի ու ստորոցյալի չհամընկման մեջ: Հնչյունաբանության, ձևաբանության և իմաստաբանության, անգամ երաժշտության մեջ ձևական կարգերի հիմքում հոգեբանական կարգերն են: Այս առումով, կարելի է խոսել ոչ միայն նշանակությունների և հոգեբանական բաղադրիչների մասին, այլև հոգեբանական թվի, հոլովի, դերանվան, ժամանակների մասին: Ենթակայի և ստորոցյալի քերականական և ձևական հասկացությունների հետ մեկտեղ պետք է նշել նաև նրանց հոգեբանական նախատիպերի մասին:

Եթե խոսքի հոգեբանական և իմաստային կողմերը չեն համընկնում, ակնհայտ է, որ խոսքային ասույթը չի կարող միանգամից ծագել իր ամբողջությամբ, քանի որ իմաստային և բառային շարահյուսություններն ի հայտ են գալիս ոչ թե միանգամից ու միասին, այլ ենթադրում են շարժում ու անցնում մեկը մյուսին: Սակայն նշանակությունից հնչյունի անցման այդ բարդ գործընթացը զարգացում է ապրում՝ կազմելով խոսքային մտածողության հիմնական գծերից մեկը: Խոսքի այդ մասնատման իմաստավորումը հնարավոր է միայն երեխայի զարգացման ընթացքում: Այն ամբողջանում է իր քերականական (հնչյունաբանության, ձևաբանության, իմաստաբանության), հոգեբանական և այլ բաղադրիչների հակասության, այնուհետև միասնության մեջ: Եթե խոսքի հոգեբանական և իմաստային կողմերը չեն համընկնում, ակնհայտ է, որ խոսքային ասույթը չի կարող միանգամից ծագել մի ամբողջությամբ: Իմաստային խոսքի արտաբերման համար անհրաժեշտ է երեխայի զարգացում, մտքի և խոսքի գիտակցված համադրում: Երեխայի խոսքի մասնատումը, որի նպատակը խոսքի հասկացումն է, հնարավոր է միայն երեխայի զարգացման ընթացքում: Նա պետք է տարբերակի խոսքի երկու կողմերը և հասկանա դրանցից երկուսի էությունը, որպեսզի ընկալի իմաստավորված խոսքի բնույթը: Իհարկե նրա խոսքում ի սկզբանե գերակշռում են անգիտակից բառաձևերն ու նշանակությունները: Երեխայի խոսքի զարգացման կարևորագույն գործոններից է նրա կողմից մտքի արտահայտման գիտակցումը: Փաստորեն զարգացման նախնական փուլերում կատարվում է խոսքի երկու կողմերի միաձուլումը, այնուհետև դրանց հետզհետե տարանջատումն ու հասկացումը, որի որակը մեծապես կախված է երեխայի տարիքային առանձնահատկություններից: Խոսքը պահանջում է ներքին պլանից արտաքինի անցում, իսկ հասկացումը ենթադրում է հակառակ շարժում՝ խոսքի արտաքին

պլանից ներքինի անցում: Այստեղ առաջնային է դառնում ներքին խոսքի պլանը: Առանց ներքին խոսքի հոգեբանական էության հասկացման հնարավոր չէ պարզել մտքի բազմաբարդ վերաբերմունքը բառի հանդեպ: Սա, թերևս, մտածողության ու խոսքի փոխհարաբերությունների ուսումնասիրության ոլորտի ամենաբարդ հարցերից է: Ներքին խոսքի առաջնային նշանակությունը որպես բառային հիշողության հասկացումն է եղել: Սրա կողմնակիցները առավելապես այն հեղինակներն են, ովքեր հաստատում են, որ բառային հիշողությունը ներքին խոսքի էությունը որոշող կարևոր երևույթներից է: Մեր տեսակետից հիշողությամբ բառերի վերարտադրումն ու ներքին խոսքը երկու տարբեր գործընթացներ են: Ներքին խոսքի երկրորդ նշանակությունը կապված է սովորական խոսքային ակտի կրճատման հետ: Ներքին խոսք է այս դեպքում կոչվում չարտասանվող, չհնչող, համր, ըստ Ջ. Միլլերի, ձայնից գուրկ խոսքն է [1]: Ի. Սեչենովը ներքին խոսք է համարում ընդհատված ռեֆլեքսը: Սակայն այս մեկնաբանումը ևս ամբողջական չէ և չի կարող լիարժեք գիտական բացատրություն ունենալ:

Բառերի անձայն արտաբերումը դեռևս չի նշանակում ներքին խոսք: Շիլինգն այս առումով առաջարկել է տերմինաբանական սահմանափակում դնել ներքին խոսքի և ներքին խոսողության միջև: «Ներքին խոսողություն» ասելիս Շիլինգը նկատի է ունենում վերը նշված հեղինակների տրված նկարագրությունները: Ներքին խոսքից այդ գործընթացը քանակական առումով տարբերվում է նրանով, որ այն նկատի է առնում միայն լեզվախոսքային գործունեության ակտիվ գործընթացները, իսկ որակական առումով նրանով, որ նկատի է առնում խոսքի գործառույթի նախնական կիրառումը: Այս տեսանկյունից ներքին խոսողությունը ներքին խոսքի մասնավոր գործառույթն է, որի ներքին ազդակներն իրենց արտահայտումը չեն գտնում արտասանական շարժումներում կամ չափազանց աննշան են արտահայտված, սակայն դրանք հաստատում կամ »ընդհատում են մտավոր գործառույթը:

Ներքին խոսքը լուռ խոսքն է, որը զարգանում է ոչ թե արտաքին խոսքի հնչյունային կողմի մարման, այլ արտաքին խոսքից կառուցվածքային ու գործառնական առումով անջատվելու արդյունքում: Ներքին խոսքը նշանակություններով մտածողությունն է: Այն դինամիկ, անկայուն ընթացող է, հետևաբար նրա իրական նշանակությունն ու տեղը կարող են պարզաբանել միայն այն դեպքում, երբ այն ուսումնասիրվի նաև խոսքային մտածողության տեսանկյունից: Շիլինգի բնորոշմամբ՝ ներքին խոսքը խոսողի համար է, արտաքին խոսքը այլ մարդուն ուղղված խոսքն է [1]:

Ներքին խոսքի ճիշտ հասկացումը պետք է սկիզբ առնի այն դրույթից, որ իր հոգեբանական բնույթի համաձայն խոսքը հատուկ գոյացություն է, որն ունի իրեն բնորոշ առանձնահատկություններ և կապված է լեզվախոսքային գործունեության այլ տիպերի հետ: Ներքին խոսքի այդ յուրահատկությունները պարզելու համար հարկ է ուսումնասիրել մի կողմից նրա փոխհարաբերությունը բառի, մյուս կողմից՝ մտքի հետ: Այսինքն՝ հարկ է պարզել նրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

Ներքին խոսքը խոսողի համար է: Արտաքին խոսքն այլ մարդկանց ուղղված խոսքն է: Այս տարբերությունը խոսքի երկու տեսակների գործառույթությունների միջև չի կարող իր անմիջական անդրադարձը չունենալ կառուցվածքի ձևավորման առումով: Հետևաբար, ճիշտ չի լինի ներքին խոսքի տարբերակիչ հատկանիշ համարել միայն նրա առկայությունը և ոչ թե բնույթը: Եթե արտաքին խոսքը մտքի վերածումն է բառի, ապա ներքինն իրենից ճիշտ հակառակ գործընթաց է ներկայացնում: Ներքին խոսքն ընդհանուր հոգեբանության մեջ հայտնի խնդիրներից գրեթե ամենամեծն է: Սա է պատճառը, որ ներքին խոսքի բացահայտմանը և ուսումնասիրմանը միտված բազմաթիվ մեթոդիկաներ են կիրառվում (փորձառական, ժառանգաբանական և այլն): Գիտակցության ներքին բարդ գործառույթությունների բանալին այստեղ ևս զարգացում է: Հետևաբար, ներքին խոսքի ուսումնասիրության համապատասխան մեթոդի ընտրությունը կարևոր նշանակություն է ձեռք բերում:

Ժ. Պիաժեն առաջինն էր, ով ուշադրություն դարձրեց երեխայի եսակենտրոն խոսքի յուրահատուկ գործառույթի վրա և կարողացավ այդ երևույթին ճիշտ գիտական գնահատական տալ: Սակայն Պիաժեն չի նկատել եսակենտրոն և ներքին խոսքի ժառանգաբանական ընդհանրությունը [3]:

Եսակենտրոն խոսքի գործառույթը նմանվում է ներքին խոսքի գործառույթներին: Այն ինքնուրույն է, և նրա նպատակը մտավոր կողմնորոշվածությունը, խնդիրների ու արգելքների հաղթահարումը չէ: Եսակենտրոն խոսքն իր հոգեբանական գործառույթով իրենից ներքին խոսք է ներկայացնում, իսկ կառուցվածքով՝ արտաքին եսակենտրոն խոսքի հետագա ճակատագիրը նրա վերածումն է ներքին խոսքի:

Երեխայի խոսքի թե գործառնական և թե կառուցվածքային առանձնահատկությունների թիվը մեծանում է նրա աճի հետ մեկտեղ: Երեք տարեկան հասակում այդ խոսքը բոլորովին չի տարբերվում նրա հաղորդակցական խոսքից: Յոթ տարեկանում երեխայի խոսքն էսպեյն տարբերվում է երեքամյա երեխայի հասարակայնացված խոսքից: Սա կրկին ապացուցում է, որ տարիքի հետ մեկտեղ ավելի հստակ տարբերակում են ստանում խոսքի գործառույթները: Երեխայի եսակենտրոն խոսքի արտաքին հատկանիշների նվազումը հարկ է դիտարկել որպես խոսքի անջատում հնչյունային կողմից և նրա մտածական ունակությունների զարգացման ընթացք, երբ նա կարողանում է պատկերացնել բառերը և այդ մտապատկերները գործառության մեջ դնել ներքին խոսքում:

Ներքին խոսքը լուռ խոսքն է, որը զարգանում է ոչ թե արտաքին խոսքի հնչյունային կողմի մարման, այլ արտաքին խոսքից կառուցվածքային ու գործառական առումով անջատվելու արդյունքում: Գիտափորձային մեթոդով ներքին խոսքի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ այն պետք է դիտարկել որպես ինքնուրույն, առանձնահատուկ կառուցվածք ունեցող խոսքի տեսակ, որի ամենակարևոր բնութագիրը յուրահատուկ շարահյուսությունն է: Նմանատիպ հատկություն ունի նաև եսակենտրոն խոսքը՝ միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում չկապակցված խոսքն առավել մեծ ծավալներ է ձեռք բերում տարիքի հետ՝ առավելագույն աստիճանի հասնելով յոթ տարեկանում:

Խոսքի կտրտվածությունը, որը հատուկ է ներքին խոսքին, հնարավոր է լիովին ուսումնասիրել համեմատելով այն գրավոր խոսքի հետ մի կողմից, և բանավոր խոսքի հետ՝ մյուս կողմից: Մի խումբ հոգելեզվաբաններ գտնում են, որ եթե հնարավորություն լինեք բառերի միջոցով արտահայտել այն ամենը, ինչ առկա է մեր մտքում, ապա յուրաքանչյուր առանձին վերցրած մտքի համար մեզ հարկավոր կլինեք գործածել ավելի մեծ քանակությամբ բառեր, քան մենք իրականում օգտագործում ենք: Այս երևույթը բնորոշ է գրավոր խոսքին, որը խոսք է գրուցակցի բացակայությամբ: Սա է պատճառը, որ խոսքի այդ տեսակին հատուկ է շարահյուսական մասնատվածությունը: Այս դեպքում գրողն ու հասցեակիրը գտնվում են տարբեր իրադրություններում, որը բացառում է մտքի ընդհանուր ենթակայի գոյությունը:

Լեզվաբանության մեջ վերջին շրջանում ի հայտ է եկել խոսքի բազմազանության խնդիրը: Անգամ լեզվաբանի տեսանկյունից լեզուն դառնում է ոչ թե լեզվախոսքային գործունեության միակ ձևը, այլ խոսքային տարբեր գործառույթների ամբողջությունը: Դեռևս Չումբոլդտն էր հստակորեն գիտակցում բազմաթիվ գործառույթների առկայությունը թե բանաստեղծական խոսքում և թե արձակուր: Խոսքի հոգեբանության, ինչպես նաև լեզվաբանության համար մասնավորապես առաջնային կարևորություն է ձեռք բերում մենախոսության և երկխոսության տարբերակումը: Երկխոսությունը ենթադրում է խոսքի առարկայի մասին գրուցակիցների տեղեկացվածություն: Դրանում կարևորվում է խոսակցի տեսողական ընկալումը: Արդյունքում հնարավոր է դառնում գրույց, որը պարզապես լրացնում է միմյանց ուղղված հայացքները:

## Եզրակացություն

Այսպիսով, հոդվածում մենք դիտարկումներ արեցինք մտածողության և խոսքի փոխկապակցվածության, արտաքին և ներքին խոսքի՝ որպես խոսքի և մտքի ներքին փոխհարաբերության պարտադիր բաղադրիչի վերաբերյալ: Ներկայացրինք արտաքին և ներքին խոսքի վերաբերյալ հայտնի հոգելեզվաբանների տեսական մտտեցումները:

Ներքին խոսքը հակադրվում է բանավորին, քանի որ նրանում գերակշռում է ստորգակակնությունը: Ներքին խոսքում բառիմաստը, ի տարբերություն նշանակության, գերակշիռ դեր է կատարում: Յուրաքանչյուր բառիմաստ որոշվում է նրանով ինչը գոյություն ունի գիտակցության մեջ և այս կամ այն կերպ կապված է տվյալ բառի հետ: Ներքին խոսքի անցումը արտաքինի բարդ դինամիկ գործընթաց է: Ներքին խոսքը չի նախորդում արտաքինին, այն խոսքի «գոլորշիացումն» է մտքի մեջ: Խոսքը չի անհայտանում նաև իր ներքին ձևի մեջ՝ ներքին խոսքը մտքի հետ կապված խոսքն է: Արտաքին խոսքում միտքը մարմնավորվում է բառում: Ներքին խոսքը նշանակություններով մտածողությունն է: Այն դինամիկ, անկայուն ընթացող է, հետևաբար, նրա իրական նշանակությունն ու տեղը կարող են պարզաբանվել միայն այն դեպքում, երբ այն ուսումնասիրվի նաև խոսքային մտածողության տեսանկյունից: Մտածողության և խոսքի միավորները չեն համընկնում, և միտքը չի նույնանում բառային արտահայտման հետ: Միտքը, ի տարբերություն խոսքի, կազմված չէ առանձին բառերից: Անձը կարող է արտահայտել իր միտքը հաջորդական դասավորությամբ, որոնք կազմված են առանձին բառերից, սակայն այդ ամբողջը կարելի է տեսնել որպես մեկ ամբողջություն: Խոսքի իմաստային ու արտաքին կողմերի, բառի ու մտքի միջև գոյություն ունեն բարդ փոխհարաբերություններ, սակայն դրանք հիմնված են այն միասնության վրա, որը կոչվում է խոսքային մտածողություն: Մտքի և բառի միջև եղած հարաբերությունը բառում մտքի գոյացման կենդանի գործընթաց է: Մտքից զուրկ բառը անկենդան է, բառում մարմնավորվում չգտած միտքը՝ ստվեր: Մտքի և բառի միջև եղած կապն ի սկզբանե տրված չէ. այն առաջանում և ձևավորվում է զարգացման ընթացքում:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-324>

## Գրականություն

1. Առաքելյան Ռ., Հոգելեզվաբանություն, Երևան, 2007, էջ 319-320, 314-315, 322-323:
2. Выготский Л. С. Мышление и речь. Москва, 1963, с. 21-22, 300-301.
3. Пиаже Ж. Мышление и речь ребёнка. Москва, 1932, с. 54-55.

## Внешняя и внутренняя речь как обязательный компонент внутренней взаимосвязи между речью и мыслью

*Костандян Нуне*

### Резюме

**Ключевые слова:** мышление и язык, односложное предложение, психологический и семантический аспект речи, речевое высказывание, эгоцентрическая функция речи, речь, обращенная к себе, резкость речи, осведомленность собеседников, беззвучное произнесение слов

В нашей статье мы рассмотрели взаимосвязь речи и мышления, а также теоретическую интерпретацию внутренней и внешней речи. Человеческая культура, общественная деятельность и мышление, как мы знаем, не могут существовать независимо от языка. В то же время внутренняя взаимосвязь между словом и мыслью не задана заранее и, следовательно, не может стать основой для их дальнейшего развития. Мысль и слово возникают и формируются в ходе исторического развития человеческого сознания. Они являются не предпосылками развития человека, а его результатом. На начальном этапе развития детей возможно, что существует стадия предмышленного становления. Мы обосновали вышеуказанные проблемы теоретическими интерпретациями Л. Выготского, И. Сеченова, Дж. Миллера, Ж. Пиаже.

## External and Internal Speech as indispensable components of the interrelationship between speech and thought

*Kostandyan Nune*

### Summary

**Key words:** thinking and language, single-word sentence, psychological and semantic aspects of speech, verbal expression, egocentric speech function, self-directed speech, speech fragmentation, interlocutors' awareness, silent articulation of words

This article examines the interconnection between speech and thought, as well as the theoretical interpretation of internal and external speech. As we know, human culture, social activity, and thinking cannot exist independently of language. At the same time, the internal relationship between words and thought is not predetermined and, therefore, cannot serve as the basis for their further development. Thought and word emerge, evolve during the historical development of human consciousness. They are not prerequisites for human formation, but rather its result. In the early stages of child development, there may be a pre-thought stage of formation. We substantiate these issues through the theoretical interpretations of L. Vygotsky, I. Sechenov, G. Miller, and J. Piaget.

Ներկայացվել է 29. 04. 2025 թ.

Գրախոսվել է 06. 03. 2026 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ  
ՍՊՈՐՏ

ФИЗКУЛЬТУРА И  
СПОРТ

PHYSICAL EDUCATION AND  
SPORTS

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-332>

***Հանգուցային բառեր.** շախմատ, ինտուիցիա, ընտրություն, հոգեբանություն, մտավոր գործընթաց, ենթագիտակցական մտածողություն, շախմատային հաշվարկ, վերլուծություն, մրցակցություն*

**Հոդվածի արդիականությունը.** հասարակության զարգացման ներկայիս փուլում բարձր ինտելեկտուալ հնարավորություններ ունեցող մասնագետների պահանջարկն անշեղորեն աճում է:

Ինտուիցիան արդիական է բոլոր ժամանակներում, և նրա պահանջը այսօր նույնպես զգացվում է մարդկանց գործունեության ընթացքում: Ինտուիցիայի շնորհիվ մենք ստանում ենք վերլուծության ենթարկված հետազոտության արդյունքները, որոնք առաջանում են գիտությանն արդեն հայտնի փաստերից և տեսակետներից: Արտակարգ իրադրություններում պահանջվում է անհապաղ և շատ դեպքերում պատասխանատու որոշումներ ընդունել, մինչդեռ հնարավոր չէ միշտ օգտվել մեր ունեցած գիտելիքներից, կարողություններից կամ հենվել կենսափորձի վրա: Այսպիսի իրավիճակներում առաջին պլան են մղվում ստեղծագործական երևակայությունն ու ինտուիցիան: Դրանք են, որ օգնում են սովորական փաստերի ու երևույթների վրա նայել նոր ձևով, տարբերել նրանց մեջ գծեր, որոնք մինչ այդ չէին նկատվել ոչ մեկի կողմից:

Շախմատում ինտուիցիայի դերի և նշանակության մասին հետազոտությունները բավական սակավ են և իրենից ներկայացնում են կարևոր գիտական հիմնախնդիրներ, քանզի շախմատը, լինելով շատ հինավուրց խաղ, շարունակում է մնալ արդիական և պահանջված ամբողջ աշխարհում: Ինտուիցիայի դերի արդիականությունը հատկապես կարևորվում է ժամանակակից աշխարհում սրընթաց զարգացող համակարգչային տեխնոլոգիաների պայմաններում: Հատկանշանակ է, որ ինտուիցիայի զարգացման առկայությունը կարևոր է թե պրոֆեսիոնալ և թե սիրողական շախմատիստների շրջանում:

Վերը շարադրվածը փաստում է ինտուիցիայի և հաշվարկի արդիականությունը:

**Աշխատանքի նպատակն է.**

Բացահայտել ինտուիցիայի կատարելագործման ուղիները՝ խորը ուսումնասիրելով դրանց նրբերանգները, որոնք հիմնված են կենսափորձի ընկալած ինֆորմացիայի գիտակցական կամ ենթագիտակցական մշակման և նոր իրադրության մեջ վերարտադրելու գործընթացների վրա:

**Աշխատանքի խնդիրներն են.**

1. պարզել, թե ինչ է ինտուիցիան և բացահայտել ինտուիցիայի դերը շախմատում,
2. ուսումնասիրել ինտուիցիայի տեսակները,
3. որոշել ինտուիցիայի դերը շախմատիստների խաղաքայլի ընտրության հարցում,
4. բացահայտել տարբեր որակավորում ունեցող շախմատիստների մոտ ինտուիցիայի զարգացման աստիճանը:

**Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են հետևյալ մեթոդները.**

1. ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում,
2. ինտուիցիայի վերաբերյալ հին փիլիսոփաների ու գիտնականների աֆորիզմների ուսումնասիրություն,
3. շախմատային խաղի վերլուծություն ու նաև ուժեղագույն գրոսմայստերների փորձի ուսումնասիրություն,

4. կիրառվել են մաթեմատիկական վիճակագրության, սոցիոլոգիական հարցումներ, դիտարկումներ,

5. կիրառվել են ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները:

### **Նեսագոտության արդյունքների վերլուծություն**

Անցնելով բազմադարյա ուղի՝ շախմատն իր զարգացման ընթացքում անհատների խաղից վերածվել է միլիոնավոր մարդկանց սիրելի զբաղմունքի:

Շախմատիստի մտածողության և խաղի ընթացքում որոշումներ կայացնելու գործընթացում կարևոր նշանակություն ունի ինտուիցիան:

Ինտուիցիա՝ լատիներենից թարգմանաբար նշանակում է ուշադիր նայել:

Շախմատում ինտուիցիան բնորոշվում է որպես ենթագիտակցության վրա հիմնված որոշումներ կայացնելու ունակության՝ առանց վերլուծելու տվյալ իրավիճակի առկա գործոնները [5]:

Չնայած որ շախմատային տեսությունը լայն թափով առաջ է ընթացել, ինչպես նաև հզորագույն վերլուծական ծրագրերի առկայությանը, ինտուիցիան որոշումներ կայացնելու գործընթացում շարունակում է մնալ որպես շախմատային պարտիայում կարևորագույն բաղադրիչ:

Պոֆեսիոնալ շախմատիստները ինտուիցիան օգտագործում են խորը շախմատային վերլուծության և ռազմավարական պլանավորման հետ համատեղ: Մակայն հաճախ շախմատում ի հայտ է գալիս երկընտրանք՝ ինտուիտիվ որոշման և դիրքի առարկայական վերլուծության միջև, օրինակ, երբ պարտիայի կրիտիկական պահին, երբ ժամանակը սահմանափակ է, ինտուիցիան կարող է հանդես գալ որպես վճռորոշ գործոն, որը թույլ կտա ընտրել ճշգրիտ քայլը: Մակայն էթե խաղացողի մոտ կա խորհելու ժամանակ, առավել մանրակրկիտ վերլուծությունը կարող է հանգեցնել առավել ճշգրիտ որոշումների: Այսպիսով շատ կարևոր է գտնել հավասարակշռության ինտուիտիվ որոշումների և տրամաբանական լուծումների միջև: Բարձր մակարդակի մրցելույթներում ինտուիցիան և վերլուծությունը պետք է հանդես գան՝ երկուստեք փոխլրացնելով միմյանց:

### **Ինտուիցիայի տեսակները շախմատում**

Շախմատում տարբերում են ինտուիցիայի 3 տեսակներ.

- կոմբինացիոն
- դիրքային

Հակառակորդի մտահղացումների հոգեբանական կանխագուշակումը և դրանց կանխարգելումը. դա մասամբ կապված է վտանգի զգացողության հետ: Դա նաև հակառակորդին «զգալն» է:

### **Կոմբինացիոն ինտուիտիվ որոշումներ**

Սովորաբար գոհաբերվում է ինչ-որ նյութական, որի դիմաց լինում է փոխհատուցում: Կան սպառնալիքներ, բայց հաղթանակի ուղիղ ճանապարհներ չեն երևում: Կոմբինացիոն գոհաբերության գլխավոր նպատակը հակառակորդի արքայի վրա գրոհ կազմակերպելն է [7]:

Տարբերում են կոմբինացիոն գոհաբերության տեսակներ.

- զինվորի գոհաբերություն,
- թագուհու գոհաբերություն:

Ամենաբարդ որոշումը կատարվում է երկրորդ դեպքում, քանի որ այստեղ ուշադրության են մատնվում ավելի դժվար դիրքային գործոններ [3]:

### **Խաղաքարի գոհաբերություն**

Սովորաբար այսպիսի դեպքերում կողմերից մեկը զարգացման մեջ առավելություն է ունենում, և հակառակորդը դժվարանում է արագորեն օգտագործել իր նյութական առավել-

լուծությունը, իսկ արքայի վատ դասավորվածությունը գլխավոր գործոն: Հարձակման ռեսուրսները ավելի շատ են, քան պաշտպանությանը:

Այս գոհաբերությունը միշտ համարվում է մասշտաբային իրադարձություն, և հզոր խաղաքարի դիմաց պահանջվում է համապատասխան վճար, այլ կերպ ասած՝ լուրջ սպառնալիքներ: Իհարկե, եթե դա կապված է արքայի վրա գրոհ սկսելով, ապա խաղաքարերի փոխազդեցությունը պետք է ուժեղ լինի:

### **Ինչ է ինտուիտիվ գոհաբերությունը**

Դա նյութական գոհաբերություն է, առանց կոնկրետ հաշվարկի, որի արդյունքում ակտիվ կողմը ստանում է երկարատև նախաձեռնություն: Խաղը այդ գոհաբերությունից հետո սուր և մարտական բնույթ է կրում՝ պահանջելով կողմերից տակտիկական «հետատեսություն»: Չետևաբար ինտուիտիվ գոհաբերությունից հետո շատ քիչ են ուշադրություն դարձվում հանգիստ շարունակություններին: Զոհաբերությունը արտացոլում է իրար հակասող կողմեր՝ վերլուծական և պրակտիկ: Տնային վերլուծության ընթացքում հնարավոր է դիմակայել հարձակմանը, իսկ պրակտիկորեն դա անհնար է: Ինտուիտիվ գոհաբերությունները շախմատիստներին հաճույք են պատճառում:

### **2.4 Հոգեբանական ինտուիտիվ որոշումներ**

Հոգեբանական ինտուիտիվ որոշումները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

- որոշումներ, որոնք կապված են սկզբնախաղի ընտրության հետ (սկզբնախաղի ինտուիցիա),
- որոշումներ, որոնք կապված են հակառակորդի խաղաճոհի հետ և տհաճ են նրան: Օրիանակ քայլի կամ պլանի ընտրություն,
- բլեֆ – շախմատիստը տեսնում է, որ իր քայլը թույլ է, բայց հաշվի է առնում այն, որ հակառակորդը ճիշտ չի գործի փոխված դիրքում [3]:

Յուրաքանչյուր խաղից առաջ շախմատիստը պատրաստվում է՝ նայելով և վերլուծելով հակառակորդի պարտիաները: Բայց նույն ժամանակ նմանատիպ գործողություններ կատարում է իր հակառակորդը: Հաջողության հասնում է նա, ով կարողանում է գտնել հակառակորդի թույլ կողմը:

Այսպիսի որոշումներին ազդեցություն են թողնում զանազան գործոններ: Յուրաքանչյուր բարձրակարգ գրոսմայստեր շատ մեծ աշխատանք է կատարում սկզբնախաղի վրա և նորությունը կիրառում: Այստեղից էլնելով՝ շախմատիստը փորձում է կանխագուշակել, թե ինչ սկզբնախաղ կընտրի հակառակորդը և փորձում է անակնկալի բերել նրան:

Հարկավոր է առանձնացնել Գրամնիկ-Կասպարով մրցախաղը (Լոնդոն, 2000), որտեղ Գրամնիկը հիասքանչ մարտավարություն էր մշակել: Նա, վերլուծելով Կասպարովի պարտիաները, գտել էր նրա թույլ կողմը՝ վերջնախաղը: Նա ընտրել էր իսպանականի Բեռլին տարբերակը, որտեղ թագուհիները վախանակվում են և նշել էր. Կասպարովը կփորձի այդ դիրքում խաղալ այնպես, ինչպես միջնախաղում՝ հաշվելով տարբեր բարդ տարբերակներ, ինչն էլ կհանգեցնի սխալների:

«Բլեֆը» այնպիսի որոշում է, որը հակառակորդի լավագույն շարունակության ժամանակ պարտության է բերում, բայց անվստահ պատասխանի դեպքում հաջողության հնարավորություն է ընձեռվում: «Բլեֆը» հաճախ կիրառվում է անբարենպաստ իրավիճակներում կամ ցայտնոտում: Երբ շախմատիստը զգում է, որ դիրքային պայքարում պարտված է և դիրքին բնորոշ շարունակության դեպքում հետազդետես տանուլ է տալու պարտիան, նա պետք է փոխի խաղի հետագա ընթացքը՝ կիրառելով ինչ-որ մի գոհաբերություն: Երբեմն հակառակորդը պատրաստ չի լինում դիրքի փոփոխությանը և սխալ է գործում տվյալ իրավիճակում:

Շախմատի պատմության մեջ եղել են գրոսմայստերներ, ովքեր որոշում էին կայաց-

նում՝ հիմնվելով միայն իրենց ինտուիցիային, իսկ նրանք, ովքեր «ապահովում էին» իրենց որոշումները ճշգրիտ հաշվարկներով, դառնում էին իրենց գործի վարպետները: Այդ ցուցակում են Կապաբլանկան, Տալը, Սմիտլովը, Պետրոսյանը, Սպասսկին, Շտեյնը, Կրամնիկն ու Անանդը: Նրանց պարտիաներում առաջնահերթ տեղ էր գրավում կրիտիկական պահերում ուժեղ քայլի «զգացողությունը»:

Համոզվելու համար, թե ինչ ազդեցություն է ունենում շախմատային փորձը ինտուիտիվ որոշումներ կայացնելու վրա, իրականացրինք հետազոտություն.

Ընտրեցինք 60 մասնակիցների (այդ թվում՝ առցանց), որոնք ներկայացնում էին 3 տարբեր շախմատային դասակարգման որակավորում ունեցող խմբեր.

- առաջին խումբ՝ սկսնակ շախմատիստներ (1 տարի պարապած),
- երկրորդ խումբ՝ սիրողական շախմատիստներ (վարկանիշ մինչև 1700),
- երրորդ խումբ՝ պրոֆեսիոնալներ (գրոսմայստերներ, վարպետներ):

**Աղյուսակ**

**Շախմատային փորձառության ազդեցությունը որոշումների ճշգրտության վրա**

<b>Խմբեր. Ընդհանուր 60 մասնակից</b>	<b>Շախմատային որակավորումը</b>	<b>Արձանագրված ցուցանիշները</b>	<b>Պատճառները</b>
<b>I խումբ</b> 20 մասնակից	Սկսնակ շախմատիստներ (մինչև 1 տարի պարապած)	Մեծաքանակ սխալներ, շուրջ 70 %	Փորձի բացակայություն և շախմատային դիրքերի ոչ բավարար ըմբռնում
<b>II խումբ</b> 20 մասնակից	Սիրողական շախմատիստներ (վարկանիշը մինչև 1700)	Լավ հաղթահարել են ինտուիտիվ առաջադրանքները 40-50 %	Հիմնվել են վերլուծությունների վրա, բայց ժամանակի աղության պայմաններում սկսել են հիմնվել ինտուիցիայի վրա
<b>III խումբ</b> 20 մասնակից	Պրոֆեսիոնալ շախմատիստներ (գրոսմայստերներ, վարպետներ)	Առաջարկված քայլերի 70-80 % ճիշտ էին	Խաղարկել են բազմաթիվ շախմատային դիրքեր

Յուրաքանչյուր խմբի առաջարկվեցին տարբեր բարդության մի քանի շախմատային դիրքեր: Որոշ առաջադրանքներում առաջարկվում են ակնհայտ քայլեր, որոշներում՝ բարդ և բազմանշանակ տարբերակներ:

Մասնակիցներին հարցադրում էր արված, որքան<sup>օ</sup> վ են նրանք վստահ իրենց ինտուիտիվ որոշումների և որքան<sup>օ</sup> վ են նրանք հիմնվում սեփական փորձի վրա:

Յուրաքանչյուր որոշման ընդունումից հետո շախմատիստները պարզաբանում էին թե ինչպես են նրանք հանգել նման եզրահանգմանը:

Հետազոտության արդյունքներով ստացվեց հետևյալ տվյալները.

*Առաջին խումբ (սկսնակներ)*

Նրանք կատարել էին մեծաքանակ սխալներ՝ հիմնվելով ինտուիցիայի վրա, դա ակնառու էր հատկապես բարդ դիրքերում: Միջինը 70 % դեպքերում նրանց ինտուիտիվ քայլերը սխալ էին:

Դա պայմանավորված էր նրանց փորձի բացակայությամբ և շախմատային դիրքերի ոչ քավարար ըմբռնմամբ:

#### *Երկրորդ խումբ (սիրողական շախմատիստներ)*

Այս խմբի մասնակիցները ավելի լավ էին հաղթահարել ինտուիտիվ առաջադրանքները տիպային դիրքերում, ինչպիսիք են սկզբնախաղը կամ վերջնախաղը: Նրանք վստահել էին իրենց ինտուիցիային 40-50 % դեպքերում և հաճախ հայտնվում էին մարտավարական ծուղակներում:

Սիրողական շախմատիստները գիտակցում էին վերլուծության կարևորությունը, բայց լարված էմոցիոնալ պահերին նրանք առավելապես հիմնվել են ինտուիտիվ որոշումներին, հատկապես ժամանակի սղության պայմաններում:

#### *Երրորդ խումբ (պրոֆեսիոնալներ)*

Գրոստոմայստները և վարպետները զգալիորեն բարձր ճշգրտության են հասնում ինտուիտիվ որոշումներում: Նրանց առաջադրված քայլերի 70-80 % ճշգրիտ էին:

Դա պայմանավորված է նրանով, որ նրանք խաղարկել են բազմաթիվ շախմատային դիրքեր, ինչ էլ նրանց թույլ տվեց արագ և ճիշտ գնահատել իրավիճակը, առանց ամբողջական վերլուծության:

Հատկանշական է, որ գրոստոմայստները երբեմն սխալվում էին՝ հիմնվելով միայն ինտուիցիայի վրա, սակայն դա տեղի էր ունենում զգալիորեն քիչ դեպքերում, քան առավել քիչ փորձառություն ունեցող շախմատիստների մոտ: Այսպիսով, հետազոտության արդյունքները վկայում են, որ ինտուիցիան շախմատիստների մոտ զարգանում է երկարամյա պարապմունքների և գործնական խաղի ընթացքում, իսկ պրոֆեսիոնալ շախմատիստները ինտուիցիան օգտագործում են որպես խաղի հաշվարկների և ռազմական պլանավորման լրացում: Ինչպես ականատես եղանք, հետազոտության ընթացքում ինտուիտիվ որոշումներ կարող են լինել առավել արդյունավետ, երբ շախմատիստը գտնվում է ժամանակային սուղ պայմաններում, և սթրեսային իրավիճակներում:

### **Եզրակացություններ**

1. Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ ինտուիցիան անգիտակից վիճակում վերամշակված գիտելիքն է: Շատ դեպքերում կյանքի տարբեր փուլերում մենք կիրառում ենք ինտուիցիայի երևույթը՝ երբեմն չհասկանալով դրա էությունը:

2. Շախմատում ինտուիցիան դիրքի էության ակնթարթային ըմբռնումն է, և դա առավել անհրաժեշտ է կրիտիկական պահերին, որտեղ չկա հստակ պլան և հարկադրված որոշում. այն հատուկ է առաջին հերթին սկզբնական գնահատականի և քայլի ընտրության մեջ:

3. Գրեթե բոլոր լավագույն շախմատիստների մոտ զարգացած է ինտուիցիան, որը վկայում է ինտուիցիայի կարևորությունը շախմատում:

4. Այնտեղ, որտեղ անգոր են հասկացողությունը և գնահատականը, մեզ օգնության է գալիս ինտուիցիան, որը անգիտակցական ընթացք է, և գրեթե միշտ դրա շարժիչ ուժը փորձն է, բացառությամբ այն դեպքերի, երբ մարդը այդ ի վերուստ է ձեռք բերում:

5. Ինտուիցիան զարգացող երևույթ է և մոտ ապագայում այն լայնորեն կտարածվի մարդկության շրջանում, քանի որ դրա դրական կողմերը անհրաժեշտ են մեզ բոլորիս: Մարդիկ ժամանակ առ ժամանակ ոչ միայն կլսեն իրենց ներքին ձայնը, այլ կփորձեն այդ զարգացնել:

### **Առաջարկություններ, որոնք ուղղված են ինտուիցիայի զարգացմանը:**

Ուշադիր հետևեք սեփական զգացողություններին և որքան հնարավոր է շուտ գտեք պատասխանը: Որպեսզի սովորեք գուշակել, հարկավոր է գուշակել:

Մի սահմանափակվեք առաջին տպավորությամբ, այլ հետևեք սեփական զգացողությունների փոփոխությանը՝ խորանալով հաշվարկների մեջ: Ճշմարտությունը կարելի է զգալ մտածողության տարբեր փուլերում: Այնուամենայնիվ փորձեք այդ ամենը հնարավորինս չափ արագ անել:

Պարզելով օբյեկտիվ ճշմարտությունը՝ մի մոռացեք համեմատել այն ձեր գուշակությունների հետ: Օգտակար է հասկանալ, թե որ գործոններն էին կարևոր, և որքանով դրանք ձեր կողմից ուշադրության արժանացան:

Հարկավոր է ինտուիտիվ հասկացողության լայն շրջանակ: Գոյություն ունեն դիրքեր, որտեղ անհրաժեշտ չէ գտնել միայն լավագույն քայլը, այլ կարելի է սահմանափակվել դիրքի գնահատականով և այս կամ այն սպառնալիքի զգացողությամբ:

Այնպիսի եզրակացությունները, ինչպիսիք են «դիրքը ոչ ոքի է» կամ «հակառակորդի դիրքը անհուսալի է», շատ «կոպիտ» են: Ավելի կարևոր են դիրքի նույն եզրակացությունները, որոնք վերաբերում են տարբեր քայլերի կամ պլանների համեմատությանը և այլն:

Ուշադրություն դարձրեք ոչ միայն շախմատային, այլև սպորտային պահերին: Օրինակ՝ մրցաշարի իրավիճակ, ժամանակ, հակառակորդի անձը և նրա սխալների հավանականությունը:

Շատ կարևոր են «մետափնտուիտիվ» ենթադրությունները: Օրինակ՝ կարելի է տվյալ պահին վստահել ինտուիցիային, թե դիրքը պահանջում է ճշգրիտ հաշվարկ, և որքան ժամանակ կխլի այդ քայլի մտորումը:

Վերլուծեք սեփական գործողությունները և անհրաժեշտության դեպքում մշակեք նոր կանոններ:

Շախմատային ինտուիցիան զարգացնելու նպատակով թնորեք թեմաներ և աշխատանքի ձևեր: Փորձեք հորինել այնպիսի մարզումային խաղեր, որոնք ձեզ կստիպեն ինտուիտիվ որոշումներ կայացնել: Նաև կարելի է խաղալ պարտիաներ կրճատված ժամանակով և ուսումնասիրել ինտուիտիվ շախմատիստների պարտիաները:

Ամփոփապես մի սպասեք բարձր արդյունքի, բայց պահպանեք վստահությունը և հաստատակամությունը վերջնական հաջողության հասնելու համար: Նպատակալաց գործողությունները անպայման կօգնեն ինտուիցիայի զարգացմանը: Խաղը կդառնա արագ, հեշտ, վստահ և հուսալի [3]:

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-332>

### **Գրականություն**

1. Հակոբյան Գ. Ե., Մենք հրաշամանուկ ենք, Երևան, 2003, 170 էջ:
2. Հակոբյան Ե. Գ., Շախմատի դասավանդման մեթոդաբանության հիմնահարցեր, Երևան 2023, 104 էջ:
3. Бологан В. Поверь в себя. М., 2024, 244стр.
4. Дворецкий М. Уроки мастерства. М., 2022, 236стр.
5. Йоханан А. Учитесь побеждать красиво. М., 2020, 116стр.
6. Марин М. Учитесь у шахматных легенд. М., 2018 341стр.
7. Хенкин В. Последний шах, М., 2023, 267стр.
8. Шорт Н., Победный марш, М., 2023, 118стр.
9. Фринко З., Разгаданные тайны Боби Фишера, М., 2024, 98стр.
10. Чернышов К., Тайны видения шахматной доски и расчета вариантов. М., 2024, 127стр.
11. Шерешевский М., Ассоциативные мышления в шахматах. М., 2024, 231стр.

## Интуиция в шахматах

*Акопян Ерванд*

### Резюме

**Ключевые слова:** шахматы, интуиция, выбор, психология, умственный процесс, анализ, борьба, подсознательное мышление

Интуиция остаётся важным аспектом человеческой деятельности, и её значимость особенно проявляется в шахматах, как среди профессионалов, так и любителей. Цель исследования – изучить особенности развития интуиции и её роль в принятии шахматных решений. Методы исследования включали анализ литературы, математическую статистику, социологические опросы, наблюдения, а также дедукцию и индукцию.

Интуиция в шахматах – это способность принимать решения на основе подсознательного анализа позиции, без детального перебора всех вариантов. Профессиональные шахматисты сочетают интуицию с глубоким стратегическим планированием и логическим анализом, находя баланс между мгновенными решениями и расчетом. Результаты показывают, что интуиция более развита у игроков высокой квалификации, позволяя предугадывать ходы соперника, выявлять его слабые стороны и создавать стратегические сюрпризы.

Выводы исследования подтверждают, что интуиция – это переработанные знания в бессознательном виде, которые особенно ценны в критических ситуациях, когда отсутствует чёткий план. Развитие нейробиологии, когнитивных наук и искусственного интеллекта в будущем поможет глубже понять механизмы интуиции и использовать их для улучшения шахматной игры.

## Intuition in Chess

*Hakobyan Yervand*

### Summary

**Key words:** chess, intuition, choice, psychology, mental process, analysis, competition, subconscious thinking

Intuition has always played a key role in human activity, and its importance is especially evident in chess, both for professional and amateur players. The aim of this research is to examine the development of intuition and its role in chess decision-making. Research methods included literature review, mathematical statistics, sociological surveys, observations, induction, and deduction.

